

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ
ՀՀ ԳԱԱ ՇԻՐԱԿԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ԿԱՐԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌՈՒՄ
1914-1922 թթ.

Փաստաթղթերի ժողովածու

Երևան 2012

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Ա 296

Նվիրում են տառիս՝
Մարգարիտ Ղազարյանի
հիշատակին

Հրատարակության է երաշխավորված Հայաստանի ազգային արխիվի և ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտական խորհուրդների որոշմամբ

Խմբագիր՝ պատմ. գիտությունների դոկտոր **Ա. Վիրաբյան**

Ալեքսանյան Կ. Վ.
Ա 296 Արևմտահայ գաղթականությունը Ալեքսանդրապոլի գավառում
1914-1922 թթ.: Փաստաթղթերի /-եր.:
Հայաստանի ազգային արխիվ, 2012.- 512 էջ:

Ժողովածուում հրապարակվող փաստաթղթերն արտացոլում են Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ցեղասպանության հետևանքով հայրենագուրկ դարձած արևմտահայ բնակչության մի ստվար զանգվածի կրած տառապանքներն ու ապրած ողբերգությունը, ինչպես նաև Ալեքսանդրապոլի հասարակական կազմակերպությունների և անհատների որբախնամ գործունեությունը: Փաստաթղթերը ներկայացնում են նաև գաղթականների ծանր վիճակը և նրանց խնամատարության խնդիրները Հայաստանի առաջին հանրապետության, ինչպես նաև խորհրդային իշխանության առաջին շրջանում:

Փաստաթղթերի գերակշիռ մասը հրատարակվում է առաջին անգամ:

Ժողովածուն նախատեսված է պատմաբանների և ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 941(479.25)

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 978-9939-839-04-2

© Ալեքսանյան Կարինե, 2012

Միքե մենք կործանվում ենք



ԱՌԱՋԱԲԱՆ

Հայ պատմագիտության կարևոր հիմնախնդիրներից է հայոց նորագույն պատմության ամենաողբերգական էջերից մեկի՝ Հայոց մեծ եղեռնի պատմության ամբողջական ուսումնասիրությունը:¹ Թեև այս ուղղությամբ մեծ աշխատանք է կատարված և հսկայածավալ գրականություն է ստեղծված, այնուամենայնիվ, դեռևս լուրջ աշխատանքների կարիք կա եղեռնի թե՛ պատճառների և թե՛ հետևանքների ուսումնասիրման առումով:

Հիմնախնդրի ամբողջական և համակողմանի լուսաբանման տեսակետից առանձնապես կարևորվում են եղեռնից մագապուրծ արևմտահայ գաղթականության մասին պատմագիտական ուսումնասիրությունները: Այս առումով անգնահատելի է փաստաթղթերի և վավերագրերի հրատարակման դերը, որոնք կարևորագույն աղբյուրագիտական հիմք կարող են հանդիսանալ վերոնշյալ թեմայով պատմագրական աշխատությունների համար: Ելնելով հարցի կարևորությունից ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտը և, մասնավորապես, Հայաստանի ազգային արխիվը վերջին տարիներին մեծ աշխատանք են կատարել այս ուղղությամբ: Հրապարակվել են 20-րդ դարասկզբի հայոց պատմության վերաբերյալ արխիվային փաստաթղթերի բազմաթիվ ժողովածուներ, վավերագրերի արժեք ունեցող հիշողություններ:²

¹ Մ. Կարապետյան, Է. Գևորգյան, Է. Մելքոնյան, Ա. Աբգարյան, Հայոց մեծ եղեռնի պատմության հիմնահարցերը հայ պատմագրության մեջ, Ե. 2010, 456 էջ:

² Համահայկական խորհրդակցություններ, (1912-1920 թթ.): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Կազմ. Ա. Վիրաբյան, Գ. Ավագյան, Ռ. Գրիգորյան, Ա. Կիրիմյան, պատ. խմբ. Ա. Վիրաբյան: Հայաստանի ազգային արխիվ, Եր. 2004 թ, 787 էջ: Վշտապատում: Հայոց մեծ եղեռնը ականատեսների աչքերով: Կազմողներ՝ Ա. Վիրաբյան, Գ. Ավագյան, պատ. խմբագիր՝ Ա. Վիրաբյան: Հայաստանի ազգային արխիվ, Երևան 2005: Ղառաբիխայի 1918 թ. հերոսամարտը, կազմողներ Վ. Դալլաբյան, Ա. Մառության, խմբ. Վ. Ղազախեցյան, Եր. 2008, 288 էջ: Արամ Մանուկյան:

Ներկա ժողովածուում ընդգրկված փաստաթղթերը ներկայացնում են Ալեքսանդրապոլի գավառում հաստատված, եղեռնից վերապրած արևմտահայ գաղթականության վիճակը 1914-1922 թթ.: Ալեքսանդրապոլի գավառը, լինելով ճանապարհային հանգուցակետ և սահմանամերձ շրջան, իր վրա կրեց համազգային մեծ արհավիրքի ամբողջ ծանրությունը: Այստեղ ապաստանած գաղթականությունը մեծապես ազդեց գավառի տնտեսական դրության, քաղաքական կյանքի և բարոյահոգեբանական մթնոլորտի, ինչպես նաև նրա պատմության հետագա ընթացքի վրա: Հետևաբար, ներկայացնել Ալեքսանդրապոլի գավառի 20-րդ դարասկզբի պատմությունն, առանց նկատի առնելու գաղթականության դերն, ուղղակի անհնար է: Միաժամանակ, Հայոց մեծ եղեռնից վերապրածների հետագա ճակատագրի վերաբերյալ փաստաթղթերի հրապարակումը կնպաստի հայոց ցեղասպանության ամբողջական պատմության ստեղծմանը և 20-րդ դարասկզբի հայոց պատմության մի շարք հիմնախնդիրների լուսաբանմանը:

Ժամանակագրական առումով փաստաթղթերը ներկայացնում են արևմտահայ գաղթականության վիճակը հայոց նորագույն պատմության երեք կարևոր փուլերում՝ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, Հայաստանի առաջին հանրապետության օրոք և խորհրդային իշխանության հաստատման առաջին շրջանում:

1914-1918 թթ. վերաբերող փաստաթղթերը ներկայացնում են Առաջին աշխարհամարտի ընթացքում Արևմտյան Հայաս-

Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, գլխ. խմբագիր և կազմող՝ Ա. Վիրաբյան, Հայաստանի ազգային արխիվ, Եր. 2009: Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ, 1918-1920 թթ: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, գլխ. խմբագիր և կազմ. Ա. Վիրաբյան, Հայաստանի ազգային արխիվ, Եր. 2009, 616 էջ: Ռուբեն Տեր-Մինասյան, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, գլխ. խմբ. և կազմող՝ Ա. Վիրաբյան, Հայաստանի ազգային արխիվ, Եր. 2011, 485 էջ: Վ. Սվազյան, Հայոց ցեղասպանություն, ականատես վերապրողների վկայություններ, Ե. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, 880 էջ:

տանից Ալեքսանդրապոլի գավառում հաստատված արևմտահայ գաղթականության ծանր վիճակը, Ալեքսանդրապոլի հասարակական կազմակերպությունների և անհատների որբախնամ և գաղթականների խնամատարության գործը, Կովկասի հայոց բարեգործական ընկերության Ալեքսանդրապոլի ճյուղի, Ալեքսանդրապոլի Եղբայրական օգնության կոմիտեի գործունեությունը:

Հրապարակվող փաստաթղթերը կարևոր աղբյուր են Ալեքսանդրապոլի գավառի 20-րդ դարասկզբի հասարակական կյանքի պատմության ուսումնասիրման համար: Դրանք վկայում են մի կողմից հայ հասարակության կազմակերպվածության, կազմակերպչական ջիղ ունեցող առանձին անհատների ազգանպաստ գործունեության, մյուս կողմից ոչ ճիշտ աշխատանքի, բազմաթիվ չարաշահումների, հասարակության անտարբերության մասին: Փաստաթղթերը լուսաբանում են այնպիսի խոշոր համահայկական հասարակական կազմակերպությունների և նրանց տեղական մարմինների գործունեությունը, ինչպիսիք են Կովկասի հայոց բարեգործական ընկերության, Կովկասի հայոց բարեգործական ընկերությանը կից պատերազմից վնասվածներին օգնող հայկական կենտրոնական կոմիտի և Էջմիածնի Եղբայրական օգնության կոմիտի:

Տպագրվող փաստաթղթերը կարևոր աղբյուր են հայ ժողովրդի կյանքում հայոց եկեղեցու ունեցած մեծ դերի, ժողովրդի և եկեղեցու միասնության հիմնախնդրի ուսումնասիրման համար: Բազմաթիվ փաստաթղթեր վկայում են, որ հայ ժողովրդի համար այդ ծանր պահերին արևմտահայ գաղթականության հիմնական նեցուկը դարձել է հայոց եկեղեցին: Փաստաթղթերը անցյալի փոշուց վեր են հանում և սերունդներին ներկայացնում Գևորգ Ե. Ամենայն հայոց կաթողիկոսի փառահեղ կերպարը: Այդ մեծ հայը, որն իր ժողովրդի մեծագույն ողբերգությունը սպունգի նման ներքաշել էր իր մեջ, հայ ժողովրդի համար այդ ծանր օրերին անօրինակ տոկունության, բարձր կազմակերպվածության օրինակ հանդիսացավ:

Նրա գլխավորությամբ հայ հոգևորականներն իրենց ազգանվեր գործունեությամբ փրկեցին բազմաթիվ թանկագին կյանքեր, հույս և հավատ ներշնչեցին ամեն ինչ կորցրած այդ մարդկանց, օգնեցին նրանց կառչելու կյանքին և հավատալու սպազային:

Հայ կանանց որբախնամ գործունեության մասին վկայող փաստաթղթերը կարևոր սկզբնաղբյուր են կանանց հասարակական ակտիվության հիմնախնդրի ուսումնասիրման համար: Փաստաթղթերը վկայում են, որ հայ ժողովրդի համար այդ օրհասական օրերին, նրանք իրենց ամբողջ կարողություններն ի սպաս են դրել արևմտահայության փրկության գործին, զբաղվել որբերի խնամատարության և դաստիարակության գործերով:

Հրապարակվող փաստաթղթերը միաժամանակ ներկայացնում են 1914-1918 թթ. Ալեքսանդրապոլի գավառի վատթարացող սոցիալ-տնտեսական պատկերը, որը հետևանք էր ինչպես պատերազմի, այնպես էլ գաղթականության հոծ գանգվածի առկայության:

Առաջին հանրապետության շրջանին վերաբերող փաստաթղթերը կարևոր աղբյուր են հայոց նորաստեղծ պետության՝ գաղթականների նկատմամբ վարվող քաղաքականության մասին: Փաստաթղթերը ներկայացնում են գաղթականների խնամատարության, նրանց լքված գյուղերը տեղափոխելու, և հատկապես գաղթականներին իրենց բնակության վայրերը վերադարձնելու պետական մարմինների ջանքերը:

Այդ փաստաթղթերը նաև կարող են նպաստել հայ պատմագիտության մեջ տարբեր մեկնաբանությունների տեղիք տված այնպիսի հիմնախնդիրների լուսաբանմանը, ինչպիսիք են թուրքերի կողմից Ալեքսանդրապոլի գավառի գրավման ժամանակ բնակչության մեջ առաջացած խուճապի, թուրքերի դեմ չկռվելու, տեղական իշխանության մարմիններ ստեղծելու և թուրքերի հետ համագործակցելու հարցերը: Մասնավորապես, դրանք մեզ հիմք են տալիս այն տեսակետը հայտնելու, որ 1918 թ. մայիսին, Ալեքսանդրապոլը թուրքերի կող-

մից գրավելու ժամանակ, քաղաքում առաջացած անօրինակ խուճապը պայմանավորված էր նաև այստեղ գտնվող մեծաթիվ գաղթականների առկայության հետ: Գաղթականների սոսկալի վիճակը չէր կարող հոգեբանորեն չազդել տեղի բնակչության վրա, որը մի քանի տարի շարունակ ականատես էր եղել նրանց տառապանքներին, կիսել դժվարությունները: Իսկ ինչ վերաբերում է թուրքական սարսափներն ապրած գաղթականներին, բնական է, որ վերջիններս պետք է փորձեին առաջինը փրկվել: Բազմաթիվ փաստաթղթեր վկայում են Ալեքսանդրապոլի գավառի ռազմակալման ժամանակաշրջանում գաղթականների նկատմամբ թուրքերի առանձնակի դաժանության մասին:

Փաստաթղթերը կարևոր աղբյուր են թուրքական ռազմակալման շրջանում Ալեքսանդրապոլի գավառում ստեղծված իշխանության տեղական մարմինների գործունեության վերաբերյալ: Հետևաբար, այդ մարմինների գործունեության գնահատման առումով ևս կարևոր են: Մասնավորապես, դրանք մեզ հիմք են տալիս կարծելու, որ թուրքական ռազմակալման շրջանում տեղական իշխանության մարմինների ստեղծումն ունեցել է նախ և առաջ բնակչության գաղթը կանխելու նպատակ: Խուճապը կանգնեցնելու, նոր գաղթականություն չառաջացնելու միտումով ստեղծվել են տեղական իշխանության մարմիններ՝ քաղաքային ինքնավարության կամ հեղկոմի տեսքով: Ճիշտ է, ռազմակալման շրջանում թուրքերն առանձնակի դաժանությամբ են վերաբերվել գաղթականներին, սակայն նոր գաղթը ստույգ մահվան կդատապարտեր նրանց: Բնակչությանը տեղում պահելու խնդիր են ունեցել նաև իրենք՝ թուրքերը, որոնք մի կողմից ցանկանում էին թալանել հայերին և մյուս կողմից ցույց տալ միջազգային հանրությանը, թե իրենք ինչքան լավ են վերաբերվել հայերին: Կարծում ենք, այս հանգամանքն էլ հենց հիմք է հանդիսացել թուրքական և տեղական իշխանության մարմինների համագործակցության համար: Ճիշտ է, թուրքերը տեղական իշխանության մարմինների միջոցով «օրինականացրել են»

հայերին թալանելու և կոտորելու իրենց քաղաքականությունը, սակայն ստեղծված տեղական իշխանության մարմիններն էլ, իրենց հերթին, ջանացել են օգտագործել այդ առիթը և հնարավորինս մեղմելու թուրքական բռնությունները: Համենայն դեպս, ժամանակակիցների կողմից այդ մարմինների գործունեությունը բարձր է գնահատվել: Մասնավորապես, Ալեքսանդրապոլի քաղաքային խորհրդի 1919 թ. հունիսի 31-ի նիստի որոշմամբ Լևոն Սարգսյանին տրվել է Ալեքսանդրապոլի պատվավոր քաղաքացու կոչում:³ Նշված որոշմամբ քաղաքային խորհուրդը շնորհակալություն է հայտնել Լ. Սարգսյանին՝ թուրքերի քաղաք մտնելու ժամանակ ցուցաբերած քաջության համար և նրա անունով կոչել քաղաքի հիվանդանոցներից մեկը:⁴

Հատկանշական է, որ թուրքերի ռազմակալման շրջանում ստեղծված տեղական իշխանության բոլոր մարմինների գործունեության մեջ կարևոր տեղ են զբաղեցրել գաղթականների և որբերի խնամատարության խնդիրները:

Ժողովածուի փաստաթղթերը ներկայացնում են Մերձավոր Արեւելքի նպաստամատույց Ամերիկյան կոմիտեի (Ամերկոմ) գործունեությունը: Ամերկոմի և ամերիկյան կառավարության ու ժողովրդի գործադրած մարդասիրական ջանքերի շնորհիվ վերահաս ոչնչացումից փրկվեցին հարյուր հազարավոր հայեր: Սակայն Ալեքսանդրապոլի գավառում Ամերկոմի գործունեությանը վերաբերող բազմաթիվ փաստաթղթեր ներկայացնում են նաև ոչ ճիշտ կազմակերպված աշխատանքի, սկզբունքների տարբերության, կամայականության և այլ գործոնների արդյունքում առաջացած բարդ հարաբերությունները Հայաստանի կառավարության, ինչպես նաև գաղթականության հետ: Հայոց պատմագիտության մեջ արմատացած է այն կարծիքը, թե Ամերկոմը դադարել է օգնել

³ 1918 թ. մայիսի 17-ին Լ. Սարգսյանի նախաձեռնությամբ և թուրքերի համաձայնությամբ Ալեքսանդրապոլում ստեղծվում է տեղական իշխանություն՝ քաղաքային խորհուրդ և քաղաքային վարչություն:

⁴ ՀԱԱ, ֆ.105, ց.1, գ.2711, թ. 1:

Հայաստանին մայիսյան իրադարձությունների պատճառով: Մինչդեռ փաստաթղթերը վկայում են Հայաստանի կառավարության հետ Ամերկոմի ավելի վաղ գոյություն ունեցած հակասությունների մասին: Դեռևս 1920 թ. ապրիլ ամսից ամերիկացիները դադարեցրել էին գաղթականներին և տեղի չքափոր բնակչությանը տրվող օգնությունը: Ընդ որում նրանց կողմից չէր ողջունվում նաև մայիսյան դեպքերից հետո Հայաստանի Բյուրո կառավարության իրականացրած կտրուկ միջոցները:⁵ Մասնավորապես, Ամերիկյան կոմիտեի հիմնարկությունների կողմից, որտեղ աշխատում էին մեծ թվով ռուս պաշտոնյաներ, միանշանակ չի ընդունվում 1920 թ. մայիսի 30-ին հաստատված «Պետական լեզուն չիմացող պաշտոնյաների լիկվիդացիայի մասին» օրենքը, որի համաձայն աշխատանքից ազատվում են հայերն լեզուն չիմացող պաշտոնյաները: ⁶

Ժողովածուի փաստաթղթերը վկայում են նաև Արևելյան Հայաստանում թուրքական ցեղասպանության քաղաքականության շարունակականության մասին: Թուրքական յաթաղանից փրկված արևմտահայության բեկորները զոհ են գնում Արևելյան Հայաստանում թուրքական նոր արշավանքներին, կոտորածներին, սովին և համաճարակներին: Փաստաթղթերը ակնհայտորեն վկայում են հայ բնակչության վերադարձն արգելելու և Արևմտյան Հայաստանը հայերից դատարկելու թուրքական քաղաքականության մասին:

Փաստաթղթերը կարևոր աղբյուր են ժողովրդագրական խնդիրների ուսումնասիրման համար: Դրանք արժեքավոր են ինչպես Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական խնդիրների ուսումնասիրման, այնպես էլ Ալեքսանդրապոլի գավառի սոցիալ-տնտեսական և քաղաքական դրության, ինչպես նաև բարոյահոգեբանական իրավիճակի վրա ժողովրդագրական պատկերի փոփոխության ազդեցությունը լուսա-

⁵ Կ. Ալեքսանյան, Հայաստանի առաջին հանրապետությունում լեզվական քաղաքականության հարցի շուրջ, Գյումրի, Գիտական աշխատություններ, հ. 14, էջ 58-62:

⁶ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 153, թ. 51:

բանելու համար:

Եվ վերջապես, հրատարակվող փաստաթղթերը կարևոր աղբյուր են խորհրդային իշխանության հաստատման առաջին շրջանի և գաղթականության նկատմամբ այդ իշխանության իրականացրած քաղաքականության ուսումնասիրման համար:

* * *

1914-1922 թթ. Ալեքսանդրապոլի գավառում հաստատված արևմտահայ գաղթականության դրության վերաբերյալ ներկա փաստաթղթերի ժողովածուի հրատարակումն ունի արդիական, գիտաքաղաքական ու գիտագործնական նշանակություն:

Ժողովածուի հրատարակումը խիստ արդիական է Հայոց մեծ եղեռնի միջազգային ճանաչման և Թուրքիայի Ժխտողական քաղաքականության դատապարտման առումով: Արևմտահայ գաղթականները, իբրև հայոց ցեղասպանության կենդանի վկաներ՝ արժեգրվում են Թուրքիայի պաշտոնական թեզի մի շարք առաջնային դրույթներ: Մասնավորապես, հակառակ թուրքական այն պնդման, թե հայերը օսմանյան պետության մյուս քաղաքացիների նման զոհվել են պատերազմի ժամանակ, տպագրվող փաստաթղթերը վկայում են, որ հայերը սպանվել են ոչ միայն Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, այլ պատերազմի ավարտից հետո: Արևմտահայությունը ոչ միայն մեծաթիվ զոհեր է տվել, այլև հայրենագրվել է, հնարավորություն չունենալով պատերազմից հետո վերադառնալ իր հայաթափված հայրենիքը, և վերջապես, արևմտահայ բնակչությունն ունեզրկվել է, մահացել սովից և հիվանդություններից:

Գաղթականների տոկալի ծանր վիճակը և կյանքի անմարդկային պայմանները ներկայացնող փաստաթղթերը վկայում են, որ դրանք ոչ միայն հայ ժողովրդի, այլև մարդկության դեմ իրականացված ոճրագործություններ են և պետք է դատապարտվեն համայն մարդկության կողմից:

Փաստաթղթերի հրապարակումը միտված է ամրապնդելու

մեր ժողովրդի պատմական հիշողությունը, որը մեր ազգային ինքնության պահպանման կարևոր գործոններից մեկն է: Մեր ժողովրդի պատմության այդ ողբերգական շրջանի ուսումնասիրությունը մեզ պարտադրում է յուրացնել պատմության դասերը, լինել միասնակար և առավել կազմակերպված, ամրապնդել պետականությունն և հզորացնել հայրենիքը:

Եվ վերջապես, ժողովածուն վկայում է մեր ժողովրդի կենսունակության, փյունիկի պես հառնելու կարողության մասին, ամրապնդում չապրած կյանքերն ապրելու և այլևս **երբեք գաղթական չդառնալու մեր վճռականությունը:**

* * *

Արևելյան Հայաստանի ամենահոծ հայկական բնակչություն ունեցող Ալեքսանդրապոլի գավառն ապաստան դարձավ եղեռնից մազապուրծ հազարավոր գաղթականների համար:⁷ 1915 թ. հոկտեմբերին արդեն Ալեքսանդրապոլի գավառում նրանց թիվն հասել էր 22815-ի, որից 6844-ը՝ Ալեքսանդրապոլում:⁸ Արևմտահայ գաղթականներին օգնության հարցը բնականաբար հայտնվում է տեղական իշխանությունների և հասարակության ուշադրության կենտրոնում: Ամենայն հայոց Գևորգ Ե կաթողիկոսի հովանավորությամբ այստեղ 1914 թ. հոկտեմբերի 30-ին ստեղծվում է Ազգային հանձնաժողով՝ Ալեքսանդրապոլի գավառի թեմի առաջնորդական փոխանորդ Արտակ վարդապետ Մմբատյանի գլխա-

⁷ Տես Կ. Ալեքսանյան, Ալեքսանդրապոլի գավառում հաստատված գաղթականությունը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, Հանրապետական գիտական նստաշրջան, Նյութերի ժողովածու, Գյումրի, 2007, էջ 144-147: Նույնի, Արևմտահայ գաղթականներն Ալեքսանդրապոլի գավառում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (փաստաթղթերի հավաքածու), Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան, 2008, թիվ 2, էջ 40-56:

⁸ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև ՀԱԱ), ֆ. 57, ց. 2, գ. 1287, թ. 4-5:

վորությամբ:⁹

Ազգային կոմիտեն սկզբում լուրջ ուշադրություն է դարձնում հատկապես գաղթականների մոտ տարածված վարակիչ հիվանդությունների կանխմանը, որոնք սպառնում էին նաև գավառի բնակչությանը: Աստիճանաբար գաղթականների խնամատարության գործը դրվում է կանոնավոր հիմքերի վրա: Գաղթականների անընդհատ հոսքի պայմաններում քաղաքում երևան են գալիս հասարակական կազմակերպություններ, որոնք փորձում են միահամուռ ուժերով լծվել այս դժվար գործին: Ալեքսանդրապոլում ստեղծված բազմաթիվ ընկերություններ, կազմակերպություններ, ինչպես նաև անհատներ ձեռնամուխ են լինում որբանոցների, արհեստանոցների ու դպրոցների բացմանը: Մասնավորապես մեծ թափ են ստանում որբախնամ աշխատանքները: 1915-1917 թթ. ընթացքում Ալեքսանդրապոլում բացվում են ութ որբանոցներ, որտեղ ապաստանում են ավելի քան 500 արևմտահայ որբեր: Առաջին որբանոցը բացվում է 1915 թ. նոյեմբերի 20-ին Երիտասարդական միության կողմից, որը մեծ դժվարությունների գնով, միայն իր սեփական միջոցների հաշվին պահում է որբանոցը մինչև 1916 թ. փետրվարը, երբ Ալեքսանդրապոլի մի քանի ընկերություններ՝ Եղբայրական օգնությունը, Երիտասարդական ընկերությունը, Օրիորդաց կոմիտեն և Բարեգործական ընկերությունը, համաձայնության են գալիս պահել որբանոցը միացյալ ուժերով և նույն վարչության հսկողության տակ: Այդ որբանոցը անվանվում է Միացյալ ընկերության առաջին որբանոց: Այն ուներ 5-ից 13 տարեկան 30 երեխա: 1916 թ. ապրիլի 25-ին բացվում է Միացյալ ընկերության երկրորդ որբանոցը՝ 62 որբերով:

1916 թ. հունիսի 7-ին Բասենի Բաշքեյ գյուղից Ալեքսանդրապոլ տեղափոխված որբերի համար իր առաջին որբանոցն է բացում Կովկասի հայոց բարեգործական ընկերության Ալեքսանդրապոլի ճյուղը, իսկ 2-րդ որբանոցը բացվում

⁹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1242, ք. 1:

է 1916 թ. հունիսի 27-ին՝ Սասունից գաղթած 108 որբերի համար: Երկու որբանոցներն էլ Բարեգործական ընկերության Ալեքսանդրապոլի ճյուղի նախագահ Հակոբ Խաչվանքյանի ջանքերի արդյունքն էին: Իր որբանոցներն է բացում նաև Կովկասի հայոց բարեգործական ընկերությանը կից, պատերազմից տուժվածներին օգնող Հայկական կենտրոնական կոմիտեն: Առաջին որբանոցը, որի վերահսկողությունը պատկանում էր Ալեքսանդրապոլի գաղթականական դպրոցի ուսուցչական խմբին՝ Հովսեփ Միրզոյանի ղեկավարությամբ, բացվում է 1916 թ. ապրիլի 1-ին (Պատերազմից վնասվածներին օգնող Հայկական կենտրոնական կոմիտեի առաջին որբանոց), 1916 թ. հուլիսին նույն խմբի և Միրզոյանի վերահսկողությամբ բացվում է երկրորդ որբանոցը (Պատերազմից վնասվածներին օգնող Հայկական կենտրոնական կոմիտեի 2-րդ որբանոց), 1917 թ. նաև՝ երրորդը:¹⁰ Այս որբանոցներն այլ հոգաբարձություն չունեին և ամբողջովին ենթարկվում էին Կենտրոնական կոմիտեին: 8-րդ որբանոցը, որ հասկացրած էր զուտ քոստ-քաչալներին, գատված էր մյուս որբանոցներից և ոչ մի առնչություն չունեի նրանց հետ: 1917 թ. հունվարի 15-ին Լոնդոնի Հայկական Կարմիր խաչի և փախստականների կոմիտեի հիմնադիր Էմիլի Ռոբինսոնի միջոցներով 8-12 տարեկան 40 սասունցիների համար Ալեքսանդրապոլում մի նոր որբանոց է բացվում, որն անվանվում է նրա անունով՝ «Ռոբինսոն»:

Գաղթականների և որբերի օգնության գործում անսահման մեծ էր Գևորգ Ե. Ամենայն Հայոց Կաթողիկոսի դերը, որը թե բարոյապես և թե նյութապես աջակցում էր գաղթականների գործերով զբաղվող կազմակերպություններին: Իսկ ընդհանրապես, նշված որբանոցները բացվում էին անհատների սեփական միջոցներով, որոնց ծախսերն այնուհետև վճարվում էր Կովկասի հայոց բարեգործական ընկերության կողմից:

Հասարակական գործիչները, շատ հաճախ չսպասելով

¹⁰ ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 547, թ. 122-123:

Կովկասի հայոց բարեգործական ընկերության կողմից փող ստանալուն, իրենց միջոցներով կամ պարտք վերցնելով էին լուծում գաղթականների օգնության (խնամատարության) հարցերը: Լինելով քաղաքում հայտնի և վստահելի մարդիկ, նրանք առևտրականներից առանց փողի ապրանք էին վերցնում՝ հետո վճարելու պայմանով: Մակայն փողի արագ արժեզրկման պայմաններում հաճախ հայտնվում էին անելանելի վիճակի մեջ՝ մի կողմից կորցնելով վստահությունը քաղաքի հասարակության մեջ, մյուս կողմից՝ մեղադրվելով չարաշահումների համար: Մասնավորապես, Բարեգործական ընկերության հայկական կենտրոնական կոմիտեի վերահսկիչները բազմաթիվ թերություններ էին գտնում այդ որբանոցների աշխատանքներում:

Գաղթականների օգնության և որբախնամ գործունեության մեջ աչքի էին ընկնում նաև Ալեքսանդրապոլի կանայք, որոնք, ստեղծելով զանազան միություններ, բացում էին որբանոցներ, արհեստանոցներ, կատարում՝ հանգանակություններ: 1917 թ. ապրիլի 7-ին Ամենայն հայոց կաթողիկոսը, գիտակցելով հայ ժողովրդի համար այդ ծանր պահերին հասարակության բոլոր ուժերի օգտագործման անհրաժեշտությունը, իր կոնդակով վերականգնում է կանանց իրավունքները համայնական գործերի մեջ:¹¹ Մեծ էր կանանց դերը հատկապես որբերի խնամքի և դաստիարակության գործում: Նրանք աշխատում էին դպրոցներում՝ հաճախ անվճար կամ շատ ցածր աշխատավարձով:

Գաղթականների գործով զբաղվող կազմակերպությունները հատուկ ուշադրություն էին դարձնում գաղթականների

¹¹ Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք 4, Արտակ եպիսկոպոս Սմբատյանց (Տառչեցի), իզդեր, գրական, պատմաբանասիրական գործունեությունը և գնդակահարությունը, (1876-1937), կազմ. Սանդրո Բեհրուդյան, Եր. 1997, թ.116-117:

երեխաների համար դպրոցների բացման գործին:¹² 1915 թ. Ալեքսանդրապոլի գավառում ապաստանած Հայոց մեծ եղեռնից մազապուրծ հազարավոր արևմտահայ գաղթականների մեջ մեծ թիվ էին կազմում երեխաները: Մինչև 1915 թ. հոկտեմբերը Ալեքսանդրապոլ քաղաքում նրանց թիվը հասնում է 10045-ի :¹³

Պատահական չէր, որ 1915 թ. հունվարին Գևորգ Ե. Ամենայն հայոց կաթողիկոսի հովանավորությամբ Ալեքսանդրապոլում ստեղծված Եղբայրական օգնության կոմիտեն իր գործունեության մեջ կարևորում էր հատկապես գաղթական երեխաների համար դպրոցների բացումը և նրանց տարրական կրթության ապահովումը: Ալեքսանդրապոլի թեմի թեմակալ առաջնորդ Արտակ վարդապետի գլխավորությամբ Եղբայրական օգնության կոմիտեն գաղթականներին տեղավորելուց և մյուս հարցերը կարգավորելուց հետո անմիջապես ձեռնամուխ է լինում գաղթական երեխաների համար դպրոցներ բացելու գործին:

Դեռևս 1915 թվականի ամռանը Եղբայրական օգնության կոմիտեի հանձնաժողովի որոշմամբ Հովսեփ Միրզոյանը ամառային դպրոց է բացում թվով 280 գաղթական երեխաների համար, ուր անվճար դասավանդում էին Արդուքյան դպրոցավարտ օրիորդները: 1915 թվականի սեպտեմբերից այդ ամառային դպրոցը վերածվում է հատուկ դպրոցի, որը բացվում է որպես Ս. Փրկչի վիճակային դպրոցի գույրնթաց դասարան: Այս դպրոցում ևս դասավանդում էին Արդուքյան դպրոցի օրիորդները: Մանկավարժական ամբողջ կազմն ամենայն եռանդով և սիրով էր կատարում իր պարտականությունը գաղթական երեխաների հանդեպ: Իրենց հիմնական գործից բացի նրանք անվճար վարում էին նաև քարտուղարի, վերակացուի, գրադարանավարի, դաստիարակչուհու պաշտոններ:

¹² Տես Կ. Ալեքսանյան, Գաղթականական դպրոցներն Ալեքսանդրապոլի գավառում 1915-17 թթ., Գ.ՊՄԻ 75 ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2009, էջ 92-95:

¹³ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1287, ք. 3-5:

րը: Երեխաների զարգացման հորիզոնն ավելի լայնացնելու համար մանկավարժները, Եղբայրական օգնության կոմիտեի հանձնաժողովի անդամների օգնությամբ կազմակերպում էին զբոսանքներ, մանկական ներկայացումներ և հանդեսներ: Ուսուցչական կազմը հաճախ կազմակերպում էր ծնողական ժողովներ և մանկավարժական նիստեր՝ տնտեսական հարցերը լուծելու համար:¹⁴ 1916 թ. վերջերին արդեն Ալեքսանդրապոլ քաղաքում փախստական երեխաների համար բացված դպրոցների թիվը հասել էր չորսի, որոնցից երկուսն երթևեկ երեխաների համար, իսկ երկուսը՝ որբերի: Փախստական երեխաների դպրոցն առանձնակի պարծանքի առարկա էր Եղբայրական օգնության հանձնաժողովի գործունեության մեջ: Հետևաբար կոմիտեն ջանք չէր խնայում դպրոցն ընդարձակելու, հնարավորին չափ շատ երեխաներ ընդգրկելու և նպաստավոր պայմաններ ստեղծելու դպրոցի գործունեության համար:

Դպրոցներ էին բացվում ոչ միայն Ալեքսանդրապոլում, այլև գավառի բոլոր գյուղերում: Որոշ գյուղերում գաղթական աշակերտների թիվը հասնում էր մինչև 80-100-ի: Այս դպրոցներում ուսուցիչները գաղթական երեխաների հետ պարապում էին կամ առանձին, կամ տեղի երեխաների հետ միասին: 1916 թ. դեկտեմբերին գաղթական երեխաների թիվը, հատկապես գյուղերի դպրոցներում գնալով պակասում էր կապված ձմռան ցրտերի հետ, քանի որ նրանցից շատերը չոր չունենալու պատճառով չէին հաճախում դպրոց, չկային նաև գրենական պիտույքներ և նստարաններ:¹⁵

Չնայած թափած ջանքերին՝ գաղթական բոլոր երեխաներին տեղավորել դպրոցներում և բարենպաստ պայմաններ ստեղծել նրանց համար չի հաջողվում: Ավելին, 1917 թ. գաղթականների թիվը գնալով շատանում է, մինչդեռ Ալեքսանդրապոլի բնակչության տնտեսական վիճակը՝ վատանում: Ալեքսանդրապոլի հասարակությունը գնալով դժվարանում է

¹⁴ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1242, թ. 11:

¹⁵ Նույն տեղում, ֆ. 28, ց. 1, գ. 428, թ. 1:

աջակցել գաղթականներին: Հասարակության սկզբնական ոգևորությունը կամաց-կամաց մարում է, նվիրատվությունները նվազում են և նույնիսկ՝ դադարում: Այս համագամանքն իր ազդեցությունն է թողնում նաև գաղթականական դպրոցների գործունեության վրա:

Հասարակական այս տրամադրություններն իրենց արտահայտությունն են գտնում գաղթականական դպրոցների ուսուցիչների բողոքներում, որոնց սկզբնական ոգևորությունը ևս մարել էր, և որոնք, ոչ միայն արդեն ձրի չէին աշխատում, այլև նույնիսկ բազմիցս բողոքներ էին ներկայացնում իրենց աշխատավարձի բարձրացման համար:¹⁶

Ալեքսանդրապոլ քաղաքում գործող, գաղթականների հոգածությամբ զբաղվող միությունները հատուկ ուշադրություն էին դարձնում նաև արհեստանոցների բացմանը և գաղթականներին ներգրավելով աշխատանքի մեջ՝ փորձում էին մեղմել նրանց վիճակը: Բացի այդ դրանք՝ հատկապես հայրենակցական միությունները, արհեստներ էին սովորեցնում գաղթականներին՝ հույս ունենալով, որ պատերազմից անմիջապես հետո վերջիններս կվերադառնան երկիր և ձեռնամուխ կլինեն վերաշինության գործին: Ընդ որում, պատերազմը դեռ չավարտված, շատ գաղթականներ էին դիմում իրենց հայրենի օջախները վերադառնալու հնարավորություն ստանալու խնդրանքով:

Գաղթականների մոտ այս տրամադրություններն ավելի ակնհայտ են դառնում 1917 թ. վերջերին, երբ գաղթականների անընդհատ նոր հոսքի պայմաններում, Ալեքսանդրապոլի հասարակությունն այլևս դժվարանում է նույն թափով և ոգևորությամբ շարունակել իր որբախնամ գործունեությունը և բավարարել գաղթականների մեծաքանակ կարիքները:

Մինչև 1917 թվականը Ալեքսանդրապոլն ընդունել և ճանապարհել էր 85-95 հազար գաղթականների: Բուն Ալեքսանդրապոլում 1917 թվականին նրանց թիվը հասնում էր 25754-ի: Հետագայում ևս նրանց թիվը չի նվազում: Ավելին, սկսվում է

¹⁶ ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 347, ք. 8-9:

գաղթականության նոր հոսք: Գաղթականների և որբերի խնամատարության գործով զբաղվող կազմակերպություններն ու անհատները հայտնվում են անելանելի դրության մեջ: Ալեքսանդրապոլի գաղթականական գործերով զբաղվող հաստատությունների կողմից ընտրված պատգամավորներ Ս. Տեր-Գրիգորյանը և Ս. Բորոյանը 1917 թ. սեպտեմբերի 20-ին դիմում են Գևորգ Ե-ին՝ խնդրելով հաշվի առնելով քաղաքի տնտեսական վիճակի վատարացումը և հետևաբար նվիրատվությունների պակասելը, որոշ գումար տրամադրել իրենց՝ գաղթականների գործը կազմակերպելու համար, ինչպես նաև պատվիրակություն ուղարկել Կովկասի և Ռուսաստանի հայաշատ վայրերը և, կոչ անել հարուստ հայերին՝ օգնության հասնել թուրքական կոտորածից ազատված տաճկահայ վերջին բեկորներին:

Չնայած նշված բոլոր դժվարություններին, 1918 թ. ընթացքում ևս Ալեքսանդրապոլի հասարակությունը շարունակում էր սատարել եղեռնից մազապուրծ հայրենակիցներին՝ հնարավորության սահմաններում օգնել նրանց, մինչև որ մայիսին, թուրքերի կողմից քաղաքը գրավելու ժամանակ, ինքը ևս ստիպված է լինում բռնել գաղթի ճանապարհը:

1918 թվականի մայիսի 15-ին թուրքերի անակնկալ հարձակումն անօրինակ խուճապ է առաջացնում Ալեքսանդրապոլում: Մի քանի ժամվա ընթացքում քաղաքը գրեթե դատարկվում է բնակիչներից: Քաղաքից հեռանում են ոչ միայն այստեղ ապաստանած գաղթականների և տեղի բնակիչների մեծ մասը, այլև քաղաքային ինքնավարության ամբողջ կազմը, հասարակական, գաղթականական, բանկային, կոոպերատիվ, մթերային բոլոր կազմակերպությունները, ինչպես նաև քաղաքային ամբողջ միլիցիան՝ իր շտաբով:

Ալեքսանդրապոլում մնացած անպաշտպան բնակիչները, ձգտելով ապահովել իրենց կյանքն ու գույքը, թուրքերի քաղաք մտնելու ժամանակ նրանց ընդառաջ են ուղարկում մի պատվիրակություն Մ. Ղազարյանի գլխավորությամբ: Թուրքերը խոստանում են չվնասել բնակչությանը՝ չդիմադրելու և

քաղաքը չայրելու պայմանով: Մայիսի 17-ին Ալեքսանդրապոլում, փոխադարձ համաձայնությամբ, ստեղծվում է քաղաքային նոր իշխանություն՝ քաղաքային խորհուրդ և քաղաքային վարչություն:¹⁷

Փախստականները Ղարաքիլիսայում մի քանի օր առանց սննդի և հագուստի մնալով բաց երկնքի տակ, հասկանալով որ դատապարտված են անխուսափելի կործանման՝ Ալեքսանդրապոլի թեմական առաջնորդ Արտակ վարդապետի գլխավորությամբ պատվիրակություն են ուղարկում թուրք հրամանատարության մոտ՝ խնդրելով թույլ տալ իրենց քաղաք վերադառնալ: Թուրքերը, թեև պատվիրակությանը հնարավորություն են տալիս հասնել մինչև Ալեքսանդրապոլ, սակայն մերժում են նրանց խնդրանքը: Նրանք, մեղադրելով բնակչությանը քաղաքից փախչելու համար, խոստանում են թույլատրել երեք օր հետո միայն նրանց վերադարձը: Իհարկե, նման մտադրություն թուրքերը չունեին, ընդհակառակը՝ պատրաստվում էին հարձակվել Ղարաքիլիսայի վրա: Հայ բնակչության փախուստը Ղարաքիլիսայից կանխելու համար, նրանք պատվիրակության անդամներին ցույց են տալիս, որ Ալեքսանդրապոլում կազմակերպված են տեղական իշխանության մարմիններ, հավաստիացնելով, թե իբր քաղաքում մնացող հայերին ոչ մի վտանգ չի սպառնում: Ընդամենը մի քանի օր հետո Ալեքսանդրապոլի գավառից փախած բնակչության մի մասին կոտորում և թալանում են Ղարաքիլիսայում, իսկ փրկվածներին չեն թույլատրում վերադառնալ: Ղարաքիլիսայի անկումից հետո, թուրքական երեքօրյա արյունոտ խրախճանքին տեղի բնակիչների հետ զոհ են գնում նաև հազարավոր արևմտահայ գաղթականներ: Ղարաքիլիսայում կուտակված բազմահազար հայությունը հայտարարվում է ռազմագերի, իսկ նրա ունեցվածքը՝ պետության սեփականություն:¹⁸ Եվ նույնիսկ Բաթումի պայմանա-

¹⁷ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2711, ք.3-4

¹⁸ Մ. Ղազարյան, Ղարաքիլիսայի հերոսամարտը (Ականատեսի հիշողություններից), Ե. 2009, էջ 27:

գրի կնքումից հետո, որով կողմերը պարտավորվում էին վերադարձնել փախստականներին իրենց բնակության վայրերը,¹⁹ թուրքերը շարունակում էին բազմաթիվ արգելքներ հարուցել՝ թույլ չտալով հայ բնակիչների վերադարձը: Նոր ստեղծված քաղաքային վարչությունը, հետագայում նաև Ալեքսանդրապոլում ՀՀ ներկայացուցիչ Գ. Խոյեցյանը, թուրքական իշխանություններին ուղղված բազմաթիվ դիմումներով փորձում էին դյուրացնել փախստականների վերադարձը: Մակայն, թուրքերը հնարավորության սահմաններում ձգձգում էին այս հարցը:²⁰ Թեև 1918 թ. հունիսի 28-ին Գյումրու նահանգապետ Ռեջեբ բեյի հրամանով թույլատրվում էր Ալեքսանդրապոլի գավառի փախած բնակիչներին վերադառնալ իրենց գյուղերը, սակայն երկար ժամանակ շարունակում էին արհեստական դժվարություններ ստեղծել՝ հատկապես Ալեքսանդրապոլ վերադարձողների համար: Ինչ վերաբերում է արևմտահայ գաղթականներին, ապա նրանց միանշանակ չէր թույլատրվում վերադառնալ իրենց հայրենի օջախները:²¹ Այնուամենայնիվ մեծ թվով գաղթականների թուրքերն ուղարկում են Կարս, Էրզրում և Արևմտյան Հայաստանի այլ վայրեր՝ տաժանակիր աշխատանքի: Ալեքսանդրապոլի գավառը գրավելուց հետո, առաջին իսկ օրերից, նրանք զանազան խարդախ ու խորամանկ միջոցներով (հաց բաժանելու, ցուցակագրելու և այլ պատրվակներով) եկեղեցիներում ու հրապարակներում հավաքում են զինվորական հասակ ունեցող տղամարդկանց և աշխատանքի ուղարկելու պատրվակով տեղափոխում Էրզրում և ուրիշ վայրեր: Ալեքսանդրապոլի քաղաքային վարչության տվյալներով ուղարկվածների մեջ մեծ թիվ էին կազմում հատկապես արևմտահայ գաղթականները:²²

Թուրքական բռնազավթման պայմաններում գործող քա-

¹⁹ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, թ. 332:

²⁰ Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 126, թ. 12-13:

²¹ Նույն տեղում, ֆ. 105, ց. 1, գ. 2457, թ. 4:

²² Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 126, թ. 94:

դաքային ինքնավարությունը ջանում էր հնարավորության սահմաններում մեղմել թուրքական բռնությունները: Մասնավորապես, օգնություն էր ցույց տրվում զանազան շրջաններից Ալեքսանդրապոլում և գավառում ապաստանած գաղթականներին՝ բացելով նրանց համար որբանոցներ, հանրակացարաններ:²³

1918 թ. դեկտեմբերին Ալեքսանդրապոլի գավառից թուրքերի հեռանալուց հետո տեղական իշխանությունների և հասարակության առջև ծառացած բազմաթիվ խնդիրների մեջ առաջնային տեղ է զբաղեցնում գաղթականների խնամատարության հարցը:²⁴

Առաջին աշխարհամարտում Թուրքիայի պարտությունից հետո Ռուսաստանից և Հայաստանի Հանրապետության տարբեր վայրերից բազմաթիվ գաղթականներ էին շտապել Ալեքսանդրապոլ՝ այնտեղից շուտով իրենց հայրենի օջախները վերադառնալու հույսով: Հայաստանի առաջին հանրապետության Կենտրոնական վիճակագրական բյուրոյի 1919 թվականի հունվարի տվյալներով Ալեքսանդրապոլի գավառում ապաստանել էր 31989 արևմտահայ գաղթական:²⁵ Մեծ թիվ էին կազմում նաև Կարսից փախած գաղթականները, որոնք կուտակվել էին այստեղ՝ սպասելով սահմանների բացվելուն: Նման հույսերի համար հիմք էր հանդիսացել 1919 թ. հունվարի 8-ին Արևմտյան Անդրկովկասում բրիտանական ուժերի հրամանատար Ջորջ Ֆորեսթեր-Ուոքերի և Հայաստանի արտաքին գործերի նախարար Սիրեկան Տիգրանյանի միջև կնքված Կարսի մասին համաձայնությունը, որով մինչև Փարիզի հաշտության վեհաժողովի ձեռք առնելիք միջոցառումները, այդտեղ բոլոր քաղաքացիական պաշտոնյաները

²³ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 126, թ. 96:

²⁴ Կ. Ալեքսանյան, Արևմտահայ գաղթականությունը Ալեքսանդրապոլի գավառում 1918-20 թթ., Հանրապետական յոթերորդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2007, էջ 108-114:

²⁵ ՀԱԱ, ֆ. 127, ց. 1, գ. 2976, թ. 20:

նշանակվելու էին հայկական կառավարության կողմից.²⁶ Վերջիններս պատասխանատու էին լինելու ներքին գործերի նախարարությանը, բայց ենթակա՝ անգլիական զինվորական նահանգապետին այն հարցերում, որոնք կապահանջեին նրա միջամտությունը.²⁷ Հուլիսի համաձայն հայ պաշտոնյաները պետք է մեկնեին հունվարի 12-ին և մինչև հունվարի 15-ն իրենց ձեռքը վերցնեին երկաթուղու և հեռագրի գծերը մինչև Կարս քաղաք, իսկ թուրքերի դուրսերման ավարտելուց հետո՝ Կարսից Սարիղամիշ և թուրքական սահման տանող երկաթգիծը: Բայց, երբ հունվարի 12-ին այս համաձայնության հիման վրա անգլիական զինվորական նահանգապետն ու հայ պաշտոնյաները մեկնում են Կարս, թուրքերն այստեղ նրանց թշնամաբար են ընդունում, և անգլիական նահանգապետի խորհրդով հայերը վերադառնում են Ալեքսանդրապոլ: Անգլիացիները, փաստորեն, չցանկանալով փչացնել հարաբերությունները թուրքերի հետ, ճանաչում են թուրքերի իշխանությունը Կարսում.²⁸ Այս հանգամանքը ծանր վիճակ է ստեղծում Ալեքսանդրապոլում խմբված և սահմանների բացվելուն անհամբեր սպասող հազարավոր գաղթականների համար: 1919 թվականի հունվարի 25-ին Հ. Քաջազնունին, ներկայացնելով գաղթականների ծանր վիճակը, կոչ է անում գնդապետ Ֆորեսթեր-Ուոքերին չեղյալ հայտարարել հայրենադարձությունն արգելակող հայտարարությունը, կամ գոնե բաժին հասնել Կարսում պահեստավորված ցորենից, որը Հայաստանի Հանրապետության օրինական սեփականությունն է: «Գոնե Կարսի հացի մի մասը պետք է ուղարկվի Ալեքսանդրապոլ,- գրում է Քաջազնունին,- հակառակ դեպքում աղետն անխուսափելի է: Մաս-

²⁶ Ռ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հ.1, Եր. 2005, էջ 222:

²⁷ Հայաստանի կառավարությունը Կարսի քաղաքացիական նահանգապետ է նշանակում Ստեփան Դորդանյանին: Ֆորեսթեր-Ուոքերը զինվորական նահանգապետ է նշանակում հրաձգային բրիգադի 4-րդ գումարտակի համարգ կապիտան Քլայվ Էրրինգթոն Թեմպլրիին:

²⁸ Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 257:

սաները հասցւած են հուսահատութեան, նրանք ընդունակ են խելացնոր արարքների, կառավարութիւնը ի վիճակի չէ նրանց պահել Արփաշայի այս կողմը»:²⁹

Կարսը միայն 1919 թ. մայիսին է հանձնվում հայերին: Իսկ մինչ այդ Ալեքսանդրապոլում խմբված գաղթականների մեծ մասը դատապարտվում է մահվան: «Ալեքսանդրապոլը, - գրում է մի ամերիկացի դիտորդ, որը Հայաստանում ծանապարհորդում էր նպաստամատույցի պաշտոնյաների հետ, - մի ավերված քաղաք է (թուրքերի ձեռքի գործը՝ նահանջելիս), ունի փողոցներ, որոնք նման են հուսահատության խորխորատի, հարթ կտուրներով տներ, ցնցոտիներ հագած մարդկանց երկար շարքեր՝ նստած, պառկած, նիքիող և մեռնող ... Համատարած լռություն էր ծանրացել Ալեքսանդրապոլի վրա՝ մի խոր և չարագուշակ լռություն, ասես թե ամբողջ քաղաքը խեղդել էր իր ձայնը՝ անվերջ թաղումների հանդեպ ունեցած հարգանքից: Մենք չտեսանք ոչ մի բիրտ արարք, ոչ մի անկարգություն: Մարդիկ խաղաղ էին և խորասուզված անուրջների մեջ, ասես երկար ժամանակ արևկող էին անում փողոցներում՝ սնվելով հույսերով»:³⁰

Թուրքական սարսափներն ապրած, ամբողջովին թալանված գավառը ստիպված է լինում վերստին հոգալ գաղթականների խնամատարությունը: Դեռևս 1918 թ. դեկտեմբերի 10-ին կազմավորվում է Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնավարության գաղթականական կոմիտե՝ Մ. Ղազարյանի նախագահությամբ: Կոմիտեն իր առաջ խնդիր է դնում ապահովել գաղթականներին բնակարաններով, սննդամթերքով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքն ի վիճակի չէ ապահովելու գաղթականներին տեղով և պարենով, կոմիտեն որոշում է դիմել ՀՀ խնամատարության նախարարությանը՝ խնդրելով դրամական օգնություն և միաժամանակ միջնորդություն պարենավորման նախարարության առաջ՝

²⁹ ՀՄԱ, ֆ.200, ց.1, գ. 92, թ. 86:

³⁰ Melville Chater, *The land of Stalking Deafh*, "National Geographic Magazine", vol. XXXVI, November, 1919, p. 407.

մթերք ուղարկելու գաղթականների համար, նաև ապահովել անգլիական և ֆրանսիական կառավարությունների ներկայացուցիչների աջակցությունը՝ Կարսից գաղթականների համար ցորեն գնելու: Կոմիտեն հեռագրով դիմում է Ղարաքիլիսա և Թիֆլիս՝ խնդրելով դադարեցնել գաղթականների հոսքը Ալեքսանդրապոլ՝ «մինչև Կարսի պարպումը թուրքերից»:

Խնամատարության նախարարությունը, խոստանալով ֆինանսական օգնություն, առաջարկում է կանգ չառնել ծախսերի առաջ, բացել հիվանդանոցներ և ապաստարաններ: Նախարարության աջակցությամբ որոշվում է քաղաքում բացել սննդատու կայաններ, նաև՝ հիմնել հիվանդանոց: Քաղաքը բաժանվում է վեց մասերի՝ մեկական սննդատու կայանով: Հետագայում դրանց թիվը հասնում է 10-ի: Ոգևորված սրանից՝ կոմիտեն խնամատարության նախարարությանն առաջարկում է Ալեքսանդրապոլի գավառում սոսկալի դրության մեջ գտնվող 20000 գաղթականների հոգաժությունը ևս վերցնել իր վրա՝ խնդրելով դրամ ու հրահանգ գավառի գաղթականներին նպաստ բաժանելու համար: Մակայն շուտով այս ոգևորությունը տեղի է տալիս. մի կողմից «տեղ չեն հասնում» կառավարության խոստացած փողերը, մյուս կողմից՝ գաղթականների խնամատարության գործում լուրջ դժվարություններ են առաջացնում անբարեխիղճ լիազորների չարաշահումները:

Թեև կոմիտեն հաճախ աշխատանքից ազատում է անբարեխիղճ լիազորներին և ընդունում՝ նորերին, բայց այդպես էլ չի կարողանում կանխել զեղծումները և ապահովել վերահսկողությունը:

Ակնհայտ էր, որ գավառի իշխանությունները և հասարակությունը չէին կարող սեփական ուժերով լուծել գաղթականության խնդիրը: 1919 թվականի փետրվարից սննդատու կայանների պարենավորման գործն իր վրա է վերցնում Մերձավոր Արևելքի նպաստամատույց ամերիկյան կոմիտեն: Իսկ Քաղաքային ինքնակարության գաղթականական կոմիտեն իր աշխատանքները շարունակում է մինչև 1919 թ. ապ-

րիլի 2-ը, երբ գաղթականների խնամատարության գործն ամբողջովին անցնում է ամերիկյան կոմիտեի ձեռքը: 1920 թ. մայիսին Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Լ. Սարգսյանի և Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի ներկայացուցիչների փոխադարձ համաձայնությամբ ամերիկյան կոմիտեն ստանձնում է նաև որբերի խնամատարության գործը:³¹

Արևմտյան Հայաստանի տարբեր շրջանները գաղթած հսկայական թվով գաղթականությունը լցվում է Ալեքսանդրապոլի Պոլիգոնի³² ցուրտ և քարաշեն շենքերը, որոնք չունեին ոչ մի հարմարություն Ալեքսանդրապոլի ահապոր ցրտից գաղթականներին պատսպարելու համար: Պոլիգոններում հավաքվել էին արևմտահայ գաղթականների ամենաթշվառ մասը, որը գյուղերում կամ քաղաքում ապրելու հնարավորություն չունեին: Գաղթականության վիճակն այստեղ ողբերգական էր: Պոլիգոնը նրանց համար դառնում է իսկական դժոխք: Յրտից և սովից յուրաքանչյուր օր այստեղ մեռնում են միջին հաշվով 15-20 գաղթականներ:³³

Գաղթականների մի մասը հրաժարվում էր ապրել հանրակացարաններում և ուղղակի «թափված» էր Ալեքսանդրապոլի փողոցներում: Գաղթականների մահը Ալեքսանդրապոլը վերածում է համընդհանուր գերեզմանոցի՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով վարակիչ հիվանդությունների տարածման համար: 1920 թվականի սկզբին Ալեքսանդրապոլում բռնկված տիֆը բազմաթիվ կյանքեր է խլում: Պոլիգոնի հանրակացարաններում օրական 25-26 մահվան դեպքեր են արձանագրվում:

1920 թվականի հունվարի 7-ին Ալեքսանդրապոլի

³¹ ՀԱԱ, ֆ.105, ց. 1, գ. 2853, ք.153:

³² Պոլիգոնի ռազմական բազաները կառուցվել են ցարական կառավարության կողմից: Ռուսական զորքի հեռանալուց հետո վերածվել են հանրակացարանների, որտեղ տեղավորվել են բազմահազար գաղթականներ:

³³ ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ.801, մաս 1, ք.13:

Բաշխման կոմիտեի³⁴ նախագահ Միհրան Գրիգորյանը ՀՀ խնամատարության նախարարին ուղղված գրության մեջ, տեղեկացնելով ստեղծված հուսահատական դրության մասին՝ առաջարկում է կտրուկ միջոցների դիմել:

Հանրապետության խնամատարության և վերաշինության նախարարությունը որոշում է հանրակացարաններում ապրող գաղթականներին տեղափոխել Կարսի շրջանի լքված գյուղերը: Սակայն գաղթականները չէին ցանկանում տեղափոխվել՝ վախենալով ցրտից և սովից, ինչպես նաև անցյալը կրկնվելուց: Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի գնդապետ Ռոբինսոնը Կոմիտեի Երևանի շրջանի կառավարչին գրում է, որ գաղթականները համառում են, ձմերի մեջ են պառկում և հրաժարվում կայարան գնալուց: Ամերիկացիները դիմում են կտրուկ միջոցների՝ սպառնալով համառողներին գրկել հացից:³⁵

Խնամատարության նախարարի հանձնարարությամբ Պոլիգոն է մեկնում Սեպուհը, հանդիպում գաղթականների հետ, համոզում նրանց, որ տեղափոխվեն Կարսի շրջան, խոստանում, որ պայմանները նույնը կլինեն, ինչ Պոլիգոնում:³⁶ Գաղթականները հավաստիացնում են, որ տեղափոխությունը լավ հիմքերի վրա դնելու դեպքում նրանք պատրաստ են տեղափոխվելու: Իսկապես, Պոլիգոնում ստեղծված դժոխսային կացությունը գաղթականներին հարկադրում էր

³⁴ 1919 թվականի դեկտեմբերին ՀՀ խնամատարության նախարարության և Ամերիկյան կոմիտեի մեջ կնքված համաձայնագրով՝ ապրանքների փոխադրությունը պետք է կատարվեր ամերիկացիների միջոցով, իսկ բաշխումը՝ խնամատարության նախարարության: Բաշխման գործը կազմակերպելու համար կազմվում է երեք հոգուց բաղկացած գլխավոր բաշխման կոմիտե և 10 շրջանային կոմիտեներ: Բացի հազուստեղենից, որ ամերիկացիների տրամադրության տակ էին և նրանք էլ բաժանում էին, մյուս մթերքները բաժանել կարող էին միայն բաշխման կոմիտեի կողմից ցուցակները վավերացնելուց հետո, առանց վավերացման պահեստները իրավունք չունեին մթերք բաց բոլոնելու:

³⁵ ՀԱԱ. ֆ. 205, ց. 1, գ. 634, 1 մաս, ք. 11-12:

³⁶ Նույն տեղում, գ. 801, մաս 1, ք.32:

թողնել ամեն ինչ և հեռանալ այդ մահասարսուռ գերեզմանից, որտեղ նրանք կենդանի մահատակվում էին:

Ձեռնարկված աշխատանքների շնորհիվ հունվարի 21-ին հազար հոգի ցանկություն են հայտնում մեկնել Կարս: Սակայն ամերիկացիները, պատճառաբանելով մագութի բացակայությունը, ձգձգում են տեղափոխությունը:³⁷ Հունվարի 25-ին Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Հայկ Մելքոնյանը խնդրում է Ամերիկյան նպատամատույց կոմիտեի զննապետ Ռոբինսոնին արտակարգ միջոցներ ձեռնարկել՝ կանխելու համար անխուսափելի աղետը:³⁸

Հունվարի 26-ին մեկնում են առաջին 500 հոգին: Սակայն, ինչպես երևում է Սեպուխի ՀՀ խնամատարության նախարարին ուղղված հեռագրերից, գաղթականների անհանգստությունը տեղին էր: Գաղթականների համար արած ՀՀ խնամատարության նախարարության կարգադրությունները Ամերիկոյի տեղի ներկայացուցիչների կողմից չէին իրականացվում: Նրանք անում էին այն, ինչ իրենց էր ցանկալի: Այսպես՝ նախատեսված 10 օրվա փոխարեն տալիս էին երկու օրվա պարեն, որը կես ճանապարհին վերջանում էր: Ընդ որում պարենը տալիս էին 5-6 օր տևող ցուցակագրությունից հետո միայն՝ այդ օրերի ընթացքում քաղցած թողնելով սովալլուկ գաղթականներին: Ընդհանրապես, ամերիկացիները շարժվում էին շատ դանդաղ և երբեմն անիմաստ կարգադրություններ անելով դժվարացնում՝ գաղթականների տեղափոխումը:³⁹

Ստեղծված ծանր պայմանների և անհարմարությունների հետևանքով տեղափոխված 1800 գաղթականներ ստիպված նորից հետ են վերադառնում:

Փետրվարի 18-ին գաղթականների փոխադրությունը կազմակերպելու նպատակով Ալեքսանդրապոլ է ուղարկվում

³⁷ ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, մաս 1, ք. 36:

³⁸ Նույն տեղում, ֆ. 205, ց. 1, գ. 801, մաս 1, ք. 47:

³⁹ Նույն տեղում, ք. 54:

խնամատարության նախարարության Կարս-Ալեքսանդրապոլ շրջանի հատուկ ներկայացուցիչ Սմբատը:

Ականատես լինելով Պոլիգոնում կուտակված գաղթականության ողբալի վիճակին՝ նա փորձում է որքան հնարավոր է շուտ իրականացնել տեղափոխությունը և փրկել վերջիններին անխուսափելի մահից:

Սմբատը կազմակերպչական լուրջ աշխատանքներ է տանում այս ուղղությամբ՝ հաճախ դիմելով նաև արտակարգ և կտրուկ միջոցների: Հնարավորություն չունենալով անձամբ տեղում ուսումնասիրելու Կարս-Ալեքսանդրապոլի շրջանի այն գյուղերը, որտեղ կարող էին տեղավորվել գաղթականները, նա հավաքում է Պոլիգոնում գտնվող գաղթականների հայրենակցական համայնքներից 3-5 հուզուց կազմված ներկայացուցչական խմբեր և ուղարկում այդ գյուղերը: Սմբատը հատուկ գրասենյակ է կազմակերպում Պոլիգոնում, առանձին ներկայացուցիչներ ուղարկում լքված գյուղերը, խորհրդակցություններ իրականացնում զինվորական իշխանության, քաղաքային վարչության և քաղաքագլխի հետ:

Փետրվարի 24-ից, հետևելով նախարարության հրահանգներին, Սմբատը սկսում է կանոնավոր կերպով դատարկել Պոլիգոնը գաղթականներից: Տեսնելով, որ գաղթականների տեղափոխման գործը դանդաղում է սայլեր և փոխադրամիջոցներ չլինելու պատճառով՝ նա դիմում է նաև բռնագրավումների: Կարճ ժամանակամիջոցում Ալեքսանդրապոլի և շրջանի գյուղերից բռնագրավվում են 1800 սայլեր: Սմբատի ջանքերի շնորհիվ գաղթականներին տեղափոխելու համար համապատասխան քանակությամբ վագոններ է տրամադրում Ալեքսանդրապոլի երկաթուղային վարչությունը:

Սմբատը մի շարք միջոցառումներ է ձեռնարկում գաղթականների տեղափոխությունը և նոր պայմաններին համակերպվելը հեշտացնելու համար: Մասնավորապես, Պոլիգոնում հաստատված գրասենյակում կատարում է ցուցակագրում, հետ վերցնում գնացող գաղթականներից նպաստների գրքույքները, կազմում գնացողների ցուցակը՝ տրամադրելով

նրանց 5 օրվա, իսկ ավելի հեռու գնացողներին՝ 10 օրվա հաց: Փոխադրվողներին հսկում են հատուկ պաշտոնյաները, իսկ ճանապարհին՝ զինված մասերը: Վերաբնակները ստանում են հագուստ և իրենց պետական նպաստը:

Տեղափոխությունները կատարվում էին որոշակի սկզբունքով: Նախ տեղափոխում էին Պոլիգոնների գաղթականներին, ապա նրանց հետ նույն գյուղերում՝ սեփական լծկաններ ունեցող գյուղացիների, այնուհետև՝ կովկասահայ չքավոր և հողագուրկ գյուղացիներին, որոնք հաստատուն կերպով կմնային տեղափոխված վայրերում: Այսպես, բացի Պոլիգոնի հանրակացարանի գաղթականներից տեղափոխել էին նաև Ալեքսանդրապոլի և Ղարաքիլիսայի շրջանների 4-5 հազար արևմտահայ գաղթականությանը, ինչպես նաև Ալեքսանդրապոլի, Լոռու, Ղարաքիլիսայի, Բորչալուի, Վրաստանի կովկասահայ 7-8 հազար ընչազուրկ գյուղացիությանը:

Սակայն այս ընթացքում, մի շարք լքված գյուղերում գաղթականների տեղավորման հարցի հետ կապված, բավականին սրվում են Սմբատի հարաբերությունները Ալեքսանդրապոլի քաղաքագլխի և զինվորական կայազորի պետի հետ:

Հակասությունն առաջանում է հատկապես Շահնազար, Ղարախաչ, Ինջիդարա, Մոկյուզ գյուղերի հարցում, որտեղ քաղաքագլուխը ցանկացել էր տեղավորել Ալեքսանդրապոլի ունևոր բնակիչներին: Այս շրջանները համարելով ստրատեգիական կարևոր վայրեր՝ քաղաքագլուխը նպատակահարմար էր համարում դրանք բնակեցնել մարտական ուժեղ տարրերով: Այդ նպատակի համար նա ստիպում է 100 ալեքսանդրապոլցիների իրենց ընտանիքներով տեղափոխվել և բնակվել այս գյուղերում: Սակայն այդ մարդիկ հասնելով նշված գյուղերը, տեսնում են, որ դրանք արդեն զբաղեցրել են գաղթականները և իրենք մնում են բաց երկնքի տակ: Հայտնվելով շատ ծանր դրության մեջ՝ քաղաքագլուխը մարտի 9-ին ՀՀ խնամատարության նախարարին, Ղարսի նահանգապետ Ս. Ղորդանյանին և Դ. Փիրումովին ուղղված իր հեռագրով խնդրում է դատարկել Շահնազար գյուղը գաղթականներից,

փրկելով իրեն այն մարդկանցից, ում ինքը ստիպել էր հաստատվել այդ գյուղում: Սակայն Սմբատը ոչ մի զիջման չի գնում՝ քաղաքագլխի արարքը համարելով շահադիտական նպատակներով արված քայլ: Այս կապակցությամբ քաղաքագլխի և Սմբատի միջև լուրջ բախում է տեղի ունենում: Սմբատը նույնիսկ վիրավորում է քաղաքագլխին, երբ վերջինս հրաժարվում է փոխադրամիջոցներ տրամադրել գաղթականներին տեղափոխելու համար: Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Հայկ Մելքոնյանը խնամատարության նախարարին զգուշացնում է, որ այդ գյուղերում կարգ ու կանոնի, ինչպես նաև ինքնապաշտպանության կազմակերպման հանձնումը մասնավոր անձին և ոչ թե պետական գործչին՝ հղի է մեծ բարդություններով և առաջարկում հարցը լուծել, հակառակ դեպքում հրաժարվելով հետագա անցանկալի երևույթների համար պատասխանատվությունից: Իր հերթին Սմբատը հեռագրում է նախարարին, որ ինքը պատասխանատու չէ քաղաքագլխի և կայազորի պետի գործողությունների արդյունքում գաղթականների շրջանում առաջացած հուզումների համար: Ի դեպ քաղաքագլխի հետ համամիտ էր նաև Ալեքսանդրապոլի կայազորի պետ գեներալ Պ. Խաչատուրովը: Նա առաջարկում էր խնամատարության նախարարին՝ ելնելով ռազմավարական դրությունից, գաղթականներին բնակեցնել միայն Մոլլամուսա, Վարդանլի, Բաջողի, Ղարաքիլիսա գյուղերում, իսկ մնացած գյուղերը բնակեցնել Կովկասի հայերով:

Քաղաքային վարչությունը որոշում է ոչ մի գործ չունենալ գաղթականության տեղափոխման հետ, քանի դեռ երկիշխանությունը չի վերացել և Սմբատը չի հեռացվել այդ գործից:⁴⁰ Ստեղծված իրավիճակն ի վերջո հանգեցնում է նրան, որ Ալեքսանդրապոլի քաղաքագլուխն, իր դիմումի համաձայն, ապրիլի 3-ին ազատվում է պաշտոնից:⁴¹ Ի դեպ նրան փոխարինած Պարույր Գյոնջյանը ևս բարձրացնում է այս

⁴⁰ ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, մաս 1, ք. 161:

⁴¹ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2807, ք. 9:

հարցը՝ առաջարկելով հստակեցնել պարտականությունները և վերացնել երկիշխանությունը:⁴²

Ինչևէ, մինչև մարտի 22-ը Պոլիգոնն ամբողջովին դատարկվում է գաղթականներից, մնում են միայն հիվանդանոցը և որբանոցը:⁴³ Մոտ 25 հազար գաղթականներ տեղացի սակավահող գյուղացիների հետ հաստատվում են լքված 23 գյուղերում:⁴⁴ Այսպիսով, մեկ ամսվա ընթացքում Պոլիգոնի հանրակացարանի գաղթականները տեղափոխվում են Կարս-Ալեքսանդրապոլ շրջանների ազատ գյուղերը:

Սկզբնական շրջանում գյուղերը պահում էին զորքերը, իսկ հետո նրանց փոխարինում են մոտ 700 պահակ միլիցիոներներ: Ինքնապաշտպանական այս խմբերի կենտրոնը Մոլլամուսա գյուղն էր, որտեղից նրանք հսկում էին բոլոր լքված գյուղերը: Յուրաքանչյուր գյուղ ուներ իր ինքնապաշտպանական պահակները՝ պատասխանատու պահակով: Ամբողջ շրջանը բաժանվել էր մի քանի գլխավոր մասերի, որտեղ ղեկավարում էին նշանակված գյուղապետերը, որոնց էլ ենթարկվում էին փոքր զավառամասերի պահակները: Բացի սրանցից մոտ 300 հեծյալ և հետևակ պահակներ հսկում էին ընդհանուր պաշտպանությունը:

Տեղափոխված գյուղերում գաղթականները Պոլիգոնների հետ համեմատած բացառիկ հարմարություններ ունեին: Մասնավորապես՝ տանիք գլխավերևում, վարելահող, շատ գյուղերում նաև սերմացու, շարունակում էին ստանալ պետական նպաստը և հագուստեղեն:

Ինչ վերաբերում է Պոլիգոնի շենքերին, ապա դրանք Հայաստանի Հանրապետության կառավարությունը Ամերիկյան կոմիտեի կովկասյան ճյուղի գլխավոր շտաբի փոխգն-

⁴² 1920 թ. ապրիլի 7-ին խորհրդարանի պատգամավոր Սահակ Թորոսյանը կառավարությանը ներկայացնում է դպրոցական, խնամատարական, պարենավորման, հողային և ջրաբաշխական և ճանապարհների հաղորդակցման պետական գործերը գավառներում գավառական համայնական ինքնավարություններին հանձնելու մասին օրենքի նախագիծ:

⁴³ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2807, ք. 140:

⁴⁴ Նույն տեղում, ք. 136-139:

դապետ Չ. Տելֆորդի խնդրանքով, հանձնում է ամերիկացիներին, որոնք էլ այն դարձնում են մեծ որբանոց, այստեղ կենտրոնացնելով մեծ թվով որբերի՝ այն վերածելով որբանոց քաղաքի:⁴⁵

Ամերիկյան կոմիտեն, կենտրոնանալով որբանոցների վրա, հետզհետե ավելի քիչ ուշադրություն է դարձնում գաղթականների խնդրին՝ վերջիններին գցելով անելանելի վիճակի մեջ: Կառավարությունը ստիպված դադարեցնում է գաղթականներին և չքավոր ազգաբնակչությանը հացի տրամադրումը: Ստեղծված վիճակից դուրս գալու միակ ելքը կառավարությունը տեսնում էր Ալեքսանդրապոլ քաղաքում մնացած գաղթականությանը և չքավորներին Կարսի շրջանի գյուղերը տեղափոխելու մեջ: ՀՀ խնամատարության նախարարությունը նախատեսում է Ղարաքիլիսայից, Վրաստանից և Հյուսիսային Կովկասից նույնպես գաղթականներ ուղարկել Կարսի շրջանի լքված գյուղերը: Մակայն այս ծրագրի իրականացումը արդեն լուրջ դժվարությունների է հանդիպում: Նախ այլևս ազատ գյուղեր չկային, երկրորդ՝ փողի բացակայությունը գրեթե անհնար էր դարձնում դրա իրականացումը:

Կարո Սասունին 1920 թ. ապրիլի 27-ին Ալեքսանդրապոլից հեռագրում է խնամատարության նախարար Ա. Բաբայանին, որ Ղարաքիլիսայի գաղթականությանը Կարս տեղափոխելը լուրջ դժվարություններ կստեղծի գաղթականների համար, որոնք արդեն կատարել են սերմանման աշխատանքներ, բացի այդ փոխադրությունը կդժարանա փոխադրամիջոցներ չլինելու պատճառով, և մանավանդ որ Կարսից և Սարիղամիշից հեռագրում էին Սմբատին, որ ազատ տեղեր չկան մեծ զանգվածներով գաղթականություն ընդունելու համար: Սասունին խնդրում է մնացյալ գաղթականությանը տեղավորել Ղարաքիլիսայի ազատ և բնակելի գյուղերում:⁴⁶

Սմբատը ևս տեղեկացնում է խնամատարության նախա-

⁴⁵ ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 634, ք. 318:

⁴⁶ Նույն տեղում, գ. 801, 2-րդ մաս, ք. 173 :

րարին, որ Կարս-Ալեքսանդրապոլի շրջանում ազատ գյուղեր չկան այլևս, իսկ իրենց աշխատանքները կատարվում են պարտքով, և որ փող չստանալու դեպքում այն շարունակել հնարավոր չի լինի:

Փողի բացակայությունը գնալով ավելի ու ավելի է իրեն գզացնել տալիս: Ապրիլի 29-ին ինքնապաշտպանության նպատակով կազմավորված միլիցիոներների խմբերը (թվով 1031 հոգի) կառավարությունից պահանջում են իրենց խոստացված գումարները:⁴⁷

Մայիսի 22-ին Մմբատը հեռագրում է ՀՀ խնամա-տա-րության և վերաշինության նախարարին, որ փող չուղարկելու պատճառով գաղթականության տեղափոխման աշխատանք-ները դադարեցվում են:⁴⁸

Ինչ վերաբերում է տեղափոխված գաղթականներին, ապա նրանց մեծ մասը հետագայում տնտեսական դժվարու-թյուններով և քաղաքական պայմաններով դրդված նորից վե-րադառնում է Ալեքսանդրապոլի գավառ: Կարծում ենք, որ թուրքական արշավանքների ժամանակ առաջացած խու-ճապի մեջ մեծ էր գաղթականության դերը: Թեև 1920 թվա-կանի հոկտեմբերին ՀՀ ներքին գործերի նախարար Ռ. Տեր-Մինասյանը հրահանգում է Շիրակի նահանգապետ Կարո Սասունուն Կարսի Նախիջևանի շրջանի խուճապի մատն-ված բնակչությանը, որոնք հավաքվել էին Ախուրյանի ափը, վերադարձնել իրենց բնակության վայրերը,⁴⁹ բայց Կարսի անկումից հետո կանգնեցնել այս խուճապն այլևս ոչ մեկն ի գործ չէր:

1920 թվականի նոյեմբերին Ալեքսանդրապոլի գավառը կրկին գրավվում է թուրքերի կողմից: Այստեղ գտնվող գաղ-թականները ենթարկվում են հերթական փորձությանը: Նրանք, լավ իմանալով թուրքերի վերաբերմունքի մասին, թողնելով ամեն ինչ, փախչում են: Եվ իսկապես, թուրքերը

⁴⁷ ՀԱԱ, ֆ.205, ց. 1, գ. 801, 2-րդ մաս, ք. 185-186:

⁴⁸ Նույն տեղում, ք. 222:

⁴⁹ Նույն տեղում, ֆ. 201, ց.1, գ.49, ք.45:

հատուկ վերաբերմունք ունեին գաղթականների նկատմամբ, որոնց «մշեցի աղամ» էին անվանում: Եվ եթե որբանոցներն Ամերիկյան կոմիտեի հովանավորության տակ լինելով, գերծ են մնում թուրքական բռնություններից, ապա նույնը չէր կարելի ասել գաղթականների մասին: Թուրքական ռազմակալման շրջանում Ալեքսանդրապոլում ստեղծված հեղկոմի նախագահ Մաթևոս Գրիգորյանը (նույնպես արևմտահայ)⁵⁰, փորձելով սեփական ուժերով լուծել որբերի հարցերը, թշնամական դիրք է բռնում Ամերիկյան կոմիտեի նկատմամբ: Քանի որ հեղկոմը կախվածության մեջ էր թուրքերից, չի բացառվում, որ դա նրանք անում էին վերջիններիս պահանջով: Պատահական չէ, որ Հայաստանի խորհրդային իշխանությունը, Ալեքսանդրապոլի հեղկոմի գործունեությունը համարելով տեղական բնույթի և անհամապատասխան խորհրդային ընդհանուր քաղաքականությանը՝ կոչ է անում Ամերիկյան կոմիտեին շարունակել իր գործունեությունը:⁵¹ Եվ, ընդհանրապես, Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման առաջին իսկ օրերից, խորհրդահայ կառավարությունը հատուկ վերաբերմունք է ցուցաբերում Մերձավոր Արևելքի նպաստամատույց ամերիկյան կոմիտեի նկատմամբ, գիտակցելով, որ առանց նրա օգնության հնարավոր չէ լուծել հազարավոր գաղթականների խնամատարության հարցը: Արդեն 1920 թ. դեկտեմբերի 14-ին ՀՄԽՀ հեղկոմի նախագահ Ս. Կասյանը և արտաքին գործերի կոմիսար Ալ. Բեկզադյանը, Ամերիկյան կոմիտեին ուղղված գրության մեջ, խիստ ցանկալի և անհրաժեշտ համարելով կոմիտեի գործունեության շարունակությունը գաղթականների և որբերի խնամատարության գործում, խոստանում են նրան իրենց լիակատար աջակցությունը: Ավելին, առաջարկում են ՀՄԽՀ բոլոր քաղաքացիական և զինվորական իշխանություններին ցույց տալ կոմիտեի վարիչներին հարկ եղած աջակցությունը

⁵⁰ Ծնվել է 1897 թ. Արևմտյան Հայաստանի Մանազկերտ քաղաքում:

⁵¹ ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 22, ք. 59-61

իրենց գործունեության ընթացքում:⁵² Նույն դեկտեմբերի 14-ին Ս. Կասյանն Ալեքսանդրապոլի հեղկոմի նախագահ Մատթեոս Գրիգորյանին լիազորում է բանակցել Ամերիկյան կոմիտեի հետ նրանց գործունեության պայմանների մասին:⁵³ Սակայն հեղկոմը 1921 թ. հունվարի 25-ին, չցանկանալով գործիք դառնալ բուրքերի ձեռքին, հրաժարվում է իշխանությունից: Ալեքսանդրապոլի գավառը հայտնվում է քաղաքական ու տնտեսական անասելի ծանր վիճակի մեջ: Ծայր աստիճան թշվառության մատնված գաղթականության խնդիրները փորձում են լուծել Ալեքսանդրապոլում ստեղծված իշխանության նոր ժամանակավոր մարմինները:⁵⁴

Գաղթականների մի մասն ապրում է որբանոցներում և հանրակացարաններում: Մեծ թվով գաղթականներ ապրում էին մասնավոր տներում: Առաջին քաղաքամասի հանրակացարաններում և առաջին որբանոցում ապրում էին 2281 հոգի, որոնցից միայն որբանոցում պարեն էին ստանում 458 հոգին: Երկրորդ քաղաքամասի բոլոր հանրակացարաններում ապրում էին 360 գաղթական: Երրորդ քաղաքամասի բոլոր հանրակացարաններում և որբանոցում՝ 1064 հոգի: Չորրորդ քաղաքամասի հանրակացարաններում ապրող գաղթականների թիվը 1730 էր, որից անկելանոցներում ապրում էին 98 հաշմանդամներ:⁵⁵

1921 թ. մարտի 12-ին քաղաքապետ Ս. Մատինյանը՝ սո-

⁵² ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 22, թ. 2:

⁵³ Նույն տեղում, թ. 6:

⁵⁴ Խոսքը վերաբերում է Հեղկոմի իշխանությունից հեռանալուց հետո Ալեքսանդրապոլում ստեղծված տեղական իշխանության նոր մարմիններին: Հունվարի 27-ին Ալեքսանդրապոլի քաղաքային միլիցապետ Ս. Մատինյանը ստեղծում է նոր իշխանություն, մարտին իրեն հռչակում դիկտատոր (քաղաքապետ): Միևնույն ժամանակ մարտի 21-ին Ալեքսանդրապոլում կյանքի է կոչվում քաղաքային ինքնավարությունը: Ստեղծվում է քաղաքային խորհուրդ և վարչություն: Մարտի 26-ին վարչության կազմում ստեղծվում է գաղթականական կոմիտե՝ Գ. Տաթևյանի գլխավորությամբ:

⁵⁵ ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 173, թ. 25:

վից մեռնող գաղթականներին օգնելու կոչով, դիմում է Ալեքսանդրապոլ քաղաքի բնակիչներին: Դիմելով հատկապես ունևոր քաղաքացիներին՝ նա նույնիսկ սպառնում է ստիպողական և կտրուկ միջոցների դիմել, եթե վերջիներս իրենց կամքով չօգնեն կարիքավորներին:⁵⁶ Իսկ մտավորականներին առաջարկում է ստեղծել հասարակական կազմակերպություններ, որբանոցներ և միացյալ ուժերով սովից փրկել գաղթականներին:

Գաղթականների հարցերը մշտապես ուշադրության կենտրոնում պահելու նպատակով մարտի 27-ին Զաղաքային վարչության կազմում ստեղծվում է գաղթականական կոմիտե՝ Գ. Տաթևյանի գլխավորությամբ:⁵⁷

Խնամատարության բաժինն իր հիմնական խնդիրներն է համարում որբանոցների մաքրության ապահովումը, որբանոցներից փախչող որբերի վերադարձը, գաղթականներին գյուղերում ապահով տեղավորումը ու հանգանակությունների կազմակերպումը:

Զաղաքային վարչության խնամատարության բաժնի վարիչ Գ. Տաթևյանն առաջին հերթին ձգտում էր ապահովել որբանոցների մաքրությունը:⁵⁸ Գաղթականների կյանքի անապահովությունը և մանավանդ սովը գաղթականներին հնարավորություն չէին տալիս հետևել մաքրությանը: Իսկ եղանակների տաքանայու հետ գաղթականներով բնակեցված հանրակացարաններն ու տները կարող էին համաճարակի բույն դառնալ:⁵⁹

⁵⁶ ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1204, ք. 15-16:

⁵⁷ Կոմիտեի անդամներ են ընտրվում Առաքել Բալոյանը, Բենիամին Պետրոսյանը, Համբարձում Դարագոյանը, Գաբրիել Զատիկյանը և Ավետիս Վարդանյանը, իսկ տեղակալներ՝ Եղիշե քահանա Տեր-Գրիգորյանը և Թորգոմ Տեր-Սահակյանը: Ալեքսանդրապոլի շրջանից անդամներ են ընտրվում Նիկողայոս Կիրակոսյանը, Հաբեթ Վարդանյանը, Արտաշես Գրիգորյանը, Արամ Տեր-Միքայելյանը և Սեդրակ Սահակյանը, իսկ տեղակալներ՝ Ավետիք Աղբալյանը և Սարիբեկ Մխիթարյանը:

⁵⁸ ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 174, ք. 1:

⁵⁹ Նույն տեղում, գ. 173, ք. 4:

Մարտի վերջերից կտրուկ ավելանում է գաղթականների հոսքը և նրանց տեղավորելու խնդիրը լուրջ դժվարություններ է առաջացնում: Նրանց փորձում են տեղավորել գյուղերում: Սակայն Մատինյանի և քաղաքային վարչության անհամաձայնեցված գործողությունների շնորհիվ գաղթականների մեծ մասը թալանվում և սպանվում են թուրքերի կողմից:

Խնամատարության բաժինը փորձում էր կանխել որբերի փախուստը որբանոցներից և միջոցներ ձեռք առնել որբերին որբանոցներում պահելու համար: Վերջիններս փախնում էին որբանոցներից քաղաքում ինչ որ բան գտնելու հույսով:⁶⁰

Կոմիտեի գործունեության մեջ առավել կարևոր էր հանգանակությունների կազմակերպումը, քանի որ գաղթականներին օգնելու այլ միջոցներ այլևս չկար:⁶¹ Քաղաքային վարչությունը մարտի 27-ը հայտարարում է «Որբերի օր», քաղաքի երևելի մարդկանց մասնակցությամբ կազմակերպվում է հանգանակություն: Քաղաքը բաժանվում է 8 մասի, պատրաստվում են 10 կնքած թերթեր, երեք հոգուց բաղկացած խմբերը շրջելով քաղաքի տները, խանութները հանգանակություն են անում ի օգուտ գաղթականների: Պատրաստվում են նաև 13 տուփեր, որոնք քաղաքի փողոցներում պտտեցնում են որբերը՝ օրիորդների և տիկիների առաջնորդությամբ: Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանցը հանգանակություն է կազմակերպում եկեղեցում:⁶² Ապրիլի 23-24-ին նախատեսվում էր կազմակերպել «Սովյալների օր»:

Ապրիլի 21-ին, սակայն թուրքերը հեռանում են Ալեքսանդրապոլի գավառից: Ապրիլի 23-ին կազմավորվում է Ալեքսանդրապոլի շրջանային հեղկոմը, որն էլ շարունակում է գաղթականների խնամատարության գործը:⁶³

⁶⁰ ՀԱԱ, ֆ. 144, ց.3, գ. 171, ք.8-9:

⁶¹ Նույն տեղում, գ.173, ք. 6-7:

⁶² Նույն տեղում, 172, ք. 2:

⁶³ Կ. Ալեքսանյան, Արևմտահայ գաղթականությունը Ալեքսանդրապոլի գավառում խորհրդային իշխանության հաստատուման շրջանում (1921 թ. ապրիլ-դեկտեմբեր), Գիտական աշխատություններ, հ. 13. Գյումրի 2010, էջ 140-143:

Ալեքսանդրապոլի շրջանային հեղկոմն ապրիլի 23-ին՝ իր առաջին նիստում որոշում է առողջապահության բաժնի վարիչ Գողթունուն հանձնարարել հսկողության տակ վերցնել որբանոցները և փողոցներից հավաքել որբերին:⁶⁴ Հեղկոմը քայլեր է ձեռնարկում նաև գաղթականությանը տեղավորելու ուղղությամբ: Մասնավորապես փորձում է բնակարանային տղության և աննպաստ սանիտարական խնդիրները լուծել գավառի գյուղերից քաղաք գաղթած արևմտահայ գաղթականների կրկին հետ վերադարձնելու ճանապարհով:⁶⁵ Գաղթականներին գյուղերում տեղավորելու միջոցով շրջանային հեղկոմը ցանկանում էր լուծել նաև քայքայված գյուղերի վերաշինման և գաղթականների պարենավորման հարցերը: Սակայն արևմտահայ գաղթականների մեծ մասը, որ թուրքերի ներխուժումից առաջ, թողնելով իր ունեցվածքը փախել էր, վերադառնալով տեսնում է, որ իր ունեցվածքից ոչինչ չի մնացել: Անելանելի վիճակի մեջ հայտնված գաղթականները փորձում են հետ ստանալ իրենց ունեցվածքը, սակայն դա նրանց չի հաջողվում: Գյուղացիները հրաժարվում են վերադարձնել՝ պատճառաբանելով, որ թուրքերը թալանել են դրանք:⁶⁶ Մյուս կողմից, օրեցօր ավելացող զորքի պահանջները բավարարելու համար Ալեքսանդրապոլի տեղական իշխանությունները ստիպված էին հեռացնել գաղթականներին հանրակացարաններից և բնակարաններից:

Ալեքսանդրապոլի շրջանային հեղափոխական կոմիտեի բնակարանային բաժնի վարիչ Ս. Աբաջյանը՝ 1921 թ. հունիսին ՀՍԽՀ ներքին գործերի ժողկոմատի բաժնի վարիչին ուղղված գրության մեջ, խնդրում է զորքին բնակարաններով ապահովելու համար Շիրակի գաղթականությանը տեղափոխել գյուղերը:⁶⁷ Շատ դեպքերում զինվորական մարմինները, չսպասելով կարգադրության, դատարկում էին բնակա-

⁶⁴ ՀԱԱ, ֆ.144, ց.3^ա, գ. 99, թ.1:

⁶⁵ Նույն տեղում, ց.1, գ. 63, թ.4:

⁶⁶ Նույն տեղում, ց. 3^ա, գ. 84, թ.13-14:

⁶⁷ Նույն տեղում, ց.1, գ. 63, թ. 54:

րանները: Սոցապահովության բաժնի վարիչի՝ ներքին գործերի վարչությանն ուղղված 1921 թ. մայիսի 18-ի գրության մեջ նշվում էր, որ գինավորական մասերից մեկը բնակարանային բաժնի օրդերի համաձայն առաջարկել է մի ժամկա ընթացքում դատարկել Շիրաճյանների տունը, որի մեջ տեղավորված էր նաև «Մի կաթիլ կաթ» որբանոցը:⁶⁸

Գաղթականության տեղավորման գործը կարգավորելու նպատակով 1921 թ. հունիսին ստեղծվում են գավառային, գավառամասային և գյուղական էվակներ (էվակուացիայի օրգաններ): Ընդ որում, տեղավորման գործը ճիշտ կազմակերպելու համար ոչ տեղական խորհրդային մարմինները և ոչ էլ տեղական էվակի օրգանները իրավունք չունեին իրականացնել տեղափոխման գործն առանց կենտրոնական էվակի գիտության և թույլտվության:⁶⁹ Սակայն զանազան համաճարակային հիվանդությունների տարածման պատճառով Ալեքսանդրապոլի գավառի հեղկոմի նախագահ Ս. Մանուցյանի հունիսի 21-ի հրահանգով հուլիսի 9-ից գաղթականների տեղափոխությունն ինչպես գավառում, այնպես էլ գավառի սահմաններից դուրս արգելվում էր:⁷⁰

Ստեղծված ծանր սոցիալ-տնտեսական պայմաններում գաղթականները, գտնվելով տեղաբնակներից ավելի անպաշտպան և խոցելի վիճակում, հաճախ պաշտոնյաների չարաշահումների զոհ էին դառնում: Վերջիններս, օգտվելով գաղթականների ծանր դրությունից, ուղղակի թալանում էին նրանց՝ երբեմն զրկելով անգամ մի կտոր հացից:⁷¹ Ալեքսանդրապոլի շրջանային հեղափոխական կոմիտեի նախագահ Ս. Մանուցյանը 1921 թ. հուլիսի 14-ին տաճկահայերի նկատմամբ ունեցած վերաբերմունքի մասին գավառամասային հեղկոմին ուղղված շրջաբերական գրության մեջ նշելով, որ ամեն օր զանգատներ են հասնում գավառամասային

⁶⁸ ՀԱԱ, ֆ.144, ց.1, գ. 63, ք.14 :

⁶⁹ Նույն տեղում, ց. 3, գ. 58, ք. 9:

⁷⁰ Նույն տեղում, գ. 8, ք. 45:

⁷¹ Նույն տեղում, ց. 3^ա, գ. 84, ք. 39

վարչությունների կողմից արևմտահայերին նեղացնելու վերաբերյալ, հրահանգել է խտրականություն չդնել և Հայաստանի խորհրդային հանրապետության ներման դեկրետը կիրառել նաև նրանց նկատմամբ: Ավելին, առաջարկում է արևմտահայերին ևս ընդգրկել պաշտոնյաների ցուցակներում և, ընդհանրապես, նրանց օգտագործել խորհրդային իշխանության մարմիններում:⁷²

Ի դեպ, գաղթականները դժգոհում էին նաև տեղի բնակիչներից, որոնք հաճախ յուրացնում էին գաղթականների ունեցվածքը: Ալեքսանդրապոլի գավառի Թուրքի Գյոզալ-դարա գյուղի վերաբնակիչները, բողոքելով Պարնի գյուղի բնակիչներից, որոնք բռնությամբ խլել էին իրենց անասունները և խոտը, հեղկոմի նախագահին խնդրում էին պաշտպանել իրենց և փրկել սովից: ⁷³

1921 թվականի հունիսի 25-ին բացված Ալեքսանդրապոլի շրջանի արևմտահայերի համագումարում գաղթականության ներկայացուցիչները խնդրում էին շուտափույթ օգնություն խորհրդային կառավարությունից:⁷⁴

1921 թվականի սեպտեմբերի 10-ին Էջմիածնում բացվում է խորհրդային իշխանության կողմից հրավիրված Արևմտահայերի առաջին համագումարում, որտեղ քննարկվում են վերջին տասը տարիների ընթացքում արևմտահայերի կրած դժվարությունները և դրանք հաղթահարելու ուղիները: Այս համագումարում դրվում է գաղթականության նկատմամբ խորհրդային իշխանության նոր քաղաքականության սկիզբը: 1921 թվականի սեպտեմբերի 12-ին գաղթականների գործը վարելու նպատակով գավիեղկոմներին կից ստեղծվում են գաղթականական բաժիններ, որոնց կազմի մեջ մտնում էին մեկական ներկայացուցիչ ներքին գործերի և առողջապահության բաժիններից և Ռուսաստանի կենտրոնական էվակից: Գաղթականական բաժինները վարում էին գաղթակա-

⁷² ՀԱԱ, ֆ.144, ց. 3, գ. 56, թ. 41:

⁷³ Նույն տեղում, ց. 3^ա, գ. 84, թ.91:

⁷⁴ Նույն տեղում, թ. 39:

նության գործը գավառային հեղկոմի անմիջական հսկողության տակ, որպես գաղթականության տեղավորման, սննդամատակարարման միակ օրգան՝ աշխատելով գաղթականական գլխավոր վարչության ցուցմունքներով: Գավառային գաղթականական բաժինների հիմնական պարտականություններն էին հաշվառել բոլոր ազատ գյուղերի հողերը, ցուցակագրել բոլոր չտեղավորված գաղթականներին և տեղավորել նրանց թափուր և կիսաքնակ գյուղերում, ինչպես նաև պարենային և բժշկական օգնություն հասցնել և օգնել գաղթականությանը նրանց քայքայված տնտեսությունը վերականգնելու գործում: Գավառային գաղթականական բաժիններն ըստ պահանջի կազմակերպում էին շրջանային ընդունման կայաններ գաղթականության համար, որոնց պարտականություններն էին ընդունել գաղթականներին և ըստ նրանց ցանկության տեղավորել գյուղերում, ապահովել սննդամատակարարման գործը տեղերում և ցուցակագրել աշխատանքի ընդունակ գաղթականներին:⁷⁵

Գավառային գաղթականական բաժնի վարիչի տվյալներով Ալեքսանդրապոլի գավառում 1921 թվականի հոկտեմբերին գաղթականների թիվը կազմում էր է 41 383, որից 11915-ը ապաստան էին գտել Ալեքսանդրապոլում, 8482-ը՝ առաջին գավառամասում, 5119-ը՝ երկրորդ գավառամասում, երրորդում՝ 1155, չորրորդում՝ 8292, հինգերորդում՝ 2755, վեցերորդում՝ 3665:⁷⁶

1921 թ. թուրքերի հեռանալուց հետո ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր պայմանները խորհրդային իշխանության հաստատման շրջանում անելանելի դրության մեջ էին դրել արևմտահայ գաղթականությանը: Չնայած խորհրդային իշխանության ձեռնարկած միջոցառումներին, գաղթականության մի ստվար զանգված զոհ է գնում սովին և ցրտին՝ անդառնալի կորուստներ պատճառելով հայ ժողովրդին:

⁷⁵ ՀԱԱ, ֆ. 144, ց. 1, գ. 59, թ. 57:

⁷⁶ Նույն տեղում, թ. 121:

Սույն հրատարակությամբ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվում Ալեքսանդրապոլի գավառում 1914-1922 թթ. հաստատված արևմտահայ գաղթականության դրությանը վերաբերող հարյուրավոր փաստաթղթեր, որոնք հայտնաբերվել են Հայաստանի ազգային արխիվից:

Թեմատիկ առումով ժողովածուն բաղկացած է հետևյալ բաժիններից.

- արևմտահայ գաղթականության դրությունը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914-1918 թթ.)

- արևմտահայ գաղթականությունը Հայաստանի Հանրապետության շրջանում (1918-1920 թթ.)

- գաղթականության դրությունը թուրքական ռազմակալման շրջանում (1920-1921 թթ.)

- գաղթականությունը խորհրդային իշխանության առաջին շրջանում (1921-1922 թթ.):

Վերոնշյալ բաժիններում փաստաթղթերը տրված են ժամանակագրական հաջորդականությամբ:

Փաստաթղթերի մեծ մասը հրատարակվում է առաջին անգամ, բնագրի լեզվով, առանց ոճական փոփոխությունների, կատարվել են մասնակի ուղղագրական շտկումներ, քառակուսի փակագծերում հեղինակի կողմից ավելացվել են բաց թողնված բառերը և տառերը:

Փաստաթղթերի վերնագրերը կազմել է հեղինակը:

Ժողովածուի գիտատեղեկատու համակարգը ներկայացված է ծանոթագրություններով, անվանացանկով և տեղանունների ցանկով:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ԳԼՈՒԽ I

ԱՐԵՎՍՏԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1914-1918 թթ.)

N 1

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱ-
ՊԵՏԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԵՐԵՎԱՆԻ ՓՈԽԹԵՍԱԿԱԼԻՆ՝
ԳԱՎԱՌԻ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ ՎԻՐԱՎՈՐՆԵՐԻ ՕԳՏԻՆ
ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

16 դեկտեմբերի 1914 թ.
Ալեքսանդրապոլ

Գերապատուրթեանդ տարւոյս հոկտեմբերի 7 թ[իվ] 2195
առաջադրութեան յամաձայն շրջաբերականներով կարգա-
դրեցի, որ վիճակիս բոլոր գիւղերում գործակալները յօգուտ
վիրատրների միանուագ կամաւոր նուերներ հաւաքեն:

Արդէն մի քանի գիւղական հասարակութիւններից և
ծխական դպրոցների աշակերտներից հաւաքուած կայ ինձ
մօտ 472 թ[ուրի] 51 կոպ[էկ]: Գործը կանգ առաւ, որովհետև
քաղաքիս Ազգային բիւրօն վիրատրներին գիւղերում օգնելու
համար տեղական կոմիտէներ կազմակերպելով, վերջիների
իրաւանցն անցաւ ամսական նուերներ հաւաքել գիւղերում և
վիրատրների ու կամաւորների ընտանիքների օգտին գործա-
դրելը: Մանաւանդ, որ քաղաքումս պէտք է շուտով հիւանդա-
նոց բացուի, այդ գումարների որոշ մասը մտնելով տեղիս
Բիւրօյի գանձարանը, պէտք է այդ նպատակի համար ևս
գործադրուի:

Աչքի առաջ ունենալով այս հանգամանքը, Ադերսանդրապոլի Ազգային բիրօն դիմեց ինձ՝ խնդրել Ձերդ Սրբազնութեան, եթէ կարելի է այդ առթիւ մի կարգադրութիւն անել- ինձ մօտ հաւաքուած գումարը տալ տեղիս բիրօյին, թէ ողարկել Ձերդ Սրբազնութեան: Աչքի առաջ պէտք է ունենալ, որ այլևս այդ նպատակի համար գումար դժուար թէ ստացուի, լինի էլ շատ քիչ կլինի:

Փոխանորդ՝ Արտակ վարդապետ:

ՀԱԱ, ֆ. 48, ց. 1, գ. 187, ք. 121: Բնագիր: Ձեռագիր:

N 2

**ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԲԱՂԱԲԱԳԼԻԽԻՆ՝ ԱԶԳԱՅԻՆ
ԿՈՍԻՏԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

28 դեկտեմբերի 1914 թ.
Երևան

Утверждая Комитет, учрежденный в городе Александро-поле под председательством председателя местного армяно-григорианского духовного Правления и вице председателя в Вашем лице, прошу сообщить мне список личного состава этого Комитета.

Беженцев следует всех регистрировать по национальностям, возможную часть из которых оставить в городе, а остальных, согласно распоряжению главного Кавказского начальства разместить по селениям с одноплеменным составом, причем работоспособных беженцев привлекать к работам, так как не хватит средств на содержание всем переходящим в наши пределы беженцев из разных местностей Турции и Персии.

Выдворение беженцев бесплатно по железной дороге во внутренние губернии не может быть осуществлено, так как ходатайство, возбужденное комендатом, не получило благоп-

приятного разрешения.

По ходатайству епископа Нерсеса, начальника Азербайджанской епархии¹ просил разрешения на снабжение желающих из беженцев, переходящих к нам из Персии проходными свидетельствами на следование за собственный счет во внутренние губернии.

Ходатайство это пока не разрешено. Возникает вопрос, не представляется ли возможным в виду вытеснения турок из пределов Карсской области, беженцев или по крайней мере часть их, направляет обратно в покинутые ими селения.

О ходе дела презрения беженцев прошу представлять мне еженедельные отчеты. В понедельник переведу в распоряжение Ваше одну тысячу рублей. Отчетность казенным деньгам должна вестись аккуратно и особо от общественных средств. Уездному начальнику и мировым посредникам предложено оказывать Комитету полное содействие при устройстве беженцев в селениях.

Ереванский губернатор Тизенгаузен

ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2450, ք. 3: Բնագիր: Մերենագիր:

N 3

**ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՎՈՐԳ Ե
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ ԳԱՂԹԱ-
ԿԱՆՆԵՐԻՆ ՕԳՆՈՂ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿՈՍՏՏԵՒԻ ԿԱԶՄԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ**

3 հունվարի 1915 թ.

Ս. Էջմիածին

Ձերդ Վեհափառության անցեալ տարուայ սեպտեմբեր 28-ի թիւ 1512 Սրբատառ Կոնդակի² համաձայն Ադէքսանդրապոլում հոկտեմբերի 30-ին ընտրուեց Կենտրոնական Ազգային Կոմիտէն Ձերդ Սրբութեան Բարձր հովանաւորութեան և Երևանի Փոխ-թեմակալ Գերապատիւ

Տ[եր] Խորենն եպիսկոպոսի պատուաւոր նախագահութեան ներքոյ, որը բաղկացած է հետևեալ անդամներից. 1) Կարապետ Կամսարական (փոխ-նախագահ),³ 2) Յովակիմ Բուդաղեան⁴ (փոխ-նախագահ), 3) Գեորգ Տէր-Սարտիրոսեան⁵, 4) բժ. Պատուական Յովհաննիսեան, 5) բժ. Վարոս Արշակունի⁶, 6) Երուանդ Տէր-Մինասեան⁷, 7) Յակովբ քահանա Խաչվանքեան⁸, 8) Համբարձում Տէր-Ղազարեան⁹, 9) Խաչատուր Իսահակեան¹⁰, 10) Ասատուր Իսահակեան¹¹, 11) Թադէոս Խզմալեան, 12) Վարդգէս Արաքաջեան, 13) Սկրտիչ Ամիրջանեան, 14) Աշոտ Կարանեան¹², 15) Պարոյր Գէօնջեան¹³, 16) Յովակիմ Աղաբալեան, 17) Աղէքսանդր Համբարձումեան¹⁴, 18) Սարտին Յակովբեան¹⁵, 19) Միսաք Տէր-Յարութիւնեան, 20) Պետրոս Բերութեան¹⁶, 21) Յովսէփ Միրզոյեան¹⁷, 22) Նիկողայոս Կիրակոսեան¹⁸, 23) Պետրոս Սոճոռեան¹⁹:

Ազգային Յանձնաժողովը իւր գործունէութիւնն սկսել է նոյեմբերի 2-ից և բաժանուած է հինգ սեկցիաների: Յանձնաժողովի ամբողջ գործունէութեան մասին մանրամասն զեկուցում կմատուցի Ձերդ Վեհափառութեան ժամանակին: Իսկ զադթականական սեկցիայի գործունէութեան մասին՝ պատիւ ունեցանք երեկ ներկայանալ Ձերդ Վեհափառութեան Յանձնաժողովի անդամ պ. բժ[իշկ] Պատուական Յովհաննիսեանի հետ և Ձերդ Սրբութեան առաջ պարզելու իրերի դրութիւնը, որպիսի զեկուցման համառօտ նկարագիրը ամենախոնարհաբար ներկայացնում են առանձին յայտարարութիւնով:

Վերոգրեալի մասին զեկուցանելով Ձերդ Ս. Օծութեան ամենախոնարհաբար խնդրում են հաստատել Ազգային Յանձնաժողովի անդամներին²⁰ իրենց պաշտօնի մէջ:²¹

Մատչելով ի համբոյր Օծեալ Աջոյն Ձերդ Վեհափառութեան

խոնարհ որդի և ծառայ՝ Արտակ Վարդապետ
Նախագահ Աղէքսանդրապոլի կոմիտէի

ՀԱԱ, ֆ.57, ց.1, գ. 1242, ք. 5 : Բնագիր: Ձեռագիր:

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԳԵՎՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ
ՅՈՒՅՑ ՏՐՎՈՂ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

3 հունվարի 1915 թ.

Ս. Էջմիածին

Վեհափառ Տէր,

Համաշխարհային պատերազմը ծաւալուելով Եւրոպայի մէջ, իւր թևերը տարածեց նաև Կովկասի վերայ: Հայի հայրենիքը դարձեալ պատերազմի դաշտ դարձաւ, հայր կրկին անգամ ստիպուած եղաւ իւր իրաւանց, իւր գոյքի ու կեանքի պահպանութեան համար գէնք վերցնել և իւր սիրելի գաւազներին կռուի դաշտ ուղարկել: Կովկասեան պատերազմը²² առաջ բերեց մեծամեծ թշուառութիւններ, պատերազմի վայրերի հայ ժողովուրդը թուրքերի, քրդերի, պարսիկների վրէժխնդրութիւնից ազատուելու համար թողած տուն տեղ, ստացուացք, ու փախսան իրենց ռուսահայ եղբայրների մօտ: Եւ առաջին ապահով վայրը, որ մեր եղբայրներին սիրով հիւրընկալեց, այդ Աղէքսանդրապոլն էր իւր գաւառով:²³

Ձերդ Ս. Օծութեան բարձր հովանաւորութեան ներքոյ գտնուող Աղէքսանդրապոլի Ազգային Յանձնաժողովը²⁴ բաժանուել էր որոշ սեկցիաների. 1) վիրաւորներին օգնող, 2) կամաւորներին օգնող և 3) վիճակագրական տեղեկութիւններ հաւաքող սեկցիաների: Իսկ յանձնաժողովը իւր ամբողջ կազմով հանգանակութիւններ է կատարել և շարունակում է նոյնը քաղաքում յօգուտ վիրաւորների և գաղթականների: Աղէքսանդրապոլի Ազգային Յանձնաժողովի գործունէութեան մասին մանրամասն զեկուցագրի ներկայացնելը թողնելով մի այլ յարմար ժամանակ, պարտք եմ համարում կանգ առնել և համառօտակի Ձերդ Սրբութեան ամենախոնարհաբար զեկուցանել գաղթականներին օգնող սեկցիայի գործունէութեան մասին:

Ռուս-տաճկական պատերազմի սկստելովը գաղթականների սեկցիայի գործը քանի գնաց աւելի բարդացաւ ու ծանրացաւ: Զանի դեռ պատերազմը տաճկական հողի վերայ էր, տաճկահայ փախստականները տեղաւորուել էին Սարիղամիշում և նրա շրջակայքում գտնուած հայկական գիւղերում: Երբ պատերազմն անցավ Ռուսաց հողի վերայ, այն ժամանակ ոչ միայն Ռուսաստանի սահմաններին ապաստանած տաճկահայերը, այլև Սարիղամիշի, Օլթիի և Արդահանի ու նրանց շրջակայ հայ գիւղերի բնակիչները ահ ու սարսափի մեջ փախան դէպի Ադէքսանդրապոլ՝ իբրև մի աւելի ապահով վայր: Թէ ինչ դրութեան մէջ ընդունեց Ադէքսանդրապոլը փախստական հայերին, բաւական է յիշել, որ Սարիղամիշի, Օլթիի յատկապէս և Արդահանի պետական կառավարիչները շատ ուշ են յայտնել ժողովրդին իրենց կեանքն ու գոյքը ազատելու համար: Օլթիում տեղական չերքեզ հրամանատարը կէս գիշերին է յայտնել բնակիչներին, թէ տաճիկներն արդէն շրջապատել են Օլթին, և հրաման է տուել բոլորին իրենց գլուխն ազատել: Մարդ սոսկումով է լսում փախստականներին, որոնք պատմում են, թէ ինչպէս խեղճ ժողովուրդը կէս գիշերին յանկարծակի գալով, այս սառնամանիքին, դուրս են թափուել, նոյնիսկ տաք զգեստներ հագնելու հնարաւորութիւնից զրկուած, թողնելով տուն-տեղ, ամեն ինչ ստացուածք, ու որը ոտքով, որը այլ հնարքով, փախուստի դիմել: Մայրը իւր որդուն է կորցրել, կինը իւր ամուսնուն, և հագիւ Ադէքսանդրապոլում շունչ առնելով՝ նոր են սկսել աղի արցունքով փնտրել իրենց կորուստները: Սրտաճնիկ տեսարան էր ներկայացնում Ադէքսանդրապոլը դեկտեմբերի 10-ից սկսած, երբ փախստականների հոսանքը միանգամից մեծ չափեր ստացաւ: Գալիս էին օր ու գիշեր, անվերջ: Երեխաների ձեռները կապտած, շատերի ոտքերը ցուրտը տարած, բոբիկ, համարեա մերկ, ցրտից ամբողջովին կարմրած...

Գաղթականութեան սեկցիայի առաջին պարտքը եղաւ առանձին բնակարաններ գտնել և հետզհետէ տեղաւորել փախստականներին: Ադէքսանդրապոլի փախստականները

եկել էին Բասենից (Տաճկաստան), Սարիղամիշից, Արդահանից, Օլթիից, Արդուինից, Արդանուճից, և նրանց շրջակայ գիղերից: Բոլոր փախստականները այսօր տեղափոխված են 18 բնակարաններում, որոնցից մեկը վարձով է վերցրած: Բոլոր գաղթականների թիւը քաղաքում հասնում է 3000-ի, որը աւելանում կամ պակասում է: Այս թւից 600 հոգի յոյն փախստականներ են, անմիջապէս աչքի է ընկնում մի խոշոր տարբերութիւն: Մինչդեռ հայերը հազիվ թէ կարողացել են իրենց չոր գլուխն ազատել, չկարողանալով մինչև իսկ ամենաանհրաժեշտ տաք շորերը վերցնել, յոյն գիղացիները առաջուց տեղեկանալով վտանգի մասին, իրենց իսկ սայլերով կարողացել են իրենց ունեցուածքի մի մասն ազատել, կահ-կարասիք, վերմակներ, դօշակներ, ալիւր և այլն: Աղէքսանդրապոլի նման մի աղքատ քաղաքի համար միանգամից 3000 գաղթական պահելը շատ դժուար էր: Ազգային կոմիտէն իւր ձեռքի տակ որոշ գումարներ ունենալու համար քաղաքում կամաւոր նուէրներ սահմանեց, որը ամսէ ամիս պիտի գանձուի: Քաղաքը բաժանեց 12 մասի, իւրաքանչիւր մաս յանձն առան շրջել կոմիտէի երկու անդամը մի քահանայի հետ: Այս ձևով սկսուեց կոմիտէի գանձարանում փոքրիկ գումարներ հաւաքուել: Բայց ինչ կարող էր անել Աղէքսանդրապոլի Բիւրօն այդ ծով կարիքը վերացնելու համար: Քաղաքում հաւաքուած փոքրիկ գումարները հազիւ թէ չոր հացի էին բաւականացնում: Օրական հաշուելով երկու ֆունտ²⁵ հաց 5 տարեկանից սկսած, միայն հացի համար ծախս էր լինում մօտ 300-250 ռուբլի: Դորա վերայ աւելացնելով 18 բնակարանների վառելիքը, լուսաւորութիւնը և այլ մանր ծախսը հասնում էր 450 ռուբլու: Մինչդեռ կոմիտէի առաջ մի այլ ծանր խնդիր էր դրուած հէնց գաղթականութեան սկսուելու օրից, որը գրաւել էր նորա լուրջ ուշադրութիւնը:

Փախստականները ցրտից շատ էին վնասուել և Աղէքսանդրապոլ հասնելուց յետոյ ծանր հիւանդներ ունեցանք: Շատ էր տարածուած տիֆ, ծաղիկ, կօկլիշ²⁶, քութեշ և այլն, որպիսի հիւանդութիւններով բռնուածները եթէ չազատէինք,

մեծ վտանգ էր սպառնում նաև առողջ մնացածներին և մինչև իսկ քաղաքացիներին: Միևնույն բնակարանում, ուր 100-ից մինչև 250 մեծ ու փոքր, տղամարդ, կին, երեխաներ կային, դորանց մեջ պառկած էր մնում նաև ծանր հիւանդը: Մահացու դէպքեր ամեն օր լինում էր: Ահա այստեղ կոմիտէի առաջ նոր մեծ խնդիր ծագեց, բժշկական օգնութիւն հասցնել անմիջապէս բոլոր հիւանդներին և աշխատել ծանր հիւանդներին առանձնացնել՝ վարակումների առաջն առնելու համար: Բաղաքում ունեցած մեր երկու հայ բժիշկները պաշտօնի տէր լինելով՝ չէին հասնում բոլորին օգնութիւն հասցնելու համար. այստեղ մեծ ծառայութիւն մատուցեցին Աղէքսանդրապոլում կանգ առած կամատորների՝ Վարդանի²⁷ խմբի սանիտարներն իրենց բժիշկներով, որոնք սիրով ամբողջ օրը շրջում էին բնակարանները, հիվանդներին դեղ նշանակում, վերքերը կապում:

Այսպիսի կարևոր, բայց և ծանր պահանջին բաւականութիւն տալու համար Աղէքսանդրապոլի կոմիտէն չյուսահատուեց, որ գանձարանում փող չունի, և դեկտեմբերի 28-ին վերջնականապէս վճռեց հիւանդանոց բանալ և միաժամանակ հեռագիրներով դիմեց Պետերբուրգի, Մոսկուայի, Թիֆլիսի, Բագուի կոմիտէներին, բացատրելով այն ծով կարիքը, որի մէջ գտնուում էին փախստականները և խնդրելով աջակցութիւն: Եւ այժմ ուրախութեամբ պիտի ամենախոնարհաբար յայտնեն Ձերդ սուրբ Օծութեան, որ հիւանդանոցը արդէն բաց է 15 մահճակալով առ այժմ: Նամակներ են գրուած Թիֆլիս, Բագու՝ բժշկական օգնութիւն հասցնելու համար:

Փախստականներին խնամելու գործը դրուած է շատ կանոնաւոր հիմքերի վերայ: Ինչպէս վերևն յիշեցի, բոլոր թէ հայ և թէ հայոյն փախստականները, որոնք հաւասարապէս խնամւում էին, տեղաւորուած էին 18 բնակարաններում: Որպէսզի կարելի լինի մօտիկից հսկել, հացի և այլ նիւթերի բաժանումը կանոնաւոր տանել, օրիորդներից, տիկիներին և երիտասարդներից՝ իւրաքանչիւր 200 հոգու վերայ նշանակուած են ամենայն օրուայ համար երկու կամ երեք հսկիչներ, որոնք

առաւօտուանից սկսած մինչև երեկոյ նայում էին, որ հացը ժամանակին բաժանուի, սենեակները մաքուր պահեն: Պահեստից ստանալով սպիտակեղէն կամ հագուստեղէն՝ բաժանում էին փախստականներին: Սանիտարների հետ խնամում էին հիւանդներին և որևէ բան պէտք եղած ժամանակ անմիջապէս դիմում էին սեկցիային և ստանում հարկատր իրր: Հայ փախստականները գուրկ էին թէ դօշակներից և թէ վերմակներից: Յանձնաժողովի կարգադրութեամբ խօսէ դօշակներ պատրաստուեցին և հասարակ վերմակներ գնուեցին ու բաժանուեցին չունեցողներին անխտիր կերպով: Այսպիսով գաղթականութեան սեկցիայի անդամների հետ ունենք նաև 39 հոգի հսկիչներ օրիորդներից, տիկիկներից և երիտասարդներից:

Վերոգրեալից Ձերդ Սուրբ օծութիւնը կտեսնէ, որ Աղէքսանդրապոլի Ազգային կոմիտէն մեծ ջանք է գործադրել և շարունակում է նոյնը, փախստականներին սիրով ընդունելու և ըստ հնարաւորութեան տանելի դրութեան մէջ պահելու համար: Նիւթականի սղութեան պատճառով մինչև այժմ միայն հաց է տրուել: Սակայն կոմիտէն վաղուց որոշել է նաև ամեն առաւօտ-երեկոյ թէյ ևս տալ, որպէսզի միայն չոր հաց տալով զանազան հիւանդութիւնների առաջ գալու առաջը մասամբ առնուի:

Որովհետև փախստականների թիւը օր աւուր աւելանում էր, կոմիտէն մտածեց քաղաքը ծանրութիւնից ազատելու համար գիւղացի փախստականներին Աղէքսանդրապոլի վիճակի²⁸ գիղերում տեղաւորել: Պարտք եմ համարում ամենախոնարհաբար յիշել, որ Աղէքսանդրապոլի վիճակի բոլոր գիւղերում տեղական կոմիտէներ են ընտրուած, որոնց յանձնուած են անդորրագրերի ժապաւինեալ²⁹ մատեաններ՝ գիւղացիների մէջ ամսական կամաւոր նուէրներ հաւաքելու համար: Այդ կոմիտէներին իրաւունք է տրուած հաւաքած փողերը գործ դնել թէ կամաւորների ընտանիքներին և թէ գաղթականներին օգնելու և պահպանելու վերայ: Այս ձևով գործը կարգաւորելուց յետոյ որպէսզի շարունակ եկող փախստա-

կաններն հիւրընկալելը հեշտ լինի, կոմիտեն արդեն սկսել է Բասենի, Օլթիի, Մարիդամիշի շրջանների փախստականներին գիւղերն ուղարկել յատուկ մարդկանց՝ լիազօրների հետ: Արդեն ուղարկուած են 400 հոգու չափ: Չնայած դորան, ընդհանուր թիւը դարձեալ մօտ 3000-ի է հասնում, որովհետև այն փախստականները, որոնք ճանապարհին կանգ էին առել Կարսի շրջանի գիւղերում, այժմ հետզհետէ գալիս են Ադէքսանդրապոլ: Հայ գաղթականութիւնը ամենաանհրաժեշտ կարիքն ունի տաք հագուստի, դօշակի, վերմակի, թէյի, շաքարի և գլխաւորն է՝ բժշկական օգնութեան:

Այս ծով կարիքներին մասամբ բաւականութիւն տալու համար կոմիտեն հեռագրերով դիմեց Ռուսաստանի մեծ քաղաքների կոմիտեներին՝ օգնութիւն խնդրելով: Պետերբուրգից ստացուել է մի հեռագիր, որ հաղորդում է, թէ 25000 ռուբլի փոխադրուած է Ս.[րբազան] Սինօդին, որի մի մասը Ադէքսանդրապոլը պիտի ստանայ:

Վեհափառ Տէր, համառօտակի նկարագրելով Ադէքսանդրապոլի Ազգային կոմիտէի՝ գաղթականութեան վերաբերեալ ունեցած գործունէութիւնը, Ձերդ Սրբութիւնը կտեսնէ, թէ ինչպիսի մեծ կարիքի առաջ է կանգնած եղել կոմիտեն: Բայց առանց վիատելու, թէև առանց դրամի շատ անգամ, միահամուռ ոյժով առաջ է տարուել գործը և պարտքով անգամ իւր օգնութիւնը հասցրել:

Բազուի լիազօրը՝ պ[արոն] Երուանդ Թադիանոսեանը,³⁰ դէկտեմբերի 30-ին և Պետական Դումայի անդամ պ. Միքաէլ Պապաջանեանը³¹ յունուարի 1-ին այցելեցին փախստականներին գոհ սրտով հեռացան, տեսնելով, թէ ընդհանուր գործը ինչպէս սիրուն կազմակերպուած է:

Ամենախոնարհաբար զեկուցանելով Ձերդ Սրբութեան կոմիտէի գործունէութեան մասին և Ձերդ Վեհափառութեանը նկարագրելով այն կարիքները, որ կոմիտեն պիտի հոգայ, Ադէքսանդրապոլի Ազգային Յանձնաժողովը պարտք է համարում ամենախոնարհաբար խնդրել Ձերդ Վեհափառութեան՝ Պետերբուրգից փոխադրուած գումարի մի որոշ մասը

ըստ Բարձր հայեցողութեան Չերդ Սրբութեան յատկացնել Աղէքսանդրապոլի կոմիտէին, Շիրակում կանգ առած փախստականներին ազատելու սովի և զանազան վարակիչ հիւանդութիւնների ճիրաններից:

Մատչելով ի համբոյր Օծեալ Աջոյն Չերդ Վեհափառութեան

խոնարհ որդի և ծառայ՝ Արտակ Վարդապետ³²

նախազահ Աղէքսանդրապոլի կոմիտէի

Մակագրութիւն. Առ այժմ յատկացուեց 5000 ըրութի]:

ՀԱԱ, ֆ. 57, ց.2, գ. 1242, ք.1-4: Բնագիր: Ձեռագիր:

N 5

**ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՎՈՐԳ Ե
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁ-
ՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

28 հունվարի 1915 թ.

Աղէքսանդրապոլ

Չերդ Սրբութեան Բարձր հովանաւորութեան տակ գտնուած Աղէքսանդրապոլի Եղբայրական օգնութեան յանձնաժողովը բաղդ ունեցաւ, Վեհափառ Տէր, ստանալ Չեր Սրբատառ կոնդակը, որով դրուատելով յանձնաժողովիս գործունէութիւնը, յորդոր էք կարդում կրկնապատկել մեր եռանդը, և շարունակել մեր սկսած մարդասիրական գործը:

Լցուած անսահման ուրախութեամբ և հպարտ այն գիտակցութեամբ, որ մենք արժանի հանդիսացանք Չերդ Սուրբ Օծութեան գովքին և ուշադրութեանը, յանձնաժողովս իր սոյն ամսի 24-ին կայացած նիստում Չերդ Սրբութեան կոնտակը ոտնկայս լսելուց յետոյ, որոշեց՝ որդիական խորին ակնածութեամբ յայտնել Ձեզ, Հայրափսնամ Վեհիդ, շնոր-

հակալուծին, խոստանալով որ մենք ապագայում ևս չենք դադարելու նոյն եռանդով և նոյն անձնուիրութեամբ զործելու յօգուտ մեր խնամքին ապաւինած բշուառ և հալածական մեր եղբայրներին:

Բացի այս, յանձնաժողովը իր նոյն նիստում, ստանալով Ձերդ Վեհափառութեան՝ յօգուտ մեր տարագիր եղբայրներին ուղարկած 5000 թուրքին, որոշեց յայտնել Վեհիդ և այս առթիւ որդիական երախտագիտութիւն և շնորհակալութիւն:

Նախագահ յանձնաժողովի՝

Արտակ Վարդապետ

Անդամ- քարտուղար՝ Պետրոս Մոճոռեանց

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1242, ք. 8: Բնագիր ձեռագիր:

N 6

**ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ ԳԵՎՈՐԳ Ե
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԳԱՂԹԱԿԱՆ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԴՊՐՈՑՆԵՐ ԲԱՅԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐԱՅԱԼ**

24 սեպտեմբերի 1915 թ.

Ալեքսանդրապոլ

Ալեքսանդրապոլի Եղբայրական օգնութեան կոմիտեն քաղաքումս խնամում է մօտ 7 հազար գաղթական, որոնց երեխաների վերայ յատուկ ուշադրութիւն է դարձրել կոմիտեն, այն է, ամբողջ ամառուայ ընթացքում, 280- ից աւելի երեխաների հաւաքելով, հիմք դրեց փոքրիկ դպրոցի, դասատուները կարգուած էին Արդութեան դպրոցաւարտ օրիորդներ:

Այժմ կոմիտեն որոշել է գաղթականների երեխաների համար յատուկ դպրոց բանալ, ուր պէտք է դասաւանդեն նոյն օրիորդները: Դպրոցը պէտք է բացուի իբրև զուգընթաց դասարաններ Ս. Փրկչի վիճակային դպրոցի:³³

Դպրոցը ունի այժմ 300 երեխայ և բաղկացած կլինի երեք բաժանմունքից: Առաջին բաժանմունքը պետք է ունենայ չորս գույրնթաց դասարաններ, որոնցից մեկը հոյն երեխաների համար պիտի լինի:

Գաղթականների երեխաների դպրոցի բացմանը նպաստել է Բագուում գոյություն ունեցող առանց ազգերի խտրության կոմիտեն, որն ուղարկել է արդեն 650 թուրքի, և պետք է փոխադրել շուտով 2150 թուրքի:

Ձեկուցանելով վերոգրեալի մասին Եղբայրական օգնության կոմիտեն ամենախոնարհաբար խնդրում է Ձերդ Վեհափառությանը թոյլատրել և օրհնել գաղթականների երեխաների դպրոցի բացումը, որ մեր չարատանջ եղբայրների զաւակները պիտի կտրուին փողոցից և ստանան տարրական կրթություն:

Մատչելով ի համբոյր Օծեալ Աջոյն Ձերդ Վեհափառության

Ամենախոնարհ որդի և ծառայ՝ Արտակ վարդապետ
Նախագահ Եղբայրական օգնության կոմիտեի

ՀԱԱ, ֆ.57, ց. 2, գ. 1242, ք. 11 : Բնագիր ձեռագիր:

N 7

**ՔԱՂԱՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ
ՃՅՈՒՂԻ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ԿԱ-
ՌԱՎԱՐԻՉ ԱՇՈՏ ԿԱՐԱՆՅԱՆԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ
ԳԵՎՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ**

30 հոկտեմբերի 1915 թ.
Ալեքսանդրապոլ

Ձերդ Վեհափառությանը յայտնի է, որ Ալեքսանդրապոլում գտնուող «Շիրակունի» կոչուող էջմիածնապատկան տան մեջ տեղաւորուած է Քաղաքների միութեան հիւանդանոցի մի

մասը: Արդ քանի որ այդ տունը հիւանդանոցի համար պէտք եղած և անհրաժեշտ նկատուած ինչ-ինչ յարմարութիւններից զուրկ է, ուստի Քաղաքների միութեան տեղական կոմիտէից ընտրուած յանձնաժողովը իր գլխաւոր բժշկի հետ որոշել է այդ տան մէջ մի քանի նորոգութիւններ կատարել և նոր մասեր աւելացնելով ըստ ամենայնի հիւանդանոցի պէտքերին յարմարեցնել, այն պայմանով սակայն, որ նախահաշով այդ ամենի համար պահանջուող մօտ 1500 թուրքու ծախքի կէսը Քաղաքների միութիւնը հոգայ, իսկ միւս կէսը՝ հոգևոր իշխանութիւնը և այն ոչ թէ առձեռն պատրաստի դրամ վճարելով, այլ այդ գումարը իր ամսէ ամիս ստանալիք 50 թուրքի վարձի դիմաց հաշուելով, մինչև՝ ամբողջ գումարի լրանալը: Եթէ Քաղաքների միութիւնը ինչ-ինչ պատճառներով ստիպուած լինի շուտ փոխելու իր հիւանդանոցը, առանց քրէներով լրացրած լինելու հոգևոր իշխանութեան տալիք բաժինը, պարտաւորուած կլինի իր կատարած բոլոր նորոգութիւնները թողնել հոգևոր իշխանութեանը առանց որևէ պահանջի:

Արդ՝ յայտնելով այս ամենի մասին Ձերդ Վեհափառութեանը, որդիական ակնածութեամբ ամենախոնարհաբար խնդրում եմ բարեհաճել սոյն խնդրին պատշաճ տնօրինութիւն անել.³⁴ Չեմ կարող ծածկել Ձերդ Սրբութիւնից, որ եթէ սոյն խնդիրը դրական լուծում չստանայ, Քաղաքների միութիւնը ստիպուած պիտի լինի հրաժարուել այդ տան մէջ նորոգութիւններ և յարդարութիւններ անելու իր մտքից և հիւանդանոցը փոքրացնելու, որով միայն ու միայն մեր թշուառ փախստական եղբայրները տուժած կլինեն:

Ի լուսաբանութիւն ամենախոնարհի հայտարարութեան, հարկ եմ համարում կցել յիշեալ նորոգութիւններն անհրաժեշտ գտնող յանձնաժողովի «ակտը»:

Ալէքսանդրապոլի փախստականների հիւանդանոցի կառավարիչ և Ձերդ Վեհափառութեան ամենախոնարհ որդի՝ Աշոտ Կարանեան

Копия с акта Больницы Всероссийского Союза Городов для беженцев от 7 октября 1915 года.

Рассмотрев на месте степень необходимости производства приспособлений пристроек в помещениях больницы Всероссийского Союза Городов для беженцев Смешанная комиссия в составе главного врача, члена городского комитета и заведывающего хозяйством больницы признала:

- 1) Все указанные в актах N 1-й и N II-ым приспособления и пристройки необходимы.
- 2) Необходимо также во дворе первого отделения больницы над колодцем устроить насос для выкачивания воды.
- 3) Устроить особое деревянное помещение для установки аппарата Гельюса и для дезинфекции одежды.
- 4) Ускорить выполнение назначенных работ.

Подписали: Главный врач - П. Ованессов, Член Городского Комитета по оказанию помощи больным и раненым воинам А. Исаков, заведывающий хозяйством больницы А. Каранов.

С подлинным верно:

Секретарь

ՀԱԱ, ֆ.57, ց. 2, գ. 1274, ք. 80- 81 : Բնագիր, ձեռագիր:

N 8

ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ
ԿԱԼ ՎԱՃԵՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՎՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ
ՇԻՐԱԿՈՒՆԻ ՍՐԲԱԶԱՆԻ ՏԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ
ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

20 նոյեմբեր 1915 թ.

Ալեքսանդրապոլ

Չերդ Վեհափառութեան Դիւանիդ ամսոյս 16-ի ք. 2042
առաջադրութեան ամենախոնարհաբար պատասխանում եմ,

որ գերապատիւ Շիրակունի Սրբազանի տան մէջ Քաղաքների միութեան ցանկացած կատարելիք նորոգութեանց առթիւ հոկտեմբերի 19-ի թիվ 868 իմ յայտարարութեամբ ես միայն մերկայացրել եմ Սրբազան Սինօդին Քաղաքների միութեան կողմից ինձ գրած թ. 4156 գրութիւնը և ծախքերի նախահաշիւը, որի մէջ Միութիւնը խնդրում էր կատարուելիք ծախքերի կէտը՝ 750 թուրքիւն վերցնել Մայր Աթոռի հաշուին: Իմ իրատունքից բարձր համարելով այդպիսի ծախք անելը, Սրբազան Սինօդից այդ հարցի առթիւ տնօրինութիւն եմ խնդրել, սակայն ես երբեք չեմ միջնորդել ծախքի կէտը Մայր Աթոռի հաշուին վերցնելու:

Սրբազան Սինօդը քննելով խնդիրը և առաջարկած պայմանները, այլ և այն հանգամանքը, որ Քաղաքների միութիւնը հնարաւորութիւն ունի իր միջոցներով հայթայթելու ծախքերը, բարւոք համարեց հրաժարուել ծախքերին մասնակցելուց: Թողնելով, որ Քաղաքների միութիւնը ինքը կատարէ բոլոր ծախքերը այն պայմանով, որ վերջում բոլոր շինուածները պէտք է մնան վանքի սեփականութիւն: Այս առթիւ Սրբազան Սինօդը ինձ գրեց հոկտեմբերի 20-ի թ. 1632 մերժման թուղթը, որի ռուսերէն թարգմանութիւնը ուղարկեցի Քաղաքների միութեանը ի գիտութիւն:

Սակայն նոյն միութեան կառավարիչ Աշոտ Կարանեանը եկել էր Էջմիածին և նոր խնդիր յարուցել Նորին Սրբութեանը նոր խնդիր տալով:

Մատչելով ի համբոյր Օծեալ Աջոյն Չերդ Վեհափառութեան

Ամենախոնարհ որդի և ծառայ՝ Արտակ վարդապետ

ՀԱԱ, ֆ.57, ց. 2, գ. 1274, թ. 147 : Բնագիր ձեռագիր:

N 9

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԱՐՏԱԿ
ՎԱՐԴԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՎՈՐԳ Ե
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄԵՎ
ԳԱՎԱՌՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*4 դեկտեմբերի 1915 թ.
Ալեքսանդրապոլ*

Ձերդ Վեհափառութեան Դիւանի նոյեմբերի 24-ի թիւ 2118 հրամանի համաձայն ամենախոնարհաբար ներկայացնում եմ Ձերդ Սուրբ օծութեան Ալեքսանդրապոլում և ամբողջ վիճակում տեղաւորուած գաղթականների ցուցակը կազմուած առ 1-ը հոկտեմբերի տարուոյս: Յուցակի մէջ ցոյց է տրուած տղամարդկանց, կանանց և երեխաների ճիշտ քանակը: Գաղթականների վերաբերեալ մնացած տեղեկութիւնները՝ այն է՝ որբերի և վախճանուածների մասին արդէն կարգադրութիւն է եղած, վիճակագրական տեղեկութիւններ ստանալու պէս իսկոյն ամենախոնարհաբար կներկայացնեմ Ձերդ Սուրբ Օծութեան:

*Մատչելով ի համբոյր Օծեալ Աջոյն
Ձերդ Վեհափառութեան Ամենախոնարհ որդի և ծառայ
փոխանորդ Ալեքսանդրապոլի՝ Արտակ վարդապետ*

*Տեղեկութիւններ
Ալեքսանդրապոլում և Ալեքսանդրապոլի գաւառում
տեղակայուած գաղթականների մասին
1-ը հոկտեմբերի 1915 թ.*

<i>№ по порядку</i>	<i>НАЗВАНИЕ МЕСТЬ, ГДЕ РАЗМЕЩЕНЫ БЕЖЕНЦИ ГОР. АЛЕКСАНДРОПОЛЬ</i>	<i>ЧИСЛО БЕЖИЦЕВ</i>				<i>Число работос пособн ых муж- чин</i>
		<i>Мужчин</i>	<i>Женщин</i>	<i>Дней</i>	<i>Итого</i>	

.	<i>В 12-ти общесжи- тия Комитетах ”Б- ратской помощи”</i>	<i>435</i>	<i>968</i>	<i>1201</i>	<i>2604</i>	<i>280</i>
<i>б.</i>	<i>Проживающие в городе в частных домах</i>	<i>701</i>	<i>1582</i>	<i>1957</i>	<i>4240</i> <i>-----</i> <i>6844</i>	<i>464</i>
	<i>В Александропо- льском уезде</i>					
<i>1.</i>	<i>Капулы</i>	<i>68</i>	<i>63</i>	<i>116</i>	<i>247</i>	<i>57</i>
<i>2.</i>	<i>Кялали</i>	<i>23</i>	<i>30</i>	<i>32</i>	<i>85</i>	<i>20</i>
<i>3.</i>	<i>Кейгач</i>	<i>17</i>	<i>12</i>	<i>22</i>	<i>51</i>	<i>9</i>
<i>4.</i>	<i>Чирпили</i>	<i>26</i>	<i>30</i>	<i>65</i>	<i>121</i>	<i>14</i>
<i>5.</i>	<i>Дагарлы</i>	<i>51</i>	<i>57</i>	<i>69</i>	<i>177</i>	<i>24</i>
<i>6.</i>	<i>Агинь</i>	<i>41</i>	<i>53</i>	<i>79</i>	<i>173</i>	<i>35</i>
<i>7.</i>	<i>Тавшанкишлягь</i>	<i>58</i>	<i>66</i>	<i>110</i>	<i>234</i>	<i>45</i>
<i>8.</i>	<i>Казарабат</i>	<i>36</i>	<i>45</i>	<i>78</i>	<i>159</i>	<i>23</i>
<i>9.</i>	<i>Бабурлы</i>	<i>14</i>	<i>11</i>	<i>38</i>	<i>63</i>	<i>9</i>
<i>10.</i>	<i>Суванверды</i>	<i>62</i>	<i>83</i>	<i>126</i>	<i>271</i>	<i>50</i>
<i>11.</i>	<i>Бутдашень</i>	<i>14</i>	<i>11</i>	<i>38</i>	<i>63</i>	<i>9</i>
<i>12.</i>	<i>Александровка</i>	<i>15</i>	<i>22</i>	<i>22</i>	<i>59</i>	<i>12</i>
<i>13.</i>	<i>Кошаванкъ</i>	<i>46</i>	<i>42</i>	<i>60</i>	<i>148</i>	<i>30</i>
<i>14.</i>	<i>Енки-Кей</i>	<i>22</i>	<i>37</i>	<i>44</i>	<i>103</i>	<i>19</i>
<i>15.</i>	<i>Клиджикятаь</i>	<i>38</i>	<i>50</i>	<i>70</i>	<i>158</i>	<i>28</i>
<i>16.</i>	<i>Боздогань</i>	<i>49</i>	<i>49</i>	<i>91</i>	<i>189</i>	<i>35</i>
<i>17.</i>	<i>Кирых</i>	<i>32</i>	<i>34</i>	<i>56</i>	<i>122</i>	<i>25</i>
<i>18.</i>	<i>Заринджа</i>	<i>30</i>	<i>51</i>	<i>74</i>	<i>156</i>	<i>23</i>
<i>19.</i>	<i>Базйрхана</i>	<i>57</i>	<i>62</i>	<i>92</i>	<i>211</i>	<i>47</i>
<i>20.</i>	<i>Ташкала</i>	<i>57</i>	<i>59</i>	<i>100</i>	<i>216</i>	<i>54</i>
<i>21.</i>	<i>Муслуглы</i>	<i>45</i>	<i>47</i>	<i>70</i>	<i>162</i>	<i>38</i>
<i>22.</i>	<i>Пиртикян</i>	<i>21</i>	<i>21</i>	<i>29</i>	<i>71</i>	<i>16</i>
<i>23.</i>	<i>Адиямань</i>	<i>41</i>	<i>46</i>	<i>61</i>	<i>148</i>	<i>32</i>
<i>24.</i>	<i>Согютлы</i>	<i>80</i>	<i>102</i>	<i>124</i>	<i>306</i>	<i>46</i>
<i>25.</i>	<i>Ширванджуг</i>	<i>30</i>	<i>47</i>	<i>73</i>	<i>150</i>	<i>23</i>
<i>26.</i>	<i>Богаскясань</i>	<i>29</i>	<i>35</i>	<i>56</i>	<i>120</i>	<i>26</i>
<i>27.</i>	<i>Моллаккча</i>	<i>56</i>	<i>94</i>	<i>100</i>	<i>250</i>	<i>36</i>
<i>28.</i>	<i>Армутлы</i>	<i>26</i>	<i>28</i>	<i>44</i>	<i>98</i>	<i>15</i>
<i>29.</i>	<i>Сонгурлы</i>	<i>36</i>	<i>48</i>	<i>66</i>	<i>150</i>	<i>17</i>
<i>30.</i>	<i>Джловхань</i>	<i>15</i>	<i>28</i>	<i>49</i>	<i>92</i>	<i>12</i>

31.	Кипчак	29	31	65	125	24
32.	Хача-Килиса	4	10	16	30	4
33.	Башгекъ	26	34	62	122	19
34.	Болъ. Арихвали	41	44		146	35
35.	Мал. Арихвали	22	27	37	86	18
36.	Норашень	32	35	51	118	23
37.	Гезадара	32	37	50	119	28
38.	Артик	72	88	156	316	50
39.	Мал. Парни	39	45	70	154	27
40.	Мечитли	33	40	73	146	23
41.	Томардашь	24	27	80	131	20
42.	Махмуджуг	50	64	108	222	30
43.	Тападоллак	21	40	74	135	13
44.	Казанджи	24	31	66	121	18
45.	Кафтарлы	18	15	53	86	21
46.	Касумали	10	22	35	67	6
47.	Кулиджань	24	46	31	101	12
48.	Еганлар	40	70	44	154	26
49.	Колкать	14	17	16	47	5
50.	Илхиапи	34	44	46	124	18
51.	Талиноглы	15	18	37	70	13
52.	Имирхань	20	22	38	80	13
53.	Хоромъ	28	51	97	176	14
54.	Сарибашъ	11	11	35	57	8
55.	Кутникишляг	1	2	1	4	--
56.	Танагирмаз	47	48	53	148	33
57.	Кондаксаз	2	2	5	9	2
58.	Миракъ	1	2	3	6	1
59.	Меликяндъ	18	21	33	72	11
60.	Джарджарис	8	9	17	34	3
61.	Джанги- Тапа	8	11	14	33	4
62.	Аджи- Халил	33	34	42	109	17
63.	Крхдагирмань	31	36	44	11	23
64.	Ахкалаа	24	24	44	92	9
65.	Кещишкенд	5	9	23	37	5
66.	Манджухлы	16	18	28	62	10
67.	Арм. Пампъ	9	21	28	68	6
68.	Диракляр	23	33	50	106	12
69.	М. Капанак	8	11	27	46	5

70.	<i>Бол. Капанак</i>	39	41	73	153	25
71.	<i>Чрахли</i>	52	63	90	205	35
72.	<i>Канвалы</i>	6	9	13	28	5
73.	<i>Дускянд</i>	88	120	90	298	38
74.	<i>Гаджиназар</i>	59	60	81	200	44
75.	<i>Джаджур</i>	98	95	91	284	39
76.	<i>Ахкилиса</i>	16	22	13	51	9
77.	<i>Бол. Саритар</i>	40	52	31	23	22
78.	<i>III Арихвали</i>	54	72	50	176	24
79.	<i>Дарбанд</i>	25	25	24	74	7
80.	<i>Тапарлы</i>	53	55	57	165	32
81.	<i>Конакрать</i>	71	80	57	208	25
82.	<i>Мал. Саритар</i>	23	26	25	74	9
83.	<i>Алихань</i>	15	16	10	41	5
84.	<i>Самурлы</i>	2	4	1	7	2
85.	<i>Новый Караклис</i>	5	4	6	15	-
86.	<i>II Баш. Гег</i>	4	18	17	49	3
87.	<i>В. Каланджа</i>	29	40	57	126	17
88.	<i>Н. Каланджа</i>	15	16	9	40	11
89.	<i>Капсь</i>	18	13	25	56	5
90.	<i>Джалабь</i>	13	18	25	56	13
91.	<i>Алакилиса</i>	7	9	14	30	3
92.	<i>Н. Бандивань</i>	7	9	11	27	5
93.	<i>С. Бандивань</i>	10	16	22	48	4
94.	<i>Илли-Караклись</i>	7	17	17	41	2
95.	<i>Такнали</i>	12	21	27	60	11
96.	<i>Гюрджисл</i>	15	20	27	62	13
97.	<i>Палутлы</i>	16	21	66	103	14
98.	<i>М. Кейты</i>	3	6	16	25	3
99.	<i>Бол. Кейты</i>	19	24	45	88	16
100.	<i>Ортакаилиса</i>	14	16	24	54	9
101.	<i>Чорлы</i>	2	3	4	9	1
102.	<i>Чизыхлар</i>	10	10	10	30	6
103.	<i>Гюлли-Булаг</i>	10	16	13	39	7
104.	<i>Салуть</i>	5	6	9	20	3
105.	<i>Бозь-Ехуш</i>	11	20	18	49	7
106.	<i>Дузь-Харапа</i>	21	25	31	77	15
107.	<i>Чифтарли</i>	19	26	30	75	18
108.	<i>Н. Кизил-Килиса</i>	6	13	10	29	3

109.	Кизиль-Коч	26	29	35	90	14
110.	Кург-Булаг	17	15	18	50	11
111.	Шип-Тапа	11	8	11	30	4
112.	Казанчи	13	17	29	59	6
113.	Даракей	2	2	10	14	2
114.	Корь- Ахшор	4	13	25	42	2
115.	Бол. Караклись	134	184	261	579	66
116.	Ягублы	31	31	38	100	17
117.	Кишлягъ	18	55	45	118	10
118.	Сармсахлы	12	19	22	53	6
119.	Аджикара	18	21	21	60	14
120.	Дарбаз	22	34	33	89	5
121.	Безобдал	11	18	24	53	4
122.	Бозикснд	38	47	96	181	12
123.	Амамлы	91	131	171	393	30
124.	Чотуръ	16	20	18	54	6
125.	Ворднав	48	59	59	166	17
126.	Качаганъ	23	21	23	67	8
127.	Чигдаман	7	7	16	30	3
128.	Спитак	34	37	28	99	14
129.	Налбанд	29	42	53	124	12
130.	Тапанлы	33	33	56	122	13
131.	Агбулагъ	50	41		160	21
132.	Калтахчи	66	83	82	231	30
133.	Авдибек	57	77	84	218	24
134.	Гегегушь	17	17	39	63	7
135.	Карабоа	15	18	28	61	7
136.	Караль	47	53	73	173	19
137.	Бол. Беканд	119	134	177	430	30
138.	Гегоранъ	50	44	68	162	21
139.	Клюджа	40	49	68	157	17
	Итого по уезду	4069	5015	6887	15971	2411
	Всего по городу и уезду	5205	7565	10045	22815	3155

Председатель комитета Вардапет Артак
Председатель Статистической Секции Геонджиян
Члень- Секретарь Ал. Амбардзумян
ՀԱՄ, ֆ. 57, ց. 2, գ. 1287, ր. 4-5: Բնագիր: Մտքնագիր:

N 10

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌԻ ՂՈՆԱԽՈՒՄՆ
ԳՅՈՒՂՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ԲՈՒԼԱՆԸԽԻ ԳԱՎԱՌԱԿԻ ԼԻԶ
ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ԱԼՍԱՍՏ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
ԽՆԴՐԱԳԻՐԸ ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ՝ ԻՐ ԿՈՐԱԾ
ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ԳՏՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

15 մարտի 1916 թ.

Ալեքսանդրապոլ

1915 թ. յունիս ամսի վերջերին սկսուեց ևս մեր գիւղի գաղ-թը դէպի Ռուսաստան: Իհարկէ մինչև այդ օրը մենք կորցրել էինք արդէն մեր ընտանիքի մեծ մասը: Ինձ հետ վերցրել էի միայն իմ չորս երեխաներին: Հասնելով մինչև Իզդիր, ես հիւանդացայ և այլևս չկարողացայ երեխաներիս ուշադրու-թիւն դարձնել, որոնք կորան իմ աչքից այդ բազում գաղ-թականութեան մէջ և մինչև օրս կորած են:

Երեխաներիս անուններն են 1) Անդրանիկ, 7 տարեկան, ունի շէկ մազեր ու ցորենագոյն մորթ: 2) Սաբրէ (աղջիկ), 20 տարեկան, ունի շէկ մազեր ու ցորենագոյն մորթ և աչքերն էլ շրդիկ: 3) Արփիար, 20 տարեկան, ունի շէկ մազեր և ցորե-նագոյն մորթ և բարձր հասակ: 4) Սանդօ, ունի շէկ մազեր, ցորենագոյն մորթ, աջ այտի վրա մի խալ ու միջին հասակ:

Յայտնելով վերոյիշեալի մասին, խոնարհաբար խնդրում եմ Ձերդ Բարձրապատուութեանը միջնորդել ուր հարկն է, որի օգնութեամբ գուցէ կարողանամ գտնել իմ զաւակներին: ³⁵

Խնդրատու՝ Ալմաստ (Յովհաննիսեան) Պետրոսեան

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1281, ք. 13: Բնագիր: Ձեռագիր:

N 11

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԵՂՔԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ
ԿՈՍԻՏԵՒ ՓՈԽՆԱԽԱԳԱՀ Ս. ԹԱԲԱՂՅԱՆԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԹԻՖԼԻՍԻ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴ**

**ՄԵՍՐՈՊ ԵՊԻՄԿՈՊՈՍԻՆ՝ ՈՐԲԱՆՈՅՆԵՐԻ ԲԱՅՄԱՆ
ԿԱՐԳԻ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

15 մարտի 1916 թ.
Ալեքսանդրապոլ

Որբանոցի բացման համար Եղբայրական օգնության կոմիտեիս դիմել էր պ[արոն] Միքայել Պապաջանեանին հեռագրով և խնդրել էր հրահանգ: Պ[արոն] Պապաջանեանը Պետրոգրադից հեռագրում է, թէ այդ խնդրով պետք է դիմել Ձեզ: Եղբայրական օգնության կոմիտեիս այդ հիման վրայ դիմում է Ձերոյ Սրբազնութեանը և խնդրում է ըստ հնարատրութեան շուտ տեղեկացնել մեր որբանոցների բացման կարգն ու պայմանները, որպէսզի կոմիտեիս յարմարութիւն ունենայ օր առաջ ձեռնամուխ լինելու բացման և հնարատրութիւն ունենայ վաղուց ծրագրած և փայփայած գործը որբերի արտասուքը սրբելու սրբազան պարտքը պսակելու:

Փոխնախագահ կոմիտէի՝ Ս. Թաբաղեան
Գործավար՝ Մուրաֆեան

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 428, ք. 70: Բնագիր: Ձեռագիր:

N 12

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՎՈՐԳ Ե ԿԱԺՈՂԻԿՈՍԻՆ՝
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՈՐ ԿԱԶՄ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

23 ապրիլի 1916 թ.
Ալեքսանդրապոլ

Ալեքսանդրապոլի Եղբայրական օգնության Յանձնաժողովը պատիւ ունի ամենախոնարհաբար զեկուցանել Ձերոյ

Վեհափառութեան, որ իր նախկին կազմի ժամանակամիջոցը լրանալու պատճառով, ներկայ տարուա յունուարի 30-ին հրափրեց քաղաքիս զանազան հիմնարկութիւնների և ընկերակցութիւնների, նոյնպէս և վաճառականական ու արհեստատուր դասակարգերի ներկայացուցիչների ընդհանուր ժողով, իր անցեալ 15 ամսուայ գործունէութեան հաշիւը ներկայացնելու և Յանձնաժողովի նոր կազմի ընտրութեան համար:

Ընդհանուր ժողովը լսելով Յանձնաժողովի զեկուցումը, անցաւ նոր անդամների ընտրութեան, ուր միաձայն ընտրեց պատուաւոր անդամներ վիճակիս Տէր Փոխանորդ Բարձրապատիւ Արտակ վարդապետին և Աղէքսանդրապոլի Քաղաքազօլուիս պ. Կարապետ Կամսարականին, ապա զաղտնի քուէարկութեամբ ընտրեց Յանձնաժողովի անդամներ պ.պ. Խաչատուր Խաժակեանին, Սարգիս Սուբայեճեանին³⁶, Յովակիմ Բուդաղեանին, Համբարձում Տէր-Ղազարեանին, Պարոյր Գէօնջեանին, Պետրոս Մոճոռեանին, Սաղաթէլ Թաքաղեանին, Միսակ Տէր-Յարութիւնեանին, Ալէքսանդր Համբարձումեանին, Յակոբ ք. Խաչվանքեանին, Սուրէն Նազանեանին, Յակովբ Էլրակեանին, Վարդ Գիւլբեկեանին, Պետրոս Բերութեանին, Յովսէփ Միրզոյեանին, Վարդգէս Արաքաջեանին, Գեղամ Փեշտմալճեանին, Եփրեմ Սարգսեանին³⁷, Սիմէօն Մանուկօղլեանին, Արտաշէս Խզմալեանին, Գէորգ Միքայելեանին, Արտաշէս Դարբինեանին, Սարգիս Խաչատրեանին և Գէորգ Շէկոյեանին, որոնք և անմիջապէս ստանձնեցին իրենց վերայ դրուած պարտականութիւնների դէկը:

*Նախագահ Յանձնաժողովի և Չերդ Վեհափառութեան
ամենախոնարհ որդի և ծառայ՝ Արտակ Վարդապետ
Անդամ քարտուղար՝ Պետրոս Մոճոռեան*

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1306, ք.1: Բնագիր, ձեռագիր:

N 13
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ
ՈՐԲԱՆՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4 հունիսի 1916 թ.

վայրը Ալեք-պոլ	1-3 տար եկան		4-9 տարեկ.		7-10 տարեկ.		11 և ավելի		բոլորը միասին		
	ա ր	ի գ	ար	իգ	ար	իգ	ար	իգ	ար	իգ	ընդ
Բարեգործ ական N 1	-	2	5	8	16	13	12	4	33	27	60
Բարեգործ ական N 2	4	1	7	1	36	7	31	1	80	10	90
Կենտրոն. կոմիտեի N 1	-	-	1	-	7	5	12	14	20	9	29
Կենտրոն կոմիտեի N 2	1	4	4	2	4	-	8	13	17	19	36
Կենտրոն կոմիտեի N 3	-	-	-	-	-	17	-	16	-	33	33
Միացեալ ընկ. N 1	-	-	1	2	6	7	11	4	18	13	31
Միացեալ ընկ. N 2	-	-	4	3	20	6	8	14	42	23	65
Ընդամենը	5	7	22	16	89	55	94	56	210	134	344

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 587, ք. 26շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

20 օգոստոսի 1916 թ.

Անուն	բացմա ն թիւը	վերահսկիչը	ուսուցիչ. անուն, ազգանուն	դաս- ար. թիվը	ռոճիկ
Ալեքսանդրապոլ Միացեալ	20.11. 1915 թ.	Եղբայրական օնութեան երի-	տիկին Երանուհի	18	35ր.

ընկերության թիւ 1 որբանոց		տասարդական միութիւն, Օրիորդաց ընկերութիւն, Բարեգործակ. ընկերութիւն	Կիրակո- սեան		
Միացյալ ընկեր. թիւ 2 որբանոց	25.04. 1916 թ.	նոյնը	չկայ	-	-
Բարեգործական ընկերության թիւ 1 որբանոց	08.01. 1916 թ.	Բարեգործակ. ընկերության ճիւղը	չկայ	-	-
Կենտրոնական Կոմիտէի որբանոց	01.04. 1916 թ.	Գաղթականու- թեան դպրոցի ուսուցչական խումբը	չկայ	-	-

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 587, ք. 22: Բնագիր ձեռագիր:

N 14

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱ- ՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՎՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ ԵՎ ԳԱՎԱՌԻ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ ԱՊՐՈՂ ԳԱՂԺԱԿԱՆՆԵՐԻ 1915 Թ. ՄԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

16 հունիսի 1916 թ.

Ալեքսանդրապոլ

Վեհափառ Տէր,

1915 թուի ընթացքում Ալեքսանդրապոլի վիճակի գիւղերում և քաղաքում պատսպարան են գտած եղել 23000 գաղթական, որոնց մանրամասը ցուցակը ամենախոնարհաբար ներկայացրել եմ Ձերդ Սրբութեան անցեալ տարուայ դեկտեմբերի 1-ին թիւ 1110 յայտարարութեամբ: Ի լրումն այդ գրութեան այժմ ամենախոնարհաբար ներկայացնում եմ Ձերդ Վեհափառութեան 1915 թուի ընթացքում վիճակիս գիւղերում և քաղաքում վախճանուած գաղթականների ցուցակը, ուր որոշուած են սեռը և հասակները: Անուանցուցակն

այսքան ուշացաւ, որովհետև քահանաներից շատերը չէին հասկացել և սխալ տեղեկութիւններ էին տուել: Հարկ եղաւ մի քանի անգամ կրկնել գրութիւնները, մինչև որ ճիշտ տեղեկութիւններ ստացուեցին:

Մատչելով ի համբոյր Օծեալ Աջոյն

Չերդ Վեհափառութեան

խոնարհ որդի և ծառայ՝ Արտակ վարդապետ

Տեղեկագիր

Ալէքսանդրապոլում և նրա վիճակում ապրող

գաղթականների մահացութեանց 1915 թ. ընթացքում

Քաղաք և գիւղերը	Մեծ տղ.	կ.	Փոքր տղ.	Ընդհանուր աղ. գումարը
--------------------	------------	----	-------------	--------------------------

1. Ալէքսանդրապոլ	50	56	145	80	331
Հոռոմի գործակալութիւն					
Գիւղերը.					
2. Ճլրխան	1	3	2	3	9
3. Թալիպօղլի	-	3	1	-	4
4. Դահարլի	7	3	6	5	21
5. Ղափուլի	1	-	11	2	14
6. Հոռոմ	7	2	-	1	10
7. Իլիսիարի	-	2	11	5	18
8. Թոմարդաշ	-	4	-	1	5
9. Իմրխան	2	2	2	-	6
10. Խլի Ղարաքիլիսա	-	-	-	-	-
11. Բայանդուր	-	-	-	-	-
12. Ղութնիդշլախ	-	-	-	-	-
13. Քեալալի	-	-	-	-	-

Արթիկի գործակալութիւն

14. Արթիկ	1	3	11	5	20
15. Ղփչաղ	2	3	2	3	10
16. Բաշգիւղ	-	-	-	-	-

17. Խաչաքիլիսա	-	-	-	-	-
18. Փոքր Պարնի	1	6	1	-	8
19. Մէջղի	2	2	1	1	6
20. Ղազանչի	-	-	-	1	1
21. Ղասամալի	2	2	-	-	4
22. Ղուլիջան	2	3	-	-	5
23. Եզանլար	1	5	2	6	14

	29	43	50	33	154
--	----	----	----	----	-----

Մեծ Պարնիի շրջան

24. Աղիբեզ	3	2	4	1	10
25. Ղարաբոյա	-	-	1	1	2
26. Աղբուլաղ	2	2	1	2	7
27. Գեոյետողուշ	-	1	-	1	2
28. Թափանլի	1	3	-	-	4
29. Նալբանդ	1	2	2	-	5
30. Գեօրան	1	3	3	3	10
31. Զիլլիջա	2	1	2	2	7
32. Ղարալ	1	-	2	2	5
33. Ղալթախչի	5	3	2	-	10
34. Մեծ Պարնի	1	3	2	-	6

Համանլուի շրջան

35. Համանլու	8	13	8	8	37
36. Որդնաւ	1	1	4	1	7
37. Ղաչաղան	-	-	-	1	1
38. Չոթուռ	1	-	-	-	1
39. Սալիտակ	2	1	2	-	5
40. Չիգդամալ	-	2	-	-	2
41. Էֆենդի	-	-	-	-	-

Բոզեղուշի շրջան

42. Գիլլիբուլաղ	-	-	-	-	-
43. Բոզեղուշ	1	-	3	1	5

44. Ղայդուլի Դիզբանդ	1	1	-	2	4
45. Նոր Ղարաքիլիսա	-	3	1	2	6
46. Ղզլղոչ	-	-	2	-	2

	31	41	39	27	142
--	----	----	----	----	-----

47. Ղուրսլի Բուլաղ	-	-	4	3	7
48. Չիֆթառլի	-	-	4	3	7

Օրթաքիլիսայի շրջան

49. Մեծ Սարիար	-	-	1	3	4
50. Օրթաքիլիսա	2	-	1	3	4
51. Մեծ Բէյթի	1	-	1	1	3
52. Կապս	1	1	3	-	5
53. Թուփառլի	1	4	5	9	19
54. Երրորդ Արխաւի	1	2	2	5	10
55. Վերին Ղանլիջա	-	-	-	-	-
56. Ներքին Ղանլիջա	-	-	-	-	-
57. Փոքր Բէյթի	-	-	-	-	-
58. Դարբանդ	-	3	1	-	4
59. Ղոնախաւան	-	1	2	2	5

Մահմուդլուի շրջան

60. Չիթիանքով	1	5	5	3	14
61. Սօգիւթլի	3	7	6	5	21
62. Շիրվանջուղ	5	3	2	-	10
63. Մահմուդլու	5	3	3	2	13
64. Արմուտլի	5	5	5	2	17
65. Սոնգիւրլի	-	1	1	1	3
66. Սարիբաշ	-	1	-	2	3
67. Բողազքեասան	4	-	2	-	6
68. Սօլլագեռքա	-	1	-	-	1
69. Փիրթիքեան	-	3	2	1	6

	30	41	52	43	167
Չորրուայ շրջան					
70. Երրորդ Բազգիւղ	-	-	-	1	1
71. Չորլի	1	-	-	-	1
72. Փոքր Սարիար	-	-	1	2	3
73. Բէֆլի	-	-	1	1	2
74. Սամրլի	-	-	-	-	-
75. Երրորդ Ղարաքիլիսա	-	-	-	-	-
76. Ալիխան	-	-	-	-	-
77. Գիւրջիօլ	1	-	1	1	3
78. Ճգիւլար	1	3	1	7	12
79. Մեծ Բանդկան	-	-	-	-	-
80. Փոքր Բանդկան	-	-	-	-	-
81. Թաքնալի	1	-	2	2	5
82. Իլլի	-	3	-	-	3
83. Ջալար	-	-	2	1	3
84. Փալուտլի	-	1	-	-	1
85. Սոլուք	1	3	1	-	5
Նորաշենի շրջան					
86. Ղոլղաթ	1	1	1	3	6
87. Փոքր Արիսվալի	-	1	1	3	5
88. Մեծ Արիսվալի	-	2	-	-	2
89. Նորաշեն	5	1	3	1	10
90. Հայ Գիւզալդարա	4	6	-	2	12
91. Ղրիստագիրման	-	2	4	4	10
92. Հայ Փամբ	-	1	2	1	4
	15	24	20	29	88
93. Բեշիշքեանդ	-	-	2	-	2
94. Մունջուլի	-	-	-	1	1
95. Ջանգիթափա	-	1	-	3	4
96. Հաջիխալիլ	-	-	-	-	-

Ջաջուռի շրջան

97. Հաջինազար	-	-	3	3	6
98. Դիրաքլար	-	-	1	3	4
99. Ջաջուռ	-	3	3	3	9
100. Աղքիլիսա	1	1	-	-	2
101. Մեծ Քեափանակ	2	5	7	6	20
102. Փոքր Քեափանակ	-	2	2	-	4
103. Չրախլի	4	-	4	-	8
104. Մեծ Դիրաքլար	1	2	6	1	10
105. Խանկալի	-	-	-	-	-

Մեծ Ղարաքիլիսայի շրջան

106. Մեծ Ղարաքիլիսա	4	18	13	10	45
107. Հաջիդարա	-	-	2	1	3
108. Համզաչիման	-	-	-	-	-
109. Դշլաղ	-	-	3	2	5
110. Սարմուսախլի	1	-	-	1	2
111. Բզովդալ	-	-	-	-	-
112. Դարբազ	-	2	5	2	9
113. Վարդանլի	-	1	1	-	2
114. Եաղուբլի	-	-	1	3	4

13	35	53	39	140
----	----	----	----	-----

Տաւշանդշլաղի շրջան

115. Աղին	1	2	2	3	8
116. Բարբորլի	-	3	1	2	6
117. Չրփլի	-	5	2	2	9
118. Դեյղաճ	1	1	2	2	6
119. Ղազարապատ	3	8	12	4	27
120. Դզլքիլիսա	2	5	4	8	19
121. Ջարնջի	-	-	-	-	-
122. Բոզդողան	1	1	7	3	12
123. Տաւշանդշլաղ	3	2	12	10	27

124. Բուդղաշեն	3	1	2	4	10
125. Սուանվերդի	2	-	6	3	11
126. Նոր Արթիկ	-	-	3	7	10
127. Ենգի-Քեօյ	-	-	-	-	-
Ընդհանուր գումար	135	212	267	219	833
	50	56	145	80	331
Ընդհանուր գումարը	185	268	412	299	1164

ՀԱԱ, ֆ. 57, ց.2, գ.1306, ք. 3-7: Բնագիր: Ձեռագիր :

N 15

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՎՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

16 հունիսի 1916 թ.

Ալեքսանդրապոլ

Ի լրումն անցեալ տարուայ նոյեմբերի 20-ի թիւ 1023 իմ յայտարարութեան ամենախոնարհաբար յայտնում եմ, որ «Քաղաքների միութիւնը»³⁸ Տէր-Շիրակունի արքեպիսկոպոսի տան մէջ կատարել է հարկատու եղած ծախսերը, որի կէսը ցանկանում էին, որ Ս. Էջմիածինը իւր վրայ վերցնէ:

Շինութեան ամբողջ պատշգամբը շուշապատ է արուած, մի սենեակի յատակը տոնիտով³⁹ է ծածկուած և վանմայ է դրուած լողանալու համար: Սենեակների յատակները նորից են ներկել և հնացած պաստառների տեղը մաքուր սպիտակ գաճով ներկել են:

Այնպէս որ, բնակարանը գեղեցկացել է և աւելի յարմարեցուած է բնակութեան:

Վերոգրեալի մասին ամենախոնարհաբար զեկուցանում եմ Ձերդ Սրբութեանն ի գիտութիւն:

*Մատչելով ի համբոյր Օծեալ Աջոյն
խոնարհ որդի և ծառայ՝ Արտակ վարդապետ*

ՀԱԱ, ֆ. 57, ց.2, գ. 1306, ք.2: Բնագիր: Ձեռագիր:

N 16

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԱՐՏԱԿ
ՎԱՐԴԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՎՈՐԳ Ե
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՈՐԲԱՆՈՅՆԵՐ ԲԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

16 հունիսի 1916 թ.

Ալեքսանդրապոլ

Վեհափառ Տէր,

Ալեքսանդրապոլի Եղբայրական օգնութեան կոմիտէն և Թիֆլիսի Հայոց Բարեգործական ընկերութիւնը տեսնելով գաղթական որբերի ահռելի քանակը թէ քաղաքումս և թէ վիճակում, շատ վաղուց էին զգացել որբանոց բաց անելու կարիքը քաղաքում, սակայն զանազան հանգամանքներ արգելք եղան այդ սուրբ գործը ավելի շուտ գլուխ հանելու:

Ուրախութեամբ ամենախոնարհաբար յայտնում եմ Ձերդ Սրբութեան, որ ներկայիս բացվել են մի քանի որբանոցներ քաղաքումս: 1) Եղբայրական օգնութեան Յանձնաժողովը և Երիտասարդական միութիւնը պահում են մի որբանոց, որտեղ կան այժմ 28 որբ տղայք և աղջիկ, 2) Թիֆլիսի Կենդրոնական Կոմիտէն բացել է մի որբանոց, որտեղ կան 26 որբ երեխաներ երկու սեռի, 3) Ալեքսանդրապոլի Յանձնաժողովը ունի նաև մի ուրիշ որբանոց, որտեղ կան 66 որբ երեխաներ երկու սեռի:

Շուտով Բարեգործական ընկերութիւնն էլ իւր որբանոցն է բաց անելու: Բացի այդ Եղբայրական օգնութեան կոմիտէի անդամ պ. Յովսէփ Միրզոյանն էլ իր միջոցներով նոր բացել է որբերի համար արհեստագիտական դպրոց, որտեղ երեխաները առայժմ աթոռի երեսներ և գուլպաներ են գործում:

Սոյն որբանոցների կեանքը չի կարելի շատ կանոնաւոր

համարել, որովհետև հագուստեղէնի և այլ անհրաժեշտ իրերի պակասութիւն է զգացում, քանի որ Եղբայրական օգնութեան միջոցները շատ սուղ են, օրինակ շատ որք երեխաներ երկու ձեռք սպիտակեղէն չունեն, ինչպէս իմ չորս օր առաջ այցելութիւնս ապացուցեց: Այնուամենայնիւ այնտեղ երեխաներն իրենց քաւական միսիթարուած են:

Ձեկուցանելով վերոգրեալի մասին, Վեհափառ Տէր, ամենախոնարհաբար խնդրում եմ քարեհաճել կարգադրել, որ որբերի օգտին որոշ գումար բաց թողնի Կենտրոնական կոմիտէի միջոցներից:

Մատչելով ի համբոյր Օծեալ Աջոյն

Ձերդ Վեհափառութեան

խոնարհ որդի և ծառայ Արտակ վարդապետ

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1311, ք. 1: Բնագիր: Չնագիր:

N 17

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՎՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ**

20 հունիսի 1916 թ.

Ալեքսանդրապոլ

Վեհափառ Տէր,

Աղէքսանդրապոլի Եղբայրական օգնութեան կոմիտէն պարտք է համարում ամենախոնարհաբար յայտնել Ձերդ Սուրբ Օծութեան, որ ներկայիս Աղէքսանդրապոլի վիճակում և քաղաքում ապրում են 4739 տղամարդ, 6122 կին և 9221 երեխայ գաղթականներ, ընդամենայն 19799 հոգի: Նոյն Եղբայրական օգնութեան կոմիտէն 1914 թուի նոյեմբերի 14-ից մինչև 1915 թուի նոյեմբերի 1-ը, մի տարուայ ընթացքում, մուտք է ունեցել 303915 թուրքի 01 կոպ[էկ] և ելք՝ նոյն ժամանակաշրջանում 286908 ռ[ուբլի] 48 կոպ[էկ], մնացել է գանձարարնում կանխիկ դրամ 17006 թուրքի 54 կոպ[էկ], որն

անցել է նորընտիր կոմիտեի ձեռքը:

Երկրորդ տարեշրջանի՝ 1915 թուի նոյեմբերի մեկից մինչև ամսոյս 18-ը կոմիտեն մուտք ունեցել է 741, 049 ռ[ուբլի] 67 կոպ[եկ], որ մնացորդ 17006 ռ[ուբլի] 54 կոպ[եկի] հետ կը լինի 758, 056 ռ[ուբլի] 21 կոպ[եկ], իսկ ելք եղել է 657059 ռ[ուբլի] 02 կոպ[եկ]: Ներկայիս գանձարանում կայ 100997 ռ[ուբլի] 19 կոպ[եկ]:

Մատչելով ի համբոյր Օծեալ Աջոյն
Ձերդ Վեհափառութեան խոնարհ ծառայ և որդի
Նախագահ Ալէքսանդրապոլի
Եղբայրական օգնութեան՝ Արտակ վարդապետ
Կոմիտեի անդամ – քարտուղար՝ Պետրոս Մոծոռեանց

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1306, ք. 10: Բնագիր: Ձեռագիր:

N 18

**ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԳԵՎՈՐԳ Ե
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԵՂԵԱՅՐԱԿԱՆ
ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ
ԴՊՐՈՅՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

22 հունիսի 1916 թ.
Ալէքսանդրապոլ

Վեհափառ Տէր,

Ռուս-տաճկական պատերազմի սկսուելուց յետոյ Աղէքսանդրապոլի գաւառն էր, որ իբրև սահմանային գաւառ, պատասպարան տուեց հայ գաղթականութեան: Եւ զուգէ համեմատական չափով ոչ մի գաւառ այնքան մեծ գաղթականութիւն իւր մեջ ընդունած և խնամած չլինի, քան Աղէքսանդրապոլը: Գաղթականներին ընդունելու և խնամելու գործը, թէ քաղաքում և թէ գաւառում կանոնաւոր հիմքերի վրայ դնելուց յետոյ Եղբայրական օգնութեան Յանձնաժողովը տեսաւ, որ ահագին թուով դպրոցական հասակ ունեցող գաղթական երեխա-ներ կան, որոնց փողոցում թողնել չէր կարելի, այլ պէտք էր

անպատճառ դպրոց ընդունել:

Դեռևս 1915 թուի ամառը Եղբայրական օգնության Յանձնաժողովի որոշմամբ, պ. Յովսեփ Միրզոյեանը ամառային դպրոց բաց արաւ գաղթական երեխաների համար, ուր ձրիապէս դասաւանդում էին Արդութեան դպրոցաւարտ օրինորդները: Իսկ 1915 թուի սեպտեմբերից այդ ամառային դպրոցը վերածուեց իսկական դպրոցի և այսպիսով «Եղբայրական օգնության» յանձնաժողովը բացեց յատուկ դպրոց փախստական երեխաների համար:

Վարձուեց նոր շէնք դպրոցի համար, գնեցին և ներստացեցին դասական պիտոյքներ: Հրաւիրեցին նոր ուսուցիչներ ռուսերէն լեզուի և յոյն երեխաների համար: Եւ այսպիսով սեպտեմբերին դպրոցը բացուեց երեքամեայ դասընթացով և ուներ 8 բաժանմունք, որոնցից 6-ը նախակրթական բաժանմունք էր, որից մէկը յոյն երեխաների համար, մէկը ԲԲաժանմունք և մէկը երրորդ բաժանմունք: Աշակերտ-աշակերտուհիների թիւն հասնում էր 350 հոգու, որից 34 հոգի յոյն էին, իսկ մնացածը հայ գաղթական երեխաներ:

Բայց շուտով կարիք զգացուեց նախապատրաստական բաժանմունքների թիւը աւելացնել մէկով, բանալ մէկ չորրորդ բաժանմունք և յոյն երեխաների համար երկրորդ բաժանմունք, որով ընդամենը եղաւ 11 բաժանմունք, որտեղ սովորում էին 488 աշակերտ-աշակերտուհիներ, որոնցից 163-ը աղջիկ, իսկ 285-ը՝ տղայ: Սրանցից 326-ը բոլորովին անգրագէտ էին, իսկ 122-ը՝ գրագէտ:

Ըստ դասնութեան երեխաները բաժանում էին հետևեալ կարգով- հայեր - 393 հոգի, յոյներ- 54 հոգի և ռուս - 1 հոգի:

Գաղթական երեխաներից 290-ը գաղթել էին ռուսական սահմանից(Արդահան, Օլթի, Մարիդամիշ)- 283, Բաթում-6 և Մինսկի նահանգից 1(ռուս), Տաճկաստանից գաղթել էին 158 հոգի. (Մանագկերտի շրջան 22, Էրզրումի շրջան 14, Բիթլիսի շրջան 22, Բասենի -20, Վանի-18, Բուլանիսի 62- և Պարսկաստանից 2):

Դպրոցում որք երեխաներ եղել են 129 հոգի, որոնցից ռու-

սահպատակ հորից և մօրից գուրկ երեխաներ 12 հոգի, միայն հորից, կամ միայն մօրից գուրկ երեխաներ – 20 հոգի: Տաճկահպատակ՝ հորից և մօրից գուրկ 29 հոգի, միայն հորից կամ միայն մօրից գուրկ- 68 հոգի:

Դպրոցում սովորող երեխաներն ունեցել են 8-15 տարեկան հասակ: Աշակերտները դասարաններում տեղաւորուած են եղել հետևյալ եղանակով.

	Տղայ	Աղջիկ
Բաժանմունք Ա	22	29
Բաժանմունք Բ	17	27
Բաժանմունք Գ	32	13
Բաժանմունք Դ	22	19
Բաժանմունք Ե	36	15
Բաժանմունք Չ	39	16
Բ Բաժանմունք	41	11
Գ Բաժանմունք	25	10
Դ Բաժանմունք	14	5
Յունաց		
1-ին Բաժանմունք	20	18
2-րդ Բաժանմունք	17	-

Տարուայ վերջը չորրորդ բաժանմունքն աւարտեցին 19 հոգի, որոնցից 5-ը՝ աղջիկ: Դպրոցում դասերը սկսուել են առաւօտեան ժամի 8, 5-ին և տևել են մինչև ճաշից յետոյ ժամը 5-ին: Դասարանների պակաս լինելու պատճառով՝ դասատուութիւնը եղել է երեք անգամ: Առաջինը 8, 5 ից մինչև 11,5, որից յետոյ երեխաներն արձակում էին տուն, երկրորդը 11,5-ից մինչև 2,5-ը և երրորդը 2,5-ից մինչև 5-ը: Աշակերտների ամեն խմբին տրուել է ամեն օր թէյ, ճաշ և պանիր և Ձատկից յետոյ նաև մի մի ձու: Վերոյիշեալ հոգսը և ծախսը վերցրել է իւր վերայ քաղաքիս Ուսուցչական միութիւնը, Հայոց Բարեգործական ընկերութեան⁴⁰ օժանդակութեամբ:

Ուսուցչական կազմը բաղկացած է եղել 12 հոգուց, որից

մէկը յոյն վարժուհի: Մանկավարժական ամբողջ կազմը ամենայն եռանդով և սիրով կատարել է իւր պարտականութիւնը հանդէպ գաղթական երեխաների: Բացի այդ քարտուղարի, վերակացուի, գրադարանավարի, դաստիարակչուհու պաշտօնները ձրիապէս կատարել են սիրով բոլոր դասատուները, որոնք երկու կամ երեք շաբաթը մէկ անգամ երեխաներին բաղնիք են տարել և առհասարակ հսկել են նրանց մաքրութեան վերայ: Շատ անգամ շրջել են երեխաների կացարանները և հարկատր օգնութիւնը հասցրել:

Երեխաների զարգացման հորիզոնը աւելի լայնացնելու համար մանկավարժական կազմը կազմակերպել է զբոսանքներ, մանկական ներկայացումներ և հանդէսներ Եղբայրական օգնութեան Յանձնաժողովի անդամների օգնութեամբ:

Դպրոցն ունեցել է փոքրիկ գրադարան, որի գրքերը 150 կտոր, Արդութեան Օրիորդաց դպրոցի աշակերտուհիներն են նւիրել:

Ուսուցչական կազմը ունեցել է մանկավարժական նիստեր 10 անգամ, տնտեսականը (բաժանելու համար) 15 անգամ և ծնողական ժողովներ՝ 5 անգամ:

Նոյն ուսուցչական կազմը Չատկից յետոյ, դպրոցի որբերի համար բացել է յատուկ որբանոց, որտեղ այս րոպէիս կան 8 աղջիկ և 21 տղայ որբեր:

Այս որբանոցում ուսուցչական կազմն աշխատել է ձրիապէս: Նոյն ուսուցչական կազմի ջանքերով բացուել է արհեստանոց որբերի համար, որտեղ երեխաները սովորում էին երես և գուլպայ գործել, չուստեր կարել և ձեռագործ: Արհեստանոցը դեռ նոր է և պէտք է բարձրանայ և բացուին նորանոր ճիւղեր:

Վեհափառ Տէր, Աղէքսանդրապոլի Եղբայրական օգնութեան Յանձնաժողովի համար իր գործունէութեան մէջ պարծանքի մեծ առարկայ է եղել փախստական երեխաների դպրոցը, ուստի և ամեն ջանք է գործ դրել բարձրացնել և հնարաւորութիւն տալ, որ շատ թուով երեխաներ այնտեղ իրանց գիտութեան ծախաւը յագեցնեն: Եթէ յարմար բնակարան լի-

ներ, Յանձնաժողովը առաել շատ թուով աշակերտ կրնդուներ և աւելի կրնդարձակէր դպրոցը:

Վեհափառ Տէր, Եղբայրական օգնութեան Յանձնաժողովը այսքան մանրամասնօրէն և ամենախոնարհաբար զեկուցանում է Ձերդ Սրբութեանը, որովհետև գուցէ և ոչ մի քաղաքում առանձին այսպիսի ուշադրութիւն չէ դարձուած փախստական երեխաների վերայ, որքան այստեղ:

Այս է պատճառը, որ քաղաքս այցելութեան եկող բարձրաստիճան անձանց առանձին պարծանքով է ցոյց տուել դպրոցը, որտեղ նրանք դասերին ներկայ լինելուց յետոյ, առանձին հաճոյքով և շնորհակալութեամբ են հեռացել:

Տարուայ ընթացքում դպրոց յաճախել են քաղաքիս բարձրապատիւ յաջորդ Տէր Արտակ վարդապետը մի քանի անգամ, Գերապատիւ Այվաւեան Սահակ Սրբազանը և Տէր Զաւէն վարդապետը, Պետական Դումայի անդամ պ. Պապաջանեանը: Գեներալ Թամամշեանի կողմից գաղթական գործերի լիազօր պ. Ս. Թառոյեանը, Բագուի միջազգային կօմիտէի ներկայացուցիչ պ. Մնաց Պետրոսեանը, Երևանի նահանգի ժողովրդական դպրոցների վերատեսուչ Մալինին, Էջմիածնի Եղբայրական օգնութեան Յանձնաժողովի գործերով եկած Բարձրապատիւ Տէր Իսահակ վարդապետ և այլն և այլն:

Վերոգրեալի մասին Ալեքսանդրապոլի Եղբայրական օգնութեան Յանձնաժողովը ամենախոնարհաբար զեկուցանում է Ձերդ Սրբութեանն ի գիտութիւն:

Մատչելով ի համբոյր Օծեալ Աջոյն

Ձերդ Վեհափառութեան

խոնարհ որդի և ծառայ Արտակ Վարդապետ

*Նախագահ Ալեքսանդրապոլի Եղբայրական օգնութեան
Անդամ քարտուղար՝ Պետրոս Մոճոռեանց*

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1306, ք. 8-9: Բնագիր ձեռագիր:

N 19

**ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ⁴¹ ՆԱԽԱԳԱՀ
ՀԱԿՈՒԹՅԱՆ ԽԱՉՎԱՆՔՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՍՍՈՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ**

30 հունիսի 1916 թ.

Ալեքսանդրապոլ

Յարգելի Սամսոն Ստեփանիչ, ⁴²

Գրաբերս այն վաճառականն է, որից վերցրել ենք որբանոցների համար հարկատու կտորներ սպիտակեղենի, վերնագգեստի, սեղանատան, ձմեռուայ շորերի, թաշկինակների և այլնի համար: Այժմ այդ մարդը՝ Սկրտիչ Ամիրջանեանցը, գնում է իր կրպակի համար ապրանք վերցնելու և փողի կարիք ունի, ուստի խնդրում եմ տալ 6000 թուրքի, մնացածը կը վճարենք տեղումս մանրամասն հաշիւ ստանալուց յետոյ: Ես գրել էի Ձեզ միւս կարիքների մասին առանձնապէս ուշադրութեան արժանի են փողը, պանիրը, հացը, բրինձը և փայտը: Սրանց մասին նախօրոք պէտք է հոգալ ձմեռը դժուարութիւնների առաջ կանգ չառնելու համար:

Խնդրում եմ ուղարկել 140 որբերի և 98 որբերի, որ Ախալքալաք ուղարկեցինք, հինգ օրուայ ծախսի գումարները:

Յարգանքներով՝ Յակոբ Խաչվանքեան

ՀԱԱ, ֆ.28, ց.1, գ., թ. 428, թ. 54: Բնագիր: Ձեռագիր:

N 20

**ՈՐԲԱՆՈՅՆԵՐԻ ՎԵՐԱՀՄԿԻՉ ԳՈՒՐԳԵՆ ԷԴԻԼՅԱՆԻ
ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՃՅՈՒՂԻ N 1 ՈՐԲԱՆՈՅԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

2 հուլիսի 1916 թ.

Ալեքսանդրապոլ

Որբանոցը բացուել է 1916 թուի յունիսի 8-ին: Որբանոցը Բաշգիւղի որբանոցի երեխաներից և Սասունից եկած որբերից է կազմուած: Վերահսկողութիւնը պատկանում է Բարեգործական ընկերութեան տեղի ճիւղին:

Շէնքը. կազմուած է մօտ 12 սենեակից, որոնցից այժմ որբանոցի համար ազատուած են 6 սենեակ: Սենեակները ընդհանրապէս մանր են. դարձած են դէպի հիւսիս և արևի երես չեն տեսնում: Որբանոցի պատճառով սպիտակեցրել են միայն պատերը:

Սնունդ. Առաւօտեան՝ թէյ, հաց և պանիր, ճաշին մսեղէն, շաքարք երկու երեք անգամ, պասուց կերակուրներ, թանապուր, կաթով ճաշ, փլաւ և այլն: Երկոյեան՝ թէյ, պանիր և հաց:

Շորեղէն. Վերնաշապիկ մէկ, գոգնոց մէկ, սաւաններ երկու - երկու, բոլորը չունեն, յատուկ լուացարար չկայ, չուտեր չունեն, ինչպէս և գուլպաներ և գլխարկներ: Շատ անհրաժեշտ բաներ պակաս են: Այս խնդիրն աւելի լաւ է լուսաբանում դիտողութիւնների այս թերթը, որը տուել է ինձ իմ առաջարկով որբանոցի կառավարիչ պ. Մանդակունին: Մինչև օրս երեխաները բաղնիք չեն գնացել, երեխաների գլուխները բաւականին կեղտոտ գտայ: Ճաշելիս երեխաների կէսը ոտքի կանգնած էր ճաշում, որովհետև այս մի ամսուայ ընթացքում նստարաններ չեն պատուիրած:

Չուտեր, գլխարկներ և գուլպաներ չունենալու պատճառով երեխաներին զբոսանքի չեն տանում, այնպէս որ երեխաները մօտ մի ամիս է բանտարկուած են իրենց սենեակներում և ոչ հրապուրիչ բաւականին կեղտոտ բակում:

Այս որբանոցից հիւանդանոցում կան մօտ 5 հոգի, որբանոցը բժիշկ չունի, մինչև այժմ այցելել է մի ֆելդշեր⁴³, մի անգամ երեխաները բժշկական ընդհանուր քննութեան չեն ենթարկուել ընդունելութեան ժամանակ:

Դպրոցական պարապմունքներ չկան, որովհետև ամառ-

ւայ ամսուան է բացուել որբանոցը: Դաստիարակչական գործը նոյնպէս կանոնաւոր չի տարւում: Դրան նպաստել է նաև այն հանգամանքը, որ կառավարիչն ու իր կիներ մինչև օրս չեն համարուել պաշտօնեաներ: Բարեգործական ընկերութեան և երկու որբանոցների միակ կառավարիչ Յակովբ քահ. Խաչվանքեանը, նրանց չի համարել պաշտօնեաներ և ժամանակաւոր պաշտօնակատար է համարել հէնց սկզբի օրից: Գործն այս վիճակի մէջ էր, որ կառավարիչն ու իր կիներ մտադրուած են եղել հրաժարուելու, որովհետև իրենք իսկական իրավագուրկ վիճակի մէջ են եղել: Համոզեցի տէր հօրը, որ նրանց համարի պաշտօնեաներ, նրանց հրահանգներ տայ և վերահսկի նրանց գործունէութիւնը: Տէր հայրը համաձայնեց, այնպէս որ այդ որբանոցի գործը հաւանօրեն այսուհետև աւելի լաւ հիմքերի վրայ կը դրուի: Թում է ինձ, որ եթէ կառավարչի և իր կնոջ վրայ կանոնաւոր վերահսկողութիւն լինի, նրանք կարող կը լինեն որբանոցը աւելի լաւ հիմքերի վրայ դնել:

Կառավարիչն ու իր կիներ Բաշ գիւղի որբանոցի կառավարիչն են եղել: Կցում են Բաշ գիւղի որբանոցի մասին պ. Մանդակունու գեկուցումը:

Այս որբանոցը դեռ կազմակերպական շրջանի մէջ է, սակայն եղածը պէտք է համարել անբաւարար, որովհետև մէկ ամսուայ ընթացքում գործը կարելի էր անպայման լաւ հիմքերի վրայ դնել:

Ստատիստիկական տեղեկութիւններ: Շէնքի գիւղը դեռ որոշ չի: Տէր հայրը երեխաներին տեղաւորել է այստեղ, առանց նախօրոք տիրոջ հետ գնի մասին խօսելու: Նոյնիսկ այդ խնդիրը պարզ չէր ներկայում, մի ամսից յետոյ: Նրա տէրը ինձ հետ խօսելուց ասաց, որ ամսեկան 300 բուբլի է պահանջելու, մի տուն, որի ամսեկան մաքսիմում գիւղը կարող էր արժենալ ոչ աւելի քան 100 բուբլի, տէր հայրը ինձ ասաց, որ 100 բուբլուց աւելի չի վճարելու այդ տանը, քայց և այնպէս մինչև օրս անյայտ էր, թէ ինչ է վճարելու այդ տանը: Տունն ունի 12 սենեակ (փոքրիկ), որոնցից այժմ տրամադրել է

որբանոցին 6 սենեակը: Բացուելիս եղել են 22 հոգի Բաշ գիտլի որբերը: Այժմ 45 հոգի են, 22 տղայ, 16 աղջիկ, 7 տղայ գրագետ, մնացածները՝ անգրագետ: 1-3 տարեկան երեխայ մի հոգի աղջիկ, 4-6 տարեկան՝ 3 տղայ և 5 աղջիկ, 7-10 տարեկան՝ 15 տղայ, 6 աղջիկ, 11 տարեկան և ատելի՝ 11 տղայ և 4 աղջիկ:

Կառավարչուհի Ջարուհի Մանդակունի, քաղաքային դպրոց, ռոճիկ՝ 35 բուրլի, (ռուսահայ) , Տիգրան Մանդակունի, կառավարիչ, Երանեան դպրոց, 35 բուրլի ամսեկան (տաճկահայ):

Մայրապետ-յայտնի չէ ռոճիկը (տաճկահայ),
Խոհարար, յայտնի չէ ռոճիկը (տաճկահայ):
Հաշիւները կցուած են միւս որբանոցի զեկուցմանը:
Գ. Էղիլեան⁴⁴

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 587, ք.116-117: Բնագիր: Ձեռագիր:

N 21

ՈՐԲԱՆՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՀՄԿԻՉ ԳՈՒՐԳԵՆ ԷԴԻԼՅԱՆԻ ՁԵԿՈՒՅՈՒՄԸ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՈՐԲԱՆՈՑԻ ՄԱՍԻՆ

3 հուլիսի 1916 թ.
Ալեքսանդրապոլ

Կենդրոնական Կոմիտէի որբանոցը բացուել է 1916 թուի ապրիլի մէկին. Պահուում է Կենդրոնական Կոմիտէի միջոցով ստացուող պետական նպաստներով: Վերահսկողութիւնը պատկանում է Ալեքսանդրապոլի գաղթականական դպրոցի ուսուցչական խմբին: Գործի ստեղծողն ու ղեկավարն է պ. Յովսէփ Միրզոյեանը, գաղթականական դպրոցի տեսուչը:

Յիշուած խմբից օրական երկու հոգի հերթապահութիւն են անում և հասարակական կերպով աշխատում են գործի յաջողութեան համար: Ալեքսանդրապոլի որբանոցներից միակն

է, որը ունի իր շուրջը իրար հետ միացած և իրար գործ լրացնող գործողների մի մի խումբ:

Խմբի անդամները.

1) Յովսէփ Միրզոյեան- Բարեգործական որբանոցի կառավարիչ և հերթապահ

2) օր[իորդ] Միրամարգ Թադէոսեան- Արդութեան դպրոցի հաշուապահ և հերթապահ

3) օր[իորդ] Չաբել Բաղրամեան- Արդութեան դպրոցի ճերմակեղէնի հերթապահ

4) օր[իորդ] Արաքսի Յակոբեան- Արդութեան դպրոցի ծախսարար և հերթապահ

5) օր[իորդ] Հռիփսիմէ Տէր-Ներսիսեան- Արդութեան դպրոցի պահեստապետ և հերթապահ

6) օր[իորդ] Սաթենիկ Չարչօղեան- Արդութեան դպրոցի հերթապահ

7) օր[իորդ] Անահիտ Մինասեան- Արդութեան դպրոցի գրադարանավար և հերթապահ

8) օր[իորդ] Աստղիկ Մանուչարեան- Երևանի Գայանեան դպրոցի հերթապահ

9) օր[իորդ] Վարդուհի Ադամեան- Գիմնազիայի 8 դաս[արան], հերթապահ

10) տիկ[ին] Վարդուհի Էյրամջեան- Գիմնազիայի 8 դաս[արան], կար ու ձև

11) Եղիաքէթ Տէր-Յակոբեան- Արդութեան դպրոցի քարտուղար, հերթապահ

Մրանք բոլորն էլ ձրի են աշխատում, կարին, ձևին, գործելուն փող չի տրուում, օրիորդներն իրենք են անում:

Ձրի է աշխատում նաև կառավարիչ պ. Յ. Միրզոյեանը: Բոլորն էլ իրար հետ շատ սիրով են և ուշադիր դէպի երեխաները:

Այս որբանոցը մի ուրիշ հոգաբարձութիւն չունի, պատասխանատու է Կենդրոնական Կոմիտէի առաջ:

Շէնքը նոր է և յարմար, ունի չորս սենեակ, բակը շատ փոքր է, խաղալու համար միանգամայն անյարմար, երեխա-

ները խաղում են շենքին շատ մօտ գտնուած գաղթականական դպրոցի բակում, նրա տակն է գտնուում մառանը և խոհանոցը: Շենքը պահում է շատ մաքուր:

Սնունդ. Առաւօտեան ժամի 7 անց կէսին թէյ, հաց ու պանիր, երբեմն ձու: Մտեղէն շաքաթական երեք անգամ, կանաչ լոբի, փլաւ, չիր, կորկոտ⁴⁵, խաշիլ, քանապուր և այլն: Երեկոյեան՝ թէյ, հաց, պանիր կամ ձու:

Առողջապահական վիճակը- Շորէր՝ սպիտակեղէն 6 հատ, սաւան երեք, բարձ երկու երեք, թաշկինակ՝ 5, վերնաշապիկ՝ 3, աղջիկներին՝ չորս, գուլպաներ չորս գոյգ, երկու տեսակ գլխարկ: Շաքաթը մի անգամ փոխում են սպիտակեղէնը և սաւանները, երեսրբիչը՝ շաքաթ երկու անգամ, երկու շաքաթ մի անգամ բաղանիք են տանում: Զննելուց առաջ ոտները լաւում են, ատամնափոշի և չուստեր ունեն:

Հիւանդներ քիչ կան, հիւանդանոցում կայ մի հոգի, գլխի վերքեր ունեն երկու հոգի, մէկ հոգի օպերացիայի է ենթարկուել, վերնաշապիկները, գլուխները, մարմինները, սպիտակեղէնները, սենեակները գտայ շատ մաքուր վիճակում: Ներքնակներն ու բարձերը խոտային, վերմակները՝ բրդից:

Պարապմունքներ օրուայ ընթացքում- Առաւօտեան ժամի 7-ին մարմնամարզութիւն, որից յետոյ մօտ 2 ժամ ազատ պարապմունքներ, հերթապահների հսկողութեամբ: 10-12 ժամ պարապում են արհեստանոցում, ուր գործում են արձողների նստատեղիներ, գուլպաներ, չուստեր են կարկատում: Ճաշում են, որին յաջորդում է ընթերցանութիւնը, համարեայ ամէն օր: Ժամը 6-ին գնում են զրոսնելու, որին կցում է յաճախ իմացական, կրթական նպատակներ: Ընթրիքից յետոյ տեղի են ունենում պարեր, գրական երաժշտական փոքրիկ հանդէսներ, որից յետոյ քնում են ժամը 9-ին:

Գնումներ - Հերթապահը կարող է իրեն հայեցողութեամբ մօտ երեք րոպէլու ծախս անել, ծախսարարը՝ մօտ 80 րոպէլու, իսկ մեծ ծախսերի մասին ժողով է լինելու: Բոլոր ծախսերի համար ստանում են փաստաթղթեր: Հաշիւը պահում են կանոնաւոր: Որբանոցն ունի ինւենտարի գիրք, հաշիւների մա-

տեան, շաբաթական ճաշացուցակ, անուանացուցակ, երեխաների և հերթապահների, պահեստի հաշիւ, ամէն մի երեխայի հասանելիք մթերքի նորման, գրադարան էլ ունի:

Աչքի է ընկնում այս որբանոցի արհեստանոցը: Երեխաները հիւսում են մեծ վարպետութեամբ աթոռի նստատեղիներ, քաղաքացիները պատուերներ են ուղարկում, կարկատում են իրենց չուստերը, գուլպաներ են գործում նաև տղաները: Կառավարիչը մտադիր է աւելի ուժեղացնել արհեստները և իր մօտ ընդունել նաև միւս որբանոցից երեխաներ:

Այս որբանոցը գտնուում է շատ լաւ վիճակի մէջ ոչ միայն արտաքին հանգամանքներն են ուշադրութեան առնում, այլև դաստիարակչական հոգսը, այս տեսակէտից անփոխարինելի է պ. Յ. Միրզոյեանը, որն անբողջովին նուիրուած է երեխաներին, գիշեր-ցերեկ նրանց հետ է անցկացնում, նրանց կրթում: Նա նոյն ոգով վարակել է նաև իր խմբին, որը նոյնպէս գովելի եռանդ է ցոյց տալիս:

Այս որբանոցն ունի միայն մի վարձովի ծառայող (խոհարար), որը ստանում է ամսական 10 բութի:

Ստատիստիկական տեղեկութիւններ - տան վարձը 300 բութի, չորս սենեակ, վաննա չունի, բակը փոքր է, բացուել է 15 երեխայ,⁴⁶ այժմ՝ 29. 9 աղջիկ, 20 տղայ, գրագէտ են 18 տղայ, 6 աղջիկ: 1-6 տարեկան երեխայ չկայ, 7-10 տարեկան 9 տղայ, 6 աղջիկ, 11 տարեկան՝ 11 տղայ և 3 աղջիկ: Դպրոց դեռ չունի: Նոր որբանոց է: Երեխաները հաւաքուած են մեծ մասամբ գաղթական դպրոցի սաներից:

Կենդրոնական Կոմիտէի Բ. որբանոց

Նոյն խմբի և պ. Յ. Միրզոյեանի վերահսկողութեամբ բացուել է մի նոր որբանոց ևս, որի շէնքը վարձուում է արդէն, մօտ 70 փայտէ մահճակալներ են շինուած, նաև սեղաններ, նստարաններ, յուացարաններ և այլն:

Շէնքն ունի 6 սենեակ, մօտ 70-80 երեխայի համար, ճաշարանը ջոկ է, ունի բաւական մեծ բակ, մէջը շէնքերից անկախ կան էլի չորս սենեակներ, ուր տեղաւորուած են արհես-

տանոցները: Այս բոլոր նախապատրաստությունները Յ. Միր-
զոյեանը պարտքով է արել: Որքեր դեռ չըկան:

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 587, ք. 122-123: Բնագիր ձեռագիր:

N 22

**ՈՐԲԱՆՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՀՄԿԻՉ ԳՈՒՐԳԵՆ ԷԴԻԼՅԱՆԻ
ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՂԹԱ-
ԿԱՆԱԿԱՆ ՈՐԲԱՆՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

4 հուլիսի 1916 թ.

Ալեքսանդրապոլ

Առաջին որբանոցը բացել է Ալեքսանդրապոլում «Երիտա-
սարդական միությունը»: Եղբայրական օգնությունը հենց սկ-
զբից ունեցել է որբախնամ սեկցիա, սակայն այդ սեկցիան մի
առանձին գործունեություն ցոյց չի տուել: Բարեգործական
ընկերութեան ճիւղը մտադրուել է հոկտեմբեր ամսին բանալու
որբանոց: Սակայն այդ հարցը առկախ է մնացել: 1916 թ.
փետրուար ամսին Ալեքսանդրապոլում գործող մի քանի ըն-
կերություններ միանում են և կազմում «Միացյալ ընկերու-
թիւնը», որը պէտք է ձեռքն առնէր որբանոցներ բանալու և
պահպանելու հոգսը: Այդ նոր կազմակերպութեանը մասնակ-
ցել և նրա համար մի նոր վարչություն են ընտրել «Եղբայ-
րական օգնությունը», «Բարեգործական ընկերութեան ճիւղը»,
«Երիտասարդական միությունը» և «Օրիորդների ընկերությու-
նը»: Այդ նոր միացեալ ընկերութեան ձեռքն է անցնում երի-
տասարդութեան որբանոցը և մի քանի ամիս շարունակ խոր-
հրդակցում են մի նոր որբանոց բանալու մասին: Ահա հենց
այդ ժամանակ, ապրիլի վերջին նոյն վարչութեան անդամ պ.
Յովսէփ Միրզոյեանը գալիս է Թիֆլիս և Կենդրոնական Կո-
միտէից իրաւունք խնդրում նրա ծախքերով Ալեքսանդրա-
պոլում մի նոր որբանոց բանալու մասին: Այդ իրաւունքը
նրան տրուում է: Յունիս ամսին տեղիս Բարեգործական

ընկերութեան ճիւղը բանում է անկախ կերպով էլի երկու որ-
բանոց: Այդ բոլորը տեղի է ունենում ընկերութիւնների ընդհա-
նուր միութիւնը հաստատուելուց յետոյ: Այս հանգամանքը
որոշ դժգոհութիւն է առաջ բերում մեր գործողների մէջ:
Նրանք ասում են, թէ ինչու ընդհանուր միութիւնը հաստա-
տուելուց յետոյ պէտք է պ. Միրզոյեանը և Բարեգործական
ընկերութեան ճիւղի վարչութիւնը նոր որբանոցներ բանալու
մասին մտածէր: Այդ գործը ընդհանուր ուժերով պէտք է
կազմակերպուէր. մանասանդ, որ տեղիս գործող ուժերը քիչ
են և այսպիսի պառակտումը միանգամայն վնասակար:

Հարկատու էր վերջ տալ այս տհաճ յարաբերութիւններին
և մի քանի գործնական հարցեր լուսաբանելը խիստ անհրա-
ժեշտ էր: Այս նպատակով մի ընդհանուր ժողով հրաւիրեցի,
բայց նախքան այդ խիստ զրոյց էի ունեցել Բարեգործական
ընկերութեան նախագահ Յակոբ քահ[անա] Խաչվանքեանի,
Յ. Միրզոյեանի և Միացեալ ընկերութեան փոխնախագահ պ.
Ս. Խաչատրեանի հետ և առանձին-առանձին նրանց որոշ
գիջման բերել:

Ընդհանուր ժողովի ժամանակ նախ մի քանի բացառ-
ութիւններ եղան, որոնք պէտք է բաժանման հանգամանք-
ները պարզէին, որից յետոյ ժողովն անցաւ գործնական առա-
ջարկների: Ժողովը միանգամայն կարևոր է համարում աշ-
խատակցութիւնը: Չայների մեծամասնութեամբ որոշուում է
Ալէքսանդրապոլում եղող բոլոր հինգ որբանոցները համարել
Բարեգործական ընկերության ճիւղի վերահսկողութեանը
ենթակայ որբանոցներ և դրանց համար մի վարչութիւն ընտ-
րել: Որոշուում է այս խնդրի մասին խօսակցութիւն ունենալ
միւս ընկերութիւնների և Եղբայրական օգնութեան վարչու-
թիւնների մէջ և յետոյ հարցը գործնականորէն լուծել:

Եթէ այս ձևը չանցնի, առաջարկուում է պահպանել որբա-
նոցների ներկայ անկախ կազմակերպութեան ձևը և այդ
վարչութիւններից մի նոր ընդհանուր ժողով կամ վարչութիւն
ընտրել, որը վարի որբանոցների ընդհանուր հարցերը, որոշի
ընդհանուր ուղղութեան հարցերը: Այդ ժողովը ոչ թէ խոր-

հորդակցական այլ վճռական ձայն է ունենալու:

Ժողովը ցանկութիւն յայտնեց ունենալու Ալեքսանդրասպոյի որբանոցների համար ընդհանուր դպրոց, ցանկալի համարուեց նաև Տաճկահայաստանի պայմաններին համապատասխան արհեստանոցների բացումը, բայց դրան պէտք է կցել նաև հողագործութիւնը: Ժողովը ցանկալի համարեց Թիֆլիսում գումարելու մի խորհրդակցութիւն, որը քննութեան է առնելու որբանոցների վերակազմութեան հարցը և պարզ որոշելու որբանոցների նպատակը:

Ես ևս համամիտ եմ այդ ցանկութիւններին: Կարևոր եմ համարում որբանոցները քննելուց յետոյ նորից անցնել Ալեքսանդրասպոյ և նոր թափով աշխատելու այս հարցերի գործնական լուծման համար:

Պէտք է յայտնեմ կոմիտէիդ վարչութեանը նաև այն, որ Ալեքսանդրասպոյում այժմ կան 3. Միրզոյեանի ձեռքով և տիկնանց կոմիտէի նախաձեռնութեամբ բացուած որբանոցներ, որոնք դեռ որբեր չունեն, ցանկալի է շուտով կարգադրութիւն անել և շուտով նրանց որբեր ուղարկել:

Խորհրդակցութիւններ կանանց կոմիտէի վարչութեան հետ

Տիկնանց կոմիտէն կազմուած է տեղիս սոյիդ և դիրքով տիկիներէից: Նրանք դժգոհում էին, որ իրենց գործի չեն հրաւիրում, երբ ասացի, որ գուցէ իրենց թուլութիւնն այդտեղ դեր է խաղացել, մեծամասնութիւնը համաձայնեց: Այսպէս թէ այնպէս, այս կոմիտէն վարձել է մի բնակարան 30 որբ մեծահասակ աղջիկների համար, բացի այդ որոշել է բոլոր որբանոցի մեծ աղջիկների համար ձեռագործի արհեստանոց բանալ և խնդրում է Կենդրոնական Կոմիտէից նպաստ: Իմ ստացած տպատրութիւնն այն է, որ տիկնանց կոմիտէն կարող է բանալ որբանոց և ղեկավարել արհեստանոցը, այդ պատճառով էլ կարելի է վստահաբար այդ գործերը նրան վստահել:

Որովհետև Ալեքսանդրասպոյի որբանոցը կազմակերպման շրջանի մէջ է, այդ պատճառով էլ կարևոր եմ համարում

երկրորդ անգամ գնալ Ալեքսանդրապոլ, ինչպես յիշեցի վերևում:

Տեսուչ որբանոցների՝ Գ. Էդիլեան

ՀԱԱ, ֆ.28, ց.1, գ.587, ք. 5-7: Բնագիր: Ձեռագիր:

N 23

ՈՐԲԱՆՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՀՄԿԻՉ ԳՈՒՐԳԵՆ ԷԴԻԼՅԱՆԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՃՅՈՒՂԻ N 2 ՈՐԲԱՆՈՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

4 հուլիսի 1916 թ.

Ալեքսանդրապոլ

Այս որբանոցը բացուել է 1916 թ. յունիսի 25-ին: Այս որբանոցի երեխաները երկու շաբաթ շարունակ տեղատրած են եղել գաղթականների ապաստարանների շենքում հակաառողջապահական պայմանների մեջ:

Շենքը: 8 սենեակ, 2 կարիդոր⁴⁷, մի խոհանոց, ճաշարանը մի փոքր մութն էր: Շենքը վերանորոգուել է: Ներկուել են պատերը, յատակները, դռները, լուսամուտները, դրսի դուռը նոր է շինուել: Շինուել է պլիտա, թէյի մեծ աման, կոտրուած ապակիները գոցուել են: Մտադրութիւն կայ բակում նստարաններ շինել, բակի պատը վերանորոգել, բակոնը ապակիներով ծածկել, ձմեռուայ բարիքների համար:

Շենքի վարձն է 700 րուբլի:

Սնունդ: Առաւօտեան ժամի 7-ին թէյ, հաց և պանիր, ճաշածան են շաբաթական երեք անգամ մսէ կերակուրներ, իւղով սուպ անմիս, փլաւ, կանաչ, լոբի, արեւածաղկի իւղով բրնձէ և կարտոֆիլի կերակուր: Երկոյեան՝ թէյ, պանիր և հաց:

Հացը լաւ չէր, դառն էր ու մէջը աւազ:

Հագուստեղէն- Շորեղէնը նոր էր պատրաստում, դեռ պակասութիւն նկատում էր, սպիտակեղէնը փոխում են շա-

բաժը մէկ անգամ, վերնաշապիկները և գոգնոցը շաբաթը երկու անգամ: Անկողնու սպիտակեղէնը՝ շաբաթը մի անգամ: Ներքնակները՝ խոտից, բարձերը՝ խոտից, վերմակները՝ բամբակից, անկողիները նոր էր և լաւ, բաւականին մաքուր: Երեխաների շորերը կարած են բաւականին անճաշակ և անփոյթ, բաղնիք են տանում երկու շաբաթը մէկ անգամ, մարմինները կեղտոտ չգտայ:

Որբանոցը բժիշկ չունի: Հիւանդներին տանում են Քաղաքային միութեան բացած գաղթականական հիւանդանոցը: Գաղթականական ապաստարանից հիւանդանոց են տարուել մինչև որբանոցի բացուելը մօտ 35 հոգի, որոնցից մօտ 10 հոգի պէտք է հիւանդանոցից դուրս գային իմ այցելելուց մի օրից յետոյ:

Հիւանդութիւններ - Քոր, քաչալ, մի քանի հոգի ծաղիկ, ստամոքսի հիւանդութիւն (2 հոգի): Որբանոցում գտնուած երեխաները առողջ են, առողջ եղել են հէնց ընդունելու ժամանակ:

Դպրոցական պարապմունքներ չրկան: Դաստիարակութիւն, հոգացողութիւն չրկայ, կառավարիչ չրկայ, այժմ կայ ժամանակատր մի կառավարչուի, որն այս գործի համար փոքր աղջիկ է, որն աւելի զբաղուած էր իր գործերով:

Որբանոցի երեխաները բացառապէս սասունցի և մշեցիներ են: 1916 թ. յունիսի 10-ին հասել են Ալէքսանդրապոլ, եղել են 114 երեխայ, երկու շաբաթ ապրել են ապաստարանում (գաղթականական):

Սասունից Կովկաս են բերել այս երեխաներին երեք հոգի, որոնցից է Ղազար Տիրոյեանը, որը այժմ որբերի հետ է ապրում: Երեխաներին հաւաքել են Մուշում մայիսի 4-ից սկսած և մայիսի 24-ին ճանապարհ են ընկել դէպի Կովկաս 166 երեխայով, ճանապարհին երկուսը մեռնում են: Երեխաների մի մասը հիւանդութեան պատճառով թողնում են Խնուսում և նրանց տեղը առողջներին են բերում: Մինչև Սարիղամիշ հասնելը երկուսը մեռնում են: Սարիղամիշում 40 երեխայ վերցնում է Մոսկուայի կոմիտէն: Այդ կոմիտէն էր Մուշում

այդքան երեխայ հաւաքել: 8 հոգի էլ մեռնում են Մարիդամիշի հիւանդանոցում: Ալէքսանդրապոլ են հասնում 114 հոգի, որոնցից մէկը մեռնում է, իսկ միսփն էլ ծնողն է վերցնում:

Այս երեխաներից 23 հոգի Բարեգործականի N 1 որբանոցում են այժմ: 62 հոգի թիվ 2 որբանոցում, իսկ մնացածները՝ հիւանդանոցում: Հիւանդանոցի երեխաները պէտք է համարել N 2 որբանոցի երեխաներ: Այնպէս որ թիւ N 2 որբանոցի երեխաները այժմ պէտք է համարել 90 հոգի, վրան աւելացրած նոր ընդունուած 5 հոգին ուղարկուած Մարիդամիշից:

Այս և N 1 որբանոցը ամբողջովին կազմակերպել է Խաչվանքեան քահանայան Բարեգործական ընկերութեան Ալէքսանդրապոլի նախագահը: Բարեգործական ընկերութեան ճիւղն ունի այժմ վարչութեան չորս անդամ, մնացածները հրաժարում են: Այդ չորսն էլ չեն մասնակցում գործերին: Ըստ տէր հօր ասութեան, դրանց մի քանի անգամ ժողովի է հրաւիրել, իսկ նրանք չեն եկել, իր ասելով այդ պատճառով էլ ամբողջ գործը ինքը մենակ է կատարել: Նրա գործունէութեան վրայ հսկող մի երկրորդ անձ գոյութիւն չի ունեցել: Նա է տուն վարձել, վերանորոգել տուել, իրեր գնել, շորեղէն գնել, պատրաստել տուել, տնտեսականի մասին հատուկ հոգացել, վերահսկողութիւնն էլ իրեն է վերապահել: Սա մի շատ աննորմալ երևոյթ է, մի անձ որքան էլ ազնիւ և մաքուր լինի, չպէտք է այդպիսի գործունէութեան ձև ընտրի, որով առիթ տայ զանազան խօսակցութեան: Ինձ քում է տէր հայրը հէնց սկզբից կարող էր գործը կազմակերպել այլ կերպ, որոշ տիկիներին օգնութեանը դիմել, գնումների ժամանակ որոշ անձանց օգնութեան դիմել և այլն: Ես խնդրեցի տէր հօրը, որ շատ շուտով Բարեգործական ընկերութեան ժողով գումարել, լրացնել վարչութեան կազմը և մի հոգաբարձութիւն կազմակերպել որբանոցների համար: Նա խոստացավ շատ շուտով մի այդպիսի ժողով գումարել: Որովհետև խնամակալութիւն չըկայ, ինքն տէր հայրն էլ հասարակական հանգանակութեան շատ գործերով է զբաղուած, այդ պատճառով էլ

երկու որբանոցներն էլ, որոնցից մէկը երկու ամսուայ կեանք ունի, դեռ կազմակերպման սկզբնական շրջանում են գտնուում, վերահսկողութիւնը շատ թոյլ է, շատ անհրաժեշտ գնումներ դեռ չեն կատարուած, տան վարձը, պաշտօնեաների ռոճիկների քանակի որոշելը առկախ է թողնուած միանգամայն անհասկանալի պատճառով, մինչև օրս չեն հրաւիրում մնացած կառավարիչներն ու կառավարչուիները:

Ստատիստիկական տուեալներ.-օր[իորդ] Սիրանոյշ Մսերեան- ժամանակատր կառավարիչ, Արդութեան դպրոց, ռոճիկը յայտնի չէ (ռուսահայ), Գէորգ Խօյեցեան⁴⁸- ծախսարար երկու որբանոցների, Ս. Փրկչի դպրոց, ամսեկան ռոճիկը յայտնի չէ դեռ, մէկ մայրապետ և ծառայ, ռոճիկները յայտնի չէ դեռ: Տան վարձը, 8 սենեակ, վաննա չունի, բալկոն, բացուել է 62 հոգի⁴⁹:

Գ. Էդիլեան

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 506, ք.126-127: Բնագիր ձեռագիր:

N 24

**ՈՐԲԱՆՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՀՄԿԻՉ ԳՈՒՐԳԵՆ ԷԴԻԼՅԱՆԻ
ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ ՄԻԱՅՅԱԼ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ N 1
ՈՐԲԱՆՈՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

4 հուլիսի 1916 թ.

Ալեքսանդրապոլ

1915 թուին Ալեքսանդրապոլի երիտասարդութիւնը կազմակերպում է մի ընկերութիւն գաղթականութեանը օգնելու համար: Այդ ընկերութեան անունն էր Երիտասարդական միութիւն:

1915 թուի նոյեմբերի 20-ին այդ նոյն ընկերութիւնը Ալեքսանդրապոլում բացում է մի որբանոց և մեծ դժարութիւններով, իր սեփական միջոցներով պահում է այդ որբանոցը:

1916 թ. փետրուարին Ալեքսանդրասպոլում գոյություն ունեցող մի քանի ընկերություններ միանում են այդ որբանոցի շուրջը և համաձայնության գալիս այսուհետև որբանոցները պահել միացեալ ոյժերով և նոյն վարչութեան հսկողութեան տակ: Այդ ընկերություններն էին՝ Եղբայրական օգնութիւնը, Երիտասարդական ընկերութիւնը, Օրիորդաց կոմիտէն և Բարեգործական ընկերութիւնը: Դրանց հետ միա-միմ կործնում է գաղթականների դպրոցի ուսուցչութիւնը: Յիշեալ որբանոցը կոչուել է Միացեալ ընկերութեան որբանոց N 1, որովհետև բացուել է մի այլ որբանոց, որը կոչուել է N 2:

Շէնքը. Այս որբանոցը գտնւում է այն շէնքում, որը վարձել էր Երիտասարդական միութիւնը. սենեակները փոքր են, քիչ լուսատուր և բացի երկու սենեակից, մնացածները խոնաւ են, սենեակներից մէկը (մնջարանը) համարեայ թէ լոյս չունի, վերևից, երկու փոքր փեղկերից է աղօտ լոյս ընկնում սենեակի մէջ: Ընդհանուր առմամբ շէնքը անյարմար պէտք է նկատել: Վարչութիւնը մտադիր է նոր շէնք վարձել և որբանոցը տեղափոխել, սակայն դեռ յարմար շէնք չի գտել:

Սնունդ: Առաւօտեան 8-ին՝ հաց, թէյ, պանիր կամ երբեմն ձու: 12-ին՝ ճաշ, մսեղէն երեք անգամ, լինում է նաև խոլով կերակուրներ՝ լոբի, խաշիլ, սնկով սուպ, ինչպէս նաև ճաշ, բանապուր: Երեկոյեան՝ թէյ, պանիր և հաց: Կիրակի օրերը երեք տեսակ է լինում: Երեխաները ընդհանուր առմամբ առողջ են:

Հագուստ: Սպիտակեղէնը երկու ձեռք, վերնաշապիկները՝ երեք հատ, սաւաններ, բարձի երեսներ՝ երկու երկու հատ: Մահճակալները փայտից, ներքնակները՝ խոտից, բարձերը՝ բմբուլից, վերմակները՝ բրդից: Վերմակի սաւաններ չկան, վերմակի երեսները փոխում են ամիսը մէկ անգամ: Մի քանի մահճակալի սպիտակեղէնը մաքուր չէր, պահարանների, յատակների մաքրութիւնը ցանկալի բարձրութեան վրայ չըգտայ, թէև կեղտոտ համարել նոյնպէս անկարելի է:

Հիւանդութիւններ: Հիւանդանոցում ունեն մէկ հոգի, տարուայ ընթացքում էլ առհասարակ հիւանդութիւններ քիչ են պատահել:

Բաղանիք են գնում երկու շաբաթը մէկ անգամ, շաբաթը մէկ անգամ գլուխները և ոտքերը լւանում են տաք ջրով: Երեխաների մարմինները և գլուխները մաքուր էին:

Կառավարչուհին գնմանը չի մասնակցում, գնումները կատարում է հերթապահը, որը շաբաթական մի անգամ փոխում է: 8 հերթապահներ կան, որոնք ընտրուած են Միացեալ ընկերութիւններից կազմուած վարչութեան անդամներից: Որբանոցը դրամական միջոցներ ստացել է, սակայն չի ստացել մթերքով ներներ, միայն մեծ տօներին չնչին քանակով ուտելիքներ է ստացել:

Դպրոց: Յատուկ ուսուցիչ չի եղել, պարապել է ինքը կառավարչուհին, որը ոչ մի տեղ ուսուցչութիւն չի արած, ինքն էլ առանձին պատրաստութիւն չունի, իբրև անձնաւորութիւն բաւականին թոյլ և անազդեցիկ էր երևում, բնական է, որ նրա ուսումնական գործի արդիւնքները բաւարար դժուար կարելի է համարել: Ուսման գործը կարելի է ասել շատ թոյլ է եղել այս որբանոցում: Ըստ երևոյթին կառավարչուհու դաստիարակչութեան ազդեցութիւնը ևս թոյլ է:

Այս որբանոցը գտնուում է կիսաբաւարար վիճակում:

Կառավարչուհու ցանկութիւնները. ա) փոխել շէնքը, բ) յատուկ դպրոց ունենալ բոլոր որբանոցների համար գ) մեծ աղջիկներին և տղաներին միասին չըպահել, այլ առանձին որբանոցներում կենտրոնացնել:

Ստատիստիկական տեղեկութիւններ (քաղուած մեծ տախտակից)

Ուսուցչուհի տիկին Երանուհի Կիրակոսեան պրոգիմնագ 3-րդ դասարան, շաբաթական 18 ժամ, ամսեկան 35 ըր[ուրի] (ռուսահայ), կառավարչուհի է նոյն անձը, օգնական չունի, խոհարար 10 բուրջի ամսեկան (տաճկահայ) լուացարար և աղախին, 10 բուրջի ամսեկան (տաճկահայ), ծառայ՝ 15 բուրջի ամսեկան (տաճկահայ): Շէնքի վարձը՝ 300 բուրջի, 5 սենեակով, վաննա չունի, փոքր բակ-պարտեզ: Բացուել է 9 հոգի, այժմ տղայ 18, աղջիկ 12, միասին 30, 9 գրագէտ տղայ, 3 գրագէտ աղջիկ, 1-3 տարեկան չըկայ, 4-6 տար՝ 1 տղայ, աղ-

ջիկ չկայ, 7-10 տարեկան 10 տղայ, 7 աղջիկ, 11 տարեկան և ասելի 7 տղայ և 5 աղջիկ: Դպրոց ա. ք. և գ. բաժանմունքները միացած են, ա. բաժանմունք 14, ք. բաժանմունք 6, գ. բաժանմունք 6, միասին 16 տղայ, 10 աղջիկ, ընդամենը 26 աշակերտ:

Գ. Էդիլեան

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 587, ք. 124-125: Բնագիր: Ձեռագիր:

N 25

**ՈՐԲԱՆՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՀՄԿԻՉ ԳՈՒՐԳԵՆ ԷԴԻԼՅԱՆԻ
ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ ՄԻԱՅՅԱԼ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ N 2
ՈՐԲԱՆՈՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

4 հուլիսի 1916 թ.

Ալեքսանդրապոլ

Միացեալ ընկերութեան մասին տէս Միացեալ ընկերութեան N 1 որբանոցի մասին գրածի մէջ: Որբանոցը բացուել է 1916 թ. ապրիլի 25-ին:

Շէնքը. Քաղաքից դուրս մի յարմար շէնք է բաղկացած 8 սենեակներից, սենեակները մէծ են, լուսատու և յարմար, բնակութեան համար մի շատ յարմար շէնք: Ներքևում է գտնուում ճաշարանը, լուացարանը, խոհանոցը, մառանը և մի հաստ ննջարան սենեակ, իսկ վերևում ննջարան սենեակները, ընդունարանը (փոքր) և կառավարչուհու սենեակը: Բակը մի շատ փոքր պարտեզ էր: Երեխաները խաղում են կողք-կողքի բաց տեղը: Շէնքի մէջ ջուր չի բերուած, բերում են ուրիշ տեղից:

Սնունդ: Առաւօտեան ժամը 7-ին՝ թէյ, հաց և պանիր: Ծաշ, շաքարական երկու անգամ միս, լինում են թանապուր, կաթով ճաշ, պաստուց կերակուրներ: Երեկոյան 7-ին՝ թէյ, պանիր և հաց: Երբեմն թէյի հետ կաթ էլ է տրուում: Շատ փոքրիկներին տրուում է նաև ճաշ: Օրական երեք անգամ ուտելը քիչ պէտք է

նկատել:

Առողջապահություն: Վերնաշապիկ մի հատ, գոգնոցներ՝ մի մի հատ, սպիտակեղենը՝ երկու-երկու հատ, գուլպաներ կէսից աւելին չունի, նկատում է շորեղէնի մեծ պակասութիւն: Պատրաստութիւններ են տեսնում գուլպաների, սպիտակեղէնի և միւս շորերի: Սպիտակեղէնը փոխում են, շաքաթը մի անգամ նաև անկողիները: Բաղանիք են տանում երկու շաքաթը մի անգամ, աղջիկները շաքաթը մի անգամ գլուխ են լւանում, տղաները՝ ոչ: Որքան տեղեկանալ կարողացայ կառավարչուհին մաքրութեան վրայ սկզբներում լուրջ ուշադրութիւն չի դարձրել, այժմ նկատում է, որ աւելի խնամք է ցոյց տալիս, սենեակները և սպիտակեղէնը մաքուր վիճակում գտայ, կեղտոտութեան մի քանի նշաններ կային, բայց հաւանօրէն դրա առաջն էլ կառնի կառավարչուհին:

Որբանոցի բժիշկն է Սարգիս Յովհաննիսեանը, որը օգնութիւն է ցոյց տալիս ձրի, երբեմն յաճախում է հիւանդանոց կամ կարիք եղած ժամանակ հրախրում է կառավարչուհու կողմից: Որբանոցն հիւանդանոցում ունի 6 հոգի, 5 տղայ և մէկ աղջիկ, տարածուած է դրանց մէջ քոս հիւանդութիւնը, միւս հիւանդութիւնները անցողական և թեթև տեսակի են եղել:

Որբանոցը որովհետև ապրիլի վերջին է բացուել այդ պատճառով էլ դպրոցական պարապմունքներ չունի: Դաստիարակութեան գործն էլ շատ թոյլ է դրուած: Այս որբանոցի մօտ 64 երեխայ կառավարում է կառավարչուհին առանց օգնականի, այս պայմաններում հազիւ թէ նա կարողանայ որոշ գործունէութիւն ցոյց տալ, եթէ նոյնիսկ մի կողմ թողնենք այն հանգամանքը, որ նա այժմ սգաւոր կին է, մի հանգամանք, որը հաւանօրէն լաւ չի ազդելու դաստիարակչական գործի վրայ, չունի նաև ժամանակ:

Կառավարչուհին ծախքեր չի անում, նա որբանոցի կարիքների և գնումների քանակի մասին յայտնում է հերթապահին, որը գնում է և ուղարկում որբանոց: Կառավարչուհին մանր ծախքերի համար ինքնագլուխ ծախսում է ամսեկան

մօտ 8 բուրլի:

Ստատիստիկական տեղեկությունները- Շենքի տարեկան վարձն է 1200 բուրլի, վաննա չունի, բակը շատ փոքր է: Բաց-
ուելիս եղել է 8 հոգի, այժմ 62 հոգի, 41 տղայ, 21 աղջիկ: 1-3
տարեկան միայն մի աղջիկ, 4-6 տարեկան 3 տղայ, 3 աղջիկ,
7-10 տարեկան 20 տղայ, 8 աղջիկ, 11 աւելի տարեկան 17
տղայ և 10 աղջիկ: Դպրոց չունի: Կառավարչուհին տիկին
Սուսաննա Մուրադեան, գիմնագիա 5-րդ դասարան, ամսե-
կան ստանում է 50 բուրլի (ռուսահայ), օգնական չունի,
խոհարար 10 բուրլի ամսեկան (տաճկահայ), լուացարար
ամիսը 8 բուրլի (տաճկահայ), ծառայ- 20 բուրլի (տաճ-
կահայ), գիշերապահ - 15 բուրլի, (ռուսահայ):

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 587, ք. 128-129: Բնագիր ձեռագիր:

N 26

**ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՄԱՄՆԱՃՅՈՒԴԻ ՆԱԽԱԳԱՀ
ՀԱԿՈԲ ԶԱՀ. ԽԱՉՎԱՆՔՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻՆ ՕԳՆՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ**

6 հուլիսի 1916 թ.

Ալեքսանդրապոլ

Յարգոյ կոմիտէիդ թիւ 1632 շրջաբերական կարգադրու-
թեան համաձայն ուղարկում է վարչութիւնս իւր խնամքին և
հովանաւորութեանը յանձնուած որբանոցի յունիս ամսուայ
հաշուետախտակը Կոմիտէիդ ցուցումներին համաձայն:

Որբանոցը բացուած է յունիսից, բնակարանի անյարմարու-
թեան պատճառով բաժանուած է երեք վայրերում, միայն քա-
ղաքի մէջ: Մանրամասն ցուցակը պահանջուած ձևով ուղար-
կել ենք Կոմիտէիդ նախագահ պ. Սամսոն Յարութիւնեանին
անցեալ ամսի վերջերին: Հաշուետախտակից երևում է, որ

ծախսերն աւելի են քան ուղարկած գումարը, ուստի խնդրում ենք տնօրինութիւն անել պարտքի մնացած գումարների և յուլիսի, ինչպէս նաև յունիս ամսի նպաստների առաքման մասին:

Որբերի ընդհանուր թիւն է 150:

Նախագահ Վարչութեան՝ Յակովբ Խաչվանքեան
Քարտուղար՝ Օնիկ Խաչվանքեան

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 428, ք. 57: Բնագիր: Ձեռագիր:

N 27

**ԿՈՎԿԱՍԻ ԿԱՆԱՆՑ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱԼԵՔ-
ՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՃՅՈՒՂԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԿՈՍԻՏԵԻՆ⁵⁰ ՈՐԲԱՆՈՅ ԲԱՅԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

10 հուլիսի 1916 թ
Ալեքսանդրապոլ

Կովկասի Կանանց ընկերութեան Ալեքսանդրապոլի ճիւղի վարչութիւնը պատիւ ունի սրանով ներկայացնելու աղջկե-
րանց որբանոցի 1916-1917 թթ. տարուայ նախահաշիւը և
խնդրելու, որ որքան հնարատր է մեզ հասանելիք մի քանի
ամսուայ գումարը սկզբնական ծախսերի հետ սկզբից ուղար-
կել, որպէսզի վարչութիւնս հնարատրութիւն ունենայ ձմեռ-
ուայ պաշարը նախապէս պատրաստելու, որովհետև տեղու-
մս նկատուած է մթերքների օրրստօրէ թանկութիւն և սպա-
ռումն: Որբանոցը լինելու է յատկապէս աղջկերաց համար,
թով՝ 35: Վարչութիւնն իր միջոցներից ծախսելու է նոյն որ-
բանոցի համար 1000 ռուբլի և մտադիր է արհեստանոց քա-
նայ, որի նախահաշիւը մօտ օրերս վարչութիւնը կուղարկի
Ձեզ:

Որովհետև որբանոցն արդեն պատրաստ է, ուստի խնդրում եմ որբեր ուղարկել և դրամ փոխադրել, որ հնարատրությոն ունենանք ասպառիկ գնած իրերի համար վճարել:

Ի դիմաց Վարչության նախագահ՝ Շ. Եւանգուլեան
Գանձապահ՝ տ[իկին] Ն. Տէր-Մարտիրոսեան
Հաշուապահ՝ տ[իկին] Յ. Սինասեան

ՀԱԱ, ֆ.28, ց.1, գ. 428, ք. 62: Բնագիր: Ձեռագիր:

N 28

**ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՅ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՈՐԲԱՆՈՅՆԵՐԻ ԼԻԱԶՈՐ ԿՈՐՅՈՒՆ ՂԱԶԱԶՅԱՆԻ
ՁԵԿՈՒՑՈՒՄԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՈՐԲԱՆՈՅՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1 օգոստոսի 1916 թ.
Ալեքսանդրապոլ

Ալեքսանդրապոլում մինչև յունիս ամսի վերջը կային 3 որբանոցներ, մէկը՝ Կենդրոնական Կոմիտէի և երկուսը՝ Բարեգործական ընկերութեան, որից մէկը տեղափոխուած էր Բաշքէյից: Բարեգործական ընկերութեան որբանոցները այնտեղի ծիւղի նախագահի անփութեան պատճառով գտնուում են շատ վատ դրութեան մէջ, կատարուած է ահագին ծախք, բայց առանց դրական հետևանքի:

Ես բոլոր որբանոցները միացրի, բերի ընդհանուր մի սիստեմի և բաց արի նոր երկու որբանոցներ՝ 60 որբերի և 32 որբերի համար, բացի դրանից մտայ բանակցութեան մէջ այնտեղի ընկերութիւնների հովանաւորութեան տակ գտնուած երկու որբանոցների վարչութեան հետ, որոնք իրենց ընդհանուր ժողովում որոշեցին յանձնել Կենդրոնական Կոմիտէի այդ որբանոցները հետևեալ պայմաններով: Նախ՝

ամեն մի որբի համար մենք պարտաւոր ենք վճարել 20 թուրքի կահատորման համար և երեք ամսական 15-ական թուրքի ամեն մի որբի համար, որից յետոյ այդ որբանոցները կանցնեն Կենդրոնական Կոմիտէի հովանաւորութեան ներքոյ:

Բոլոր որբանոցների համար նշանակուեց մի կառավարիչ, որը պատասխանատու էր որբանոցների ընդհանուր տեսչի առաջ: Նշանակուեց մի ընդհանուր տեսուչ, բոլոր որբանոցների համար՝ այ. Միրզոյեանը 150 թ[ուրքի] ռոճիկով:

Բացի դրանից, ի նկատի ունենալով, որ հաց դժուար է ճարում, բաց արինք երկու սեփական փութեր, որոնք օրական պարտաւոր են թխել 30 փութ հաց:

Ի նկատի ունենալով, որ Ալէք[սանդրա]պոլում մթերքները դժուար են ճարում և որ օր ըստ օրէ նրանց գները բարձրանում են, յարմար գտնուեց բանալ մի ընդհանուր պահեստ բոլոր որբանոցների համար, և նշանակել պահեստապան՝ 40 թուրքի ռոճիկով:

Այժմ ներկայացնում եմ որբանոցների պահեստի հետևեալ նախահաշիվը:

Կորին Ղազազեան⁵¹

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 428, թ. 51: Բնագիր ձեռագիր:

N 29

**ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՅ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՈՐԲԱՆՈՅՆԵՐԻ ԼԻԱԶՈՐ ԿՈՐՅՈՒՆ ՂԱԶԱԶՅԱՆԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐԱՖՅԱՆԻՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ
ՈՐԲԱՆՈՅՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

2 օգոստոսի 1916 թ.
Ալէքսանդրապոլ

Մեծապատիւ այ. Շարաֆեան,

Ալեքսանդրապոլում բացի Կ[ովկասի] Հ[այոց] Բ[արեգործական] ընկերության որբանոցներից կան նաև երկու միացեալ որբանոցներ, որոնք գտնուում են Եղբայրական օգնութեան հովանաւորութեան ներքոյ: Այժմ այդ որբանոցների վարչութիւնը հնարաւորութիւն չունենալով շարունակել որբանոցի պահելու գործը, հարց է յարուցել յանձնել նրանց Կ[ովկասի] Հ[այոց] Բ[արեգործական] ընկերութեանը: Եւ յուլիսի 25-ին լսելով նրանց անպաշտօնական միաձայն որոշումը, հեռագրով դիմեցի ընկեր նախագահին: Եւ ստացաւ նրա դրական պատասխանը: Այժմ վերոյիշեալ որբանոցների վարչութիւնը որոշել է միացման համար ուղարկել պատգամաւոր պ. Ս. Թաբաղեանին Էջմիածին, Երևան, Բազու և Թիֆլիս: Ի նկատի ունեցէք պ. Նախագահի հեռագիրը և յայտնեցէք այդ մասին Մեսրոպ եպիսկոպոսին,⁵² որին պիտի դիմէ պ. Թաբաղեանը և աշխատեցէք այդ ուղղութեամբ:

Կ. Ղազազեան

P.S. Այսօր գնում եմ Սարիղամիշ և եթէ կարիք լինի գաղթականներին դիմաւորելու և կայաններ կազմելու, կատեմ:

Կ. Ղազազեան

Հ ԱԱ, ֆ. 28, ց.1,գ. 428, ք.52: Բնագիր: Ձեռագիր:

N 30

**ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՅ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԱՍ-
ՍՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԳԱՂԹԱԿԱՆ ԴՊՐՈՅԱԿԱՆ
ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ՆՊԱՍՏ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

24 սեպտեմբերի 1916 թ.
Ալեքսանդրապոլ

Ինչպէս պ. Միքայել Պապաջանեանը հեռագրել էր, գաղթական երեխաների համար, որոնք սովորել են դպրոցներում, պետական նպաստ է բաց թողնուած օգոստոս, սեպտեմբեր և

հոկտեմբեր ամիսների համար: Աշակերտների քանակը որոշուած է հետևեալ ձևով.

1. Մեծ Ղարաքիլիսա - 126 աշակերտ
2. Համամլի - 69
3. Ղշլաղ - 29
4. Համզաչիման - 45
5. Ալեքսանդրապոլ - 460

Ընդամենը 629 հոգի

Այս աշակերտների համար շուտով պէտք է մենք ստանանք ուսման նախահաշիվի համար 6058 ռուբլի:

Ուստի խնդրում եմ կարգադրէք այդ գումարը Բարեգործական ընկերութիւնը ինձ փոխադրէ:

փոխանորդ՝ Արտակ վարդապետ

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 428, ք. 22: Ինքնագիր:

N 31

**ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՃՅՈՒՂԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱԿՈՒՔԱՀ.
ԽԱՉՎԱՆՔՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻՆ՝ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

2 հոկտեմբերի 1916 թ.

Ալեքսանդրապոլ

Երեք ամիս առաջ որբանոցների բացման և կառավարութեան վերաբերեալ խորհրդիդ նախագահի գրութեան առթիւ ուղարկուած պատասխանի մէջ թախանձել էի երկու անձ ուղարկել աշխատանքը քննելու և որբանոցների վերաբերեալ իմ ծախսերը ընդունել և յարմարութիւններ տալ վճարելու բոլոր այն առևտրականներին, որոնք իմ անձնական պատաս-

խանաատութեան և պատուի համար 12000 թուրքի են բաց թողել որբանոցները կառավարելու և երեխաներին հազցնելու համար: Չնայելով գործեանս և բազմիցս հեռագրական դիմումներից, չնայելով նաև այն բանին, որ Կենդրոնական Կոմիտէի կողմից լիազօր պ. Կորիւն Ղազազեանը ինձ ստորագրութիւն տալուց յետոյ, միայն սննդի համար ծախսած 3395 թուրքու տոկոսները վերցրեց իր հետ օգոստոսի վերջերին, որ փողը փոխանցի, բայց մինչև վերջերս ոչ մի պատասխան չեղավ: Ուստի այսու դիմում եմ յարգոյ Խորհրդիդ և խնդրում յանուն ընկերութեան, պատուի, յանուն արդարութեան անմիջապէս կարգադրել մէկն ու մէկին, որ ամսոյս 8-ին լինի Ալէքսանդրասպոլ, ուր վերադառնալու եմ և ինքս, վերջացնել որբանոցների հաշիւները և ընդմիշտ փակելով իմ գործերը ազատել ինձ անտեղի հարձակումներից և բամբասանքներից, որին ենթարկուեցի մի քանի պորտաբոյծների կամքին և ցանկութիւններին չհպատակուելու համար: Այժմ նրանք որբանոցներում լաւ լաւ պաշտօններ են ձեռք ձգել, իհարկէ ռոճիկով, և աստուած գիտէ ինչեր է տեղի ունենում... Այդպիսիները միշտ կարծանաման պատուի և յարգանքի, որովհետև մեր կեանքը ծուլութիւնն ու դատարկ խօսքերը ատելի է սիրում, քան չարքաշ աշխատանքն ու առանց թմբուկի գործերը:

Ես այժմ սպրում եմ Երևանում: Բարեգործական ընկերութեան գործերը կենտրոնացած են պ. Խաչատուր Իսահակեանի մօտ, որպէս ընկ[եր] գանձապահի:

Կրկին խնդրում եմ այս անգամ վերջնականապէս փակել և ինձ ազատել անտեղի ծախսերից:

Յարգանքներով՝ Յակոբ քահանայ Խաչվանքեան

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 428, ք. 21: Ինքնագիր:

N 32

**ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԼԻԱԶՈՐ ՀՈՎՍԵՓ ՄԻՐԶՈՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԱՍՍՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

6 հոկտեմբերի 1916 թ.

Ալեքսանդրապոլ

Ալեքսանդրապոլում գտնուող կոմիտեիդ 8 որբանոցների օգոստոս ամսուայ հաշիվները և որբերի անուանացուցակները փոխադրել եմ կոմիտեիդ: Մինչև այժմ չեմ ստացել սեպտեմբեր ամսուայ նպաստը:

Մրանով խնդրում եմ ուղարկել 5-6 հազար թուրքի, շուտով կներկայացուի սեպտեմբեր ամսուայ հաշիվները, անուանացուցակներով հանդերձ: Ներկայումս մեր 8 որբանոցներում կայ 450 որբ երեխաներ: Սարիդամիչից ուղարկուած որբերը մինչև այժմ եկած չեն:

Մանրամասն զեկուցումը կուղարկենք հոկտեմբերի կեսին:

Խորին յարգանքներով՝ Յ. Միրզոյեան

ՀԱԱ, ֆ.28, ց.1,զ. 338, ք. 55: Ինքնագիր:

N 33

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՅՆԵՐԻ
ՎԱՐԻՉ ՀՈՎՍԵՓ ՄԻՐՉՈՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՄԱՍՍՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ**

14 հոկտեմբերի 1916 թ.

Ալեքսանդրապոլ

Այսօր հոկտեմբերի 14-ին ստացայ Ձեր երկու հեռագրերը: Մէկով կարգադրում էիք, որ Սարիդամիչից գալիս են 150 որբերը և որ դրանք պիտի ուղարկուեն Շուշի:

Կաշխատենք ըստ հնարաւորին շուտ ճանապարհի դնել այդ որբերին:

Միւս հեռագրով կարգադրում էիք մեր որբերից 116 հոգի

ուղարկել դարձեալ Շուշի:

Խնդրում եմ թոյլ տաք իմ համեստ կարծիքը յայտնել այդ մասին: Մեր որբանոցից ներկայումս որբեր փոխադրելը անյարմար է իմ կարծիքով: Մերոնք արդէն տեղաւորուած են և սովորած տեղիս որբանոցների կեանքին: Բացի այդ բոլորը ցուցակագրուած են և տեղաւորուած համապատասխան բաժանմունքներում: Եթէ մեր որբերից տեղափոխումներ կատարենք դպրոցական գործը մեզանում կտուժէ:

Այս մասին սպասում էի Ձեր կարգադրութեանը: Նոր որբանոց բանալը՝ հնարաւոր է: Խնդրում եմ փոխադրել մէկ հազար թուրքի տան վերանորոգութեան և առաջին եռամսեակի վարձը: Այդ որբանոցում կտեղաւորուեն 100-110 որբեր:

Մեր որբանոցներում 50 հոգու տեղ կայ: Ուրեմն Ալէքսանդրապոլում մեր և նոր վարձուած որբանոցներում կարելի է տեղաւորել 150 հոգի:

Իմ ստացած տեղեկութիւնների համաձայն Սարիղամիշում, Ալաշկերտում և այլ վայրերում անխնամ վիճակում գտնուում են հարիւրաւոր որբեր: Այդ մասին պարտք համարեցի յայտնել Ձեզ:

Փայտի մասին կտեղեկանամ և Ձեզ անմիջապէս կհեռագրեմ:

Մեր շրջանի դպրոցական (գաղթականական) գործի մասին այս օրերիս խորհրդակցութիւն ունեցանք ես, տեղիս յաջորդ հայր Արտակ վարդապետը և թեմական տեսուչ պ. Թ. Խզմալեան: Խորհրդակցութիւնը եկաւ այն եզրակացութեան, որ դպրոցական գործը մեր շրջանում ես ղեկավարեմ:

Դպրոցական գործը շուտ կարգի բերելու և ապագայում բարձրացնելու համար խնդրում եմ շուտափոյթ ուղարկել ինձ դասարանական պիտոյքներ մեծ քանակութեամբ: Ի նկատի ունենալով առնուազն 1000 աշակերտ: Անհրաժեշտ պիտոյքները սրանք են- տետրակներ մէկ տողանի (լայն), որ արդէն պատուիրած եմ Բարեգործական ընկ[երութեան] արհեստանոցում: Ի դէպս՝ այստեղ 100-ը տալիս են 10 ը[նկեր], ծծող թղթերով հանդերձ: Թղթի որակն էլ բարձր է: Բ. տետրակներ՝

անտող (ցանկալի է ДИТЯТКОВСК-ու): Գ. մատիտ, գրչակոթ, ծայր, թանաքաման՝ «չթափող», գրասենեակային թղթեր՝ տողած և անտող: Դ. թանաք և այլն:

Խնդրում եմ աւանտով ուղարկել 3000 ըրութի] դպրոցական նստարաններ պատրաստելու համար:

Ուսուցիչների մասին պէտք է ասեմ, որ այլևս սպասել անկարելի է, պ. Իսահակ Յարութիւնեանից տեղեկութիւն չստացայ մինչև այժմ: Խնդրում եմ թոյլ տաք տեղիս և շրջանի տաճկաց և ռուսահայ ուսուցիչներից հրաւիրել գործի:

Այս մասին, խնդրում եմ հեռագրով յայտնել Ձեր կարգադրութիւնը:

Նորից խնդրում եմ, որ ուղարկէք սեպտեմբեր ամսուայ նպաստը, եթէ հնարատր է նոյնպէս և հոկտեմբերինը: Սեպտեմբեր ամսուայ հաշիւները մեր հաշուապահը ստուգում է և շուտով կուղարկուի:

Ողջիւնով և յարգանքով՝ Յ. Միրզոյեան

ՀԱԱ, ֆ.28, ց.1, գ. 428, թ. 18-19: Ինքնագիր:

N 34

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՅՆԵՐԻ ՎԱՐԻՉ ՀՈՎՍԵՓ ՄԻՐԶՈՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԿԻՅ ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՅՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԻՍԱՀԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԴՊՐՈՅՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

25 հոկտեմբերի 1916 թ.
Ալեքսանդրապոլ

Մեծարգոյ պ. Իսահակ Յարութիւնեան,

Վերջերս Ձեզ մի քանի նամակներ եմ գրել, որոնց մէջ յոշափել էի կարևոր խնդիրներ, վերաբերեալ տեղիս գաղթա-

կանական դպրոցներին:

Յաւելով պէտք է ասեմ, որ մինչև օրս ոչ մի պատասխան չստացայ իմ հարուցած հարցերի մասին, որոնցից շատերը պահանջում են շուտափոյթ լուծում:

Քաղաքումս վաղուց ցուցակագրուել էին 300 գաղթական աշակերտներ: Դրանք հաւաքում էին Սահականուշեան դպրոցի շէնքում:⁵³ Այդ դպրոցի հոգաբարձութիւնը դպրոցական շէնքը ճաշից յետոյ մեր տրամադրութեան տակ դնելու համար պահանջում է 300 բուրլի վարձատրութիւն: Ես, քանի դեռ Ձեզնից պատասխան չէի ստացած, անկարող էի դրական կամ բացասական պատասխան տալ յիշեալ դպրոցի հոգաբարձութեանը: Այդ պատճառով ժամանակաւորապէս արձակեցի յիշեալ 300 աշակերտ-աշակերտուհիներին, մինչև տան վարձի պարգաբանումն և ուսուցչական խմբի պարգաբանութիւնը:

Վերջին ժանամակումս Ձեզ խնդրել էի հեռագրով պատասխանել այն նախահաշիւների մասին, որ բերուած էին Ձեզ այն նամակում: Քանի դեռ ոչ մի պատասխան չունենք, գործը դանդաղում է և տուժում: Ուստի խնդրում եմ այս նամակս ստանալուն պէս հեռագրով գրել ինձ նախահաշիւների մասին:

Կան գիւղեր, ուր գաղթական աշակերտների թիւը հասնում է մինչև 80-100-ի: Այդպիսի գիւղերում անհրաժեշտ են 2 ուսուցիչ ունենալ: Այդպիսի գիւղերի համար նախատեսած ենք 2 ուսուցիչ, տեղացի և տաճկահայ, որոնք ստանում են նոյն ռոճիկը ինչ որոշուած է տեղացու համար:

Անցեալ նամակումս խնդրել էի, որ 7-800 աշակերտի համար ուղարկէք դասապիտոյքներ: Գիւղերից, այնտեղ, որտեղ դպրոցներ են բացւած շարունակ դիմումներ են անում դասապիտոյքներ ստանալու համար: Խնդրում եմ շատ շուտով ուղարկէք ամեն տեսակի դասապիտոյքներ, որոնց մասին արդէն յիշել եմ նախորդ նամակումս:

Գիւղերում գաղթական երեխաների մէջ կան այնպիսիք, որոնք երկրորդ, երրորդ և այլ բաժանմունքների համար են:

Այդպիսիք տեղաւորում են գիւղերի ծխի դպրոցների բարձր բաժանմունքներում: Գիւղի ծխի դպրոցների ուսուցիչները պահանջում են իրենց դպրոց ընդունած գաղթական երեխաների ուսման վարձը:

Մի քանի գիւղերում դպրոցներ բացուած են: Շատ գիւղերում դեռևս չեն բացուած, մինչև Ձեր որոշումը կայացուի նախահաշիւների մասին:

Նորից խնդրում եմ շուտափոյթ կարգադրութիւն այս բոլոր հարցերի մասին, որ բերուած են այս և նախորդ նամակներումս:

Բարևներով՝ Յովսէփ Միրզոյեան

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 338, ք. 60-61: Ինքնագիր:

N 35

**ՏԱՐՈՆ-ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՇՐՋԱՆՆԵՐԻ
ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉՆԵՐԻ ԽՆԴՐԱՆՔԸ ԳԵՎՈՐԳ Ե
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅԱՆԸ ՕԺԱՆԴԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

30 հոկտեմբերի 1916 թ.
Ալեքսադրապոլ

Վեհափառ Տէր,

Խորին ակնածանօք կը համարձակուիմք յայտնելու Ձերդ Վեհափառութեան, որ ամսոյս 25-ին Տարօն-Տուրութեանի և յարակից շրջաններու 50 և ատելի ներկայացուցիչներս թէ բնավայրերում և թէ Կովկասի մէջ գտնող մեր հայրենագուրկ եղբայրներու նեղութեան և բարոյական անմխիթար կացութիւնը ի նկատի ունենալով միաձայնութեամբ անհրաժեշտ համարեցինք սոյն հասարակութեան սրտին ու հոգիին մօտիկ մարմնոյ մը գոյութիւնը, չափով մը օժանդակած ըլլալու անոր այլազան կարիքների հայթայթման. և առ այն Աղէք-

սանդրասպոյի ազգային Առաջնորդարանի դահլիճում երեք պարբերական նիստերով և գաղտնի քուէարկութեամբ պաշտօնի կանչեցինք հետևեալ անձնատրութիւնները.

պ.պ. Սմբատ Բորոյեան⁵⁴
Գարեգին Նժդեհ
Արտաշէս Միրզոյեան
Միսաք Խաչատրեան
Շավարշ Պապոյեան
Յակոբ Տէր -Զաքարեան
Կարօ Սասունի⁵⁵
Մխիթար Դարմանեան
Մուշեղ Շողիկեան

որոնց համար խոնարհաբար կը խնդինք Ն. Օծութեան օրհնութիւնն ու հովանատրութիւնը:

Մատչելով ի համբոյր օծեալ աջոյն Վեհափառութեան՝
Դիվան Տարօն- Տորութեանի
և յարակից շրջաններու ներկայացուցչական ժողովին
Նախագահ՝ Սմբատ Բորոյեան
Քարտուղար՝ Յակոբ Տէր- Զաքարեան

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1311, ք. 2-3: Ինքնագիր:

N 36

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՅՆԵՐԻ
ՎԱՐԻՉ Հ. ՄԻՐԶՈՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԿԻՑ ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ
ԴՊՐՈՅՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԻՍԱՀԱԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ՝ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ԽՆԴԻԲԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

3 նոյեմբերի 1916 թ.
Ալեքսանդրապոլ

Դպրոցական գործը մեր շրջանում շատ դանդաղ է առաջ գնում և խախտառակ կերպով կաղում է:

Չնայելով իմ բազմաթիւ դիմումներին մինչև այժմ չուղարկեցիք ոչ բաւարար քանակութեամբ ուսուցիչներ և ոչ ևս դպրոցական և ոչ էլ դասարանական պիտոյքներ, որպէսզի բացուած սակաւաթիվ դպրոցները գոնէ կարողանային կանոնաւոր աշխատանք սկսել:

Պապաջանեանը ինձ վճռականապէս յայտնեց, որ յուրաքանչիւր դպրոցի կահաւորման ծախսերը տրուում է աշակերտների թոյի հատով ու ամէն մէկ աշակերտին 10 թուրլի: Եթէ այդ այդպէս է, ուրեմն այս տեսակէտից հարկաւոր չէ ժխտութիւն անիլ և մենք պէտք է օգտուենք որոշած նորմայից: Այս բանն ի նկատի ունենալով խնդրում եմ շուտափոյթ դրկէք մի քանի հազար թուրլի գիւղիւրի դպրոցների կահաւորման և նախնական ծախքերի յամար: Դպրոցներ չեն բացուում, որովհետև չկան սեղաններ, գրատախտակ և այլն: Կան այնպիսի գիւղիւր, ուր գաղթական աշակերտների թիվը հասնում է 80-100 հոգու:

Քաղաքում սովորող որբերի թիվը հասնում է 500-ի: Այդ պատճառով ստիպուած եղայ նոր շինութիւն վարձելու 200 թուրլի վարձու գնով:

Սահականուշեան դպրոցը 200 թուրլով չհամաձայնեց տալ շէնքը, տոյի 300 թուրլի, ուսումը շարունակեցինք, եթէ 300 թուրլի չտայի, երեխաները դուրսը կմնային: Շատ գաղթական երեխաներ կտեղաւորուեն Սեյլանեան⁵⁶ դպրոցում:

Նամակս վիրջացնում իմ:

Յատուկ խնդրում եմ իսկոյն մեզ փող ուղարկել, պէտք է 200 հատ նստարան առնել և այլն: Շուտ ուղարկէք նաև դասարանական պիտոյքները և դասարանական իրերը:

Բարևերով՝ Յովսէփ Միրզոյեան

ՀԱԱ, ֆ. 28, ց.1, գ. 338, ք. 47: Ինքնագիր:

**ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԼԻԱԶՈՐ
ՀՈՎՍԵՓ ՄԻՐԶՈՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍԻ
ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՍԱՄՍՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ**

3 նոյեմբերի 1916 թ.

Ալեքսանդրապոլ

Այսօր ստացայ հիւանդանոցի համար Ձեր փոխադրած մէկ հազար թուրքին:

Մեր հիւանդանոցը պատրաստ է: Զոս և քաչալ հիւանդութիւն ունեցողներին առանձնացրել ենք և տեղափոխել նոր հիւանդանոց-որբանոցի շէնքը:

Անհամբեր սպասում ենք բժշկական խմբակին:

Եթէ այստեղ հնարաւոր չէ ճարել, խնդրում եմ ուղարկէք ինձ նախահաշիւ, ես այստեղ յոգամ բժշկական պերսոնաժի և այլ պաշտօնէաների մասին:

Մեպտեմբեր ամսուայ նպաստը մինչև այժմ չենք ստացել, խնդրում եմ անմիջապէս փոխադրէք:

Արդէօք հնարաւորութիւն չկայ արհեստանոցներ բանալ մեր որբերի համար: Եթէ կարելի է խնդրում եմ փոխադրէք 4000 թուրքի այդ գործը սկսելու և կանգնեցնելու համար:

Յանկալի կլիներ, որ երեխաները սովորէին չուստ կարել, հիւանդութիւն, կազմարարութիւն, գուլպայագործութիւն, ձեռագործ և այլն:

Տեղիս Եղբայրական օգնութեան կոմիտէն դիմել է Էջմիածին, որ ստանայ իր խնամքի տակ եղած և մեզ յանձնած որբանոցների մայիս, յունիս, յուլիս ամիսների ծախսերը: Էջմիածինը մերժել է: Սրանք (Եղբայրական օգնութիւնը) դիմել են մեզ և առաջարկել այդ ամիսների նպաստադրամը յետ տալ իրենց: Հակառակ սպասումին սրանք որոշել են որբանոցները (մեզ յանձնած) յետ ստանալ և շարունակել պահել Եղբայրական օգնութեան միջոցներով:

Դպրոցական գործը Դպրոցական խորհրդի շնորհիւ լուրջ

կերպով կաղում է: Բայց և այնպէս ինձ յաջողուեց բաւականաչափ դպրոցներ բանալ: Մօտ ապագայում այդ մասին զեկուցում կգրեմ Ձեզ: Գաղթական երեխաները գիւղերում մեծ մասամբ մերկ են (ինչպէս և մեծերը), որպիսի հանգամանքը կը վնասի դպրոցական գործին: Նրանք չեն յաճախի դպրոց և զուր կանցնի ամեն աշխատանք:

Պապաջանեանը ինձ խօստացել է այս մասին յայտնել Ձեզ յատկապէս:

Մոռացայ յայտնել, որ մինչև այժմ չէք ուղարկել մեր գրեական պիտոյքները, չնայելով իմ բազմաթիւ դիմումներին: Խնդրում եմ հոգաք և կարգադրէք, որ շտապեն:

Չեն ստացւած նաև մինչև այժմ սպիտակեղէնն ու չթեղէնը, որոնց մասին դիմել էի Ձեզ:

Պապաջանեանը այցելեց որբանոցները և գոհ մնաց:

Խնդրում եմ նամակս ստանալու միջոցին շուտ ինձ տեղեկացնէք Ձեր կարգադրութիւնների և իմ անելիքների մասին:

Բարևներով՝ Յովսէփ Միրզոյեան

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 428, ք. 9: Ինքնագիր:

N 38

**ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԼԻԱԶՈՐ
ՀՈՎՍԵՓ ՄԻՐԶՈՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՄՍՈՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ԸՆՏՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

5 նոյեմբերի 1916 թ.

Ալեքսանդրապոլ

Ձեր հեռագիրը՝ Բարեգործական ընկերութեան տեղիս ճիւղի համար վարչութիւն ընտրելու մասին ստացայ: Պէտք է յայտնեմ, որ մօտիկ անցեալում նոյն ընկերութեան նախագահը 3 ընդհանուր ժողով է հրաւիրած, բայց անարդիւնք:

Միշտ էլ չեն հաւաքում այնքան մարդ անդամներ, որ հնարաւոր լինէր ընտրութիւնները կայացնել: Յամենայն դէպս առաջիկայ ընդհանուր ժողովը կը հրաւիրենք նոյեմբերի 13-ին, ուր, երևի կը յաջողուի մի կերպ վարչութիւն ընտրել:

Յատուկ խնդրում եմ Ձեզ շատ շուտով դրկեք սեպտեմբեր ամսուայ նպաստը որբանոցների:

Նոյնպէս խնդրում եմ շտապեցնէք, որ Ուս[ումնական] յանձնաժողովը, ըստ կարելոյն շուտով դրկէ ինձ գրեմական պիտոյքներ, որի կարիքը շատ է: Դպրոցներ բացուել են, բայց այդ պիտոյքները չկան:

Հիւանդանոց-որբանոցը պատրաստ է, այստեղ սպասում են բժշկական պերսոնաժին: Եթէ դուք կարող էք շուտ արեք, խնդրում եմ, իսկ եթէ չէք դրկելու, գրեք ինձ, որ ես այստեղ վարձեմ: Դրկեք ինձ նախապէս նախահաշիւ:

Յարգանք՝ Յովսէփ Միրզոյեան

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 428, ք. 11: Բնագիր: Ձեռագիր:

N 39

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱ-
ՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՄՍՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ՝
ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ ԽՆԴՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

14 նոյեմբերի 1916 թ.

Ալեքսանդրապոլ

Այսօր վերադառնալով Երևանից, ամսոյս 10-ի Ձեր հեռագրի առթիւ պարտք եմ համարում ասել, որ Բարեգործական ընկերութիւնը փոխարինաբար քաղաքի պարենատրման կոմիսիայից 10 վագոն ալիւր էր ստացել: Ես, տեսնելով թէ ինչպէս գաղթականութիւնը սովի էր մատնւում (քաղաքում ալիւր չկա, գիղերում էլ չեն ծախում, իսկ ստացած 6 րութով մի փութ ալիւր էլ գնել չես կարողանում) ամենայն օր հարիւրաւոր մարդիկ, մեծ և փոքր, կին և տղամարդ աղերսա-

գին ձայնով ալիւր են խնդրում, դիմեցի քաղաքագլուխ պ. Կամսարականին և ալիւր խնդրեցի քաղաքի պահեստներից: Այդ պատճառով է, որ պ. Քաղաքագլուխը փոխարինարար իմ խնդիրքի համաձայն 10 վագոն ալիւր է բաց թողել և այժմ յետ է պահանջում:

Այս բոլորից յետոյ կրկին անգամ պարտք եմ համարում շեշտել, որ գաղթականութեան դրութիւնը սոսկալի է: Բոքիկ, մերկ և քաղցած: Իմ հեռագրերով ես տաք հազուստեղէն ու վերմակ ու դոշակ էի խնդրել, դորա փոխարէն մեծ մասամբ փող են ուղարկում, ինչ կարելի է այստեղ փողով առնել, ոչինչ գնել չի կարելի: Ուստի կրկին անգամ խնդրում եմ պ. Սամսոն Ստեփանովիչ, որ Բարեգործական ընկերութիւնը պատրաստի տաք հազուստեղէն, վերմակ և դոշակ ուղարկի գաղթականներին բաժանելու համար:

Փոխանորդ՝ Արտակ վարդապետ

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 428, ք. 6: Բնագիր : Ձեռագիր:

N 40

**ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԼԻԱԶՈՐ
ՀՈՎՍԵՓ ՄԻՐԶՈՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՍԻ
ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՍԱՄՍՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ**

21 նոյեմբեր 1916 թ.

Ալեքսանդրապոլ

Ամսիս 20-ին ստացայ Ձեր ուղարկած 5100 բութին մեր որբերի օգուստոս ամսուայ նպաստը:

Այսօր ուղարկում եմ մեր 5 որբանոցների սեպտեմբեր ամսուայ հաշիւները: Եղբայրական օգնութեան մեր ձեռքն անցած 2 որբանոցների հաշիւները ստուգում են և կուղարկեն մօտ օրերս: Այս 5 որբանոցների սեպտեմբեր ամսուայ

նպաստը, խնդրում եմ շուտ ուղարկեք, որովհետև մեծ կարիքի մէջ եմ, ձմեռուայ պատրաստութիւն ենք տեսնում:

Անցեալ նամակումս խնդրել էի, որ մեր որբանոցների համար բժշկական օգնութեան կազմակերպման համար կարգադրութիւն անէք, նորից խնդրում եմ, որ չուշացնէք այս կարգադրութիւնը:

Խնդրել էի, որ մեր որբերի համար ուղարկեք Ձեր (կոմիտէի) պահեստից 2000 արշին սպիտակեղէն և 1500 արշին չիթ: Այս մասին հոկտեմբերի 1-ին գրատուր յայտարարութիւն էի տւել կոմիտէին: Խնդրում եմ յայտնէք, թէ ինչ հետևանք է ունեցել յայտարարութիւնս:

Գիւղի և քաղաքի դպրոցների համար նախահաշիւ եմ կազմել և այսօր ուղարկում եմ պ. Իսահակ Յարութիւնեանին: Կը խնդրէի, որ ճիշտ ժամանակին այդ նախահաշիւները հաստատուեն և ուղարկուեն ինձ:

Նախորդ նամակումս Ձեզ խնդրել էի կարգադրել մի քանի կարևոր խնդիրների մասին: Խնդրում եմ Ձեզ շտապել յայտնել ինձ այդ բոլոր խնդիրների մասին, որոնք յիշուած էին նամակումս:

Յ[ակոբ] Խաչվանքեանի թողած հաշիւները քննելու համար կարգադրուած էր, որ հաշւապահ պ. Իշխանեանը գայ այստեղ, բայց նա մինչև օրս չի եկել: Պարտքատերերը ամեն օր դիմում են ինձ, շտապեցնում, որ վճարուեն իրենց հասանելիք գումարները: Նրանք յայտնում են, որ ամիսներ սպասելուց յետոյ ստիպուած են դիմել քաղաքիս կոմենդատին:⁵⁷

Ինձ համար ստեղծուել է անախորժ դրութիւն: Չգիտեմ ինչ անեն: Այս մասին կսպասեմ Ձեր շուտափոյոք կարգադրութեանը:

Սարիղամիշից մօտ օրերս որբեր չեկան:

Անցեալ շաբաթ տեղս էր գտնում Թամամշևի օգնական պ. Եանգուլեանը: Շրջեց մեր որբանոցները և գոհ մնաց:

Ձերմ բարևներով՝ Յովսէփ Միրզոյեան

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 428, ք.13-14: Ինքնագիր:

N 41

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՀԱՅՈՒՀԻՆԵՐԻ «ՏԱՐՈՆ» ԸՆԿԵ-
ՐՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՎՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈ-
ՍԻՆ՝ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ «ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏՈՒՆ»
ԲԱՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

28 նոյեմբերի 1916 թ.
Ալեքսանդրապոլ

Ալեքսանդրապոլի հայուհեաց «Տարօն» ընկերութեան վարչութիւնը սրանով գալիս է ուրախացնելու Նորին Օծու-թեանը «Աշխատանքի տան» բացումով, որի նպատակն է աշ-խատանք հայթայթել ու նոր արհեստներ սովորեցնել մեր տաճկահայ գաղթական քոյրերին:

Յայտնելով այդ մասին վարչութիւնս հայցում է իր Վեհի օրհնութիւնը:

Որդիական խորին արկածանօք

մատչիմք Սուրբ Աջիդ

Նախագատիի տ[իկին] Շ. Եւանգուլեան

Անդամ քարտուղար՝ Չարուի Ղազարեան

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1311, ք. 4: Բնագիր: Ձեռագիր:

N 42

**ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ
ԻՍԵՐԵԹԻ ԹԵՍԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՄԽԻԹԱՐ
ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԳԱՂԹԱԿԱՆ ԵՐԵՒԱՆԵՐԻ
ՀԱՄԱՐ ԴՊՐՈՑՆԵՐ ԲԱՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԱՅԱԼ**

1 դեկտեմբերի 1916 թ.
Ալեքսանդրապոլ

Ալեքսանդրապոլի վիճակում ծխական դպրոցներին կից բացուել են բոլոր գիւղերում նաև գաղթականական երեխա-

ների համար դպրոցներ: Այսինքն ծխական դպրոցների ուսուցիչները երեխաների հետ կամ պարապում են տեղի երեխաների հետ միասին, կամ նրանց հետ պարապում են ճաշերից յետոյ: Այդ ուսուցիչներին բոլորին էլ առանձին վարձ է խոստացուած գիղացիների տուած ռոճիկից դուրս:

Սակայն մինչև այժմ որոշուած չէ, թէ գաղթական երեխաների համար որքան փող պիտի տրուի ուսուցիչներին: Նրանք շարունակ ինձ են դիմում, որովհետև ես նրանց այդպիսի խոստումով եմ վարձել և ուղարկել պաշտօնի:

Երկրորդ, գաղթական երեխաների անունով պէտք է նստարաններ շինուեն, որովհետև շատ տեղ դպրոցները գուրկ են բոլոր պիտոյքներից: Այդ նպատակի համար էլ քիչ փող է բաց թողնուած, ինչպէս պ. Պապաջանեանը ասաց և այդ գործը Կենդրոնական Կոմիտէի ձեռքին է: Սակայն նորա լիազօրը ոչ մի կոպէկ չի ստացել և ոչ մի նստարան էլ չի շինուել: Մինչդեռ խոստացուած էր ինձ, որ փող կտան և Երևանի թեմում նստարաններ շատ շինեցին: Ուստի խոնարհաբար խնդրում եմ Սրբազնութեանդ լուծել այս հարցերը և եթէ կարելի է ինձ համար գումար բաց թողնել նստարաններ շինել տալու համար, որի մեծ կարիքը կայ Ալեքսանդրապոլի 58 դպրոցներում:

Փոխանորդ՝ Արտակ վարդապետ

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 428, ք. 1: Ինքնագիր:

N 43

**ՀՈՎՍԵՓ ՄԻՐԶՈՅԱՆԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԿԻՅ ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ
ԴՊՐՈՅՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԻՍԱՀԱԿ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ**

6 դեկտեմբերի 1916 թ.
Ալեքսանդրապոլ

Տկարութեանս պատճառով անկարող եղայ իր ժամանակին ուղարկել Ձեզ Ալեքսանդրապոլի և շրջանի գաղթական դպրոցների ուսանող սան-սանուհիների անուանացուցակը: Սրա հետ ուղարկում եմ Ալեքսանդրապոլի գաղթականական դպրոցների աշակերտ-աշակերտուհիների ցուցակը: Գիտերինը երկու օր յետոյ կուղարկեմ:

Ուսուցիչ չլինելու պատճառով մի երկու գիտում իր ժամանակին հնարատր չի եղել դպրոց բանալ: Այժմ ուսուցիչ կայ և միաժամանակ յիշեալ գիտերի գաղթականները դիմում են յաճախ, որ դպրոց բացուի իրենց գիտում: Արդեօք յարմար չէ, որ այդ խնդիրները յարգուեն և դպրոց չունեցող գիտերում դպրոցներ բացուեն, թեկուզ ուշ:

Խնդրեմ այս մասին հաճեցէք գրել ինձ:

Ալեքսանդրապոլ քաղաքում փախստական երեխաների համար բացուած դպրոցների թիւն է 4: Դրանցից երկուսի մէջ տեղաւորուած են գաղթական երթնեկ երեխաներ, բայց միւս երկուսում ուսանում են որբերը: Գաղթական երթնեկ երեխաների երկու դպրոցները ունեն ընդամենը 6 բաժանմունք, որից 3-ը ա. բաժանմունք, 3-ը բ. բաժանմունք: Երկսեռ աշակերտութեան թիւն է 224:

Որբերի երկու դպրոցներն ունեն 16 բաժանմունք, սրանցից 11-ը ա. բաժանմունք, 2-ը բ. բաժանմունք, 1 երրորդ, չորրորդ և մէկ հինգերորդ: Երկսեռ աշակերտութեան թիւն է 658: Բաժանմունքներից 3-ը առաջին բաժ. և մէկը բ. բաժ., ընդամենը 4, բացուած են նոյեմբեր ամսին: Այս բաժանմունքների համար հրաւիրված են երկու յատուկ ուսուցիչներ, իսկ մնացածները բաժանուած են մեր ուսուցիչների մեջ:

Դպրոցական ծախքերի համար աւանս եմ ստացել Ձեզանից 2000 ռ[ուբլի]: Ներկայացնելով դրա հետ 5112 ռ[ուբլի]: 343 կոպ[եկ] գումար:

Խնդրում եմ Ձեզ փոխադրէք ինձ աւել ծախսած գումարս, փոխադրել նաև նոր աւանս, որպէսզի հնարաւորութիւն ունենանք ուսուցիչների նոյեմբեր ամսուայ ռոճիկները վճարել և

դպրոցական շէնքերի, վառելիքի և այլ ծախքերը հոգալ:

Ուղարկածս փաստաթղթերի մէջ կգտնուի ուսուցիչների ռոճիկների ведомостները :

Թերահաւատութեան տեղիք չտալու համար պէտք է յայտնենմ, որ Միհրան Տէր-Գրիգորեան և Մ. Պետրոսեան ուսուցիչների անունները մտցած են որբերի դպրոցի ռոճիկացուցակի մէջ, թէև դրանք դասեր ունեն և որբերի և գաղթականական երեխայոց դպրոցներում: Որբերի դպրոցի ռոճիկացուցակի մէջ մտած նաև մանկապարտեզի դասատու Ղ. Մանուկեանի անունը: Խնդրում եմ ինձ ուղակէք 300 օրինակ *Наша Азбука*, ինձ գրավաճառանոցում յայտնեցին, որ միայն այդ գիրքն է, որից շատ կճարուի և կարող ենք բաւարարել եղած պահանջը:

Խնդրում եմ, որքան հնար է շուտ ուղարկել, որովհետև տարին վերջանում է:

Նկատելի է, որ թէ քաղաքումս և թէ գիւղերում գաղթականական դպրոցների երեխաների թիւը հետզհետէ պակասում է: Պատճառն այն է, որ երեխաների մեծամասնութիւնը շորից զուրկ լինելով անկարող են այս ձմեռուայ ցրտին տնից դուրս գալ և դպրոցից տուն յաճախել: Լսել եմ, որ Բարեգործական ընկերութիւնը այս կողմերը շորեր պիտի ուղարկի: Յանկալի է, որ այդ շորերից մեզ բաժին հասնի՝ բաժանելու մեր չունեոր երեխաներին և այսպիսով ծածկելու նրանց մերկութիւնը, հնարաւորութիւն տալով պաշտպանուել ցրտից և դպրոց յաճախել:

Յարգանք՝ Յովսէփ Միրզոյեան

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 338, ք. 36-37: Բնագիր: Ձեռագիր:

N 44

ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՎՈՐԳ Ե
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ ԳԱՂԾԱ-
ԿԱՆՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ-
ՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11դեկտեմբերի 1916 թ.
Ալեքսանդրապոլ

Ձերդ Սուրբ օծութեան Դիւանի նոյեմբերի 19-ի թիւ 2522 պատուիրանին ամենախոնարհաբար պատասխանում եմ, որ քաղաքիս տաճկահայ երիտասարդութեան մէջ միտք յղացաւ մի ընկերութիւն կազմել և գաղթականների վերաբերեալ ծագած զանազան հարցերի լուծումն տալ: Այդպիսի մարմնի կարևորութիւնը ես էլ զգացել էի, ուստի և առաջարկեցի այդ մարմինը կազմել: Եւ իրոք, ամենախոնարհաբար պարտք եմ համարում յայտնել, որ ընկերութիւնը մեծ օգնութիւն հասցրեց գաղթականների ձեռքով կորցրած մի մեծ խոշոր գումար գտնելու խնդրի մէջ: Ընկերութիւնը գաղթականների վերաբերեալ ծագած զանազան հարցեր և կարիքներ ստուգելուց յետոյ յայտնում է կոմիտէին, որը իւր հերթին դիմումներ է անում օգնութիւն հասցնելու համար:

Ամենախոնարհաբար ներողութիւն եմ խնդրում Ձերդ Ս. Օծութիւնից, որ սոյն պատասխանն ուշացաւ. գաղթականական գործերով բացակայ էի քաղաքիցս:

Մատչելով ի համբոյր Օծեալ Աջոյն Ձերդ
Սուրբ Օծութեան խոնարհ որդի և ծառայ
Արտակ վարդապետ

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1311, ք. 5: Ինքնագիր:

N 45

ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՎՈՐԳ Ե
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱԼԵԶՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄԿԱՆԱՅ
ԿՈՂՄԻՅ ՍՏԵՂԾՎԱԾ «ՏԱՐՈՆ» ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԱՆ
ՄԱՍԻՆ

14 դեկտեմբերի 1916 թ.
Ալեքսանդրապոլ

Ձերդ Սուրբ օծութեան Դիւանի ամսոյս 8-ի թիւ 2690 պատուիրանի համաձայն ամենախոնարհաբար պատասխանում եմ, որ քաղաքիս կանայք հիմնել են «Տարօն» անունով աշխատանքի տուն, որտեղ աշխատողները տաճկահայ կանայք և աղջիկներ են: Ընկերութեան նպատակն է միջոց տալ տաճկահայ կանանց աշխատելու և որոշ չափով վարձատրութիւն ստանալու ձեռագործի և զգեստներ կարելու համար և գաղթականութեանը բաժանելու Եղբայրական օգնութեան կոմիտէի միջոցով:

Մատչելով ի համբոյր Օծեալ Աջոյն
Ձերդ վեհափառութեան
Խոնարհ որդի և ծառայ՝ Արտակ վարդապետ

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1311, թ. 6: Ինքնագիր:

N 46

**ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՃՅՈՒԴԻ ՆԱԽԱԳԱՀ
ՀԱԿՈԲ ՔԱՀ. ԽԱՉՎԱՆՔՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ**

15 դեկտեմբերի 1916 թ.
Ալեքսանդրապոլ

Բազմիցս գրել եմ յարգելի Խորհրդիդ իմ ջանքերով բացուած Ալեքսանդրապոլի որբանոցների աշխատանքների փակման մասին, բայց Խորհրդիցդ որևէ դրական կամ բացասական պատասխան չեմ ստացել: Եկաւ Խորհրդիդ լիազօրը քննելու որբանոցի վերաբերեալ խնդիրները հոկտեմբեր ամսի 25-ին, իսկ մինչև այժմ կարգադրութիւն չեղաւ պարտքերը վճարելու մասին: Սա մի սոսկալի երևոյթ է մեր հասարակական գործունէութեան մէջ և ցանկալի է, որ օր առաջ իր

վախճանն ունենայ, և վերացնէ այն դժգոհութիւնները, որոնք անխուսափելի հետեւանք են պարտքերը ժամանակին չվճարելուն:

Կարծում եմ, որ վատութիւն չեմ արել՝ ստանձնելով իմ անձնական պատասխանատւութեամբ գաղթական, հայրենիքի սարսափներից ճողոպրած որբ մանուկների պատսպարութեան գործը Ալեքսանդրապոլում, և երբ տեղի է ունեցել որևէ թերութիւն գործավարութեան⁵⁸ մէջ, այս իրողութիւնն էլ չպէտք է խիստ դատապարտելի լինի: Պէտք է յիշել միշտ այս մեծ ճշմարտութիւնը, թէ. «որ դատաստանով դատէք, դատուելու էք»: Չեմ ուզում ասել, թէ թերութիւնները մի դատապարտէք, սա կլինի յիմարութիւն և գործերի քայքայում, ո՛չ դատեցէք ամենայն խստութեամբ: Բայց ի նկատի առէք, որ նոր գործը մասնատր գործերից է կազմուած և չէր կարող զերծ լինել թերութիւններից, ինչպէս մեր աշխատաւորները գաղթականներին խնամելու գործում խոստովանեցին: Գործին այս տեսակետով մօտենալով մենք հեռու պէտք է լինենք մէկին պատժելու մտադրութիւնից, քանի որ դա անարդարութիւն կըլլի թափած աշխատանքի դիմաց: Պարտքի մի մասը՝ 666 ռուբլի պէտք է վճարել Տփլիսի կօօպերատիւ ընկերութեանը պ. Փիրալեանին, որը վստահելով իմ պարտաճանաչութեանը ժամանակին բաց է թողել բրդեայ թել որբուկների գուլպաների համար՝ մի սպրանք, որ այժմ ծախում է կրկնակի գնով, և մենք փոխանակ լատութեանը վարձատրել ենք ընկերութեանը մեր անփոյթ վերաբերմունքով:

Այսպէս կան նաև ուրիշները: Ուստի վերջին անգամ խնդրում եմ յարգոյ Խորհրդիցդ կարգադրութիւն անել վճարել անյապաղ բոլոր պարտքերը:

Ամսոյս 25-ին կլինեմ Ալեքսանդրապոլում և յոյս ունեմ, որ յարգոյ Խորհուրդդ այս անգամ վերջ կը դնէ այս խնդրին և ինձ նոր ու նոր ծախսերի պատճառ չի դառնայ:

Յարգանք՝ Յակոբ քահ[ահանա] Խաչվանքեան

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 428, ք. 2: Ինքնագիր:

ՀՈՎՍԵՓ ՄԻՐՉՈՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ

15 դեկտեմբերի 1916 թ.

Ալեքսանդրապոլ

Ինչպէս Ձեզ յայտնի է տեղումս բացել ենք որբանոց-հիւանդանոց քոս և քաչալ հիւանդ որբերի համար: Մինչև այժմ այդ որբանոց-հիւանդանոցը մնացել է առանց բժշկական օգնութեան: Քաղաքային տեղական կոմիտէն, որին քանիցս դիմել եմ ես, մինչև այժմ բաւականացել է սին խոստումներով, սակայն ակտիւ քայլեր չէ արուած: Կիւնդրեմ, որ դուք հոգաք այդ մասին: Դիմումն արեք, ուր հարկն է (թերևս գեն[երալ] Թամամշևին), որ շուտափոյտ կազմակերպի բժշկական պերսոնալ յիշածս որբանոց-հիւանդանոցի համար:

Դեկտեմբերի 7-ին ուղարկեցի Ձեզ մեր տեղի որբանոցների անուանացուցակները և խնդրել էի, որ դեկտեմբեր ամսի նպաստը շուտ ուղարկէք: Դեկտեմբերի սկզբին Մոսկուայի կոմիտէն մեզ է յանձնած նորից թույլ 16 քոս-քաչալ որբեր մեր հիւանդանոց-որբանոցում տեղաւորելու: Ուղարկում եմ նաև սրանց անուանացուցակները և խնդրում եմ նպաստ ուղարկէք նաև սրանց համար, ինչպէս նաև կահաւորման փող, ամեն մէկին 25 ռուբլի հաշուով: Պահեստի 10000 ռուբլու հաշին ամեն ամսուայ 1500 ռ[ուբլի], յետ դնելու կարգով, այս դեկտեմբեր ամսին ևս յետ պիտի դրուի 1500 ռ[ուբլի]: Սակայն ի նկատի ունենալով, որ ձմեռուայ պատճառով մեծ քանակութեամբ փայտ ենք առել, կը խնդրեի որ այս դեկտեմբեր ամսուայ 1500 ռուբլին նպաստից դուրս չգաք:

Յարգանք Յովսէփ Միրզոյեան

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 428, թ. 3: Ինքնագիր:

N 48

**ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԼԻԱԶՈՐ ՀՈՎՍԵՓ
ՄԻՐԶՈՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԹԻՖԼԻՍԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ**

2 հունվարի 1917 թ.
Թիֆլիս

Սորանով ներկայացնում եմ ութը որբանոցների անուանացուցակը՝ թույլ հինգ հարիւր քսաներկու (522) հոգու և խնդրում եմ յունուար ամսի ստանալիք նպաստը ինձ անձամբ յանձնել:

Խնդրում եմ նոյնպէս, որ այս տօների առթիւ նուիրաբերէք մեր որբերին, որպէս ամէն քանից զրկուածների, համեմատած միւս որբանոցների ու որբերի հետ:

Դեկտեմբեր ամսում մեր որբերի թիւը աւելացաւ 182 հոգով, որոնց համար անհրաժեշտ է կահաւորման փող: Մեր ութերորդ որբանոցը բացառիկ պիտի համարել, քանի որ բոլոր հիւանդներ են՝ քոս ու քաչալ, որոնց համար անհրաժեշտ է չորս զոյգ սպիտակեղէն, քանի որ դեղերը քսում է և փոխել է հարկատր: Սորանով Ձեր ուշադրութիւնն եմ հրաւիրում և խնդրում անել հարկատր կարգադրութիւն:

Խնդրում եմ պահեստից բաց թողնել չիթ ու սպիտակեղէն:

Յովսէփ Միրզոյեան

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 347, թ. 21: Ինքնագիր:

N 49

**ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱԼԵՔՍԱՆ-
ԴՐԱՊՈԼԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԼԻԱԶՈՐ ՀՈՎՍԵՓ ՄԻՐԶՈ-
ՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՄԻՏԵԻՆ ՈՐԲԱՆՈՅՆԵՐԻ
ԾԱՆՍԵՐԸ ՓԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

16 հունվարի 1917թ.
Ալեքսանդրապոլ

Առաջներում ես դիմել էի կոմիտեիդ մի շարք խնդիրներով և վերջերս էլ՝ Թիֆլիսում եղած ժամանակ, անձամբ յիշեցրել եմ նրանց մասին զեկուցման ժամանակ: Սակայն սրանց բաւարարումը շատ է յապաղում: Ուստի նորից դիմում եմ Ձեզ և խնդրում հետևեալը:

Ներկայ պայմաններում, ինչպէս Ձեզ էլ լաւ յայտնի է, անկարելի է 15 րուբլով որք պահել, մանաւանդ Ալեքսանդրապոլի պէս մի քաղաքում, որտեղ ոչ մի նուիրատուութեան կամ այլ նիւթական աղբիւր գոյութիւն չունի: Հէնց այդ է պատճառը, որ ես չեմ կարողանում ամեն ամսուայ վերջում իմ հաշիւները փակել և դիֆիցիտը ստիպուած եմ լինում ծածկել հետևեալ ամսուայ նպաստից, որից յետոյ ընկնում եմ աւելի սուղ նիւթական դրութեան մէջ: Պարզ է, թէ որպէսի դժուարութեամբ եմ ես ներկայ պատերազմական ժամանակում սրանից-նրանից պարտք վերցնում և մի կերպ կառավարում 520 որբերի գործը: Մի կողմից սրանց է կերակուր հարկատր, միւս կողմից պարտքատերերն են պահանջում իրենց ստանալիքը:

Խնդրում եմ ինձ ազատէք այդպիսի դրութիւնից, որ ինձ շատ է ճնշում բարոյապէս, կամ նշանակեցէք մի ուրիշ մարդու, որը գուցէ կարողանայ կառավարել ներկայ պայմաններում, կամ ուղարկեցէք այնքան փող, որքան որ ծախս է լինում դոկումենտներով: Որբանոցների տեսչութիւնը ուրիշ մարդու յանձնելու դէպքում ես ուրախութեամբ կը կատարեմ լիազօրի պարտականութիւններս:

Խնդրում եմ այս հարցը անմիջապէս պարզէք և ինձ մի դրական պատասխան տաք:

Ես խնդրել եմ կոմիտեիդ 82 հոգու կահաւորման փող, սակայն չգիտեմ ինչու մինչև այժմ չէք ուղարկում, չնայած որ որբախնամ մասնաժողովն էլ որոշել է ուղարկել դա:

Իսկ 522 որբերի նպաստի փոխարէն ուղարկել եք 5000

ր[ուրի], այն էլ այն ժամանակ, երբ ամեն կոպեկը թանկ է մեզ համար:

Խնդրել էի քոստոների սպիտակեղենը դարձնել 4 ական զոյգ: Յանձնաժողովը որոշել էր Թամամշեանի առաջ խնդրամատոյց լինել այդ մասին: Ինչով վերջացաւ: Որբերի դրութիւնը տոկալի է: Ինձ կամ փող ուղարկէք կամ սպիտակեղեն և չթեղեն ձեր պահեստից 100 հոգու համար:

Մեծ որբերի համար յանձնաժողովը որոշեց միջոցներ ձեռք առնել: Բայց ոչինչ չի արուում: Խնդրում եմ այդ հարցի վրայ լուրջ ուշադրութիւն դարձնէք: Առաջ մենք ծանրացել էինք խնդրի բարոյական կողմի վրայ, նոյնիսկ մտածում էինք ապագայի մասին: Իսկ այժմ պէտք է ավելացնել և մի բան, որ այսօր որբերը մեր վրայ շատ թանկ են նստում (շատ են ուտում) հետևապէս և նիւթական տեսակէտից չենք կարող նրանց պահել:

Խնդրել էինք և արհեստանոցների մասին, որոնց անհրաժեշտութիւնը ապացոյցների կարօտ չէ: Խնդրում եմ այդ մասին հոգ տանել:

Քաղաքների Միութեան ամբուլատորիան մեր որբերին դեղ չի տալիս, այլ միայն դեղատոմսեր, խնդրում եմ դիմէք ուր որ հարկն է, որպէսզի մեզ իրաւունք տան օգտուել դեղերից ձրիապէս:

Յովսէփ Միրզոյեան

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 547, ք. 14: Ինքնագիր:

N 50

**ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՍԻ ՀԱՅՈՑ
ԲԱՐԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ**

22 հունվարի 1917թ.

Ալեքսանդրապոլ

Կոմիտէս պատիւ ունի յայտնելու. որ մայիս, յունիս, յուլիս, օգոստոս ամիսներին ունէր երկու որբանոց, ուր պահւում էր

101 որք: Այդ չորս ամսուայ ժամանակամիջոցում ծախսել է կոմիտէս որբերի վրայ ընդամենը 6060 թուրլի, հաշուելով իւրաքանչիւր որբին ամսական ապրուստի ծախսեր 15 թուրլի:

Բացի այդ որբերի վրայ միանուագ ծախսուել է 8090 թուրլի որբանոցները կահաւորելու համար: Հաշուելով իւրաքանչիւր որբի ամսական ծախսը կահաւորման գործում 20-ական թուրլի:

Կոմիտէս ստացել է Բարեգործական ընկերութեան խորհրդից մայիսին 900 թուրլի: Որովհետև վերոյիշեալ երկու որբանոցը սեպտեմբերի 1-ից յանձնուած է Բարեգործական ընկերութեան խորհրդին, ուստի Խորհուրդդ պարտք է մնում 5980 թուրլի: Յայտնելով այս մասին Կոմիտէս խնդրում է Խորհրդիդ ուղարկել յիշեալ գումարը՝ 5980 թուրլին:

Ստացուած 900 թուրլու փաստաթղթերը ներկայացուած է Խորհրդիդ իր ժամանակին, իսկ 1200 թուրլու փաստաթղթերը շուտով կներկայացնէ կոմիտէս:

Բացի այս կոմիտէս պատիւ ունի յայտնելու, որ բացի Խորհրդիցդ ստացուած 2100 թուրլուց, կոմիտէս մինչև օրս չէ ստացել այդ որբանոցների համար նպաստ ոչ պետական գանձարանից և ոչ էլ մասնաւոր անձերից:

Նախագահ կոմիտէի՝ Արտակ վարդապետ
Գործավար

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 889, ք.10: Բնագիր: Ձեռագիր:

N 51

**ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՅ ԲԱՐԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
ԿԻՅ ՊԱՏԵՐԱԶՄԻՅ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻՆ ՕԳՆՈՂ
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԼԻԱԶՈՐ
ԿՈՐՅՈՒՆ ՂԱԶԱԶՅԱՆԻ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ ԿՈՄԻՏԵԻՆ**

23 հունվարի 1917թ.
Ալեքսանդրապոլ

1. Կոմիտէիդ տուած հեռագրի համաձայն ամսոյս 20-ին եկաւ տեղս Հայր Խաչվանքեանը հաշիւները փակելու համար: Բայց չը նայած պ. Մալչագարեանի և իմ բռնն ցանկութեանը վերջացնել ընդմիջտ այդ հաշիւները, հնարաւոր չեղաւ հասնել դրական հետևանքի: Պատճառը՝ նրա ներկայացրած մեծ պահանջներն էին և մեր օրինական առաջարկը. երբ տեսանք, որ ըստ էութեան չենք կարող քննել նրա հաշիւները, առաջարկեցինք դեկավարուել մեր ունեցած նորմայով, այսինքն վճարել անուանացուցակի թուի համաձայն կահաւորման համար 20 ռ[ուբլի] և սնունդի 15 ռ[ուբլի]: Մեր առաջարկած գումարի և Խաչվանքեանի պահանջի մէջ կար 5000 ռ[ուբլու] տարբերութիւն, ուստի նա հրաժարուեց ընդունել մեր պայմանները, իսկ մենք բարոյական իրաւունք չունէինք անխնայ վարուել հասարակական կոպէկների հետ՝ վճարել Խաչվանքեանին պահանջած գումարը:

2. Միրզոյեանի հաշիւները պ. Մալչագարեանը նոյնպէս փակեց առ 1-ը յունուարի: Պարզուեց, որ ամէն մի որբ Ալէքսանդրապոլում նստում է կոմիտէիդ վրայ 22 թուրլի: Որպէսզի որբանոցների կեանքը խաղաղ ընթանայ, հարկաւոր է ամէն ամիս փոխադրել Ալէքսանդրապոլ իւրաքանչիւր որբի համար ոչ թէ 15 ռ[ուբլի], այլ 22 ռ[ուբլի], հակառակ դէպքում կեանքը կը խանգարուի և հաշիւներն ալ կը խառնուին: Յօրը թուրլուց կազմուած դէֆիցիտը պէտք է փակել կողմնակի եկամուտներից, որից Ալէքսանդրապոլը միանգամայն գորլ է: Այժմ ես աշխատում եմ այդ ուղղութեամբ: Նախ՝ տեղիս «Чайка чай»-ը միացնել Կենդորոնական Կոմիտէին և քանալ մի արհեստանոց որբերի համար և նրանց արդիւնքով ծածկել որբանոցների հաշիւները: Հետևեալ զեկուցումում կը ներկայացնեմ նախահաշիւը և կը խնդրեմ կոմիտէիդ հաստատութիւնը:

3. Եղբայրական օգնութեան երկու որբանոցների մասին նրանց վարչութեան հետ նշանակուած ժողովում եկանք հետևեալ եզրակացութեան: Վճարում ենք նրանց կահաւորման համար 20 ռ[ուբլի], և մայիս, յունիս, յուլիս և օգոստոս ամիս-

ների սնունդը հաշուելով 101 որը:

կահատրումն $20\text{ր} \times 101 = 2020 \text{ ր[ուբլի]}$

4 ամ. սնունդ $15\text{ր} \times 101 = 6060 \text{ ր[ուբլի]}$

ընդ. 8080,

որից կոմիտեն վճարել է 900 ր[ուբլի]

իսկ Միրզոյեանը 1200 ր[ուբլի]

2100 ր[ուբլի],

ուրեմն Կոմիտեն վճարել է Եղբայրական օգնութեանը 5980 րուբլի, որի առթիւ, Եղբայրական օգնութիւնը տալիս է Կոմիտէի գրատր յայտարարութիւն, որ այդ ժամանակամիջոցում նա ոչ որից պետական գումարներ չի ստացել: Պ[արոն] Մալչագարեանը իրագէկ է այդ խնդրին և մանրամասն զեկուցում կը տայ կոմիտէիդ: Խնդրում են ընդունել այդ առաջարկը և դրանով վերջ տալ երկու որբանոցների կնճռոտ հանգոյցին:

4. Որբերի բորոտանոցի դրութիւնը շատ անմխիթարական է: Քաղաքների միութիւնը, որ վարում է բժշկական գործը, հրաժարում է աւելորդ սպիտակեղէն տալուց և վարձելու է ցածր ծառայողներին, (նրանց ստացած նախահաշում այդ կէտը չի նախատեսւած), մինչդեռ երեխաների դրութիւնը անտանելի է, սպիտակեղէնը դեղերի շնորհիւ սաստիկ աղտոտում է, ուստի հարկատր է ներկայացնել լրացուցիչ նախահաշիւ:

Իսկ մինչ այդ նախահաշիւը հաստատելը, խնդրում են, ուղարկէք սպիտակեղէն, որովհետև մենք մեր ազգի որբերին, մեր խղճի առաջ իրաւունք չունենք այդպիսի կացութեան մէջ պահելու:

5. Սասունցի որբերի թիւը հասնում է 115-ի, նրանք առանձնացան և բնակում են մի որբանոցում: Գաւառում ցրուած սասունցի որբերին ես կարգադրեցի նոյնպէս հաւաքել մեր պունկտը:

6. Սաստիկ ծանր է նոյնպէս նորեկ գաղթականների կա-

ցութիւնը, մասնատրապէս սասունցիների, որովհետև այդ գաղթականութեան մեծագոյն մասը տղամարդկանցից է կազմուած, որոնք վերջին կարգադրութեամբ զրկուած են նախատից, իբրև աշխատատր ձեռքեր, մինչդեռ շրջանում աշխատանք չկայ, իսկ գնալ հեռուն երկաթուղային գծերի վրայ աշխատելու, նշանակում է գնալ սոսկ կոտորուելու համար: Ես իմ կողմից, իհարկե, կաշախտեմ միջոցներ ձեռք առնել այս շրջանում աշխատանք ճարել, բայց խնդրում եմ կոմիտէիցդ այդ հարցի մասին հոգալ, որովհետև նրանց դրութիւնը օրըսօրէ ծանրանում է: Իսկ սասունցիները, մեծ մասամբ տղամարդիկ են, հնարատրութիւն ունեն գնալ աշխատանքի, իսկ միւս գաղթականները ընտանիքով ծանրաբեռնուած են և շարժուել անկարող են, ահա այս պատճառներով Տփիսխում կազմած ծրագիրը չունենալով ռեալ հիմք կախուած է մնալու երկնքից:

7. Այսօր եկան մօտս սասունցիների ներկայացուցիչները և խնդրեցին Կ[ենդրոնական] Կոմիտէի հատկացրած 5000 ռ[ուբլի]ն բաժանել իրանց մէջ: Շորեղէն կամ այլ իրեր չեն ուզում ստանալ 5000 ռ[ուբլու] փոխարէն: Նրանց թիւն է՝ 1378 անձ, ուստի խնդրում եմ տեղափոխել 5000 ռ[ուբլու] փոխարէն կամ 5512 ռ[ուբլի] հաշուելով իւրաքանչիւրին 4 -ական ռ[ուբլի] կամ 4823 ռ[ուբլի] հաշուելով 3 ռ[ուբլի] 50 կ[ոպէկ]: Սպասում եմ փողի տեղափոխմանը:

8. Նպաստների կրճատման պատճառաւ գաւառում շատ մեծ քանակութեամբ որբեր են հաւաքուել: Սպասում եմ կարգադրութեանը նրանց բոլորին հաւաքելու համար:

9. Տեղիս Կ[ենդրոնական] Կոմիտէի գործերը այնքան ընդարձակուել ու բարդացել են, որ նրանց վարելը անհնարին է դարձել մի մարդու համար, ուստի հարկատր է նախ վերակազմել Հ[այկական] Բար[եգործական] Ընկ[երութեան] վարչութիւնը և ունենալ մի գրասենեակ, մի հաշուապահ, մի գործավար և մի լիազօրի օգնական:

Հինգշաբթի կամ Կիրակի օրը նշանակել եմ Բարեգործական Ընկերութեան ընդհանուր ժողով:

Առ այժմ ապքան:

Յարգանքը՝ լիազոր Կորիւն Ղազազեան

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 187, ք. 31-36: Բնագիր: Ձեռագիր:

N 52

**ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՅ ԲԱՐԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
ԿԻՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՎՆԱՄՎԱԾՆԵՐԻՆ ՕԳՆՈՂ ՀԱՅ-
ԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԼԻԱԶՈՐ ԿՈՐՅՈՒՆ
ՂԱԶԱԶՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԴՐԱՆԻԿԻՆ**

24 հունվարի 1917թ.

Ալեքսանդրապոլ

Մեծարգոյ պ. Անդրանիկ,

Սրանով պարտք եմ համարում յայտնել, որ Կենտրոնական Սասունի ներկայացուցիչները՝ Ռզկօ, Աւէ, Ազէ, Սարգիս, Յովհաննէս, Ֆարման, Ստիփկօ և Մկրօ, որոնք 1380 մարդու (անձի) ներկայացուցիչ են, իսկ Գաբրիէլը՝ Փսայ շրջանի գաղթականների ներկայացուցիչն է, որ թով 456 անձ են:

Որովհետև ես հնարաւորութիւն չունեմ անձամբ շրջել գիւղերը և բաժանել 5000 ռ[ուբլի] ուստի խնդրում եմ հեռագրով ինձ յայտնէք, թէ ես կարող եմ վստահանալ վերոյիշեալ պարոնների վրայ և իրենց շրջաններում (գիւղերում) գտնուած սասունցի գաղթականներին հասնելիք գումարը յանձնել սրանց բաժանելու համար, եթէ պաշտօնական հաւատարմաթուղթ կը բերեն իրենց գիւղերից, իրենց ներկայացուցիչ լինելու վերաբերեալ:

Խնդրում եմ հեռագրէք ինձ հետևեալ բաշխման ձևը, որը իմ կարծիքով արդարացի է, այսինքն ի նկատի ունենալով անցեալ և ներկայումս բաշխուող գումարների քնդիանութիւնակը, հաւասարապէս բաժանել բոլոր սասունցի գաղթականների վրայ փողով: Սասունցիներին մինչեւ այժմ յատկացրած է Գաբրիէլի շրջանը անձին 3 ռ[ուբլի], իսկ մնացածներին

75 ական կ[ոպէկ], որովհետև 5000 ըրորիկն] հաւասար քաշիման դէպքում (առանց ի նկատի ունենալու վերոյիշեալ ստացած գումարը), մեծ խտովութիւններ կարող են առաջ գալ, եւ յարմար եմ գտնում նախ 75 ական կ[ոպէկ], ստացողներին հաւասարացնել 3 ըրորիկ], ստացողներին, այսինքն տալ 2 ըրորիկ], 25 կ[ոպէկ], ապա մնացած գումարը հաւասարապէս բաժանել բոլոր սասունցիներին:

Խնդրում եմ այս իմ որոշմանը տաք Ձեր համաձայնութիւնը հեռագրով:

Մնամ յարգանք՝ Կորիւն Ղազազեան

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 187, ք. 30: Բնագիր: Ձեռագիր:

N 53

**ՀԱԿՈՐ ԲԱՀ. ԽԱՉՎԱՆՔՅԱՆՑԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ
ԲԱՐԵԳՈՐԾԱՎԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՍԱՄ-
ՍՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԻՐ ԿՈՂՄԻՑ ԲԱՅՎԱԾ
ՈՐԲԱՆՈՅՆԵՐԻ ՀԱՇԻՎՆԵՐԸ ՎՃԱՐԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

25 հունվարի 1917թ.
Ալեքսանդրապոլ

Մեծարգոյ պ. Մամսոն Յարութիւնեան,

Ամսոյս 19-ին, Կենտրոնական կոմիտէի հեռագրի համաձայն մեկնեցի Ալեքսանդրապոլ Կ[ովկասի] Հ[այոց] Բ[արեգործական] Ընկերութեան նոյն տեղում իմ ձեռքով բաց արած որբանոցների հաշիւներին վերջ տալու, որ ահա եօթն ամիս է անտեղի կերպով ձգձգում է ժողովրդի արդար զայրոյթի ու դժգոհութեան առարակայ հանդիսանալով: Եւ այս մասին խնդրել էի խորհրդին դեռ անցեալ յուլիսին: Բայց ինձ անհասկանալի պատճառներով մնաց մինչև օրս:

Չգիտեմ ինչ չարագուշակ հանգամանքներ ծնունդ առան

այս որբանոցների բացմամբ և ինձ անյայտ մնաց, թե որ յանցանքի համար տանջում եմ մինչև այժմ այդ առթիւ, ուստի ընդմիջտ այդ ամենին վերջ տալու համար գրում եմ Ձեզ՝ հաւատալով, որ գէթ այս անգամ վերջակէտ դնելով կազատեք իմ և ընկերութեան պատիւը անտեղի յարձակումներից, որոնց ենթակայ եղանք:

Յիշում էք այս խոսակցութիւնը, որ տեղի ունեցաւ մեր մէջ որբանոցների բացման առթիւ: Դուք ցանկանում էիք ունենալ անպատճառ Կ[ովկասի] Հ[այոց] Բ[արեգործական] Ընկերութեան որբանոցները և դրա համար յատուկ մարդ ուղարկեցիք՝ պ. Չամոյեանին,⁵⁹ որի հետ հիմք դրինք Կ[ովկասի] Հ[այոց] Բ[արեգործական] Ը[նկերության] որբանոցին: Վարձած շէնքն ուներ մեծ անյարմարութիւններ և պահանջում էր նորոգութիւն մեծ գումարով: Բայց պ. Չամոյեանը՝ ընկեր լիազօրը այս ծախսերի առաջ կանգ չառաւ և առաջարկեց անպայման բաց անել:

Ի միջի այլոց ասեմ, որ Դուք ևս, մայիսի 29-ին, երբ ես Բեռնո⁶⁰ թաղման պատճառով Տփլիսիսումն էի իբրև պատգամատուր, պահանջում էիք արագացնել գործը՝ առանց ակնարկելու ծախսի քանակի կամ չափի մասին, խնդրում էինք 300 որբերի տեղաւորելու պատրաստութիւն տեսնել, որպէսզի խոստումն ես ձեզ տուի և ամեն կերպ աշխատեցի ի կատար ածել այն, երբեմն նոյնիսկ ծախսերի առաջ կանգ չառնելով:

Ես մենակ էի մնացել այս գործում ոչ նրա համար, որ ցանկութիւնս էր, այլ այն պատճառով, որ վարչութեան ժողովները հաճախ տեղի չեն ունեցել անդամների չգալու պատճառով, ինչպէս այդ կը վկայէ պ. Չամոյեանն ու նրա ընկեր լիազօրները, որոնք ներկայ էին օգոստոսին կարդացածս հրաւերների, որ 100-ից ավելի անդամ ունեցող ընկերութիւնից եօթն հոգի չէին բարեհաճել գալ, թէև հրաւերը կարդացուած էր, բոլոր անհրաժեշտութիւնները և պահանջները նախատեսած և կատարուած:

Ալէքսանդրապոլում գործ կատարուում է միայն այսպիսի եղանակով, դա մի անխուսափելի չարիք է, որ զանց առնել

նշանակում է մեռցնել գործը: Ես երբեք կողմնակից չեմ այդ ուղղութեանը, բայց ուրիշ ձևով՝ խորհրդակցութիւններով և ընկերովի, գործ չի կատարում, կամ կատարածն էլ բանի չի նմանում: Այդ սխտեմով է հէնց այժմ կառավարում են նոյն տեղում Կենդրոնական Կոմիտէի բոլոր որբանոցները և եթէ այդ եղանակը Ձեզ համար դատապարտելի է մի դէպքում, ապա ուրեմն դատապարտելի պիտի համարուի և միւս դէպքում և երբեք գործադրելի, այս է պահանջում հետետողականութիւնը և այսպիսի ոգով պէտք է ղեկավարուեք և նրանց վերաբերմամբ, բայց իրողութիւնը այլ բան է ասում, ուրեմն իմ նկատմամբ որևէ բան ունէք, որ բացարձակորէն չէք արտահայտում: Ես կը խնդրեի, եթէ մի բան ունէք այս մասին հրապարակ դուրս տաք և մերկացնէք իմ պակասութիւնները:

Ինչքան, որ մարդկային կարողութիւնը թոյլ կարող է տալ, ես այն գործադրել եմ յօգուտ որբանոցների և ամեն կերպ ձգտել եմ այնպէս տանել, որ մեր դժբախտ հայրենիքի որբուկների վիճակը ողբալի չլինի: Ծախսերը կատարել եմ ըստ կարելոյն և ժամանակին խնայողաբար: Բայց այդ յաջող չի պսակուել միայն և միայն կեանքի օր ըստ օրէ աճող ծայրահեղ թանկութեան պատճառով:

Խնայողութեան և ապագայ ծանր ծախսերից ազատուելու հոգսն է եղել, որ ես նախօրոք պատրաստութիւն էի տեսել ձմեռուայ չարագուշակ հագուստի կտորների, որոնց հաշիւը վերջացնել առաջարկում էիք ինձ սեփականից, մինչդեռ այսօր դրանք ծածկեցին Ձեր փայփայած որբուկների մերկութիւնը, ավելի արժան գնով, քան կարող էինք ձեռք բերել այժմեան պայմաններում: Թէ վաճառականները և թէ այլ ընկերութիւններ Ձեր այդպէս վարուելուց յետոյ առաջարկում էին աւելի բարձր գնով յանձնել իրանց յիշեալ կտորները, բայց ես թոյլ չտուի այդպիսի վերաբերմունք միայն որբերին ի նկատի ունենալով, և ես կարծում եմ, թէ անկեղծ լինէք, պիտի խոստովանէք, որ իմ անձնական պատասխանատուութեամբ ընկերութեանը օգնել եմ կտորների մէջ, փոխանակ ութն և աւելի թուրլի վերցրել եմ արշիւնը 4 թուրլի մինչև այսօր վաճառա-

կանի միւնաթն ինձ վրա բարձած: Թէև այս պատիւը կարող էի բանացնել իմ անձնականի համար: Նոյն ձևով բերել եմ տուել ձմեռուայ գուլպայի թել *КуртОВО-ից* և պարոն *Փիրուգեանն* իմ անձն ի նկատի առնելով առանց վերադիր վճարի ուղարկել է 666 թուրլու ապրանք, որ այժմ ամենապակասը կարծենա 1800 թուրլի և որի գումարը մինչև օրս հնարաւորութիւն չեմ ունեցել յանձնելու ընկերութեանը և իմ վարկը անշուշտ գցել եմ սրանց աչքում և անտեղի խոսակցութեան նիւթ դարձել: Ահա արդիւնքն իմ աշխատանքի և հեռատեսութեան, որ գործ եմ դրել ընկերութեան մէջ: Թելերի վերաբերմամբ էլ առաջարկութիւն կար, բայց ես բոլորը մերժել եմ վերոյիշյալ պատճառաբանութեամբ:

Վերցրածս կտորների միւս մասի համար այսքանը ասեմ, որ ես վարուել եմ այնպէս, ինչպէս թոյլ են տուել հանգամանքները: *Տփխիսից* վերադառնալուն պէս խորհրդիդ վարչութեան անդամ տիկ[իւն] Նատ[ալիա] Տէր-Մարտիրոսեանին, Շուշան Եւանգուլեանին և ուրիշներին, որ ընտրել են սպիտակեղէն անկողնի, վերնագգեստի և այլն կտորներ և սրանց հետ հաշուելուց յետոյ յանձնել եմ այն տիկ[իւն] Նատ[ալիա] Տէր-Մարտիրոսեանին հսկողութեան և գործադրութեան Սահականուշեան դպրոցում, որի ավագ վարժուհին է տիկինը: Նաև հրաւիրուած էին կար անող ու ձևող կանայք, որոնց կարածները որբանոց էին տանում հաշուով: Կտորներից պակասած է եղել աշխատանքի ժամանակ, բայց այդ խնդրում ես ոչ մի յանցանք չունեմ, քանի որ հսկողութեան չեմ վերապահել և ինչ էլ կարող էինք անել, քանի որ կեանքի անխուսափելի բացն է, մեր կրթութեան և և բնատրութեան արդիւնք: Քանզեցէք Տփխիսում Ձեր հսկողութեամբ պատրաստուած անկողինները ու զգեստները Դուք այնպիսի բացի առաջ ստիպուած կլինեք կանգնել, որպիսիք Ձեզ խիստ կանհանգստացնեն, բայց մտքովս երբեք չի անցնի մեղադրել Ձեզ, քանի որ դա ընդհանուր բաց է, տիրող պայմանների արդիւնք, հեռու անհատականութեան կնիքից:

Ձգտումս եղել է ըստ կարելոյն արժան նստացնել, բայց

այն կրկնում եմ ինձ չի յաջողուել չնայելով գործ դրածս ջանքերի և ազդեցութեան: Այժմ հաշիւը չվերջացնել պատճառաբանելով, թէ մեր նորմաներից բարձր է, ես չեմ հասկանում, քանի որ ինձ այդ մասին ոչ մի խօսք չի ասած կամ գրած: Իսկ եթէ կասկած կայ, խնդրում եմ ուղարկէք բանիմաց, ծանրաբարոյ, լրջմիտ մէկը, աւելի լայն լիազօրութեամբ, որ հնարաւորութիւն ունենայ քննել, պարզել և ապա միայն փակել հաշիւները և ոչ այդպիսիք, որոնք ինձ հետ աճուրդի մտնեն իմ կատարած ծախսերը ու նրանց փաստաթղթերը մէկ կողմ դրած և առաջարկեն 1500 բուրլի գինջում անել, կարծես ես վաճառական եմ, նոր ապրանք եմ վաճառում, որ փոխանակ շատ օգուտի քչով բաւականանամ: Ես բացի ստացած 2000 ռ[ուբլի] գումարից հաց և ուտեստ գնելու համար, որ ապառիկ չի կարող լինել, մասնաւոր պարտքեր եմ վերցրել և ծախսել, այժմ այդպիսի առաջարկի դէպքում մնում է ինձ նորից պարտք անել և վճարել: Ընկերութեան երևակայութիւնն ու խիղճն այդպէս են թելադրում, ես այդպիսի արդարութեան և խղճի ենթարկուելու ժամանակ չունեմ, չեմ կարող այս պայմաններում, բացի աշխատանքից և ժամանակ կորցնելուց ու տնտեսապէս տուժուելուց նոր պարտքեր վերցնել վրաս: Չգիտեմ, կարող է համեմատաբար թանկ նստած լինեն որքերը իր բոլոր ծախսերով, բայց եթէ այդ ապացուցուի, որ իմ յանցանքից է եղել, և ոչ տիրող պայմաններից, այդ դէպքում ընդունում եմ իմ հասցէին ուղղած հանդիմանութիւններն ու բանաւարկութիւնները, իսկ եթէ ոչ՝ մեղադրել նրանց, որոնք ստեղծեցին արդի վիճակը իր բոլոր դաժանութիւններով, որից ամենից շատ տուժում ենք մենք՝ ուսուցիչներս ու քահանաները և ոչ նրանք, որոնք թաւալում են կեանքի յաջող պայմաններում:

Այս ամենը պարզելուց հետո խնդրում եմ Ձեզ, մեծապատիւ պարոն, շուտ վերջ տուէք այս տարաձայնութեան և յարմարութիւն տալ վճարել բոլոր պարտքերը, որ այսօր որբանոցների շնորհիւ ծանրացել են վզիս: Անկարող եմ այլևս համբերել, մեղք եմ, յարմարութիւն և հարուստ միջոցներ

չունեն, որ ծախսեր անեն իմ սուղ միջոցներից, գնալ գալու և հեռագրերի վրայ ծախսել են մինչև 70 ռուբլի, որպեսի գումարն արդի պայմաններում ինձ 700 ռուբլի հաւասար է:

Այս գործից դուրս ես կատարել եմ համարեայ կամաւորական բոլոր խմբերի յանձնարարութիւնները և Մոսկուայի Հայկական կոմիտէի⁶¹ գործերը: Թէ ինչպիսի ջանքով և ճշտապահութեամբ տարել եմ այդ ամենը, կարող էք տեղեկանալ խմբապետներից, որոնցից մի քանիսը ինձ լաւ ճանաչում են, իսկ եթէ այդ չէք անի և կը հաւատաք բամբասանքներին ու անձնական գծով հաշիւներով դեկավարուողների տուած տեղեկութիւններին, այդ դէպքում թող անձնային վրէժխնդրութիւնը վերահաստատէ արդարութիւնը:

Յաւում է սիրտս այսպէս արտայայտուելիս, բայց դառնացած է հոգիս այն վերաբերմունքից, որը քաւութեան նոխազ հանդիսանալով հանդերձ, այսօր խժըծում է պատիւս ու անունս:

Այո, ծանր է հասարակական գործչի խաչը, նրան գող-գորայ է սպասում և ես ամենայն սիրով կբարձրանամ այնտեղ առանց յետ նայելու, բայց ցաւում եմ, որ այդ խաչի ծանրութիւնը կոփում են ինտելիգենտ մարդիկ և թունաւորում հասարակաց միտքը ի վնաս ընդհանուր գործի, մոռանալով, որ հասարակութիւնը ընդհանրացնելով նոյնիսկ չեղած պակասութիւնները կռուան է գտնում հանրութեան բարիքին չմասնակցելու պատճառաբանութեան մէջ:

Հեռու անարդարութիւնից, այս է պահանջում ընդհանուր բարիքը:

Սպասում եմ Ձեր պատասխանին

Յարգանքով Յակոբ քահանայ Խաչվանքեանց

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 347, ք. 17-20: Բնագիր ձեռագիր:

N 54

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱԼԵՔՍԱՆ-

ԴԻԱՊՈԼԻ ԱՇԻՋԱՆԱՅԻՆ ԼԻԱԶՈՐ ՀՈՎՍԵՓ ՄԻՐԶՈՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՄԻՏԵԻՆ ՈՐԲԱՆՈՑՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԸ ՓԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2 փետրվարի 1917թ.

Ալեքսանդրապոլ

Կոմիտեիդ լիազոր պ. Կորիւն Ղազազեանի ձեռամբ ներկայացնում եմ ստուգող կոմիտեիդ իմ հսկողութեան տակ գտնուած որբանոցների մնացորդ հաշիւները առ 1-ը յունուար:

Խնդրում եմ հաշիւը փակել և դրամ ուղարկել, որպէսզի կարողանամ պարտքերս վճարել:

Մինչև այժմ չեմ ստացել նոր բացուած N 8 (քոս-քաչալներ) որբանոցի 85 հոգու դրամը: Խնդրում եմ շտապէք այդ դրամը ևս փոխադրել:

Անցեալները, թէ գրաւոր և թէ բանաւոր զեկուցումներով յայտնել եմ կոմիտեիդ, որ քոս-քաչալների հիւանդանոց որբանոցի որբերից ամէն մէկին անհրաժեշտ է չորս զոյգ սպիտակեղէն: Խնդրում եմ այս մասին շուտափոյթ հոգալ, որովհետև սպիտակեղէնի չզոյութիւնը խիստ վնասում է որբերի բժշկութեանը, քանի որ դեղ քսելիս անհրաժեշտ է նոր սպիտակեղէն հագցնել որբին: Մեր, անցեալ տարուանից բացած որբանոցներում տեղաւորուած որբերի սակաւաթիւ սպիտակեղէնը մաշուել է և գործածութեան համար անպէտք է դարձել: Ինչ միջոցներով պիտի հոգացուին սրանց համար սպիտակեղէններ: Առանձին դրամ կը յատկացնէք դրանց համար, թէ ինչպէս պէտք է անել, յամենայն դէպս խնդրում եմ շատ շուտով այդ մասին կարգադրութիւն անել ու խնդրում եմ նաև տեղեկացնել ինձ հետևանքի մասին:

Տեղիս իմ տեսչութեան տակ գտնուող որբանոցները նպաստից զատ չունեն որևէ եկամուտ, ի բաց առեալ չնչին քանակութեամբ ստացուող նուերները: Միաժամանակ որբանոցներն ունենում են դիֆիցիտ: Այդ դիֆիցիտը մասամբ ծածկելու նպատակով, ինչպէս և երեխաներին արհեստ սովորեց-

նելու համար անհրաժեշտ է բանալ արհեստանոցներ, որոնց մասին զեկուցել եմ Ձեզ պ. Կորիւն Ղազազեանի միջոցով:

Որպէսզի որբանոցները աւելորդ ծախսից ազատուեն վաղուց մտածել եմ սեփական փուռ (հացի) և լուացատուն հիմնադրել: Մրանք համ գործը կղնեն կանոնաւոր հիմքերի վրայ և նաև կտան մեզ ցանկալի որակով հաց:

Յարգանք՝ Յովսէփ Սիրգոյեան

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 547, ք. 13: Ինքնագիր:

N 55

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԱՐՑՈՒՄԸ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ
ՎՆԱՄՎԱԾՆԵՐԻՆ ՕԳՆՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ**

4 փետրվարի 1917թ.

Ալեքսանդրապոլ

Ալեքսանդրապոլի շրջանում ապրող տղամարդ գաղթականները դիմել են կոմիտէիս ու խնդրում են յարմարութիւն ստեղծել իրենց համար վերադառնալու հայրենիքի հողերը մշակելու:

Յայտնելով այս մասին կոմիտէս պատիւ ունի խնդրելու հաղորդել, ըստ կարելոյն շուտով, թէ արդէօք այս հարցի վերաբերեալ Կենդրոնական Կոմիտէդ կայացրած ունի որևէ որոշում: Եթե կայ որոշում կոմիտէս խնդրում է յայտնել, թէ ինչ միջոցներից է տրուելու գնացող գաղթականների ճանապարհաժախար:

Նախագահ կոմիտէի՝ Արտակ վարդապետ
Քարտուղար՝

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 889, ք. 8: Ինքնագիր:

**ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՅՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՎ
ՎԱՐԺՈՒՀԻՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ
ՃՅՈՒԴԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԴԻՄՈՒՄԸ
ԹԻՖԼԻՍԻ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՎՆԱՄՎԱԾՆԵՐԻՆ ՕԳՆՈՂ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ**

4 փետրվար 1917 թ.

Ալեքսանդրապոլ

Ուսուցչական միությունն ներկայ աշխարհակործան պատերազմի արհավիրքներից ու անտանելի թանկությունից հարկադրուած այլևս մի կողմ թողնելով ուսուցչին յատուկ լռիկ-մնջիկ համբերատարությունը դէպի իր նիւթական վարձատրությունը և իր կրած գրկանքները, սոյն ուսումնական տարուայ սկզբից աշխատեց և աշխատում է միջոցներ ձեռք առնել եթէ ոչ բոլորովին գոնէ մասամբ թեթևացնելու արդի ծանր կացությունը:

Այս նպատակով մասնակի դիմումներ եղան տեղիս ծխական դպրոցների մանկավարժական խորհուրդների կողմից իրենց հոգաբարձություններին, եթէ հնարատր չէ դասագնի փոփոխումը, գոնէ տրուի յաւելեալ ռոճիկներ:

Այս դիմումները ունեցան իրենց դրական կողմը և տեղիս չորս դպրոցներից Փրկչի տղայոցը բարձրացրեց յաւելեալ ռոճիկները մինչև 50 տոկոսի, Խրիմեան տղայոց և Սահականուշեան օրիորդաց դպրոցները 40 տոկոսով, իսկ Արդութեան միջնակարգ դպրոցի համար ծխական ժողովը որոշեց տալ 50 տոկոս, որպէսի որոշումը ուղարկուեց պատշաճաւոր իշխանութեան ի կատարումն:

Այլ պատկեր են ներկայացնում տեղիս գաղթականական դպրոցները, որտեղ մմանօրինակ յաւելումներ տեղի չեն ունեցել, այլ այնտեղ ստանում են 24 դասի համար 50 բութի ամսական, այսինքն դասը 25 բութի, մինչդեռ ծխական դպրոցներում մինիմում դասագինը 30 բութի է, դրա վրայ աւե-

լավրած և յաւելումները:

Պատկերը շատ պարզ է:

Միութիւնս իւր վերջին նիստում այս հանգամանքը ի նկատի առնելով և միննոյն ժամանակ աչքի առաջ ունենալով, որ տեղիս դպրոցների դասատուները իւր անդամներն են, որոշեց՝ դիմել Կենդրոնական Կոմիտէիդ և իբրև բարոյական պարտականութիւն աւելացնելու և նրանց ռոճիկները:

Վերոգրեալի մասին յայտնելով, վարչութիւնս պատիւ ունի խնդրել, ի կատար ածել Միութեանս ընդհանուր ժողովի որոշումը, հասցնելով տեղիս գաղթականական դպրոցների ուսուցիչ ուսուցչուհիների ռոճիկները գէթ այժմ ծխական դպրոցներում գոյութիւն ունեցող նորմային:

Վարչութեան նախագահ՝ Ե. Սարգսեան

Անդամ քարտուղար՝ Արշակ Բրտտեան

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 347, ք. 8-9: Բնագիր: Ձեռագիր:

N 57

**ԱՆԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ԿԵՆՏՐՈՆԱ-
ԿԱՆ ԿՈՍԻՏԵՒՆ ԴՊՐՈՑԻ ՎԻՃԱԿԸ ԲԱՐՎՈՔԵԼՈՒ ԵՎ
ԻՐԵՆՑ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԲԱՐՁՐԱՅՆԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

5 փետրվարի 1917 թ.

Ալեքսանդրապոլ

Տեղումս բացուած փախստականների դպրոցն ունի 300 աշակերտ] 6 բաժանմունքներ, որոնցից 4 բաժինները տեղաւորուած են Սահականուշեան և 2-ը՝ Մէլլանեան դպրոցներում:

Չնայած, որ պարապմունքներն սկսուած են ուսումնական տարուայ սկզբից, բայց մինչև օրս չեն կանոնաւորել շնորհիւ հետևեալ աննպաստ հանգամանքների

ա) Դասարանական պիտոյքների անկանոն ստացուելով

(մինչև այժմ էլ կան դասարաններ, որոնք չունեն դասագրքեր և այլ դասապիտոյքներ)

բ) Դասարանները չեն վառում, որից տուժում է աշակերտության համարեայ կէտը (խրաքանչիւր դասարանում ցրտից հիվանդացած 6-15 բացակայ աշակերտներ են լինում), իսկ շատ անգամ տուժում են գրատոր աշխատանքները:

գ) Աշակերտութիւնը բառիս բուն իմաստով մերկ է, ցուրտ ձմռանը երեխաները գալիս են ոտաքոբիկ, գլխաբաց, ցնցոտիներով, որոնց պատռուածքներից երևում է նրանց մարմինը: Պէտք է շեշտել, որ վերոյիշեալ բոլոր կէտերի համար տարուայ սկզբից մինչև օրս բազմաթիւ դիմումներ ենք արել պ. Յ. Միրզոյեանին, բայց վերջինս թողնելով անհետևանք, ոչ մի դրական պատասխան չի տուել, շատ անգամ ասելով. «Ով է մեղաւոր, որ հագուստ չունեն, թող դպրոց չը գան, մենք ոչինչ անել չենք կարող», այն ինչ նոյն կրիտիկական բոպէին որբանոցի դպրոցում շռայլում է 600 ք[ուբի] միմիայն պալուսակների համար:

Երկրորդ. ա) Մեզ հասած ճշգրիտ տեղեկութիւններից, ինչպէս նաև պ. Կ. Ղազազեանի յայտարարութիւնից պարզուեց, որ Կենդրոնական Կոմիտէն չունի որոշ 25 բուբլի դասագին, ինչպէս պ. Յ. Միրզոյեանն էր հաւաստիացնում մեզ մինչև օրս, այլ որոշուած է տալ փախստականների դպրոցները պաշտօնավարող ուսուցիչներին ամսավճար՝ հաշուելով իւրաքանչիւրին տարեկան 600 բուբլի: Մինչդեռ պ. Յ. Միրզոյեանը մեզ հրաւիրելիս յայտնել է, որ ըստ Կենդրոնական Կոմիտէի որոշման, բոլոր փախստականների դպրոցների համար բաց է թողնում 25 բուբլի դասագին, որը շուտով կը բարձրանայ, սակայն մեր ռոճիկները բացի չը բարձրանալուց չեն բաւարարել նոյնիսկ ըստ յայտնած դասագնի (սեպտեմբեր ամսի ռոճիկը մեզնից ոչ որ չի ստացել):

բ) 18 դաս պարապող և դասարան կառավարող ուսուցիչների (վեր ածելով դասագնի) վճարում է 37 բուբլի 50 կոպէկ] ամսական: Նոյն ուսուցիչներին հոկտեմբեր ամսուայ համար ստորագրել է տալիս 41 բուբլի 75 կոպէկ, իսկ մի քանի օրից

յետոյ վճարում է 37 րուբլի 50 կոպեկ:

զ) Նոյն դպրոցում պաշտօնավարող մի ուրիշ դասատու միմիայն ութ (8) նկարչութեան դասերի համար ստանում է 50 րուբլի ամսական: Եվ երբ պահանջում ենք բացատրութիւն նա յայտնում է. «Դա իմ ներքին գործն է և ոչ ոք իրաւունք չունի խառնուելու»: Իսկ երբ մեր իրաւացի պահանջն ենք դնում ռոճիկների աւելացման համար, նա մեզ առաջարկում է հրաժարուել:

Արդ դիմելով Կոմիտէիդ խնդրում ենք նախ՝ բարուոքել կիսամերկ, կիսաքաղց աշակերտների դրութիւնը և երկրորդ՝ ի նկատի ունենալով ներկայ թանկութիւնը աւելացնել մեր ռոճիկները՝ հասցնելով այն նորմային, ինչ նորմայով վճարուում են միւս շրջաններում սկսած սեպտեմբեր ամսից:⁶²

ՀԱԱ, ֆ. 28, ց.1, գ. 338, ք. 23: Բնագիր: Ձեռագիր:

N 58

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՈՐԲԵՐԻ ԴՊՐՈՅԻ ՈՒՍՈՒՑԻՉ- ՆԵՐԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԻՐԵՆՑ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

8 փետրվարի 1917թ.

Ալեքսանդրապոլ

Ի նկատի ունենալով կեանքի անասելի պայմանները և ուսուցչի տնտեսականի աննախանձելի դրութիւնը՝ անկարող ենք ապրել ստացած ռոճիկով, դասագինը 25 րուբլով, ուստի գալիս ենք դիմելու, Կենդրոնական Կոմիտէի Ալեքսանդրապոլի որբերի դպրոցի ուսուցիչ-ուսուցչուհիները, Կոմիտէիդ խնդրելու որևէ կերպ աւելացնելու մեր ռոճիկը, որպէսզի հնարաւորութիւն ունենանք այս անօրինակ կեանքում բաւարարելու մեր անհրաժեշտ պահանջները:

Այս առթիւ մի քանի անգամ դիմել ենք դպրոցիս աւագ

ուսուցիչ Յովսէփ Միրզոյեանին: Բայց միշտ հանգստացուցիչ պատասխաններ ենք ստացել: Յուսով ենք, որ Խորհուրդդ չի զլանայ անհետևանք թողնել կազմիս դիմումը:

Ուսուցիչ - ուսուցչուհիներ⁶³

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 347, ք. 16: Բնագիր ձեռագիր:

N 59

**ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԼԻԱԶՈՐ ԿՈՐՅՈՒՆ
ՂԱԶԱԶՅԱՆԻ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ
ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԱՄԻՆ**

17 փետրվարի 1917թ.

Ալեքսանդրապոլ

Ալեքսանդրապոլի շրջանում Կ[ենդրոնական] Կոմիտէի գործերը շատ լայն ծաւալ են ընդունել, ուստի մի լիազոր հնարաւորութիւն չունի նրանց զսպելու: Հարկատու է տալ նրան մի օգնական, մի գործավար ու մի հաշուապահ: Համաձայն Կոմիտէիդ որոշմանը ես այնտեղ պաշտօնի հրաւիրեցի քաղաքային քանկի հաշուապահ պ. Խզմալեանին, որը կանոնաւորելու է որբանոցների հաշիւները, վարձեցի նոյնպէս մի գործավար 25 ռ[ուբլի] ամսականով, իսկ ինչ վերաբերում է լիազորի օգնականին, այստեղ յարմար անձնաւորութիւնը չը ճարուեց, ուստի խնդրում եմ Կոմիտէիդ անյապաղ կարգադրութիւն անել այդ մասին, որովհետև Ալեքսանդրապոլի գործերը քանի գնում խճճում են ու բարդանում: Ինքը պ. Միրզոյեանը հնարաւորութիւն չունի այդ բոլոր բարդ գործերը մենակ վարելու:

Ալեքսանդրապոլի որբանոցներում այժմ հաւաքուել են 530 որբ, որոնք ոչ մի արհեստ չեն սովորում, ուստի նրանց համար հարկատու է բանալ արհեստանոցներ: Նախ՝ չուստերի և

երկրորդ՝ հիսնի: Ընդհանուր նախահաշիվը կազմում է չուտերի արհեստանոցի համար՝

մատերիալ՝
տակի կաշի - 600 թուրլի
երեսի կաշի - 200 թուրլի
կտոր- 100 թուրլի

900 թուրլի

Գործիքներ
չուստեր կարող մեքենայ- 140 թուրլի
մանր գործիքներ- 100 թուրլի

240 թուրլի
Տան վարձ ամսական- 20 թուրլի
վարպետի վարձ 60 թուրլի

80 թուրլի

1140 թուրլի

Ուրեմն մատերիալի և կահատրման համար հարկատր է միանվագ 1140 թուրլի, իսկ գործը վարելու համար ամսական 80 թուրլի: Այս արհեստանոցում աշխատելու են երկու խումբ որբեր, ամեն խմբում 10 -ական հոգի:

Հիսնի արհեստանոց
1. Մատերիալի տախտակ- 500 թուրլի
2. Գործիքներ- 250 թուրլի
3. Տան վարձ ամսական - 20 թուրլի
վարպետին - 60 թուրլի

80 թուրլի

Ուրեմն մատերիալի և կահատրման համար հարկատր է միանվագ 750 թուրլի, իսկ ամսական- 80 թուրլի

Այս արհեստանոցում աշխատելու են երկու խումբ որբեր, ամեն խմբում 10-ական հոգի: Արհեստանոցները կլինեն մեզ

համար օգտակար երկու կողմից: Նախ՝ որբերը հնարաւորութիւն կունենան արհեստներ սովորելու և երկրորդ՝ կլինի ապրուստի միջոց: Ապագայում այս արհեստանոցի գործը կաւելի է ընդլայնել ու սկսել մեծ գործ:

Հիւանդանոց- բորոտանոցի որբերի դրութիւնը շատ վատ գտայ: Մինչև այժմ նրանք կարգին կահաւորուած չեն: Ըստ լիազօր Միրզոյեանի ինքը նրանց կահաւորման գումարը չի ստացել: Հարկաւոր է փոխադրել 85 որբերի կահաւորման գումարը 2125 բուրլի: Բացի դրանից հարկաւոր է շուտով փոխադրել սպիտակեղէն նրանց համար, որովհետև սանիտարական պայմանների համաձայն հարկաւոր է, որ ամեն մի հիվանդ ունենայ գէթ 4 զոյգ սպիտակեղէն, մինչդեռ ամեն մի երեխայ մի զոյգ չունի անգամ: Այսպէս անխնամ մենք իրաւունք չունենք թողնելու:

Շրջանի գաղթականների դրութիւնը նոյնպէս ծանր է, կրկին անգամ հրաւիրում եմ Կոմիտէիդ ուշադրութիւնը նրանց վրա: Կան գաղթականներ, մանաւանդ նորեկներից, որոնք մինչև այժմ անկողին չունեն, քնում են ուր որ պատահում է, վերմակ ասած բանը նրանց համար բոլորովին գոյութիւն չունի, տաք շորեր, ինչպէս ինձ ասացին Եղբայրական օգնութեան ներկայացուցիչները ստացել են գաղթականների 30%-ը միայն, արդէն վեց ամիս է, ինչ նրանցից շատերը սապոնի երես չեն տեսել, շորերը չեն լւացել և բաղնիք չեն գնացել: Չարմանալի է, ինչպէս մինչև հիմայ որևիցէ վարակիչ հիվանդութիւն չի զարգացել նրանց մէջ: Զաղաքների միութիւնը այդ շրջանում ունի բաղնիքներ, որոնք անգործութեան են մատնուած, իսկ հիւանդանոցները միանգամայն դատարկ, մինչդեռ գաղթականների զանգատները անպակաս են, որ իրենց հիւանդանոց չեն ընդունում: Խնդրում եմ լուրջ ուշադրութիւն դարձնել այս կէտի վրա:

Շրջանում նպաստի կրճատման շնորհիւ հաւաքել են 200 մինչև 300 որբեր, որոնք մնացել են անտէր անտիրական գիւղերի փողոցներում: Հարկաւոր է նրանց հաւաքել և տեղաւորել որբանոցներում: Սակայն որովհետև մեծամասնութիւնը

նրանցից ունի հեռաւոր ազգականներ և բարեկամներ, ուստի նրանց այդ շրջանից դուրս հանել իմ կարծիքով այնքան էլ յարմար չի լինի: Նրանք ապագայում կը կորցնեն իրենց ազգակցական կապերը և կմնան մենակ, ուստի հարկաւոր է որբանոցներ բանալ նոյն Ալեքսանդրապոլի շրջանում: Ես ուղարկեցի մի հմուտ մարդ Հատիճի վանք, ուր կայ յարմար շինութիւն որբանոցի համար, կազմել վերանորոգութեան յամար նախահաշիւ: Պարզուեց, որ հարկաւոր կլինի մօտաւորապէս 400-500 բուրլի: Շէնքը շատ լավ, ընդարձակ ու լայն էր, օդը ու ջուրը պատուական: Ալեքսանդրապոլից հեռու է 25-28 վերստ, կայ լաւ ճանապարհ, մի խօսքով ստեղծուած մի չէնք է: Հարկաւոր է միայն թոյլատուութիւն Կաթողիկոսից:

Սասունցիներին Կոմիտէիդ որոշուած նպաստը բաժանեցի երկար վեճերից ու տարածայնութիւններից յետոյ, հետևեալ կերպով: Կենտրոնական Սասունի ներկայացուցիչներին, որոնց թիւն է 1384 անձ, բաժանեցի 3 ընթացիկ 35 կոպ[էկ] մարդագլուխ, որովհետև նրանք մասնաւոր նպաստ աւելի քիչ էին ստացել քան միւս խումբը՝ Փսանաց շրջանի սասունցիները, իսկ վերջիներս ստացան 1 ընթացիկ 50 կոպ[էկ] 456 անձի համար, իսկ Մարնիկ⁶⁴ գիւղի փախստականները, որոնք բնաւ չէին ստացել նպաստ, ստացան 4-ական ընթացիկ: Նրանց թիւն է 20 անձ: Գումարը բաժանեցի Ալեքսանդրապոլի նօտարի ներկայութեամբ, միւս գումարը՝ Եղբայրական օգնութեան գրասենեակի կոմիտէի գործերի կառավարիչ պ. Ս. Թաբաղեանի ներկայութեամբ, իսկ առաջինը՝ Եղբայրական օգնութեան կոմիտէի երկու անդամի՝ սասունցիների ներկայացուցիչների և Կ[ոպկասի] Հ[այոց] Բ[արեգործական] Ընկ[երութեան] Սարիղամիշի ճիւղի վարչութեան անդամի ներկայութեամբ: Փաստաթղթերը սրանով ներկայացնում եմ կոմիտէիդ:

Յարգանք՝ Ալեքսանդրապոլի շրջանի լիազօր
Կորիւն Ղազազեան

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 187, ք.21-25: Բնագիր ձեռագիր:

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ «ՏԱՐՈՆ-ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆ» ՀԱՅ-
ԲԵՆԱԿՅԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԳԵՎՈՐԳ
Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՈՒ
ԸՆՏՐՎԱԾ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ**

23 փետրվարի 1917 թ.
Ալեքսանդրապոլ

Ձերդ Վեհափառության ուղղած մեր առաջին գրության
առթիւ արած հարցումներին պատիւ ունենք հաղորդելու Ձերդ
Ս. Օծութեան հետևեալը՝

Վարչութիւնս գործում է «Տարօն-Տուրութեան» հայրե-
նակցական միութեանը կից, որը ճանաչուած ու հաստատ-
ուած է կառավարութեան կողմից:

Վարչութեանս նպատակն է սովորեցնել տարօնցիների
անհրաժեշտ արհեստներ, երկրի ապագայ վերաշինութեան
գործին նպաստելու համար, որպէսզի ապագայում ծանր
դժուարութիւնների առաջ չկանգնենք:

Այդ նպատակով արհեստանոցն արդէն բացուած է, և
բանորդներին սովորեցնելու համար հրաւիրուած են վարպետ-
ներ:

Վարչութեանս նպատակն է տարօնցի աշակերտ արհես-
տատուների թիւը հասցնել հարիւրի, որոնք սնուելու և պահ-
ուելու են վարչութեանս միջոցներով: Այդ նպատակի համար
արդէն պատրաստուած ունենք հանրակացարան:

Վարչութեանս անդամներն են՝

1. Պատուաւոր նախագահ- քաղաքագլուխս պ. Գերասիմ
Կամսարական⁶⁵

2. Նախագահ՝ պ. Եփրեմ Սարգսեան- տեսուչ Արդութեան
օր[հորդաց] դպրոցի

3. Անդամ պ. Յակոբ Էհրամճեան- երեսփոխ[ան] Ս.
Աստուածածին եկեղեցու

4. պ. Մկրտիչ Ամիրջանեան- հոգաբարձու Արդ[ութեան]

օր[իորդաց] դայր[ոցի]

5. պ. Յովսէփ Միրզոյեան- Կենտրոնական կոմիտէի լիա-
զօր , նոյն կոմիտէի որբանոցների կառավարիչ

6. պ. Իսահակ Տէրտէրեան- զինւորական բժիշկ

7. պ. Գրիգոր Հէքիմեան- տեխնիկ գործարանատէր

8. պ. Գէորգ Հալաճեան- արհեստաւոր

9. պ. Վաղարշակ Գէօնջեան –տեխնիկ

10. և քարտուղար պ. Մխիթար Տէր Աբրահամեան- ուսու-
ցիչ Արղութեան օր[իորդաց] դայրոցի:

Գրութեանս հետ ներկայացնում ենք Ձերդ Սուրբ Օծու-
թեան՝ արհեստանոցի նախահաշիւը:

Նախագահ վարչութեան ՝ Ե. Սարգսեան

Անդամ-քարտուղար՝ Մ. Տէր -Աբրահամեան

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1311, ք. 9: Բնագիր: Ձեռագիր:

N 61

**ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԿԱՆԱՆՅ «ՏԱՐՈՆ»
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

26 մարտի 1917թ.

Ալեքսանդրապոլ

Վեհափառ Տէր,

Քաղաքումս գործում է կանանց «Տարօն» ընկերութիւնը,
որի նպատակը յայտնի է Ձերդ Վեհափառութեանը, եւ ամսո-
յս սկզբին ընկերութեան անդամները նախահաշիւ ներկայաց-
րին:

Ներկայիս ընկերութիւնը դրամական նեղ դրութեան մէջ
լինելով ամենախոնարհաբար դիմում եմ Ձերդ Սրբութեանը
բարեհաճել կարգադրել Ձերդ Վեհափառութեան ձեռքի տակ
եղած գումարներից ըստ Ձերդ Սրբութեան որոշման մի գու-
մար յատկացնել ընկերութեանը, որպէսզի գործարանում սկս-
ուած արհեստները կանգ չառնեն:

Մատչելով ի համբոյր Օծեալ Աջոյն
Ձերդ Վեհափառութեան խոնարհ ծառայ և որդի՝
Արտակ Վարդապետ

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1311, ք. 16: Բնագիր ձեռագիր:

N 62

**ԹԻՖԼԻՍԻ ԱՐԵՎՍՏԱՀԱՅ ՈՒՈՒՑՉԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԸ ՀԱՅՈՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻՆ ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՅՆԵՐԻ
ԱՆՄԵԻԹԱՐ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

28 մարտի 1917 թ.
Թիֆլիս

Մեծարգոյ պ. նախագահ և պատուարժան անդամներ
Հ[այոց] Կ[ենդրոնական] Կոմիտէի

Թիֆլիսի Արևմտահայ Ոստոցական Միութեան վարչութիւնը այս տարուայ յունվարի 23-ին՝ թիւ 51 նամակով դիմում կատարելով պատասխանատու կոմիտէիդ՝ ներկայացուցած է Ալաշկերտի, Գանձակի, Նոր Բայազետի և այլ շրջաններու գաղթականական դպրոցներու անմխիթար վիճակը, խնդրելով բաւարար կարգադրութիւն:

Պատասխանատու մարմինդ սակայն փութացած էր իր թիւ 235 գրութեամբ յայտնել, որ յիշեալ վայրերի գաղթականական դպրոցների գրեական պիտոյքներն ուղարկուած են:

Վարչութիւնս սակայն կու գայ ներկայիս կրկին ձեզ տեղեկացնել, որ վերջերս շրջաններէն արդէն այս ուղղութեամբ գանձատները կստացուին, որոնք շատ անմխիթար վիճակի մը ենթարկուած կը ցուցնեն գաղթական երեխաներու ուսումնական և խնամատարական կեանքը:

Այդ գրութիւններէն մէկը՝ ուղղուած Արևմտահայ Ոստոցական Միութեան Կենտրոնական վարչութեան ձեզ կը դր-

կենք, վարչութեան առ Ձեզ ուղղուած գրութիւնով միասին:

Իւր կողմից Թիֆլիսի վարչութիւնն կապելացնէ նաև Ալէքսանդրապոլէն վարչութեանս եկած նման գրութեան մը էական կէտերու ամփոփումը, կրկին խնդրելով յարգելի մարմնիդ, որ բարեհաճէ շուտափոյթ կերպով կամ հերքել նամակներու ցուցած պակասութիւնները և տգէղ երևոյթները, և կամ բաւարարել նման պահանջները. հակառակ պարագային պատասխանատուութիւց ազատուելու համար վարչութիւնս պարտաւորուած՝ այս և նման գրութիւնները մամուլին յանձնելու է:

Թիֆլիսի Արևմտահայ Ոսուցչական Միութեան նախագահ՝

Անդամ քարտուղար՝

Ալէքսանդրապոլի նամակի ամփոփումը - Առաջինի առթիւ անոնք կպատմեն Վարդապետեան ազգանունով ռուսահայ ուսուցչի մը մասին, որը աշակերտներու գլուխն և ատամը կջարդէ և ի վարձ իւր այս շահատակութեան՝ աւագ ուսուցչութեան պաշտօնին կարժանանայ՝ Թիֆլիսի ուսումնական խորհրդի կողմէ: Նամակագիրը այս առթիւ կաւելացնէ, որ ամբողջ Արևմտահայ Ոսուցչական Միութեան միահամուռ հրաժարականը միայն կարող կը լինի Թիֆլիսի ուսումնական խորհրդին քննութիւն նշանակել յիշեալ ուսուցչի մասին, որոյ արդիւնքը կըլլայ ամբաստանութեանց հաստատուելը և յիշեալի ժամանակաւորապէս հեռացումը դպրոցէն:

Նման կոպիտ ընթացքի մը մէջ կը գտնուի նաև Գրիգորեան Միհրան անունով մի այլ ուսուցիչ, որը աշակերտներին պատժելու համար՝ անոնց գլուխները իրար կը զարնէ:

Որբանոց-դպրոցի մէջ վարժուիչները աւանակի զաւակ, քրդի տղայ և այլ անվայել խօսքերով կորակեն թոքային բորբոքում ստացած որբանոցի ցուրտ օդի պատճառով սասունցի որբերը, երբ անոնք չեն կրնար իրենց հազը զսպել դասի ժամանակ: Ապրուստի, անկողնի և հագուստի անկանոնու-

թեան չդիմանալով 12 որբեր փախած են գիւղերը: Գուլպայ չունենալու համար՝ Կէլէկուզանի⁶⁶ որբ Լևոնի ոտքերը մրսած և մորթագերծ եղած են: Վեցերորդ որբանոցի մէջ, երկու որբերի համար մէկ կեղտոտ վերմակ կտրուի: Անոթի ծգուած որբերը կպարտաւորուեն հաց գողնալ՝ իրենց քաղցը յագեցնելու համար:

Չորրորդ որբանոցի փոքրիկները՝ տիրող կեղտի և ոջլի շնորհիւ ամէն ամիս 15-20 քոսոտ ունենալով հիվանդանոց կղրկուին: Բոլոր որբերը երեք ամսէ ի վեր քաղանիք չեն տեսած: Ութ որբանոցը չունի մի հոգածու մարմին, այլ կկառավարուի միայն մի անհատով և այլն:

Ալեքսանդրապոլի Ուսուցիչների Միութեան Վարչութիւն

ՀԱԱ, ֆ.28, ց. 1, գ. 338, ք.18-20: Բնագիր ձեռագիր:

N 63

**ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԴԻՎԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ
ՓՈԽԹԵՍԱԿԱԼ ԽՈՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԱԼԵՔՍԱՆ-
ԴՐԱՊՈԼԻ «ՏԱՐՈՆ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄ
ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

19 ապրիլի 1917թ.
Էջմիածին

Ի հետեւումն Ձեր մարտի 30-ի թիւ 221 յայտարարութեան, Հայրապետական Դիւանս խնդրում է Ձերդ Գերապատութեանը յայտնել Ալեքսանդրապոլի Փոխանորդին ի գիտութիւն, որ արդէն Ն[որին] Սրբութեան կողմից կարգադրուած է ուղարկել Ս[ուրբ] Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի միջոցներից «Տարօն» ընկերութեանը 3000 ռուբլի:

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1311, ք. 7: Թողոն: Ձեռագիր:

**ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
 ԼՈՆԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԵՎ
 ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՀԻՄՆԱԴԻՐ ԷՍԻԼԻ
 ՌՈԲԻՆՍՈՆԻՆ ՎԵՐՋԻՆԻՍ ՕԳԵՆՈՒԹՅԱՄԲ ՊԱՀՎՈՂ
 ԱԼԵԶՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՍՍՍՈՒՆՅԻՆՆԵՐԻ ՈՐԲԱՆՈՅԻ
 ԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

2 հունիսի 1917 թ.

Թիֆլիս

Армянский Центральный комитет, свидетельствуя Вам свое почтение и выражая чувства глубокой признательности за Ваши неоценимые услуги и человеколюбие по отношению к пострадавшим от войны армянам, считает долгом сообщить Вам, что общее число беженцев, согласно произведенной Комитетом переписи, достигает около 300000. Они все расселены в Эриванской, частью Елизаветпольской, Тифлисской губерниях Карсской области и в завоеванных областях Ванского района, Алашкерта, Бассена, Хнус-Муша, Эрзрума и Эрзинджана. Материальное положение их весьма тяжелое. Лишившись всего хозяйства, многих членов семьи, экономического благосостояния, они впадают полуголодную жизнь. Пайки выдаваемые русским правительством, не хватает даже для покупки предметов первой необходимости вследствие неимоверной дороговизны, а между тем, степень нуждаемости огромная. Необходимо позаботиться о восстановлении разоренного хозяйства, постройки новых жилищ, посевной кампании. Целый ряд других вопросов ждет своего разрешения.

Сироты беженцы размещены в приютах, для них специально оборудованных, - общее число приютов достигает 52. В этих приютах дети содержатся на полном пансион, обучаются в специальной беженской школе, а взрослые из них работают на полевых работах и мастерских. Общее число детей призреваемых

мых Армянским Центральным комитетом достигает 4363. Что же касается приюта Вашего имени для 40 сасунских детей в Александрополе, то он содержится на вышеизложенных условиях, причем для детей открыты специальные мастерские для обучения сапожному, столярному и другим ремеслам, и огороднополевым работам.

С чувством искренней обязательности
Председатель Армянского Центрального Комитета

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 901, ք. 17: Պատճեն: Մեքենագիր:

N 65

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԼՈՆԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԵՎ
ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՀԻՄՆԱԴԻՐ ԷՄԻԼԻ
ՌՈՔԻՆՍՈՆԻՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՄԱՍՈՒՆՅՈՒՆԵՐԻ
ՈՐՔԱՆՈՅԻ ԴՐՈՒԹՅԱՆ, ԱՅԴ ՈՐՔԱՆՈՅԻ ՀԱՄԱՐ
ՍՏԱՅՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍԻՆ

6 հունիսի 1917 թ.

Թիֆլիս

Армянский Центральный комитет, свидетельствуя Вам свое почтение и выражая чувства глубокой признательности за Ваши неоценимые услуги и человеколюбие по отношению к пострадавшим от войны армянам, при том к сиротам нуждающимся в особенном попечении и сердечной заботливости, честь иметь сообщить Вам, что согласно Вашему желанию и поручению, с 15 января 1917 года в Александрополе содержится приют сирот, где принято 40 сасунских детей, потерявших своих родителей, а в мастерской, открытой в Дилижане, сироты других местностей учатся ремеслам.

В александропольском приюте сироты состоят из девиц и

мальчиков, они содержатся на полном пансионе, т. е. их одевают, кормят, учат в специальной беженской школе, а взрослые мальчики работают и на своем огороде. Поименный список детей с указанием их возраста при сем прилагается. Денежные средства стесняют, иначе дело еще больше можно развить, желающих учиться очень много, есть возможность ввести еще новые ремесла, нужные в Армении, но нет денег, чтобы сделать все это. Ваша помощь для нас весьма ценна.

Обращаясь к денежному отчету, считаем долгом сообщить, что на приют получено от Вас 4600 руб. и сумма эта израсходована до 15 марта сего года, при сем представляется отчет.

С чувствами искренней обязательности
Председатель Армянского Центрального комитета
Секретарь Комитета

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 901, ք. 20: Պատճեն: Մեքենագիր:

N 66

**ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱԼԵՔՍԱՆ-
ԴՐԱՊՈԼԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԼԻԱԶՈՐ ՀՈՎՍԵՓ ՄԻՐՉՈ-
ՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՄԻՏԵԻՆ՝ ՈՐԲԱՆՈՅՆԵՐԻ
ԾԱԽՍԵՐԸ ՓԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

16 հունիսի 1917թ.
Ալեքսանդրապոլ

Ստացուեց ամսոյս 8-ին Ձեր ուղարկուած հինգ հազար թուրլին, անցեալ ամսին փոխանցել էիք վեց հազար թուրլի, որ ինչպէս եւ Ձէզ յայտնեցի Թիֆլիսում, քիչ է: Ամեն մի որբը նստում է առնուազն 20 թուրլի, հետևապէս 500 որբը՝ 10000 թուրլի: Այդ պատճառով, երբ քիչ փող եք ուղարկել, պարտքերի մէջ ենք մնացել: Անցեալ անգամ Ձէզ եմ ուղարկել վեց հազար թուրլու հաշիւ: Բայց այդ հաշիւից դուրս ունեցել եմ

4000 րուբլու պարտք: Եւ այժմ Ձեր ուղարկած 5000 րուբլի փողով միայն այդ պարտքը կը ծածկուի ու մենք կմնանք դարձեալ առանց միջոցների: Այս նշանակում է, որ պիտի կրկնուի այն, ինչ որ առաջներն է եղել, այսինքս ես ձեռքի տակ չպիտի ունենամ անհրաժեշտ գումարներ պատասխանատու գործ կառավարելու համար և ստիպուած պիտի լինեմ ամեն մարդու դիմել, պարտք ուզել և մի կերպ եօլա տանել: Ես շատ և շատ կխնդրեմ, որ ինձ այս պայմանների մէջ չդնէք, կամ ինձ ազատ համարէք պաշտօնից նշանակելով մի ուրիշ մարդու, որին ես կը յանձնեմ գործը: Անցեալ ամիսներում այդպիսի պայմանները ինձ ուղղակի հիւանդացրել էին: Ես չէի ցանկանայ նոյն բարոյական տանջանքները կրել և այժմ:

Մինչև այժմ չեմ ստացել արհեստանոցի համար վաղուց որոշուած 2000 րուբլին և հասակաւոր որբերը պարսպ-սարսպ անգործ են մնացել: Նոյնպէս չի ուղարկուած մեզ Անանովյան⁶⁷ գրադարանը, որի պակասը չափազանց զգալի է:

Մեր հաշուապահական թերթերը վերջացել են, ես խնդրում եմ շուտափոյթ ուղարկէք, որպէսզի գործը կանգ չառնի:

Այսօր Ախալքալաքից այստեղ են եկել 14 որբ Ախալքալաքի Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի կարգադրութեան համաձայն: Նոյնպէս վարուել է մի քանի անգամ առաջները Ղարսի Բարեգործական ընկերութեան ճիւղը: Այսինքն առանց իմ համաձայնութեամբ ուղարկում են որբեր, որոնց տեղաւորելու ոչ մի հնարաւորութիւն ես չունեմ: Խնդրում եմ կարգադրէք, որ այսուհետև այս տեսակ վերաբերմունք ցոյց չտան ինձ, ինչ որ պէտք է անեն փոխադարձ համաձայնութեամբ անեն:

Դրա հետ միաժամանակ Ձեր ուշադրութիւնն եմ հրաւիրում մի հանգամանքի վրայ, այն է, որ վերջերս Ախալքալաքից որբեր են փախչում գալիս այստեղ: Պէտք է ստուգել, թէ ինչ է դրա պատճառը:

Կան այստեղ մարդիկ, որոնք ցանկութիւն են յայտնել որբեր որդեգրել: Արդէօք դա թոյլ է տրոււմ, թէ ոչ :

Յովսէփ Միրզոյեան

Յ. Գ. ուղարկում եմ կանանց որբանոցի անցեալ ամսուայ հաշիւները:

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 547, ք. 7: Ինքնագիր:

N 67

ՈՐԲԱՆՈՅՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՅՈՒՑԱԿ

Որբանոց	Ազգանուն անուն	պաշտօն	հայատակութիւն	ռոճիկ
I	Բաղդամեան Զաքել	կառավարչուհի	ռուսահայատակ	40
	Վարժապետեան Ազնիւ	խոհարարուհի	տաճկահայատակ	10
	Փիլոյեան Մարիամ	լւացարարուհի	ռուսահայատակ	20
II	Աբիրահամեան Սօֆիա	կառավարչուհի	ռուսահայատակ	60
	Այդինեան Մարգօ	օգնականուհի	ռուսահայատակ	35
	Խլաւեան Մ.	խոհարարուհի	տաճկահայատակ	20
	Կոշկարեան Վ.	գիշերապահ	տաճկահայատակ	15
	Բաղբամճեան Գ.	լւացարար	տաճկահայատակ	15
	Խաչատրեան Ե.	ժամանակաւոր ծառայող	տաճկահայատակ	15

III	Ափրիկեան Դշխոի	կառավարչոի	ռուսա- հայատակ	40
	Մինասեան Տիրոի	խոհարարոի	ռուսա- հայատակ	15
	Կարապետեան Մարիամ	լուսարարոի	ռուսա- հայատակ	12
IV	Մանդակունի Զարոի	կառավարչոի	տաճկա- հայատակ	85
	Մանդակունի Տիգրան	կառավարիչ	տաճկա- հայատակ	
	Թերլեմեզեան Գինո.....	խոհարարոի	տաճկա- հայատակ	20
	Գրիգորեան Խումար	գիշերապահ	տաճկա- հայատակ	15
	Զաքարեան Զարոի	լուսարար	տաճկա- հայատակ	15
	Մխիթարեան Իսկոի	սպասոի	տաճկա- հայատակ	8
	Կարապետեան Յարութիւն	ծառայ	տաճկա- հայատակ	15
V	Հազանեան Վարդոի	կառավարչոի	ռուսա- հայատակ	60
	Աճամեան Սրբոի	օգնականոի	տաճկա- հայատակ	40
	Մրտկեան Թագոի	խոհարարոի	տաճկա- հայատակ	20
	Գէորգեան Հայկանուշ	գիշերապահ	տաճկա- հայատակ	15
	Սարգսեան Ռեհան	լուսարարոի	տաճկա- հայատակ	12
	Էլքակեան Զարդուլում	լուսարարոի	ռուսա- հայատակ	20

	Սմբատեան Արամ	Ժամանակաւոր ջրկիր	տաճկա- հայատակ	15
VI	Թադինեան Արուսեակ	կառավարչութի	ռուսա- հայատակ	80
	Թադեւոսեան Վերգինէ	խոհարարութի	տաճկահայ ատակ	20
	Հարութինեան Ֆիդօ	գիշերապահ	տաճկա- հայատակ	15
	Պետրօսեան Զմօ	լւացարարութի	տաճկա- հայատակ	12
VII	Սուսաննա Մարաքեան	կառավարչութի	ռուսա- հայատակ	80
	Ոսկանեան Մաքրութի	խոհարարութի	ռուսա- հայատակ	25
	Բարադամեան Զարութի	գիշերապահ	տաճկա- հայատակ	15
	Մարաքեան Զանազան	լւացարարութի	տաճկա- հայատակ	15
	Կուզիկեան Ազնիւ	լւացարարութի	տաճկա- հայատակ	15
VIII	Կիրակոսեան Երանուի	կառավարչութի	ռուսա- հայատակ	80
	Ղազարեան Մարիամ	գիշերապահ	ռուսա- հայատակ	20
	Գրիգորեան Գարուն	լւացարարութի	ռուսա- հայատակ	20
	Խեչիկեան Հ.	խոհարարութի	ռուսա- հայատակ	20
	Աւետիսեան Ա.	գիշերապահ	տաճկա- հայատակ	20
	Մահտեսեան Յ.	ծառայ	տաճկա- հայատակ	15

	Դաթեան Եփրեմ	ծառայ	տաճկա- հայատակ	25
	Նահապետեան Սալի	լազարար	տաճկա- հայատակ	20

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 547, ք. 15-16:Բնագիր:Ձեռագիր:

N 68

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ
ԿՈՍԽՏԵԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՎՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ
ԿՈՍԽՏԵԻ ՆՈՐ ԿԱԶՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

24 յունիսի 1917 թ.
Ալեքսանդրապոլ

Կոմիտէս պատիւ ունի յայտնելու Նորին Վեհափառութեանը, որ Աղէքսանդրապոլի Եղբայրական օգնութեան կոմիտէի նոր կազմը ընտրուած է յունիսի սկզբներին և բաղկացած է 10 անդամից, որից հինգը ռուսահայ է, իսկ հինգը՝ տաճկահայ:

Ռուսահայ անդամները հետևեալներն են.

1. Նիկողայոս Կիրակոսեան, նախագահ, Յարութիւն Ստեփանեան, Սիմոն Տէր-Գրիգորեան, Տիգրան Սմբատեան, Խաչատուր Բսահակեան (գանձապահ):

Տաճկահայ անդամներն են՝ Կնեազ Փորիկեան, Գալուստ Էֆենդի Սարտիրոսեան, Եղիշէ Պետրոսեան, Գէորգ Տէր-Սարգսեան, Յակոբ Մխիթարեան:

Նախագահ՝ Նիկողայոս Կիրակոսեան
Քարտուղար

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1311, ք. 19: Բնագիր: Ձեռագիր:

**ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱԼԵՔՍԱՆ-
ԴՐԱՊՈԼԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԼԻԱԶՈՐ ՀՈՎՍԵՓ ՄԻՐԶՈ-
ՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՄԻՏԵԻՆ՝ ԱԼԵՔՍԱՆԴՐԱ-
ՊՈԼՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՐԲԱՆՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

2 օգոստոսի 1917 թ.

Ալեքսանդրապոլ

Ստացայ Ձեր օգոստոսի 4-ի գրութիւնը և մանուֆակտուրային ապրանքների հաշիւները:

Արդէն կազմուած և ուղարկուած է Ձեզ յունիս և յուլիս ամիսների հաշիւը, որը մնում է մտցնել օգոստոսի հաշիւների մեջ:

Այս գրութեամբ ուղարկում են Ձեզ 14 տարեկանից սկսած բարձր հասակ ունեցող որբ երեխաների անուանացուցակը: Այդ որբերին մենք զատել ենք և տեղափոխել մի որբանոցում և մտածում ենք արհեստներ սովորեցնել: Որբանոցներում կան նաև 14 տարեկան և աւել հասակ ունեցող աղջիկներ: Խնդրում ենք կարգադրել կթոյլատրու՞ի նրանց տալ տարբեր ընտանիքներում աշխատելու, թէ ոչ:

Կոմիտէի 8-րդ որբանոցը, որը զուտ քոստո-քաչալներին է յատկացրած, ուր պարբերաբար լինում են 60-70 հոգի ու ենթակայ են միայն կառավարչի և օգնականի հսկողութեան և չունեն ոչ մի զբաղմունք, որով և անկարգութիւնների տեղիք է տրուում: Անհրաժեշտ է մտածել նրանց զբաղեցնելու մի որևէ բանով, թեկուզ ուղարկել որոշ զբաղմունքի նիւթեր և կամ մի ուսուցիչ, որ զբաղեցնի նրանց: Որբանոցը զատուած է և ոչ մի առնչութիւն չունի միւս որբանոցների հետ:

Ամիսներ առաջ գրել էի, որ մանկապարտեզի որբանոցի համար հարկաւոր է մի ցենզաւոր ուսուցչուհի, բայց ցարդ և ոչ մի կարգադրութիւն չէ տրուած, ուստի խնդրում եմ այդ տեղից ուղարկէք կամ իմաց տուէք այստեղ յայտարարել յարմարին վարձել:

7-րդ որբանոցի համար անհրաժեշտ է մի հմուտ կառավարչուհի, ուր կան 70-80 որբեր՝ 8-13 տարեկան:

Մեր որբանոցներից մէկը դարձրինք զուտ սասունցիների, ուր տեղադրուած են 40 հոգի, 8-12 տարեկան տղաներ և հաստատեցինք ըստ Ձեր կարգադրութեան, «Ռոբինզոն»,⁶⁸ որի անուանացուցակը ուղարկում ենք սոյն գրութեան հետ, իսկ լուսանկարները կուղարկեմ, երբ նկարիչը պատրաստէ:

4-րդ որբանոցի կառավարիչ Տիգրան Մանդակունին մի բողոք էր ուղարկել Ձեզ տեղիս որբանոցի պահեստի կառավարիչ պ. Գ. Մարտիրոսեանի դէմ: Պ[արոն] Շարաֆեանի կարգադրութեամբ տեղումս կայացավ ընկերական դատ, որով պարզուեց, որ պ. Մանդակունին գրպարտողի դերումն է եղել և ոչ մի ճշմարտութիւն չի եղել իր բողոքի մէջ, ու դատավարութեան յաջորդ օրը որբանոցը առանց պաշտօնական յայտարարութեան թողել զաղտնի հեռացել է տեղից կնոջ հետ, չնայած որոշուել էր կնոջը տեղադրել 7-րդ որբանոցում և իրեն Մանդակունուն ազատ համարել:

Երկու ամիս առաջ գրել էի Ձեզ, որ անհրաժեշտ է ձմեռային պատրաստութիւններ տեսնել, որպէսզի ձմեռը հնարատրութիւն ունենանք 8 որբանոցներ 500 երեխաներով սոված չթողնել, բայց ցարդ և ոչ մի պատասխան չկայ, ուստի մի անգամ էլ գալիս եմ յիշեցնելու, որ շտապէք քանի ուշ չէ դեռ, ուղարկէք 10-ից 15 հազար թուրքի, որ հետզհետէ դուրս կգար հաշիվներից և մեզ էլ հնարատրութիւն կտաք ձմեռը անել դրութեան մէջ չընկնելու:

2-3 ամիս է գործում է մեր չուստերի արհեստանոցը և տալիս է շոշափելի արդիւնք, բայց մինչև օրս ոչ մի կոպէկ չէք ուղարկել: Այդ առթիւ էլ 5000 թուրքի ուղարկէք, որ կաշի առնէք, որովհետև կարող է սպառուել, իսկ թանկանալը ինքնին հասկանալի է:

Փութը հրաշալի է, և օրական 25 փութ մաքուր ու լաւ հաց է մատակարարում մեր որբերին:

Իմ անհատական ջանքերով բացել եմ կազմատուն արհեստանոց: Խնդրում եմ աջակցէք ուղարկէք կարդօն, որով-

հետև Վարազդատը չի կարողացել գնել ու ուղարկել, չնայած մեր քաղաքի տպագրիչ Ափինեանը գնել է ու բերել մօտ 30 հատ, փուտը 11 բուրլով:

Բարի եղէք կարդօն և այլ իրեր ուղարկէք:

Մի գրութեամբ էլ դիմել եմ դպրոցական յանձնաժողովին և խնդրել, որ շտապէ որոշ ու պարզ կարգադրութիւններ անէ դպրոցական խնդրի առթիւ, կը խնդրէի Դուք ևս շտապեցնէիք, որովհետև տարին մօտ է սկսուելու:

Անցեալներում գրել էի Ձեզ, որ յայտնէիք Ախալքալաքի և Դարսի վարչութիւններին առանց ինձ հարցնելու որբեր չուղարկեն, բայց և այնպէս շարունակում եմ ուղարկել: Մեզնում առանց այն էլ տեղ չկա: Վերջերս մի տեսակ հոսք է սկսուել Ախալքալաքից: Իսկ թէ ինչով բացատրել դա, թողնում եմ Ձեզ քննութիւն առնելու: Սոյն ամսի օգոստոսի մէկին ուղարկուած է Ձեզ յունիս և յուլիս ամիսների հաշիւը: Խնդրում ենք անմիջապէս փող տեղափոխէք, մենք դեռ չենք ստացել որբանոցի յուլիս և օգոստոս ամիսների դրամը:

Հաշիւների բացը ևս կը խնդրէինք անմիջապէս տեղափոխել:

Յարգանք՝ Յովսէփ Միրզոյեան

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 547, ք. 4-5: Ինքնագիր:

N 70

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԱՐԻՉ ՀՈՎՍԵՓ ՄԻՐԶՈՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ի. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

6 օգոստոսի 1917թ.
Ալեքսանդրապոլ

Դեռ մայիս ամսին Ձեզ յայտնել էի դպրոցի շէնքի մասին: Սակայն մինչ օրս և ոչ մի կարգադրութիւն չի եղել, չնայած երկու շաբաթ է մնացել դպրոցական տարին սկսուելուն:

Վերստին գալիս են շեշտելու, որ այս ուսումնական տարում որբերի համար շենք չենք կարող ունենալ, քանի որ մինչև օրս գործի չենք անցել: Իսկ գտնել մի ուրիշ շենք դա ևս մեծ դժուարությունների կհանդիպենք:

Հին շենքը, որը վարձուած էր արհեստանոցի համար, բայց ուշ լինելու պատճառով նորից վերածուեց դպրոցի, իսկ այս տարի դժուար է այստեղ պարապելը, որովհետև մութն է ու խոնավ և որ գլխատրն է տարին էլ լրանում է: Այս տարի որբերի համար, եթե դպրոց պիտի վարձենք, ապա ուրեմն շտապէք այդ ուղղութեամբ կարգադրութիւն անել և դրամին չխնայել:

Ինչ վերաբերում է այն խնդրին, թէ ճաշից յետոյ կարելի է միւս դպրոցներում պարապել, դա ևս դժուարութիւնների և անյարմարութիւնների հետ է կապուած:

Այդ ուղղութեամբ էլ պիտի աշխատել և շտապեցնել, որպէսզի 350 որբերի համար հնարատրութիւն ունենանք մի տեղ գտնելու, քանի դեռ այլ հիմնարկութիւններ չեն օգտագործել եղած շենքերը:

Նստարանները վերցուած են հարկան դպրոցներից, որոնք կարող են յետ պահանջել, այդ առիթով պիտի մտածել:

Անենից հրատապ խնդիրներից մէկն էլ ուսուցչութեան խնդիրն է, որը մինչև օրս անորոշ է:

Ամիջապէս գրէք և յայտնէք՝ կազմը այստեղ պիտի կազմուի, թէ Դուք պիտի առաջարկէք: Եթէ այստեղ պիտի կազմուի խումբը, ապա արդէն պայմանների մասին պարզ և որոշ յայտնէք:

Ի միջի այլոց կասեմ այսքանը՝ ամառային կրկնողական դասընթացի ընթացքում եկայ այն եզրակացութեան, որ գաղթական ուսուցիչները մեծ մասամբ անտեղեակ են մանկավարժութիւնից և պարապման մեթոդից: Նրանք մեր դպրոցներում անկարող են պաշտօնավարել: Իմ դիմումիս և գրաւոր խնդրիս ուսուցչական կազմի նպաստի խնդրում յանձն առաք նպաստել, բայց ոչ մի տեղեկութիւն չկայ, յուսով եմ կաշխատէք և ամեն կերպ կուղարկէք գոնէ մի ամսուայ նպա-

ստը: Ի նկատի ունեցէք մեր ուսուցիչները բաւարարուել են շատ չնչին ռոճիկով և չեն ստացել և ոչ մի կոպէկի նպաստ: Անհամբեր սպասում եմ պատասխանի:

Յովսէփ Միգոյեան

ՀԱԱ, ֆ. 28. ց. 1, գ. 338, ք. 7: Ինքնագիր:

N 71

**«ՏԱՐՈՆ-ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԽՈՍՔԸ ԳԵՎՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ**

16 սեպտեմբերի 1917 թ.

Ալեքսանդրապոլ

«Տարօն-Տուրութեան» հայրենակցական միութեան Ալեքսանդրապոլի մէջ գումարուած համագումարը, լսելով վարչութեան զեկուցումը և հաստ ըլլալով Նորին Վեհափառութեան՝ միութեանս բացած արհեստանոցներու համար՝ շնորհած օրհնութեան աջակցութեան, յոտընկայս կը յայտնէ իր որդիական շնորհակալութիւնը, երախտագիտութիւնը, խնդրելով՝ որ նորին Սուրբ Օծութիւնը, բարեհաճէ իր ուշադրութեան արժանի պահել զայն յանուն տարաբախտ հասարակութեան մը:

Պատիւ ունենք յայտնելու, որ շուտով պիտի ներկայացուի Սուրբ Օծութեանդ Միութեան տեղեկագիրը:

Որդիական խորին ակնածանօք

ի համբոյր Օծեալ Աջոյն Նորին Սրբութեան

Նախագահ՝ Մեսրոպ Կազարեան

քարտուղար՝ Մեղրակ Խալոյեան

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1311, ք. 20: Բնագիր: Ձեռագիր:

N 72

ԵՂԱՅԵՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ

**ԿՈՍԻՏԵԻ ՎԿԱՅԱԿԱՆԸ ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՎ
ԶԲԱՂՎՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉՆԵՐԻՆ**

18 սեպտեմբերի 1917թ.
Ալեքսանդրապոլ

Եղբայրական Օգնության նախաձեռնութեամբ գաղթականական գործով զբաղուող հաստատութիւնների ներկայացուցիչները ընտրելով պ.պ. Ս. Տէր-Գրիգորեանին և Սմբատ Բորոյեանին լիազօրեցին նրանց գնալ Ս. Էջմիածին, ներկայանալ Նորին Վեհափառութեանը խնդրել ա) որ Վեհափառութիւնը բարեհաճէ կարգադրել տալ իր Բարձր հովանաւորութեան տակ եղած գումարներից մի զգալի գումար գաղթականութեան մերկութիւնը և այլ անյետաձգելի կարիքները բաւարարելու Բ. ստանալ Նորին Վեհափառութիւնից կոնդակ Չաւէն եպիկոպոսի գլխաւորութեամբ մեկնելու Կովկասի և Ռուսաստանի հայաշատ վայրերը գաղթականութեան օգտին նուիրաբերութիւններ հաւաքելու:

Խառն ժողովը որոշեց նաև գաղթականութեան ծանր վիճակի մասին տալ Վեհափառին մի գրաւոր յայտարարութիւն:

Ի. տ. նախագահ՝ Յակոբ Մխիթարեան
Ի. տ. քարտուղարի՝

ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1311, ք. 21: Բնագիր: Ձեռագիր:

N 73

ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ Ս. ՏԵՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԵՎ Ս. ԲՈՐՈՅԱՆԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ ԳԵՎՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՅՈՒՅՅ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

20 սեպտեմբեր 1917թ.

1914 թ. հոկտեմբերի 31-ին կազմուել է Ալեքսանդրապոլում Ձերդ Վեհափառութեան Բարձր հովանաւորութեան ներքոյ Եղբայրական Օգնութեան Կոմիտէ: Հետագայում կեանքի պահանջողական կարիքները հարկադրեցին երևան գալ նաև մի շարք այլ գաղթականական ցաւին օժանդակող հաստատութիւններ, որոնք միահամուռ կերպով տարել են և աշխատում են տանել գաղթականական գործը իր ամբողջութեամբ:

Զանի դեռ նոր էր գաղթականական հոսանքը, զգայուն էր սիրտը Կովկասի ազգաբնակչութեան և մասնաւորապէս հայութեան սիրտը դէպի եղբայրական օգնութեան վեհ գործը: Բայց օրաուր աճող տնտեսական անասելի քայքայումը և ճգնաժամը նսեմացրեց եղբայրական օգնութեան գաղափարը և ժողովրդի աչքում նուազեց գաղթականութեանն օգնելու հմայքը:

Ահա այս հանգամանքը պատճառ դարձաւ հետզհետէ ինքնաբերաբար կատարուած նուիրատւութիւնների նուազեցման և վերջերս էլ գրեթէ այլևս ոչ մի նուիրատւութիւն տեղի չի ունեցել:

Թրական տունակների մի փոքր տախտակով մօտաւորապէս կկամենայինք Նորին Սուրբ Օծութեանդ գծագրել այն ծով կարիքը, այն թշուառ անել կացութիւնը, որի մէջ է գտնուում ներկայումս գաղթականութիւնը:

Ալեքսանդրապոլի շրջանը իր գործունէութեան օրից սկսած մինչև օրս հիւրընկալել է և նիւթական օժանդակութիւն է հասցրել մօտ 85-95 հազար գաղթականի, դրանց մեծ մասը եկել է և հոսող գետի նման անցել գնացել, գաղթականութիւնը միշտ շրջում է, ինչպէս հոսող ջուր, բայց մօտ մի տարի է, որ մեզանում համարեայ թէ անփոփոխ ապրում է մշտապէս 25754 գաղթական, թեպէտև նորից սկսուել է գալ գաղթականական նոր հոսանք երկրից և Կովկասի զանազան վայրերից:

Այստեղ ապաստանած գաղթականությունը բացառապես Տաճկաստանի տղբատ ու ծայր չքաւորութեան հասած գիւղացիութեան բեկորներն են: 25754 գաղթականությունը ըստ հասակի և սեռի բաժանում է այսպէս. 1358 հոգի՝ 1-4 տարեկան երեխաներ, 2873 հոգի՝ 5-14 տարեկան մատաղահասակներ և անչափահասներ, 963 ծեր կանայք և տղամարդիկ, իսկ ըստ սեռի այսպէս է բաժանում ամբողջ գաղթականությունը՝ 11421 կին, 14333՝ տղամարդ, դպրոցական հասակ ունեցողների թիւը հասնում է մօտ 2300-ի: Բացի 25754 գաղթականներից որոնց խնամքը յանձնուած է ամբողջովին Եղբայրական օգնութեանը, կան բազմաթիւ գաղթական որբեր, որոնք զետեղուած են Մոսկւայի Հայոց կոմիտէի և Հայոց Բարեգործական Ընկերութեան որբանոցներում:

Թէ՛ Եղբայրական օգնութեան կոմիտէի և թէ՛ միւս գաղթականական հաստատությունների ամենազլխաւոր եկամուտը կազմում է պետական նպաստը, օժանդակությունը նուիրատուությունները բաւական մեծ տեղ են բռնում Եղբայրական Օգնութեան ծախքերի մէջ, մնացած հաստատությունների մէջ այնքան էլ խոշոր գումարների չեն հասնում, ուստի մեր պարտքն ենք համարում միմիայն գուզընթաց տախտակով պատկերացնել Եղբայրական Օգնութեան կոմիտէի ստացած պետական նպաստի և մասնաւոր նուիրաբերությունների աստիճանական զարգացումը և նուագումը:

Ալէքսանդրապոլի Եղբայրական օգնութեան կոմիտէն սկսած 1914 թուից մինչև 1917 թիւը ստացել է հետևեալ քանակի նպաստ և նուիրաբերություն

1914 թ. 5000 նպաստ 6444-47 նուիրաբերություն

1915 թ. 338647-50 նպաստ 100168-50 նուիրաբերություն

1916 թ. 989485 նպաստ 86195-76 նուիրաբերություն

1917 թ. 681376.75 նպաստ 9726-88 նուիրաբերություն

Ներկայումս կարիքը ծովացել է, պետական նպաստը քանկութեան հետ համեմատած շատ սակաւ է, գաղթականությունը մեծ ճգնաժամի մէջ է: Այս ամենը հարկադրում է Ալէքսանդրապոլի գաղթականական գործով զբաղուող մար-

միններին խոնարհաբար խնդրել Ձերդ Վեհափառութեան Բարձր քարեհաճութիւնից տնօրինել տալու Ձերդ Սուրբ Օծութեան հովանաւորութեան տակ եղած դրամներից մի զգալի գումար Եղբայրական Օգնութեան և միւս հաստատութիւններին, որպէսզի գէթ կարելի լինի ամենանուագագոյն չափերով գաղթականութեան մերկութիւնը ծածկել, ըստ սմին պատգամաւորութիւնս ամենախոնարհաբար խնդրում է Ձերդ Վեհափառութիւնից հրամայել պատրաստելու մի սրբական կոնդակ, որով գաղթականութեան պատգամաւորութիւնը մի եպիսկոպոսի գլխաւորութեամբ մեկնի Կովկասի և Ռուսաստանի հայաշատ վայրերը, կոչ անել հարուստ և ունեւոր դասակարգին օգնութեան հասնել սրից և հրից ազատուած տաճկահայ վերջին բեկորներին:

Մատչելով ի համբոյր Սրբազնակատար աջոյն
Ամենախոնարհ որդի՝ Սմբատ

Մակագրոյթյուն. Յանձնում ենք Եղբ. Յգնութեան Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովի նախագահ Տ. Զաւէն եպիսկոպոսին ի մօտոց ընդի. ժողով գումարել և խնդիրը քննութեան առնելով, եզրակացութիւնը մատուցանել Մեզ ի վերջնական տնօրինութիւն: 1917 սեպտ. 21. ի Ս. Էջմիածինն: Գէորգ Ե. Կաթողիկոս ամենայն Հայոց

ՀԱԱ, ֆ. 57, ց.2, գ. 1311, ք. 23-24: Բնագիր ձեռագիր:

N 74

ՄԱՍՈՒՆՑԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՎԻՃԱԿԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԱՐՏԱԿ
ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԻՐԵՆՅ ՕԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

21 սեպտեմբերի 1917թ.
Ալեքսանդրապոլ

Գերապատիւ Ս[ուրբ] հայր,

Տասնեակ տարիներով թուրքական գույումները կրեցինք, աւելորդ կը յամարենք կրկին յիշեցնել 1915 թ. կոտորածին 9 ամիս շարունակ բնդանոթների ռումբեր և փամփուշտների գնդակներ տեղալով մեր գլխին, բոլորովին կորսնցուցինք մեր գոյութիւնը: Այնպէս, որ վերջին ամիսների սովին ստիպուած կոտորեցինք մեր անասունները և ատոնց մսով կերակրուեցինք: Ներկայիս ափ մը փշրանք ստացած կապրինք Ձեր Ս[ուրբ] հայրութեան հովանաւորութեան ներքոյ:

Մենք, սասունցիներս Ալաշկերտի, Բուլանդի, Մանազկերտի փախստականների նման չունինք մալ, վարուցանք, նրանց մեծամասնութիւնը կապրին իրենց հայրենիք: Բացի վարուցանքի առատ հունձից, սոյն տեղը իւրաքանչիւր անձ կստանայ ամիսը մէկ փութ ալիւր: Իսկ մենք զուրկ հայրենիքից և ամեն ինչից, անտանելի վիճակի ենթարկուած ենք:

Ս[ուրբ] հայր, նկատի առէք, որ ճիշտ կոտորածի ժամանակուայ աստիճանի հասել ենք: Եթէ օգնութիւնը մօտ օրերս չհասնի մեզ (փող և ալիւր) վստահ եղէք, որ Սասնո կոտորածի դրութիւնը պէտք է տիրէ մեզ վրայ: Ներեցէք մեր համարձակութեանը, որ ստիպուած ուր որ հասնինք սոված գայլերի պէս կը փճացնենք մեզ և ուրիշներին, որովհետև ճարահատ ենք:

Կը խնդրենք մի հիմնական ճար ու դարման մը փութացէք մեզ շատ շուտ, ձեռք կառկառէք սասունցի բեկորներուս, բարեհաճեցէք դիմել ուր որ հարկն է: Լիայոյս ենք մեր թախանձանքները լսելի պիտի ըլլան և յարկ եղածը առանց ժամանակ անցնելու պիտի կարգադրէք:

Մնանք Ձեզ խոնարհ որդիք և համբոյրենք Սուրբ աջդ ի դիմաց Սասնո փախստականութեան՝

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 637, ք. 11: Բնագիր ձեռագիր:

N 75

ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԹԻՖԼԻՍԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ

ՍԱՍՈՒՆՑԻՆԵՐԻ ԾԱՆՐ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

22 սեպտեմբերի 1917թ.

Ալեքսանդրապոլ

Գրութեանս հետ ուղարկում եմ վիճակիս գիտերում տեղա-
տրուած սասունցիների ներկայացուցիչների խնդրագիրը⁶⁹,
որով նկարագրում եմ այն ծանր կացութիւնը, որի մէջ իրենք
գտնում են:

Պէտք է աւելացնեն, որ իրոք նպաստների ուշանալը և
ալիւր չգտնելը քաղաքումս, սասունցիներին յատկապէս ձգել
է սովի ճիրանների մէջ: Սոսկալի է նրանց դրութիւնը, ամե-
նայն օր թափւում են յԱռաջնորդարան, աղերսում կամ հաց
տալ, կամ կոտորել իրենց ու վերջացնել: Մարդ չի կարո-
ղանում անտարբեր լսել այդ թշուռների արտասուախառն
աղերսները:

Այս բոլորն աչքի առաջ ունենալով, ես դիմում եմ մե-
ծարգոյ կոմիտէիդ և յատկապէս սասունցիների վրայ հրաւի-
րում դորա ուշադրութիւնը: Անհրաժեշտ է վաղօրոք մտածել և
քանի ձմեռը չի եկել սասունցիներին սովի բերանից ազատել:

Փոխանորդ՝ Արտակ վարդապետ

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 637, ք. 13: Ինքնագիր:

N 76

**ԷԶՄԻԱԾՆԻ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ
ԿԱՐԳԱԴՐԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԶԱՎԵՆ
ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՎՈՐԳ Ե
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ**

23 սեպտեմբերի 1917թ.

Ս. Էջմիածին

Ամենախոնարհ յայտարարութիւն թիվ 1583 մակագրական հրամանի, որով պատուիրում էր Ալեքսանդրապոլի գաղթական գործերով զբաղուող հաստատութիւնների պատգամատրների ամսոյս 20-ի ամենախոնարհ յայտարարութեան բովանդակութիւնը Եղբայրական Օգնութեան գլխատը կարգադրիչ յանձնաժողովի խորհրդածութեան դնել և արդիւնքը ներկայացնել Չերդ Ս[ուրբ] Օծութեան տնօրինութեանը, սորա հետ շնորհ ունենալ ամենախոնարհաբար ներկայացնել Չերդ Վեհափառութեանը մակագրուած յայտարարութիւնը և այդ առթիւ Երևանի Առաջնորդարանում ամսոյս 21-ին իմ նախագահութեամբ կայացած Եղբայրական օգնութեան գլխատը կարգադրիչ յանձնաժողովի արձանագրութիւնը ի բարեհաճ տնօրինութիւն:

Եղբայրական Օգնութեան գլխատը կարգադրիչ յանձնաժողովի նախագահ՝ Զաւէն Եպիսկոպոս

Արձանագրութիւն

Նորին Վեհափառութեան Դիւանի 7 սեպտեմբերի թիւ 1580 մակագրութեան հրամանի համաձայն, որ ի հետևումն յայտարարութեան Ալեքսանդրապոլի գաղթականութեան ներկայացուցիչ Սմբատ Բորոյեանի, որով խնդրում է արտագնայ կարգի նպաստ Ալեքսանդրապոլի գաղթականութեան: Ամսոյս 21-ին Երևանի առաջնորդական դահլիճում կայացաւ երեսնեան Եղբայրական Օգնութեան գլխավոր կարգադրիչ յանձնաժողովի նիստը նախագահութեամբ տ. տ. Զաւէն Եպիսկոպոսի, Խորէն և Տիրայր Եպիսկոպոսների, պ. պ. Գրիգոր Տէր Խաչատրեանի և Գէորգ Ամիրեանի:

Ժողովը քննութեան առնելով խնդիրը, մտքերի փոխանակութիւնից յետոյ, եկաւ հետևեալ եզրակացութեան.

ի նկատի առնելով այն հանգամանքը, որ այն կարիքները, ինչ որ յիշուած են յայտարարութեան մէջ շատ մեծ են, ի նկատի առնելով, որ այդպիսի կարիքի մէջ գտնուում են շրջապատի ընդհանուր գաղթականութիւնը, ի նկատի առնելով և այն հանգամանքը, որ Եղբայրական Օգնութեան միւս հաս-

տատութիւնները միայն պետական նպաստով պահելը անհնար է, մինչդեռ այդ հաստատութիւնները Եղբայրական Օգնութեան ամենակարևոր հաստատութիւններից են, որ շարունակ մեծ խնամքի կարոտ են, և որ գլխաւոր խորհրդի կայացրած որոշման համաձայն Եղբայրական Օգնութեան կոմիտէին է յանձնուած վերաշինութեան գործը, որը ահագին գործ է, նաև այն հանգամանքը, որ Կենդրոնական Խորհուրդը իրեն է վերապահել գաղթականներին խնամելու ամբողջ հոգսը, և որ գլխաւոր Եղբայրական Օգնութեան կարգադրիչ յանձնաժողովի տրամադրութեան ներքոյ չկայ այդպիսի խոշոր գումարներ, որ հնարաւոր լինի գոհացում տալու ինչպէս յիշեցինք ընդհանուր գաղթականութեանը ևս:

Եւ որովհետև նուիրատութիւնները գրեթէ դադարել են, այնուամենայնիւ ժողովը ծայների մեծամասնութեամբ որոշեց տալ հինգ հազար րուբլի բաժանելու ամենակարոտեալներին:

Իսկ ինչ վերաբերում է ժողովարարութեան խնդրին և Նոբին Վեհափառութեան կողմից յատուկ անձերի առաքելութեանը, ժողովը կարծում է, որ եթէ առաքելութիւնը դիմի, պէտք է դիմի յանուն Վեհափառ Հայրապետի և գոյացած գումարը մտնելու է Ս. Էջմիածնի կենդրոնական գանձարանը՝ յօգուտ ընդհանուր գաղթականութեան վերաշինութեան գործին:

Նախագահ ժողովի՝ Զաւէն եպիսկոպոս
Ժողովականներ՝

ՀԱԱ, ֆ. 57, ց.2, գ. 1311, ք. 25-26: Բնագիր ձեռագիր:

N 77

**ԵՂԵԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ
ԿՈՄԻՏԵԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ԲԱՐԳՈՐԾԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԲՈՂՈՔՆԵՐԻ
ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

29 սեպտեմբերի 1917թ.

Ստանալով Ղազարապատ, Սվանվերդի, Տաշլանդշլադ գիւղերի գաղթականութեան գրաւոր բողոքները⁷⁰ կոմիտէս պարտք է համարում վկայել մի անգամ ևս, որ իրոք գաղթականութիւնը ալիւր ու այլ մթերքներ չստանալու պատճառով գտնուում է վերին աստիճանի անել վիճակի մէջ: Այս մասին շատ անգամ գրուած է տեղիս պահեստի և Կովկասի ընդհանուր լիազօր Բիչին, բայց ոչ մի դրական հետևանք չի ունեցել կոմիտէի դիմումը: Անել դրութիւնը շարունակուում է: Դրութիւնը խիստ յուսահատ է: Այս վկայականը տրուում է Սվանվերդի, Ղազարապատ, Տաշլանդշլադ գաղթականութեան ներկայացուցիչներին ներկայացնելու Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեանը:

Կոմիտէի գործերի կառավարիչ
Ի տ քարտուղարի

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 637, ք. 15: Բնագիր ձեռագիր:

N 78

**ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԴԻՎԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԷՋՄԻԱՇՆԻ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ՝
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

2 հոկտեմբերի 1917թ.
Էջմիածին

Ն[որին] Ս[ուրբ] Օծութիւնն ստանալով յանձնաժողովիդ սեպտեմբերի 23-ի թիւ 1303 յայտարարութեամբ կայացրած Գլխաւոր Կարգադրիչ Յանձնաժողովի արձանագրութիւնն և ի նկատի ունենալով Ալեքսանդրապոլի գաւառի գաղթականների թշուառ դրութիւնը՝ բարեհաճեց պատուիրել Դիւանիս յանձնարարել յանձնաժողովիդ փոխադրել Ալեքսան-

դրապուղի Եդրայրական օգնութեան յանձնաժողովի անունով գաղթականների կարիքների համար իբրև միանուագ օգնութիւն տաս հազար (10000) թուրլի:

ՀԱԱ, ֆ. 57, ց.2, գ. 1311, ք. 27: Թողոն: Չեռագիր:

N 79

**ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԼՈՆԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԵՎ ՓԱԽՍՏԱ-
ԿԱՆՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՀԻՄՆԱԴԻՐ ԷՄԻԼԻ ՌՈԲԻՆՍՈՆ-
ՆԻՆ՝ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

5 հոկտեմբերի 1917 թ.
Թիֆլիս

Армянский Центральный комитет, выражая Вам свою глубокую благодарность за ваше человеколюбивое отношение к обездоленным ныне несчастным беженцам армянам, считает приятным своим долгом довести до Вашего сведения, что приют для 40 сирот беженцев в Александрополе, оборудованный с 15 января с. г. и содержимый на средства Вашего Комитета находится в хорошем положении, все дети здоровы, обучаются в школах, а некоторые из них посещают мастерские, где обучаются различным ремеслам.

За сим Комитет считает любезной своей обязанностью сообщить, что Вами присланные суммы получены Комитетам, израсходованны, согласно Вашим указаниям Армянским Центральным комитетам получены следующие суммы:

Ноября 9	Получено.....	6200 р.
-,,- 9	-,,-	3200 р.
-,,- 9	-,,-	1550 р.
Декабря 19	-,,-	4650 р.
Января 17	-,,-	8225 р.
Февраля 17	-,,-	2482 р.

Апреля 13	-,,-	6660 р.
-,,- 15	-,,-	3320 р.
Июня 11	-,,-	5125 р.

Итого..... 41412 руб.

Из коих Комитетом израсходованы:

На Делиж[анскую] маст[ерскую]	
д[ля] беж[енских] детей.....	6200 р.
Передано Эрив[анскому]. Жен. Комит[ету]...	3200 р.
Маст[ерская] Ван[ских] беж[енцев] для	
произ[водства] сереб[ряных] издел[ий].....	1550 р.
Переданы в пользу беженцев Эрзрума и Эрзинджана	3225 р.
На Делижанские мастерские.....	2482 р.
На приют в Александрополь.....	4650 р.
На Делижанс[кие] маст[ерские]	3600 р.
Передано васпураканским женщинам	3320 р.
Передано г-же Хримян и Сафарян	2125 р.
передано в приюты Александрополя	3000 р.

Итого..... 41412 руб.

Таким образом, полученные суммы распределены:

Для передачи разн[ым] лицам и учреждениям ...	18420 р.
На мастерск[ие] в Делижане	12342 р.
На приют имени Робинсона.....	10650 р.

Итого..... 41412 руб.

Отчет расходам на приют:

На оборудование 40 сирот по 40 р.	1600 р.
На содержание 40 сир. По 25 р. в месяц/ т. е. по	1000 р.

В месяц/ начиная с 15 января 1917 г. По 15 октября	
За 9 месяцев.....	9000 р.

Итого..... 10600 руб.

Всего 10650 р.

Далее Комитет при сем препровождает Вам фотографическую карточку 40 сирот сасунцев приюта Вашего имени.

С чувством искренней обязательности

Председатель Армянского Центрального Комитета

ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 901, ք. 2: Պատճեն: մեքենագիր:

N 80

**ԱՆԵԶՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՇՐՋԱՆԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ
ԳՈՐԾՈՎ ՋԲԱՂՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐ-
ՊՈԽԾՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉՆԵՐԻ ԳՐՈՒ-
ԹՅՈՒՆԸ ԳԵՎՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ**

4 նոյեմբերի 1917 թ.

Էջմիածին

Նորին Վեհափառութեան Տ. Տ. Գէորգ Ե Կաթողիկոսին
Ամենայն Հայոց

Ալեքսանդրապոլի շրջանի գաղթականական գործերով
գրադուող հաստատութիւնների պատգամաւորներ Նիկողա-
յոս Կիրակոսեանից, Մատթևոս Տէր-Սկրտչեանից և Սմբատ
Բորոյեանից

Ամենախոնարհ խնդիր

Մեր շրջանում գտնուում է ներկայումս 25100 գաղթական -
բացառապէս ամենաաղքատ տարրից: Գաղթականութեան
ճնշող մեծամասնութիւնը կանայք են: Աշխատող ոյժերը 15%-
ից պակաս են: Ալեքսանդրապոլի շրջանը ինքը այս տարուայ
երաշտի պատճառով մատնուել է ծայրահեղ աղքատութեան:
Ահա այս հանգամանքը ևս մէծ չափով սաստկացնում է
գաղթականութեան նիւթական վիճակը և ներկայումս ճգնա-

Ժամի մէջ է ամբողջ գաղթականական մասսան անխտիր: Հարկադրուած սովից գաղթականութիւնը ամէն օր շրջապատում է Եղբայրական Օգնութեան գրասենեակը և պահանջում է կամ անմիջական օգնութիւն կամ եղբայրական մահ: Գաղթականութեան պահանջմամբ և հարկադրութեամբ մենք եկել ենք Ձեր Վեհափառութեան մօտ յայտնելու ծով կարիքների մասին, թէ ինչպիսի անախորժ յանգամանքներ յառաջ կը գայ, եթէ մենք այստեղից վերադառնանք դատարկածեռն:

Ի նկատի ունենալով թույլի լրջութիւնը և գաղթականութեան հոգեկան վիճակը, մենք ամենախոնարհաբար խնդրում ենք Նորին Վեհափառութեանդ բարեհաճէք կարգադրել Ձեր Բարձր հովանաւորութեան տակ գտնուող գումարներից տալ փոխարինաբար Եղբայրական Օգնութեանը մի զգալի գումար: Ստանալով այդ գումարները Եղբայրական Օգնութեան կոմիտէն կաշխատի ձեռք բերել մէծ քանակութեամբ գետնախնձոր գաղթականութեանը սովի ճանկերից որսելու: Աղէքսանդրապոլի Եղբայրական Օգնութեան կոմիտէն յանձին իրեն նախագահ Ն. Կիրակոսեանի և գործերի կառավարիչ Մ. Տէր-Մկրտչեանի պարտաւորում է Ձերդ Վեհափառութեան կարգադրութեամբ ստացած փոխարինաբար գումարը լրացնել ամսեկան վճարելով նպաստների գումարներից տասը հազար թուրքի:

Ն. Կիրակոսեան
Մ. Տէր-Մկրտչեան
Սմբատ

Մակագրություն: Յայնձնում ենք ի քննութեան Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան գլխաւոր կարգադրիչ յանձնաժողովի եզրակացութիւնը մատուցանելու մեզ ի վերջնական տնօրինութիւն: Գեորգ Ե Կաթողիկոս Ամենայն Հայոց

ՀԱԱ, ֆ. 57, ց.2. գ.1311, ք.32: Բնագիր ձեռագիր:

N 81

ԿԱՐՄԻ ՆԱՀԱՆԳԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԽՆԴՐԱՆՔԸ

**ԳԵՎՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԻՐԵՆՑ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ
ՎԱՅՐԵՐԸ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

5 մայիս 1918 թ.
Ալեքսանդրապոլ

Վեհափառ Տէր, մենք, Կարս նահանգի տասնեակ հազարաւոր փախստական հայերս հաւաքուելով Ալեքսանդրապոլի Ս. Փրկիչ եկեղեցւոյ հայաթում⁷¹ 1918 թ. մայիս ամսոյ 5ին (ն[որ] տ[ոմարով]) Բասենոյ շրջանի Գիւղանթափ գիւղի Յակոբ քահանայ Սիրգայանի նախագահութեամբ և Կարս քաղաքի բնակիչ Գէորգ Ասատրեանի քարտուղարութեամբ ժողով կազմակերպելով որոշեցինք 1. ի նկատի ունենալով, որ քրդական և թրքական հորդանքերի հրից ու սրից ազատուած մեր ընտանիքները սովից և զանազան վարակիչ հիւանդութիւններից պիտի կոտորուին, որոնց ազատելու համար զրկուեցինք մեր ինչքից և կարողութիւններից, 2. ի նկատի ունենալով, որ մեր զանազան մարմինները և կուսակցութիւնները իրենց քաղաքական տհասութեան և անգործ ու անկազմակերպ վիճակով միշտ մեզ խաբեցին և ծայր աստիճան թշուառութեան հասցրին, 3. ի նկատի ունենալով, որ այլևս յիշեալ մարմինների գործունէութեան վրայ յոյս դնելը և նրանց խոստումներին հաւատալը անմտութիւն է, մենք տանջուող ժողովուրդս, այսօրուանից կտրում ենք որևէ կապ տեղիս այդ մարմինների հետ, և իբրև համայն հայ ազգի պաշտօնական պէտի ու ներկայացուցչի դիմում ենք Ձեզ, Վեհափառ Տէր, հետևեալ աղերսագին խնդրանքով 1. կամ միջնորդել, ուր որ հարկն է, մեր ընտանիքների կեանքն ապահովելու, 2. կամ եվրոպական կուռղ կամ չեզոք պետութիւններից որևէ մեկի հովանաւորութեան տակ մեր ընտանիքների կեանքի և կայքի ապահովութեան խոստումով վերադարձնել մեզ մեր հայրենիքն աշխատելու և շենացնելու:

Վեհափառ Տէր, որովհետև ցարդ մեզ լսող, մեր խօսքը կատարող չի եղել, եթէ մեր այս վերջին յոյսը յանձին իր ընտրած հովուապետի չիրականանայ շուտով, այն ժամանակ հուսա-

հատուած և անտեր ժողովուրդը ինքն իր գլխի ճարը կգտնի:

Ժամանակի և հանգամանքի դժբախտ բերմամբ՝ անհնարին եղաւ մի քանի տասնեակ հազարաւոր ժողովրդի ստորագրութիւնը հաւաքել, ստորագրում ենք միայն ժողովի նախագահը և քարտուղարը, յանձն առնելով սոյն խնդիրը անձամբ Վեհիդ ներկայացնելու իր ներկայացուցիչների միջոցով, որոնք ընտրուած են հետևեալ գիւղից, հետևեալ անձը՝ Կարսի շրջանից Սահակ Պօղոսեանց:

Նախագահ ժողովի՝

Յակովբ քահանայ Միրզոյեան

Քարտուղար՝ Գէորգ Ասատրեան

ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 178, ք. 2: Բնագիր: Չեռագիր:

ԳԼՈՒԽ II

ԱՐԵՎՍՏԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1918-1920 թթ.)

N 82

ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՄԵՍՐՈՊ ԵՊԻՄԿՈՊՈՍԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԳԵՎՈՐԳ Ե ԿԱԺՈՂԻԿՈՍԻՆ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

21 մայիս 1918 թ.
Ղարաքիլիսա

Ինչպէս հեռագրով Տփղիսից յայտնել են Գաղթականական մարմնի և Ազգային Խորհրդի կողմից նշանակուեցի անդամ և նախագահ Գաղթականական արտակարգ յանձնաժողովի: Այս մարմինը կազմուեց ի նկատի ունենալով գաղթականութեան արտակարգ կարիքները, որպէսզի այլևս առանց Տփիսիսի կարգադրութիւնների և ցուցմունքների սպասելու տեղում արագ կերպով անել ինչ որ թոպէի պահանջն էր: Տփիսիսը պէտք է հայթայթէ դրամ:

Յանձնաժողովը եկաւ Ղարաքիլիսայ, մշակեցինք մի շարք հարցեր, ցանկանալով Ղարսի շրջանից եկած գաղթականներին տեղաւորել լեռնային ազատ պետական և կալուածատիրական հողերում, հնարաւոր չափով մնայուն կերպով: Ալէքսանդրապոլի գրաւումը տաճիկների կողմից նոր աղէտի դուռ բացեց և յանձնաժողովը այլևս ծրագրային գործ կատարելու մասին մտածել անգամ չի կարողանում: Աննկարագրելի է գաղթականութեան վիճակը: Մահացութեան դէպքեր են սկսել ծայր առնել, կերակրել և տեղաւորել այս մարդկանց հնարաւորութիւնից հեռու է: Մի մասը նոցա գնում են Տփիսիս, երրորդ օրն է ճանապարհը Սանտայի⁷² մօտ ընդհատուած է

տեղական թուրքերի կողմից և Տփլիսից դեպի ֆրոնտ երեք հայկական էշերունները կռուի բռնությունով վերադարձել են՝ անկարող լինելով բացել ճանապարհը: Ընդհատում է և հեռագրային հաղորդակցութիւնը: Բաւական ստոյգ տեղեկութեանց հիման վրայ տաճիկները երկաթուղու, Ապարանի և Ախալքալաքի շոստի գծերով դանդաղ առաջ են խաղում: Այստեղի գաղթականութիւնը կտրուած է թէ՛ Տփլիսի և թէ՛ Ախալքալաքի կողմից: Մթերքներ ամենևին չկայ: Տեղափոխութեան միջոցները պակասում են: Անասունները կոտորում են կերի պակասութեան պատճառով և ժողովուրդը ծախում է ոչխարը 3 րուբլուց սկսած, իսկ կովերը և էշերը՝ 10-ից սկսած:

Գալիս է Արտակ վարդապետը, որ կը պատմէ բոլոր մանրամասնութիւնները: Եթէ հեռագրական հաղորդակցութիւնը չընդհատուէր, ես այսուհետև պարտքս կհամարեմ՝ ուղակի գծով միշտ իրազեկ պահել Ձերդ Մրբութեանը, խնդրելով այստեղից ևս մեզ տեղեկութիւններ հաղորդել: Այստեղի բոլոր շրջանների միաձայն կարծիքն է, որ եթէ Երևանի կողմից ևս ժողովուրդը շարժուելու լինի, կը լինի սոսկալի աղէտ: Միակ փրկութիւնը կլինի, որ ժողովուրդն իր տեղում մնայ, որով գուցէ ապահով սովամահից կարողանայ ազատուել:

Վրացական թերթերը հայերի դեպի Տփլիսի նահանգը գաղթելու առթիւ ահագին աղմուկ են բարձրացրել և թէև որոշ փաստ չկայ, բայց ենթադրում են շատերը, որ Սանտայի գծի ընդհատումը նոցա շատ ավելի հաճելի է: Խաղաղար բանակցութիւնների մասին ստացուած կցկտուր տեղեկութիւնները աննպաստ են⁷³:

Երկաթուղու գիծը ընդհատուելուց յետոյ գաղթականութեան որոշ մասը, որ տեղափոխութեան սեփական միջոցներ ունի, ուղղում է դեպի Դիլիջան և Ելենովկա, մօտաւոր հաշուով այս օրերին գնացել են ոչ պակաս 800 սայլեր, որոնց պարենատրման համար յանձնաժողովը միջոցներ է ձեռնարկել:

Մեսրոպ եպիկոպոս

ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 178, թ. 6: Ինքնագիր:

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ԿՈՍՄՏԵՆԻ
ԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

10 դեկտեմբերի 1918 թ.- 2 ապրիլի 1919 թ.

Ալեքսանդրապոլ

Արձանագրություն N 1

1918 թ. դեկտեմբերի 10-ին կայացաւ Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնավարութեան⁷⁴ գաղթականական կոմիտէի առաջին նիստը՝ մասնակցութեամբ պ.պ. Սկրտիչ Ղազարեանի,⁷⁵ Սիմէօն Տէր-Գրիգորեանի, Գեղամ Փէշտմալճեանի, Արիստոյմ Զարիֆեանի և Գասպար Յովհաննիսեանի

Օրակարգի հարցեր-

1. Նախագահի և փոխնախագահի ընտրութիւններ

2. Բնակարաններ գտնել Ալեքսանդրապոլ եկող գաղթականներին համար

3. Ինչ միջոցներով ապահովել գաղթականների ապրուստի խնդիրը

Ժողովականները միաձայն նախագահ ընտրեցին պ. Մ. Ղազարեանին, փոխնախագահ՝ պ. Գ. Փէշտմալճեանին և զբաղուեցին օրակարգի հարցերով:

Նախագահ պ. Մ. Ղազարեանը յայտնեց, որ բազմաթիւ գաղթականներ են գալիս դէպի Ալեքսանդրապոլ և մենք չունենք յարմար բնակարաններ նրանց տեղաւորելու համար, իսկ քաղաքն էլ հնարաւորութիւն չունի նրանց ապրուստի խնդիրն իր վրայ վերցնելու, որովհետև գուրկ է դրամական միջոցից, չունի ալիւր, ցորեն, շաքար, թէյ և վառելաւաւիտ:

Ժողովականները ելնելով վերոյիշեալից կայացրին հետևեալ որոշումները.

1. Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ քաղաքը գուրկ է գաղթականներին խնամելու միջոցներից՝ հեռագրել Հայաստանի Հանրապետութեան խնամատարութեան նախարար պ. Ա. Խատիսեանին⁷⁶ անյապաղ դրամ փոխադրել

կոմիտէին և միջնորդել պարենատրման նախարարի առաջ՝
ցորեն կամ այլ մթերքներ ուղարկել գաղթականներին կերա-
կրելու համար:

2. Դիմել անգլիական և ֆրանսիական կառավարութիւն-
ների տեղս եկած ներկայացուցիչներին՝ աջակցելու ցորեն
գնել Կարսում գաղթականների համար: 3. Հեռագրական դի-
մում անել Ղարաքիլիսայ և Թիֆլիս՝ պատշաճատր մարմին-
ներին՝ գաղթականների հոսքը դադարեցնել դէպի Ալեքսան-
դրապոլ, մինչև Ղարսի պարպումը թուրքերից:

4. Դիմել տեղիս զինուորական իշխանութեանը, որ նա թոյլ
տայ քաղաքից դուրս եղած զորանոցներում տեղաւորելու
գաղթականներին:

Նախագահ՝ Մ. Ղազարեան
անդամներ՝ Գ. Յովհաննիսեան
Գ. Փեշտմալճեան
Ս. Տէր- Գրիգորեան

ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2715, ք. 1: Բնագիր: Ձեռագիր:

Արձանագրութիւն N 2

1918 թ. դեկտեմբերի 11-ին կայացաւ Ալեքսանդրապոլի
քաղաքային ինքնավարութեան գաղթականական կոմիտէի
երկրորդ նիստը՝ նախագահութեամբ պ. Գ. Փեշտմալճեանի և
մասնակցութեամբ պ.պ. Ս. Տէր-Գրիգորեանի, Գ. Իսահա-
կեանի և Գ. Յովհաննիսեանի:

Օրակարգի հարցեր-

1. Գանձապահի և քարտուղարի ընտրութիւններ
2. Սննդատու կայաններ հիմնել քաղաքի զանազան մա-
սերում:
3. Քաղաքային վարչութիւնից 5000 ռ[ուբլի] աւանս խնդ-
րել:
4. Հրաիրել ծառայողներ սննդատու կայանների համար:
Ժողովականները խորհրդակցութեան նիւթ դարձնելով

վերոյիշեալ հարցերը՝ որոշեցին.

1. Գանձապահի պաշտօնը տալ պ. Գ. Իսահակեանին, իսկ քարտուղարի պաշտօնը՝ պ. Գ. Յովհաննիսեանին:

2. Գաղթականներին կերակրելու համար սննդատու կայանները հիմնել թուրքերի թաղում, սլաքողկում և կայարանում:

3. Սննդատու կայանների համար ծառայողներ ընդունել հետևեալ անձանց՝ Նազարէթ Շիրակունի, Մեխակ Փիլոսեան, Մեսրոպ Ղազարեան և Անտօն Աբրահամեան: Ծառայութիւններ հաշուել դեկտեմբերի 12-ից, ամսական 360 թուրքի ռոճիկով: Յանձնարարել վերոյիշեալ անձանց շուտափոյթ տեղափոխել նորեկ գաղթականներին և կազմել նրանց ցուցակը:

4 Նախնական ծախքերի համար քաղաքային վարչութիւնից աւանս խնդրել 5000 թուրքի:

Նախագահ՝	Գ. Փեշտմալճեան
Անդամներ՝	Ս. Տէր-Գրիգորեան
	Գ. Իսահակեան
Անդամ քարտուղար՝	Գ. Յովհաննիսեան

ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2715, ք. 2: Բնագիր: Ձեռագիր:

Արձանագրութիւն N 3

1918 թ. դեկտեմբերի 12-ին կայացաւ Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնավարութեան գաղթականական կոմիտէի երրորդ նիստը՝ նախագահութեամբ պ. Մ. Ղազարեանի, մասնակցութեամբ պ.պ. Գ. Փեշտմալճեանի, Գ. Իսահակեանի, Գ. Յովհաննիսեանի և Ա. Զարիֆեանի:

Օրակարգի հարցեր.

1. Հրաւիրել կառավարիչ և հաշուապահ

2. Քաղաքային վարչութիւնից 100000 ռ[ուբլի] աւանս խնդրել ընթացիկ ծախսերի համար:

3. Դիմում Հոգևոր կառավարութեանը՝ նշանակել մի քա-

հանայ գաղթական հանգուցեալներին թաղելու համար:

4. Դիմում քաղաքային վարչութեանը՝ չորացրած մթերքներ ստանալու համար:

5. Դիմում գերեզմանատան Հոգեբարձութեանը՝ ննջեցեալների թաղումը ձրի կատարելու համար:

6. Գրասենեակի խնդիր

Ժողովականները զբաղուելով վերոյիշեալ հարցերով կայացրին հետևեալ որոշումները.

1. Որովհետև կոմիտէի անդամները ազատ ժամանակ չունեն գործերը կառավարելու համար, այդ պատճառով հրաւիրել պ. Գրիգոր Վեհապետեանին կառավարիչի պաշտօնով, ամսական 480-600 ռ[ուբլի] ռոճիկով, իսկ հաշիւները պահելու համար հրաւիրել պ. Կարապետ Մատնիշեանին՝ 480 ռ[ուբլի] ռոճիկով:

Ծառայութիւնները հաշուել դեկտեմբերի 13-ից:

2. Ընթացիկ ծախսերը հոգալու համար քաղաքային վարչութիւնից ևս 30000 ռ[ուբլի] ավանս խնդրել:

3. Գաղթական ննջեցեալները անթաղ չթողնելու համար դիմել տեղիս Հոգևոր կառավարութեանը՝ նշանակել յատուկ մի քահանայ:

4. Քաղաքում մթերքներ չը ճարուելու պատճառով, դիմել Քաղաքային վարչութեանը՝ խնդրելով նրա կարգադրութիւնը քաղաքի պահեստներից չորացրած մթերքներ բաց թողնել գաղթականների համար:

5. Ննջեցեալների թաղման տեղը ձրի ձեռք բերելու համար դիմել գերեզմանատան Հոգաբարձութեանը՝ խնդրելով նրա կարգադրութիւնը այդ մասին:

6. Քաղաքային ինքնավարութեան շինութեան մէջ ազատ տեղ չը լինելու պատճառով՝ դիմել քաղաքի կենտրոնում մի յարմար տեղ տալ կոմիտէի գրասենեակի համար:

Ծառայ վարձել Յովնան Պատրիկեանին դեկտեմբերի 13-ից՝ 247 ռ[ուբլի] ռոճիկով:

Նախագահ՝ Մ. Ղազարեան

Անդամներ՝ Գ. Փեշտմալճեան
 Գ. Իսահակեան
Անդամ քարտուղար՝ Գ. Յովհաննիսեան

ՀԱԱ, ֆ. 105, ց.1, գ. 2715, ք. 4-5: Բնագիր: Ձեռագիր:

Արձանագրութիւն N 4

1918 թ. դեկտեմբերի 14-ին կայացաւ Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնավարութեան գաղթականական կոմիտէի չորրորդ նիստը մասնակցութեամբ պ.պ. Սկրտիչ Ղազարեանի, Միսէօն Տէր-Գրիգորեանի, Գեղամ Փեշտմալճեանի, Գ. Իսահակեանի և Գասպար Յովհաննիսեանի

Օրակարգի հարցեր-

1. Գրիգոր Վեհապետեանի հրաժարականը և նոր ծառայողներ հրաւիրելու խնդիրը:

2. Խնամատարութեան նախարարի հեռագիրը:

3. Բժիշկ հրաւիրելու խնդիրը:

Ժողովականները խորհրդակցութեան նիւթ դարձնելով առաջարկած հարցերը՝ կայացրին հետևեալ որոշումները.

1. Ընդունել Գ. Վեհապետեանի հրաժարականը և նրա տեղը հրաւիրել կառավարչի պաշտօնով Աշոտ Գարսեանին՝ ամսական 600 ռ[ուբլի] ռոճիկով: Հրաւիրել սննդատու կայանների համար ևս երկու պաշտօնեաներ՝ Պարոյր Յարութիւնեանին և Յուսիկ Տէր-Սկրտչեանին, ամսական 360 ռ[ուբլի] ռոճիկով: Ծառայութիւնները հաշուել դեկտեմբերի 15-ից:

2. Լսելով խնամատարութեան նախարարից ստացած հեռագրի բովանդակութիւնը՝ ժողովը որոշեց ամէն օր հեռագրական հաղորդակցմամբ իրազեկ դարձնել նախարարին գաղթականների քանակի և դրութեան հետ: Հեռագրի համառոտ բովանդակութիւնը հետևեալն էր. «Ուղարկում ենք 100000 ռուբլի, եթէ կարիք լինի էլի կուղարկենք: Մթերքների համար միջնորդութիւն է յարուցումս պարենաւորման նախարարի առաջ: Խնդրում ենք ամէն օր տեղեկութիւն հա-

դորդել գաղթականների դրութեան և ձեռք առնելիք միջոցների մասին: Հիմնեցէք ապաստարաններ և բժշկական կայաններ՝ կանգ չառնելով ծախքերի առաջ, բոլոր ծախքերը մենք կը վճարենք»:

3. Յանձնարարվեց պ. Գ. Փեշտմալճեանին բանակցութեան մէջ մտնել բժիշկ Ս. Սելիք-Բարախանեանի հետ, գաղթականներին բժշկական օգնութիւն ցոյց տալու համար: Նախագահը յայտնեց, որ քաղաքային վարչութիւնից մինչև օրս ստացւած է գանձապահի ձեռամբ 35000 ռ[ուբլի] :

Նախագահ՝

Մ. Ղազարեան

Անդամներ՝

Գ. Փեշտմալճեան

Գ. Իսահակեան

Անդամ քարտուղար՝ Գ. Յովհաննիսեան

ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2715, ք. 5-6: Բնագիր: Ձեռագիր:

Արձանագրութիւն N 5

1918 թ. դեկտեմբերի 15-ին կայացաւ Ալէքսանդրապոլի քաղաքային ինքնավարութեան գաղթականական կոմիտէի և տեղիս Աղբատախանաւ հոգաբարձութեան խառն 5-րդ ժողովը՝ նախագահութեամբ պ. Գեղամ Փեշտմալճեանի և մասնակցութեամբ պ.պ. Գ. Յովհաննիսեանի, Գ. Իսահակեանի և Յ. Կարապետեանի, Տ. Մանուկեանի, Կ. Մառանջեանի, Վ. Ներսիսեանի:

Օրակարգի հարցեր-

1. Սննդատու կայաններ հիմնել քաղաքի 6 մասերում՝ նշանակելով ամեն մի կայանի համար երկու ծառայող

2. Աւելացնել ծառայողների թիւը

3. Հիւանդանոց հիմնել գաղթականների համար

Ժողովականները զբաղուելով վերոյիշեալ հարցերով՝ կայացրին հետևեալ որոշումները.

1. Գաղթականների աւելանալու պատճառով հիմնել 6 սննդատու կայան, քաղաքը բաժանելով 6 շրջանների: Սնն-

դատու կայաններից տաք կերակուր պէտք է ստանան թէ՛ նորեկ գաղթականները և թէ՛ այն աղքատ ընտանիքները, որոնք մինչև օրս հաց էին ստանում Աղքատախնամ հոգաբարձութիւնից:

Քաղաքում հաց չլինելու պատճառով առայժմս տալ տաք կերակուր մսից և բրնձից պատրաստուած:

Իւրաքանչիւր կայանի համար նշանակել երկու ծառայող կամ պաշտօնէայ, որոնք կազմելու են իրենց շրջանի գաղթականների և աղքատ ընտանիքների ցուցակը և նրանով էլ բաժանելու են տաք կերակուր:

2. Սննդատու կայանների թիւը աւելացնելուց յետոյ աւելացնել նաև ծառայողների թիւը՝ հրաւիրելով պաշտօնի հետևեալ մարդկանց

1. Հաճի Եղո Մուրադեան
2. Տիգրան Մանուկեան
3. Գէորգ Մարտիրոսեան
4. Տիգրան Յարոյեան
5. Յովհաննէս Կարապետեան
6. Հայկ Վարդապետեան
7. Թադէոս Տէր -Միքայէլեան

Վերոյիշեալ պաշտօնէաներին ռոճիկ նշանակել 360 ր [ուրի] և ծառայութիւնը հաշուել դեկտեմբերի 16-ից:

3. Հիւանդ գաղթականներին խնամելու համար հիմնել հիւանդանոց: Յանձնարարւեց պ. Գ. Իսահակեանին բանակցել բժշկի և շինութեան տիրոջ հետ և հետևանքների մասին առաջիկայ ժողովում տեղեկացնել կոմիտէին:

- | | |
|-----------|-----------------|
| Նախագահ՝ | Գ. Փէշտմալճեան |
| Անդամներ՝ | Տ. Մանուկեան |
| | Գ. Իսահակեան |
| | Գ. Յարութիւնեան |
| | Վ. Ներսիսեան |

Անդամ քարտուղար՝ Գ. Յովհաննիսեան

ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2715, ք. 6-7: Բնագիր: Ձեռագիր:

Արձանագրություն N 6

1918 թ. դեկտեմբերի 16-ին կայացաւ Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնավարութեան գաղթականական կոմիտէի վեցերորդ նիստը՝ նախագահութեամբ պ. Գ. Փեշտմալճեանի և մասնակցութեամբ պ.պ. Ս. Տէր-Գրիգորեանի, Գ. Յովհաննիսեանի, Գ. Իսահակեանի:

Օրակարգի հարցեր-

1. Պարոն Մանասեանից⁷⁷ ստացւած հեռագիրը

2. Երկաթուղու կայարանի վարչութիւնից ստացուած երկու գրութիւնները

3. Կայարանում նշանակել յատուկ պաշտօնէյ գաղթականներին ընդունելու և մեռածներին թաղելու համար

Ժողովականները լսելով պ. Մանասեանի հեռագրի և երկաթուղու կայարանի վարչութեան գրութիւնների բովանդակութիւնը՝ որոշեցին

1. Գաղթականների թաղային ցուցակները կազմելուց յետոյ ամեն օր տեղեկացնել գաղթականների թուի և դրութեան մասին պ.պ. Մանասեանին և խնամատարութեան նախարարին:

2. Կայարանում եղած բոլոր գաղթականներին անմիջապէս տեղափոխել քաղաք և մեռածներին էլ թաղել:

3. Որպէսզի կայարանում հաւաքուած գաղթականները անտեր չմնան՝ հրաւիրել Աւետիք Սողոյեանին կայարանում գաղթականներին ընդունելու և մեռածներին էլ թաղելու համար: Ռոճիկ տալ ամսական 340 ռ[ուբլի] և ծառայութիւնները հաշուել դեկտեմբերի 17-ից:

Նախագահ՝

Գ. Փեշտմալճեան

Անդամներ՝

Ս. Տէր- Գրիգորեան

Գ. Իսահակեան

Անդամ քարտուղար՝ Գ. Յովհաննիսեան

ՀԱԱ, ֆ. 105, ց.1, գ. 2715, թ. 7: Բնագիր: Չեռագիր:

Արձանագրութիւն N 7

1918 թ. դեկտեմբերի 18-ին կայացաւ Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնավարութեան գաղթականական կոմիտէի վեցերորդ նիստը՝ նախագահութեամբ պ. Գ. Փեշտմալճեանի և մասնակցութեամբ պ.պ. Ս. Տէր-Գրիգորեանի, Գ. Յովհաննիսեանի, և Արամ Ղարազեղեղեանի, Գ. Իսահակեանի: Նիստին հրաւիրուած էր Հայաստանի Հանրապետութեան խնամատարութեան նախարարութեան լիազօր Պօղոս Ներսիսեանը, որի զեկուցումից պարզուեց, որ Ալեքսանդրապոլի գաւառի գիւղերում (քացի Փամբակի շրջան) կան 20000 գաղթականներ, որոնք գտնուում են շատ անմխիթար դրութեան մէջ և կարօտ են շուտափոյթ օգնութեան:

Ժողովականները լսելով Պօղոս Ներսիսեանի զեկուցումը, որոշեցին Ալեքսանդրապոլ գաւառի, (քացի Փամբակի շրջանը) գաղթականութեան խնամատարութիւնն էլ վերցնել իրենց հսկողութեան տակ և այդ մասին հեռագրով յայտնել խնամատարութեան նախարարին՝ խնդրելով ուղարկել անյապաղ դրամ և հագուստ գաւառի գաղթականներին նպաստ քաժանելու համար:

Այնուհետև ժողովականները զբաղւելով միւս կարևոր հարցերով որոշեցին.

1. Զաղաքում փառելափայտ չլինելու պատճառով յայտարարեց պ. Գ. Իսահակեանին քանակցութիւնների մէջ մտնել քաղաքային Ревизия. Комиссия-ի հետ, որ նա իր գրաւած 10 խոր[անարդ] սաժեն փայտը տա կոմիտէին մէկ խոր[անարդ] սաժենը գնահատելով 900 ռ[ուբլի]:

2. Որովհետև Աշոտ Գարանեանը ձգձգում էր գաղթականական գործերի նախագահի պաշտօնի ստացումը, ուստի նրա փոխարէն հրաւիրել Գիւրբէկ Գիւրբէկեանին՝ տալով նրան 600 ռ[ուբլի] ռոճիկ: Ծառայութիւնը հաշուել դեկտեմբերի 19-ից:

3. Գաղթականների հիւանդանոցում աշխատելու համար հրաւիրել բժիշկ Ս. Մելիք-Բաքախանեանին, ամսական 900 ռ[ուբլի] ռոճիկով: Տնտեսական մասի կառավարիչ հրաւիրել

պ. Մն[ացական] Տէր-Մարտիրոսեանին, ամսական 480 ռ[ուբլի] ռոճիկով: Գործավարի պաշտօնում հրաւիրել Սարիբէկ Շահինեանին, գրութեան քրոջ պաշտօնում՝ Գոհարիկ Դուկասեանին, խոհարարուհու պաշտօնի համար հրաւիրել տիկին Շուշանիկ Աղաջանեանին:

4. Արձակել պաշտօնից սննդատու կայանի պաշտօնէյ Անտօն Աբրահամեանին և նրա փոխարէն ընդունել Դերենիկ Խաժակեանին՝ ամսական 360 ռ[ուբլի] ռոճիկով դեկտեմբերի 18-ից: Իսկ կոմիտէի գրասենեակի համար հրաւիրել գրագրի պաշտօնով Չաբել Տէր-Գրիգորեանին՝ ամսական 360 ռ[ուբլի] ռոճիկով:

5. Ընթացիկ ծախսերի համար քաղաքային վարչութիւնից խնդրել 35000 ռ[ուբլի] աւանս և նշանակել մսի աճուրդ:

6. Քաղաքի 6 շրջանների գաղթականութեան ցուցակագրութիւնը արագացնելու համար 12 ռ[ուբլի] օրավարձով մարդիկ հրաւիրել:

Նախագահ ժողովի՝ Գ. Փեշտմալճեան
Անդամներ՝ Ս. Տէր - Գրիգորեան
Գ. Իսահակեան

Անդամ քարտուղար՝ Գ. Յովհաննիսեան

ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2715, ք. 8: Բնագիր: Ձեռագիր:

Արձանագրութիւն N 8

1918 թ. դեկտեմբերի 22-ին կայացաւ Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնավարութեան գաղթականական կոմիտէի ութերորդ նիստը՝ նախագահութեամբ պ. Գ. Փեշտմալճեանի և մասնակցութեամբ պ. պ. Ս. Տէր- Գրիգորեանի, Գ. Յովհաննիսեանի, Գ. Իսահակեանի և Գ. Գիւլբէկեանի :

Օրակարգի հարցեր.

1. Հիւանդանոցի բացման յետաձգումը:

2. 5-րդ շրջանի սննդատու կայանի անկարգ դրութիւնը և

գաղթականների դժգոհությունը այդ բանի դեմ:

3. Գաղթականների դիմումը կոմիտեիս՝ դրամով նպաստ բաժանելու համար:

Նախագահը բաց անելով նիստը յայտարարեց, որ քաղաքի պահեստից գաղթականների հիւանդանոցի կահ կարասիներ և ուրիշ անհրաժեշտ իրեր մերժում են տալ, որովհետև տեղիս զինուորական իշխանությունը այդպիսիները վերցնում է վիրատուների համար հիւանդանոցներ բանալու համար: Երբ քաղաքային հիւանդանոցը պարպուի հիւանդ զինուորներից, այդ ժամանակ կարգադրություն կը լինի քաղաքագլխի կողմից՝ հիւանդ գաղթականներին տեղափոխել քաղաքային հիւանդանոցում:

Ժողովականները լսելով նախագահի յայտարարությունը և խորհրդակցութեան միւթ դարձնելով օրակարգի հարցերը՝ կայացրին հետևեալ որոշումները.

1. Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ գաղթականների համար բացուելիք հիւանդանոցի կահ կարասիները և անհրաժեշտ իրերը ուրիշ տեղից ձեռք բերելու ոչ մի հնարատրութիւն չը կայ, ուստի հիւանդանոցի բացումը յետաձգել և նրա համար հրաւիրած ծառայողներին՝ Մնացական Տէր-Սարտիրոսեանին, Սարիբէկ Շահինեանին, Գոհարիկ Դուկասեանին և Շուշանիկ Աղաջանեանին ազատ համարել իրենց պաշտօններից:

2. Լսելով 5-րդ շրջանի գաղթականների դժգոհությունը նոյն շրջանի սննդատու կայանի լիազօր պ. Նազարէթ Շիրակունու մասին՝ յանձնարարեց կոմիտէի անդամ պ. Գ. Յովհաննիսեանին քննութիւն կատարել և հետևեալի մասին զեկուցել կոմիտէիս:

3. Կոմիտէի տրամադրութեան տակ մեծ գումար և մանր դրամ չլինելու պատճառով՝ գաղթականներին նպաստ բաժանելը անորոշ ժամանակով յետաձգել:

4. Վեց շրջանների սննդատու կայանների համար հրաւիրել ևս 6 պաշտօնէաներ՝ նախապատուութիւն տալով աշխատավարձով աշխատողների, իսկ հրաժարուած Սեփակ Փիլո-

սեանի տեղը նշանակել Կարապետ Շահբազեանին, դեկտեմբերի 23-ից՝ 360 ր[ուբլի] ռոճիկով:

Հրաիրել ծառայութեան հետևեալ վեց մարդկանց

1-ին սննդատու կայանի համար- Բենիամին Թոռունեան

2-րդ սննդատու կայանի համար- Վարոս Սարգսեան

3-րդ սննդատու կայանի համար- Արտավազ Բաբերեան

4-րդ սննդատու կայանի համար- Գուրգեն Յարոյեան

5-րդ սննդատու կայանի համար- Արտաշէս Աղամեան

6-րդ սննդատու կայանի համար- օր. Սաթենիկ Մինասեան

Նախագահը յայտնեց ժողովականներին, թէ ստացուած է Քաղաքային վարչութիւնից գանձապահի ձեռամբ 30000 ր[ուբլի]:

Ստացուած է 7 խոր[անարդ] սաժեն վառելափայտ, որի արժէքը 6300 րուբլի պէտք է վճարել փայտի տիրոջը:

Յանձնարարուեց գանձապահին վճարելու 7 խոր[անարդ] սաժեն վառելափայտի արժէքը՝ 6300 ր[ուբլի]:

Նախագահ ժողովի՝
Անդամներ՝

Գ. Փեշտմալճեան
Ս. Տէր- Գրիգորեան
Գ. Իսահակեան
Գ. Գիլքէկեան

Անդամ քարտուղար՝

Գ. Յովհաննիսեան

ՀԱԱ, ֆ. 105, ց.1, գ. 2715, ք. 9: Բնագիր: Ձեռագիր:

Արձանագրութիւն N 9

1918 թ. դեկտեմբերի 24-ին կայացաւ Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնավարութեան գաղթականական կոմիտէի իններորդ նիստը՝ նախագահութեամբ պ. Մ. Ղազարեանի և մասնակցութեամբ պ.պ. Գ.Փեշտմալճեանի, Ս. Տէր-Գրիգորեանի, Գ. Յովհաննիսեանի, Գ. Իսահակեանի և Գ. Գիլքէկեանի: Ժողովականները խորհրդակցութեան դնելով մի շարք կարևոր խնդիրներ գաղթականութեան վիճակը բարելաւելու

համար՝ կայացրին հետևեալ որոշումները.

1. Յանձնարարել Ալեքսանդրապոլի գաղթականական գործերի կառավարիչ Գ. Գիլքէկեանին, որ նա ամեն օր մանրամասն տեղեկութիւն տայ գաղթականների ընդհանուր թուի, նորեկների, մեռածների և ընդհանրապէս նրանց վիճակի մասին:

Շուտափոյթ կարգադրութիւն անել զինուորական պահեստներից հին հազուստներ ստանալու և գաղթականների մերկութիւնը ծածկելու համար:

2. Ի նկատի ունենալով նախագահի զեկուցումը Պոլիգոնի ազատ զօրանոցների մասին, որտեղ կարելի է տեղաւորել մօտաւորապէս 2680 գաղթականներ, յանձնարարուեց պ. Գ. Փեշումալճեանին, որ նա հոգ տանի անհրաժեշտ վերանորոգումներ կատարելու վերոյիշեալ զօրանոցներում և հետևանքի մասին զեկուցէ կոմիտէին:

3. Արձակել պաշտօնից 5-րդ շրջանի սննդատու կայանի լիագոր պ. Նազարեթ Շիրակունուն, իբրև անբարեխիղճ պաշտօնէայի:

4. Հրախրել պ. Մնացական Տէր-Մարտիրոսեանին պահեստի կառավարչի և կոմիտէի քարտուղարի պաշտօններով՝ ամսական 480 ռ[ուբլի] ռոճիկով դեկտեմբեր ամսից:

Նախագահ ժողովի՝ Մ. Ղազարեան

Անդամներ՝ Գ. Փեշումալճեան

Ս. Տէր Գրիգորեան

Գ. Իսահակեան

Գ. Գիլքէկեան

Անդամ քարտուղար՝ Գ. Յովհաննիսեան

ՀԱԱ, ֆ. 105, ց.1, գ. 2715, թ 10: Բնագիր: Ձեռագիր:

Արձանագրութիւն N 10

1918 թ. դեկտեմբերի 25-ին կայացաւ Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնավարութեան գաղթականական կոմիտէի նիստը՝ նախագահութեամբ պ. Սկրտիչ Ղազարեանի և մաս-

նակցութեամբ պ.պ. Գ. Փեշտմալճեանի, Գր. Իսահակեանի, կառավարիչ Գ. Գիլքէկեանի և կառավարութեան լիազօր Ս. Վարդանեանի.

Օրակարգի հարցեր

1. Ձեկուցում պ. կառավարիչի.
2. Հանրակացարանների համար նոր շէնքերի ձեռք բերելը.
3. Համամիտում և ուրիշ տեղերում կարտոֆիլ գնելը.
4. Կառավարչին աւանսով փող տալը.
5. Յոյն գերիների վրայ կատարած ծախսի վճարումը.
6. Երևանի գծի վրայ կայարաններում նոր սննդատու կայաններ բաց անելը.
7. Գիղերում ապրող գաղթականներին նպաստ տալը.
8. Գրասենեակի համար նոր ծառայողներ հրաւիրելը.
9. Հիւանդ գաղթականներին քաղաքի հիւանդանոց տեղաւորելը.
10. Բողոքներ սննդատու կայանների կառավարիչներ դէմ.
11. Գաղթական ննջեցեալների համար նոր քահանայ հրաւիրելը.
12. Ընթացիկ հարցեր:

1. Կառավարիչ պ. Գիլքէկեանը ժողովին յայտնեց, որ համաձայն պունկտերի կառավարիչների տուած տեղեկութեան այօր ամսիս 25-ին կերակուր են ստացել մօտ 10000 հոգի, այսպէս՝ առաջին պունկտ՝ 14000 հոգի, 2-րդ պունկտ՝ 2500 հոգի, 3-րդ պունկտ՝ 1460 հոգի, 4-րդ պունկտ՝ 1500 հոգի, 5-րդ՝ 1800 հոգի և 6-րդ պունկտ՝ 1750 հոգի: Շատ քչերն են, որ սնունդ չեն ստանում: Արագ կերպով շարունակում է ցուցակագրութիւնը, շուտով դրանք էլ կբաւարարուն: Ամբողջ գաղթականութիւնը թէև անկանոն, բայց տեղաւորուած են: Դրսում կամ կայարանում մնացողներ չկան: Այսօր պ. Գ. Իսահակեանի հետ տեսնուած են մի քանի շինութիւններ, որոնք կարելի է հանրակացարանների վերածել: Այն է պ.պ. Տէր -Պօղոսեանի կազարման մօտ 1500 հոգի, Կարանեանների կազարման՝ 800 հոգի, Ղուկասեանի տունը՝ 1000 հոգի: Իսկ

դրանց մօտ գտնող Խոյեցեանի կազարմում եղած խոհանոցը կարելի է նորոգել և կերակուրը այնտեղ պատրաստել: Ժողովը լսելով յիշեալ զեկուցումը, որոշեց վարպետներ հրաւիրել մատնացոյց արուած շինութիւնների քանդուած տեղերը վերանորոգել և գաղթականներին այստեղ տեղաւորել:

2. Որովհետև քաղաքում մթերքներ չի ճարում, ժողովը որոշեց շրջակայ գիւղերից, գլխաւորապէս Համամլուից մեծ քանակութեամբ կարտոֆիլ գնել և այդ նպատակով անմիջապէս գնորդներ ուղարկել՝ պատուիրելով նրանց տեղափոխելը միայն զգուշութեամբ կատարել, որպէսզի կարտոֆիլը ճանապարհին չմրսի: Իսկ քաղաքային վարչութեանը գրել 50 փութ ցորեն ստանալու համար, որպէսզի դրանից բրնձի փոխարէն ձաւար պատրաստուի: Ինչպէս վերևում յիշուեց բազարում ոչ մի մթերք չի ճարում, և նոյնիսկ քաղաքի Պարենատրման բաժանմունքը ոչ մի հնարատրութիւն չունի ժողովրդի կարիքները բաւարարելու: Ժողովը որոշեց դիմել Պարենատրման մինիստրին և խնդրել բրինձ, հաճար, լոբի, և միևնոյն ժամանակ այդ մասին յայտնել նաև խնամատարութեան մինիստրին և խնդրել նրա աջակցութիւնը:⁷⁸

3. Որոշուեց անակնկալ ծախսերի համար կառավարչի անունով 5000 ռ[ուբլու] աւանս բաց թողնել:

4. Պ[արոն] կառավարիչը ժողովին յայտնեց, որ առաջին շրջանի գաղթականներին ցուցակագրելու համար ամսի 25-ից հրաւիրել է օրիորդ Սաթենիկ Պօղոսեանին, իսկ 5-րդ շրջանում հրաւիրել է օրիորդներ Արեգնագան Գէօղակեանին և Աղաւնի Աղաջանեանին, և խնդրեց լիազօրել իրեն գրասենեակի համար հրաւիրել երկրորդ ծառայ 240 ռ[ուբլի] վարձատրութեամբ, մի փորձած գործավար 480 ռ[ուբլի] վարձով և ապագայում հարկ եղած դէպքում օրավարձով աշխատող ձեռքեր: Ծառայի համար հրաւիրել ենք Տիգրան Վարտիքեանին, իսկ գործավարի պաշտօնի համար պ. Տիգրան Բեռնեցեանին: Ժողովը յարգելով պ. կառավարչի խնդիրը լիազօրեց նրան հրաւիրել հարկաւոր ծառայողներին և յիշեալ պարոններին ամսի 26-ից:

5. Ժողովը լսելով պ.պ. Գ. Մերկուրովի և Կ. Ավրասամովի դիմումը, որ նրանց ձեռքով յոյն գերիների վրայ 500 ռ[ուբլի] ծախս է արուած և մինչև օրս վճարուած չէ, յանձնարարեց գանձապահ պ. Գ. Իսահակեանին քննել ներկայացրած հաշիւները ստանալ հարկաւոր ստորագրութիւնները և ապա վճարել յիշեալ 500 ռ[ուբլի]:

6. Կարգադրել ծառայ Մխիթարեանի խնդիրը, որով խնդրում է իր հասանելիք կէս ամսուայ ռոճիկը: Ժողովը որոշեց տալ նրան 112 ռ[ուբլի]:

7. Պ[արոն] կառավարիչը յայտնեց, որ պունկտերի կառավարիչները շարունակ բողոքում են, որ եղած վառելաւիայտը թաց է, չի վառում, կերակուրը իր ժամանակին չի բաժանում և տեղի է տալիս զանազան թիրիմացութեան: Ժողովը լիազօրեց պունկտերի կառավարիչներին, որ նոքա եթէ բազարում կճարեն չոր փայտ կամ աթար կարող են գնել մինչև չոր փայտ ստանալը:

8. Գանձապահ պ. Գ. Իսահակեանը ժողովին յայտնեց, որ պ. Գրիգոր Հեքիմեանը յօգուտ գաղթականների պ. Միքրան Դրամփեանի հարսանիքին հանգանակել է 696 ռ[ուբլի]:

Ժողովը որոշեց ընդունել յիշեալ գումարը և գրաւոր յայտնել կոմիտէի շնորհակալութիւնը:

9. Կառավարութեան լիազօր պ. Վարդանեանը յայտնեց, որ Կարսի շրջանի գաղթականութիւնը Մարդարապատ կայարանից սկսած խռնուել է սահմանին մօտ եղած կայարաններում և գիւղերում սպասելով ճանապարհների բացմանը: Նոքա շատ վատ դրութեան մէջ են գտնուում, հարկաւոր է շուտով նրանց օգնութեան հասնել: Ժողովը լսելով յիշեալ զեկուցումը, որոշեց Ալէքսանդրապոլ - Անի կայարաններում սննդատու պունկտեր բաց անելու համար վաղը իսկոյն Լեթմարդ ուղարկել գաղթականների թուի և տեղի մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար և եթէ կարիք եղաւ անմիջապէս բաց անել: Իսկ ապագայում նման պունկտեր հիմնել Կարսայ շրջանում շոստէի ուղղութեամբ, որպէսզի գաղթականների վերադարձին հնարաւորութիւն տրուի նոցա

ճանապարհին տաք կերակուր ստանալ:

10. Ժողովը ի նկատի առնելով հիւանդների քանակը, որոշեց ամեն օր տեղեկութիւններ պահանջել քաղաքային հիւանդանոցի կառավարչից և յայտնել պ. բժշկին, որպէսզի հիւանդներին հիւանդանոց տեղափոխի:

11. Լիազօր պ. Վարդանեանը ժողովին յայտնեց, որ ինքը եղել է մի քանի պունկտերում, եփած ճաշը գտել է անբաւարար և փախստականների կողմից լսել է բողոքներ կառավարիչներ դէմ: Իսկ պ. նախագահը յայտնեց, որ այսօր իրեն յայտնել են, որ շատերը նոյնիսկ միս չեն ստացել, և այսպէս մի շարք բողոքներ: Ժողովը լսելով յիշեալ բողոքները որոշեց, նախ՝ ունենալ իւրաքանչիւր պունկտերում փախստականներից կազմած երկու-երկու կոնտրոլ և երկրորդ՝ աշխատել մթերքները կենտրոնացնել պահեստը և թոյլ չտալ կառավարիչների միջոցով գնումներ կատարելը:

12. Ժողովը որոշեց գաղթական մնջեցեալների համար հրաիրել Արիստակէս քահանայ Ասագեանին տալով նրան ամսական 300 ռ[ուբլի] ռոճիկ: Իսկ մնջեցեալների թաղումը արագացնելու և նրանց տէրերին սրա նրա մօտ չողարկելու համար ստանալ գերեզմանոցի Հոգաբարձութեան համաձայնութիւնը, ստանալ նրանից վաերացրած անդորրագիր և դրանով ներկայացնել թաղուած մնջեցեալների հաշիւը:

13. Յանձնարարուեց պ. գանձապահին ընթացիկ ծախսերի համար Քաղաքային վարչութիւնից ստանալ 35000 ռ[ուբլի]:

Նախագահ ժողովի՝
Անդամներ՝

Մ. Ղազարեան
Գ. Փեշտմալճյան
Ս. Տէր-Գրիգորեան
Գ. Իսահակեան

Քարտուղար՝

Մն. Տէր-Մարտիրոսեան

ՀԱԱ, ֆ. 105, ց.1, գ. 2715, ք. 10-12: Բնագիր: Չեռագիր:

Արձանագրութիւն N 11

1918 թ. դեկտեմբերի 30-ին կայացաւ Ալէքսանդրապոլի քաղաքային ինքնավարութեան գաղթականական կոմիտէի նիստը՝ նախագահութեամբ պ. Սկրտիչ Ղազարեանի և մասնակցութեամբ պ.պ. Գ. Փեշտմալճեանի, Գր. Իսահակեանի, Գ. Յովհաննիսեանի, Ս. Տէր-Գրիգորեանի, Գ. Գիւրէկեանի:

Օրակարգի հարցեր

1. Նոր պունկտերի հիմնելը.
2. Որբերի համար նոր ապաստարան բաց անելը.
3. 6-րդ պունկտի կառավարչին պաշտօնից ազատելը և նոր կառավարիչ նշանակելը.
4. Սնունդի խնդիրը.
5. Շորեր բաժանելու խնդիրը.
6. Հանրակացարանների վրայ վերակացու նշանակելու խնդիրը.
7. Ընթացիկ հարցեր.

Նախ կարդացեց և ընդունեց նախկին ժողովի արձանագրութիւնը և ժողովականները խորհրդակցութեան նիւթ դարձնելով վերոյիշեալ հարցերը որոշեցին.

1. Ի նկատի առնելով 6-րդ պունկտում կերակուր ստացողների թիւը օրական մօտ 2600 հոգի է, իսկ ծառայողները, որ ոչ մի հնարատրութիւն չունեն իր ժամանակին բաւարարելու,⁷⁹ որ և տեղիք է տալիս զանազան թիրիմացութիւնների, պունկտը բաժանել երկու մասի, երկրորդ պունկտը անուանել 7-րդ պունկտ, նրա կառավարիչ նշանակել Արտավազդ Բաբերեանին, իսկ նրա օգնական՝ Վարոս Կանտորչիկեանին:

2-րդ պունկտը նոյնպէս բաժանել երկու մասի, բանալ նոր պունկտ Տատարսկայա փողոցում Տէր-Զաքարեանի տնէրում՝ անուանելով նրան 8-րդ պունկտ և կառավարիչ հրաւիրել պ. Վարոս Սարգսեանին, իսկ նրա օգնական՝ Կարապետ Շահրազեանին:

2. Կարսի ճանապարհի վրայ գտնուող Յ. Տէր-Պօղոսեանի

կազարմում թէ վերևի և թէ ներքևի մասը, ուր հին շորեր կան տեղատրուած, դատարկել և ամբողջ շինութիւնը որբերի համար դարձնել ասպաստարան, անուանելով 9-րդ կայան: Կայանի կառավարիչ հրաւիրել պ. Յովհաննէս Բոխկեանին, իսկ որբերի վերահսկիչ՝ Կիրակոսեանին, պատուիրելով նորան, որ երեխաներին օրական երկու անգամ կերակուր տայ: Յետոյ պէտք է օգտուել հանգամանքից փայտ կտրողներ ուղարկել և կազարմում եղած վառելիքայտերը կտրատել տալ:

3. 6-րդ պունկտի կառավարիչ Դերենիկ Խաժակեանին իր պաշտօնի մէջ անձեռնհաս գտնելով ազատ համարել իր պաշտօնից ամսիս 30-ից և նրա տեղը նշանակել պ. Աւետիք Սողոյեանին:

4. Պ[արոն] նախագահը ժողովին զեկուցեց, որ ինքը այցելել է բոլոր պունկտերը և հանրակացարանները, ամբողջը գտել է վերին աստիճանի անմխիթար դրութեան մէջ, եփած ճաշը անբաւարար, շատ տեղեր իր ժամանակին չեն ստանում, շատերին միս չի հասնում, իսկ մի քանիսն էլ երկար սպասելուց յետոյ դատարկ ետ են դառնում: Իսկ ինչ վերաբերում է հանրակացարաններին, ամբողջ գաղթականութիւնը մերկ, միմեանց վրայ թափթփուած, բնակարանները ցուրտ, չորս կողմը կեղտ և ամենագլխաւորը՝ չկան հսկող ձեռքեր՝ կառավարիչներ և առաջարկեց օրական պարենը աւելացնել, օգնութեան հասնել փողով, իւրաքանչիւր մի հանրակացարանին մի կառավարիչ նշանակել և ծախսի առաջ կանգ չառնել, 3. Տէր-Պողոսեանի կազարմում եղած շորերը բաժանել գաղթականութեանը՝ ծածկելով նրանց մերկութիւնը: Ժողովը լսելով յիշեալ զեկուցումը և միանգամայն համաձայն լինելով պ. նախագահի հետ, բայց որովհետև իր ունեցած միջոցներով դրանից աւելի չէր կարելի անել, որոշեց շորերը բաժանել, հանրակացարաններին կառավարիչ նշանակել, իսկ փողով նպաստ տալու համար դիմել մինիստրութեանը և երբ փող ստացուեց իւրաքանչիւր շնչին տալ օրական 3 ռ[ուբլի] :

5. Կարդացուեց պ. Սերո Տէր-Պօղոսեանի խնդիրը, որով խնդրում էր իր եղբոր Յ. Տէր-Պօղոսեանի կազարմի համար ամասկան վարձ նշանակել: Որոշուեց Տէր-Պօղոսեանի խնդիրը բաւարարել այն դէպքում, երբ կոմիտէն միջոցներ կունենայ:

6. Որոշեց լիազօրել պ. կառավարչին ստորագրել փող դուրս տալու և ընդունելու որբերին:

7. Պահեստի համար գնել հարկաւոր մթերքները և աշխատել ամեն բան ունենալ այնտեղ, որպէսզի պունկտերի կառավարիչները պահեստից ստանան, և նրանց աւանսները կրճատել:

8. Հանրակացարանները, պունկտերը այցելելու և առհասարակ կոմիտէի անհրաժեշտ գործերը կատարելու համար, երբ կարիք զգացուեց թոյլ է տրուում պ. կառավարչին կառք վերցնել:

9. Որովհետև բոլոր պունկտերում կերակուր ստացողների թիւը երկու հազարից անց է, ուր ոչ մի հնարաւորութիւն չկայ կանոնաւոր կերակուր պատրաստելու և իր ժամանակին բաւարարելու, ժողովը սկզբունքով ընդունեց բոլոր պունկտերը երկու մասի բաժանել:

10. Ժողովը ի նկատի ունենալով, որ ննջեցեալների մեծ մասը մի քանի օրով մնում են անթաղ և հնարաւորութիւն չկայ մի կաշկայով քաղաքի զանազան մասերից բոլոր ննջեցեալներին գերեզմաններ տանելու, դորա համար որոշեց քաղաքը բաժանել երկու մասի և վարձել երկու կաշկայ:

Նախագահ ժողովի՝ Մ. Ղազարեան

Անդամներ Գ. Փեշտմալճեան

Ս. Տէր - Գրիգորեան

Գ. Իսահակեան

Քարտուղար՝

Մն. Տէր-Մարտիրոսեան

ՀԱԱ, ֆ. 105, ց.1, գ. 2715, ք .12-13: Բնագիր: Ձեռագիր:

Արձանագրություն N 12

1919 թ. յունուարի 9-ին կայացաւ Ալէքսանդրապոլի քաղաքային ինքնավարութեան գաղթականական կոմիտէի նիստը նախագահութեամբ պ. Մ. Ղազարեանի, մասնակցութեամբ պ.պ. Գ. Փեշտմալճեանի, Ս. Տէր-Գրիգորեանի, Գ. Յովհաննիսեանի, Գ. Գիւլբէկեանի և Գ. Իսահակեանի.

Օրակարգի հարցեր.

1. Սննդատու կայանների և հանրակացարանների վառելիքի մատակարարելու հարցը

2. Գաղթականներին տալ քաղաքային և զինուորական պահեստներից շորեր

3. Հիւանդ և թոյլ գաղթականներին խնամելու հարցը

4. Որբերի համար առանձին ապաստարան հիմնել

5. Նոր հրախիւրող պաշտօնէաներ

6. 5-րդ սննդատու կայանի կառավարիչ Յուսիկ Տէր-Սկրտչեանի վարմունքը 1000 ռ[ուբլի] աւանս ստանալու և առանց կոմիտէի իմաց տալու թողնել հեռանալը:

7. Փոփոխութիւններ սննդատու կայաններում.

8. Պաշտօնէաների ռոճիկի աւելացում.

9. Կառավարչի հրաժարականը.

10. Ծառայողների ռոճիկների բաշխման հարցը.

11. Դիմում խնամատարութեան նախարարին փող ստանալու համար.

Նախ կարդացունց և ընդունեց նախկին ժողովի արձանագրութիւնը, ապա ժողովականները խորհրդակցութեան նիւթ դարձնելով վերոյիշեալ հարցերը, որոշեցին.

1. Վառելիքի համար պաշար տեսնել գնելով շուկայից և զանազան տեղերից վառելափայտ և աթար, բացի այդ յատուկ մարդ ուղարկել Մեծ Ղարաքիլիսայ փայտ գնելու:

2. Որովհետև քաղաքի պահեստներում կան բաւականաչափ քանակութեամբ հին շորեր, որոնցից Գաղթականական կոմիտէն հնարատրութիւն չունի օգտուելու, ուստի այդ մասին հարց բարձրացնել Դումայի նիստում, որպէսզի հնա-

րատրութիւն տրուի կոմիտէին օգտուելու այդ պահեստներից և գրատր դիմի զինուորական իշխանութեանը, որ նա շտապեցնի հին շորերի բաց թողնելը գաղթականների համար:

3. Հիւանդներին և թոյլերին ուղարկել ապաստարան, իսկ այնտեղից առողջներին տեղափոխել հանրակացարաններ:

4. Քաղաքային Դումայում հարց բարձրացնել որբերի և հիւանդների համար:

5. Որովհետև որբերի հանրակացարանի (9-րդ սննդատու կայան) համար նշանակուած պ. Յովհաննէս Բոլիսկեանցը չընդունեց կառավարչի պաշտօնը, ուստի նշանակուեց կառավարիչ այդ կայանին Տիգրան Յարոյեանցին թողնելով նոյն հանրակացարանի վերահսկող օր. Անահիտ Կիրակոսեանին, իսկ 4-րդ սննդատու կայանի կառավարիչ նշանակել պ. Գուրգեն Յարոյեանցին, գրասենեակի գործավարի պաշտօնը յանձնել Աղասի Վարոսեանին:

6. Ի նկատի ունենալով, որ 5-րդ սննդատու կայանի կառավարիչ Յուսիկ Տէր-Սկրտչեանը ստանալով 1000 ռ[ուբլի] աւանս և առանց կոմիտէին իմաց տալու թողել հեռացել է գիւղ, որոշեց այդ մասին գրել գաւառական կոմիսարին կարգադրել բերելու Տէր-Սկրտչեանին կոմիտէի գրասենեակը մաքրելու իր հաշիվները:

7. Որպէսզի սննդատու կայաններում և հանրակացարաններում ներկայացուած ցուցակների համեմատ կերակուր քաժանուի և առհասարակ կառավարիչների արած ծախսերի հաշիւները ստուգուի և ունենալիք զեղծումների առաջն առնուի կոմիտէն որոշեց նշանակել վերահսկող և ստուգող: Զեղծումների առաջն առնելու նպատակով կոմիտէն որոշեց նշանակել վերահսկող և ստուգող հաշիվների՝ պ. Գէորգ Մսերեանին, տալով նրան ռոճիկ յունուարի 1-ից ամսական 480 ռուբլի, նաև պահեստի համար մթերքներ գնող պ. Մ. Դազարեանի ռոճիկը դարձնել յունուարի 1-ից 480 ռուբլի:

8. Առաջին սննդատու կայանը որոշուեց թողնել անփոփոդ:

9. Կարդացուեց կոմիտէի գործերի կառավարիչ պ. Գ. Գիլլէկեանի հրաժարականը հիւանդութեան պատճառով:

Կոմիտեն յարգելով նրա խնդիրը, ընդունեց հրաժարականը և նրա տեղ ժամանակատուր կառավարիչ նշանակեց պ. Տիգրան Տէր-Ալէքսանդրեանին կառավարչի բոլոր իրաւունքներով:

10. Որոշեց մինչև յունվարի 1-ը վճարել բոլոր ծառայողների ռոճիկները:

11. Հեռագրել խնամատարութեան նախարարութեանը, որ եթէ երեք օրուայ ընթացքում փող չի ուղարկում, կոմիտեն կտայ իր հրաժարականը, ամբողջ պատասխանատւութիւնը թողնելով կառավարութեան վերայ:

Նախագահ՝ Մ. Ղազարեան
Անդամներ՝ Գ. Փեշտմալճեան
Ս. Տէր - Գրիգորեան
Գ. Իսահակեան
Քարտուղար՝ Մն. Տէր-Մարտիրոսեան

ՀԱԱ, ֆ. 105, ց.1, գ. 2715, ք 14-15: Բնագիր: Ձեռագիր:

Արձանագրութիւն N 13

11 յունուարի 1919 թ. կայացաւ գաղթականական կոմիտէի նիստը մասնակցութեամբ պ.պ. Գեղամ Փեշտմալճեանի, Սիմէօն Տէր-Գրիգորեանի, Գրիգոր Իսահակեանի, Կարապետ Մառանջեանի, Հաճիբալի Տէր-Յովհաննիսեանի և Վաղարշակ Ներսիսեանի:

Օրակարգի հարցեր.

1. Հիւանդանոցի խնդիրը և գիւղերը
2. Տնատէրերի դիմումը, որ նրանց տներում տեղաւորուած գաղթականները աւերում են տները քանդելով դռները, սիւները և լուսամտւոները
3. Նախկին ծառայող Ն. Շիրակունու խնդիրը իր հրաժարականի մասին.
4. Հանրակացարանների խնդիրը.
5. Սննդատու կայանների բաժանելու խնդիրը.
6. Ծառայողների խնդիրը.

7. Գերեզմանատան խնդիրը.

8. Նախարարութեան պահանջը փաստաթղթեր ներկայացնել կատարուած ծախսերի.

9. Փոխառութեան խնդիրը.

10. Որբանոցի համար հաց խնդրել Քաղաքային վարչութիւնից.

11. Չորրորդ սննդատու կայանի խնդիրը.

12. Ծառայողների ռոճիկների աւելացման խնդիրը.

Որոշեց՝

1. Գրատր դիմել Քաղաքային հիւանդանոցի գլխաւոր բժշկին, որ կոմիտէն համաձայն է վճարել քաղաքային հիւանդանոցի ծախսերի այն մասը, որ կը համապատասխանի հիւանդ փախստականների թոին: Գաղթականական կոմիտէի բժիշկ պ. Ս. Մելիք-Բաբախանեանը պարապելու է հիւանդանոցում և ռոճիկ ստանալու է կոմիտէից, այն դեղերը, որոնք հիւանդանոցում չեն հասնի, վերցնել Ս[ուրբ] Փրկչի դեղատնից վճարելով գոյութիւն ունեցող սակագնի 75 տոկոս ինչպէս արդէն պայմանաւորուած է դեղատան կապալառու պ. Կացմանի հետ:

2. Լսելով տնատէրերի բողոքը, որով նրանք յայտնում են, որ գաղթականները իրենց տները քանդում են, ի նկատի ունենալով, որ դա հետևանք է փայտի պակասութեան, որ կոմիտէն անկարող է փայտ ձեռք բերել փող չունենալու պատճառով, գրատր յայտնել Ալեքսանդրապոլում գտնուած ներքին գործերի նախարարի լիազոր պ. Խոյեցեանին⁸⁰ և խնամատարութեան նախարարին, որ կառավարութեան խոստացած դրամական նպաստը չստանալու պատճառով կոմիտէն անկարող է այդ երևոյթի առաջն առնել և հրաժարում է հետագայ պատասխանատւութիւնից:

1. Գրատր յայտնել քաղաքային վարչութեանը, որ բազմաթիւ գաղթականների բողոքի հիման վերայ կոմիտէն ստուգութիւն կատարեց 5-րդ սննդատու կայանում, որտեղ ծառայում էր Շիրակունին և գտնելով, որ տասներկու օրուայ ընթացքում նա չի կարողացել ցուցակագրել և որոշ կարգ

մտցնել կերակուր բաժանելու գործում, որի հետևանքով ուժեղ տղամարդիկ ստանում էին կերակուր մի քանի անգամ, իսկ կանայք ու երեխաները ոչ մի անգամ, կոմիտեն որոշեց հեռացնել նրան պաշտօնից:

4. Որովհետև Խոյեցեանների և Չախմախչեանների տներում գտնուող հանրակացարանները չի կարելի տաքացնել, որոշեց փախստականներին տեղափոխել բերդի մօտ գտնուող Կարանեանի կազարմաները, նոյն տեղը տեղափոխելով և 8-րդ սննդատու կայանը: Կրճատել հանրակացարանների վերակացուների թիւը, յանձնելով երկու և աւելի հանրակացարանները մի վերակացուի՝ համաձայն տեղի պայմանների: Հանձնարարել հանրակացարանների վերակացուներին ամեն մի հանրակացարանից վերցնել իրանց օգնական փախստականներից առանց վարձի, որ հսկելու են մաքրութեան և կարգապահութեան վրայ:

5. Սննդատու կայանների բաժանելու խնդիրը դրամական միջոցներ չլինելու պատճառով յետաձգել:

6. Դրամական միջոցներ չը լինելու պատճառով որոշուեց կրճատել ծառայողների թիւը, առաջին հերթին արձակել հաշուապահի օգնական Գէորգ Տէր-Մկրտչեանին և գրասենեակի ծառայող օր[իորդ] Բզաբեղա Տէր-Գրիգորեանին: Յանձնարարել կառավարչին մի երկու օրուայ ընթացքում պարզել ծառայողների միւնիսում թիւը, որոնք անհրաժեշտ են սննդատու կայանները և հանրակացարանները կառավարելու համար, ներկայացնելով աւելորդ համարուած ծառայողների ցուցակը:

7. Գրել քաղաքային վարչութեանը և խնդրել, որ գերեզմանատան բանտրների թիւը շատացնել, որպէսզի հնարաւորութիւն լինի ամեն օր տարուած մեռելներին նոյն օրը թաղել:

8. Կարճ ժամանակում պատրաստել կատարած ծախսերի փաստաթղթերը և ներկայացնել քաղաքային վարչութեան նախարարութեանը ներկայացնելու:

9. Որովհետև Գաղթականական կոմիտէի բազմաթիւ դիմումները փող ստանալու համար մնացին անհետևանք, որից

յետոյ պ. Արշակ Ջամալեանի միջոցով կառավարութիւնը յայտնել է, որ ոչ մի կոպէկ չի կարող ուղարկել միջոցներ չլինելու պատճառով, որոշեց դիմել փոխառութեան տեղական բանկերից, նախապէս ստանալով կառավարութեան համաձայնութիւնը:

10. Գրաւոր դիմել քաղաքային վարչութեանը և խնդրել, որ որբերի հանրակացարանների համար հաց բաց թողնել ինչպէս բաց են թողնում քաղաքային որբանոցների համար:

11. Գրաւոր յայտնել սննդատու կայանների կառավարիչներին, որպէսզի դադարեցնեն տեղացիների ցուցակագրութիւնները կերակուր բաց թողնելու համար: Ուղարկել կոմիտէի անդամների ցուցակը և հրահանգել որպէսզի անթերի կատարեն բոլոր այն կարգադրութիւնները, որ կարուեն կոմիտէի անդամների կողմից կայանները այցելելու ժամանակ: Հանձնարարել վերահսկչին ստուգութիւն կատարել 4-րդ սննդատու կայանում և իւր կարծիքը յայտնել գրաւոր: Կայանի շրջանում գտնուած գաղթականներից ընտրել տալ լիազօրներ ոչ պակաս 5 հոգուց բաղկացած, որոնք վերստուգելու են ցուցակները մասնակցելու են պարեն ստանալու և կերակուր բաժանելու գործին:

12. Գ. Գիւլբէկեանին հրաւիրել կոմիտէի անդամի իրատունքով:

Նախագահ- Գ. Փեշտմալճեան
Անդամներ՝ Ս. Տէր -Գրիգորեան
Գ. Իսահակեան
Վ. Ներսիսեան
Քարտուղար՝ Տէր- Մարտիրոսեան

ՀԱԱ, ֆ. 105, ց.1, գ. 2715, ք.16 : Բնագիր: Ձեռագիր:

Արձանագրութիւն N 14

1919 թ. յունուարի 16-ին Գրասենեակում կայացաւ Ալէքսանդրապոլի քաղաքային ինքնակարութեան գաղթականա-

կան կոմիտեի նիստը նախագահութեամբ պ. Գ. Փեշտմալճեանի, մասնակցութեամբ պ. պ. Գ. Իսահակեանի, Ս. Տէր-Գիրգորեանի, Վ. Ներսիսեանի, Ար. Զարիֆեանի, Հ. Տէր-Յովհաննիսեանի, Կ. Սառանջեանի և Ա. Տէր-Ալէքսանդրեանի

Օրակարգի հարցեր.

1. Ընթերցումն նախկին արձանագրութիւնների.

2. Ձեկուցում պահեստի մասին.

3. Գաւառում հինգ կէտերում նոր սննդատու պունկտեր հիմնել.

4. Ձեկուցում բժշկի մասին.

5. Ձեկուցում ծառայողների մասին.

6. Պարենատորման բաժնի ներկայացուցիչ ունենալու մասին.

7. Մելքոն Յարոյեանի, Կ. Շահրազեանի և Ալ. Տիրատուրեանի խնդիրը.

8. Արհեստանոցի խնդիրը.

Նախ կարդացուեց և ընդունուեց նախկին ժողովների արձանագրութիւնները, ապա քննութեան առաւ օրակարգի միւս հարցերը.

1. Պ. կառավարիչը ժողովին յայտնեց, որ այսօրուանից պահեստում ո՛չ վառելիք կայ, ո՛չ բրինձ և ո՛չ էլ մի ուրիշ մթերք, իսկ մսագործը փող չստանալու պատճառով հրաժարուած է վաղուանից միս բաց թողնելը: Ժողովը լսելով յիշեալ զեկուցումը, որոշեց դիմել քաղաքային վարչութեանը և խնդրել բաց թողնել 150000 րուբլի մսագործի պարտքը վճարելու և անհրաժեշտ ծախսերը կատարելու համար:

Որոշուեց քաղաքային վարչութիւնից 150 հազար րուբլին ստանալուց յետոյ համաձայն խնամատարութեան մինիստր Խատիսեանի գրութեան անմիջապէս Նորաշեն, Բազիրխանա, Ադին, Դոշափանք, Տավշանդշլախ գիւղերում բաց անել սննդատու կայաններ, յիշեալ պունկտերի համար կառավարիչներ հրաւիրել, պատուիրելով նոցա, որ գիւղերում եղած տաճիկ կառավարութեան օրով հաւաքած ցորենը բաժանել

շրջակայ գաղթականութեանը հաւասար չափով:

Յետոյ պ. նախագահը ժողովին յայտարարեց, որ թէև կառավարութիւնը հրահանգել է քաղաքային վարչութեանը իր մօտ եղած 500 հազար Նիկոլասկի դրամներից տրամադրել կոմիտէիս գաղթականութեան ծախսերը հոգալու համար, բայց հավատացած են, որ քաղաքային վարչութիւնը մեր պահանջած գումարը չի տալու, որովհետև կարծէս թէ նա կասկածանքով է վերաբերում դէպի կոմիտէի գործունէութիւնը: Իսկապէս մերժում ստանալուց յետոյ կոմիտէին մնում է տալ իր հրաժարականը, իրերի դրութիւնը պարզելով Դումայի առջև, ամբողջ պատասխանատւութիւնը թողնելով քաղաքային վարչութեան վերայ:

Ժողովը լսելով պ. նախագահի յայտարարութիւնը, տուեց իր համաձայնութիւնը:

3. Պ[արոն] նախագահը ժողովին զեկուցեց, որ հիւանդանոցի բժիշկը այժմ առողջացել է, սրանից յետոյ հիւանդներին նա է ընդունելու, այնպէս որ այսուհետև այլևս մեր բժշկին՝ պ. Բաբախանեանին այստեղ մնալը անելորդ է: Հիմա հարց է բարձրանում, թէ պէտք է նրան պահել, թէ ոչ: Յետոյ պ. բժիշկը երեք օրով արձակուրդ է խնդրել: Ժողովը որոշեց բժշկին պահել նախկին պայմաններով և տալ նրա խնդրած արձակուրդը:

4. Պ[արոն] կառավարիչը յայտնեց, որ ծառայողների ընդհանուր թիւը կրճատուելուց յետոյ մնացել են ընդամենը 33 հոգի ծառայող: Ժողովը գտաւ, այլևս չի կարելի կրճատել այլ ընդհակառակը չսահմանափակուել այդ թւով և կարիք եղած դէպքում հրաւիրել նոր մարդիկ:

5. Պ[արոն] նախագահը ժողովին յայտնեց, որ պարենատրման մինիստրութեան ներկայացուցչի առաջարկութեամբ տեղում կազմուելու է նոր պարենատրման կոմիտէ և նոր կոմիտէի անդամները լինելու են տեղական հիմնարկութիւնների ներկայացուցիչները, որոնց թւում և մեր կոմիտէի ներկայացուցիչը, և առաջարկեց ժողովին դրա համար ընտրել մի ներկայացուցիչ: Ժողովը միաձայն ընտրեց պ. նախա-

գահին:

6. Կարդացուեց Մելքոն Յարոյեանի խնդիրը, որով նա խնդրում էր 21 օրուայ օրավարձ 4-րդ պունկտում աշխատելու համար: Որովհետև այ. Յարոյեանը առանց կոմիտեի գիտութեան հրաիքրուած է եղել պունկտի կառավարչի կողմից, այն է՝ Տիգրան Յարոյեանի կողմից, ժողովը որոշեց տալ օրական 12 բուբլի հաշուելով նորա աշխատավարձը զգուշացնելով բոլոր պունկտերի կառավարիչներին այսուհետև նրանք իրաւունք չհամարեն իրենց առանց կոմիտեի գիտութեան մարդիկ վարձելու և նման դէպքեր չը կրկնուեն:

7. Որոշուեց Կարապետ Շահբազեանին տալ երեք օրուայ աշխատավարձ 36 բուբլի նոր բացուելիք հիւանդանոցում ծառայելու համար, իսկ Ալէքսան Տիրատուրեանին սննդատու պունկտեր բաց անելու համար Ալազեազ կայարան գնալ գալու համար ճանապարհածախս և վարձատրութիւն տալ մի հարիւր բուբլի:

8. Համաձայն Դումայի որոշման, որով քաղաքի աղքատախնամ Հոգաբարձութեան և կոմիտեի գործունեութիւնը միացնում է, որոշուեց հոգաբարձութեան բաց արած բրդեղէնի գործարանը ընդունել կոմիտեի հովանաւորութեան տակ և հոգալ հարկաւոր ծախսերը:

Նախագահ ժողովի՝	Գ. Փեշտմայճեան
Անդամներ՝	Ս. Տէր- Գրիգորեան
	Գ. Իսահակեան
	Վ. Ներսիսեան
Քարտուղար՝	Տէր- Մարտիրոսեան

ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2715, ք. 18 : Բնագիր: Չնռագիր:

Արձանագրութիւն N 15

1919 թ. 23-ն յունուարի, գրասենեակում կայացաւ Ալէքսանդրապոլի քաղաքային Ինքնավարութեան Գաղթականական կոմիտեի նիստը նախագահութեամբ այ. Գ. Փեշտմալ-

ճեանի մասնակցութեամբ պ.պ. Գ. Իսահակեանի, Ս. Տէր-Գրիգորեանի, Վ. Ներսիսեանի, Ար. Զարիֆեանի, Հ. Տէր-Հովհաննիսեանի, Կ. Մառանջեանի և Ա. Տէր-Ալէքսանդրեանի

Օրակարգի հարցեր.

1. Ընթերցումն նախկին արձանագրութիւնների.

2. Ձեկուցում պահեստի մասին.

3. Ծառայողների ռոճիկների հարցը.

4. պ. Վ. Ներսիսեանի բողոքը 7-րդ պունկտի կառավարչի դէմ.

5. 8-րդ պունկտի կառավարչի օգնական Կ. Շահբազեանի բողոքը կառավարիչ Տ. Յարոյեանի դէմ:

6. Հանրակացարանների տնատէրերի դիմումը տները քանդելու մասին.

7. Մեյքոն Յարոյեանի խնդիրը.

8. Վարոս Սարգսեանի դիմումը նպաստ ստանալու մասին.

9. պ. Ներսիսեանի զեկուցումը գրքոյկների մասին.

10. Ձեկուցում վերահսկիչի.

11. Հանրակացարաններին նոր վերակացուներ հրաւիրելը.

12. «Շիրակի աշխատատրի» յօդուածներին պատասխանելը.

13. Գիւղական գաղթականներին ցորեն բաժանելու խնդիրը.

14. Ապաստարանի խնդիրը.

15. Արհեստանոցի խնդիրը.

15. Ընթացիկ հարցեր.

1. Նախ կարդացուեց և ընդունուեց նախկին ժողովի արձանագրութիւնը.

2. Պ[արոն] կառավարիչը ժողովին յայտնեց, որ պահեստում ոչ փայտ կայ և ոչ էլ որևէ մթերք, իսկ մսագործի հաշիւը պէտք է մսքրել, որպէսզի շարունակէ միս բաց թողնել: Ժողովը լսելով յիշեալ զեկուցումը, որոշեց մսագործի հաշիւները

մաքրել, իսկ հարկաւոր մթերքները գրել և պահեստից պահանջել, որովհետև ներկայումս պահեստում ցորենի պաշարը շատ է, սննդի համար դիմել պարենաւորման մինիստրի ներկայացուցչին և խնդրել նորման բարձրացնել 12 մսխալի⁸¹, իսկ պարենաւորման բաժանմունքի ներայացուցչից պահանջել մի зернодавилка⁸² ցորենը ձաւար շինելու համար:

3. Ժողովը քննութեան առնելով ծառայողների ռոճիկների աւելացման խնդիրը առաջարկութեամբ պ. Ս. Տէր-Գրիգորեանի որոշեց եկող փետրուարից բոլոր ծառայողների ռոճիկները աւելացնել 50 տոկոսով, իսկ հանրակացարանի վերակացուների ռոճիկները փետրուարի 1-ից դարձնել 500 րուբլի:

4. Կարդացուեց կոմիտէի անդամ Վ. Ներսիսեանի բողոքը 8-րդ պունկտի կառավարիչ Բ. Յովհաննիսեանի դէմ, որով բողոքում է, որ կերակուրը բաժանում է անկանոն ինչպէս խոհանոցի հաւաքողները իրենց ընտանիքի թուի համեմատ կրկնակի և եռակի են ստանում, չնայելով, որ պ. Յովհաննիսեանին զգուշացուած է այդ ծառայողներին հեռացնել և լինել կարգապահ, բայց պ. Յովհաննիսեանը մեր նկատողութեանը նշանակութիւն չի տուել, նոյն ծառայողները մնացել են իրենց պաշտօնում և այսօր էլ նրանք շարունակում են իրենց ապօրինի վարմունքը իրենց բարեկամներին կրկնակի և խոշոր բաժին տալով ինչպէս բռնուեցին այսօր: Ժողովը լսելով նրա գրաւոր և բանաւոր բողոքը, ապա կարդաց և լսեց պ. Յովհաննիսեանի բացատրութիւնը, որը գտնելով անբաւարար և իր պաշտօնի մեջ թոյլ ժողովը որոշեց հեռացնել պ. Բ. Յովհաննիսեանին, որպէս անհամապատասխան պաշտօնէայի, իսկ միւս ծառայողներին հեռացնել, որպէս անբարեխիղճ ծառայողների: Յետոյ յայտնել բոլոր պունկտերի կառավարիչներին, որ սրանից յետոյ խոհանոցի բոլոր ծառայողները միայն իրենք իրաւունք ունեն աւելի կերակուրով օգտուել, իսկ նրանց ընտանիքները ստանալու են իրենց թուի համեմատ, ինչպէս միայն գաղթականները: Յետոյ նման դէպքերը չկրկնելու համար պէտք է ամեն շաբաթ խոհանոցի

ծառայողների մի մասին հեռացնել նորերին հրափրել:

5. Կարդացուեց 8-րդ պունկտի կառավարչի օգնական պ. Շահբազեանի բողոքը կառավարիչ պ. Յարոյեանի դեմ, որով յայտնում է, թէ ինչպէս Յարոյեանը ստացած ցորենը տանում է իր տունը և տնից բերելիս կշռել է, որ 7 ֆ[ունտ] պակաս է, իսկ 11 փ[ութ] 20 ֆ[ունտ] միս ստանալու փոխարէն ստացել է 10 փ[ութ] 20 ֆ[ունտ], այսպէս մի փութ պակաս, և իրեն թոյլ չի տուել միսը կշռելու, բայց հակառակ նրա կամքի կշռել է և ստուգել է, որ իսկապէս մի փութ պակաս է ստացուած և այսպէս շարունակ կրկնուել է: Ժողովը որոշեց Յարոյեանին հեռացնել պաշտօնից պահանջելով նորա բացատրութիւնը և Շահբազեանի վկաների ցուցմունքը, իսկ Յարոյեանի հաշիւները չմաքրել մինչև նորա գործի քննութեան վերջը:

6. Կարդացուեց տնատերերի բողոքը, թէ ինչպէս գաղթականները առանց ափսոսալու քանդում են իրենց յատակները, դուռ ու լուսամուտները և այրում: Ժողովը որոշեց յայտնել նոցա, որ այս բոլորի մասին յայտնուած է կառավարութեանը և սպասում է նորա կարգադրութեանը:

7. Մելքոն Յարոյեանը 40 բութլու հաշիւ է ներկայացնում, որ նա իբր թէ 8-րդ պունկտում մի վառարան է շինել: Ժողովը որոշեց մերժել Յարոյեանի պահանջը, որովհետև նա այդ ժամանակ համարում էր պունկտի ծառայող և ստանում էր օրավարձ:

8. Պ[արոն] նախագահը ժողովին յայտնեց, որ 6-րդ պունկտի կառավարիչ Վարոս Սարգսեանը դիմել է քաղաքային վարչութիւն և նպաստ խնդրել, որովհետև հնարատրութիւն չունի ապրելու և իր բազմանդամ ընտանիքը պահելու, իսկ քաղաքային վարչութիւնը այդ յանձնել է կոմիտէի հայեցողութեանը: Ժողովը լսելով յիշեալ զեկուցումը որոշեց մերժել պ. Սարգսեանի խնդիրը, որովհետև նա երկրորդ ամիսն է, որ ծառայում է սննդատու կայանում և ամսական ստանում է 360 բութլու վարձատրութիւն:

9. Կոմիտէի անդամ պ. Վ. Ներսիսեանը ժողովին յայտ-

նեց, որ պունկտի կառավարիչները գաղթականներից ետ վերցրած գրքոյկները փոխանակ գրասենեակ ներկայացնեն տալիս են իրենց ծանոթ կամ բարեկամ գաղթականներին և շահագործում: Ժողովը որոշեց յայտնել բոլոր գաղթականներին, որ այդպիսի գրքոյկները ներկայացնեն գրասենեակ:

10. Կարդացուեց պ. վերահսկչի գրառոր գեկուցումը, որով յայտնում է իր այցելած հանրակացարանների և սննդատու պունկտերի պակասությունները, ժողովը գտնուելով բաւարար պ. վերահսկչի գեկուցումը յանձնարարեց պ. կառավարչին թւած պակասությունները կատարելու և որոշեց հրաւիրել երկրորդ վերահսկիչ, որը լինելու է մասվաճառի մօտ և ստուգելու կառավարիչների տարած միսը:

11. Որովհետև պունկտերում պատրաստած ճաշը գաղթականներին հերիք չի անում, որոշուեց նոր վառարաններ շինել, պղինձների թիւը աւելացնել, իսկ կերակուրը մաքուր լինելու համար փայտից պղնձակալ շինել տալ:

12. Որովհետև իւրաքանչիւր վերակացուի յանձնուած են 1-3 հանրակացարան, որոնք հնարաւորութիւն չունեն մաքրութեանը հետևելու, որ շարունակ բողոքներ է լսում այդ մասին, որոշեց ամեն մի հանրակացարանի համար ունենալ մի վերակացու, իսկ երկու հանրակացարանի կարելի է յանձնել մի վերակացուի այն դէպքում, երբ դրանք մօտ են միմեանց: Պէտք է լինել խստապահանջ և կառավարիչներից պահանջել, որ եթէ մի բողոք լսուեց հանրակացարանների մասին, նրանք արձակոււմ են պաշտօնից:

13. Պ[արոն] նախագահը ժողովին յայտնեց, որ պէտք է պատասխանել «Շիրակի աշխատատրի» կոմիտէի հասցեին ուղղած մեղադրանքներին և կոչ անել բողոքողներին, որ նոքա մասնակցեն կոմիտէի մեջ անդամի իրաւունքով և ցոյց տան գործով, որ նոքա գաղթականների սրտացաւ բարեկամներ են: Ժողովը խնդրեց պ. նախագահին այդ պատասխանը կազմելու:

14. Պ[արոն] նախագահը ժողովին յայտնեց պարենատրման նախարարութեան ներկայացուցչի և գաւառական կոմի-

սարը գիտերում հացահատիկները ~~ռելի~~ իզիցիա⁸³ են ենթարկելու և հաւաքուած ցորենն ու գարին յանձնելու են կոմիտէի ներկայացուցիչներին գաղթականութեանը բաժանելու համար, որովհետև գործը շտապ էր առանց ժողովի որոշման կոմիտէի կողմից որպէս փորձուած մարդիկ նշանակել եմ պ. Գ. Մորգանին և պ. Գ. Յարութիւնեանին պատուիրելով նոցա, որ իւրաքանչիւր շնչին տան 6-8 ֆ[ունտ] ցորեն: Ժողովը լսելով յիշեալ զեկուցումը տուեց իր համաձայնութիւնը:

15. Որոշուեց քաղաքի ապաստարանից առողջ գաղթականներին տեղափոխել հանրակացարան, իսկ այնտեղից հիվանդներին՝ ապաստարան:

16. Յանձնարարուեց պ.պ. Տէր Յովհանիսեանին, Մառանջեանին և Ներսիսեանին արհեստանոցի հաշիւները պատրաստել և արհեստանոցի ամբողջ անցուդարձի մասին զեկուցել ժողովին:

17. Որոշուեց դիմել կոմենդանտին պղինձներ ճարելու համար ստանալ գաղթականների թուի համաձայն:

18. Կարդացուեց խոհարար Պօղոսեանի խնդիրը, որով խնդրում է վարձատրութիւն, ժողովը որոշեց մերժել նրա խնդիրը:

19. Որոշուեց արհեստանոցի համար քաղաքային վարչութիւնից խնդրել 10 փութ բուրդ:

20. Պ [արուն] նախագահը ժողովին յայտնեց, որ «Շիրակի աշխատատը»-ի միջոցով հօգուտ գաղթականների ստացուած է 85 ռ[րութի], հաւաքուած պ. Կ. Վարտիքեանի հրաւերի համաձայն:

Ժողովը որոշեց ընդունել յիշեալ գումարը և գրաւոր յայտնել կոմիտէի շնորհակալութիւնը:

Նախագահ ժողովի՝ Գ. Փեշտմալճեան

Անդամներ՝

Վ. Ներսիսեան

Քարտուղար՝

Տէր- Մարտիրոսեան

Արձանագրություն N 16

1919 թ. 28-ն յունուարի ժամը 5-ին արհեստանոցում կայացաւ Ալէքսանդրապոլի քաղաքային ինքնավարութեան գաղթականական կոմիտէի նիստը՝ նախագահութեամբ պ. Գ. Փեշտմալճեանի, մասնակցութեամբ պ.պ. Գ. Իսահակեանի, Ս. Տէր Գրիգորեանի, Վ. Ներսիսեանի, Ար. Չարիֆեանի, Հ. Տէր Յովհաննիսեանի, Կ. Մառանջեանի և Ա. Տէր Ալէքսանդրեանի, Գինոսեանի և գաղթականութեան ներկայացուցիչների:

Օրակարգի հարցեր.

1. Նախկին ժողովի արձանագրությունների ընթերցումն.
2. Ձեկուցում վերահսկչի հանրակացարանների և պունկտների մասին.
3. Բացատրություն կառավարիչ Տ. Յարոյեանի.
4. Խաչատուր Տէր- Յարութիւնեանի 4 մեշօկի հաշիվը.
5. Բժշկի գրատըր զեկուցումը.
6. Բժիշկը դժվարանում է բոլոր հանրակացարանները այցելել ոտքով, պահանջում է կառք կամ առանձին վարձատրութիւն.
7. Հիւանդացող ծառայողների դրութիւնը .
8. Մթերքներ ստանալու խնդիրը.
9. Ծառայողների 3-րդ դիմումը ռոճիկների աւելացման մասին.
10. Հաշւապահ Կ. Մատնիշեանի խնդիրը.
11. Մսավաճառի պակաս միս տալու խնդիրը.
12. Արձանագրութիւն 3-րդ պունկտին վատ միս տալու համար:

Նախ կարդացուեց և ընդունուեց նախկին ժողովի արձանագրութիւնը:

Ժ. նախագահը ներկայացուցիչներին կոմիտէի գործունեութեան հետ ծանօթացնելու և առհասարակ գաղթականութեան ամբողջ անցուդարձի մասին տուեց իւր զեկուցումը և

կարգադրեց վերջին արձանագրութիւնը, թէ ինչպիսի որոշումներ է արել կոմիտէն: Յետոյ ներկայացուցիչները յայտնեցին, որ իրենք եկել են գաղթականութեան կողմից նրանց պահանջները յայտնելու, այն է՝ կոմիտէի կազմի մէջ ունենալ իւր ներկայացուցչութիւնը և երկրորդ՝ վերացնել սննդատու կայանները և դրա փոխարէն փողը և նոր ստացուելիք ցորենը բաժանել գաղթականութեանը: Երբ գաղթականութիւնը ինքն է որոշում իւր բախտը կոմիտէն իրաւունք չունի մերժելու նրա ցանկութիւնները: Կոմիտէն ի նկատի առնելով գաղթականների ցանկութիւնները, որոշեց կոմիտէի մէջ ունենալ գաղթականների ներկայացուցիչներից անդամի իրաւունքով, չորս հոգի, մէկը՝ Կարս քաղաքից, միւսները՝ նրա շրջաններից: Իսկ ինչ վերաբերում է սննդատու կայաններին, ապա դադարեցնել այն դէպքում, երբ ստացունեն փող և ցորեն: Յետոյ այժմեանից պատրաստութիւններ տեսնել գաղթականներին ցուցակագրելու և նոր գրքոյկներ տալու համար, որից յետոյ ձեռնարկուելու է փողի և ցորենի բաժանումը:

3. Պ[արոն] նախագահը ժողովին յայտնեց, որ պ. Սորգանը շուտով գնալու է գիւղերը ցորեն բաժանելու համար, իսկ նրա տեղը պէտք է հրաւիրել նոր կանտրալեօր և առաջարկեց շտաբս կապիտան պ. Մ. Խաչատրեանին: Ժողովը լսելով յիշեալ զեկուցումը, որոշեց հրաւիրել կանտրալեօրի պաշտօնով պ. Խաչատրեանին:

4. Կարդացուեց 8-րդ պունկտի կառավարիչ Տիգրան Յարոյեանի բացատրութիւնը պակաս միս ստանալու համար: Ժողովը որոշեց այս գործը յայտնել քննիչին և նման դէպքեր չկրկնելու համար զգուշացնել միւս կառավարիչներին:

5. Կարդացուեց փախստական Խաչատուր Տէր-Յարութիւնեանի հաշիւը, որով պահանջուած է չորս մեշօկի գին, որը ծախել է 8-րդ պունկտին: Ժողովին յայտնուեց, որ կասկածում է, որ այդ մեշօկները կարող է մեր պահեստից տարած լինեն զանազան ժամանակներում, որովհետև մի քանի անգամ կառավարիչ Տէր-Յարութիւնեանին հրաւիրել է գրասենեակ փողը ստանալու և հարկատու հարց ու փորձը

անելու համար, մինչև օրս նա չի ներկայացել գրասեննակ:

Բացի այդ պահեստապետ պ. Տեր-Մարտիրոսեանը ժողովին յայտնեց նման մի դէպք, թէ ինչպէս կառավարիչ պ. Տիգրան Յարօյեանը պահեստից վերցրել է չորս մեշօկ և մինչև օրս չի ցանկանում վերադարձնել պահեստ:

6. Կարդացուեց բժիշկ Բաբախանեանի գրաւոր զեկուցումը վարակիչ հիւանդութիւնների և հանրակացարանների մասին: Յետոյ զեկուցուեց, որ բժիշկը դժուարանում է ոտքով գնալ բոլոր հանրակացարանները և պահանջում կամ կառք, կամ առանձին վարձատրութիւն: Իսկ պ. Գ. Իսահակեանը ժողովին յայտնեց խնամատարութեան միջնատրութիւնից ստացուած հեռագիրը, որով յայտնում է, որ դրամը տեղափոխուած է և ուղարկում է նաև բժիշկ և ֆելդշեր: Ժողովը լսելով այս զեկուցումը, որոշեց այս հարցը յետաձգել մինչև նոր բժշկի գալը:

7. Որոշուեց հիւանդացող ծառայողների համար, որ նրանք արձակուած չեն իրենց պաշտօնից և պէտք է շարունակեն ռոճիկ ստանալը մինչև նրանց առողջանալը, որ յետոյ նրանք շարունակելու են իրենց պաշտօնավարութիւնը, իսկ բժշկին պէտք է պարտաւորեցնել, որ այցելի նրանց և առհասարակ ծառայողների ընտանիքների հիւանդացած անդամներին, որի համար նա կստանայ առանձին վարձատրութիւն: Իսկ մահուան դէպքում մի ամսուայ ռոճիկի չափով նպաստ տալ նրա ընտանիքին և այդ մասին յայտնել Սինիստրութեանը և ստանալ նրա համաձայնութիւնը:

8. Պ[արոն] նախագահը ժողովին յայտնեց, որ քաղաքի պահեստի ցորենը սպառուած է չմաքրած, մի քամիչ մեքենա լինելու պատճառով, որը չի կարողանում հասցնել: Ժողովը որոշեց դիմել քաղաքային վարչութեանը՝ խնդրելով աւելացնել քամիչ մեքենայի թիւը:

9. Ծառայողների կողմից յայտնուեց, որ չնայելով կոմիտէին ռոճիկ ստանալու համար մի քանի անգամ դիմումներ անելուց յետոյ ոչ մի դրական պատասխան չեն ստացել ստանալու են թէ ոչ և նորից խնդրում են այդ մասին կարգադ-

րութիւն անել: Ժողովը որոշեց ծառայողների ցուցակը ներկայացնել և դիմել պ. Չախմախսազեանին, մթերքներ ստանալու համար, իսկ ծառայողներին դիրութիւն տալու համար նորա արժէքը վճարել, յետոյ նրանց ռոճիկից դուրս գալ իր ստացած մթերքի արժէքը:

10. Փայտ չլինելու պատճառով, որոշուեց դիմել քաղաքային և երկաթուղու վարչութիւններին, միջոցներ ձեռք առնել փայտ ստանալու համար:

11. Ժողովը քննութեան առնելով ծառայողների երրորդ դիմումը ռոճիկների աւելացման մասին, յարգելով ծառայողների խնդիրը, որոշեց նրանց բաւարարել յունուարի 1-ից 50 տոկոսով, համաձայն Դումայի որոշման, բայց որովհետև շուտով պունկտերը վերանալու են և ծառայողների շտատը և նրանց աշխատանքի ձևը փոխում է, յանձնարարուեց պ. նախագահին նոր շտատ կազմելու և նոր ռոճիկներ նշանակել նրանց:

12. Կարդացուեց 7-րդ պունկտի կառավարչի օգնական Թոռունեանի յայտարարութիւնը մի փութ միսը պակաս ստանալու համար: Ժողովը յանձնարարեց պ.պ. Ս. Տէր Գրիգորեանին, Գինոսեանին, Տէր-Յովհաննիսեանին և Գ. Մսերեանին և Կ. Սառանջեանին քննել Թոռունեանի և Յարոյեանի գործերը և եզրակացութիւն ներկայացնել ժողովին:

13. Կարդացուեց ժողովին ի գիտութիւն գրասենեակում կազմած արձանագրութիւնը, թէ ինչպէս մսի կապալառուն 3-րդ պունկտին մսի փոխարէն ոտքեր է տուել և յայտարարուեց, թէ ինչպէս նա առհասարակ գոմշի միս է տալիս և վերջերս մսի հարկատու քանակը չի տալիս, որով գաղթականների տրտունջը աւելի է բարձրանում կոմիտէի դէմ: Ժողովը որոշեց տուգանել նրան 300 րուբլիով համաձայն պայմանագրի և այդ բոլոր թերութիւնների մասին յայտնել նրան:

14. Որոշուեց ընթացիկ ծախսերի համաքաղաքային վարչութիւնից խնդրել 75 հազար րուբլի աւանս:

Նախագահ ժողովի՝ Գ. Փեշումալճեան

Անդամներ՝	Յովհաննիսեան
	Վ. Ներսիսեանց
Քարտուղար՝	Տէր- Մարտիրոսեան

ՀԱԱ, ֆ. 105, ց.1, գ. 2715, ք. 23: Բնագիր: Ձեռագիր:

Արձանագրութիւն N 17

1919 թ. 31-ին յունուարի ժամը 4-ին արհեստանոցում կայացաւ Ալէքսանդրապոլի Քաղաքային ինքնավարութեան Գաղթականական կոմիտէի նիստը՝ նախագահութեամբ պ. Գ. Փելտմալճեանի, մասնակցութեամբ պ.պ. Գ. Իսահակեանի, Ս. Տէր-Գրիգորեանի, Վ. Ներսիսեանի, Ար. Չարիֆեանի, Հ. Տէր Յովհաննիսեանի, Կ. Մառանջեանի և Ա. Տէր-Ալէքսանդրեանի, Գինոսեանի, Թիֆլիսում Ալէքսանդրապոլի Հայրենակցական Միութեան Վարչութեան անդամ Յովս. Միրզոյեանի, Դաշնակցութեան ներկայացուցիչ Շ. Շիրակունու, գաղթականութեան ներկայացուցիչներ Ս. Տէր-Սահակեանի, Համազասպ Քեօսայեանի, Համայակ Աբաջեանի, Յովհ. Մովսէսեանի, Յակ. Մազմանեանի և կառավարիչ Ա. Տէր-Ալէքսանդրեանի:

Օրակարգի հարցերը.

1. Ընթերցումն նախկին արձանագրութեան.
 2. Գաղթականների ընդհանուր ժողովի արձանագրութեան ընթերցումը.
 3. Ձեկուցում կոմիտէի մասնաժողովի Յարոյեանի և Թոսունեանի խնդրի վերաբերեալ.
 4. Շահնագարեանի խնդիրը.
 5. Պրօյեկտ ցորեն և փող բաժանելու մասին.
 6. Բժշկի կառքի խնդիրը.
 7. Ծառայողների ռոճիկը.
 8. Յուցակագրութիւն փախստականների.
 9. Ընթացիկ հարցեր:
1. Նախ կարդացուեց և ընդունուեց նախկին ժողովի արձանագրութիւնը:

2. Կարդացուեց ժողովին ի գիտութիւն գաղթականութեան ընդհանուր ժողովի արձանագրութիւնը, որի գլխատըր կէտերն էին նախ դադարեցնել սննդատու կայանների գոյութիւնը և սրանից յետոյ ստացուելիք նպաստը լինի թէ՛ դրամ, թէ՛ ցորեն նոյնութեամբ բաժանել գաղթականներին: Երկրորդ՝ ընդհանուր գաղթականութեան կողմից ընտրուեց վեց ներկայացուցիչ կոմիտէի կազմի մեջ մասնակցելու: Ներկայացուցիչներ ընտրուեցին հետևեալ անձինք՝ Սահակ Տէր-Սահակեան, Համազասպ Բեօսայեան, Թադևոս Գրիգորեան, Համայակ Աբաջեան, Յովհաննէս Մովսէսեան և Յակովբ Մազմանեան: Յետոյ պ. Աբաջեանը յայտարարեց, որ բացի այս վեց հոգուց ընտրուած են նաև 4 հոգի, որոնց անունները չի յիշատակուած արձանագրութեան մեջ, հիմայ ինչպէս է ցանկանում ժողովը նրանց համարել ներկայացուցիչներ կոմիտէի անդամի իրաւունքով, թէ անձնափոխանորդներ: Ժողովը որոշեց նրանց ևս հրաւիրել կոմիտէի անդամի իրաւունքով: Դրանք են պ.պ. Յովհաննէս Դավթեան, Մովսէս Տէր-Թովմասեան, Յովակիմ Մելիք-Սարգսեան և Պետրոս Մանասեան:

3. Կարդացուեց քննիչ յանձնաժողովի գրաւոր զեկուցումը Տիգրան Յարոյեանի և Բ. Թոսունեանի գործի վերաբերեալ: Ապա պ. Ս. Տէր-Գրիգորեանը մանրամասն բանաւոր տուեց իր զեկուցումը՝ իրողութեան իսկական պատկերը: Ժողովը լսելով յիշեալ զեկուցումները որոշեց հեռացնել Տիգրան Յարոյեանին, որպէս անզգոյշ և կասկածելի պաշտօնէայի, իսկ Բ. Թոսունեանին՝ որպէս անզգոյշ ծառայողի: Յետոյ 8-րդ պունկտի նախկին կառավարիչ Վարոս Սարգսեանը, որը հեռացուել է պաշտօնից, որպէս կասկածելի անձնաւորութիւն, բայց ի նկատի առնելով նրա ընտանեկան դրութիւնը, կոմիտէն զիջող վերաբերուելով դէպի նա բոլորովին չհեռացրեց պաշտօնից այլ նշանակեց հանրակացարանի կառավարիչ: Ինչպէս իր և ապա քննիչ մասնաժողովի զեկուցումից երևաց պ. Սարգսեանը փոխանակ ընդհանուր գործին օգնելու զբաղուել է ինտրիգներով և միանալով Շահբազեանի հետ

անախորժութիւններ առաջացրել 8-րդ պունկտում, չարիքը մէջտեղից վերացնելու համար ժողովը որոշեց հեռացնել նաև պ. Սարգսեանին:

4. Կարդացունց ժողովին ի գիտութիւն շահնագարցիների խնդիրը, որով յայտնում են իրենց ծանր կացութիւնը և նպաստ խնդրում: Ժողովը որոշեց նրանց ևս բաւարարել այն ժամանակ, երբ ընդհանուր գաղթականութեանը նպաստ կբաժանուի:

5. Պ. նախագահը ժողովին յայտնեց հետևեալը. մինչև օրս անհամբեր սպասում էինք թէ կառավարութիւնից մեծ գումար ենք ստանալու, որից դուրս գալով մեր ծախար, մնացած գումարը կբաժանուէր գաղթականութեանը համաձայն նրանց պահանջի և այսպիսով վերջ կտրուէր սննդատու կայաններին, այն ինչ ստացուել է միայն երկու հարիւր հազար թուրքի, որից կոմիտէին հազիւ հազ յաջողուել է ստանալ միայն 75 հազար թուրքի, իսկ մնացած գումարը տրուելու է միւս հիմնարկութիւններին: Ուրեմն գաղթականութեանը փող չի կարելի բաժանել: Իսկ ինչ վերաբերում է սպասուելիք ցորենին, ապա ստացուել է միայն չորս վագոն ցորեն և ուղարկուել Երևան, ուրեմն և ցորեն չի կարելի բաժանել: Ժողովին յայտնելով գործի ամբողջ պատկերը, կոմիտէին մնում է որոշելու մի հարց, պէտք է շարունակել պունկտերի գոյութիւնը, թէ ոչ: Ժողովը լսելով յիշեալ զեկուցումը և ի նկատի ունենալով գաղթականների ծանր կացութիւնը, միևնոյն ժամանակ պունկտերի դէմ եղած բողոքները, թէր և դէմ կարծիքներ յայտնելուց յետոյ որոշեց պունկտերի գոյութիւնը շարունակել մինչև փող և ցորեն ստանալը, որ հնարատր լինի հէնց առաջին հերթին գոնէ իւրաքանչիւր շնչին 10 ֆլունտ] ցորեն տալու: Իսկ գիւղերում ցորենը արագ բաժանելու համար յանձնարարել պ. նախագահին և կառավարչին նոր մարդիկ հրաւիրելու և գաւառիս կոմիսարի միջոցաւ գրաւոր յայտնել շրջանիս գաղթականութեանը, որ նրանք քաղաք չգան, որովհետև շուտով նրանց ցորեն է բաժանուելու:

6. Առաջին հարցը վճռելուց յետոյ, ցորենի և դրամի

ստացման դէպքում բաժանումը արագ կատարելու համար ժողովը որոշեց այժմուսանից պատրաստութիւններ տեսնել, քաղաքը բաժանել 40 մասի, նոր մարդիկ հրաւիրել և կոմիտէի երկու անդամների հսկողութեամբ մի ցուցակագրութիւն անել: Իսկ նոր հրաւիրողներին տալ 15 րոբլի օրավարձ:

7. Ժողովը նորից քննութեան առնելով բժ. պ. Բաբախա-նեանի դիմումը, որ ոտքով հնարատրութիւն չունի բոլոր հանրակացարանները այցելել, պահանջում է կառք կամ առանձին վարձատրութիւն տալ: Ժողովը որոշեց բժշկին տալ 2000 րոբլի թէ՛ ռոճիկ և թէ՛ կառքի փող և պարտաւորեցնել թէ՛ հանրակացարանները այցելել և թէ՛ բոլոր հիւանդացող ծառայողներին և յանձնարարել պ. կառավարչին ժողովի որոշումը պ. բժշկին յայտնելու:

8. Պ[արոն] նախագահը ժողովին յայտնեց, որ համաձայն նախկին ժողովի որոշման մշակել են ծառայողների ռոճիկների հետևեալ նորման, այն է՝

1. Պունկտերի կառավարիչներին և նրանց օգնականներին տալ 540

2. Կանտրալէօր⁸⁴ներին՝ 720

3. Մեռել հաւաքողներին և հանրակացարանների կառավարչին՝ 400

4. Կայարանում գաղթականներին ընդունողին՝ 400

Գրասենեակում

1. Կառավարչին՝ 900

2. Հաշուապահին՝ 800

3. Քարտուղարին՝ 720

4. Գարծավարին՝ 720

5. Բրդի արհեստանոցի կառավարչուհուն՝ 480

6. Երկու ծառային՝ 720

7. Արհեստանոցի ծառային՝ 240

Ժողովը տուեց իր համաձայնութիւնը:

9. Սննդատու կայաններում հսկողութիւնը ուժեղացնելու համար որոշուեց կոմիտէի անդամներից ամէն մէկը յանձն առնի իր հարևան պունկտերում հսկելու ծառայողների գոր-

ծունելութիւնը: Այսպէս 5-րդ և 10-րդ պունկտերում հսկելու են պ.պ. Յովհաննիսեանը, Դաթեանը, Շիրակունին և Ս. Տէր-Սահակեանը, 9-րդ պունկտում պ.պ. Քէոսայան և Յ. Մադաթեան, 7-րդ պունկտում պ.պ. Թ. Գրիգորեան և Կ. Մառանջեան, 1-ին պունկտում՝ պ.պ. Աբաջեան և Միրզոյեան, 3-րդ պունկտում՝ պ. Փեշտմալճեան, 6-րդ պունկտում՝ Վ. Ներսիսեան և 2-րդ պունկտում՝ պ. Յ. Մելիք-Սարգսեան:

Նախագահ ժողովի՝	Փեշտմալճեան
Անդամներ՝	Յովհաննիսեան
	Աբաջեան
	Ներսիսեան
Քարտուղար՝	Մարտիրոսեան

ՀԱԱ, ֆ. 105, ց.1, գ. 2715, ք .25-26: Բնագիր: Չեռագիր:

Արձանագրութիւն N 18

1919 թ. 4-ին փետրուարի ժանը 4-ին արհեստանոցում կայացաւ Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնավարութեան գաղթականական կոմիտէի նիստը նախագահութեամբ պ. Գ. Փեշտմալճեանի, մասնակցութեամբ պ.պ. Գ. Իսահակեանի, Ս. Տէր-Գիրգորեանի, Վ. Ներսիսեանի, Դաթեանի, Քեօսայեանի, Շ. Շիրակունու, Աբաջեանի և Գրիգորեանի:

Օրակարգի հարցերը.

1. Ընթերցումն նախկին արձանագրութեան.
2. Մտազործ Արամ Բադալեանի յայտարարութիւնը, որ չի կարող պայմանաւորուած գնով միս թողնել.
3. 5-րդ պունկտի նախկին կառավարիչ հանգուցեալ Յուսիկ Տէր-Սկրտչեանի հաշիւները.
4. 6-րդ պունկտի նախկին ծառայող Թադևոս Տէր-Միքայելեանի խնդիրը.
5. Մելքոն Յարօյեանի խնդիրը.
6. Արմուտլի և Մահմուդջուղ գիւղերի գիւղացիների խնդիրն իրենց չքաւորութեան մասին.

7. Հանրակացարանների կառավարիչների դիմումը ռոճիկը աւելացնելու համար.

8. Կարսեցիների և իւր շրջանի գաղթականների խնդիրը.

9. Երկաթուղային վարչութեան դիմումը կոմիտէին դպրոցական շէնքը գաղթականներից ազատելու համար.

10. Նախկին ծառայողներ Թոսունեանի և Վ. Սարգսեանի դիմումը.

11. 6-րդ պունկտի կառավարչի հաղորդագրութիւնը կայանը մեծացնելու, որով հնարաւորութիւն լինի բոլոր դիմողներին բաւարարութիւն տալու.

12. Կարանեանի խնդիրը.

13. Նոր պունկտերի հիմնումը.

14. Դիմել Բարեգործական Ընկերութեանը որբանոցներ բացելու համար.

1. Նախ կարդացուեց և ընդունուեց նախկին ժողովի արձանագրութիւնը

2. Կարդացուեց ժողովին ի գիտութիւն մսագործ Բադալեանի խնդիրը, որով յայտնում է, որ եթէ ինքը պայմանաւորուել է կոմիտէի հետ փութը 70 բութով միս տալու, բայց որովհետև ներկայումս մսի գինը շատ է բարձրացել և ինքը տուժում է, խնդրում է, որ մսի գինը բարձրացնի, հակառակ դէպքում հրաժարւում է միս բաց թողնել: Ժողովը որոշեց մերժել նրա խնդրանքը, գրաւել նրա 10 հազար բութով գրաւականը և անմիջապէս աճուրդ նշանակել:

3. Կարդացուեց Սկրտ[իչ] քահ[անայ] Տէր-Սկրտչեանի յայտարարութիւնը, որով յայտնում էր 5-րդ պունկտի կառավարիչ իր որդի Յուսիկ Տէր-Սկրտչեանի մահը, ներկայացնում հանգուցեալի 1000 բութի աւանսով վերցուած գումարի ծախսած փաստաթղթերը, թով 12 հատ 808 բութի 50 կ[ոպէկ] գումարաւ և նոյնպէս հաշուելով նորա 14 օրուայ աշխատավարձը օրական 12 բութով 168 բութի, այպէս ելքի 976 բութի 50 կոպէկ դուրս գալով 1000 բութիւց մնում է պարտք 20 բութի 50 կոպէկ և խնդրում կոմիտէին այդ գումարը չստանալ, բաշխել նրա որբերին: Ժողովը յարգելով նրա

խնդիրը որոշեց չստանալ 20 բուլլի 50 կոպեկ և եթե կառավարութիւնը յարգուեց կոմիտէի դիմումը, որ մեռնող ծառայողների ընտանիքներին մի ամսուայ չափով նպաստ տրուի, ի նկատի ունենալ նաև հանգուցեալի ընտանիքը:

4. Կարդացուեց Թադևոս Տէր-Մկրտչեանի խնդիրը, որով խնդրուում է դեկտեմբերի ամսի ռոճիկը: Ժողովը որոշեց տալ նորա մինչև օրս չվճարուած ռոճիկը:

5. Կարդացուեց Արմուտլի և Մահմուդջուղ գիւղացիների խնդիրը, որով յայտնում են իրենց չքաւորութեան մասին և խնդրում կոմիտէի օգնութիւնը: Ժողովը խնդրեց պ. նախագահին անձամբ տեսնելու գաւառիս պ. կոմիտարին և պարենատրման բաժանմունքի ներկայացուցչին արագացնելու նպաստի բաշխումը և առաջին հերթին յիշեալ գիւղերին:

6. Պ. նախագահը զեկուցեց, որ հանրակացարանների կառավարիչները նորից դիմել են և խնդրում են, որ իրենց ռոճիկները նոյնպէս աւելացնել 50 տոկոսով, ինչպէս միւս ծառայողներինը: Ժողովը ի նկատի առնելով նրանց աշխատանքի ժամերը և գործի հեշտութիւնը որոշեց մերժել նրանց խնդիրը, թողնելով նոյն 2100 բուլլու ռոճիկը:

7. Կարդացուեց կարսեցիների խնդիրը, որով խնդրում են փակել սննդատու կայանները և պահանջում փող կամ ցորենը բաժանել: Որովհետև այս հարցը մի քանի անգամ քննուել են կոմիտէի ժողովում և հարկաւոր որոշումներ տուել ժամանակին, այսօր քննութիւն առնելով որոշուեց անմիջապէս նախարարութիւնից փող խնդրել, և բաւարարել ժողովրդի պահանջները, իսկ սննդատու կայանները շարունակել մինչև փող և ցորեն ստանալը, բայց որովհետև մասվաճառը հրաժարուել է միս տալուց և շատ դժուարութեամբ է միս ձեռք բերում, որոշուեց սրանից յետոյ մտով կերակուր օրը մէջ տալ: Իսկ կերակուրը արագ բաժանելու համար որոշուեց հանրակացարանների կերակուրը առանձին տանել և այնտեղ բաժանել:

8. Կոմիտէի լիազօր պ. Յարութիւնեանը ժողովին զեկուցեց, որ ինքը պարենատրման բաժնի ներկայացուցչից գաղ-

թականներին բաժանելու համար ստացել է 400 փութ հացահատիկ և բաժանել Տաշդալու, Ադիսյամանի և Բողազքեասանի գաղթականներին և բնիկ չքատորներին: Միայն Մոլլագեօկչայում կանգ առաւ հաւաքելը և բաժանելը, քանի որ տեղի հարուստներից մի քանիսը չէին ուզում իրենց վրայ դրած ցորենը կամ գարին տալու: Այդ մասին ժամանակին յայտնուել է գաւառիս կոմիսարին և պ. Արամեանին, որոնք արդէն հարկաւոր միջոցներ ձեռք են առել և մի քանիսին պատժել, և յուսով է, որ շատ-շուտով իրեն կյաջողութի միս անգամ Մոլլագեօկչա գնալիս այնտեղի գաղթականներն բաւարարել: Ժողովը լսելով յիշեալ զեկուցումը, որոշեց դիմել պ. կոմիսարին և պ. Արամեանին, նախ հարկաւոր աջակցութիւն ցոյց տալ մեր լիազօրներին և երկրորդ՝ աշխատել աւելի շատ հացահատիկ ունիւիզիցիայի ենթարկել և գործը արագացնելու համար պ. Արամեանին տալ իր ներկայացուցիչները, որովհետև անյարմար է հացահատիկներ հաւաքելը և բաժանելը միևնոյն մարդուն յանձնուի: Յետոյ յանձնարարել մեր լիազօրներին, որ նոքա իւրաքանչիւր շնչին տան ոչ աւել 20 ֆ[ունտ], բաժանման ժամանակ հաշուի առնել աշխատող ձեռքերին:

9. Կարդացուեց պ.պ. Վ. Սարգսեանի և Թոսունեանի խնդիրները, որով խնդրում էին նորից իրենց պաշտօնի հրաւիրել և այսպիսով վերականգնել իրենց պատիւը: Ժողովը որոշեց նրանց պատիւը վերականգնելու համար տալ վկայագիր, որ նոքա արձակուել են ոչ որպէս զեղծարարների, այլ անփոյթ աշխատողների և նրանց անունները անցկացնել թեկնածուների գրքում:

10. Կարդացուեց Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցչի գրութիւնը երկաթուղու դպրոցի շէնքը գաղթականներից ազատելու համար: Ժողովը որոշեց մերժել, որովհետև ազատ շէնք չի գտնում գաղթականներին այնտեղ տեղափոխելու և յանձնարարեց պ. կառավարչին այդ մասին յայտնել դպրոցի վարչութեանը:

11. Պ. նախագահը ժողովին յայտնեց, որ Բարեգործա-

կան ընկերութեան լիազօր պ. Յովսէփ Միգոյեանը դիմել է և յայտնել է իրեն, որ Բարեգործական Ընկերութիւնը ի նկատի առնելով որբերի թիւը, մտադիր է որբանոցներ բաց անել, որովհետև եղածները հերիք չեն անում: Ժողովը ուրախութեամբ ընդունելով Միգոյեանի առաջարկը, որոշեց գրաւոր դիմել Բարեգործական Ընկերութեանը և խնդրել արագացնել որբանոցների բացումը:

12. Կարդացունեց պ. Կարանեանի խնդիրը գրուած քաղաքային վարչութեան անունով, որով յայտնում է թէ ինչպէս իր կազարմում ապրող գաղթականութիւնը առանց ամիսոսալու քանդում են թէ կազարմի և թէ հարևան շէնքի յատակները, դուռ ու լուսամուտները և այրում: Չնայած իր դիմումներին, կոմիտէն միջոցներ ձեռք չի առնում դրա առաջն առնելու և գաղթականներին այդտեղ տեղաւորել են առանց իր գիտութեան և առանց ցուցակագրութեան: Պ. նախագահը յայտնեց, որ իր ժամանակին յայտնել է պ. Կարանեանին, որ իր կազարմում գաղթականներ են տեղաւորելու և ապագայ թիւրիմացութիւնների առաջն առնելու համար պէտք է, որ առաջ ցուցակագրել և արձանագրութիւն կազմել, բայց պ. Կարանեանը չներկայացաւ գրասենեակ և այդ չարուեց: Իսկ գաղթականութիւնը փողոցում մնալով, մենք չէինք կարող սպասել, անտարբեր վերաբերուել նրանց, չտեղաւորել թէ ցուցակագրութիւնը դեռ չի եղել: Բացի այդ անցեալ օրը, երբ պ. Կարանեանը գրասենեակ ներկայացրեց գաղթականների ձեռքով կոտրտուած դռների և լուսամուտների կտորները, մենք նորից խնդրեցինք պ. Կարանեանին, որ բարեհաճէ գալ գրասենեակ, որ մեր կանտրալէօրի հետ գնան հանրակացարան արձանագրեն հասցրած վնասները, բայց պ. Կարանեանը մինչև օրս չեկաւ և այդ չարուեց: Ժողովը լսելով յիշեալ զեկուցումը, որոշեց այս ամբողջ եղելութիւնը յայտնել քաղաքային վարչութեանը, աւելացնելով, որ կոմիտէս ոչ մի հնարաւորութիւն չունի հանրակացարանների հարևան տների քանդելը կասեցնել և առհասարակ դատարկ տները միշտ էլ ենթակայ են աւերածութեան:

13. Որովհետև գաղթականութեան մեծ մասը դուրսն է մնացել, ոչ կարողանում է թագնուելու տեղ գտնել և ոչ էլ կերակուր գտնել, որոշուեց նոր սննդատու կայաններ բաց անել, իսկ 7-րդ կայանի տեղը փոխել կամ բաժանել երկու մասի:

14. Պ[արոն] Քեփուեայանը ժողովին յայտնեց հետևեալը. կատարելով իմ վրայ դրուած պարտականութիւնը գնացի 9-րդ կայանը, ծանօթանալու, թէ ինչպէս էր տարւում գործն այնտեղ, միսը կոտորւած էր շատ անկանոն, կային շատ մեծ և դրան հակառակ շատ փոքր կտորներ: Լսեցին բողոքներ գաղթականութեան կողմից ծառայողների մասին, թէ ինչպէս նոքա շարունակ միս են տանում, իսկ ես նրանց հանգստացրի, որ հետևեն բռնեն գողերին և տեղեկացնեն ինձ: Հէնց երեկ գողերը բռնուեցին և մսի կտորները ներկայացրի գրասենեակ: Յայտնելով այս մասին, խնդրում եմ ժողովի կարգադրութիւնը: Ժողովը լսելով յիշեալ յայտարարութիւնը որոշեց իւրաքանչիւր պունկտում ունենալ գաղթականներից կանտրոլօրներ, իսկ կառավարչին և նրա օգնականին համարել ժամանակաւորապէս արձակուածներ, հրաւիրել գրասենեակ և լսել նրանց բացատրութիւնը:

15. Ժողովին յայտնուեց, որ հանրակացարաններից տրուած փայտը բաժանում է գաղթականների մէջ և նոքա էլ փոխանակ վառելու ծախսում են բազարում: Ժողովը որոշեց այս մասին յայտնել հանրակացարանների կառավարիչներին, որ նոքա հետևեն, որ գաղթականները տրուած փայտերը վառեն և թոյլ չտան ծախելու:

16. Ձեկուցուեց, որ 10-րդ պունկտի կառավարչուհին կոպիտ է վարում գաղթականների հետ և նոյնիսկ մեկին ծեծել է: Ժողովը որոշեց հեռացնել կառավարչուհուն իր պաշտօնից և այս մասին յայտնել բոլոր կառավարիչներին, որ նոքա գաղթականների հետ լավ վարուեն և նման դէպքեր տեղի չունենան:

17. Կարդացուեց Մելքոն Յարօյեանի խնդիրը, որով խնդրում է 8-րդ պունկտում վառարան շինելու 48 բուբլի աշխա-

տավարձը: Ժողովը որոշեց մերժել պ. Յարոյեանին:

Նախագահ ժողովի՝	Փեշտմալճեան
Անդամներ՝	Յովհաննիսեան
	Աբաջեան
	Ներսիսեան

Քարտուղար՝	Տէր- Մարտիրոսեան
------------	------------------

ՀԱԱ, ֆ. 105, ց.1, գ. 2715, ք.27- 30: Բնագիր: Ձեռագիր:

Արձանագրութիւն N 19

1919 թ. 9-ին փետրուարի ժանը 4-ին Արիեստանցում կայացաւ Ալէքսանդրապոլի քաղաքային ինքնավարութեան գաղթականական կոմիտէի նիստը, նախագահութեամբ Արմենակ Բաբայեանի, մասնակցութեամբ Հ. Տէր-Յովհաննիսեանի, Հ. Բեօսայեանի, Տէր-Թովմասեանի, Վ. Ներսիսեանի, Յովհ. Մովսէսեանի, Կ. Մառաջեանի, Մելիք-Սարգսեանի, գաղթականութեան ներկայացուցիչներ Ս. Տէր-Սահակեանի և պարեն բաժնի ներկայացուցիչ Արամեանի:

Օրակարգի հարցերը.

1. Ընթերցումն նախկին արձանագրութեան.
2. Մասվաճառ Արամ Բադալեանի յայտարարութիւնը.
3. Գաղթականների մի օրուայ ցուցակագրութիւնը.
4. 9-րդ պունկտի կառավարիչներ Մկրտիչ Գուրգենեանի և Եղիշ] Անտօնեանի խնդիրը.
5. Խնամատարութեան մինիստրութեան քննիչ Մխիթար – Տէր-Աբրահամեանի զեկուցումը.
6. 5-րդ սննդատու կայանի և Մատակեանի հանրակացարանների կառավարչուհի Սիրանոյշ Մինասեանի խնդիրը.
7. Գաղթականներին ընդունող և տեղաւորող Տիգրան Յովհաննիսեանի խնդիրը.

1. Նախ կարդացուեց և ընդունուեց նախկին ժողովի արձանագրութիւնը.

2. Պ. նախագահը ժողովին յայտնեց հետևեալը, որ ինքը Բաղաքային Խորհրդի կողմից ընտրուած է Վարչութեան անդամ և սրանից յետոյ գաղթականական գործի կառավարումը

և կոմիտեի նախագահությունը իրեն է յանձնում: Յետոյ կարդաց կոմիտեի գրութիւնը գրուած պ. Քաղաքագլխին, որով գրում է. «Որովհետև կոմիտեի որոշած ձեռով գաղթականներին ցորեն բաժանելը նոյն գաղթականների ներկայացուցիչների կողմից համարում է աննպատակալարմար և դանդաղ, կոմիտէս հրաժարում է այդ ցորենը բաժանել: Փախստականների ներկայացուցիչները որոշեցին այնուհետև հրախրել գաղթականների ընդհանուր ժողով, ընտրել նոր մարդիկ, որոնց ձեռքով և կատարել ցորենի բաժանումը»: Պ. նախագահը աւելացրեց, որովհետև գործի ամբողջ պատասխանատւութիւնը ընկնում է կոմիտեի վրայ, ուստի կոմիտէն չի կարող թոյլ տալ մի ուրիշ մարմնի հրապարակ գալը և նպաստի բաշխում կատարել: Եթէ գաղթականութիւնը կամ նրանց ներկայացուցիչները կասկածում են կոմիտեի գործունեութեան վրայ, կարող են նոր մարդիկ կամ վերահսկիչներ տալ: Իսկ պ. Արամեանը նոյն միտքը յայտնելուց յետոյ աւելացրեց, եթէ կոմիտէն այսօր իր վերջնական որոշումն չանի, չանցնի ցուցակագրութեան և ցորենի բաժանման, կնշանակի նրանք կարիք չունեն և ինքը հնարատրութիւն չունենալով օրերով վագոններով ցորենը կայարանում պահելու, որ կարող է մի փորձանքի ենթարկուել, ստիպուած պէտք է տեղափոխի այնտեղ, ուր կարիք կայ, ապա խօսքը ուղղելով գաղթականութեան ներկայացուցիչներին յայտնեց, որ ինքը խօսք է տալիս և ամբողջ պատասխանատւութիւնը իր վրայ վերցնում, որ մի հատիկ ցորեն չի կորի, միայն թէ կոմիտէն շտապի ցուցակագրութիւնը կատարել, իր ներկայացուցիչները տալ կայարանում ցորենն ստանալու և տեղափոխելու քաղաքի պունկտերը, ապա թողեց ժողովը, ցանկութիւն յայտնելով, մինչև երեկոյ կոմիտէն կը կայացնի իր դրական որոշումը: Յիշեալ առաջարկութիւնները լսելուց յետոյ ժողովը որոշեց վաղը անմիջապէս անցնել ցուցակագրութեանը, յայնձնարարել պ.պ. Վ. Ներսիսեանին, Տէր Յովհաննիսեանին, Մառանջեանին և երկու կանտրոլէօրներին հսկելու ցուցակագրութիւնը և հրախրելու

խրաքանչիւր քաղից երկու ներկայացուցիչ, որպէսզի ցուցակագրողի հետ շրջեն տները և հետևեն ցուցակների ճիշտ լինելուն: Իսկ պ. Քեօսայեանի և Յ. Մովսիսեանին յանձնարարուեց գնալ կայարան և պ. Արամեանի հետ ցորենները կշռել և տեղափոխել քաղաքի պունկտերը:

13. Կարդացուեց մասվածառ Արամ Բադալեանի յայտարարութիւնը, որով յայտնում է, որ ինքը համաձայն է միս բաց թողնել կոմիտէի խնամքին յանձնուած պունկտերի համար Քաղաքային վարչութեան սակագնից փոխն հինգ րուբլի պակասով: Ժողովը մսի կապալը⁸⁵ հաստատելով պ. Բադալեանի վրայ յանձնարարեց պ. կառավարչին Բադալեանին հրաւիրել գրասենեակ և պայման գրել համաձայն աճուրդի կոնցէպցիայի⁸⁶ և ստորագրել տալ:

4. Կարդացուեց 9-րդ պունկտի կառավարիչներ Սկրտիչ Գուրգենեանի և Եղ[իշէ] Անտօնեանի բացատրութիւնը իրենց յանձնուած պունկտերու գողացուած մսի մասին: Ժողովը բացատրութիւնը գտնելով անբաւարար երկուսին էլ համարել արձակուած, որպէս անգգոյշ ծառայողների, այդ մտքով տալ նրանց վկայականներ:

5. Կարդացուեց Ալէքսանդրապոլի գաղթականների և որբանոցների Խնամատարութեան Մինիստրութեան քննիչ Մ. Տէր-Աբրահամեանի գրութիւնը, որով յայտնում է, որ 10-րդ պունկտի կառավարչի օգնական Թովսկեանը իւր պաշտօնի մէջ չէ, որովհետև նախ, որ նա անգրագէտ է և կառավարչին օգնել չի կարողանում, և երկրորդ, որ վերին աստիճանի կոպիտ անձնատրութիւն է և խնդրում է այդ օգնականին փոխարինել մեկ ուրիշով: Ժողովը լսելով յիշեալ փաստերը, որոշեց արձակել այդ պարոնին և նրա տեղը հրաւիրել մեկ ուրիշի:

6. Կարդացուեց Մատակեանների տան հանրակացարանի կառավարչուհի Ա. Մինասեանի խնդիրը, որով ժողովը որոշեց մերժել և այդ մասին յայտնել խնդրատուին:

7. Կարդացուեց գաղթականներին ընդունող պ. Յովհաննիսեանի խնդիրը, որով խնդրում է, որ ռոճիկը 400 րուբլուց

բարձրացնել 540 բուրլի: Ժողովը ի նկատի ունենալով նրա կատարած գործի ծանրութիւնը որոշեց փետրուարի մէկից տալ նրան 540 բուրլի:

Նախագահ ժողովի՝	Արմենակ Բաբայեան
Անդամներ՝	Յովհաննիսեան
	Արաջեան
	Ներսիսեան
Քարտուղար՝	Մարտիրոսեան

ՀԱԱ, ֆ. 105, ց.1, գ. 2715, ք. 30-31: Բնագիր: Ձեռագիր:

Արձանագրութիւն N 20

1919 թ. 12-ին փետրուարի ժանը 4-ին Քաղաքային Վարչութեան շէնքում կայացաւ Ալէքսանդրապոլի Քաղաքային Ինքնավարութեան Գաղթականական Կոմիտէի նիստը նախագահութեամբ Գ. Փեշումայճեանի, մասնակցութեամբ Վ. Ներսիսեանի, Գ. Իսահակեանի, Հ. Տէր-Յովհաննիսեանի, Ս. Տէր-Սահակեանի, Կ. Սառանջեանի, Շիրակունու, Տէր-Թովմասեանի, Ա., Զարիֆեանի, Յովհ. Մովսիսեանի, Հ. Սելիք-Սարգսեանի, Հ. Արաջեանի, Հ. Քեօտայեանի, կանտրալէօրներ Մորգանի և Թ. Գէորգեանի:

Օրակարգի հարցերը.

1. Հայաստանի Հանրապետութեան հեռագրական գործակալութեան Ալէքսանդրապոլի ներկայացուցչի գրութիւնը բաժանորդագրութեան մասին:

2. ՀՀ ՆԳՆ ներկայացուցչի գրութիւնը Ղարսի բնակչուհի այրի Լուսնբազ Տէր-Յակոբեանի նպաստի մասին:

3. Կապալառու Բադալեանի պայմանի մասին, որը չի կատարում ճշտութեամբ.

4. Մի օրուայ ցուցակագրութեան հետևանքը.

5. Բաղնիքների հարցը.

6. Թալինցիների նպաստի բաշխման խնդիրը.

7. Նոր պունկտերի և հանրակացարանների մասին.

8. Նախկին որոշման վերաքննությունը հիւանդացող ծառայողների մասին.

9. Կառավարչի խնդիրը.

10. Զարտուղարի խնդիրը.

11. Ընթացիկ հարցեր.

1. Կարդացուեց ժողովին ի գիտութիւն Հայաստանի Հանրապետութեան Հեռագրական Գործակալութեան գրութիւնը գրուած ամսոյս 2-ին թիւ 6, որով խնդրում է տալ գործակալին բոլոր այն տեղեկութիւնները, որոնք ունեն հասարակական բնոյթ և որոնց հրապարակումը հանդիսանում է անհրաժեշտութիւն և խնդրում է բաժանորդագրուել: Ժողովը յիշեալ գրութիւնը լսելուց յետոյ որոշեց տալ հարկաւոր տեղեկութիւններ, իսկ բաժանորդագրութիւնը գտաւ աւելորդ փող չունենալու պատճառով:

2. Կարդացուեց ՀՀ ՆԳՆ ներկայցուցչի գրութիւնը Կարսի շրջանի Բաշ-Շիրակ գիւղացի այրի Լուսնթագ Տէր-Յակոբեանի նպաստի մասին: Ժողովը որոշեց գրել պ. Խոյեցեանին, որ յիշեալ խնդրատուն նպաստ կստանայ միւս փախստականների հետ միասին ցուցակագրուելուց յետոյ:

3. Կարդացուեց ժողովին ի գիտութիւն գրասենեակում կազմած արձանագրութիւնը, թէ ինչպէս մսի կապալառու Բաղալեանը մսի հարկաւոր քանակը չի տուել և համաձայն վերջին պայմանի նրան պէտք է տուգանել առաջին անգամ 300 ռուբլի և պակաս մսի համար ետ դնել 120 ռուբլի: Յետոյ պ. նախագահը յայտնեց, որ պունկտերի և պղնձների թիւը աւելանալու է, և նա հնարաւորութիւն չունի և չի էլ կարող այդ չափով միս հանձնել, որը կարող է մի օր կոմիտէիս թիւրիմացութեան մէջ գցել և գաղթականներին թողնել քաղցած, հարկաւոր է մի նոր կապալառու գտնել, այդ աւելացած միսը նրանից գնել, կամ թէ չէ հրաւիրել մեր կապալառուին, նախ առնել նրա համաձայնութիւնը և հարկաւոր մսի քանակը երկու մասի բաժանելով կէսը ինքը միւս կէսն էլ նոր կապալառուն կտայ, որով թէ մեր և թէ իրենց գործը կհեշտանայ, և առաջարկեց ժողովին ինչպէս է կամենում, որ աճուրդ

նշանակել, թէ մասվաճառներից մի որևէ մեկին հրաւիրել եղած պայմանը: Իսկ պ. Իսահակեանը յայտնեց, որ մասվաճառ Գ. Գառ-Գալոյեանը համաձայն է սոյն պայմանով մսի մի մասը տալու: Ժողովը լսելով յիշեալ զեկուցումները որոշեց նախ տուգանել մասվաճառ Բաղալեանին և երկրորդ հրաւիրել կապալառուներին էլ և նոր պայման կապել:

4. Պ[արոն] նախագահը ժողովին զեկուցեց, որ մի օրուայ ցուցակագրութիւնը շատ անյաջող էր անցել: Շատ հարուստներ գրքոյկներ են ստացել և շատ աղքատներ մնացել են առանց գրքոյկների: Քաղաքի որոշ մասը ցուցակագրողները գրքոյկների մէջ առանց գրելու բաժանել են ու անցել, իսկ ոմանք էլ գրել են տան տիրոջ անունը, բայց քանի հոգի լինելը չեն գրել և մի շարք այսպիսի թերութիւններ: Բայց որովհետև արդէն կոմիտէս ոչ մի հնարաւորութիւն չունի նորից ցուցակագրելու արդէօք ժողովը ցանկալի չէր համարի քաղաքը բաժանել երկու մասի յանձնել մէկ երկու վերահսկիչների իրենց երկու-երկու օգնականներով հանրակացարաններից սկսած վերստուգումն կատարել և երբ հանրակացարանները վերջացնեն նրանք կստանան խմբով իրենց հասանելիք նպաստը և մինչև այդ ստանալը նրանք արդէն քաղաքի որոշ մասեր ստուգած կլինեն և այսպէս հնարաւորութիւն տուած կլինեն հերթով իւրաքանչիւր օր մի քանի գիւղերի կամ խմբակների ստանալը և միևնոյն ժամանակ էլ կատարուած ուղղած կլինենք և թէ բաժանումը արագ կը կատարուի: Վերահսկողութեան ստուգումից յետոյ գրքոյկի վրայ կխփեն իրենց կնիքը, այն է՝ նայուած է և տառերով, որ զեղծում չկատարուի: Իսկ կառավարութեանը փաստաթուղթ ներկայացնելու համար, որ չորս վագոն ցորեն է բաժանուել կայ երկու միջոց, այս է՝ մէկ որ կայ առանձին վերոմոստ, ուր ստացողը պէտք է ստորագրի իր ստացման մասին, երկրորդ՝ որ մի խմբակ կամ գիւղի հասարակութիւն իրենց հաւատարմատարի միջոցով կստանա և դրա համար էլ առանձին ակտ պիտի կազմել: Յետոյ բաժանման ժամանակ իւրաքանչիւր գիւղից և կոմիտէից անպայման ներկայացուցիչներ պիտի

լինեն տեղն ու տեղը նորից ստուգեն և ապա բաժանեն: Ժողովը լսելով յիշեալ զեկուցումը որոշեց քաղաքը բաժանել երկու մասի և մեր կանտորէօրների միջոցով նորից ստուգում կատարել, իսկ փաստաթուղթը կառավարութեանը ներկայացնելու համար ընդունել վերջին ձևը, այն է՝ բաժանել խմբակների և գիւղերի վրայ և ակտ կազմել, իսկ կոմիտէի անդամներից ամեն օր հերթով երկու հոգի ներկայ լինել պահեստում և հետևել կարգադրութեանը:

5. Պ. նախագահը ժողովին յայտնեց ի գիտութիւն, որ տեղիս վարակիչ հիւանդութիւնների Յատուկ Յանձնաժողովը երկու բաղանիք է վարձել փախստականների լողանալու համար, ուր ամեն օր կարող են 400 հոգի լողանայ, յետոյ, որպէսզի սրանք չմըսեն լողանալուց յետոյ պէտք է տան կիսամուշտակներ, իսկ հանրակացարաններում պէտք է լինեն լուացարաններ: Ժողովը ցանկութիւն յայտնեց, որ ամենից առաջ պէտք է կանոնաւորել հանրակացարանները, տաք պահել, որ նոքա այստեղ չմըսեն, իսկ յետոյ պէտք է մտածել նաև գիւղերում ապրող գաղթականների վրայ, որ գոնէ սրանց էլ սաայօն տրուի:

6. Պ. նախագահը յայտնեց Պարենաւորման Մինիստրի⁸⁷ կարծիքը, որ պ. Արամեանի ներկայութիւնը Ալէքսանդրապոլ աւելորդ է: Պէտք է ամբողջ գործը յանձնուի Քաղաքային Վարչութեանը, բայց քանի որ նա այդտեղ է, պէտք է կտրուկ պահանջել, որ նա լիազօրներ տայ գիւղերում հացահատիկներ գրաւելու համար, որպէսզի գիւղացի գաղթականներին ևս բաւարարութիւն տրուի, եթէ ոչ նրանք բոլորն էլ գիւղերից կհաւաքուեն քաղաք: Իսկ Թալին գիւղի համար բաց է թողնած 250 բութլու ցորեն, հարկաւոր է մի մարդ ընտրել և ուղարկել Թալին յիշեալ ցորենը բաժանելու համար: Ժողովը որոշեց գրել լիազօրների մասին պ. Արամեանին, իսկ Թալին գնալու համար ընտրել պ. Յովհ. Մովսիսեանին, տալով նրան օրական 50 բութլի օրապահիկ:

7. Պ. նախագահը առաջարկեց նորեկ գաղթականներին և առհասարակ պունկտերից չօգտվողներին ուղարկել Ղասա-

բեանների նոր հանրակացարանը բնակություն, որոնք կարող են օգտուել 2-րդ պունկտից: Ժողովը տուեց իր համաձայնությունը:

8. Պ. նախագահը յայտնեց, որովհետև նախկին ժողովում որոշում էր օրը մէջ մտով կերակուր տալ միս չլինելու պատճառով, բայց քանի որ հիմայ կապալառու ունենք, կարող ենք ամեն օր մտով կերակուր տալ: Ժողովը ընդունեց նախագահի առաջարկը:

9. Ժողովը նորից քննութեան առնելով նախկին ժողովի որոշումը հիւանդացող ծառայողների մասին, որ նոքա իրաւունք ունեն իրենց ռոճիկները ստանալ, որոշեց հիւանդներից անպատճառ բժշկի վկայականներ պահանջել: Եթէ իսկապէս նրանք հիւանդ են վարակիչ հիւանդութիւններով տալ նրանց ռոճիկները, իսկ նրանք ուլքեր վկայականներ չը ներկայացնեն արձակուած համարել:

10. Պ. նախագահը յայտնեց, որ ներկայ կառավարիչը, որովհետև հրաւիրուած էր ժամանակատր պէտք է նրան վաղուանից արձակուած համարել այդ պաշտօնից թողնելով միայն գրասենեակի կառավարչի պաշտօնի մէջ, ամսական տալով 700 ռուբլի ռոճիկ, իսկ վաղուանից պէտք է հրաւիրել նոր կառավարիչ: Իսկ կոմիտէի քարտուղարի պաշտօնը յանձնել գործավարին, իսկ քարտուղարին յայնձնել պահեստը և գնումներ կատարելը:

Նախագահ ժողովի՝	Փէշտմալճեան
Անդամներ՝	Յովհաննիսեան
	Աբաջեան
	Ներսիսեան
Քարտուղար՝	Մարտիրոսեան

ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2715, 31-32: Բնագիր: Չեռագիր:

Արձանագրութիւն N 21
1919 թ. 15-ին փետրուարի Քաղաքային Վարչութեան շէն-

քում կայացաւ Ալէքսանդրապոլի Քաղաքային Ինքնավարութեան Գաղթականական Կոմիտէի նիստը նախագահութեամբ Արմենակ Բարայեանի, մասնակցութեամբ Գ. Փեշումալճեանի, Ս. Տէր-Գրիգորեանի, Շիրակունու, Հ. Մելիք-Սարգսեանի, Հ. Քեօսայեանի, Ս. Տէր-Սահակեանի, Կ. Մառանջեանի, Յովհ. Մովսիսեանի, Վ. Ներսիսեանի, Գ. Իսահակեանի, Հ. Տէր Յովհաննիսեանի, Տէր-Աբրահամեանի Հ. Աբաջեանի և Ամերիկեան Նպաստամատոյց Ընկերութեան լիազօր պ. Կ. Ղարախանեանի:

Օրակարգի հարցերը.

1. Ընթերցումն նախկին ժողովների արձանագրութեան.

3. Ձոկատի պետի առաջարկութիւնը, որով պահանջում է տասը լիազօր և 150 գաղթական բանուորներ զինուորական պահեստից ստանալ այն շորերը, որոնք զինուորութեանը հարկաւոր չեն, տանել ախտահանել բաժանմունքը և յետոյ բաժանել գաղթականներին.

3. Կառավարչի ընտրութիւնը.

4. Մսի վերջնական կարգադրութիւնը.

5. Ն. Տէր-Ղազարեանի խնդիրը.

6. Արտակարգ Յանձնաժողովի առաջարկութիւնը հանրակացարանների արտաքննութիւնը և կեղտափոսերը աճուրդով տալու մասին.

7. Նոյն յանձնաժողովի գրութիւնը մի յանձնաժողով ունենալ հանրակացարանները կարգի բերելու համար.

8. Կաղզւանի շրջանի Նախիջևանի շրջանային պարենաւորման ծառայողների խնդիրը նպաստ ստանալու մասին.

9. Մի օրուայ ցուցակագրութեան հետևանքը.

10. Հաշուապահ Կ. Մարտիրոսեանի հրաժարականը.

11. Յովհ[աննես] Ներսիսեանի խնդիրը նոյն պաշտօնի համար.

12. Գաղթական ննջեցեալներին քաղող Արիստակէս քահ[անայ] Աւագեանի խնդիրը վարձը աւելացնելու մասին.

1. Նախ ժողովը հաստատեց անցեալ ժողովի արաձանագրութիւնը:

2. Պ[արոն] նախագահը ժողովին յայտնեց ջոկատի պէտի գրութեան մասին, որով պահանջում էր տաս լիազօր և 150 գաղթական բանտրներ պահեստից ստանալ այն շորերը, որոնք զինուորութեանը հարկաւոր չեն, տանել ախտահանել բաժանմունքը և յետոյ բաժանել գաղթականութեանը: Ժողովը քննութեան առնելով այս հարցը, որոշեց կոմիտէի անդամ պ. Վ. Ներսիսեանի հսկողութեան տակ վարձել 10 հոգի աշխատաւոր իւրաքանչիւրին 15 րուրի օրաւարձով ջոկել պէտքական շորերը սայլերով, ուղարկել ախտահանել բաժանմունքը և յետոյ բաժանել գաղթականութեան:

3. Պ[արոն] նախագահը յայտնեց, որ համաձայն նախկին ժողովի որոշման հարկաւոր է ընտրել ընդհանուր գործերի կառավարիչ և առաջարկեց պ. Ա. Կարանեանի թեկնածութիւնը, յայտնելով ով թեկնածու ունի նոյնպէս կարող է առաջարկել: Ժողովականներից առաջարկողներ եղան, որ նախքան ընտրութիւնը պէտք է որոշել ռոճիկի չափը, ապա նոր թեկնածուի անուն տալ: Պ. նախագահը յայտնեց, որ նախքան ժողովը ես և պ. Փեշտմալճեանը մասնաւոր խօսակցութիւն ենք ունեցել պ. Կարանեանի հետ, առել նորա յամաձայնութիւնը 1080 ռոճիկով և նրա տրամադրութեան տակ դնել որբանոցների կառքը, որպէսզի հնարաւորութիւն տուած լինենք նոր կառավարչին շրջելու, թէ հանրակացարանները և թէ պունկտերը: Ժողովը լսելով յիշեալ առաջարկութիւնները և ուրիշ թեկնածու չլինելով միաձայն ընտրեց պ. Աշ[ոտ] Կարանեանին ամսական 1080 րուրի ռոճիկով միևնոյն ժամանակ նրա տրամադրութեան տակ դնելով որբանոցների կառքը:

Յետոյ պ. Կարանեանին հրաւիրելով ժողովին պ. նախագահը յայտնեց նրան ժողովի որոշումը: Պ. Կարանեանը յայտնելով իր շնորհակալութիւնը աւելացրեց, որ յուսով է կոմիտէի և թշուառ փախստականների հանդէպ կարդարացնել իր վրայ դրած յոյսերը միայն պէտք է կոմիտէի ուշադրութիւնը հրաւիրել որբանոցների վրայ, փոքրիկ որբերին, մեր ապագայ յոյսերին, խնամել, պահել, սովից ու ցրտից ազատել:

Ժողովը լիազօրեց պ. Կարանեանին տաք պատրաստի բնակարաններ ձեռք բերել, բոլոր որբերին նոյնիսկ նրանց, ովքեր ծնողներ ունեն, բայց հնարատրութիւն չունեն նրանց պահելու, նոյնիսկ այդպիսիներին որբանոց տանել, լաւ կերակրել և սովից ազատել: Իսկ երբ որբանոցների թիւը շատ շատացաւ և լաւ հիմքերի վրայ դրուեց կրթական գործը յանձնել ուսուցչութեանը:

4. Պ. Փեշտմայճեանը ժողովին յայտնեց, որ թէև կոմիտէն անցեալ ժողովում որոշեց մսի մի մասը կապալով տալ մսավաճառ Գառ-Գալոյեանին, բայց այն չընդունեց մեր առաջարկը և կոմիտէն ներկայումս չի կարողանում հարկաւոր մսի քանակը ստանալ կապալառու Բաղալեանից: Բացի այդ ինքը Ամերիկեան Նպաստամատոյց Ընկերութեան լիազօր Կ. Ղարախանեանի հետ դիմել է տեղիս բոլոր մսավաճառներին, թէ նրանցից ով ինչ քանակութեամբ միս կարող է տալ: Բայց նրանցից ոչ մեկն էլ մի դրական խոսք չի տուել: Նրանք խոստացան վաղը մեզ պատասխան տալ, ահա փաստը այն է, որ շուկայում միս չի ճարւում: Յետոյ հարց տրուեց պ. Ղարախանեանին, ճիշտ է, որ Ամերիկեան Նպաստամատոյց Ընկերութիւնը ցանկանում է պոնկտերի մի մասի ծախսը իր վրայ վերցնել: Ինքը կառավարիչ պ. Ղարախանեանը մանրամասն տուեց իր բացատրութիւնը, թէ ինչ է ուզում անել այստեղ Ամերիկեան Ընկերութիւնը, այնպէս որ զեկուցումից պարզուեց, որ իւրաքանչիւր օր կոմիտէին առնուազն հարկաւոր է զնել ոչ թէ 150 փութ այլ 400 փութ միս և որովհետև յիշեալ ընկերութեան նպատակն է ոչ թէ մսի, առհասարակ բոլոր մթերքների նորման բարձրացնել և այսպիսով մի քիչ սնունդ տալ և թշուառներին ազատել սովից: Դրանից յետոյ կարդացուեց պ. Բաղալեանի գրութիւնը, որով յայտնում է, որ համաձայն պայմանի իւրաքանչիւր չորս օրից յետոյ պէտք է ստանայ տուած մսի փողը: Եթէ այսօր փողը չստացուեց, վաղը չի կարող միս բաց թողնել: Ժողովը որոշեց դիմել քաղաքային վարչութեանը մսավաճառի պարտքը տալու և առանձին ծախսերի համար խնդրել հարիւր

հազար բուրլի:

5. Կարդացում է Ն. Տէր-Ղազարեանի գրութիւնը, որով խնդրում է իր եղբօր շինութեան համար, որ հանրակացարանի է վերածուած վարկ նշանակել:

Ժողովը որոշեց յայտնել խնդրատուին, որ այդ մասին դիմած է կառավարութեանը և սպասում է նորա պատասխանին:

6. Կարդացուեց Արտակարգ Յանձնաժողովի N 20 գրութիւնը հանրակացարանների արտաքննողները և կեղտափոսերը աճուրդով տալու մասին: Ժողովը յանձնարարեց պ. կառավարչին տեղեկանալ և այդ մասին զեկուցել հետևեալ ժողովին:

7. Կարդացուեց Արտակարգ Յանձնաժողովի N 20 գրութիւնը հանրակացարանների գաղթականներից մի ներկայացուցիչ ունենալ նիստին հանրակացարանները կարգի բերելու համար: Ժողովը ընտրեց պ.պ. Հ. Զեօսայեանին և կառավարիչ Կարանեանին:

8. Պ. նախագահը յայտնեց, որ Արտակարգ Յանձնաժողովը երկու բաղանիք է վարձել փախստականներին լողանալու համար, ուր և ամեն օր կարող են մօտ 400 հոգի լողանալ: Դրա համար բաղնիքի տիրոջը կոմիտէն ամեն մի մարդուն վճարել է երկու բուրլի: Յետոյ որպէսզի նրանք լողանալուց յետոյ չմրսեն, պէտք է կիսամուշտակներ տալ, իսկ կեղտոտ շորերը փոխելու համար պէտք է գինուորական պահեստից բերած շորերը բաժանել նրանց: Ժողովը զեկուցումը լսելուց յետոյ որոշեց, նախ՝ հանրակացարանները կանոնաւորել տաք պահել, որպէսզի լողանալուց յետոյ այստեղ չմրսեն, իսկ գաղթականութեանը ինչ կարգով պէտք է գայ բաղանիք, այդ յայտնեց պ. կառավարչին կարգադրելու: Իսկ գիւղական գաղթականութեան օգնութեան հասնելու համար, որպէսզի նրանք քաղաք չգան, որոշուեց նրանց տալ սապօն, իսկ եթէ ցորեն բաժանելու եղան առաջին հերթին նրանց տալ և եթէ պ. Արամեանը գիտէրո՞ւմ մարդիկ պէտք է ուղարկի հացահատիկները **ռէկլի**զիցիա անելու, աշխատել

գիտերում տեղն ու տեղը գնումներ անել և բաւարարել գիտերի փախստականներին:

9. Որոշուեց պահանջել պարենատրման Արտակարգ Յանձնաժողովից, որ նոքա իրաւունք չունեն միջամտելու գաղթականութեան վերաբերեալ հարցերի մէջ և նրանց վերաբերեալ բոլոր գործերը կենտրոնանալու են գաղթականական կոմիտէի ձեռքում և նոյն կոմիտէի միջոցով էլ պէտք է կատարուի նպաստների բաշխումը: Յետոյ ժողովը գտաւ անհրաժեշտ պարենատրման յանձնաժողովի մէջ կոմիտէն ունենայ իր ներկայացուցիչը և յայնձնարարեց պ. կառավարչին այդ մասին գրել յիշեալ յանձնաժողովին:

10. Պ[արոն] Փեշումալճեանը պ. նախագահին մի օրուայ ցուցակագրութեան և գրքոյկներ բաժանելու մասին իրազէկ անելու համար մանրամասն տուեց իր զեկուցումը և մի առ մի թեց կատարուած թերութիւնները: Բայց որովհետև շատերը գրքոյկներ չէին ստացել կամ չեն գրուել իրենց գրասենեակների ցուցակում, այդպիսիների համար ժողովը որոշեց գրասենեակի և բակի դռներին փակցնել հետևեալ յայտարարութիւնը. «Ալէքսանդրապոլի Գաղթականական Կոմիտէն սրանով յայտնում է ի գիտութիւն գաղթականների հետևեալը.

1. Այն գաղթականները, որոնք ունեն կերակուրի հին գրքոյկներ կամ չէկեր և նոր գրքոյկներ չեն ստացել, այդպիսիները կարող են ներկայացնել գրասենեակ իրենց հին գրքոյկները կամ չէկերը և ստանալ նորը: 2. Այն գիւղացիները, որոնք իրենց գիւղի ցուցակներում չեն գրանցուել և գրքոյկներ չեն ստացել նրանք կարող են գրուել իրենց գիւղի լիազօրների-հաւատարմատարների մօտ և նրանց միջոցով գրքոյկ և ցորեն ստանալ: 3. Այն քաղաքացիները, որոնք գրքոյկներ ունեն, նրանք կարող են իրենց թաղերում խմբուել իրենց համար հաւատարմատարներ ընտրել և նրանց միջոցով ցորեն ստանալ: 4. Իսկ այն քաղաքացիները, որոնց չի յաջողուել նոր գրքոյկներ ստանալ կամ ցուցակագրուել, նրանց այն չի տրուի, նրանք կարող են ստանալ միւս անգամ, եթէ ցորեն բաժանելու եղաւ կոմիտէս»: Իսկ ցորենի բաշխումը

պէտք է կատարել հետևեալ ձևով: Փրկչի դպրոցում պէտք է լինեն կոմիտէի ներկայացուցիչներից մէկ երկու վերահսկիչներ և չորս գրագիր, նրանք ստուգելու են ներկայացուած ցուցակները, որից յետոյ տալու են պահանջաթերթը վրան գրուած ցորենի քանակը, որը յետոյ լիազօրը ներկայացնելու է պահեստը և ստանալու իր հասոյթը: Իսկ պահեստում լինելու են դարձեալ կոմիտէի ներկայացուցիչը և երկու կշռողներ: Իսկ նոր գրագիրներին և աշխատողներին տալ իրաքանչիւր օր 20 րոպի օրապահիկ:

11. Կարդացուեց Կաղզւանի շրջանում Նախիջևանի պա-րենաւորման բաժնի ծառայողների խնդիրը նպաստի մասին: Ժողովը որոշեց յայտնել նոցա, որ նոքա ևս ի թիւս միւս գաղթականների կարող են ստանալ կերակուրի և ցորենի գրքոյկներ, որովհետև կոմիտէն նպաստի ուրիշ միջոց չունի և միևնոյն ժամանակ, եթէ նրանք ցանկութիւն ունեն ծառայելու կոմիտէն ի նկատի կունենայ առաջին հերթին նրանց թեկնա-ծութիւնը:

12. Ընդունուեց հաշուապահ պ. Կ. Մարտիրոսեանի հրա-ժարականը և նրա տեղը հրաւիրուեց (նոյն ռոճիկով) Յով-հաննէս Ներսիսեանը:

13. Որոշուեց մերժել Արիստակէս քահ[անա] Աւագեանի խնդիրը ռոճիկը աւելացնելու մասին:

Նախագահ ժողովի՝
Անդամներ՝

Արմենակ Բարայեանի
Յովհաննիսեան
Աբաջեան
Ներսիսեան
Մարտիրոսեան

Քարտուղար՝

ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2715, 33-37: Բնագիր: Ձեռագիր:

Արձանագրութիւն N 22

1919 թ. 19-ին փետրուարի Քաղաքային Վարչութեան շէնքում կայացաւ Ալէքսանդրապոլի Քաղաքային Ինքնավա-րութեան գաղթականական կոմիտէի նիստը՝ նախագահու-

թեամբ Արմենակ Բաբայեանի, մասնակցութեամբ Գ. Փեշտ-տմալճեանի, Ս. Տէր-Գրիգորեանի, Շիրակունու, Հ. Մելիք-Սարգսեանի, Հ. Քեօսայեանի, Ս. Տէր-Սահակեանի, Կ. Մառանջեանի, Յովհ. Մովսիսեանի, Գ. Իսահակեանի, Հ. Տէր Յովհաննիսեանի, Տէր-Աբրահամեանի Հ. Արաջեանի և կառավարիչ Կարանեանի, Գրիգորեանի, Ար. Զարիֆեանի և Վ. Ներսիսեանի:

Օրակարգի հարցերը.

1. Ընթերցումն նախկին ժողովների արձանագրութեան
2. Մասվաճառ Բաղալեանի բանաւոր յայտարարութիւնը, որ միս չի կարող բաց թողնել.
3. Կոմիտէի նախկին ծառայողներ Վ. Սարգսեանի և Բ. Թոսունեանի խնդիրները և ընդհանուր ծառայողների դիմումը.
4. Փոքր Ղարաքիլիսայ գիւղում ապրող գաղթականների դիմումը.
5. Ուսուցիչներ Յովհ[աննես] Գինոսեանի և Շիրակունու խնդիրները.
6. Ն. Շիրակունու խնդիրը.
7. Բժ[իշկ]. Բաբախանեանի գեկուցումը.
8. Արտակարգ Յանձնաժողովի որոշումը գիւղական գաղթականութեան մասին.
9. Գաւառական կոմիսարի մօտ ներկայացուցիչ ունենալու խնդիրը.
10. Հին շորերի հարցը.
11. Ինքնակոչ հաւատարմատարների խնդիրը.
12. Պ. պ. Ս. Տէր-Սահակեանի և Մորգանի գեկուցումը.
13. Անակնկալ նպաստների հարցը.
14. Ձեկուցում մինչև օրս բաժանուած ցորենի մասին.
15. Պ[արոն] Գրիգորեանի յայտարարութիւնը.
16. Ընթացիկ հարցեր.

1. Նախ կարդացուեց և ընդունուեց նախկին ժողովի արձանագրութիւնը:

2. Նախագահը ժողովին յայտնեց ի գիտութիւն հետևեալը.

այսօր պ. Բադալեանին առաջարկեցին պայմանագիրը ստորագրել, բայց նա հրաժարուեց թէ պայմանագիրը ստորագրելուց և թէ միս տալուց, որովհետև մինչև օրս նրա փողը չի վճարուած: Միայն հագիւ-հագ կարողացայ նրան համոզել և ուղարկել պ. Ղարախանեանի մօտ, որ մի կերպ նրա համաձայնութիւն և վաղուանից միս բաց թողնի պունկտերին: Ինչպէս ժողովին յայտնի է վաղուանից մինչև մեր փող ունենալը պունկտերի բոլոր ծախսերը հոգալու է Ամերիկեան Նպաստամատոյց Կոմիտէն և քիչ առաջ լսեցի, որ արդէն համաձայնութիւն եղել է և վաղուանից շարունակելու է միս տալը: Իսկ փայտը, որ նոյնպէս քաղաքում չի ճարուած դա նոյնպէս յանձնեց պ. Ղարախանեանին, այնպէս որ կոմիտէին մնում է հոգալ հանրակացարանների մասին առայժմ:

3. Կարդացուեց կոմիտէի ծառայողների դիմումը, որով խնդրում էին 1. նախկին ծառայողներ Վ. Սարգսեանին և Բ. Թոսունեանին կրկին հրաւիրել պաշտօնի, որովհետև նրանք արձակուած են ոչ որպէս զեղծարարներ, այլ որպէս պաշտօնը թերի կատարողների 2. ծառայողներին դէմ յարուցած մեղադրանքները, նկատողութիւնները և պաշտօնից հեռացնելու որոշումները քննել մեր ներկայացուցիչների մասնակցութեամբ և գիտութեամբ, որոշ ճայնի իրաւունքով, որով փոխադարձ վստահութեան երաշխիքներ կդրի մեր և կոմիտէի մէջ, որպիսին գոյութիւն ունի դեմոկրատիկ և լուսատու ազգերի մէջ: Ժողովը լսելուց յետոյ որոշեց յիշեալ պարոններին հրաւիրել պաշտօնի միայն ոչ պունկտերում, իսկ պ. Մորգանը յայտնեց, որ նոքա արդէն ցուցակագրութեան սկզբներից աշխատում են կոմիտէի գործերում: Իսկ ինչ վերաբերում է միս կէտին ժողովը տուեց իւր համաձայնութիւնը:

4. Կառավարիչ պ. Կարանեանը ժողովին զեկուցեց հետևեալը. առաջին՝ վաղը Կարարդիսկի գնդի կազարմաները պատրաստ կլինեն. արդէն կարգադրել են անմիջապէս այդտեղ տեղափոխել ապաստարաններում եղած գաղթականներին և այդպիսով ազատել Զիթողեանների տունը, որը պէտք է հիւանդանոց լինի: Հանրակացարանի համար կառա-

վարիչ է հրաւիրում պ. Տէր-Միքայելեանը, պունկտերի կառավարիչ՝ Յովակ Չիլինգարեանը, իսկ պ. կոմենդանտը հանրակացարանների կառավարիչ է ուղարկել Կամսարական անունով մեկին, հիմայ ժողովին է մնում՝ թէ այս երկուսից որին պէտք է հաստատել կառավարչի պաշտօնում: Ժողովականներից յայտնող եղաւ, որ Տէր-Միքայելեանը չի կարող հաստատուել, որովհետև նա որպէս անբարեխիղճ ծառայող արդէն արձակուած է եղել պաշտօնից իր ժամանակին: Այդ լսելուց յետոյ ժողովը կառավարչի պաշտօնում հաստատեց պ. Կամսարականին: Երկրորդ. առաջին որբանոցը՝ Խրիմեան դպրոցն արդէն պատրաստ է և այստեղ տեղափոխուած է 60 որբեր և շարունակում է ընդունելութիւնը, որոնց թիւը պէտք է հասնի 150-200 հոգու: Բոլորի համար սպիտակեղէնը արդէն ձեռք է բերուած և կարում են: Ապագայ նոր բացուելիք որբանոցի համար այժմեանից պէտք է նոր շինութիւններ վարձել և հարկատու պատրաստութիւններ տեսնել, որովհետև դպրոցները միանգամայն անյարմար են: 2-րդ որբանոցի համար մի մեծ շինութիւն է վարձուած Կարսկայա փողոցի վրայ պ. Արտ[աշես] Տայեանի տունը, ուր կարելի է տեղափոխել 200 որբ, միայն պէտք է մի փոքրիկ վերանորոգութիւն կատարել: Յետոյ այժմեանից պէտք է վերմակների համար բամբակ և կերակուրի համար բրինձ ճարել: Ժողովը յանձնարարեց պ. Քեօսայեանին և Տէր-Յովհաննիսեանին պ. կառավարչի հետ միասին որբանոցի շինութիւնը տեսնել և վարձել և վերոյիշեալ գնումները կատարել: Իսկ պ. կառավարչին յայնձնարարուեց գրասենեակի շտատի մասին առանձին զեկուցում տալ:

5. Կարդացուեց Փոքր Ղարաքիլիսայ գիւղում ապրող գաղթականների խնդիրը իրենց չքաւորութեան մասին: Ժողովը որոշեց յայտնել նոցա, որ նրանց նպաստ կտրուի միւս գիւղացիների հետ միասին:

6. Պ. Նախագահը ժողովին յայտնեց ի գիտութիւն պարենատրման Արտակարգ Յանձնաժողովի որոշումը գիւղական գաղթականութեան մասին, այն է՝ գաւառիս կոմիսարի միջո-

ցով իւրաքանչիւր գիւղում պէտք է լինի կոմիտէ բաղկացած երեք հոգուց, գիւղական կոմիսարից, գաղթականութեան և գիւղի մի մի ներկայացուցիչներից: Դրանք պէտք է ցուցակագրեն գաղթականներին և բերեն լիազօրներին, նրանց կարիքները, թէ ինչքան ցորեն կամ ալիւր է հարկատու իւրաքանչիւրին և համաձայն ցուցակի ստանան տեղիս գլխատու պահեստից և բաժանեն իրենց պատասխանատուութեամբ: Ժողովը զեկուցումը լսելուց յետո որոշեց դիմել պ. կոմիսարին և խնդրել, որ արագացնէ այդ ընտրութիւնները և յանձնարարուեց գրասենեակի կառավարչին, որ գիւղացի դիմող գաղթականներին այդ պատասխանը տրուի:

7. Կարդացուեց ուսուցիչներ պ.պ. Շիրակունու և Գինոսեանի խնդիրը, որով իրենց դնում են կոմիտէի տրամադրութեան տակ համապատասխան աշխատանքի համար: Ժողովը յայտնելով իր շնորհակալութիւնը յիշեալ պարոններին յանձնարարեց պ. կառավարչին իմանալ, թէ ինչ ազատ համապատասխան պաշտօններ կան յայտնել այդ առթիւ ուսուցչութեան ներկայացուցչին և ասպա հրաւիրել աշխատանքի:

8. Կարդացուեց Խալաթեանների հաւատարմատար պ. Գէորգ Տէր-Սարտիրոսեանի խնդիրը, որով պ. Խալաթեանների տանը, ուր տեղաւորուած է գրասենեակը և արհեստանոցը տարուա յունուարի 1-ից տարեկան վարձ է նշանակուում 6000 թուրքի: Ժողովը որոշեց այդ մասին դիմել Խալաթեաններին և յայտնել, որ նոքա վարձ ստանան:

9. Որոշուեց պարենատրման բաժնի ներկայացուցիչ պ. Արամեանին տալ նրա խնդրած հանրակացարաններում ապրող գաղթականների ցուցակը:

10. Պ. նախագահը ժողովին յայտնեց, որ զաւառիս պ. կոմիսարը կոմիտէի կողմից մի ներկայացուցիչ է խնդրում իր մօտ լինելու գիւղերից եկած ցուցակները ստուգելու համար: Ժողովը որոշեց դրա համար ընտրել պ. Համ[բարձում] Աբաջեանին:

11. Պ. նախագահը ժողովին յայտնեց, որ ինքը պ. Վ.

Ներսիսեանի հետ եղել է զինուորական պահեստում և տեսել հին շորերը, որոնք բացի կարկատանից ոչնչի պէտք չեն գա և կարիք չկա անելորդ ծախսեր անել, տանել ախտահանել բաժանմունքը, պէտք է գաղթականներին ազատ թողնել գնան իրենց համար հարկատու շորերը վերցնեն, միայն թէ պէտք է խնդրել Արտակարգ Յանձնաժողովի թոյլտւութիւնը, որը կարող է արգելք հանդիսանալ վարակիչ հիւանդութիւնների համար: Ժողովը խնդրեց պ. նախագահին այդ հարցը տանել Արտակարգ Յանձնաժողով և ստանալ նրա համաձայնութիւնը:

12.Պ. պ. Ս. Տէր-Սահակեանը և Գ. Մորգանը ժողովին զեկուցեցին հետևեալը. ինչ որ իրենց անձանօթ պարոններ խաբելով ալէքսոլցիներին նրանց ձեռքից առել են գրքոյկները և տուել փոքրիկ չէկեր ճաշ ստանալու համար: Մինչև օրս այդ պարոնները խեղճերի ո՛չ ցորենն են ստացել բաժանել և ո՛չ էլ գրքոյկները վերադարձրել: Տէրերը չճանաչելով նոցա չգիտեն ինչ անեն ում դիմեն, վերջը այդ մասին յայտնեցին գրասենեակը. վերջապէս այդ պարոնները ներկայացրին գրքոյկները և ուզում էին ցորեն ստանալ, բայց մենք անմիջապէս գրաւեցինք գրքոյկները: Հիմա ինչպէս է ուզում ժողովը վարուել նրանց հետ, թողնել, որ դոքա ստանան բաժանեն, թե ուրիշ ձև կ'առաջարկէք: Ժողովը յանձնարարեց պ.պ. Մելիք-Սարգսեանին, Գրիգորեանին, Թոսունեանին և Վ. Սարգսեանին պ. Մորգանի հսկողութեամբ ստանալ ցորենը և բաժանել իրենց տէրերին:

13. Պ[արոն] Ս. Տէր-Սահակեանը ժողովին յայտնեց հետևեալը, ալէքսոլցիներից շատերը, որպէս Կարսի շրջանի գիւղերի վերաբնակիչներ գրքոյկներ են ձեռք բերել և դրանց գրքոյկները այժմ գրաւած են, հիմայ ինչպէս վարուել դրանց հետ: Ժողովը որոշեց գրաւել այդպիսիք և առհասարակ կասկածելի գրքոյկները և ոչինչ չտալ:

14.Պ. նախագահը ժողովին յայտնեց, որ փախստականներից շատերը դիմել են իրեն և փողով նպաստ խնդրել, ինչպէս օրինակ մի կին իր վերջին շորերը ծախել էր մի կտոր

հաց ճարելու համար: Գնողը նրան տուել էր մի դալք⁸⁸ 40 բուրլանոց, խեղճ կինը վերջը դիմում է իրեն և խնդրում կամ հաց տալ, կամ այդ 40 բուրլիանոցը փոխել և ինքը ստիպուած մտնելով խեղճ կնոջ դրութեան մէջ կարգադրել է փոխել, և ուրիշ նման շատ դէպքեր: Հիմայ ինչպէս է կամենում ժողովը, նման դէպքերում ինչպէս վարուել նպաստ տալ, թէ չէ: Ժողովը լսելով յիշեալ յայտարարութիւնը որոշեց պ. նախագահի տրամադրութեան տակ դնել որոշ գումար այդպիսի բացառիկ դէպքերում նպաստ տալ փողով, իսկ նրանք, ովքեր ճանապարհածախսի համար կղիմեն փող խնդրելու, այդպիսիներին տալ վկայական երկաթուղու վարչութեան անունով և յանձնարարել պ. կառավարչին երկաթուղու վարչութիւնից ստանալ հարկաւոր բլանկները:

15. Պ[արոն] Մորգանը ժողովին յայտնեց, որ մինչև օրս, չհաշուած այսօրուայ տուած պահանջաթերթերը, ցորեն է տրուած 29940 հոգու, իսկ պահեստում այլևս ցորեն չի մնացել բաժանելու, պէտք է պահանջել, որ գոնէ մի վագոն ցորեն ևս տրուի նրանց բաւարարելու համար, իսկ շատերը ովքեր կերակուր ստանալու գրքոյկներ ունէին, բայց շնորհիվ ցուցակագրողների բաց են մնացել և չեն կարողացել նոր գրքոյկներ ստանալ, արդէօք ժողովը չէր որոշի նրանց համար նոր գրքոյկներ տալ պունկտերի կառավարիչներին հներին փոխարինելու և այդպիսով նրանց ևս հնարատրութիւն տուած կլինենք ցորեն ստանալու: Ժողովը լսելով Մորգանի զեկուցումը որոշեց վաղուանից դադարեցնել նոր գրքոյկներ տալը, իսկ նրանք ովքեր կերակուրի գրքոյկներ ունեն և նորը չեն ստացել նրանց համար գրել պունկտերի կառավարիչներին, որ նոքա կազմեն այդպիսիների ցուցակը, պարզեն որտեղացի լինելը և ներկայացնեն գրասենեակ ստորագրելու և համեմատելու գիտական ցուցակների հետ, թէ արդեօք նրանք այդ ցուցակի մէջ մտած չեն և նոր շահագործումներ առաջ չեն գալու, եթէ իսկապէս չկայ նոր ստուգումից յետոյ տալ:

Իսկ պ. Աբաջեանը յայտնեց, որ իսկապէս շատ ընտա-

նիքներ, որոնք արժանի էին գրքոյկներ ստանալու, բայց չեն կարողացել ստանալ և մինչև օրս չեն օգտուել նոյնիսկ ճաշից, արդեօք նրանց համար ինչ է կարգադրում ժողովը տալ նոր գրքոյկներ թէ ոչ: Ժողովը ընտրեց պ.պ. Աբաջեանին, Տէր-Յովհաննիսեանին և Տէր-Սահակեանին յանձնարարեց նոցա նման դէպքերը քննել, ստուգել և ապա տալ նոր գրքոյկներ:

16. Կարդացուեց պ. բժ. Բաբախանեանի զեկուցումը, որով յայտնում էր վարակիչ հիւանդութիւնների մասին, թէ ինչ չափով տարածուել է գաղթականութեան մէջ, խնդրում է հիւանդանոցի բացումը արագացնել և թէ ինչպէս են իրեն ծանրաբեռնել մի քանի պաշտօններով, որ նոյնիսկ գիշեր և ցերեկ աշխատելու լինի դարձեալ հնարաւորութիւն չունի գոնէ այդքան յանձնարարութիւնների մի մասը կատարելու և հրաւիրում է կոմիտէի ուշադրութիւնը այդ բանի վրա: Ժողովը խնդրեց պ. նախագահին պ. բժշկի զեկուցումը տանել Արտակարգ Յանձնաժողովի նիստը և այդտեղ քննութեան առնել, որովհետև կոմիտէն ոչինչ չի կարող անել և իրանից կախուած չէ:

17. Պ[արոն] Յ. Գրիգորեանը ժողովին զեկուցեց հետևեալը՝ փիրուլեցի Պետրոս Եղիազարեանը՝ Ղափլի գիւղում ապրող գաղթականների համար ստացել է մօտ երկու փութ ցորեն: Հետաքրքիր է իմանալ ում միջոցով և ինչ ճանապարհով է ստացել: Ժողովը լսելով այս զեկուցումը որոշեց գործը յանձնել պ. կանտորութօրների քննել և իրողութիւնը յայտնել ժողովին:

Նախագահ ժողովի	Արմենակ Բաբայեան
Անդամներ կոմիտէի՝	Յովհաննիսեան
	Աբաջեան
	Ներսիսեան
Քարտուղար՝	Մարտիրոսեան

ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2715, 37-40: Բնագիր: Ձեռագիր:

Արձանագրություն N 23

1919 թ. 24-ին փետրուարի Քաղաքային Վարչության շենքում կայացավ Ալեքսանդրապոլի Քաղաքային Ինքնավարության Գաղթականական Կոմիտեի նիստը նախագահությանը Արմենակ Բաբայանի, մասնակցությամբ Գ. Փեշումալճեանի, Ս. Տէր-Գրիգորեանի, Շ.Շիրակունու, Յ. Մելիք-Սարգսեանի, Հ. Քեօսայեանի, Ս. Տէր-Սահակեանի, Կ. Մառանջեանի, Յովի. Մովսիսեանի, Գ. Իսահակեանի, Հ. Տէր Յովհաննիսեանի, Ս. Տէր-Թովմասեանի, Տէր-Աբրահամեանի Հ. Արաջեանի և կառավարիչ Կարանեանի, Գրիգորեանի, Ար. Զարիֆեանի, Վ. Ներսիսեանի և Ղարախանեանի:

Օրակարգի հարցերը.

1. Ընթերցումն նախկին ժողովի արձանագրության.

2. Կոմիտեի անդամ Ս. Տէր-Թովմասեանի բողոքը.

3. Նախկին հաշուապահ Կ. Մատնիշեանի խնդիրը.

4. Պ. Արտ[աշես] Տայեանի խնդիրը.

5. Կարսի վիճակի Նախիջևանի շրջանի պարենատրման բաժնի ծառայողների գրությունը.

6. Պարոյր Սաֆարեանի և տ[իկին] Մարիամ Ալխազեանի խնդիրը.

7. Ինժեներ-տեխնոլոգ Արամ Խոյեցեանի յայտարարությունը.

8. Գիղական լիազորներ պ. Յարութիւնեանի և Յ. Սարգսեանի զեկուցումը.

8. Կոմիտեի զեկուցումը նախարարությանը.

9. Կոմիտեի անդամ պ. Յ. Մովսիսեանի յայտարարությունը.

10. Կոմիտեի պ. կոմիսարի գրությունը նոր որբանոցի շինութեան մասին.

11. Կոմիտեի անդամ Մովսիսեանի գրությունը Տէր-Պողոսեանի որբանոցի մասին.

13. Ընթացիկ հարցեր.

1. Նախ կարդացուեց և ընդունուեց նախկին ժողովի արձանագրությունը:

2. Ամերիկեան Նպաստամատոյց Կոմիտէի ներկայացուցիչ պ. Ղարախանեանը կարդաց տյն կոմիտէի անունով Թիֆլիսից ստացուած հեռագիրը, այն է՝ телеграфуйте последнее число беженцев Вашего района, которые должны быть возвращены в Карской област., ասլա խնդրեց կոմիտէին տալ իր ձեռքի տակ եղած քերքը, որպէսզի կարողանայ պատասխանել հեռագրին: Բայց որովհետև կոմիտէն չունէր քաղաքի և շրջակայքի գաղթականութեան ընդհանուր թիւը, որոշեց հեռագրել, որ գաղթականութեան ընդհանուր թիւը հասնում է մօտ 100 հազար հոգու:

3. Պ. նախագահը ժողովին յայտնեց ի գիտութիւն, որ սննդատու պունկտերը ամսիս 20-ից անցնելով Ամերիկեան Նպաստամատոյց Կոմիտէին, այդ օրուանից թէ պունկտերի ծախսերից ենք ազատում, թէ ծառայողների ռոճիկից, մեզ մնում է հոգալ միայն գրասենեակի, հանրակացարանների և արհեստանոցի վերաբերեալ և ծառայողների ծախքերը և յայտարարել եմ պ. կոմիսարին մինչև մարտի 1-ը կազմել կոմիտէի ունեցած ընդհանուր պարտքի ցուցակը և յայտնել մեզ թէ ինչ քանակի է հասնում կոմիտէի ունեցած պարտքը, որպէսզի կարողանանք կառավարութիւնից պահանջել հարկաւոր գումարը:

4. Կարդացուեց պ. քարտուղարի կազմած գեկուցումը Հայաստանի Հանրապետութեան Խնամատարութեան պ. նախարարի անունով գաղթականութեան ամբողջ անց ու դարձի և կոմիտէի գործունէութեան մասին: Ժողովը տուեց իր հաւանութիւնը և որոշեց ուղարկել այդ Քաղաքային Խորհրդի պ. նախագահի միջոցով:

5. Կարդացուեց պ. Յովհ[աննես] Մովսիսեանի յայտարարութիւնը որբերի հանրակացարանների մասին, որով յայտնում է, թէ ինչպէս ինքը պ. Քեօսայեանի հետ այցելել է որբանոց, ուր այդ օրը եղել է 25 մեռել միսեանց վրայ թափթփուած, առողջներն ու հիւանդները միասին խառը, իսկ բժշկական օգնութիւն բոլորովին չկայ: Մի խօսքով «անտէր, անտիրական» դա ոչ թէ որբանոցն է, այլ մի տեղ, ուր

կոմիտեն ուղարկում է երեխաներին յատուկ մեռցնելու համար, և բողոքում է կոմիտեին այդ անհոգ վերաբերմունքի դեմ: Այդ բողոքին միասնում է կոմիտեի անդամ պ. Մ. Տեր-Թովմասեանը վիրաւորանք հասցնելով անհատապէս պ. Գ. Փեշտմալճեանին: Իսկ պ. կոմիսարը յայտնեց, որ այդտեղ որբերի հետ միասին տեղաւորուած են նաև մեծեր, բայց ինքը կարգադրել է մեծերին անմիջապէս հեռացնել, իսկ որբերից մի քանի տասնեակ էլ տեղափոխուած է «Խրիմեան» որբանոցը, ուր այժմ որբերի թիւը հասնում է 120-ի: Իսկ Գ. Փեշտմալճեանը յայտնեց, որ ապաստարանը բաց անելիս անմիջապէս կոմիտեն դիմել է Քաղաքային Վարչութեանը և խնդրել որբերի համար հաց բաց թողնել, բայց նա մերժել է, իսկ կոմիտեին վերջիվերջոյ յաջողուել է կռուով հաց ձեռք բերել և փոքրերի կեանքը փրկել այդպիսով և առհասարակ կոմիտեի իւրաքանչիւր մի դիմումը նման դէպքերի համար միշտ արգելք է հանդիպել Քաղաքային Վարչութիւնից և կարծես թէ սա մի տեսակ խորթ աչքով է նայում կոմիտեին և թէ ենթակայ հիմնարկութիւններին և թուեց մի շարք փաստեր, որոնք ստիպել են կոմիտեին իր վերջին քայլը անել՝ տալ իր հրաժարականը: Ժողովը լսելով յիշեալ զեկուցումները որոշեց նախ որբանոցների համար հրաւիրել մի բժիշկ և հիւանդների տեղափոխել քաղաքի որբերի հիւանդանոցը, երկրորդ յայտնեց իր գալոյթը կոմիտեի անդամ Մ. Տեր-Թովմասեանին նորա անկորեկտ վարմունքի դեմ, որ նա ժողովներում չգիտի իրեն պահել, երրորդ՝ որբերի թիւը քչացնել, 80 որբ տանել «Խրիմեան» որբանոցը, 30 հոգի ուղարկել քաղաքի որբանոցը և նրանցից տեղեկութիւն պահանջել, թէ էլի քանի որբ կարելի է ուղարկել և չորրորդ՝ խնդրել պ. նախագահին կոմիսարի հետ միասին այցելել բոլոր որբանոցները անձամբ ստուգել որբերի թիւը, թէ որտեղ ինչքան որբ կարելի է տեղափոխել և անմիջապէս կատարել տեղափոխութիւնը:

6. Պ. Կարանեանը ժողովին յայտնեց, որ գաղթականներից շատերը կերակրում են ձիու մսով, որովհետև եղած նպաստը չի բաւարարում: Ժողովը որոշեց դիմել Ամերիկեան

Նպաստամատույց Կոմիտեին, եթե հնարատր է աւելացնել նպաստը:

7. Կարդացուեց պ. Մ. Տէր-Թովմասեանի բողոքը, որով պահանջում է, որ անհապաղ բաւարարել այն գաղթականների, որոնք ձեռքերին չէկեր ունեն և մինչև օրս հնարատրութիւն չեն ունեցել ցորեն ստանալու: Հակառակ դէպքում նրանք պատրաստում են անախորժութիւններ առաջացնել: Ժողովը քննութեան առնելով այս հարցը, թէր և դէմ կարծիքներ յայտնելուց յետոյ, որոշեց այլևս ցորեն չբաժանել, որովհետև ոչ պահեստում ցորեն կայ և ոչ էլ ստանալու է:

7. Կարդացուեց հաշուապահ պ. Կ. Մատնիշեանի խնդիրը, որով յայտնում է, որ յունուար ամսում ծառայողներին փող բաժանելիս կորցրել է 434 թուրլի, իսկ փետրուար ամսում 465 թուրլի 30 կոպ., և խնդրում է, որ այդ պակասորդ գումարը կոմիտէն ինքը վճարի: Ժողովը յայնձնարարեց պ. կոմիտարին քննել եղելութիւնը և հետևեալ ժողովին զեկուցել:

9. Որոշուեց յայտնել տնատէր պ. Տայեանին, որ այն տները ուր գաղթականութիւն է ապրում և վնասներ են հասցրել տնատէրերին, այդ մասին վաղուց դիմած են կառավարութեանը և սպասում են նորա կարգադրութեանը:

10. Կարսի վիճակի Նախիջևանի շրջանի պարենատրման կոմիտէի ծառայողների այն դիմումին, որ այդ շրջանի գաղթականութեան նպաստները բաժանուեն իրենց միջոցով, ժողովը որոշեց մերժել նրանց խնդիրը:

11. Կարդացուեց Պարոյր Սաֆարեանի և Մարիամ Ալխազեանի խնդիրները, որով առաջինը յայտնում է իւր հօր 7-րդ պունկտի կառավարչի օգնական Սենեքերիմ Սաֆարեանի մահը, իսկ միւսը իւր ամուսին 3-րդ պունկտի կառավարիչ Յ. Ալխազեանի մահը և խնդրում են, որ կոմիտէն ի նկատի առնի հանգուցեալների ընտանեկան դրութիւնը և օգնութեան հասնի: Ժողովը որոշեց համաձայն նախկին որոշման տալ նոցա մինչև փետրուար ամսի 20-ի ռոճիկը և մի ամսական էլ յաւելեալ ռոճիկ:

12. Կարդացուեց ինժեներ-տեխնոլոգ Արամ Խոյեցեանի

յայտարարութիւնը, որով Ա. Խոյեցեանը խնդրում է կազարմաները ազատել գաղթականութիւնից, որովհետև խնամատարութեան նախարարը ուզում է գործարաններ հիմնել Ալէքսանդրապոլում և ինքը գտել է ամենայարմարը այդ կազարմաները: Ժողովը քննութեան առնելով յիշեալ յայտարարութիւնը, որոշեց մերժել նորա խնդիրը, որովհետև հանրակացարանի համար ոչ մի յարմար շինութիւն չի ճարում:

13. Կոմիտէի լիազօրներ Յ. Սարգսեանը և պ. Յարութիւնեանը ժողովին զեկուցեցին, որ իրենք շրջել են գաւառիս 4-րդ մասի գիւղերը, հացահատիկները հաւաքել ու բաժանել են գաղթականութեան և տեղական չքաւորներին: Հաւաքումը կատարուում էր ոչ թէ բռնի, այլ համաձայն իրենց ցանկութեան: Բայց գաւառիս կոմիսարը ընդհանրապէս հակառակ է գիւղացիներից հացահատիկներ հաւաքելուն, որովհետև նրա կարծիքով գիւղացին տալիս է իւր սերմացուն: Իսկ պ. Փեշտմալճեանը յայտնեց, որ հաւաքած ցորենին և գարուն կառավարութիւնը անպատճառ վճարելու է իւր արժէքը, բայց փող չի ներու պատճառով փողի փոխարէն գիւղացուն տրուում է անդորրագիր: Պէտք է շտապել կառավարութիւնից փող խնդրել, որպէսզի գիւղացուն վճարուի ցորենի և գարու արժէքը, երբ այդ կատարուեց այն ժամանակ մեր սկսած գործը աւելի յաջող կգնայ: Բայց որովհետև Արտակարգ Յանձնաժողովը որոշել է դադարեցնել այդ ձևով օգնելը, ժողովը որոշեց շարունակել այդ ձևով հաւաքել բաժանելը, միայն թէ խնդրել պ. նախագահին տեղեկացնել Արտակարգ Յանձնաժողովին և ստանալ նրա թոյլտութիւնը յետոյ յայտարարել ժողովին, որ ցորենի և գարու արժէքը վճարելու է ինքը կոմիտէն և խնդրել պ. նախագահին դրա համար դիմել Քաղաքային Վարչութեանը և փող խնդրել:

14. Կարդացուեց պ. կոմիսարի գրութիւնը, որի հետ ներկայացնում է Արտ[աշես] Տայանի ստորագրութիւնը, որով նա պարտաւորուում է իւր երկհարկանի շինութիւնը Կարսկայա փողոցի վրա տալ կոմիտէին որքանոցի համար, տարեկան 5 հազար ռուբլի վարձով երկու անգամ վճարելու պայմանով և

վերանորոգութեան ծախսը կատարելու է կոմիտէն: Ժողովը լսելով պայմանի կէտերը յանձնարարեց պ. կոմիտարին պայմանը կատարելիս պէտք է գրել, որ երբ որքանոցը դատարկուեց պայմանը կորցնում է իւր զորութիւնը և պ. Տայանը այլևս չի ստանալու տան վարձ: Յետոյ աշխատել վերանորոգութեան ծախսերը վճարել տալ տան տիրոջը կամ հաշուել տան քրէից:

15. Կարդացուեց պ. Յովհ. Մովսիսեանի յայտարարութիւնը, որով յայտնում է որ պ. Արամեանից ստացել է 207 փ[ութ] ցորեն թափնցիներին բաժանելու համար: Կատարել է իւր վրայ դրուած պարտականութիւնը, բաժանել է և բաժանելու ժամանակ պակսել է 8 փութ ցորեն, որից 2 փութը մեշօկների տարրեն է, ուրեմն պակասում է 6 փութ: Յետոյ տուեց իւր բացատրութիւնը, թէ ինչպէս է առաջ եկել պակասորդը: Ժողովը նրա տուած բացատրութիւնը բաւարար համարելով համաձայն նախկին որոշման յայտարարեց պ. զանձապահին վճարել պ. Մովսիսեանի կատարած ծախսերը և օրական 50 րութի օրապահիկը:

Նախագահ ժողովի՝	Արմենակ Բաբայեան
Անդամներ կոմիտէի՝	Յովհաննիսեան
	Արաջեան
	Ներսիսեան
Քարտուղար՝	Մարտիրոսեան

ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2715, 40-42: Բնագիր: Ձեռագիր:

Արձանագրութիւն N 24

1919 թ. 6-ը մարտի Քաղաքային Վարչութեան շէնքում կայացաւ Ալեքսանդրապոլի Քաղաքային Ինքնավարութեան գաղթականական կոմիտէի նիստը նախագահութեամբ Արմենակ Բաբայեանի, մասնակցութեամբ Գ. Փէշումալճեանի, Ս. Տէր-Գրիգորեանի, Շ. Շիրակունու, Հ. Բեօսայեանի, Ս. Տէր-Սահակեանի, Կ. Մառանջեանի, Յովհ. Մովսիսեանի, Գ.

Իսահակեան, Վ. Ներսիսեանի, Յովհ. Մելիք-Սարգսեանի և Յովհ. Դաւթեանի:

Օրակարգի հարցերը.

1. Ընթերցումն նախկին ժողովի արձանագրութեան.

2. Պ[արոն] նախագահի զեկուցումը որբանոցների մասին.

3. Ձեկուցում կոմիտէի ծառայողների շտատի մասին.

4. Մեծ Ղարաքիլիսայի շրջանի կոնտրօլէոր Թալանեանի գրութիւնը.

5. Ինժեներ Ջիթողցեանի գրութիւնը Աղալեանի մասին.

6. Տիկին Ալիսագեանի խնդիրը նպաստի մասին.

7. Պ. Վաղ. Տէր-Սիմասեանի յայտարարութիւնը Կարա-նեանի կազարմաները քանդելու մասին.

8. Երրորդ սննդատու կայանի կառավարիչ Հ. Աւետի-սեանի խնդիրը.

9. Կոմիտէի ծառայողների յայտարարութիւնը.

10. Գրասենեակում կազմած արձանագրութիւնը կորած իրերի մասին.

11. Կոմիսար Աշոտ Կարանեանի յայտարարութիւնը.

12. Ընթացիկ հարցեր.

1. Նախ կարդացուեց և ընդունուեց նախկին ժողովի արձանագրութիւնը

2. Պ. նախագահը ժողովին յայտնեց, որ որբերի հանրա-կացարանից 70 հոգի տեղափոխուած են քաղաքի առաջին որբանոցը: 56 որբ՝ Խրիմեան որբանոցը, իսկ մնացած որբերը պէտք է տեղափոխել 2-րդ նոր բացուելիք որբանոցը և այս-պիսով ազատել Տէր-Պօղոսեանի կազարման որբերից և այստեղ դարձնել մեծերի համար հանրակացարան, իսկ որբերի համար քաղաքի կենտրոնում նոր հանրակացարան ճարել: Ժողովը տուեց իր հաւանութիւնը:

3. Պ. նախագահը ժողովին զեկուցեց կոմիտէի ծառայող-ների շտատի մասին, որ անցեալ փետրուարի 20-ից բոլոր սննդատու պունկտերի կառավարիչները իրենց օգնական-ներով և երկու կոնտրոլէօրներ թույլ 29 արդէն անցան Ամերիկական Կոմիտէի իրաւասութեան տակ և այսպիսով

կոմիտեն ազատում է ամսական մօտ 19 հազար բուբլի ծախսից, իսկ ամսի 1-ից կոմիտեն ունենալու է հետևեալ կազմը.

1. Ընդհանուր գործերի կառավարիչ- կոմիսար 1080 բուբլի ռոճիկով

Գրասենեակի ծառայողներ

1. Գրասենեակի կառավարիչ- 720 բուբլի
2. Հաշվապահ - 800 բուբլի
3. Քարտուղար և պահեստապետ- 720 բուբլի
4. Գործավար- 720 բուբլի
5. Գործավարի օգնական գրագիր- 720 բուբլի
6. Ծառայողներ 3 հոգի- 380 բուբլի իւրաքանչիւրը

Հանրակացարանների համար

7. 14 հանրակացարանի համար 14 կառավարիչ- 400 ական բուբլի

8. Գաղթական ննջեցեալներին թաղող քահանայ- 300 ական բուբլի

9. 4 հոգի գաղթական ննջեցեալներին հաւաքող- 400-ական բուբլի

10. Երկու գիւղական լիազօրներ- իւրաքանչիւրը- 220-ական բուբլի

11. Կայսրանում գաղթականներին ընդունող- 400 -ական բուբլի

Արհեստանոց

12. Կառավարչուհի- 400 բուբլի

13. Օգնականուհի- 240 բուբլի

Բայց որովհետև գիւղական լիազօրների ռոճիկները մինչև օրս որոշում չէ, թէ նրանք ինչ են ստանալու, առաջարկեց ժողովին որոշել նրանց ռոճիկների չափը և որոշել յետոյ շարունակուելու է այդ պաշտօնը թէ ոչ: Ժողովը որոշեց տալ նրանց 780 բուբլի ռոճիկ և 20 բուբլի օրապահիկ: Դուրս գալով նրանց կատարած ծախսերը, ասպա վճարել օրապահիկը: Իսկ ինչ վերաբերում է, թէ նրանք շարունակելու են այդ

պաշտօնը, թէ ոչ, սպասել մինչև որ Արամենացի վերադարձը, ապա ըստ այդմ որոշում կայացնել: Յետոյ յայտնեց, որ հոգևոր իշխանութիւնը պաշտօնից հեռացրել է գաղթական ննջեցեալների հոգևոր կարիքները հոգացող Արիստակէս քահանային առանց կոմիտէի գիտութեան և նրա տեղը նշանակել մի ուրիշին: Ժողովը որոշեց այդ մասին գրել հոգևոր իշխանութեանը, որ նա նախապէս չստանալով կոմիտէի համաձայնութիւնը այս մասին իրատունք չունէր փոխելու նորա որոշումը: Իսկ ինչ վերաբերում է նոր նշանակուած քահանային կոմիտէն նրան չի ճանաչում և չի էլ կարող վարձատրել:

2. Պ[արոն] Փեշտմալճեանը յայտնեց, որ որբանոցների կառավարիչները հացի համար շարունակ դիմում են Ամերիկեան Կոմիտէին և հաց խնդրում, ցանկալի է, որ այդ կատարուէր ոչ թէ նրանց կողմից, այլ պաշտօնապէս, կամ կոմիտէն կամ էլ Բաղաքային Վարչութիւնը դիմէր այդ մասին: Բայց այնուամենայնիւ, ինչ ձևով էլ լինի դիմումը, հացը կտրուի ժամանակատր մինչև որ քաղաքի հաց ունենալը: Երբ կոմիտէն կամ Բաղաքային Վարչութիւնը դիմէ, Ամերիկեան Կոմիտէն որբանոցները կընդունէ իր հովանաւորութեան տակ և կխնամէ որբերին:

Կոմիտէն լսելով յիշեալ գեկուցումը և որովհետև չունէր այն լիազօրութիւնը, որ որբանոցների խնամելը յանձնէ մէկ ուրիշ հիմնարկութեան, և նկատի առնելով այն խոշոր ծախսերը, որ կատարում էր սննդատու կայանների վրայ, որից ազատուեց Բաղաքային Վարչութիւնը և կառավարութիւնը և այժմ Բաղաքային Վարչութիւնը հնարաւորութիւն ունի բարեալաւել գոնէ որբերի դրութիւնը, հարկատր է միայն խնդրել Բաղաքային Վարչութեանը ուշադրութիւնը այն բանի վերայ, որ նա այս որբերի օգնութեան գործում անջատ չգործէ և խնդրում է խտրութիւն չդնել կոմիտէի և իր որբանոցների մէջ, բոլորին էլ հաւասար աչքով նայէ և բոլոր որբանոցները ունենան մէկ աղմինիստրացիա:

5. Պ[արոն] Փեշտմալճեանը ժողովին յայտնեց, որ գաղթականութեան ներկայացուցիչ կոմիտէի անդամ պ. Մովսէս

Տէր-Թովմասեանը նպաստ ստանալու համար ապօրինի ճանապարհով ձեռք է բերել չորս կեղծ չէկեր 24 հոգու համար և օգտուելիս է եղել մինչև օրս, իսկ անցեալ օրը երբ Ամերիկեան Կոմիտէն նոր ցուցակագրութիւն էր անում, արգելում է ցուցակագրողներին տուն մտնել ասելով, որ տանը բժաւոր տի.ֆով հիւանդներ կան պառկած: Բայց նրանք չեն լսում մտնում են տուն, ուր պարզում է ոչ մի հիւանդ չկայ, ունի կովեր և միջոց: Չէկերը առնում են ձեռքից և այժմ այդ չէկերը և բոլոր փաստաթղթերը գտնում են կոմիտէի անդամ Աբաջեանի մօտ (որից կարող է կոմիտէն պահանջել և ստուգել, որ իր ասածները սուտ չէ): Հիմայ ինչպէս է վարուելու կոմիտէն այս պարոնի հետ, որը ներկայացուցիչ է գաղթականութեան և պաշտպան նրա շահերի: Ժողովը լսելով յիշեալ զեկուցումը, որոշեց պ. Աբաջեանից պահանջել փաստաթղթերը, իրողութիւնը և ամբողջ պատմութիւնը տալ լրագրութեանը և անմիջապէս հեռացնել կոմիտէի կազմից, որովհետև կոմիտէն չի կարող այդպիսի մարդկանց հետ գործ անել:

6. Կարդացուեց կանտրօլէոր պ. Թալանեանցի գրութիւնը, որով խնդրում է կոմիտէի համաձայնութիւնը, որ Մեծ Ղարաքիլիսայի շրջանից տեղափոխուի Ալէքսանդրապոլ: Հետոյ պ. նախագահը յայտնեց, որ Քաղաքային վարչութիւնը անցեալ օրը նախարարութիւնից ստացել էր մի գրութիւն, որով առաջարկում է պ. Մխիթար Տէր-Աբրահամեանցին որպէս կոնտրոլէորի գաղթականական գործերի ռոճիկ տալ այստեղ: Իհարկէ Քաղաքային Վարչութիւնը չհամաձայնեց և այս հարցը դրաւ Խորհրդի, ուր և մերժեց նախարարութեան առաջարկը: Ժողովը լսելով Դումայի որոշումը որոշեց գրել նախարարութեանը, որ կոնտրոլէորի կարիք չունի և եթէ մի թերութիւն կամ պակասութիւն կայ, այդ կոմիտէն ինքն էլ շատ լաւ նկատում է և դա ոչ թէ կոնտրոլէոր չունենալուց է, այլ փող չլինելուց և եթէ հնարաւոր է անմիջապէս փող փոխադրել:

7. Կարդացուեց ինժեներ տեխնոլոգ պ. Զիթողեանի գրութիւնը, որով խնդրում է վճարել պ. Վարոս Աւդալեանին 720 թուրքի, որովհետև հանրակացարանները վերանորոգելիս

նա բանուորների վերայ վերակացուի պաշտօն էր կատարում և աշխատել է 34 օր: Ժողովը որոշեց տալ յիշեալ գումարը:

8. Որոշուեց հանգուցեալ պ. Ալիսագեանի ընտանիքին տալ մի ամսուայ նպաստ (մինչև մարտի 20-ը) համաձայն կոմիտէի նախկին որոշման:

9. Կարդացուեց պ. Վ. Տէր Մինասեանի գրութիւնը, որ ինչպէս երևում է 2-րդ պունկտի կառավարչի կարգադրութեամբ Զաղաքային և Ամերիկեան կոմիտէների անունից քանդում են Կարանեանների կազարմաները և հարց է տալիս արդէօր այդ յայտնի է կոմիտէին և իսկապէս նրա կարգադրութեամբ է քանդում և ինչ իրաւունքով: Պ[արոն] Փեշտմալճեանը յայտնեց, որ այդ հարցով Տէր-Մինասեանը դիմել է և Ամերիկեան Կոմիտէին և պատասխան ստացել, որ Կոմիտէն այդ դէպքից տեղեկութիւն չունի, նա բոլոր պունկտների փայտ է մատակարարում իր պահեստներից և կոմիտէն իբրև թոյլ էլ չէր տայ ուրիշի կալուածքը քանդելու, փչացնելու: Կարծեմ, որ նոյն պատասխանը պէտք է տայ մեր գաղթականական կոմիտէն: Ժողովը համաձայն լինելով պ. Փեշտմալճեանի առաջարկութեանը, որոշեց յայտնել նրան, որ նա ինքը քննութիւն նշանակէ, մեղաւորին դատի ենթարկէ և կոմիտէն էլ այդ դէպքում նրան կաջակցէ և աւելի խիստ պատժել կտայ մեղաւորին, որ նա շահագործում է կոմիտէի անունը:

10. Որոշուեց տալ 3-րդ Սննդատու կայանի կառավարիչ Հայկ Աւետիսեանին բժշկի և տեղի ծախսերը ընդամենը՝ 422 րուբլի 17 կոպէկ:

11. Կարդացուեց ժողովին ի գիտութիւն գրասենեակում կազմած արձանագրութիւնները կորած իրերի մասին: Ժողովը որոշեց յիշեալ իրերը դուրս գրել ինքննտարից և ծառաների վերաբերմամբ խիստ լինել նման դէպքերը չկրկնելու համար:

12. Կարդացուեց ծառայողների խնդիրը պարեն ստանալու մասին: Ժողովը յանձնարարեց պ. քարտուղարին հաւաքել բոլոր ծառայողների կարտոգկաները և ներկայացնել Զաղաքային Վարչութեանը և կոմիտէն կաշխատէ և կա-

ջակցէ շուտ ստանալ:

Նախագահ ժողովի՝ Արմենակ Բաբայեան
Անդամներ կոմիտէի՝ Յովհաննիսեան
Աբաջեան
Ներսիսեան
Քարտուղար՝ Մարտիրոսեան

ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2715, 43-47: Բնագիր: Ձեռագիր:

Արձանագրութիւն N 25

1919 թ. 10-ը մարտի Քաղաքային Վարչութեան շէնքում կայացաւ Ալեքսանդրապոլի Քաղաքային Ինքնավարութեան Գաղթականական Կոմիտէի նիստը նախագահութեամբ Արմենակ Բաբայեանի, մասնակցութեամբ Գ. Փեշտմալճեանի, Ս. Տէր-Գրիգորեանի, Շ. Շիրակունու, Յ. Մելիք-Սարգսեանի, Հ. Քեօսայեանի, Ս. Տէր-Սահակեանի, Կ. Մառանջեանի, Յովհ. Մովսիսեանի, Գ. Իսահակեանի, Քեօսեայեանի, Վ. Ներսիսեանի, Յովհ. Մելիք-Սարգսեանի և Յովհ. Դաւթեանի:

Օրակարգի հարցերը.

1. Գաւառիս պ. Կոմիսարի գրութիւնը Հաճիխալիում եղած հացահատիկների մասին.

2. Կոմիսար պ. Աշոտ Կարանեանի գրութիւնը տկարութեան մասին.

3. Խնամատարութեան նախարարութեան վերաքննիչ քաժանմունքի գրութիւնը.

4. Տնատէր տիկին Փեկիրոնիա Կարապետեանի և Գեորգ Հարութիւնեանի խնդիրները տան քրէի մասին.

5. Տիկին Վարդապետեանի խնդիրը.

6. Տիգրան Յովհաննիսեանի խնդիրը.

7. Հաշուապահ Կարապետ Մատնիշեանի խնդիրը.

8. Գաղթականներին քաղանիք տանելու և սապօնի հարցը.

9. Ընթացիկ հարցեր:

1. Կարդացուեց գաւառիս պ. Կոմիսարի գրութիւնը, որով խնդրում է Հաճիխալիում գտնուած 68 փութ 21, 5 ֆունտ ցորենը և 36 փութ 13 գրվ[անկա]՝⁸⁹ գարին բաժանել կարիքաւորներին: Ժողովը որոշեց յայտնել պ. Կոմիսարին, որ դա Կոմիտէին չի վերաբերում, որ դրա մասին պէտք է դիմել գաւառիս պարեն Կոմիտէին և ստանալ նրա թոյլտուութիւնը:

2. Կարդացուեց Ժողովին ի գիտութիւն Խնամատարութեան Նախարարութեան վերահսկիչ բաժանմունքի թիւ 228 գրութիւնը, որով յայտնուում է, որ շուտով վերաքննութեան է ենթարկուելու բոլոր գործերի դրամական-տնտեսական հաշիւները: Ժողովը յանձնարարեց պ. գանձապահին պատրաստել բոլոր հաշիւները իրենց համապատասխան փաստաթղթերով:

3. Գանձապահ պ. Իսահակեանը Ժողովին յայտնեց, որ Վազգեն Ալանակեանը սրանից մօտ մի ամիս առաջ յօգուտ գաղթականների ներկայացում տուեց և 500 ռուբլի արդիւնք ներկայացրեց Կոմիտէին: Դրանից յետոյ նոյն նպատակի համար երեկոյթ կազմակերպեց և սկզբնական ծախսերի համար աւանսով փող վերցրեց 1300 ռուբլի: Այդ օրը նա ոչ թէ օգտուել է այլ վնասուել և մինչև օրս չի վերադարձրել գոնէ իր վերցրած 1300 ռուբլի աւանսը: Հիմա ինչպէս վարուել նրա հետ: Ժողովը որոշեց, որ անպայման պահանջել պ. Ալանակեանից, որ գոնէ վերցրած փողերը վերադարձնէ, եթէ չունի աշխատի մի կերպ նորից ներկայացում կազմակերպի և իր պարտքը վերադարձնէ:

4. Կարդացուեց պ. Աշոտ Կարանեանի գրութիւնը իր տկարութեան մասին, որով յայտնում է, որ իր տկարութեան պատճառով չի կարող հանրակացարանները և գրասենեակ այցելել և խնդրում է Ժամանակաւոր իր տեղը մարդ նշանակել, իսկ որբանոցների կառավարումը վերապահել իրեն: Յետոյ պ. նախագահը յայտնեց, որ ինքը այլևս չի կարող իր պաշտօնը շարունակել, որովհետև դպրոցները արդէն բացւում են, և ինքը որպէս առևտրական դպրոցի տեսուչ չի կարող երկու տեղում լինել: Հարկաւոր է ընտրել նախագահ, փոխնա-

խագահ և ժամանակաւոր կոմիսար պ. Աշոտ Կարանեանի տեղը մինչև նրա առողջանալը: Ապա առաջարկեց նախագահի պաշտօնի համար պ. Փեշտմալճեանի թեկնածութիւնը, որը պաշտօնավարում է Ամերիկեան Կոմիտէում և անհրաժեշտ է նրա լինելը և որի շնորհիւ երկու կոմիտէների գործունէութիւնը միակերպ կլինի և միևնոյն ժամանակ կապ կհաստատուի երկու կոմիտէների միջև: Փոխնախագահի համար առաջարկուեց պ. Շիրակունին, իսկ կոմիսարի պաշտօնի համար պ. Բաբայեանը յայտնեց, որ պ. Կարանեանի տկարութեան օրից նախկան ժողովի որոշումը իմ կարգադրութեամբ պ. Կարանեանի պարտականութիւնները կատարելու համար յանձնարարել եմ պ. Մն. Տէր-Մարտիրոսեանին և առաջարկում է նորա թեկնածութիւնը նոյն պայմանով, որ պաշտօնաւարի մինչև պ. Կարանեանի առողջանալը: Իսկ ինքը մնալու է կոմիտէի կազմի մեջ որպէս անդամ: Ժողովը լսելով պ. Բաբայեանի առաջարկութիւնը միաձայն ընտրեց նախագահ պ. Փեշտմալճեանին, փոխնախագահի համար պ. Շիրակունուն, իսկ կոմիսարի պաշտօնի համար պ. Մն. Տէր-Մարտիրոսեանին: Յետոյ ժողովը որոշեց մինչև ամսի 15-ը փակել բոլոր հաշիւները և ապա հրաւիրել հաշուապահին, ժամանակաւոր գործավար պ. Շիրակունուն ազատ համարել պաշտօնից, այսպէս գրասենեակի ամբողջ գրագրութիւնը, քարտուղարութիւնը և հաշիւների պահելը վարելու են պ. Տիգրան Տէր-Ալեքսանդրեանն ու գործավար պ. Խաչատրեանը, որը այժմ առողջացել է և կարող է գործել, իսկ դրսի միւս աշխատանքները կատարելու է պ. կոմիսարը:

5. Պ[արոն] Փեշտմալճեանը ժողովին յայտնեց ի գիտութիւն, որ թէ Երևանից և շրջակայ գիւղերից գաղթականութիւնը հեղեղի նման թափում են քաղաք: Հարկաւոր է նրանց տեղաւորել քաղաքից դուրս գտնուած կազարմաները: Հետոյ պ. Տէր-Մարտիրոսեանը զեկուցեց, որ այսօր մօտ 400-500 գաղթականներ են տեղաւորել հանրակացարանները, այժմ պատրաստի տեղ չունենք, հարկաւոր է շտապել 2-րդ որբանոցը պատրաստել և Տէր-Պօղոսեանի կազարմում եղած

որքերը այնտեղ տեղադրել: Բացի այս նոր բացուելիք 3-րդ որբանոցի համար կարելի է ի նկատի ունենալ պ. Խալաթեանների տունը, ուր այժմ գտնուում է կոմիտեի գրասենեակը և արհեստանոցը: Միայն թե հարկադր է գրասենեակի և արհեստանոցի համար նոր շինութիւն վարձել: Կոմիտես լսելով յիշեալ զեկուցումները տուեց իր համաձայնութիւնը նոր բնակարանների հարցում:

6. Ժողովը քննութեան առնելով հաշուապահ պ. Կ. Մատնիշեանի խնդիրը կորցրած 399 թուրլի 50 կոպ[էկ]ի մասին և խնդրում է, որ այդ պակասորդի գումարը ինքը կոմիտեն վճարի: Ժողովը գտնելով, որ նրա պահանջը ապօրինի է, որ իր կորցրածի համար նա է պատասխանատու, բայց ի նկատի առնելով նրա ընտանեկան և թախանուած դրութիւնը, յետոյ վերջերս կատարած ծախսերը կնօջ հիւանդութեան պատճառով համաձայն յունուարի 28-ի որոշման, որ բժշկ պէտք է ծառայողներին և նրա հիւանդացած ընտանիքի անդամներին, որի համար նա կստանայ առանձին վարձատրութիւնը: Ժողովը որոշեց որպէս նպաստ պարտքը վերցնել իր վրայ և յայնձնարանեց զանձապահին վճարել յիշեալ գումարը:

7. Հետոյ ծառայ Յովհ. Պատրիկեանի խնդրին, որ իր հիւանդ կնոջ համար ակուշերկա⁹⁰ է հրաւիրել և բժշկի կարիք կայ, բայց հնարաւորութիւն չունի ոչ մեկին վարձատրելու: Ժողովը որոշեց նրան 200 թուրլի նպաստ տալ նրա կնոջ առողջութիւնը վերականգնելու համար, իսկ տիկին Վարդապետեանի խնդիրը, որով յայտնում է իր ամուսնու՝ 6-րդ պունկտի կառավարիչ Հայկ Վարդապետեանի մահը և դեղերի ու բժշկի ծախսը, Ժողովը ի նկատի առնելով, որ նրա մահը տեղի է ունեցել փետրուարի 20-ից յետոյ, երբ արդէն պունկտերը յանձնուել են Ամերիկեան Կոմիտէին,⁹¹ որոշեց յիշեալ խնդիրը ուղարկել նրանց ի տնօրինութիւն, իսկ խնդրատուին տալ միայն միամսուայ նպաստ, նաև պ. Գէորգ Մսերեանին իր որդու մահուան համար:

8. Կարդացուեց տնատէրեր Գ. Հարութիւնեանի և տ[իկին]

Փ. Կարապետեանի խնդիրները իրենց տների քրէների մասին: Ժողովը որոշեց այս մասին գրել մինիստրութեանը և խնդրել նրա կարգադրութիւնը:

9. Ժողովը լսելով ծառայող Տիգրան Յովհաննիսեանի խնդիրը, ռոճիկը աւելացնելու մասին թողեց անհետևանք:

10. Համաձայն պ. Շիրակունու առաջարկին՝ այն է եթէ Արտակարգ Յանձնաժողովը չի իրականացնելու իր որոշումը գաղթականներին ձրի բաղանիք տանելու, այն ժամանակ դիմել Քաղաքային Վարչութեանը և խնդրել, որ գոնէ ձրի սապօն բաժանուի գաղթականներին: Ժողովը յայտնելով նրա առաջարկը որոշեց դիմել Քաղաքային Վարչութեանը և խնդրել այդ նպատակի համար 600 փութ սապօն:

11. Ժողովը որոշեց համաձայն պ. Հ. Տէր-Յովհաննիսեանի առաջարկի բարձրացնել գործարանում աշխատող կանանց աշխատավարձը, իսկ պատրաստած գուլպաները գործածել որբերի համար:

12. Ժողովը նորից քննութեան առնելով որբանոցների պահպանութեան խնդիրը և ի նկատի ունենալով գաղթականների հոսանքը դէպի քաղաք, որ ոչ մի միջոց չկարողացաւ կասեցնել, որոշեց իր հովանաւորութեան տակ եղած բոլոր որբանոցները յանձնել Քաղաքային Վարչութեանը և խնդրել նրանց խնամել, իսկ կոմիտէն իր ամբողջ ուշադրութիւնը կենտրոնացնելու է գաղթականներին տեղաւորելու և հանրակացարանների վրայ, որ գոնէ դորանով մի քիչ տանելի կեանք ստեղծել նրանց համար:

13. Ժողովը կարողալով տիկ. Նալբանդեանի խնդիրը նրան նշանակեց 1-ին որբանոցի կառավարչուհու օգնական:

Նախագահ ժողովի՝	Բաբայեան
Անդամներ՝	Յովհաննիսեան
	Աբաջեան
	Ներսիսեան
Քարտուղար՝	Սարտիրոսեան

Արձանագրություն N 26

1919 թ. 2-րդ ապրիլին կայացաւ Ալեքսանդրապոլի Ինքնավարութեան Գաղթականական Կոմիտէի նիստ՝ նախագահութեամբ պ. Գեղամ Փեշտմալճեանի և մասնակցութեամբ կոմիտէի անդամներ Հ. Տէր-Յովհաննիսեանի, Շ. Շիրակունու, Զեօսեայեանի, Ս. Տէր-Սահակեանի, Գ. Իսահակեանի և Կ. Մառանջեանի:

Օրակարգի հարցերն են.

1. Ընթերցումն նախկին արձանագրութիւնների.
2. Կոմիտէի հաշիւների վերջնական փակումը.
3. Կոմիտէի կազմի լուծումը.

1. Նախ կարդացուեց և ժողովի կողմից ընդունուեց նախկին ժողովի արձանագրութիւնը:

2. Պ. նախագահը ժողովին զեկուցեց ի գիտութիւն, թէ ինչպէս էր առաջ եկել Գաղթականական Կոմիտէն, չնայած որ գաղթականներին պարեն բաժանելու, տեղաւորելու և կարիքները հոգալու համար Քաղաքային Ինքնավարութիւնը ուներ յատուկ մարմին, որ դեկավարում էր Քաղաքային Դումայի կողմից նշանակուած անդամի ձեռքով: Բայց գաղթականների և քաղաքային չքաւորների ցանկութեամբ կազմուեց կոմիտէ, ուր մտան ներկայացուցիչներ գաղթականներից և Աղքատախնամ հոգաբարձութիւնից: Բայց որովհետև գաղթականների պարենաւորման գործը վերցնում էր իր վրայ Ամերիկեան Կոմիտէն, ուստի այս կոմիտէի կազմը լուծում է: Նախագահը ցոյց տուեց այն բոլոր հաշիւները, որ արել էր կոմիտէն: Կազմուած էր հետևեալ հաշուեկշիռը և յանձնարարուեց զանձապահին, որ իր մօտ գտնուող 7492 րուբլի 58 կոպէկ մտցնի քաղաքային կասսա և հաշիւները յանձնի Վարչութեանը:

Հաշուեկշիռ

Ալեքսանդրապոլի Քաղաքային Ինքնավարութեան
Գաղթականական Կոմիտէի առ 30 մարտի 1919 թ.

Ակտիվ

Պասիվ

<i>Դրամարկղի հաշիւը</i>	<i>7992</i>	<i>53</i>		<i>1.Քաղաքա- յին ինքնա- վարութեան աւանստի հաշիւ</i>	<i>541000</i>
<i>Ընթացիկ ծախսերի (վառարսւնների, բահերի, գաղթականների թաղման, վառելիքի)</i>	<i>71648</i>	<i>60</i>		<i>2.Փոխադր ական գումար (մսագործ Ա. Բադալ- եանի տուգանքը)</i>	<i>10000</i>
<i>Փոխադրական գումարը</i>	<i>17183</i>	<i>35</i>		<i>3.Հայկակ. կառավարո ւթիւնից</i>	<i>25000</i>
<i>Սննդատու կայանի կայարանում</i>	<i>3513</i>	<i>50</i>		<i>4. Նւերներ ներկայացո ւմներից</i>	<i>2149</i>
<i>Սննդատու կայան թաթարական թաղամասում</i>	<i>2523</i>	<i>-</i>			
<i>1 սննդատու կա- յանի</i>	<i>46725</i>	<i>75</i>			
<i>2-----</i>	<i>55800</i>	<i>25</i>			
<i>3-----</i>	<i>52789</i>	<i>90</i>			
<i>4-----</i>	<i>46565</i>	<i>12</i>			
<i>5-----</i>	<i>47643</i>	<i>30</i>			
<i>6-----</i>	<i>42801</i>	<i>15</i>			
<i>7-----</i>	<i>34903</i>	<i>86</i>			
<i>8-----</i>	<i>23391</i>	<i>-</i>			
<i>9-----</i>	<i>16377</i>	<i>-</i>			
<i>Ծառայողների ռոճիկ</i>	<i>66414</i>	<i>64</i>			
<i>Անակնկալ ծախսերի նպաստ(հիւանդ)</i>	<i>2142</i>	<i>80</i>			
<i>Ապրանք</i>					

պահեստում Բրդի գործարանի գործածք Որբանոց Խրիմեան 10 սննդատու կա- յան	586	25		
	1816	65		
	12676	-		
	24654	25	578149	578149
	հաշուեկշիռ 578149			

Հաշիւները քննելու ժամանակ գանձապահը յայտնեց, որ նրա մօտ կայ երկու հատ կեղծ 40-ոց և 3 հատ էլ քառասունանոցներ, որոնք զոյները փոխած են և չեն ընդունում:

Որոշուեց, որ այդ 40-ոցները հաշուեկշռի հետ յանձնել Վարչութեանը:

Երեկոյթի համար բաց թողած 1300 թուրլին, որ կազմակերպողները ցոյց էին տուել վնաս, որոշուեց գրել ընթացիկ ծախսերի մէջ:

Պահեստի համար ժողովը խնդրեց պ. նախագահին և լիազօրեց ստուգել պահեստը և եթէ պակասորդը համապատասխան է ընդունուած նորմային վաւերացնել:

Արհեստանոցի մասին յանձնարարուեց պ. Տէր-Յովհաննիսեանին և պ. Կ. Մառանջեանին ստանալ հարկատու գումարները բաժանել աշխատատեղերին, ապա հաշիւները փակել, որից յետոյ ժողովը փակուեց:

Ալեքսանդրապոլի Քաղաքային Ինքնաւարտութեան
Գաղթականական Կոմիտէի պահեստի հաշիւը
1919 թ. յունուարի 1-ից մինչև ապրիլի 1-ը

	Ապրանքն րի անունները	Պահեստ ընդունած ապրանք ները	ելք	Մնացորդ պակաստ ըդ	Ծանօթութի ւն
--	----------------------------	--------------------------------------	-----	-------------------------	-----------------

		փու թ	ֆու նդ	փ.	ֆ.	փ.	ֆ.	
1	Բրինձ	181	30	179	30	2		սպակատրոդ
2	Աղ	260	35	256	33	3	37	
3	Լուցկի	20 սյաշկայ		14 սյաշկայ		6 սյաշկայ		
4	Սապոն	2	-	1	14		26	
5	Փայտ	12/1/2 սաժեն		12141 կտոր		-	-	
6	Նաթ	2	20	2	19		1	սպակատրոդ
7	Լամայ	6 հատ		15 հատ տարան և չվերադարձրին				
8	Մուրշուրան եր	100 հատ		100հատ				
9	Գդալներ	100	100					
10	Թեյի գդալներ	12հատ		12հատ		մն աց որդ		
11	Կորկոտ	3փ.	30ֆ	3փ.	30ֆ			
12	Չորացրած բանջարեղե ն	18	35	18	13	22ֆ		
13	Խաշած ծրագու	6	12	6	11		1	
14	Կիտրոններ	84 հատ		83 հատ			1	մնացորդ
15	Երեսարբիչն եր	115		8		107		
16	Յորեն/հաշ վապահի գրքով/	1803	3հ ատ	178 հ	9	17	27	սպակատրոդ Արամեանի 9 չի ստաց- ել 2փ. 10ֆ. և մեշօկնե- րի քաշը հավասար է 15փ. 17ֆ.

17	Յորեն/պահ եստի գրքով/	179 1	23	178 5	10	6	13	
18	Աւելներ	448 հատ		437 հատ		11 հատ		մնացորդ
19	Յախաւել	18 հատ		18 հատ				
20	Աթար	3143		2870		313 հատ		
21	Վառարան ներ	90		90				
22	Շերեփներ	20 հատ		15 հատ		5 հատ		մնացորդը երեքը նորից տարուած է
23	Նասիկանե ր	12 հատ		11 հատ		1 հատ		
24	Կացիներ	15 հատ		12 հատ		3 հատ		սլակասում է/տես արձանագր ութիւնը/
25	Դատարկ մեշօկներ	50 հատ		98 հատ		48 հատ		աւելանում է ցորենի և բրինձի մեշօկներ
26	Բահեր	58 հատ		56 հատ		2 հատ		մնացորդ
27	Պասուց իւղ	3 փ		2 փ	27 ֆ		13 ֆ	սլակասորդ
28	Մոմեր	20 հատ		20 հատ				
29	Կարտոֆիլ	16 փ	5 ֆ.	15 փ.	28 ֆ .		17 փ	
30	Կեղտի նասիկայ	13 հատ		13 հատ				
31	բրեզենտ	3		3				

Նախագահ ժողովի՝ Արմենակ Բարայեան
Անդամներ՝ Գ. Փեշտմալճեան, Ս. Տէր-Գրիգորեան,
Հ. Զեօսայեան, Ս. Տէր-Սահակեան,
Կ. Մառանջեան, Յովհ. Մովսիսեան,

Գ. Իսահակեան, Քեօսեայեան,
Վ. Ներսիսեան, Յովհ. Դաթեան,
Յովհ. Մելիք-Սարգսեան,
Քարտուղար՝ Սն.Տէր- Մարտիրոսեան

ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2715, 51-52: Բնագիր: Ձեռագիր:

N 84

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ Լ. ՍԱՐԳՍՅԱՆԻ
ԵՎ ԱՍԵՐԻԿՅԱՆ ՆՊԱՍՏԱՍՏՈՒՅՑ ԿՈՄԻՏԵԻ ՏԵՂԻ
ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԿՆԶՎԱԾ ՊԱՅՄԱ-
ՆԱԳԻՐԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՈՐԲԱՆՈՑՆԵՐԸ
ԿՈՄԻՏԵԻՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

22 մայիսի 1919 թ.
Ալեքսանդրապոլ

Հայկական Հանրապետական կառավարութեան եւ Ամերիկեան Նպաստամատոյց Կոմիտէի ներկայացուցչի փոխադարձ համաձայնութեամբ⁹² Ալեքսանդրապոլում գտնուած տաս որբանոց եւ մի որբերի հիւանդանոց սարքեցեալ ցուցակի համաձայն իրենց բոլոր գոյքերով, ծառայողներով եւ որբերով յանձնեցի Ամերիկեան Նպաստամատոյց Կոմիտէի տեղական ներկայացուցիչներին միս Շեյնին, միս Նիլին և մր. Սիտչելին 1919 թ. մայիսի 1-ին:

Ալեքսանդրապոլի Քաղաքագլուխ Լևոն Սարգսեան⁹³

Contrac

According to the agreement between Armenian Republican Government and the representatives of the Armenian Relief Committee in New East we have received from May 1 1919 ten (10) orphanages and one (1) orphans hospital with all the attached leaf.

Representatives of Armenian
Relief Committee
Myrtle O. Shane
Lilian O'Neil
Edwin Knox Mitcheel

ՀԱԱ, ֆ.105, ց. 1, գ. 2853, ք.153: Պատճեն: Չեռագիր:

N 85

**ՄԵԼՎԻԼ ՉԱԹԵՐԻ ՀՈՂՎԱԾԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ
ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

A SITY OF HARROWING SILENCE

That night we passed the mountains' summit through the blinding smoke of wind-swept snow drifts, and by next morning we had regained springtime's balm and vedure in the valley at Alexandropol.

Before the flour- unloading began- indeed, before we were up- there were children about our car, attracted by the American flug which it flew. They were searching the ground with the spellbound preoccupation of sone one who has lost something infinitely small and precious. I say children, but I really mean wizened and ancient dwarfs, with wrinkled foreheads and those downward chhek creases which deepen when one smiles. Not that they were smiling, however; they had forgotten the way of that, long ago.

Occasionally I saw them stoop, reclaim something, and masticate. Presently the doctor came in, looking decidedly badtempered. I asked, "What are those children eating?"

"Candle grease," he answered gruffly. "Where's that extra loaf of bread?"

Alexandropol is a blasted town (the handiwork of the Turk upon retating), with streets like the Slogh of Despond; low, flat

houses; long lines of sacklothed people sitting, lying, dozing, and dying, all in the spring sunlight; not a laborer at work, not a wheel turning save those of the wretched droshky which we commandeered.

Utter silence brooded over Alexandropol- a silence profound and sinister, as if the whole town were muffled out of respect for continous burial. We found no voilence, no disorder. The people showed the gentle somnolence ot lotuseaters, as they sat there in long sunbathed streets, feeding on hope.

HUMANIITY MASSED LIKE BEES IN SWARMING TIME

Refugees whose numbers had grown in six weeks from 26,000 to 50,000 and in ten days from 50000 to 58000, filled the Russian barracks, where they were massed like bees in swarming time. As we walked through those dark, cell-like rooms of shattered windows and smoked ceilings, not a bed or chair was to be seen, but only groups of wretched humanity, huddled together on their common bed of dank flagstones.

Through the dimness we could see a multitude of hands stretched despairingly forth, and again that low drone of "Bread, bread, bread" shook us as we passed. Those who were strong enough stumbled up and followed us out into the sunlight- an unforgettable throng of waxen faces and of wasted bodies that streamed with rages. To them we must have seemed as the bright god Baldur seemed to the damned spirits among whom he passed in *dum Hela's* realm.

"They are dying at a rate of from two hundred to hundred fifty a day " said the manager of the American Committee, who had accompanied us thither. "Sometimes in merely passing between my house and my office I have counted fifteen bodies lying in the street. Our present stocks do not permit us to ditribute more than from three and onehalf to seven ounces of flour and less than two ounces of rice a day per person. As you will find

everywhere throughout this country, the Turks swept Alexandropol bare when retiring.

Melville Chater, The land of the stalking death, The National geographic magazine, vol. xxxv, No.3, September, 1919, p.p 406-408:

N 86

**«ՄԱՐԴԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ» ԹԵՐԹԻ ՀՈԴՎԱԾԸ
ՊՈԼԻԳՈՆՈՒՄ ՏԵՂԱՎՈՐՎԱԾ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ
ԾԱՆՐ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

[մարտ] 1919 թ.
Ալեքսանդրապոլ

Ալեքսանդրապոլում գաղթականները տեղափոխված են 19 հանրակացարաններում, որտեղ կար 558 առանձին սենեակ: Բոլոր գաղթականների թիւն այստեղ 15000 էր, այնպէս որ քառակուսի սաժենի⁹⁴ վրա տեղափոխված են 4-5 մարդ, այսպիսի մի խտութիւն ինքնին բացասական երևոյթ էր: Առողջ գաղթականներից ամեն օր նշանակւում են հանրակացարանները մաքրելու համար հերթապահ խմբեր, որոնք հսկում են բնակարանի մաքրութիւնը: Հաւաքւած աղբը կիստում է բակերում, որտեղից սանիտարական սայլակներով ուղարկւում է քաղաքից դուրս: Սակայն այս միջոցը բաւարար համարել չի կարելի, որովհետև ամենառողջ ճանաչւած գաղթականն իրենից ներկայացնում է մարդկային կերպարանքը կորցրած ու մաշուած մի էակ, որը տունը սրբելու ժամանակ քրքրում է աղբը մատներով, բերանը ձգելու մի հարմար բան գտնելու համար:

Հանրակացարաններում ապրող բոլոր գաղթականներն իրենց սնունդը ստանում են բացառապէս Ամերիկեան Կոմիտէից, որն իր ագենտների միջոցով տալիս է ամեն շնչին 1/4 ֆունտ հաց և 6 մսխալ բրինձ: Վերջին օրերս մթերքներ չունենալու պատճառով կոմիտէն տալիս է միայն միս՝ շնչին 6 մսխալ (հում և ոսկրոտ): Ամսի 25-ին տուեց 1/2 ֆունտ հաց

առանց ուրիշ ուտելիքի: Սա սնունդ չի կարելի համարել, այն միայն գրգռում է բշուառների ամբողջ էութիւնը և ախորժակը: Մայրը գիշեր ժամանակ ծածուկ դուրս է շարտում իր կիսակենդան երեխային փողոց, որպէսզի օգտուի նրա բաժնից:

«Մարդկայնություն», 1919, թիվ 4:

N 87

**ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ ՈՐԲԱՆՈՅԻ ՀԱՄԱՐ ԲՆԱԿԱՐԱՆ
ՏՐԱՍԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

18 հոկտեմբեր 1919 թ.
Ալեքսանդրապոլ

Կառավարութեան յանձնարարութեամբ կարգադրուած է Բարեգործական Ընկերութեան տեղիս վարչութեանը, հաւաքել քաղաքում և գաւառում դուրսը եղած որբերին և բանալ որբանոց, որի համար կարևոր է յարմար բնակարան:

Ի նկատի ունենալով, որ քաղաքի առաջին մասում Ղարախաչևսկի փողոցի վրայ գտնուած եղբայրք Արամ ու Յովսէփ Կոստանեանների բնակարանը ունի կարևոր յարմարութիւններ որբանոցի համար, որ այդ բնակարանը սկզբում 1919 թ. յունուար ամսից վարձուած է յատուկ որբանոցի համար և այդ տան պայմանաժամանակը դեռ չի վերջացել, այդ տունը այժմ ազատ է և գտնուում է քաղաքային վարչութեան տրամադրութեան տակ: Եվ որ քաղաքում ուրիշ յարմար բնակարան չկա: Ուստի խնդրում ենք յանձնել վերոյիշեալ տունը տեղիս Բարեգործական Ընկերութեան Վարչութեանը անմիջապէս որբանոց բանալու համար:

Վարչության նախագահ՝

Քարտուղար՝

ՀԱԱ, ֆ. 105, ց.1, գ. 278, ք.109: Բնագիր: Ձեռագիր:

N 88

**ԿԱՐՍԻ ՆԱՀԱՀԱՆԳԱՊԵՏ Ս. ՂՈՐՂԱՆՅԱՆԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

23 նոյեմբերի 1919 թ.

Կարս

Պարտք եմ համարում նորից Ձեր առանձին ուշադրութիւնը հրաւիրել, որ Ալէքսանդրասպոլի գաւառում խմբուած աւելի քան 500 զինուած նախկին թրքահայեր մէծ սպառնալիք են մեր երկրի ընդհանուր իրաւակարգի համար և պէտք է առանց յետաձգելու միջոցներ ձեռք առնել այդ խուժանը մի կերպ որևէ աշխատանքի հետ կապելու:

Գուցէ այդ մարդկանցից կարելի լինի կազմակերպել սահմանապահ բանակ և գուցէ ինձ լիազօրէիք այդ անելու, հրահանգելով պէտք տուալները:

Դա միակ միջոցն է քաղաքացիացնելու այդ արկածալից տարրը և ազատելու երկիրը շատ ու շատ անակնկալներից:

Մենք պէտք է շտապենք այդ անելու ձմեռուայ ընթացքում, ի դէպ գարնանը մեր լեռները և ճանապարհները դժոխք կդառնան և մեր միջազգային հարաբերութիւնները կը բռնկուեն նոր մեծաչափ հրդեհով:

Նահանգապետ՝ Ղորղանեան

Ի. տ. դիւանապետի Մ. Յիցիկեան

գործավար Մ. Դոխիկեան

ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 619, թ. 1: Բնագիր: Ձեռագիր:

N 89

**ՀՀ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԿՈՄԻՍԱՐ
ՀԱՍԿԵԼԻՆ՝⁹⁵ ԱՄԵՐԿՈՍԻ ՊԱՀԵՍՏՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ**

ՄԵԴԻԱՍԹԵՐԶԻ ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

18 դեկտեմբերի 1919 թ.

Շիքախանի

В целях оказания целесообразной и справедливой помощи нуждающемуся населению, считается необходимым сосредоточить распределение продуктов в одном министерстве. С другой стороны путем строгого контроля Министерство установит точное число нуждающихся в бесплатном получении продуктов и постепенно, с восстановлением страны, уменьшится число нуждающихся в бесплатном получении продуктов и постепенно, с восстановлением страны, уменьшится число нуждающихся.

Для достижения этих целей считаю необходимым следующую организацию распределения.

1. При каждом пункте, где имеется продуктовый склад образовать Комитет из трех лица назначенных Министерством призрения и непосредственно ему подчиненных.

2. Требование на отпуск продуктов поступает в этот Комитет, который согласно требованиям предъявляет ордер представителю Американского Комитета помощи на Ближнем Востоке.

3. Списки нуждающихся в бесплатном отпуске продуктов составляется под непосредственным наблюдением агентов Министерства призрения.

4. Представители Американского Комитета помощи на Ближнем Востоке могут проверять списки, но выдача продуктов не должна быть задержана проверкой.

5. Американские учреждения получают продукты непосредственно из складов, с ведома местного Комитета.

6. Требования других учреждений (военного, железнодорожного и т.д) об отпуске продуктов поступают в Министерство Призрения или в местные Комитеты без разрешения

коих продукты не отпускаются.

7. Отчетность в складах ведется Американским Комитетом помощи на Ближнем Востоке.

8. О состояний складов каждые две недели даются сведения в Министерство призрения.

9. При распределении продуктов по складам принимаются во внимание указания Министра призрения.

10. Все недоразумения между Комитетами и представителями Американского Комитета разрешаются Министром Призрения и Представителем Американского Комитета в Эриване.

Министр призрения и труда А. Бабалян

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 636, ք 305-307: Բնագիր: Մեքենագիր:

N 90

**ՀՀ ԽՆԱՍՏԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԲԱՇԽՄԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԻՀՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
ՀԵՌԱԳԻՐԸ ՆԱԽԱՐԱՐԻՆ**

7 հունվարի 1920 թ.

Ալեքսանդրապոլ

Ամերիկեան տեղիս ներկայացուցիչը ստանձնելով Պօլիգոնի գաղթականներու տեղափոխութիւնը իր վրայ կճգճէ. Պօլիգոնում համաճարակի զոհերի թիւը գնալով կը շատանա. Դրութիւնը յուսահատական է. Խնդրիմ Պօլիգոնի համար խոստացած բժիշկները դրկուին և կտրուկ միջոցներ ձեռք առնուին:

Միհրան Գրիգորեան⁹⁶

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, մաս 1, ք. 13: Հեռագրական բլանկ: Չեռագիր:

N 91

**ԱՐԵՎՍՏԱՀԱՅ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱ-
ԳԱՀ ՀԱՅԿ ԳՆԴՈՒՆՈՒ ՀԵՌԱԳԻՐԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ
ԵՎ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ**

9 հունվարի 1920 թ.

Ալեքսադրապոլ

Պալիգոններում գաղթականությունը մատնուած է տիֆի խօլերեայի: Ամսոյս 4-ին 25 և 5-ին 26 մահի դէպքեր են տեղի ունեցել: Դրութիւնը օրսըտօրէ վատանում է: Խնդրում ենք շուտափոյթ բժշկական օգնութիւն: Խնամատարութեան Սինիստրի պալիգօններից մի մասի տեղափոխման կարգադրութիւնը ամերիկեան ներկայացուցիչների կողմից մնում է անգործադրելի: Զօրակոչի առթիւ ուղարկեցի դէլեգատներ, պատճէնը բոլոր թերթերին:

Արևմտահայ Կենդրոնական Վարչութեան⁹⁷ նախագահ Գնդունի

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, մաս 1, ք.20: Հեռագրական բլանկ: Ձեռագիր:

N 92

**ԿԱՐՍԻ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ
ԽՆԱՍՏԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ**

10 հունվարի 1920 թ.

Ալեքսադրապոլ

Սենք, Ղարսի շրջանի գաղթականությունս ծնկաչոք և արտասուաթոր աչքերով խնդրում ենք մեր ներգաղթը հետաձգէք մինչև եղանակների տաքանալը.

Գաղթականություն

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ.801, մաս 1, ք.25: Հեռագրական բլանկ: Ձեռագիր:

N 93

**ՄԵՊՈՒՀԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԽՆԱՍՍԱՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻՆ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ
ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ**

19 հունվարի 1920 թ.
Երևան

Միջնորդէք, որ վագոններ պահանջելու դէպքում ժամանակին տրուեն գաղթականութեանը տեղափոխութեան համար: Այդ որքան շուտ, այնքան լաւ, դրանով Պօլիգոնի գերեզմանոցից շատերին փրկած կլինենք.

Սեպուհ⁹⁸

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, մաս 1, ք. 31: Հեռագրական բլանկ: Ձեռագիր:

N 94

**ՄԵՊՈՒՀԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԽՆԱՍՍԱՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻՆ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ԿԱՐՍ
ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

19 հունվարի 1920 թ.
Ալեքսանդրապոլ

Ստացայ Ձեր հեռագիրը, այցելեցի Պօլիգոն, խօսեցի գաղթականների հետ, որ փոխադրուեն Ղարսի շրջան. Առաջարկում են, որ Ղարսի շրջանում միևնոյնը կլինի ինչ Պօլիգոնում. Պօլիգոնի մասին էլ լաւ խոստումներ են արել. Վախենում են անցեալի կրկնութիւնից. Ուստի խնդրում ենք կարգադրէք, որ Ղարսում ամէն ինչ պատրաստ լինի, որ ժողովուրդը այնտեղի ցրտին իզուր գոհ չգնայ.

Սեպուհ

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, մաս 1, ք. 32: Հեռագրական բլանկ: Ձեռագիր:

N 95

**ՄԵՊՈՒՀԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԽՆԱՍՏԱՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻՆ՝ ԱՄԱՆՈՐԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

17 հունվարի 1920 թ.

Ալեքսանդրապոլ

Հայաստանի դժնդակ պայմաններում Դուք ստանձնեցիք նախարարությունը. Այսօր Քրիստոսի ծննդեան 1920 տարին է և այսօր համայն մարդկությունը տօնում է մեզ համար խաչ բարձրացած Փրկչի տօնը: Հայ ժողովուրդը նրա նման շատ է տանջուել եւ չարչարուել. Մեր Գողգոթաներն անթիւանհամար են, բայց էլի տօնում ենք: Բայց չգիտեմ ինչպէս պիտի տօնեն Պօլիգոնի ամէն օր խաչուող և կենդանի նահատակուող թշուարները. Յանկանում ենք Ձեզ ոյժ, կարողութիւն, որ կարողանաք այս տանջուող ժողովուրդի տառապանքներին վախճան տալ: Թող 1921 թուին, երբ կրկին կը տօնենք մարդկութեան համար գոհուողի տօնը, մեր ժողովուրդը լինի Միացեալ Անկախ Հայաստանում և վերջ տրուի նրա վշտերին ու տառապանքներին. Տոկունութիւն և եռանդ Ձեզ, որ հայ ժողովուրդը ապագայում կը գնահատէ.

Բրիգադայի հրամանատար՝ Սեպուի

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, ք. 29-30: Հեռագրական բլանկ: Ձեռագիր:

N 96

**ՀՀ ԽՆԱՍՏԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՉԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՆԱԽԱՐԱՐԻՆ՝
ԳՈՒՍԱՐ ՓՈԽԱՆՅԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ**

21 հունվարի 1920 թ.

Ալեքսանդրապոլ

Պօլիգոնի գաղթականներին տեղափոխելու ծախսերի հա-

մար Սեպուհին ինձ դիմեց. Խնդրում եմ որոշուած փոխադրելիք գումարը փոխանցել.

Միհրան Գրիգորեան

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, ք. 35: Հեռագրական բլանկ: Ձեռագիր:

N 97

**ՍԵՊՈՒՀԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԽՆԱՍԱՏԱՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻՆ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ԿԱՐՍ
ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

21 հունվարի 1920 թ.

Ալեքսանդրապոլ

Հազար հոգի պատրաստ են մեկնելու Ղարսի շրջանը, բայց Միտչլերը⁹⁹ չուզեց Ուրբաթ ուղարկել, պատճառաբանելով մագութը. Գաւառից աղերսում են օգնել սովամահներին: Ներկայացուցիչը անգոր է, իսկ ամերիկացիք մեր թուերին չեն հաւատում, ստուգելուց յետոյ կը տան: Թարգմանիչները չեն կարողանում իրական պատկերը ներկայացնել նրանց, իսկ տուժողը ժողովուրդն է: Այդտեղ Ռուբէն Անդրէասեանը լաւ անգլիագէտ է: Միջնորդէք գալու այստեղ, ռոճիկը շատ է, ծառայում է ամերիկեան որբանոցներում: Այդ բոլորի մասին կարգադրէք.

Սեպուհ

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, ք. 36: Հեռագրական բլանկ: Ձեռագիր:

N 98

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԻՍ Հ.
ՍԵԼՔՈՆՅԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԽՆԱՍԱՏԱՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻՆ**

22 հունվարի 1920 թ.

Ամերիկեան Կոմիտէի հետ բանակցութեան ժամանակ, շնորհիւ քարգմանների անբաւարարութեան, տեղի են ունենում լուրջ թիրիմացութիւններ, որոնցից խուսափելու համար խնդրում ենք ուղարկել Քաղաքային Վարչութեան տրամադրութեան տակ բժիշկ Ռուբէն Տէր-Ստեփանեանին, Սեպուիի հեռագրում սխալմամբ հիշուած է Տէր-Անդրէասեան.

Քաղաքագլուխ Սելբոնեան¹⁰⁰

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, ք. 38: Հեռագրական բլանկ: Չեռագիր:
ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2881, ք. 2: Թողոն: Չեռագիր:

N 99

**ՀՀ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԲԱՇԽՄԱՆ
ԿՈՍԻՏԵՒ ՆԱԽԱԳԱՀԻ ՁԵԿՈՒՅՈՒՄԸ ՆԱԽԱՐԱՐԻՆ**

24 հունվարի 1920 թ.
Ալեքսանդրապոլ

Ի պատասխան Ձեր N 9845 շրջաբերականի սրանով ներկայացնում եմ:

1. Ալեքսանդրապոլի բոլոր գաւառամասերի չքաւորների ընդհանուր թիւն է 141853 անձինք, որոնք նպաստ են ստանում կառավարութիւնից, որոնցից կան

1-րդ գաւառամասում	30451 անձ
2-րդ գաւառամասում	24754 անձ
3-րդ գաւառամասում	11112 անձ
4-րդ գաւառամասում	45192 անձ
Արևմտեան Շիրակի շրջանում	25744 անձ
Թալինի շրջանում	4600 անձ

2. Գաղթականների ընդհանուր թիւն է 46218, որից 1423-ը՝ կովկասահայ, և 45495-ը՝ տաճկահայ, զանազան վայրերից:

Այս գաղթականները տեղաւորուած են.

1-ին գաւառամասում՝ 328 կովկասահայ, 12911 տաճկահայ, գումար 13239 անձ

2-րդ գաւառամասում՝ 333 [կովկասահայ], 4986 [տաճկահայ, գումար] 5319 [անձ]

3-րդ գաւառամասում՝ - 2678 [տաճկահայ, գումար] 2678 [անձ]

4-րդ գաւառամասում՝ 762 [կովկասահայ], 19320 [տաճկահայ, գումար] 20082 [անձ]

Արևմտյան Շիրակի շրջանում՝ - 5000 [տաճկահայ, գումար] 5000 [անձ]

Թալինի շրջանում՝ - 600 [տաճկահայ, գումար] 600 [անձ]

3. Գիւղերում բացօթեա գաղթականութիւն թէև չկան, բայց մի մեծ մասը տեղաւորուած են ոչ մարդկային բնակարաններում:

4. Վարակիչ հիւանդութիւններ գիւղերում չեն երևացել, սովամահութեան դէպքեր յաճախ լինում են: Անհրաժեշտ է բժշկական օգնութիւն գաւառի մէջ երևացող ծաղկախտի, կարմրախտի և առհասարակ պատահող հիւանդութիւնների համար: Այլէքսանդրապոլի ամբողջ գաւառամասում կայ միայն Արևմտեան Շիրակի Ղզլախչախ գիւղում և 2-րդ գաւառամասի Քեաֆթառլի գիւղում մէկական բժիշկ, որոնք չեն կարող բաւարարել:

5. Որովհետև ամբողջ գաղթականութիւնը և տեղացի չքաւորները գիւղացիներ են, անհրաժեշտ է տալ նրանց միջոցներ այս զարնանից հողագործութեամբ պարապելու: Մէծ կարիք է զգացւում գիւղատնտեսական գործիքների, լծկան անասունների և մանաւանդ սերմացուի, իսկ կանանց համար կարելի է կազմակերպել արհեստանոց, որտեղ կանայք կարող են աշխատել:

6. Գիւղերից որբ երեխաները մեծ թուով տեղաւորուած են

որբանոցներում, բաց մնացածներ կան, բայց ճիշտ թիւը տրտած չէ մեզ:

7. Օրական չքաւորներին բաժանում է շնչին կէս ֆունտ ալիւր, շատ դէպքերում պակաս, մօտաւորապէս բոլոր չքաւորներին բաշխում է օրական 1575 փութ, ամսական 47300 փութ ալիւր:

8. Բացի ալիւրից ուրիշ մթերք չի բաշխում. երբեմն պակաս տրտած ալիւրի փոխարէն տրտում է բրինձ կամ լոբի:

9. Յուցակները կազմում են գիւղերում ընտրուած կոմիտէները, իսկ մեր հսկիչները ցուցակները ստուգում են տները ման գալով իւրաքանչիւր ընտանիքին առանձին ստուգման ենթարկելով:

10. Ալիւրը բաժանում է չքաւոր դասին գիւղի կոմիտարի և ընտրուած կոմիտէների ներկայութեամբ, կազմում է արձանագրութիւն և ներկայացում է հսկիչին: Ծիշտ բաշխում կատարելու համար ըստ հնարաւորութեան հսկիչը երբեմն ներկայ է լինում բաշխման ժամանակ:

11. Առաջին գաւառամասն ունի 27 գիւղ, որոնցից 25-ը՝ հայկական, 1-ը հայ և յոյնական և 1-ը եզիդի:

Հայ գիւղերն են 1. Փոքր Ղարաքիլիսա 2. Դահառլի, 3. Ծլովխան, 4. Թափադօլակ, 5. Ալէքսանդրովկա, 6. Ղարաքիլիսա, 7. Ներքին Ղանլիճա, 8. Վերին Ղանլիճա, 9. Կապս, 10. Սեն Քէյթի, 11. Փոքր Քէյթի, 12. Դարբանդ, 13. Թոփառլի, 14. Ջաջուռ, 15. Աղքիլիսա, 16. Սեն Սարիար, 17. 3-րդ Արխավալի, 18. Հաջինագար, 19. Դուսթեանդ, 20. Սեն Քեափանակ, 21. Փոքր Քեափանակ, 22. Դիրաքլար, 23. Չրախլի, 24. Խանվալի և 25. Ղոնախտան:

Հայ և յոյնական գիւղն է Բայանդուր:

Եզիդի գիւղն է Բադրատ-Տոլէ:

Այս գաւառամասում աւերակ գիւղեր չկան:

2-րդ գաւառամասն ունի 39 գիւղ, որոնցից 25-ը հայկական, 12-ը եզիդական և 2-ը թուրքական:

Հայկական գիւղերն են՝

1. Իլխիաբի, 2. Ղազանչի, 3. Քեաֆթառլի, 4. Փոքր Պար-

նի, 4. Ղաամայի, 6. Ղոլղաթ, 7. Ղուլիջան, 8. Մեծ Արթիկ, 9. Ղփչաղ, 10. Խաչաքիլիսա, 11. Բաշգիղ, 12. Եզանլար, 13. Մեծ Արխավալի, 14. Փոքր Արխավալի, 15. Նորաշեն, 16. Հայի Գեոզալդարա, 17. Աղուլա, 18. Ղոխտագիրման, 19. Հաջի խալիլ, 20. Ջանգի թափա, 21. Տանագիրմազ, 22. Մելիքբեանդ, 23. Քեշիշքեանդ, 24. Մունջուխի և 25. Հայի Փամբ:

Եզիդի գիւղերն են՝

1. Բարվանասարայ, 2. Փոքր Ջանգի, 3. Բօքբուլաղ, 4. Ղոնդաղասազ, 5. Մեծ Միրաք, 6. Փոքր Միրաք, 7. Ջանջառնիս, 8. Մեծ Ջամուշի, 9. Քրդի Փամբ, 10. Գիրքի բողազ, 11. Չորանբեարաքմազ և 12. Փոքր Ջամուշի:

Թուրքի գիւղերն են՝

1. Թուրքի Գեօզալդարա և 2. Թուրքի Դուսքեանդ: Առաջինը աւերակ, երկրորդը՝ կիսաւեր, ուր կապրեն մասնաւոր գաղթականութիւն:

3-րդ գաւառամասն ունի 29 հայկական գիւղեր՝

1. Ղզլղոչ, 2. Ղալոուլի-Դուսքեանդ, 3. Ղալոուլի-Ղազանջի, 4. Բոռ աղբիւր, 5. Շիշթափա, 6. Չիֆթալի, 7. Ղզլքիլիսա, 8. Ղուռթ-բուլաղ, 9. Թիթոյի Խարարա, 10. Բոզեղուշ, 11. Սալուտ, 12. Դարաքոյ, 13. Գիւլի-Բուլաղ, 14. Ալիխան, 15. 3-րդ Ղարաքիլիսա, 16. Սամուշի, 17. Քէֆի, 18. Փոքր Սարիար, 19. Բաշ գիւղ, 20. Իլի Ղարաքիլիսա, 21. Թափանլի, 22. Փալուքի, 23. Չոռլի, 24. Ճգիսլար, 25. Գիրքի եօլ, 26. Ալաքիլիսայ, 27. Բանդիվան, 28. Փոքր Բանդիվան, 29. Ջալաք գետջուր: Բոլորն էլ շեն:

4-րդ գաւառամասն ունի 35 հայկական գիւղ՝

1. Հոռոն, 2. Իմրիսան, 3. Ղութնիդշլաղ, 4. Թոմարդաշ, 5. Մէջթի, 6. Արմուտլի, 7. Մեօգիստլի, 8. Սարիքաշ, 9. Թալիբօղլի, 10. Տաշլանդշլաղ, 11. Սանվերդի, 12. Ղափլի, 13. Աղին, 14. Ղազարասպատ, 15. Բաքոյի, 16. Քեալալի, 17. Բուղդաշեն, 18. Բոզդոդան, 19. Չափի, 20. 1-ին Ղարաքիլիսա, 21. Ղեղաշ, 22. Ենգիքոյ, 23. Ջարնջի, 24. Ղիջեաթաղ, 25. Մօլագէօկչա, 26. Մահմուդջուղ, 27. Մուսլուխի, 29. Չիթիանքով, 29. Փոքր Ղախ, 30. Մոնգիւշլի, 31. Բողազբեասան, 32. Աղիաման, 33.

Փիրթիքեար, 34. Սիրվանջուղ, 35. Տաշդալա: Բոլոր գիւղերն էլ շէն են:

Արևմտեան Շիրակն ունի 56 գիւղ, որոնցիցի 29-ը հայկական և 27-ը թուրքական:

Հայկական գիւղերն են

1. Բաշ Շիրակ, 2. Հին Թիքնիզ, 3. Նոր Թիքնիզ, 4. Ուզուն-քիլիսա, 5. Ղզլախչախ, 6. Արգինա, 7. Փիրալի, Աղքիլիսա, 8. Աղուզում, 9. Համզաքեարակ, 10. Ուղուզլի, 11. Բաշքադէկ-լար, 12. Օրթաքեադիքլար, 13. Ներքին Քեադիկլար, 14. Բայ-րախտար, 15. Կարսիւր վանք, 16. Մաւրակ, 17. Ղոյուջուխ, 18. Թազաքեանդ, 19. Տայլար, 20. Ղոշավանք, 21. Արագի գիւղ, 22. Ճալա, 23. Գօռխանա, 24. Ուփարկիթ, 25. Քիւրուկդարա, 26. Փալտրուան, 27. Օջախուլի, 28. Շահնագար և 29 Ղարա-խաչ: Այս երկու գիւղերը ռուսական գիւղեր էին, այժմ թուր-քերով բռնուած են, որոնց մէջ կան 160 անձ ռուսներ:

Թուրքական գիւղերն են՝

1. Արալխ, 2. Սատախանա, 3. Իլանլու, 4. Աղուզում, 5. Փի-նակ, 6. Անի, 7. Տայնաղ, 8. Արգինա, 9. Թիքնիզ, 10. Ղարա-քիլիսայ, 11. Մօլամուսայ, 12. Վարինլու, 13. Օղջօղլի, 14. Պա-ջամիլի, 15. Մեծ Ղմլու, 16. Մահմուդօղլու, 17. Փոքր Ղմլու, 18. Մեօքիզ, 22. Գեօջուք, 23. Ջարջի, 24. Ինջադարա, 25. Աղ-բուլաղ, 26. Ղարախաչ, 27. Քիւլերան: Վերջին երկու գիւղերը աւերակ են և դատարկ բնակչութիւնով:

Թալինի շրջանն ունի 8 հայկական գիւղեր՝

1. Թալին, 2. Մաստարա, 3. Ղրմզլու, 4. Դատալու, 5. Գեօզլու, 6. Մագարաջուղ, 7. Բայսըզ և 8. Աղանլու: Բոլոր գիւղերն էլ շէն են:

12. Ամբողջ գաւառամասերում թէև ազատ տեղեր չկան, բայց շնորհիւ մեր գիւղացիութեան հիւրասիրութեան, ինչպէս ներկայումս հիւրընկալուած են մեր գաղթականները, նորից կարելի է տեղաւորել 15000 անձ զանազան գաւառամասե-րում:

13. Ամերիկեան ներկայացուցիչների գործունէութիւնը հա-մապատասխան չէ մեր արդի իրականութեան և ոչ մեր

ժողովրդի կարիքներին: Նման գործունեության արդյունքն է Պօլիգոնի գոյությունը, որը դարձավ իսկական սպանդանոց մի ժողովրդի, քաղաքի մեջ եղող բազմաթիւ գաղթականությունը զրկուած մնաց պարէնից և ներկայումս էլ շատերն մահացել են: Գիւղերում բաց է թողնուում պարէն առանց նկատի առնելու մեր առաջարկած պահանջները, մեր ներկայացրած թուերը: Եղել են դէպքեր, որ բաւարարում են այնպիսիք, որոնք մեր կողմից քննուած, ստուգուած չեն, ընդհակառակը մեր կողմից ստուգուած առաջարկած թուերը մերժում են: Ամառուայ մի քանի ամիսների ապրուստ ունեցողները արդէն սպառել են եղած պաշարը: Ամառուանից յետոյ արտասահմանից, Հայաստանի զանազան կողմերից եկած և գիւղերում տեղաւորուած բազմաթիւ գաղթականներ և չքաւորներ, որ նոյաէս մեր հսկիչների կողմից քննուել և ստուգուել են, յաճախ զրկուում են պարէնից, որի պատճառով մեր աշխատանքերը կանցնեն ապարդիւն: Սովը մեզնից խլած է բաւական թուով անմեղ զոհեր: Այս դրութեան ստեղծումը արդիւնք է այն բանի, որ այստեղ միևնոյն պարտականությունները տրուած են երկու հաստատություններին, պարենաւորման և խնամատարութեան: Անհրաժեշտ է կտրուկ միջոցներ ձեռք առնել վերջնական համաձայնութեան գալու Ամերիկեան ներկայացուցիչների հետ, որոշել մեր և նրանց դերն ու դիրքը ու ապայիսով մեր ժողովրդին ազատել սովի ճանկերից:

14. Հսկիչները առաջնորդում են մեր տուած հրահանգներով. շրջում են իրենց յանձնուած շրջանների գիւղերը, կազմակերպում են կոմիտէներ, ցուցակագրում են չքաւորներին, որոնց և տրուում է պարէն. ամեն անգամ իրանց գործունեութեան մասին զեկուցում են տալիս ինձ:

Ներկայացուցիչ՝ Սիիրան Գրիգորեան
Գործավար՝

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 689, ք. 45-49: Բնագիր: Չեռագիր:

N 100

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ Հ. ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՒՅՑ ԿՈՍԻՏԵՒ ԳՆԴԱՊԵՏ Դ. ՌՈԲԻՆՍՈՆԻՆ

25 հունվարի 1920 թ.
Ալեքսանդրապոլ

ГОСПОДИНУ ПОЛКОВНИКУ РОБИНСОНУ

В дополнение к моим неоднократным словесным обращениям к Вам, представляя при сем доклад о положение беженцев на Полигоне и проект организации помощи им, прошу Вас не отказать принять экстренные меры к устранению неминуемой катастрофы на Полигоне. Прошу иметь ввиду, что Александропольское городское самоуправление всеми силами средствами поможет Вам в этом деле, если Вы признаете эту помощь необходимой.

Городской голова Мелконян

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, մաս 1, թ. 47: Թղթն: Մեքեանգիր:

N 101

ԱՄԵՐԿՈՍԻ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՇՐՋԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՉԻՆ ԵՎ ՀՀ ԽՆԱՍՏԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ԿԱՐՍ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

26 հունվարի 1920 թ.
Ալեքսանդրապոլ

1. Ձեր յունուար 22-ի գրութեան վերաբերմամբ Պոլիգոնի գաղթականներին Ղարս փոխադրելու մասին կազմուած է հետևեալ տեղակագիրը.

2. Դեկտեմբերին ես իրաւունք (իշխանութիւն) ստացայ Ղարս տեղափոխելու Պօլիգոնից դեկտեմբերի 25-ից յետոյ (որ 4 ժամանակ):

Այստեղից մեկնելու և այնտեղ ընդունելու մեր բոլոր կարգադրութիւններն արուած էին, բայց տեղափոխութիւնը ուշացաւ մինչև յունւարի 8-ը, փոխադրութեան միջոցների պակասութեան պատճառով:

3. Այդ օրը վագօնները հայթայթուեցին և ձեռնարկուեց առաջի 500-ի փոխադրութիւնը: Բոլորին (ղրանց) յայտնուած էր ժամանակին որոշուած տեղափոխման (շարժման) մասին և չէր նախատեսնում ոչ մի ընդդիմանութիւն: Բայց գաղթականներն համառելով՝ ձիւների մէջ էին պառկում և հրաժարում կայարան գնալուց: Որովհետև ես չունեի բաւական թուով ամերիկացի (ամերիկեան) ծառայողներ նրանց տանելու (քաշելով) համար, գաղթականները պահում էին (ուշացնում) տեղափոխութիւնը: Մինչև որ այդ օրը արդէն որոշ էր նրանց ուղարկելը և պատրաստ վագօնները գործադրուեցին Թիֆլիսից նոր եկած (հասած) 500 գաղթականների փոխադրելու համար:

4. 500 յամառող (գործադուլ անողներից) հացաբաժինը կտրուեց (դադարեց) 24 ժամուայ համար և ես կարգադրութիւն արի, որ նրանք հաց էլ չեն ստանայ, մինչև որ չեն գայ ժամանակին (մեկնելու համար):

Անմիջապէս միջոցներ ձեռք առնուեցին էլի վագօններ հայթայթելու համար, բայց երբ այդ արուեց, Երկաթուղային Վարչութիւնը մերժեց ուղարկել գնացքը մագութի պակասութեան պատճառով: Մագութի այդ հաստատուն պակասութիւնը ուշացրեց տեղափոխութիւնը մինչև օրս, երբ վագօնները կրկին պատրաստ էին և գաղթականները շարժուեցին դէպի գնացքը: Երբ այս առաւօտ նրանք հասան (եկան) այդտեղ պարգուեց, որ Զինուորական Նախարարը այստեղ է [և] նոր հրաման էր արձակել, որ դէպօյի բոլոր վագոնները պահուելու էին գօրքի գորամասերի ինչ որ տեղափոխութեան համար: Այս գրութեանս հետ, ես փորձում եմ ձեռք բերել

Մինիստրին պետք եկածից 24 հատ, իմ կարծիքով, աւելները և հէնց որ նրանք ստացունեն, տեղափոխութիւնը կը կատարուի, յուսով եմ, ամենաուշը վաղը: Կտեղեկացնեմ Ձեզ հեռագրով:

5. Յունուարի 8-ին ես ստացայ Խնամատարութեան Մինիստրից մի հեռագիր, որով խնդրում էր ինձ տեղափոխել Պօլիգոնի գաղթականութեան կէտը, կլոր 10 000-ի մօտ: Այդ հեռագրի և հաջորդ օրերի գրութիւնների մէջ ասուածից ես հետևեցի, որ որոշ կողմից տեղափոխութիւնը իրականացնելու համար նրա վրա ճնշում էր գործադրուած: Բայց ըստ երևոյթին, այդ ճնշումը չէր գալիս իրենց գաղթականների կողմից, որովհետև ծրագրուած տեղափոխութիւնները, ինչպէս երևում էր, նրանց մօտ համակրութիւն չէր վայելում: Այդ պատճառով ես խնդրեցի հրամանատար Սեպուհին գնալ նրանց մօտ և բացատրել գաղթականներին, որ նրանց փիճակը կը բարոքի Ղարսի գիւղերը գնալով, որ նրանք ստանալու են սնունդ և հին հագուստներ առաջուայ նման, դրանով կը խուսափեն կուտակուելուց Պօլիգոնում և իբրև դրա հետևանք առողջութիւնը վտանգելուց, ես արի այդ այն պատճառով, որ մինչև նրանց ստիպելը Պօլիգոնից դուրս գալու և Ղարսում հացի բաժանումը դադարեցնելով, ես գերադասեցի, որ նրանք գնան կամովին և ըստ հնարատրինս տրամադրուած:

6. Ես այժմ տեղեկութիւն ստացայ, որ այլևս կարիք չկայ դիմելու հացի բաշխման դադարեցմանը այդ տեղափոխութիւնը կատարելու համար:

7. Ես բանակցեցի Ղարսի շրջանի կառավարչի հետ դրա մասին և նա յայտնեց ինձ, որ կարող է 10000-ի խնամքը տանել, հաշուելով վերոյիշեալ 2225-ը:

Ես իսկոյն գրեցի Ամերիկեան Կովկասի շտաբին իրաւունք խնդրելով 8000 գաղթական Ղարս տեղափոխելու համար, աւելացնելով 2265-ին, որոնց համար իրաւունք արդէն տրուած էր: Դեռևս այդ թոյլտուութիւնը չի ստացուել: Բայց չեմ կասկածում, որ այդ չտրուի:

8. Հէնց որ թոյլտուութիւն ստացուի, տեղափոխութիւնը [կի-

րականացուի] փոխադրութեան միջոցները հայթայթելու պէս:

9. Խնդրեմ, յայտնեցէք Խնամատարութեան Մինիստրին, [որ] ես նոյնպէս մտահոգուած եմ Պօլիգոնի գաղթականութեան թուի կրճատումով, թէ ինչ որ հնարատր է այդ իրականացնելու համար, արոււմ է և թէ տրանսպորտի վառելիքի և վազօնների պակասութիւնը միակ պատճառն է տեղափոխութեան ուշանալու:

10. Անում եմ այս անախտրժ զեկուցումը, որպէսզի Դուք և Խնամատարութեան Մինիստրը կարողանաք ծանօթանալ բոլոր փաստերի հետ:

Դ. Ռոքինսոն¹⁰¹

փոխ-գնդապետ գլխաւոր շտաբի

ՀԱԱ. ֆ. 205, ց. 1, գ 634, 1 մաս, թ. 11-12: Անգլերենից թարգմանության վավերացված պատճեն: Չեռագիր:

N 102

ԱՍԵՐԿՈՍԻ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՇՐՋԱՆԻ ԿԱՌԱՎԱՐԶԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԿԱՌԱՎԱՐԶԻՆ ԵՎ ՀՀ ԽՆԱՍՏԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԳՅՈՒՂԱՊԵՏՆԵՐԻ ԳԱՆԳԱՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

26 հունվարի 1920 թ.

Ալեքսանդրապոլ

1. Սրան կցած հեռագրի վերաբերմամբ հետևեալ բացատրութիւնն է տրուում ի գիտութիւն կառավարութեան, եթէ պէտք է:

2. Այդ հեռագիրը ստորագրողները Ալեքսանդրապոլի շրջանի մի խումբ գիւղերի աւագներ (գիւղապետներ) են. Այդ գիւղերը ստացել են ամբողջ այդ ալիւրը, որն իրատւոյնք ունէն ստանալու: Բնակիչները բաւական լաւ սնուածների տեսք ունեն և սովամահութիւնից մեռնելու անմիջական վտանգի մէջ չեն գտնուում:

3. Ես հետաքրքրուեցի իմանալ, թե ինչումն է կայանում Ամերիկեան ներկայացուցիչների «կամայական» գործերը, հեռագրում այդ բանը պարզած չլինելով: Առաջին «կամայական» արարքը , որի մասին զանգատում են այն է , որ երբ այդ գիտերը խնդրում էին (պահանջում) որոշուած չափից, այն է 50 ֆունտից աւելի ալիւր, այդ պահանջը հաւանութիւն չգտաւ: Երկրորդ բողոքած կամայական գործը այն է, որ երբ նրանք փորձում էին լցնել իրենց ցուցակները աւելացնելով երկու հազար երևակայած բնակչութիւն, Ամերիկեան ներկայացուցիչները պնդում էին, որ պիտի հաշւի առնել միայն իրական և կենդանի ժողովրդին:

4. Այդ գիտերը ժամանակ առ ժամանակ ընդունում էին նորեկներ և ամէն մի դէպքում ալիւրի մատակարարութիւնն այդ գիտերում աւելացնում է համապատասխան կերպով:

Դ. Ա. Ռոբինսոն

փոխ-գնդապետ գլխաւոր շտաբի

ՀԱԱ. ֆ. 205, ց. 1, գ. 634, 1 մաս, ք. 8: Անգլերենից թարգմանության վավերացված պատճեն: Ձեռագիր:

N 103

**ԱՆԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԲԱՇԽՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՄԻՀՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ
ԽՆԱՍԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ**

27 հունվարի
Ալեքսանդրապոլ

Այսօր առաջին գնացքով Ղարս տեղափոխուեցին Պօլի-գոնի գաղթականներից 500 անձ:

Միհրան Գրիգորեան

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, ք. 41: Հեռագրական բլանկ: Ձեռագիր:

N 104

**ԱՍԵՐԿՈՍԻ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՇՐՋԱՆԻ ԿԱՌԱ-
ՎԱՐՉԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԿԱՌԱ-
ՎԱՐՉԻՆ ԵՎ ՀՀ ԽՆԱՍՍԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ
ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ԿԱՐՄ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

28 հունվարի 1920 թ.

Ալեքսանդրապոլ

1. Իմ այսօրուայ հեռագրի վերաբերմամբ, որով յայտնում է, որ ես իրաւունք ստացայ էլի 8000 գաղթական Ղարս տեղափոխելու և որ առաջին խումբը 500 հոգուց բաղկացած կը հեռանայ. Յունուարի 31-ից խնդրեմ, յայտնեցէք Խնա-Մատարութեան Ս[իմիստրին], որ տեղափոխութիւնը կարուի հնարատրինս չափ շուտ, բայց որ չպիտի յուսալ շատ արագ փոխադրութիւն երկաթուղային ներկայ պայմաններում.

2. Մեծ դժուարութիւններ ենք քաշում սնունդի փոխադրու-թեան հետ, բաւական չափով վազոններ գտնելու համար. դա անտարակոյս առաջնութիւն պիտի ունենայ:

Դ. Ռոքինսոն

փոխ-գնդապետ գլխաւոր շտաբի

ՀԱԱ. ֆ. 205, ց. 1, գ. 634, 1 մաս, թ. 6: Անգլերենից թարգմանության վավերացված պատճեն: Ձեռագիր:

N 105

**ՍԵՊՈՒՀԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԽՆԱՍՍԱՏԱՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻՆ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ԿԱՐՄ
ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

28 հունվարի 1920 թ.

Ալեքսանդրապոլ

Ամսոյս 26-ին ուղարկեցի առաջին էշելոնը Ղարսի գիւղացիներից. Նրանց տրուած էր երկու օրուայ հաց կէս ֆունտից. Սելիմում պատրաստ տեղ չլինելու պատճառով մնում են դուրսը. Երկրորդ Պօլիզոն չստեղծելու համար առաքումը կանգնեցրի. Հեռագրէք տեղ պատրաստեն և առնուազն 7 օրուայ պաշար տրուի. Կէս միլիօնը դեռ չի ստացուել. Գաղթականները պատրաստ են գնալու, թէ գաղթը դրուած լինի լաւ հիմքերի վրայ.

Սեպուի

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ.801, մաս 1, ք.42: Հեռագրական բլանկ: Ձեռագիր:

N 106

**ՍԵՊՈՒՀԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԽՆԱՍՏԱՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻՆ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ԿԱՐՄ
ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

29 հունվարի 1920 թ.

Ալեքսանդրապոլ

Առաջում գրուեց, որ մեկնող գաղթականներին տրուում է 10 օրուայ հաց, իսկ ճանապարհներին կան սննդատու կայաններ. 26-ին մեկնեց 500 հոգի, ստացել են երկու օրուայ հաց կէսգրամից, իսկ ճանապարհին օգնութիւն չկայ. Գնացողները Նախիջևանից են. Ամերիկացիք թոյլ չեն տալիս Ղարսում իջնել. Այժմ անպաշտպան Սելիմում են. Միջնորդէք տասն օրուայ պարեն տան և Սելիմում տեղ պատրաստեն. Այլ կերպ 20 օրից Պօլիզոնում գաղթական չի մնայ.

Սեպուի

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ.801, մաս 1, ք.43: Հեռագրական բլանկ: Ձեռագիր:

N 107

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ Հ. ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

2 փետրվարի 1920 թ.

Ալեքսանդրապոլ

Պօլիգոնի գաղթականների վիճակը քեթևացնելու համար քանի անգամ դիմել եմ ամերիկացիներին: Այսօր էլ ուղղեցի դրանց գրատոր կերպով մի զեկուցում, որի պատճենը դրկում եմ Ձեզ.

Հետևանքների մասին կյայտնեմ.

Քաղաքագլուխ՝ Մելքոնեան

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, մաս 1, թ. 46: Բնագիր: Ձեռագիր:

N 108

ՄԵՊՈՒՀԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

2 փետրվարի 1920 թ.

Ալեքսանդրապոլ

Մի քանի անգամ Ձեզ հեռագրել էի, որ չարաքաստիկ Պօլիգոնի թշուառ գաղթականների համար Ձեր արած կարգադրությունները չեն յարգում և կիրառում: Ամերիկացիք շարունակում են անել այն, ինչ որ իրենց է ցանկալի: Ընդհանուր կացութիւնն այնքան է անտանելի և դժոխային, որ գաղթականութիւնը պատրաստ է թողնել ամեն ինչ և հեռանալ այդ մահաստարտուռ զերեզմանոցից, ուր հազարատոմբերը չարչարում են և կենդանի մահատակում:

Ամերիկացիները չափազանց դանդաղ են շարժում, իսկ այստեղից տեղափոխողներին միայն երկու օրուայ պարէն են տալիս, որը կէս ճանապարհին վերջանում է: Բացի այդ

նրանց կողմից պարեն չի տրուում մինչև ցուցակագրութիւնը չի վերջանում, իսկ այն տևում է 5-6 օր, որի ընթացքում գաղթականները գուրկ են մնում ապրուստի միջոցից: Հրամայական պահանջ է, որ շուտափոյթ և կտրուկ կարգադրութիւն անէք, որպէսզի պարենը տրուի տասն օրուայ համար:

Ամսոյս 26-ին մեկնած գաղթականները բացառապէս Կաղզւանի շրջանի Նախիջևան գիւղից էին: Ես նրանց ասել ու համոզել էի, որ Կարսում կիջնեն և իմ պատուերով վարձուած սայլերով կըշարունակեն իրենց ճանապարհը: Սակայն ամերիկացիք, չգիտեմ ինչից դողուած թոյլ չեն տալիս իջնելու և բոլորին ուղարկում են Սելիմ, որտեղից մինչև Նախիջևանի շրջանը ճանապարհը չափազանց երկար և դժուարին է: Այդպիսի անտեղի կարգադրութեան հետևանքով խեղճ ժողովուրդը գրկւում է իր հայրենի օջախը գնալու հնարաւորութիւնից:

Այդ նոյն գնացողներին այստեղ ասել էին, որ ճանապարհին սննդատու կայաններ կան, իսկ Սելիմի շրջանում պատրաստի գիւղեր, բայց նման բան չի եղել, որից և գաղթականութիւնը տուժել է: Եւ այժմ կարծէս թէ ես էլ դժուարանում եմ նրանց ուղարկել, մանաւանդ որ այդ բոլորի հետ միասին և ցուրտ ձմեռն է լրացնում ամբողջ թշուառութիւնը: Ուստի անհրաժեշտ է այս բոլորի մասին կարգադրութիւն անել:

Ընդհանուր պատկերը լրիւ ներկայացնելու համար սրան կցում եմ գաղթականների հետ գնացած իմ մարդու տեղեկագիրը:

Ամսոյս 31-ին կուղարկեմ 500 դարսեցիներ, իսկ փետրուարի 3-ին՝ 300 խնուցիներ դէպ Բաշ-Շորագեալ: Արդէն 347 սասունցիներ գնացել են Ամիրեան¹⁰²:

Այս բոլորից յետոյ խնդրում եմ ամէն տեղ շտապ կարգադրութիւն անէք, որ տեղիցս մեկնող գաղթականները չըմնան առանց պարենի և ընդհանրապէս տրուեն տարրական դիւրութիւններ ու յարմարութիւններ: Յոյս ունեմ, որ այդ բոլորը կըկարգադրէք և ես վաղը չէ միւս օրը ժողովրդի առաջ պատասխանատու չեն մնայ:

Մեայրուհ

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, մաս 1, ք. 54: Բնագիր: Ձեռագիր:

N 109

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԲԱՂԱՔԱԳԼՈՒԽ Հ.
ՄԵԼԵՈՆՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՆԱՄՍԱՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻՆ**

2 փետրվարի 1920 թ.

Ալեքսանդրապոլ

Ваш представитель Мигран Григорян очень толковый, скромный, нужный для района работник. Прошу службой никуда не переводит оставить Александропольский район.

Мелконян

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, մաս 1, ք. 52: Բնագիր: Ձեռագիր:

N 110

**ԲԺԻՇԿ ՍԵՐԳԵՅ ՓԻՐՈՒՄՈՎԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՊՈԼԻԳՈՆԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ
ԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

5 փետրվարի 1920 թ.

Ալեքսանդրապոլ

От Американского Комитета на Полигоне назначен главным заведывающим над беженцами господин Ляфь. Кроме того от беженцев организован Комитет, состоящий из 11 лиц по одному представителю от каждого района (басенцы, мушцы, хнусцы и т. д.). Во всех ведений имеется 116 человек милиционеров несущих охранную службу и соблюдающих порядок: около 500 человек рабочих затем заведывающие складами и т.д. Никому из служащих жалования не надеется, труд их

оплачивается 1 фунтом хлеба, сверх получаемой всеми беженцами нормы.

Вся помощь беженцам ведется бессистемно, безотчетно и бесконтрольно. Стараясь пользоваться в большинстве случаев бесплатным трудом беженцем. Американский комитет собрал штат служащих из лиц, которые не получают жалованья, но облечен достаточной властью для того, чтобы получить компенсацию за этот труд иными путями. Таким образом, кажущаяся экономия на жалованье превращается со стороны будто бы бесплатно служащих в бессовестное хищение американского и армянского народного достояния. Не раз в ночь открывались склады продуктов и одежды. При доставке продукты назначенного поста на Полигон пропадали иногда целые арбы. Иные получали одежду несколько раз, а другие за отсутствием одежды не имели возможности для получения хлеба стать на очередь. Вдобавок на все отпускаемое для беженцев шло на кухню, часть куда-то исчезала.

Все беженцы в числе от 15 до 20 тысяч, точной цифры не удалось выяснить (официально 24 тысячи) размещаются на Полигоне в 59 зданиях. Здания эти потеряли тот вид, какой они имели в былое время. Дверей и оконных рам нет, стекла разбита. Окна забиты досками и жостью, снятом с крыши. Печи не в порядке и не топятся, вместе них имеются в иных местах старые жестянные печи или разводятся костры, от дыма которых ничего не видать и развиваются глазные болезни.

Не получив по тем или иным причинам дров, многие остаются ночь на холоду в казарме. Освещения – никакого. Вставая ночью и незамечая спящего, вставший мочится и испражняется на своего соседа, казарменная жизнь мужчин и женщин и многих семейств вместе развили в беженцах неописуемый разврат, развивший сильно венерические заболевания. Беженцы, в особенности Басенского и Александропольского районов, валяются на голом полу, грязные, больные и в большинстве голые. Нар или даже подстилок

(окна) не имеется. Трупы умерших в зданиях валяются в корридорах, а иногда даже рядом с беженцами по два дня.

Продовольственная помощь.

Раздача хлеба. Раздача хлеба производится на 3-х пунктах по заранее выданным чекам. В первый день установления чековой выдачи, 13 января, выдача производилась в одном месте. Две-третьи беженцев остались без хлеба, она разгромила склад с хлебом. Выстрелами полигонных милиционеров толпа была разогнана, результатом этого – один мальчик был задавлен в смерть, один беженец легко ранен. В последующие дни выдача хлеба стала производится из трех пунктов. Беженцы полуголые стоят на морозе и ждут хлеба. Больные, сильные и с протекцией получают вне очереди. Часто происходит драка. Стоящие тут-же милиционеры суют плетью нежелающих стать в очередь полуголых беженцев. Иногда же американец сам по своему – боксом, справляется с непокорными. С 13 по 17 января включительно хлеба выдавалось по 1/2 фунта.

Горячая пища.

Горячая пища, состоящая из рисовой каши и фасоли готовится на 4-х кухнях не каждый день. Так 11,12 и 13 января пищи вовсе не было. Часто пища готовится без соли за неимением ее в Американском складе. 18 января на одной кухне состоящей из 18 котлов на 11872 человека, вместо положенного 73 пуда 35 фунта было выдано 11 пуд 10 фунт рису, 1 пуд 28 фунт соли и 1 пуд 20 фунт мяса. Мяса на человека обыкновенно выдается 1/2 золотника, на всех беженцев 3 пуда 30 фунтов, 19 января к празднику горячей пищи вовсе не было.

Дрова

Дрова доставляются с казачьего поста бревнами в довольно ограниченном количестве, во время дележа, в виду недостаточ-

ности также происходят ссора и драка, сопровождающиеся очень часто стрельбой. Доставка всех продуктов и дров с Казачьего поста на Полигон производится на 12 подводах, которые, конечно, не успевают доставлять все необходимое и таким образом происходит то, что в складах не бывает вовремя рису, фасоли, а также требуемого количества дров. Несмотря на неоднократные просьбы беженцев увеличить число подвод до 40, Американский комитет в этой просьбе каждый раз им отказывает.

Раздача одежды.

Заведывающая одеждой раздает одежду при представителе от беженцев, или не самолично. Очень часто получают одни и те же лица несколько раз или же даровые служащие. Случается иногда, что заведывающая выдает одежду за несколько фунтов рису, каковой должен был попасть в котел на кухню.

Медицинская помощь

Говорить о медицинской помощи в казармах при создавшихся там условиях не приходится. Вся помощь заключается в том, что больных из казарм направляют в больницу. По тем или иным причинам больница очень часто ограничивает прием больных и таким образом для больных в казармах создается ужасное положение ведущее неминуемо к смерти. Больше всего умирают от голода и холода. Инфекционных больных пока не очень много, по истощенных, слабых достаточно. Их нужно только правильно питать, лекарственная помощь имеет очень мало значения. Ежедневно умирает в среднем около 25 человек, причем не все умершие входят в официальные сведения, т.е. многие скрывают для получения пайка умершего. Бань не имеется, за все время пребывания беженцев на Полигоне на 5 душ было выдано по 1 кучке мыла менее 1 фунта.

Учреждение

Приют находится в верхнем этаже в последней казарме бывшем офицерском собрании. В 2-х комнатах находятся дети, отдельно мальчики 7 девочки, средняя большая зала служит спальней для детей: четвертая комната-склад, пятая комната заведывающей, шестая и седьмая комнаты пусты, восьмая-кухня. Дети спят на сенниках из мешков. При поступлении не купают, одеты в свои старые изодранные лахмоты, некоторые совершенно голые укрываются одеялами, грязные и в паразитах. В помещении имеются прекрасные стенные печи, числом 10, но они не отапливаются ввиду их неисправности. Заведывающая указывает, что неоднократно обращалась к кому следует прислать печника, но до сего времени не прислали. В громадной зале находится одна старая жестянная печь, которая, по словам заведывающей, топится ночью. В тех 2-х комнатах где днем проводят дети, ночью растилаются сенники и некоторая часть детей ложится спать тут. Дети не имеют совершенно белья и отдельного одеяла. В одеялах также большое количества паразитов. Комнаты ночью не освещаются. Уборные находятся в страшно антисанитарном состоянии. Дезинфицирующих средств не имеется, стоит невыразимый запах, который чувствуется на расстоянии. Воду в приют доставляют сами дети ведрами. Водовозные бочки не имеются. Водопровод находится от приюта на расстоянии около 300 саженей. Служебный персонал, состоящий из 16 лиц, работают в своих грязных одеждах без халатов, жалованья до сих пор не выдали. Весов в приют не имеется. Все получается и расходуется заведывающей в приют без взвешивания. Из книг ведется только одна - служащая для записи детей. Продуктовой, инвентарной книг не ведется. Приюту было выдано 1000 одеял, но до приюта дошло 995 штук. Ухода за детьми никакого, отношение к детям грубое. Утром и вечером детям дается чай или какао, в обед горячая пища из рисовой каши или фасоли и на день $\frac{1}{2}$ фунта хлеба, мяса совершенно не выдается. Дети едят из жестянных коробок из под сгущенного

молока. Если жидкое, то прямо из коробки, а если каша или фасоль, то грязными руками, ложек не имеется. Детей в приют 350 человек. В первый день моего посещения было обнаружено очень много больных, но за неимением свободных коек (по заявлению заведывающей больницей) больные были отправлены в больницу. С 1 до 18 января было отправлено 32 детей больных. 15 и 16 января четверо детей скончались в больнице.

Больница

Сравнительно лучше поставлена больница, открытая 22 ноября 1919 года и находящаяся под покровительством Американского врача Марвина. Больница занимает одну из казарм, которая отгорожена на расстоянии пяти шагов от наружных стен колючей проволокой выше человеческого роста. Она имеет два входа, один вход на замке и охраняется вооруженным милиционером, другой вход служит для черной службы и также охраняется вооруженным милиционером. При входе в казарму имеется наровая дезинфекционная камера. При входе в корридор налево лестница ведущая в верхний этаж, затем ванная с двумя ваннами, рядом бельевая, направо - вновь оборудованная детская палата 12 коек для 24 детей по 2-ое на каждую койку. Рядом с детской палатой канцелярия. Воду для ванной комнаты, как горячую, так и холодную, доставляют ведрами со двора. Из корридора дверь ведет в большое отделение, разделенное в свою очередь по 4 палаты по 16 коек каждая. Из последней палаты дверь открывается на кухню, из кухни дверь ведет в продуктовый склад и дверь в другой корридор нижнего этажа. В корридор направо дверь в столовую, налево в комнату под лестницей где пилят дрова. Из обоих корридоров нижнего этажа лестницы ведут в 2-ой этаж. В корридор верхнего этажа имеется 4 комнаты. В одном живет заведывающая больницей, в другой – фельдшера. Из этого корридора дверь открывается во 2-е отделение, разделенное на 16 палат по 16

коек в каждой. Две палаты простынями делятся на две полупалаты. Все палаты верхнего и нижнего этажей проходные. Из последней палаты верхнего отделения дверь входит во 2-ой корридор этажа. В этом корридоре влево дверь в комнату сестер милосердия. Напротив корридора парикмахерская, из парикмахерской вход в уборную и мертвенную, которые разделяются друг от друга стеной в 1 1/2 аршина высоты. Когда больной стоит в уборной, он видит трупы скончавшихся в больнице. Уборная имеется только в верхнем этаже, на каждом отделении находятся кубы с кипяченной водой. Больные лежат на железных койках в чистой постели. Всех коек: 160 для взрослых и 12 детских для 24 детей. Палаты очень холодны, хотя имеются печи, но дров не успевают поставлять. Пол везде цементный. По приеме больного одежда его, с его именем и фамилией хранятся на чердаке. Особой нумерации не ведется. Специальных мешков для одежды каждого больного не имеется. При выписке больного одежда его не дезинфицируется. Белья для больных недостаточно, очень часто отказывают в приеме больных за отсутствием белья. Приемная книга ведется в каждом отделении фельдперами отдельно. Врач приезжает из города, в день раз обходит больных и уезжает. Всем остальным персоналом, как ни странно, распоряжается заведывающая больницей сестра милосердия, знающая английский язык. Насколько назначения врачей исполняются нельзя проверить. Впечатление же мое, что состав сестер милосердия неопытный и им поручать судьбу без того несчастных больных не следовало бы. Сколько ежедневно можно принимать больных дает сведения заведывающая больницей. Инвентарная, материальная и продуктовая книга только составляются. Довольствие больных и персонала достаточно.

Число занятых коек:

13 января-----	130	17 января-----	160
14 января-----	150	18 января-----	154

15 января-----140 19 января-----170
 16 января----- 152

Перед больницей имеется маленькая крытая комната с землянным, служащая одновременно прачечной и конюшней.

*Штаты и оклады служащих больницы
 Закавказскими бонамы*

Врач -----1	3500 рублей
Заведующий больницы----- 1	2000 руб.
Заведующий хоз. ----- 1	2500 руб.
Заведующий складом----- 1	1300 руб.
Костлиша----- 1	900 руб.
Фельдшера----- 3 по	1200 руб.
Сестры милосердия----- 4 по	1100руб.
Практиканток ----- 2 по	500 и 400руб.
Повар ----- 1	800руб.
Помощник повара----- 1	700 руб.
Санитар	

Амбулатория

Амбулатория помещается в отдельной казарме где отведена одна койка ведет амбулаторией врач, при нем фельдшер и сестра милосердия, дируемые каждый день из больницы заведывающей больницей. Прием амбулаторных больных доходит ежедневно от 50 до 120. Специальной аптеки не имеется ни для больницы, ни для амбулатории. Прихода и расхода медикаментам не ведется. Рецепты больничные и амбулаторные готовятся в амбулатории фельдшерами. В медикаментах постоянная нужда.

Доктор Пирумов¹⁰³

ՀԱՄ, ֆ.205, ց.1, գ. 801, 2-րդ մաս, ք. 206: Բնագիր, մեքենագիր:

**ԲԺԺԸԿ ՄԵՐԳԵՅ ՓԻՐՈՒՄՈՎԻ ՆԱԽԱԳԻԾԸ
ՍԼԵԲՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՊՈԼԻԳՈՆԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

12 փետրվարի 1920 թ.

Ալեքսանդրապոլ

Первая помощь, какая может быть оказана беженцам – это правильно организованная эвакуация их в села. В первую очередь нужно эвакуировать всех желающих. Затем семьи, имеющие способные работающие руки и имеющих какой-либо скот. Всех остальных нужно эвакуировать последним, а если останется кто, то организовать для них какую-либо работу.

Эвакуируя беженцев в села, нужно непременно продолжать оказание им продовольственной помощи, если помощь будет прекращена, то беженцы, оставят села и опять соберутся в город и будут служить для городов и для правительства вечным тормозом устройства нашей государственной жизни: начнутся грабежи, убийства, голодная смерть и т.д. В случае если эвакуация не будет проведена полностью, то организацию помощи нужно провести в следующем порядке.

Милиция. *Американская милиция на Полигоне должна быть упразднена. Охрана и сохранение порядка должны быть переданы городской милиции.*

Большое число злоупотреблений и преступлений происходит с ведома и содействия полигонных милиционеров. Для полигона достаточно иметь вместо 116 милиционеров 30 человек, которые должны подчиняться начальнику городской милиции.

Во главе организации помощи беженцам должно стоять уполномоченное на то лицо, с правильной бухгалтерией и соответствующей канцелярией с контрольным отделом. При каждой казарме должны быть наемные ответственные смотрителя казармы. При каждой кухне наемные ответствующие заведы-

вающие кухни. Затем должны быть заведывающие складами продуктов через склада. При приеме продуктов и вообще всего составляется соответствующий акт заведывающим складом при контролере и двух представителей от беженцев. Из склада отпускается только по требованию уполномоченного на то лица. Все акты и требования ежедневно направляются в бухгалтерию, где заносятся незамедлительно в книгу. Все бумаги из склада направляются в бухгалтерию по специальной книге, куда заносятся бумаги и где в приом подписывается бухгалтерия.

Раздача хлеба. Раздача хлеба беженцем должна производиться в каждой казарме отдельно, а конюшням и других зданиям в 4-х местах. Раздачу производит смотритель здания при 2-й поверенных от беженцев данного здания. В каждом пункте должны быть весы.

Раздача горячей пищи.

Раздача горячей пищи также производится смотрителем здания при 2-х поверенных от получающих довольствие. У смотрителя здания должен быть список получающих довольствие, где делается пометка получившим: по окончании раздачи список подписывается смотрителем и удостоверяется поверенными.

Дрова распределяются смотрителями зданий по мере надобности. Раздача одежды производится по спискам заранее составленным смотрителем и поверенными беженцев. По этим спискам приглашаются главы беженской семьи, которые получают одежду. Списки эти удостоверяются поверенными. Выдачу нужно производить не по району, а по нужде. Все отмеченные недостатки относительно больницы, амбулаторий и приюта (в 1 докладе) должны быть немедленно устранены. Необходимо организовать правильную аптеку.

Настоящий проект считаю необходимым провести в

срочном порядке т. к. положение беженцев не терпит отлагательств. При создавшихся тяжелых условиях, беженцы Полигона в короткое время все поголовно погибли.

Доктор Пирумов.

ՀԱՍ, Ֆ. 205, ց.1, գ. 801, 2-րդ մաս, ք. 206-207: Բնագիր: Օրինակ :
N 112

**ՀՀ ԽՆԱՍԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ
ՆՊԱՏԱՍԱՏԱՏՈՒՅՑ ԿՈՍԻՏԵԻ ԵՐԵՎԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ
ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉ ԹԵԼՖՈՆՐԻՆ**

16 փետրվարի 1920 թ.
Ալեքսանդրապոլ

Այսու պատիւ ունեմ հաղորդելու Ձեզ, որ Ալեքսանդրապոլի Քաղաքային Ինքնաւարտութիւնը սոյն յունուարի 1-ին 1920 թ. բաց է թողել Ալեքսանդրապոլի Ամերիկեան կոմիտէին 1232 5641 թուրքի զանազան պէտքերի համար (Պօլիգոնի, Կազաչի պոստի, պահեստների և այլ ծախքերի համար): Բացի այդ բաց է թողնուած յունիսի 28-ին միստր Միտչլիին 200000 թուրքի: Յուլիսի 30-ին դարձեալ միստր Միտչլիին՝ 300000 թուրքի: Սեպտեմբերի 11-ին դոկտոր Սպորին Կազաչի Պօստի համար բաց է թողնուած 500000 թուրքի:

Նոյեմբերի 26-ին և դեկտեմբերի 17-ին նոյն Կազաչի Պօստի համար բաց է թողնուած Ձեզ Ալեքսանդրապոլ փոխադրելու համար 550000 թուրքի և 40000 թուրքի: Յունուարի 21-ին Շարուրի և Նախիջևանի ազգաբնակչութեանը բաժանելու համար գնդապետ Շելիի միջոցով բաց է թողնուած Ձեզ 36000 թուրքի: Յունուարի 27-ին Ալեքսանդրապոլի Պօլիգոնի համար բաց է թողնուած Ձեզ Ալեքսանդրապոլ փոխադրելու 100000 թուրքի:

Մինչև այժմ վերոյիշեալ գումարների դիմաց ոչ մի հաշիւ

չենք ստացած:

Խնդրում եմ Ձեզ պ. Գնդապետ, կարգադրեք ում որ հարկն է շտապ կերպով ներկայացնեն Մինիստրությունն վերոյիշեալ գումարների դիմաց դոկումենտներով հաշիւ, որպէսզի ես հնարաւորութիւն ունենամ այն պետական վերահսկողութեան ենթարկելու:

Խնամատարութեան և վերաշինութեան նախարար
Դիւանապետ

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 634, մաս, I, ք. 86: Թողոն: Մեքենագիր:

N 113

**ՍՄՔԱՏ ԲՈՐՈՅԱՆԻ ԵՎ ՕՆԻԿ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ
ՀԵՌԱԳԻՐԸ ԽՆԱՍՏԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ**

23 փետրվարի 1920 թ.

Ալեքսանդրապոլ

Պոլիգոնի գաղթականութիւնը համաձայն է տեղաւորուել Շախնազար,¹⁰⁴ Ղարախաչ, Ինջեղար, Մէկիւզ գիւղերում, որոնց կու տանք զինուած մասեր. Բայց Քաղաքագլուխը իր յատուկ մարդկանց արդէն կը փոխադրէ նոյն շրջանը. Տեղեկութիւններ կան, որ Քաղաքագլուխը քաղաքից¹⁰⁵ է այդ մարդկանց հետ, որոնք տեղացի ունեւորներ են և անհատական շահեր միայն կը հետապնդէն. Կը պահանջենք անմիջական և խիստ կարգադրութիւն լքուած գիւղերուն մէջ գաղթականութիւնը միմիայն տեղաւորել: Սմբատ: Մխիթարեան:

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, մաս 1, ք. 73: Հեռագրական բլանկ: Ձեռագիր:

N 114

ՍՄՔԱՏ ԲՈՐՈՅԱՆԻ ԵՎ ՕՆԻԿ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ

ՀԵՌԱԳԻՐԸ ԽՆԱՍՏԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

23 փետրվարի 1920 թ.

Ալեքսանդրապոլ

Քաղաքագլխի զեկուցման համաձայն Շախնազար գիւղում տեղաւորուած են երեսուն անձ վիրահայեր, որոնք սպասում են երեք հարիւր նորեկների. Կարախաչում պիտի տեղափոխուեն 80 տուն Ալեքսանդրապոլից քաղաքացիներ. Մնացեալ գիւղերի շուրջ կռիւներ կան և առայժմ անհնար է գաղթականներ տեղափոխել. Ղարսի շրջան դրկած ենք ներկայացուցիչներ ազատ գիւղերին մանրամասն ծանօթանալու համար. վաղը կմեկնենք Ղարս:

Սմբատ: Մխիթարեան:

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, մաս 1, ք.83: Հեռագրական բլանկ: Ձեռագիր:

N 115

**ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՆՊԱՍՏԱՍՏՈՒՅՑ ԿՈՄԻՏԵԻ
ԵՐԵՎԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԹԵԼՖՈՐԴԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԽՆԱՍՏԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՎԵՐԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ**

25 փետրվարի 1920 թ.

Ալեքսանդրապոլ

Յարգելի պ. Մինիստր,

Ի պատասխան Ձեր 1920 թ. փետրուարի 17-ի թուակիր գրութեան, Մ[երձատր] Արևելքի Նպաստամատոյցին բաց թողնուած գումարների գործադրութեան մասին, զգուշացնում ենք հետևեալը.

1. 12325641 թուրլին տուել է Ալեքսանդրապոլի Քաղաքային ինքնաւարտութիւնը 1920 թ. յունուարի 1-ից առաջ (մինչև 1-ը): 200000 թուրլին և 300000 թուրլին, բաց է թողնուած Միստր

Միտչըլին (Ալեքսանդրայպոլ): 1919 28-ին յունիսի և յուլիսի 30-ին ևս 500000 թուրքի է բաց թողնուած դոկտոր Սպօրին ն/թ. սեպտեմբերի 11-ին Կազաչի պոստի համար, չեն նշանակուած Երևանի գրքերում, բայց Ձեր գրութեան պատճենը ուղարկուած է Միքիմախով Ալեքսանդրի Նիկոլայի Սպաստամատոյց/ Կոմիտէի/ Ալեքսանդրայպոլի շրջանային ներկայացուցչին, Ձեր ցանկացած տեղեկութիւնը տալու համար: Վերջին գումարը ուղարկել էր Ալեքսանդրայպոլ ինժեներ Մալխասեանի միջոցով:

2. 550000 թուրքի ստացած 1919 թ. նոյեմբերի 26-ին և 40000 թուրքի ստացած նոյն թուի դեկտեմբերի 17-ին նոյն Կազաչի պոստի համար, ուղարկել են Ալեքսանդրայպոլի շրջանային ներկայացուցչին: Դեկտեմբերի 6-ին և 22-ին և 27-ին:

Այդ գումարների հաշիւները խնդրեցէք Ալեքսանդրայպոլի շրջանային ներկայացուցչից: Մեր ստացականների պատճենը ներփակ է:

3. 200000 Կովկասեան թուրքի փոխադրուած էին գնդապետ Շէլլիին, մօտաւորապէս յունուարի 27-ին: Շարուրի և Նախի-ջևանի ազգաբնակչութեանը կարիքների համար գումարը հաւասար է Ձեզանից ստացուած 340000 Հայկական թուրքու: Տեսէք ստացականների ներփակ պատճենները:

4. Ի լրումն 350000 հայկական թուրքի ստացուած են Ձեզանից նորերս և վերածուած են Կովկասեան թուրքու, 70 % զեղչով: Այդ փողից 50000 թուրքի յանձնուած է պրոպօրշչիկ Չուրիմովին Ձեր կարգադրութեամբ, և մնացորդը 155,882 Կովկասեան թուրքի տրուած են Շէլլիին, խնամատարութեան գործի համար: Տեսէք ներփակ պատճենները: Գնդապետ Շէլլիին ուղարկուած է գրութիւն, որով խնդրում է ներկայացնել փաստաթղթերը և հաշուետւութիւն այդ փողի դիմաց:

5. 100000 հայկական թուրքի ուղարկուել են Ալեքսանդրայպոլ, Պօլիգոնի վերաշինութեան համար, յունուարի 31-ին 1920 թ. Տեսէք ներփակ ստացականը:

Չ. Տելֆորդ¹⁰⁶

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 815, ք. 8: Բնագիր թարգմանություն: Չեռագիր:

N 116
ՍԵՊՈՒՀԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԽՆԱՍՍԱՏԱՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻՆ

28 փետրվարի 1920 թ.
Ալեքսանդրապոլ

Գաղթականությունը ծանր կացության մեջ է. Կարգադրէք
Ալեքսանդրապոլի գանձարանից բաց թողնել հինգ հարիւր
հազար. Սեպուհ

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, մաս 1, ք. 91: Հեռագրական բլանկ:
Չեռագիր:

N 117
ՀՀ ԽՆԱՍՍԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ
ՆՊԱՍՏԱՍՏՈՒՅՑ ԿՈՄԻՏԵԻ ԵՐԵՎԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ
ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉ ԹԵԼՖՈՐՄԻՆ

25 փետրվարի 1920 թ.
Ալեքսանդրապոլ

*В ответ на отношение полковника Делли от 12 февраля о
раздаче хлеба переселяющимся беженцам, имею честь сооб-
щить, что изложенное в письме полковника Делли противоре-
чит приказу N 22 полковника Гаскеля: пункт I этого приказа
гласит “Все распределение муки и хлеба в Армении произво-
дится Армянским правительством под надзором N[ear] E[ast]
R[elief]”¹⁰⁷*

Между тем, предоставляя раздачу хлеба Районным комите-

там, представители Министерства призрения являются совершенно излишними в этом деле в их помощь беженцам сводится к нулю.

Я неоднократно имел разговор по этому вопросу с Вами и указал на важность Санаина как передаточного пункта, где очень часто беженцы и сироты ожидают пересылки: таким образом в Санаине должен быть хлебораздаточный пункт.

Если N[ear] E[ast] R[elief] не имеет своего представителя в Санаин, то это обстоятельство отнюдь не дает право отказать мне в муке для санаинского пункта.

Если же полковник Делли, несмотря на мои неоднократные просьбы отказывает в отпуске муки и предоставляет раздачу хлеба Районным комитетам, тогда пусть он берет всю ответственность перед беженцами.

Министр призрения
Правитель канцелярии

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 634, մաս 1, ք. 114: Թողոն: Մեքենագիր:

N 118

**ՍՄԲԱՏ ԲՈՐՈՅԱՆԻ ԵՎ ՕՆԻԿ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ
ՀԵՌԱԳԻՐԸ ԽՆԱՍԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ**

29 փետրվարի 1920 թ.

Ալեքսանդրպոլ

Մինչև հիմայ հայերով բնակեցուած են Ղարաքիլիսէ, Մոլ-լամուսայ, Շահնալար, Ղարախաշ¹⁰⁸, Ինջիդարա, Արգինա Սօքիւզ և Տիխնիզ գիւղերը. Շուտով կ'լցուին մնացեալները. Զբաղուած ենք շրջանում զինուած ուժեր հանելով անապահով վայրեր, վաղը կ'ամ միւս օր հոյս ունինք բռնել Մեծ և Փոքր Կմիլներ և Արդոզը: Գործը դանդաղ, բայց սիստեմով առաջ կտարուի. Թիւլատրեցի զինուորական իշխանութեան

գիտերը պահել և չայրել մինչև մեր մարդկանց հասնելը, միակ անցատորը երկաթուղին է: Նորէն կը խնդրենք արտակարգ միջոցներ ձեռք առնել:

Սմբատ, Մխիթարեան

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, մաս 1, ք. 90: Հեռագրական բլանկ: Չեռագիր:

N 119

**ՍՄԲԱՏ ԲՈՐՈՅԱՆԻ ԵՎ ՕՆԻԿ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ
ՀԵՌԱԳԻՐԸ ԽՆԱՍԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ**

2 մարտի 1920 թ.

Ալեքսանդրապոլ

Գրառուած շրջաններում մէծ քանակութեամբ լծկաններ կարելի է գնել. Սպեկուլացիան արդէն աշխատում է. Անմիջապէս խոշոր և պատրաստի գումարներ դրկեցէք. Առիթը ձեռքներիցս գնում է. Միրակից թողքը ստացանք, արժէք չունի, գանձարանում փող չկայ, արանց սպասելու պատրաստի գումար դրկեցէք. Սմբատ. Մխիթարեան

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, ք. 93: Հեռագրական բլանկ: Չեռագիր:

N 120

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ Հ.ՄԵԼՔՈՆՅԱՆԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՆԱՍԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ**

5 մարտի 1920 թ.

Ալեքսանդրապոլ

Предупреждаю, что передача организации порядка, в том числе и самообороны в пределах уезда частному лицу, а не узкомиссару, чревата большими осложнениями. Этим обстоятельством положен фундамент для нового полигона худшего

типа. Перерешите вопрос, потом будет поздно. Ответственность за будущие неприятности снимаю [с] себя.

Городской голова Мелконян

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, ք. 102: Հեռագրական քլանկ: Չեղագիր:

N 121

**ԳԵՆԵՐԱԼ ՊԱՎԵԼ ԽԱՉԱՏՈՒՐՈՎԻ ՀԵՌԱԳԻՐԸ
ԽՆԱՍՏԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ**

8 մարտի 1920 թ.

Ալեքսանդրապոլ

По стратегическим соображениям нахожу необходимым разрешать селиться турецким беженцам в деревнях Молламуса, Караклис, Баджогли, Вартанлы. Остальные деревни, идущие непосредственно вдоль границы, должны быть заняты армянами кавкавказских местностей как более оседлыми и устойчивыми. Мера весьма важна для настоящего момента. Прошу спешного распоряжения представителям заселения.

Генерал Хачатрян

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, ք. 111-112: Հեռագրական քլանկ: Չեղագիր:

N 122

**ՍՄԲԱՏ ԲՈՐՈՅԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԽՆԱՍՏԱՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻՆ**

8 մարտի 1920 թ.

Ալեքսանդրապոլ

Թողատրելով քաղաքագլխին իմ վկայականով սայլերով խօտ և գարի փոխադրել քաղաքը գրաւուած գիւղերից, ես

խնդրեցի պաղտոդներով միևնույն ժամանակ Պօլիգոնի գաղթականությունը փոխադրել. Քաղաքագլուխը կոպիտ նամակով մերժեց, որով իմ և նրա մէջ տեղի ունեցավ թիրիմացություն. ես արգելել եմ առայժմ Քաղաքագլխին խօստ տալ. Այդ արթիւ աշօր իսկ գեներալ Խաչատուրեանը ինչ որ ռազմական պատճառաբանություններով պաշտօնապէս յայտնեց ինձ, որ ես բացի Ղարաքիլիսա, Մոլլամուսայ, Բաջողլի և Վարթանլու չորս գիւղերից իրատունք չունեմ մնացեալ գիւղերում գաղթական տեղափոխել և տեղաւորվածներին էլ պարտաւոր եմ անմիջապէս հանել. Ի գիտութիւն յայտնում եմ Ձեզ, որ ռազմագիտական որևէ նշանակութիւն չեն ներկայացնում Շախնազար, Ղարախաչ, Ինջէդարայ և միւս գիւղերը, ուր արդէն տեղաւորուել է գաղթականությունը. ժամանակին ես հեռագրել եմ Ձեզ, խոսել եմ Մանասին,¹⁰⁹ Քաջբերունին,¹¹⁰ Սիրակին¹¹¹ և հիմայ գտնում եմ, որ այդ խնդրով շահագրգռուած է Քաղաքագլուխը և մասնաւոր մարդիկ. Անհնարին է վերոյիշեալ չորս գիւղերում միայն տեղաւորել Պօլիգոնի շրջանի ամբողջ գաղթականությունը. Դէռ Պօլիգոնում ինը հազար գաղթականներ կան. Գեներալ Խաչատրեանը արգելուած գիւղերում տեղաւորուած գաղթականութեան դէմ անհաշիւ արգելքներ է հարուցանում. Գաղթականությունը յուզուած է. Կարող են մէծ անկարգութիւններ առաջանալ, որոնց մասին ես Ձեզ յայտնում եմ. Ես պատասխանատու չեմ. Անհամբեր սպասում եմ վերջնական կարգադրութեան:

Սմբատ

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, ք. 109: Հեռագրական քլանկ: Ձեռագիր:

N 123

**ԱՆԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԲԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇՈՒՄԸ**

8 մարտի 1920 թ.

Рассмотрев сообщение Городского головы, об инциденте, разыгравшем вчера 7 марта между ним и Сумбатом на почве заселения беженцев ближайших сел и обстоятельств, сопровождавших это заседание и принимая во внимание, что двоевластие, которое получилось вследствие наделения полномочием, как Городского головы так и Сумбата по делу эвакуации беженцев, что оскорбления, коим подвергся Городской голова, со стороны Сумбата настолько тяжелы и недоступны, что дальнейшее ведение дела заселения Городской Управой является при теперешнем положении вещей абсолютно недопустимым, почему Управа постановляет: Донести Министра призрения и Внутренних дел, что Управа в дальнейшем отказывается вмешиваться в дела, имеющие какую-либо связь с беженцами, пока не будет отозван Сумбат, вносящий дезорганизацию и анархию в общее государственное дело.

ՀԱՍ. ֆ. 205, ց. 1, գ. 801, ք. 161: Վարչապետի պատճեն:
Աղբրկաղարկ:

N 124

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԶԱՂԱՔԱԳԼԽԻ ՀԵՌԱԳԻՐԸ
ԽՆԱՍԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ, ԳԵՆԵՐԱԼ
Դ. ՓԻՐՈՒՄՈՎԻՆ, ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ
Ս. ՂՈՂԱՆՅԱՆԻՆ

9 մարտի 1920 թ.

Աղբրկաղարկ

Распоряжению Вашему заселел селения. Шахналар, как важный стратегический пункт по предложению военных властей должен был быть заселен исключительно сильным боевым элементом. Для этой цели я избрал сто человек и заставил ликвидировать все дела и поехать в Шахналар. Люди,

приехавшие на место, видели Шахналар полным беженцами Полигона. Создалось тяжелое положение. Прошу распоряжение военным и гражданским властями вывести беженцев из Шахналара в другое селение, иначе не смогу спастись от 100 человек, на оснований моих убеждений, ликвидировав свое хозяйство, уехавших жительства Шахналар и оставшихся там под открытым небом.

Городской голова Мелконян

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, մաս 1, ք. 116-118: Հեռագրական բլանկ: Ձեռագիր:

N 125

**ՄԻՀՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ
ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ**

22 մարտի 1920 թ.
Ալեքսանդրապոլ

Պոլիգոնը դատարկուեց գաղթականներից. Մնացել է միայն հիւանդանոցը և որբանոցը.

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, ք. 140: Հեռագրական բլանկ: Ձեռագիր:

N 126

**ՍՄԲԱՏ ԲՈՐՈՅԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻՆ ԵՎ ՌՈՒԲԵՆ ՏԵՐ- ՄԻՆԱՍՅԱՆԻՆ**

23 մարտի 1920 թ.
Ալեքսանդրապոլ

Պոլիգոնը ամբողջովին դատարկում են գաղթականներից. Մօտ 25 հազար գաղթականներ տեղացի սակաւահող գիւղացիութեան հետ քրնած են 23 լքուած գիւղերը: Գաղթականու-

թիւնը մեծ պահանջ ունի սերմացուի և լծկաններու: Մանրամասն Ձեզ կը զեկուցանէ Միսիթարեանը, որը Երկուշաբթի կը լինի Երեւան: Այսօր գեներալ Խաչատուրեանը յայտնեց, որ մի շարք գիւղերից դուրս կը հանէ զօրքերը և մեր միլիցիաները պէտք է նրանց տեղը բռնեն: Խնդրում եմ անմիջապէս կարգադրէք, որ միլիցիաների ռոճիկը տամ և փողը դրկեցէք շատ շուտ: Միլիցիաներներին տրուած մէկ ֆունտ հացը անբաւական է: Անհրաժեշտ է տալ նրանց հարկատու մթերքներ և պարենատրում: Խնդրում եմ այդ մասին ևս որոշ կարգադրութիւն անէք.

Սմբատ

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, մաս 1, ք. 136-139: Հեռագրական բլանկ: Ձեռագիր:

N 127

ՀՀ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿԱՐՄ-ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ ՇՐՋԱՆԻ ՀԱՏՈՒԿ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉՆԵՐ ՍՄԲԱՏ ԲՈՐՈՅԱՆԻ ԵՎ ՕՆԻԿ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԻՐԵՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

24 մարտի 1920 թ.

Ալեքսանդրապոլ

Պատիւ ունեմ Ձեր բարձր ուշադրութեանը յանձնելու մեր մէկամսէա գործունէութեան մասին հետևեալ տեղեկագիրը:

Ձեր հրամանի համաձայն սոյն թուի փետրուարի 18-ին Ալեք[սանդր]պոլ հասնելով, ձեռնարկեցինք մեզի յանձնարարուած աշխատանքներուն:

Ա. Կացութիւնը Պոլիգոններու մէջ.- Առաջին իսկ առիթով այցելելով Պոլիգոնները և մանրամասն քննութեան ենթարկելով գտանք, որ հոն ապրող աւելի քան 24 հազար գաղթականութիւնը վերին աստիճանի ողբերգական վիճակումն էր:

Պոլիգոնում հասարակած էին արևմտահայ գաղթականութեան մասնատրապէս ամենէն թշուառացոյն բեկորները, որոնք հնարատրութիւն ունեցած չէին ապրելու շրջակա գիւղերում կամ քաղաքում, ուր կեանքը հնարատրին և համեմատաբար աւելի տանելի պէտք էր ըլլար իրենց համար, քան Պոլիգոն կոչուած դժոխքի մէջ: Արևմտեան Հայաստանի գրեթէ բոլոր շրջաններու գաղթականութիւնը իր մասն ունէր հոն: Այսպէս հոն կային բասենցիներ՝ 5000, Դերջան-բաքերդցիներ՝ 4000, ալաշկերտցիներ՝ 3000, Պուլսնըք –մանազկերտցիներ՝ 5000, Ախլաթ-բիթլիսցիներ՝ 2000, վանեցիներ՝ 700, սասունցիներ՝ 1500, եգիպտացիներ՝ 500, կովկասահայ գաղթականներից կարսեցիներ՝ 1000, ալեքսանդրապոլցիներ՝ 1000:

Պոլիգոններու այս հսկայական թուով գաղթականութիւնը ձգուած էր ցուրտ ու քարաշէն շէնքերու մէջ, որոնք առանց որևէ բացառութեան չունէին ոչ մի յարմարութիւն Ալէքսանդրապոլի կատարեալ ցրտին պատասպարելու բազմահազար գաղթականութեան մերկութիւնը: Յրտին, անօթութեանը և անոնցմով յառաջացած բազմատեսակ հիւանդութեանց վերջին չորս-հինգ ամիսներու ամբողջ տևողութեան գաղթականութիւնը իւրաքանչիւր օր Պոլիգոններու մէջ միջին հաշուով տուած է 15-20 մարդկային զոհեր:

Գաղթականութիւնը Պոլիգոնի մէջ կերակրուած է ցամաք հացով, ստանալով օրական 3/4 ֆունտ: Վերջերս միայն մեր Ալէքսանդրապոլ եղած ժամանակին շնորհիւ ձեռք առնուած խիստ միջոցների անոնց մի մասին տրուած է շորեղէն: Շնորհիւ ծայրաստիճան չքաւորութեան և անհաշիւ զրկանքներու, դժբախտաբար, մեր ժողովրդի մէջ բոյն դրեր և աճեր էին մուրացկանութեան և բարոյական այլասերման չարիքը, թերևս անուղղելի ախտեր: Միևնոյն ժամանակ այդ անլեզու և թշուառական զանգուածը յաճախ շահագործման աղբիւր է ծառայած հայ թէ օտար շարք մը բախտախնդիրներու ձեռքին:

Հասկանալով մեր ազնիւ ժողովրդի ֆիզիկական և բարոյական այդ ողբալի սպառումը, առաջին իսկ րոպէին մեր

նպատակը դրինք որքան հնարատոր է կազմակերպել գաղթականութեան տեղափոխումը Պոլիզոններէն:

Բ. Դատարկման նախնական կազմակերպութիւնը .

Հնարատորութիւն չունենալով անձամբ և տեղնուտեղը ուսումնասիրելու այն խիստ փոքրաթիւ գիւղերը, որոնք հարմար վայրեր կարող էին հանդիսանալ Պոլիզոնի գաղթականութեանը տեղաւորելու համար, մենք առաջին իսկ առթիւ տեղնուտեղը Պոլիզոնների մէջ հաւաքելով գաղթականութեան իւրաքանչիւր հատուածի տեղեակ և առաջատոր տարրերին, բացատրելով նրանց մեր նպատակները, իւրաքանչիւր հայրենակցական համայնքէն կազմեցինք 3-5 հոգուց ներկայացուցչական մարմիններ և տալով անոնց մեր նիւթական և բարոյական աջակցութիւնը դրկեցինք Կարս - Ալէք[սանդրա]յով շրջաններու այն բոլոր վայրերը, ուր հաւանաբար կարող էր տեղաւորել Պոլիզոններու գաղթականութիւնը: Ներկայացուցչական մարմինները պարտականութիւն ունէին ուսումնասիրել և ընտրել յարմարաւետ վայրեր ու զեկուցանել մեզ՝ որով միայն հնարատոր էր կարգով ու իրաւունքով դատարկել Պոլիզոնները և տեղաւորել ազատ ու յարմար գիւղերը:

Մինչև ներկայացուցչական մարմինների մեզի զեկուցանիլը, բարեբախտաբար ստեղծուեցան աւելի լայն և հնարատոր յարմարութիւններ և ազատ գիւղեր, ուր պէտք էր առաջին իսկ առթիւ բնակեցնել գաղթականութեանը:

Ներկայ փետրուարի 23-ին արինք առաջին քայլը Պոլիզոններու դատարկման (նախքան այդ մեկնած էին 1800 անձ, Կարսի շրջան, որոնց մեծ մասը սակայն յուսահատուած վերադարձել էր Պոլիզոն):

Կազմակերպելով յատուկ գրասենեակ Պոլիզոնի մէջ, առանձին յատուկ ներկայացուցիչներ դրկելով լքուած շրջանի մէկ քանի կարևոր վայրերը, շարունակ խորհրդակցելով զինուորական իշխանութեան, տեղական միլիցիաների, Քաղաքային Վարչութեան, Քաղաքագլխի, ինչպէս նաև զանազան առիթներով Ալէք[սանդրա]յով այցելող պետութեան այս կամ այն ներկայացուցչի հետ, ինչպէս նաև շարունակաբար

Ձեր հրահանգներին դիմելով, փետրուարի 24-ին սկսանք կանոնադրաբար դատարկել Պոլիգոնները:

Սկսելով դատարկման մեծ աշխատանքներ, մեր առջև անմիջապես կը գցուին բազմաթիւ, գրեթէ անհաղթահարելի խոչընդոտներ: Նախ, որ լքուած շրջանները սկզբից, առանց բացառութեան անապահով էին և ժամանակաւոր ռազմավայրեր կը ներկայացուին շրջանի թաթարական ծանօթ ապստամբութեանց հետևանքով:¹¹² Երկրորդ՝ Պոլիգոններու գաղթականութիւնը մեծ դժարութեամբ կը համաձայնէր տեղատրուել այդ շրջանները: Երրորդ՝ փոխադրասայլերու և երկաթուղիի բացակայութիւնը, որը տարաբախտաբար կը զլանային տալ մեզ, թէ քաղաքի ոստիկանական և թէ երկաթուղային վարչութիւնը, չորրորդ՝ որոշ գործիչներու կողմէ շարք մը շահախնդրութիւններն ու մեքենայութիւնները, որը լարուած էր մեր դէմ և մեր գործի դէմ, և որոնց մասին ժամանակին Ձեզի յայտնի եղած է: Եվ վերջապէս սկզբնական շրջանին փողի սուր պակասը, երբ Ալէքսանդրապոլի գանձարանը յատուկ գումարներ չունէր և հնարաւորութիւն Երեսնէն պատրաստի գումարներ ստանալ: Մեծ դժարութիւնների գնով սակայն կըրցանք յաղթահարել այդ ծանր պայմանները:

Գ. ինքնապաշտպանութիւն-Նկատի ունենալով սկզբնական շրջանի խիստ անապահով վիճակը այն գիւղերուն, ուր պէտք է տեղափոխուէր Պոլիգոններու գաղթականութիւնը և այն կարող էր խիստ չարաչար տուժել և միւս կողմէ, ընդհակառակը, վայրկեանոյ այն սուր և հրամայողական պահանջը, որ կըստիպէր անմիջապէս իսկ բռնել լքուած վայրերը, կը դնէր մեր պատասխանատուութեան տակ, Պոլիգոնից պատրաստ եղող 150-ի չափ պահակներով բռնեցինք շատ կարևոր կէտեր, որոնց տարանք միացուցինք թէ Պոլիգոններու և թէ Ալէքսանդրապոլի շրջաններու գաղթականութեան ուրիշ զինուած մասեր և ըստ կարելոյն աշխատեցանք ստեղծել ինքնապաշտպանութեան տարրական հնարաւորութիւններ այն գիւղերու մէջ, ուր հերթով պէտք է տեղաւորուէր գաղթականութիւնը: Ի վերջոյ այդ զինուած մասերը տեսական

աւելացնելով հասցրեցինք մինչև 500-ի (300-ը հետևակ, 200-ը հեծեալ), որոնք իրենց կենտրոն ունէին Մոլլամուսա գիւղը և կնայէին ամբողջ լքուած շրջանին: Իւրաքանչիւր լքուած գիւղ ունէր 10 ինքնապաշտպանական պահակներ պատասխանատու պահակով:

Ամբողջ շրջանը բաժանուած էր մի քանի գլխաւոր մասերու, ուր կան մեր կողմէ նշանակուած գիւղապետեր, որոնց կ'ենթարկուէին փոքր զաւառամասերու պահակները: Բացի այդ կար մօտ 300 հեծեալ և հետևակ պահակներ, որոնք կը նայէին ընդհանուր պաշտպանութեան: Ինքնապաշտպանութեան պահակներուն կը տրուի առայժմ իւրաքանչիւր անձի օրական մէկ ֆունտ հաց և ռոճիկ, որը սակայն դեռ ստացուած չէ:

Մեր կողմէ պաշտօնապէս դիմած և խնդրած ենք Ամերիկեան ներկայացուցիչ պ. Ռոբինսոնին և գեներալ Անդրանիկի ներկայացուցիչ պ. Քաջունիին, որ մեր պահակներուն յատկացնեն հարկաւոր քանակութեամբ հագուստեղէն:

Մեր պահակներու ցարդ պահպանած են սահմանուած կարգապահութիւնը, պաշտպանած են գիւղերու ինչքն ու հարստութիւնը, շարունակ օգնած են ժողովուրդը թաթարական պարբերական յարձակումներու դէմ և մասնակցած են շարք մը կռիւներու ուր տուած են մի քանի զոհեր:

Դ. Տեղաւորման ճանապարհին: – Ճանապարհներին՝ փոխադրուող գաղթականութեանը դիրութիւն տալու համար Պօլիգոնում հաստատուած մեր զրասենեակը կը կատարէր ցուցակագրութիւն, յետ կը ստանար Պօլիգոններու նպաստի գրքոյկները, կը կազմէր տեղափոխուողներու ցուցակը և կուտար մօտ վայրերու համար 5 օրուայ և աւելի հեռաւոր օրուան՝ 10 օրուայ ճանապարհի հաց. Փոխադրուող իւրաքանչիւր շրջանի ներկայացուցիչներուն կը տրուէր պատշաճ վկայական: Փոխադրուողներուն կը հսկէին յատուկ պաշտօնեաներ, իսկ ճանապարհին՝ զինուած մասեր: Պօլիգոնի գաղթականութեան այն հատուածները, որոնք զանազան պատճառներով հագուստեղէն ստացած չէին, մեր դիմում-

ներու վրայ ճանապարհից առաջ ստացան: Գաղթականներու միւս մասն արդէն սկսած էր ստանալ իր վերաբնակեցւած վայրերուն մէջ: Միւս կողմէ կանոնաւորաբար իւր ներկայացուցիչներու կողմէ ներկայի կըստանար իւր պետական նպաստը Ալէքսանդրապոլի բաժանամունքէն:

Ե. Փոխադրութեան միջոցները - Մեր ամենամեծ դժարութիւնը եղավ փոխադրող սայլեր գտնելը: Փոխադրութեան սայլեր գտնելու մեր պաշտօնական դիմումները քաղաքի Ոստիկանապետին, Գաւառապետին և Քաքաքազլիսին մեզ հարկաւոր քանակութեամբ փոխադրասայլեր տրամադրելու շատ աննշան հետևանքներ միայն ունեցան: Գաւառապետն ու Ոստիկանապետը ամբողջ մէկ ամսուայ ընթացքում հազիւ կըրցան տալ մեզի մէկ քանի տասնեակ փոխադրասայլեր: Փոխադրասայլերը չէին բաւականացնում որովհետև Ալէքսանդրապոլ քաղաքը ոչ միայն սայլեր ինքնին չունէր այդքան մեծ քանակութեամբ, այլ նաև այն պատճառով, որ եղածներն էլ շարունակ կը բռնագրաւուէին զինուորական իշխանութեան, ներքին գործոց, սերմանման կոմիտէի, ինչպէս նաև զանազան տարրերու կողմէ, որոնք չարաչար կը շահագործէին զանոնք այդ օրերուն:

Այս դժուարին պայմաններուն մէջ սակայն մեզի անհրաժեշտ էր առնուազն 2000 փոխադրասայլ, որովհետև գաղթականութեան թուի մեծութիւնը, հիւանդները, անճարները, գաղթականութեան ունեցած ինչքը, Ալէքսանդրապոլի ցուրտ կլիմայի պայմաններում անհնարին էր որևէ այլ միջոցով փոխադրելը: Փոխադրասայլերը պէտք է գաղթականութեանը տանէին երկու գլխաւոր ճանապարհներով, մէկը՝ դէպի երկաթուղային կայարան, որ բաւական հեռաւորութեան վրայ կը գտնուէր, և միւսը աւելի դժուար լքուած գիւղերը, որոնք գտնուում էին հեռաւոր տարածութեան վրայ, և մեծ դժարութիւններ կը ներկայացնէին:

Այս բոլոր դժարութեանց յաղթահարել հնարաւոր եղավ սակայն շնորհիւ մեր ձեռք առած արտակարգ միջոցներուն, երբ ստիպուած եղանք անձամբ մենք ինքներս ալ բռնագրա-

ւումներ ընել, շրջանի գիւղերուց սայլեր բերել և մանաւանդ զանոնք շարունակ մեր ձեռքի տակ պահելու համար առատօրէն վարձատրել: Այսպէս փետրուարի 24-ից մինչև մարտի 23-ի մէկամսեա ընթացքին մեր միջոցներով ձեռք բերած աւելի քան 1800 փոխադրասայլերով հնարաւորութիւն ունեցանք վերջապէս դատարկել ամբողջ Պօլիգոնները: Սկզբից թէև անկանոն, բայց շնորհիւ մեր դիմումներուն և բողոքներուն փոխադրութեանը մեծապէս նպաստեց Ալեքսանդրապոլի երկաթուղային վարչութիւնը, որը մէկ ամսուայ ընթացքին մեզի տրամադրեց հարկաւոր քանակութեամբ վագոններ:

Հարկ կը համարենք շեշտել, որ Պօլիգոնների դատարկման ձգձգման և ուշացման միակ պատճառը փոխադրասայլերու և վագոնների նիւթական պակասն էր:

2. Տեղաւորումը - Մէկ ամսուայ ընթացքին մեր միջոցներով Պօլիգոնների գաղթականութիւնը տեղաւորուեցան Կարս-Ալեքսանդրապոլ շրջաններու 20 և աւելի ազատ գիւղերում: Բասենցիներից մօտ 4000 հոգի անցան և տեղաւորուեցան Նոր Մելիքի շրջանը, իսկ անգէն և անճար մէկ մասը ստիպուած տեղաւորուեցաւ շրջանի հայկական գիւղերը: Մնացեալ Պօլիգոնի գաղթականութեան մօտ 18 հազարը ամբողջութեամբ տեղաւորուեցան հետևեալ լքուած գիւղերը.

1. Դարաքիլիսա՝ 3000

2. Մոլլամուսա՝ 4000

3. Վարդանլի՝ 1500

4. Բաջօղլի՝ 1000

5. Ողջօղլի՝ 1500

6. Մեծ Դմիլ՝ 1000

7. Փոքր Դմիլ՝ 1000

8. Մէօքիւզ՝ 1000

9. Արգինա՝ 2000

10. Հաջի փերի՝ 900

11. Արալլղ՝ 1000

12. Տեքնիս-1500

13. Տայնալլղ-1500

14. Շահնալար՝ 1500
15. Ղարախաչ՝ 400
16. Ինջադարա՝ 800
17. Աստախանա՝ 300
18. Թիքնիս՝ 1000
19. Իլանլու՝ 2000
20. Անի՝ 1000
21. Զեօշուկ՝ 1500

Որեմն ընդամենը 21 գիւղ (չհաշուած Սելիմի շրջանի տեղաւորուածները) 29000 ժողովրդով, որուն 18 000-ը Պօլիգոնի գաղթականութիւնն էր, մօտ 4-5000-ը՝ Ալէքսանդրապոլի և Ղարաքիլիսայի շրջանի արևմտահայ գաղթականութիւնն էր, իսկ մնացեալ 7-8000-ը՝ Ալէքսանդրապոլի, Լոռու, Ղարաքիլիսայի, Բորչալուի, Վրաստանի կովկասահայ ընչազօրեղ գիւղացիութիւնն էր: Պէտք է ըսել, որ Պօլիգոնի 18000 գաղթականութեան մէջ կարևոր տեղ ունի նաև կովկասահայ գաղթականութիւնը՝ Կարսի և Ալէքսանդրապոլի շրջաններէն:

Տեղափոխող գաղթականութեան և ժողովրդի այս ներկայացրած թիւը մօտաւոր և ենթադրական պէտք է ընդունել, քանի որ թէ Պօլիգոնի մէջ բացակայած է ստոյգ վիճակագրութիւնը և թէ տեղաւորուելուց յետոյ մեր կողմէ ժամանակ և հնարաւորութիւն չունենալու համար:

Ամէն կերպով մեր նպատակը եղաւ լքուած գիւղերու մէջ տեղաւորել նախ Պօլիգոններու գաղթականութեանը, երկրորդ՝ անոր անմիջապէս կից՝ միևնոյն գիւղի մէջ հայկական գիւղերի մէջ խորացած¹¹³ քիչ շատ լծկաններ ունեցող գաղթականութիւն և երրորդ՝ անոր անմիջապէս կից և միևնոյն գիւղի մէջ կովկասահայ հողազօրեղ և հիմնական մնացող գիւղացիութիւն: Մեր այդ նպատակը ներկայիս իրականութիւն է արդէն: Պօլիգոնները դատարկուած են և գաղթականութիւնը ներկայումս ունի շարք մը անհամեմատ յարմարութիւններ: Ազատ վարելահողերու վրայ նստած են սերմանող գաղթականութիւն շրջաններէն և վերջապէս լքուած գիւղերից՝ շատ չնչին բացառութեամբ միայն, բռնուած են հիմնական բնակ-

չութեամբ:

Ինչպէս ըսինք գաղթականութիւնը տեղատրուելուց յետոյ բացառիկ հարմարութիւններ ունի: Լքուած գիղերու մէջ նա, մի քանի գիղերու բացառութեամբ, կապրի ծածկուած հարկերու տակ, ունի բնակարանային շարք մը յարմարութիւններ, վարելահող, որմէ մի մասը վարած է, արօտատեղիներ, պատրաստի խոտ և դարման, շատ գիղերու մէջ հանուած է սերմացու, որը սերմանման կոմիտէի հետ փոխանակելով՝ ստացուած է փող կամ ալիւր, կը ստանայ պետական նպաստը կանոնատրութեամբ, կը շարունակէ ստանալ հագուստեղէն և այլն և տէր է դարձել ժամանակաւոր սեփական օճախի, իւրաքանչիւր գիղի մէջ ընտրուած է տանուտիրական կազմ:

Է. Մի քանի առաջարկներ- Տալով մեր գործունէութեան տոյն ամիսների տեղականքը, կը խնդրենք Ձեր բարձր ուշադրութիւնը դարձնել հետևեալ մի քանի առաջարկութեան վրայ և աշխատել, որ բաւարարուի անոնք:

Ա. Տեղափոխող ժողովրդին կարգադրել, որ առաջին իսկ առթիւ տրուեն սերմացու և լծկան կենդանիներ:

Բ. Ինքնապաշտպանութեան բանակը ուժեղացնի և համալրի պետականը:

Գ. Ըստ կարելոյն շուտ տրուի մեր օրինական պահակներու ռոճիկը:

Դ. Ընդառաջ երթալ մեր միջոցով Ալէքսպոլ-Ղարաքիլիսա և այլ շրջաններու գաղթականութեան առաւել պահանջներուն և հնարատրութիւն տալ, որ տեղատրուի Կարսի շրջանի լքուած և ազատ գիղերը:

Ե. Նոյնը Ադրբեջանի և Վրաստանի մեզի դիմող գաղթականութեան նկատմամբ:

Ձ. Առանձին ուշադրութիւն ներկայացնող տոյն աշխատանքների համար տրամադրել մեզ նոր գումարներ:

Ներկայացնելով Ձեզ տոյն տեղականքը և առաջարկները, պարտք եմ համարում աւելացնել նաև, որ Սելիմի շրջանում ունենք մեր առանձին ներակայացուցիչը, իսկ Կարսի շրջանի

մէջ մեր գրասենեակը: Մխիթարեանը կարճ ժամանակով կու գայ Երևան Ձեզ զեկուցանելու: Կը խնդրինք տալ անոր համապատասխան հրահանգներ և միջոցներ, իսկ Սմբատը այս շաբաթուայ մէջ կը մեկնի Կարս գործը աւելի համատարած և կազմակերպուած հիմքերի վրայ դնելու համար:

Սեզի տրամադրած Ձեր գումարների հաշիւը գանձարանը դեռ չի գանձած, կը մնայ 250 բուրլի, իսկ մնացեալ մեր մօտ եղած և ծախսուած գումարներու հաշիւը կստանաք առանձին: Ներկայիս անհնար է տալ, որովհետև զանազան անկախ հաշիւներ ունենք:

Ներկայացնելով այս բոլորը, Ձեզ վստահեցնում եմ, որ այս կարևոր գործի վերաբերմամբ հնար կը ձեռնարկէք:

Յատուկ ներկայացուցիչ՝ Սմբատ
Վերստուգիչ՝ Մխիթարեան

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 830, ք. 1-12: Բնագիր: Ձեռագիր:

N 128

**ՍՄԲԱՏ ԲՈՐՈՅԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՀՀ ԽՆԱՍՏԱՐՈՒ-
ԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԵՎ ՌՈՒԲԵՆ ՏԵՐ-ՍԻՆԱՍՅԱՆԻՆ**

24 մարտի 1920 թ.

Ալեքսանդրապոլ

Իւրաքանչիւր գիւղի մէջ գտնուած պահակներով միլիցիաներու ընդհանուր թիւը հասնում է 700 հոգու: Ապրում են միայն մի ֆունտ հացով, ինչ որ հնարաւոր չէ: Խնդրում են կարգադրութիւն. մեր գործերում մանրամասն զեկուցման համար դրկած եմ Օնիկին, որ կը խնդրեն շուտով վերադարձնէք: Սմբատ

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, մաս 1, ք. 144: Հեռագրական բլանկ: Ձեռագիր:

N 129

**ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՒՅՑ ԿՈՄԻՏԵԻ
ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃՅՈՒՂԻ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱՔԻ ՓՈԽԳՆ-
ԴԱՊԵՏ Չ. ԹԵԼՖՈՐԴԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԽՆԱՄԱ-
ՏԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ**

15 ապրիլի 1920 թ.
Երևան

The Neer East Relief desires to convert the Polygon at Alexandropol into a large orphanage. It is estimated that from twelve to fourteen thousand orphans can be accommodated there. This concentration of orphans will be great advantage, since it will simplify the problem of supply and the care of the orphans. It will be more economical and therefore more can be accomplished with the relief funds .

The Neer East Relief proposes to repair all the buildings and put them into first class shape like the buildings at Kazachi Post.¹¹⁴

This is all to be done with Neer East Relief funds. It will be a distinct advantage for Armenia to have this large Army post repaired and reconstructed by the Neer East Relief. I therefore request that the Polygon at Alexandropol be turned over to the Neer East Relief for the above purpose.

C. Telford. Telford
LT, Col. U.S.A

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 634, թ. 318: Հեռագրական բլանկ: Մեքենագիր:

N 130

**ՀՀ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԲԱՇԽՄԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ ՆԱԽԱՐԱՐԻՆ**

17 ապրիլի 1920 թ.

Նկատի ունենալով ինձ յանձնուած շրջանի տեղացի չքաւոր և գաղթական ազգաբնակչութեան թուերի շուրջ եղած տարաձայնութիւնները՝ անհրաժեշտ համարեցի սոյն զեկուցման հետ ներկայացնել նախարարութեանդ շրջանի տեղացի չքաւոր և գաղթական նպաստընկալ ազգաբնակչութեան թւերի մի վիճակագրական տեղեկատու, որից պարզուիմ է, որ անցեալ 1919 թուի օգոստոսից մինչև 1920 թուի ապրիլի 15-ը միայն գաղթականների թուերից կրճատուած է մեր կատարուած ստուգումներով 99075 անձ, սոյն թուի վրայ աւելացնելով 1919 թուի դեկտեմբերից 1920 թուի ապրիլը արտասահմանից եկածների՝ 16163 թիւը, ընդամենը կրճատուած եղած է 115238 անձ միայն գաղթականներից, ի բաց առնելով Հայաստանի զանազան վայրերից եկածները, որոնք տարբեր ձևով մտնում են շրջանիս այժմէան թուերի մէջ:

Իսկ տեղացի չքաւորներին՝ իրենց ունեցած պաշարի սպառման պատճառով թւերի հաւելումը հետզհետէ անխուսափելի լինելով հանդերձ դարձեալ կրճատուած է:

Ուստի որպէս Ալեքսանդրապոլի գաւառի նախարարութեան ներկայացուցիչ ութ ամսոյ պաշտօնավարութեամբ մօտիկ ծանօթ և լաւ տեղեակ նոյն շրջանի ազգաբնակչութեան տնտեսական դրութեան, խնդրում եմ չքաւորների թւերի կրճատումը վերապահել մեզ՝ տեղական պաշտօնէաներիս, ըստ տեղական խորհուրդների ստուգել և կրճատել, այլապէս չափազանց դժուար կը լինի համեմատական դասաւորումը կրճատուած թուերի, կստեղծուի անցեալ տարուայ դրութիւնը և խեղճ ու տկար եղողները բացարձակ կերպով սովամահութեան զոհ կը լինեն:

Միհրան Գրիգորեան

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, 2-րդ մաս, ք. 180:Ինքնագիր:

N 131

**ՀՀ ԽՆԱՍՏԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱ-
ԽԱՐԱՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԲԱՇ-
ԽԱՆ ԿՈՍԻՏԵԻՆ ՆՊԱՍՏՆԵՐԸ ԿՐՃԱՏԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

19 ապրիլի 1920 թ.

Երևան

Այքի առաջ ունենալով պետական ալիւրի պաշարի քչու-
թիւնը և որ դրսից այլեվս նոր պաշար չի ստացուելու,
յայտնում եմ Ձեզ ի գիտութիւն, որ Ալեքսանդրապոլի ամբողջ
գաւառում և նրան կցուած մասերում (Թալինի շրջան,
Արևմտեան Շիրակ և այլն) այսուհետև ձրի նպաստ պիտի
տրուի ըստ նորմայի (կէս ֆունտ) ոչ աւելի քան մի հարիւր
հազար անձի: Բաղաքի մէջ ոչ ոքի ձրի հաց չի տրուելու, իսկ
դրամով ամբողջ քաղաքին, գաւառին, երկաթուղային
վարչութեանը և միւս բոլոր հիմնարկութիւններին մէկտեղ
պէտք է տալ ոչ աւելի քան իննսուն հազար (90000) անձի:
Մինչև այժմ եղած թուերի կրճատումը և ներկայ գրութեան մէջ
եղած չափերին հասցնելը թողնում է Ձեզ և գաւառական
ինքնավարութեան վարչութեանը:

Խնամատարութեան և վերաշինութեան նախարար՝
Դիւանապետ՝

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, 2-րդ մաս, թ. 162: Թողոն: Ձեռագիր:

N 132

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԲԱՐԱՔԱԳԼԽԻ ՊԱՇՏՈՆԱԿԱ-
ՏԱՐ ՊԱՐՈՒՅՐ ԳՅՈՆՋՅԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԽՆԱՍՏԱ-
ՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԲԱՐԱՔԻ ՉՔԱՎՈՐ ԱԶԳԱՐ-
ՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՉՐԻ ՀԱՅ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

21 ապրիլի 1920 թ.

Խնդրում ենք հեռագրով պատասխանել ինչ չքառորների է վերաբերում Ձեր թիւ 1418 հեռագիրը. Քաղաքում բացի զանազան շրջանների գաղթականներից ձրի հաց են ստանում Ալեքսանդրապոլ քաղաքի ազգաբնակչութեան չքառոր դասը թույլ 9900 հոգի. Մինչև Ձեր հեռագրի ստանալը Խնամատարութեան Նախարարութեան տեղիս ներկայացուցչի կարգադրութեամբ գաղթականութեանը տրուած է ժամանակ մինչև 25-ը ապրիլի տեղափոխուել գիւղերը, բացի արհեստաւորներից և հիմնարկութիւնների ծառայողներից: Որովհետև շուկայում ալիւր չլիներու պատճառով հացի ֆունտը ծախսում է 60-70 րուբլիով, քաղաքացի բնիկ ազգաբնակչութեան չքառոր դասին անհրաժեշտ է շարունակել բաց թողնել հաց նախկին կարգով:

Քաղաքագլխի պաշտօնակատար ` Պ. Գէօնջեան
Բաշկոմի նախագահ Գնդունի

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, 2-րդ մաս, ք.163 :Հեռագրական բլանկ:
Ձեռագիր:

N 133

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՔԱՂԱՔԱԳԼԽԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՊԱՐՈՒՅՐ ԳՅՈՆՋՅԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ
ԽՆԱՄՏԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ**

24 ապրիլի 1920 թ.
Ալեքսանդրապոլ

Ձեր կարգադրութեամբ քաղաքում ապրող գաղթականներին պէտք է ուղարկել Ղարսի շրջան: Գործի յաջողութեան տեսակէտից և երկիշխանութիւն չստեղծելու նպատակով քաղաքային վարչութիւնը խնդրում է յանձնարարել այդ գործը կամ ձեր հատուկ լիազօրին կամ Ձեր Ալեքսանդրապոլի ներ-

կայացուցին, որոնց վարչությունը ցոյց կտա բոլոր հնարաւոր աջակցութիւնը.

Քաղաքագլխի պաշտօնակատար՝ Պ. Գէօնջեան

Ֆ. 205, ց. 1, գ. 801, 2-րդ մաս, ք. 172: Հեռագրական բլանկ: Ձեռագիր:

N 134

**ՍՄԲԱՏ ԲՈՐՈՅԱՆԻ ԵՎ ՕՆԻԿ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ՀԵՌԱ-
ԳԻՐԸ ԽՆԱՄԱՏԱՌՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ Ա. ԲԱԲԱԼՅԱՆԻՆ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ ՉՈՒՂԱՐԿԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

23 ապրիլի 1920 թ.

Ալեքսանդրապոլ

Դիլիջանից գալիս են երեք հազար գաղթականներ և պիտի տեղատրուեն Սարիղամիշի շրջան: Խնդրում ենք Ձեր կողմից յայտարարել ամեն կողմից շարժուող գաղթականութեանը, որ Ղարսի և Ալեքսանդրապոլի շրջաններում այլևս ազատ գիւղեր չկան: Միայն Սարիղամիշի շրջանը կարող է ընդունել մօտ 10 հազար գաղթականութիւն: Խնդրում ենք փողի արաքումը արագացնել:

Սմբատ, Մխիթարեան

ՀԱԱ, ֆ.205, ց. 1, գ. 801, 2-րդ մաս, ք. 167: Հեռագրական բլանկ: Ձեռագիր:

N 135

**ՍՄԲԱՏ ԲՈՐՈՅԱՆԻ ԵՎ ՕՆԻԿ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ
ՀԵՌԱԳԻՐԸ ԽՆԱՄԱՏԱՌՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ Ա.
ԲԱԲԱԼՅԱՆԻՆ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

24 ապրիլի 1920 թ.
Ալեքսանդրապոլ

Ղարաքիլիսայի գաղթականութեան ներկայացուցիչները այստեղ են և յայտնում են, որ հինգ հազարից ատելի գաղթականներ կառավարութեան կարգադրութեամբ պարտաւոր են տեղափոխուել Ղարսի շրջան: Այս բոլորիս Սարիղամիշից Պօղոս Հիւսեանը հեռագրում է, որ այնտեղ ևս ազատ տեղեր չկան և հազիւ կարող են տեղաւորել Դիլիջանից եկող 3000 գաղթականութեանը. Նորից հայտնում ենք, որ Ղարսի և Ալեքսանդրապոլի շրջաններում ոչ մի ազատ գիւղ չկա: Կարգադրեցէք ինչ որ հարկն է. Գործը տանում ենք պարտքով: Փողը չստացանք անհնարին է շարունակել.

Սմբատ, Մխիթարեան

ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, 2-րդ մաս, ք.168 : Հեռագրական բլանկ:
Ձեռագիր:

N 136

**ԿԱՐՈ ՄԱՍՈՒՆՈՒ ՀԵՌԱԳԻՐԸ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ Ա. ԲԱԲԱԼՅԱՆԻՆ ԳԱՂՍԱԿԱՆՆԵՐԻ
ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

24 ապրիլի 1920 թ.
Ալեքսանդրապոլ

Ձեր կարգադրութիւնը Ղարաքիլիսայի գաղթականութեանը Ղարս տեղափոխելու խիստ դժուարութիւններ կը ստեղծէ գաղթականութեան համար: Ղարաքիլիսայի շրջանում գաղթականութիւնը արդէն կատարել է սերմանման աշխատանքներ: Փոխադրութիւնը կը դժուարանա վագոններ և նման դրութիւններ չլիինելու համար: Կարսից և Սարիղամիշից հեռագրում են Սմբատին, որ ոչ մի ազատ տեղ չկայ մէծ զանգւածով գաղթականութիւն ընդունելու: Խնդրում են մնացեալ

գաղթականութեան համար կարգադրել, որ մնան Ղարա-
քիլիսայի ազատ և բնակելի գիւղերում:

Կարօ Սասունի

ՀԱԱ, ֆ.205, ց. 1, գ. 801, 2-րդ մաս, ք.173: Հեռագրական բլանկ:
Ձեռագիր:

N 137

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՔԱՂԱՔԱԳԼԻԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՊԱՐՈՒՅՐ ԳՅՈՆՋՅԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ
ՀՀ ՊԱՌԼԱՍԵՆՏԻՆ, ԽՆԱՍԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻՆ**

24 ապրիլի 1920 թ.

Ալեքսանդրապոլ

Կառավարչական պահեստում ալիւրի պակասելու պատ-
ճառով և նոր ալիւրի ուշանալու շնորհիւ ամերիկական կառա-
վարութեան ներկայացուցչի կարգադրութեամբ քաղաքում
փողով հաց ստացող ժողովրդին պարեն տալը ժամանա-
կաւորապէս դադարեցում է. Այդ առթիւ այսօր առաւօտուց
մինչև ոչ գիշեր քաղաքի բազմահազար ազգաբնակչութիւնը
դիմելով քաղաքային վարչութեանը և բաշխման կոմիտէի
շէնքը կտրուկ կերպով խնդրում է և պահանջում կառա-
վարութիւնից հացի բաշխումը շարունակել ի նկատի առած
շուկայում մասնաւոր հացի բացակայութիւնը, որի շնորհիւ
վերջին մի շաբաթուայ ընթացում հացի գինը 40 րուբլուց
բարձրացել է 60-70 րուբլու, իսկ այսօր մինչև 100 րուբլի և այն
էլ չի ճարում.

Ալեքսանդրապոլի շրջանի և քաղաքի ազգաբնակչութիւնը
դեռ խաղաղ ժամանակ էլ տնտեսապէս վատ դրութեան մէջ էր
համեմատած միւս վայրերի հետ, իսկ ներկայումս գտնուում է
ճգնաժամային դրութեան մէջ շնորհիւ տաճկական բանակի
աւերածութիւնների և մի շարք աննպաստ պայմանների,
որոնք թոյլ չէին տալիս ժողովրդին վերականգնելու քաղաքայ-

ուած տնտեսութիւնը. Այսօր երեկոյեան բազմամարդ հասարակական ժողովը ներկայութեամբ Զինուորական, Խնամատարութեան, Ֆինանսների, Ներքին Գործոց նախարարութիւնների, Գաւառական Չեմստոյի, Քաղաքային Վարչութեան ներկայացուցիչների և ժողովրդի ընտրած ներկայացուցիչների որոշեց դիմել Չեզ հետևեալ խնդիրներով՝ առաջին, դիմել ամենակտրուկ միջոցների ալիւրը իր ժամանակին տեղ հասցնելու նպատակով. երկրորդ, դիմել ձեր միջոցով ամերիկական կառավարութեան ներկայացուցիչն բաց թողնել վճարով հաց ստացողներին ալիւր. երրորդ, ժամանակաւորապէս յետաձգել Խնամատարութեան Մինիստրութեան կարգադրութիւնը գաղթականութեանը և բնիկ քաղաքացի չքաւորների հացը դադարեցնելու վերաբերեալ մինչև գաղթականութեանը մաս-մաս Ղարսի շրջան փոխադրելը և քաղաքի ամենաժայրահեղ չքաւորների վերջնական ցուցակները կազմելը, չորրորդ, եթէ հնարաւոր է վերացնել Աղբաբայի շրջանում մսացումների և այլ կենսամթերքների գնումների արգելումը համաձայն մինֆինի¹¹⁵ կարգադրութեան. Ի նկատի առած մօմենտի լրջութիւնը և մի շարք տեղական պայմանները, օրինակ զինակոչի հարցը ապագայ բարդութիւնները կանխելու համար: Կառավարութեան և ժողովրդի շահերի տեսակէտից անհրաժեշտ է առաջին երեք կէտերի վերաբերեալ անել շուտափոյթ կարգադրութիւն և որի մասին խնդրում ենք տեղեկացնել հեռագրով.

Ի դիմաց ժողովականների
քաղաքագլխի պաշտօնակատար՝ Պ. Գէօնջեան¹¹⁶

ՀԱԱ, ֆ.205, ց. 1, գ. 801, 2-րդ մաս, ք.176-179 : Հեռագրական բլանկ: Զեռագիր:

N 138

ՍՄԲԱՏ ԲՈՐՈՅԱՆԻ ԵՎ ՕՆԻԿ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ՀԵՌԱ-
ԳԻՐԸ ԽՆԱՍՏԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ Ա. ԲԱԲԱՆՅԱ-
ՆԻՆ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

27 ապրիլի 1920 թ.
Ալեքսանդրապոլ

Այսօր 17 վագոն Թիֆլիսից և 13 վագոն Ղարաքիլիսայից գաղթականություն լցուել է կայարան: Կաշխատենք ուղարկել Ղարս և Սարիղամիշ: Տեղաւորելը դժուար է ազատ գիւղեր չլինելու պատճառով: Տեղաւորման և սերմանման համար մեծաքանակ ծախսեր և պարտքեր ենք արել: Չենք հասկանում, թէ ինչու փող չէք ուղարկում: Վերջապէս հրաժարում ենք գործից և պատասխանատւութիւնից, եթէ շտապ փող չուղարկէք.

Սմբատ, Մխիթարեան

ՀԱԱ, ֆ.205, ց. 1, գ. 801, 2-րդ մաս, ք. 170: Հեռագրական քլանկ: Չեռագիր:

N 139

**ՄԻԼԻՑԻՈՆԵՐՆԵՐԻ ԲՈՂՈՔԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԽՆԱՄԱ-
ՏԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ Ա. ԲԱԲԱԼՅԱՆԻՆ, ՀՀ ՊԱՌԱ-
ՄԵՆՏԻՆ, ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ, «ՀԱՌԱՋ»
ԹԵՐԹԻՆ**

28 ապրիլի 1920 թ.
Ալեքսանդրապոլ

Հինգերորդ անգամն է, որ կառավարութեան և Դաշնակցութեան կարգադրութեամբ և Սմբատի ղեկավարութեամբ կազմակերպում ենք ծառայելու Հայաստանի կառավարութեան և հայ ժողովրդին. Բայց ամէն անգամ էլ մեզ զրկել են, մեր իրաւունքները ոտնակոխ է եղել: Փետրւարի 24-ից կառավարութեան կարգադրութեամբ և Սմբատի ղեկավարութեամբ Ղարսի և Ալեքսանդրապոլի շրջաններում կազմակերպուեցինք իբրև միլիցիոներ և մեր սեփական զէնքով ու

փամփուշտներով, ձիերով և ծախսով պաշտպանեցինք այդ շրջաններում նոր տեղատրուած գաղթականութեանը: Ձեր և Սմբատի կողմից խոստացուած էր տալ մեզ մեր օրինական ռոճիկները, բայց այսօր մէկ հազար երեսուն միլիցիօներներին, որ ծառայել ենք մի մասը երկու ամիս և մի մասը մէկ ամիս ժամանակով կը տրուի միմիայն երկու միլիօն բուրլի, որ մեր կէս մասին նոյնիսկ օրինական բաւարարութիւն չի տալիս և բացարձակապէս ոտնակոխում է մեր իրաւունքները: Բացի այդ մեր անունով ստացուած գումարից երկու հարիւր հազար բուրլին փոխանակ մեզ տալուն, Կարօ Սասունին տարել է Ղարս ուրիշների համար: Մինչև հիմայ էլ մենք, որ ոչ մի ժամանակ էլ չենք խնայել մեր կեանքն ու աշխատանքը Հայաստանին, հակառակ չենք գնացել կառավարութեան հրամաններին, այսօր խորապէս վիրաւորուած, ստիպուած ենք հրապարակով բողոքել կառավարութեան անարդար վերաբերմունքի դէմ և պահանջում ենք մեր իրաւունքների կատարեալ բաւարարութիւն և ամենակարճ ժամանակաընթացքում տալ մեր լրիւ և օրինական ռոճիկները: Վարդանիի 80 միլիցիօներների պէտ՝ Համբարձում, Վարդնալի 105 միլիցիօներների պէտ՝ Արշակ Սարգսեան, Բաջօղլիի 54 միլիցիայի պէտ՝ Մխիթար Միմոնեան, Օխչողլի 111 միլիցիաների պէտ՝ Արշակ Քոչարեան, Մոլլամուսայի 58 միլիցիօներների պէտ՝ Չոփուր Միսաթ, Ղարաքիլիսայի 119 միլիցիների պէտ՝ Հայրապետ Գասպարեան, Վարդանլի 57 միլիցիաների պէտ՝ Սաքօ և Համբարձում, Մեծ և Փոքր Ղմիների 150 միլիցիայի պէտ՝ Ղազար Կիտակուգեան, Շահնազար և շրջանի 120 միլիցիաների պէտ՝ Մանուկ Խաչատրեան, Ղարս քաղաքի և շրջանի 144 միլիցիաների ներկայացուցիչ՝ Հարութիւն Խանոյեան, Ալեքսանդրապոլ քաղաքի 30 միլիցիաների պէտ՝ Սահակեան:

ՀԱԱ, ֆ.205, ց. 1, գ. 801, 2-րդ մաս, ք. 185-186: Հեռագրական բլանկ: Ձեռագիր:

N 140

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՔԱՂԱՔԱԳԼԽԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՍԱՐ ՊԱՐՈՒՅՐ ԳՅՈՆՋՅԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՀՀ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՇԽԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԾԱՆՐ ԴՐՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ

24 մայիսի 1920 թ.

Ալեքսանդրապոլ

Քաղաքում գտնուող ազգաբնակչությանը, գաղթականությանը, քաղաքի չքատր դասին եւ հիմնարկությունների ծառայող խմբին պարէնը դադարեցուած է. Ժողովուրդը սոսկալի դրութեան մէջ է: Խնդրում ենք ձեր հեռագրական միջնորդութիւնը ուր հարկն է, որ կարգադրուի տեղական Ամերիկեան կոմիտէին բաց թողնել ալիւրի փոխարէն լոբի, բրինձ կամ ուրիշ մթերք, մինչև նոր ալիւրի ստացուելը. Շուկայում հաց բոլորովին չկայ:

Քաղաքագլխի պաշտօնակատար՝ Գեղնջեան

ՀԱԱ, ֆ.205, ց. 1, գ. 801, 2-րդ մաս, ք. 215-216 : Հեռագրական քլանկ: Ձեռագիր:

N 141

ՀՀ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՇԽԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ Ա. ԲԱԲԱԼՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ

22 հուլիսի 1920 թ.

Երևան

Վերջերս Ամերիկեան Կոմիտէն զգալապէս կրճատելով իր գործունէութիւնը, կենտրոնացնում է իւր խնամքի յանձնուած որբանոցները Ալեքսանդրապոլում եւ Կարսում: Միաժամա-

նակ կոմիտեի գրասենականները Երևանից և Թիֆլիսից տեղափոխում են Ալեքսանդրապոլ:

Արդ անհրաժեշտ է, որ այդ որբանոցների ներքին եւ կրթական կեանքը հսկողութեան տակ լինի կառավարութեան կողմից: Այդ նոյն ժամանակ հարկ կլինի զանազան խնդիրների վերաբերմամբ բանակցութիւններ վարել կոմիտեի կենտրոնի հետ, որ դժուարութեամբ կարելի է անել Երևանից:

Այս նկատումներով անհրաժեշտ եմ համարում, որ Շիրակի մահանգապետութեանը կից կամ Խնամատարութեան Մինիստրութեան կողմից նշանակւի մէկ լիազօրւած ներկայացուցիչ, որ անմիջական հարաբերութեան մէջ լինի Ամերիկեան Կոմիտեի հետ և բոլոր մինիստրութիւնների ներկայացուցիչը հանդիսանալով, կառավարութեան դիմումները Ամերիկեան Կոմիտեին անէ:

Խնամատարութեան եւ Վերաշինութեան Նախարար
Ա. Բարալեան¹⁷

ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 638, ք. 250: Բնագիր: Ձեռագիր:

N 142

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԲԺԻՇԿԿՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ**

18 օգոստոսի 1920 թ.

Ալեքսանդրապոլ

Ալեքսանդրապոլի Բժշկական Միութիւնը և «Կարմիր խաչի» Վարչութեան անդամները մասնակցութեամբ Հայաստանի «Կարմիր խաչի» Կենդրոնական Վարչութեան փոխնախագահ Վ. Արծրունու 1920 թ. օգոստոսի 15-ի արտակարգ նիստում քննութեան առնելով ամսոյս 13-ին Կազաչի Պօստում տեղի ունեցած քստմնելի դէպքը և գտնելով, որ

1. ամսի 13-ին Ամերիկեան Նպաստամատոյց Կոմիտէի

Ալեքսանդրասպուլի բժշկական մասի բժիշկ Հօտօրը անխնայ ձեռով ծեծել է հիւանդանոցի որբերին իւր ձեռքի մտրակով, շատերին անելով արհմարտայ և ի նկատի ունենալով սոյն հանգամանքը, որ նա նման վարմունք միշտ ցոյց է տուել ինչպէս Պօլիգոնի, անպէս էլ Կազաչի Պօստի հիւանդանոցներում, անգութ կերպով ենթարկելով ծեծի,

2. որ նոյն դէպքի ժամանակ ենթարկուել են անարգանքի և լայիւր վերաբերմունքի հիւանդանոցի մի քանի գթութեան քոյրեր, միայն նրա համար, որ կամեցել են պաշտպանել ծեծուող երեխաներին և կապիտան Դինջիրֆիլդի ուշադրութիւնն են հրաւիրել այդ տխուր և վայրենի վարմունքի վրայ, իսկ քոյրերից մէկին նոյն իսկ ուզեցել են միլիցիաների ձեռքով բանտարկել պ. Դինջիրֆիլդի հրամանով

3. որ նոյն հիւանդանոցի բժիշկ Ալթունեանը, որը ենթարկուել է մտրակով խիստ ծեծի նոյնպէս որբ երեխաներին պաշտպանելու համար ճակատից վերք ստանալով

4. որ հիւանդանոցի բոլոր ծառայողները-քոյրեր, սանիտարներ, մայրապետներ, տեսնելով այդ վայրագութիւնները ստիպուած են եղել եղել միջամտել դէպքին, ժողովրդ որոշեց.

ա. որ բժիշկ Հօտօրը, որպէս հոգեպէս անհաւասարակշիռ մի պաշտօնէայ չի կարող մնալ այդ աստիճանի պատասխանատու պաշտօնի մէջ, արատաւորելով ամերիկեան մեծ ու մարդասեր ժողովրդի անունը

բ. որ պ. Դինջիրֆիլդը իւր կոպիտ ու անքաղաքավարի վարմունքով դէպի գթութեան քոյրերը վիրաւորել է գթութեան քոյրերի ամբողջ կօրպօրացիան, որ այնքան անձնուիրաբար իր կեանքի գնով աշխատել է հայ որբերին խնամելու և դաստիարակելու ծանր գործում

գ. ժողովրդ իւր զայրոյթն է յայտնում որբանոցի միւս բժիշկների վերաբերմունքին այն քար անտարբերութեան համար, որ ունեցել են նոքա դէպի որբերը և նոցա տանջող բժիշկը, որպէս հիւանդ մարդու:

Ժողովը վճռեց ուղարկել սոյն որոշումը Ամերիկայի միսիսիայի ներկայացուցիչ պ. Եարօյին, Հայաստանի կառավարու-

թեանը և եթէ նոցա ձայնը չստի նաև Վաշինգտոն Ամերիկե-
եան մարդասեր կառավարութեանը:

Ժողովի նախագահ բժ[իշկ]՝ Ար. Գրիգորեան
Ի տ քարտուղարի բժ[իշկ]՝ Դրամիեան-Մանուկեան

ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 638, ք. 277-79: Բնագիր: Ձեռագիր:

N 143

**ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼԹԻ ՆՊԱՍՏԱՍՏՈՒՅՑ ԿՈՄԻՏԵԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՐՏՈՒՂԱՐ ՎԻՔՐԻԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈԼԻ ԲԱՂԱՔԱԳԼՈՒԽ Պ.
ԼԵՎՈՆՅԱՆԻՆ**

23 օգոստոսի 1920 թ.

Թիֆլիս

Dear Mr. Levonyan: ¹¹⁸

Words can not not express my deep appropociation of the
cordial reception and hospitality that was accorded by yoursel
as

Mayor of Alexandropol, and by the people of Alexandropol,
during my brief visit with you.

I wish heartily that I could have remained longer, but my
largest service to Armenia, for the present can probably be
rendered in Europe and America, rather than Armenia.

For four yeasrs and more I have worked with our committee
unceasingly, frequently well into a night, as wel as by day, for the
welfare of the Armenian people. Having now had the privilage of
meeting them in their own land, as wel as their representatives
in America, I am able to return to America with greatly incresed
enthusiasm and love for the land and the people.

My trip by automobile , afterleaving Erevan , by way of Lake
Sevanga , through Dilijan and Karaklis, to Alexsandropol , and
later to Kars and return, gave me a vision of the country that
greatly strengthened my faithn in the economic resources and

futhere of the nation.

I have always had faith in the industry and character of the people. I now know that they have the land and the natural resources in wich to build a stable, independent nation , if given ani reasonable protection and cooperation by the allied power.

I return to America to continue work along lines of paterial relief, as in the past, though recognizing reluctantly that the response of private philanthropy will probably not be as generous in the future an it has been in the past.

Possibly more important than the relief work, I am determined to lose no opportunity to urge upon my own and other goverments adequate recognition of and cooperation with their ally-the New Armenia.

I take this opportunity again express to yoy my deep appreciation of your hopitality and to assure you of my respectful consideration.

Charles V. Vickrey¹¹⁹

ՀԱԱ, ֆ. 105, ց.1, գ. 2888, ք. 118-119: Բնագիր: Մեքենագիր:

N 144

**ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԼԵԶՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԱՍԵՐԻԿՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻՆ**

սեպտեմբեր 1920 թ.
Երևան

Ձեր սեպտեմբերի 6-ի գրութիւնը ստացանք:

Ինչպէս երեւում է մեր նախկին գրութիւնը N 3412, այնքան էլ չի պարզել նախարարութեանս տեսակէտը մեր փոխյարաբերութիւնների վերաբերմամբ:

Շատ լաւ գիտակցելով, որ թէ Ձեր եւ թէ կառավարութեան, որը այժմ որքերի վերաբերմամբ ծնողների պարտականու-

թիւնն է ստանձնած, նպատակն է որբերին տալ այնպիսի կրթութիւն, որ նոքա ապագայում դառնան պիտանի գործնական կեանքի համար, հայրենասէր եւ ազնիւ քաղաքացիներ: Կարծում ենք, որ մեր յարաբերութիւնների մէջ առաջուց չպէտք է, որեւիցէ կէտ մութ մնայ, որպէսզի առիթ չդառնայ ապագայում իրար չհասկանալու:

Դուք Ձեր գրութեան մէջ յիշում եք, որ պէտք է ազատ լինէք դպրոցական ծրագրերի խնդրում, ինչպէս այդ լինում է մասնատու դպրոցների նկատմամբ Ամերիկայում: Եթէ նախարարութիւնս գրում է, որ ծրագրի փոփոխութիւնը պիտի կատարուի նախարարութեանս հաճութեամբ, դա չի նշանակում, թէ մեր դպրոցական պաշտօնական ծրագրիւր պիտի ամբողջութեամբ առանց փոփոխութեան կիրառուի Ձեր որբանոցներում: Մենք արդէն առիթ ենք ունեցած Ձեզ վստահեցնելու, որ նախարարութիւնս այն կարծիքի է, որ գործնական բնոյթ կրող պարապմունքները որբանոցային դպրոցներում պէտք է առաջնակարգ տեղ գրաւեն, ուստի եւ պարզ է, որ նախարարութիւնս չէ կարող ընդդէմ լինել այն փոփոխութիւններին, որ առաջ պիտի գան ուսումը գործնական բնոյթ տալու պատճառով: Միւս կողմից նախարարութիւնս որբերի ապագայի նկատմամբ պատասխանատու լինելով ժողովրդի առաջ չէ կարող վերահասու չլինել այն մասին, թէ ինչպէս է տարւում որբերի կրոնական եւ դաստիարակչական գործը: Դա այն հայրական պարտականութիւնն է, որը Ամերիկայում ծնողներին հնարաւորութիւն է տալիս վերահասու լինել զատ դպրոցների կեանքին եւ գերադասութիւն տալ իր ցանկացած դպրոցին:

Այդ պարտականութիւնն է, որ ստիպում է մեզ վերապահել վերահսկողութեան եւ ծրագրերի փոփոխութեան իրաւունքը:

Ինչ վերաբերում է մեր հսկողութեանը, նա հանդէս է գալիս նոյն այն ընդհանուր սկզբունքից, որ Պետութիւնը վերահասու պէտք է լինի դպրոցների կեանքին: Երկրորդ, որ անցեալ տարի ինչպէս երևում է մեր շրջանային տեսուչների գեկուցումներից ամերիկեան դպրոցներում կային մի շարք անպա-

տրաստ ուսուցիչներ որ չունէին ոչ մի կրթական ցենզ: Պետութիւնը չի կարող անտես առնել նաև այն, որ կարող են դասատուների ցանկի մէջ ընկնել այնպիսի անձինք, որ ճանաչում են իբրեւ մեր պետութեան դէմ պայքարողներ: Մինչդեռ կոմիտէի ծանօթ չլինելով տեղական պայմաններին եւ հասարակութեանը, կարող է այնպիսի սխալանքի մէջ ընկնել որից դպրոցական կեանքը մեծապէս կարող է տուժել: Մենք պարտականութիւն ենք զգում այդպիսի սխալների առաջ առնելու նպատակով վերահասու լինել Ձեր դպրոցական կեանքին: Ահա այն հանգամանքները, որ կարծում ենք կհամոզեն Ձեզ, թէ ինչու է կառավարութեանն անհրաժեշտ վերահսկողութեան իրաւունքը:

Հանրային կրթութեան եւ Արեւստի նախարար
Դիւանապետ

ՀԱԱ, ֆ. 307, ց.1, գ. 46, ք. Թողոն: Մեքենագիր:

N 145

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄՈՕՀԱՆՁԱՆՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆՊԱՍՏԱՍՏԱՏՈՒՅՑ
ԿՈՄԻՏԵԻ ԳԼԽԱՎՈՐ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉ ՅԱՐՈՅԻՆ**

12 հոկտեմբերի 1920 թ.
Երևան

Մեծայարգ պ. Եարօ,

Կարսի ճակատում թրքական վերջին յարձակողականը ինչպէս Ձեզ ալ ծանօթ պէտք է լինի, սկզբնական շրջանում յառաջ բերաւ կռուի մօտաւոր վայրերում, օր[ինակ] Կարս քաղաքում, խուճապ, որը եթէ շարունակուելու լինէր կարող էր անբաղձալի հետեւանքներ ունենալ: Այն ատէն երբ ժողովրդի մէջ մեծ մասը կը խորհէր ապաստան գտնել թիկունքում այնպիսի ապահով վայրեր լքելով իւր տունն ու

տեղը, Ամերիկեան Կոմիտէի ղեկավարներն ու պաշտօնէութիւնը առհասարակ վտանգին հանդէպ ցոյց տուած իրենց ընթացքով ստիպեցին ինձ յանուն Հայաստանի կառավարութեան շնորհակալութիւն յայտնել եւ շնորհատրել զիրենք, բարձրորէն մարդկային եւ ազնիւ իրենց ընթացքի համար:

Յարգելի Տիար, մեր ստացած ստոյգ տեղեկութեան յամաձայն Կարսի վտանգուած օրերուն գտնուած են Ձեր հաստատութիւններու մէջ անձնատրութիւններ, որոնք ոչ մի պաշտօնով կապուած չլինելով հանդերձ վճռել են մնալ, ամէն մէկը մի որբանոցում եւ թշնամու գալու պարագային իսկ պաշտպանել որբերը վտանգելով իրենց կեանքը:

Հիացումով համակուած քաղաքացիական արիութեան եւ վեհանձնութեան այդ քայլի առթիւ, համեցէք ընդունել կրկնակի շնորհակալիքս եւ թարգման հանդիսանալ Ձեր ամբողջ պաշտօնէութեան առջեւ Կառավարութեանս գնահատական զգացումներու:

Յարգանք

Հայաստանի կառավարութեան նախագահ՝ Հ. Օհանջանեան

ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 638, ք. 300: Թողոն: Մեքենագիր:

ԳԼՈՒԽ III

ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱԼՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1920-1921 թթ.)

N 146

ՀԵՂԿՈՍԻ ՆԱԽԱԳԱՀ Ս. ԿԱՍՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՍԻՏԵԻՆ
ԻՐԵՆՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

14 դեկտեմբերի 1920 թ.
Երևան

Ընդունելով Մերձատր Արեւելքի Օգնութեան Կոմիտէի գործնէութիւնը գաղթականական, որբական և ընդհանրապէս խնամատարական գործում օգտակար եւ անհրաժեշտ Խորհրդային Հայաստանում, Հ[այաստանի] [Սոցիալիստական] Խ[որհրդային] Հ[անրապետության] Յեղկոմը նրա գործնէութեան շարունակութիւնը եւ ընդարձակումը համարելով անպայման ցանկալի, խոստանում է նրան իր լիակատար աջակցութիւնը: Առաջարկում է Հ[այաստանի] [Սոցիալիստական] Խ[որհրդային] Հ[անրապետության] բոլոր քաղաքացիական և զինուորական իշխանութիւններին ցոյց տալ նոյն կոմիտէի վարիչներին հարկ եղած աջակցութիւնը իրենց գործնէութեան ընթացքում:

Յեղկոմի նախագահ՝ Ս. Կասեան

Արտաքին գործերի ժողովրդական կոմիսար՝ Ա. Բեկզադեան

Դիւանապետ՝ Վ. Սարպէեան

Իսկականի հետ ճիշտ է:

Դիւանապետ

ՀԱԱ, ֆ. 114, ց.1, գ.22, ք. 2: Վավերացված պատճեն: Տպագիր:

N 147

**ՀՄԽՀ ՀԵՂԿՈՍԻ ՆԱԽԱԳԱՀ Ս. ԿԱՍՅԱՆԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՀԵՂԿՈՍԻ
ՆԱԽԱԳԱՀԻՆ ՍԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ
ԿՈՍԻՏԵԻ ՀԵՏ ԲԱՆԱԿՅԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

14 դեկտեմբերի 1920 թ.

Երևան

Ալեքսանդրապոլի գաւառական Յեղկոմի նախագահ ընկեր Մատթեոս Տէր-Գրիգորեանը¹²⁰ (Արծիկ) լիազօրում է բանակցել Մերձատր Արեւելքի Նպաստամատոյց Ամերիկեան Կոմիտէի ներկայացուցիչների հետ, համաձայնելու համար նրանց հետ Խորհրդային Հայաստանում նոյն Կոմիտէի գործունեութեան պայմանների մասին:

Առ այդ հաստատում է սոյն գրութիւնը ստորագրութեամբ և կնիքով:

Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան Յեղկոմի նախագահ՝ Ս. Կասեան

Արտաքին գործերի ժողովրդական կոմիսար՝

Ա. Բեկզադեան

Քարտուղար՝

ՀԱԱ, ֆ. 114, ց.1, գ.22, ք. 6: Տպագիր օրինակ:

N 148

**ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀՄԽՀ ԼԻԱԶՈՐ Դ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ
ԿՈՍԻՏԵԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԻԱԶՈՐ
ՅԱՐՈՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ**

ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

15 հունվարի 1921 թ.

Թիֆլիս

Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Յեղկոմը խիստ ցանկալի համարելով Ձեր կոմիտեի գործունեության շարունակությունը Հայաստանում, իր կողմից ամեն ջանք թափել է՝ ոչ մի խանգարում չմտցնելու համար նրա ընթացիկ կեանքի եւ նորմալ զարգացման մեջ:

Սակայն ամբողջովին կտրուած լինելով Ալեքսանդրապոլից, նա միայն Երեւանի, Ղարաքիլիսայի եւ Էջմիածնի մեջ կարողացաւ իր այդ տրամադրութիւններին գործնական ընթացք տալ, եւ աջակցելով կապիտան Դէնջրֆիլդի ու միստր Դիասելի մեկնումին դէպի Ալեքսանդրապոլ եւ Կարս, նրանց հետ Կոմիտեի Ընդհանուր լիազոր կապիտան Յարրոլին ուղարկեց նաև 1920 թ. դեկտեմբերի 14-ին կայացրած իր ակտը, որի պատճէն ներփակուած է սրան:

Որպէս փաստ Յեղկոմի տրամադրութեան գործնական արժէքին, կարող ենք յիշել այն հանգամանքը, որ Երեւանի մեր անգլիական որբանոցը, իր ղեկավարներից լքուած, յանձնուած է Ս[երձաւոր] Ա[րեւելքի] Օ[գնութեան] Կ[ոմիտեի] տեղական ճիւղին եւ նրա ընթացիկ ծախսերի համար բաց է թողնուած 50 միլիոն Հայկական ռուբլի, ինչպէս նաեւ բոլոր դպրոցների պետականացման օրէնսգծի մեջ Մ.Ա.Օ.Կ.-ի դպրոցները յիշատակուած են, որպէս նոյն օրէնքին ենթարկուող հաստատութիւններ:

Տաճիկների ներխուժման եւ ներքին յեղաշրջման անցողակի օրերին միջադէպեր տեղի ունեցան Ալեքսանդրապոլում, որոնք գերազանցապէս տեղական բնոյթի էին, չէին համապատասխանում թէ Խորհրդային ընդհանուր քաղաքականութեան եւ թէ նորաստեղծ իշխանութեան տրամադրութիւններին եւ այն էլ այնպիսի անձնատրութիւնների կողմից, որոնք երբեք լիազորուած չէին հայկական իշխանու-

թեան անունից խօսելու:

Փարատելու համար այդ թիրիմացութիւնները եւ վերականգնելու համար ճշմարտութիւնը դեկտեմբերի վերջերին ՀՄԽՀ Արտաքին Գործոց Ժողովրդական] Կոմիսարիատը մի պատուիրակ ուղարկեց ընդհանուր լիազորի եւ սակայն նա վերադարձաւ Ալեքսանդրապոլից՝ չկարողանալով տաճիկներից թոյլտութիւն ստանալ Ղարս գնալու:

Սոյն թուի յունուարի 6-ին ԱԳԺԿ պատուիրակութիւն ուղարկեց Թիֆլիս տեղի լիազոր ներկայացուցչի հետ համախորհուրդ՝ իր պարտականութիւնները կատարելու Մ.Ա.Օ.Կ.-ի հանդէպ:

Այդ պատուիրակութիւնը լիազօրուած է յայտարարելու այստեղ եւ ամեն տեղ.

1. 1920 թ. դեկտեմբերի 14-ի ակտը.

2. ՀՄԽՀ յեղկոմը ոչինչ չի ստացել կամ որեւէ ձեւով առել Մ.Ա.Օ.Կ.-ից:

3. Ընդհակառակը նպաստել է նրա գործունէութեանը.

4. Ալեքսանդրապոլի «Պօլիգոն» կոչուած որբանոցների յանձնումը տեղական յեղկոմին եղած է առանց յեղկոմի համաձայնութեան, որպիսի հանգամանքը բացատրում է միմիայն նրանով, որ աննորմալ դրութեան եւ հաղորդագրութեան բացակայութիւնը ժամանակատրուապէս կտրել է ամեն յարաբերութիւն Ալեքսանդրապոլի եւ Երեւանի հետ:

5. Այդ որբանոցները կպահպանեն նոյնութեամբ, իրենց անունով, դրոշակով եւ կազմակերպութեամբ մինչեւ առաջին առիթ, նորից Մ.Ա.Օ.Կ.-ին յանձնելու համար:

6. Ոչ մի տեղ Հայաստանում Մ.Ա.Օ.Կ.-ի գործունէութեան վերջ տրուած չէ. Երեւանի մէջ գործը տանում են դոկտ[որ] Ա. Ըշըր եւ միստր Պիրլ, իսկ Ղարաքիլիսայի մէջ կապիտան Գրեմտ, բոլորն էլ Մ.Ա.Օ.Կ.-ի անդամներ, որոնք շատ ուրախ են իրենց գործը շարունակելու համար:

7. Պատուիրակութիւնս լիազօրուած է նոր առաջարկութիւններ անելու. բաւարարութիւն տալու կատարուած անախորժութիւնների փոխարէն եւ բանակցութիւններ վարելու

որեւէ պահանջի կամ ցանկութեան իրականացման համար Մ.Ա.Օ.Կ.-ի Կ[ոմիտէի] լիազօր ներկայացուցչութեան հետ, որ այդ նպատակով ուղարկած լինի մի յարմար վայրում, լինի Նիւ-Եորքից, լինի Պօլսից, լինի Կովկասեան ընդհանուր լիազօր կապիտան Եարրոից, որովհետեւ տաճիկները հնարաւորութիւն չեն տալիս բանակցութիւնները Ղարսում կատարելու:

Յայտնելով այս բոլորը պատիւ ունենք սպասելու պատասխանին, Ձեր կողմից նշանակւած ներկայացուցչութեան հետ հանդիպման տեղի եւ ժամանակի մասին համաձայնութիւն կայացնելու համար:

Հայաստանի Սոցիալիստական
Խորհրդային Հանրապետութեան Լիազօր
Վրաստանում՝ Դանիել Շահվերդեան
Հ[այաստանի] [Սոցիալիստական] Խ[որհրդային]
Հ[անրապետության] Յատուկ պատուիրակ
Մ[երձատր] Ա[րեւելքի] Օ[գնութեան] Կ[ոմիտէի] մօտ
Վարազդատ Տէրոյեան

ՀԱԱ, ֆ. 114, ց.1, գ.22, ք. 59-60: Վավերացված պատճեն: Մեքենագիր:

N 149

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՏՈՒՆ¹²¹ ՈՒՂԱՐԿՎԱԾ
ԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1 փետրվարի 1921 թ.

Մի հայ Տէրոյեան անունով, որը նախապէս ծառայել է Մերձատր Արեւելքի Նպաստամատոյցում և որի մասին լատգաւափար ունէին Ամերիկեան Կոմիտէի մէջ և որը շարունակում է նպաստի գործը Բալչիկեան իշխանութեան տակ,

եկել է Թիֆլիս խնդրելու մեզ և Ամերիկացիներին նպաստի գործը շարունակելու: Նա տեղեկացնում է, որ հազարատոը ցիրուցան եղածներից ի զատ համախմբուած հանրակացարաններում Ալէքսանդրասպոլում կան 30000 գաղթականներ և Ղարաքիլիսայում 20000, որ ամբողջ երկիրը աղքատացել է և եթէ նպաստը չհասնի մարտի մէկին 100000 ժողովուրդ Ալէքսանդրասպոլում սովամահ պիտի լինեն:

Թիւրքերի կողմից գրաւուած Հայաստանի կէս մասում Ամերիկեան նպաստի գործը շարունակուում է: Մթերքը բաւականանում է մինչև եկու ամիս, որմէ վերջ ամերիկացիները, ինչպէս լսել եմ, պիտի դադարեցնեն գործը, եթէ թիւրքերը թոյլ չտան նրանց Էրզրումի մէջ մթերքներ գնել: Թիւրքերը նպաստի գործը կրճատելու մտադրութեան նշաններ են ցոյց տալիս և նպաստի մթերքներէն իրենց գումդերու համար օր օրին աւելի մեծ պահանջներ են ներկայացնում:

Հայաստանի Բաշկիկ մասում իշխող հայ բոշկիկները չափաւոր են, ծայրահեղութիւններ չեն անում և թոյլ են տուել, որ Նպաստի գործը շարունակուի Երևանում և Ղարաքիլիսայում, նոյնիսկ 50,000,000 ռուբլի յատկացրել են նպաստի գործին Երևանում: Նրանք պաշտօնապէս գրել են Սերժաւոր Արևելքի Ամերիկեան Նպաստամատոյցին խնդրելով շարունակել գործը և խոստանալով պաշտպանութիւն: Նրանք առաջարկում են նոյնը Հարբորդին:

Ես կը սեպիմ, թէ տրուած գարանտեաները վստահելի են, բայց վտանգ կայ նրանում, թէ ներկայ չափաւորները կարող են փոխարինել ծայրահեղներով:

Տէրոյեանի, Հարբորդի և Խատիսեանի հետ խորհրդակցելուց յետոյ ես յանձնարարում եմ, որ նպաստը ուղարկուի կենսամթերքներով և շորերով, և նրա բաշխումը ապահովելու համար ես լիազօրուած լինեմ կազմել մի կոմիտէ Դր. Ըջրրի նախագահութեամբ, որը գործում է Երևանում, անկախ Սերժաւոր Արևելքի Նպաստամատոյցին:

Իբրև անդամ Խատիսեան կարող է օգտակար լինել այստեղ, իսկ ուրիշներ կարող են գտնել Հայաստանի մէջ

գործելու համար: Հարբորդ մինչև ամիս մը գործել չի կարող, այն ատեն ատելի դիւրին կլինի որոշել, թէ դորա Հայաստան գալը ցանկալի է, թէ ոչ:

Քանի որ նպատակը կեանքեր ազատելն է և լատգոյն հետևանքների հասնելու համար ես ատելի կթելադրեմ, որ հայերին նպաստող անգլիական չորս կազմակերպութիւններ իրենց գործերի մէջ համակարգութիւն մտցնեն:

Մթերք չի կարելի գնել Վրաստանում: Պաթում եկած մթերքների արտածութիւնը և փոխադրութիւնը Հայաստան հնարաւոր չափտի լինի եթէ մագութ չհայթայթուի, քանի որ Վրաստանի երկաթուղային երթեւեկը մեծ չափով պակասել է ածուխի գործունէութեան համար:

Ֆ. 114, ց.1, գ.22, ք. 56: Բնագիր: Ձեռագիր:

N 150

**ԸՇԸՐԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ
ԿՈՄԻՏԵԻՆ (ԹԻՖԼԻՍ, Կ. ՊՈԼԻՍ ԵՎ ՆՅՈՒ- ՅՈՐԺ)
ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ
ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

2 փետրվարի 1921 թ.
Երևան

Կովկասահայ որբեր ատելի քան կարիքի մէջ են: Քաղաքական պայմանները օգնութիւնը անհրաժեշտ են դարձնում, այլապէս սովը անխուսափելի է, լքելը ոճիր է, մթերքները կարելի է և անհրաժեշտ է փոխադրել: Դիլիջանի 7 հազար նոր որբեր սարսափելի պայմանների մէջ են: 20000 փախստականներ Ալեքսանդրապոլում սոված են: Խորհրդային իշխանութիւնը բարեկամարար օժանդակում է: Լքելը ոճիր է: Ծախել եմ Մերձաւոր Արևելքի վրայ ի տես 2000 դոլլարի չէկ: Եարրոն մեզ թողել է: Քաջալերեցէք մեզ:

Ըշրր

ՀԱԱ ֆ.114, ց.1, գ.22, ք. 52: Բնագրային քարգմանություն
անգլերենից: Մեքենագիր:

N 151

**ԱՆԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԵՐՐՈՐԴ ՔԱՂԱՔԱՍՍԻ
ԿՈՍԻՍԱՐԻ ՁԵԿՈՒՅՈՒՄԸ ՄԻԼԻՑԻԱՅԻ ՊԵՏԻՆ
ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԹՈՒՐՔ ՁԻՆՎՈՐՆԵՐԻ
ԿԱՏԱՐԱԾ ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

18 փետրվարի 1921 թ.

Ալեքսանդրապոլ

Սոյն առաւօտեան ժամը 10-ին եկաւ իմ խնամքին յանձնուած 3-րդ քաղաքամասի գրասենեակը 17-րդ հանրակացարանի ծառան, բերելով իր հետ նոյն հանրակացարանի կառավարչի սոյն օրուայ N 1872 գրութիւնը, որով յայտնում է, թէ երեկ 17-ն փետրուարի երեկոյան ժամը 6-ին տաճիկ ասկէարները զիւնում եկել են և տարել նոյն հանրակացարանից չորս հատ կին, որի մասին կարգադրեցի հերթապահ հսկիչին կազմել արձանագրութիւն:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ես, 3-րդ քաղաքամասի հսկիչ Մելիք Մեսրոպեանս, համաձայն նոյն քաղաքամասի կոմիսարի կարգադրութեան, գալով 17-րդ հանրակացարանը, կարգադրեցի քննութիւն վերորդեալի մասին, որից պարզուեց հետևեալը.

17-րդ հանրակացարանի կառավարիչ, Ալեքսանդրապոլի բնակիչ Աշոտ Սկրտումեան, 18 տարեկան, Սարդարապատի փողոց, տուն N 133, գրագէտ:

Առաւօտեան ժամը 8-ին եկաւ ինձ մօտ հանրակացարանից Մելիք Մելոյեանը և ասաց, որ երեկոյեան ժամը 8-ին

երկու տաճիկ զինուորներ մտնելով հանրակացարանը, ջոկելով հանրակացարանում ապրող գաղթականներից գեղեցկուհիներին, թուով չորս հարսներ տարան անյայտ ուղղությամբ, որոնք հետևեալներն են՝ Էստեր Կոստանեան և Դարուօ, իսկ երկուսի ազգանունները չիտեմ: Առաւօտեան գալով հանրակացարան իմաց տուի 3-րդ քաղաքամասը, ուրիշ ոչինչ չգիտեմ:

17-րդ հանրակացարանի կառավարիչ Աշոտ Սկրտումեան

Կարսի շրջանի Բայդարա գիւղացի, վերաբնակուող Ալէքսանդրապոլի 17-րդ հանրակացարանում, Նունօ Գէորգեան, 22 տարեկան, անգրագէտ

Երեկոյեան ժամը 7-ը կլինէր, երբ ներս մտան երկու տաճիկ զինուորներ երկու գաղթական կնոջ հետ: Մեզ ասացին, որ հարկատր են լուացք անողներ և ման եկան սենեակի մէջ, գտնելով ինձ և երեք ուրիշ հարսներ, որոնց անունն էր Էստեր, Դարուօ, և Սիրանոյշ: Սկզբից մենք չհամաձայնեցինք, իսկ այն երկու կինը, որ հետները ներս էին եկել ասեցին, որ գնացեք, ձեզ հաց կտան, փող կու տան, իզուր տեղը ինչու քաղցած կոտրուիք: Մենք էլ համաձայնեցինք և գնացինք: Ճանապարհից ես և Սիրանոյշը վերադարձանք, որովհետև մեր երեխաները հիւանդ էին, իսկ այն երկուսին զոռով տարան, ուրիշ ոչինչ չգիտեմ:

Անգրագէտ

Ալէքսանդրապոլի շրջանի Օրթաքիլիսա գիւղացի Մաքօ Պետրոսեան 40 տարեկան, վերաբնակուող Ալէքսանդրապոլի 17-րդ հանրակացարանում, անգրագէտ

Երեկոյեան ժամը 7-ի ժամանակ ներս մտան երկու ասկէրներ և ասացին, որ մեզ լուացք անողներ են հարկատր: Մեր սենեակում տեսնելով, որ ջահելներ չկան, թողին գնացին

միւս սենեակը: Քիչ յետոյ նրանք չորս ջահել հարսներ տա-
րան: Ես տեսնելով, որ տանում են նրանց, սկսեցի աղաչել, թէ
սրանց միք տանի, ես ինքս կու գամ լուացք անելու: Բայց
նրանք ասացին, որ դու պառաւ ես, չես կարող լուացք անել և
գնացին, տանելով չորս հարսներին, ուրիշ ոչինչ չգիտեմ:

Անգրագէտ

Կարսի շրջանի Օրթադալա գիւղացի, Խուդրաք Կարա-
պետեան, վերաբնակող Ալէքսանդրապոլի 17-րդ հանրակա-
ցարանում, անգրագէտ

Մութը նոր էր ընկել, երբ ներս մտան երկու ասկէարներ և
պահանջում էին լուացք անողներ, ասելով, որ ձեզ հաց և փող
կու տանք: Ես և Մաթօ Պետրոսեանը համաձայնեցինք գնա-
լու, իսկ նրանք չտարան մեզ, պատճառ բռնելով, որ մենք
պառաւ ենք: Հաւաքելով չորս հարսներ՝ տարան, որոնցից
երկուսը կէս ճանապարհից յետ դարձան, որոնք են Սիրանոյշ
և Նունօն: Իսկ ասկէարներին մենք բոլորովին չենք ճանա-
չում: Ուրիշ ոչինչ չգիտեմ:

Անգրագէտ

Սոյն արձանագրութիւնը կազմելով ներկայացնում եմ 3-րդ
քաղաքամասի կոմիսարին ի տնօրինութիւն
Հերթապահ հսկիչ Մետրովքեան

Ես 3-րդ քաղաքամասի կոմիսարի օգնական Պարոյր
Գալստեանս, կարդալով վերոյիշեալ արձանագրութիւնը որո-
շեցի ուղարկել պ. միլիցապետին ի տնօրինութիւն: Իսկ կա-
նանց իւրանց տները:

Պ. Գալստեան

ՀԱԱ, ֆ. 144, ց. 1, գ. 23, ք. 170-171: Բնագիր: Ձեռագիր:

N 152

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՅԻ ՏՆԱՏԵՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ
ՂՈՒԱՆԵԱՆԻ ԽՆԴԻՐԸ ՔԱՂԱՔԻ ՄԻԼԻՑԱՊԵՏԻՆ
ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՅ ԻՐ ՏՈՒՆԸ ՔԱՆԴԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1 մարտի 1921 թ.
Ալեքսանդրապոլ

Մեծն Վարդանի փողոցի N 44 տունը հանրակացարան է:
Այդ տունը իմն է: Գաղթականները հետզհետեւ այդ տնից
գնում են քարուքանդ անելով եղածը, քանի որ հաց չեն
բաժանում, կառավարիչ չունի, հանրակացարանը ենթար-
կում է ամեն տեսակի պատահականության:

Մի քանի գաղթականներ են մնացել, որոնք անխնայ
կերպով քանդում են թէ այդ տունը և թէ մօտի մեր շէնքերը:

16 սենեակների մէջ ծայրահեղ կեղտոտութիւն է տիրում:
Օրերը տաքացել են կարող է համաճարակ կիսանդութիւնը
տարածուել:

Այսու խնդրում եմ իմ շէնքի մէջը դատարկել տալ, որտեղ
երկու կամ երեք հոգի են ապրում և նոցա տեղափոխել
միւսների մօտ, քանի որ այդ սենեակում երկու-երեք մարդ են
տեղատորուել և ցերեկը անյայտանում են, գիշերները զալիս
են իբրև քնելու և քանդում: Նաև խնդրում եմ իրենց մաքրել
տալ սենեակները ծայրահեղ կեղտից:

Ղուլանեան

ՀԱԱ, ֆ. 144, ց. 3ա, գ. 58, թ. 80: Ինքնագիր:

N 153

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻԼԻՑԻԱՅԻ ՊԵՏ
Ս. ՄԱՏԻՆՅԱՆԻ ԿՈՂԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԲՆԱԿԻՉ-
ՆԵՐԻՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԲՆԱԿՎՈՂՆԵՐԻՆ ՔԱՂԱ-**

**ԶՈՒՄ ՍՈՎԻՑ ՄԱՀԱՅՈՂ ՈՐԲԵՐԻՆ ԱՆՀՐԱԺԵՐՏ
ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏՄԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՐՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

12 մարտի 1921 թ.

Միքսիմիլիանովսկի

В такое тяжелое и критическое время, когда целое население является очевидцем и зрителем голодной смерти масса несовершеннолетних детей-сирот, не имеющих приюта и никакой посторонней поддержки существования, граждане города не желают идти навстречу голодающему армянскому молодому поколению, которое в будущем ожидает видеть светлую жизнь и принести пользу родине и армянскому народу, воспитавшему его, как единоверцев.

К великому сожалению, армянское население к таким явлениям не относится индифферентно, а в особенности такое отношение к сиротам замечается со стороны состоятельного класса людей, которые при желании, могли бы поддержать существование сирот, но не желают по той причине, что эти люди слишком жестоки и черствы и у них нет человеколюбия.

Необходимо, чтобы у всех сразу создалось сознание о непременном улучшении несчастных армянских сирот, голодающих и умирающих, вследствие отсутствия приюта, пищи, присмотра и внимания населения. Я со своей стороны в этом направлении принял все зависящие от меня меры, но мне одному выполнить трудную задачу улучшения ужасного положения бесприютных сирот - невозможно, благодаря полному отсутствию денег и продовольствия: поэтому, я обращаюсь с покорнейшей просьбой к населению, обратить должное внимание на настоящее положение сирот, ибо в дальнейшем, при таких условиях, все это может кончиться печальным результатом, а за все это ответственными будем мы, армяне. Параллельно с этим, я приказываю армянскую интеллигентную силу, для

организации общества вспомоществования нуждающимся и умирающим от голода, бесприютным сиротом.

Надеюсь, что мой призыв найдет отклик в душе истинных армян, и мне не придется лишний раз делать напоминания, так как за такое национальное серьезное дело должны все взяться охотно, в противном случае я принужден буду принять принудительные и резкие меры против тех лиц, кои будут уклоняться от этой полезной работы для блага подрастающего армянского поколения.

Желающих записываться, прошу пожаловать в канцелярию начальника города, Генеральская улица, дом Дамиева (бывший уездный Комиссариат).

Еще раз повторяю, что я глубоко уверен и надеюсь на отзывчивые сердца армянского народа: они безусловно пойдут на встречу голодающей массе, чем и исполнят свой гражданский долг. Я же рука об руку буду работать наравне со всеми гражданами для создания приютов сиротных учреждений.

Подлинный подписал: Начальник города Александрополя
Матинян

С подлинным верно: Правитель канцелярии.

ՀԱԱ, ֆ.1021, ց. 2, գ. 1204, ք.15-16: Պատճեն: մեքենագիր:

N 154

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՐԲԱ-
ՆՈՑՆԵՐԻ, ԱՆԿՅԱԼՆԵՐԻ ԵՎ ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ
ԲԱԺՆԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՈՒ ՈՐԲԵՐԻ ՔԱՆԱԿԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

21 մարտի 1921 թ.
Ալեքսանդրապոլ

Առաջին քրթաւնգ

*Որբեր- 400 անձ
ծառայողներ- 24
մայրապետներ- 11
ժամանակատու աշխատողներ- 7*

Երկրորդ որբանոց

*Որբեր- 117 անձ
ծառայողներ- 5
մայրապետներ- 2
ժամանակատու աշխատողներ- 2*

Անկելանոցներ

*անկեալներ- 86 անձ
ծառայողներ- 5
որբանոցի աշխատողներ- 2*

«Մի կաթիլ կաթ» [հանրակացարան]

*Ծծմայրեր- 54 անձ
երեխաներ- 47
ծառայողներ- 5
Որբանոցի աշխատողներ- 7*

Այրիների տուն

*Այրիներ- 161
ծառայողներ - 4
Որբանոցի աշխատողներ- 5*

*Քաղաքային ընդհանուր որբանոցների
և գաղթականների բաժնի լիազոր՝ Ս. Տիգրանեան
Քարտուղար՝ Աղսախալեան*

ՀԱԱ, ֆ. 144, ց.3, գ.171, ք.4-5: Բնագիր: Չեռագիր:

N 155
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՐԲԵՐԻ ԲԱԺՆԻ ԼԻԱԶՈՐԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ
ՈՐԲԵՐԻՆ ՀԱՅ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

21 մարտի 1921 թ.

Ալեքսանդրապոլ

Հաց կամ ցորեն չունենալու պատճառով երեխաներին, ընձեռաներին, ծծմայրերին և ծառայողներին տրուած է 1/4 ֆունտ հաց կամ ցորեն, զարի, իսկ ճաշը պատրաստած է լինում իւրաքանչիւր 400 անձի համար միայն 2 փութ աղցած գարով, ուստի այս նորմայով, ոչ թէ կարող ենք բաւաարարել երեխաներին, այլ նրանց մահացողների թիւն ենք բազմացնում:

Գտնում եմ անհրաժեշտ մինիմումը բարձրացնել 3/4 հաց կամ ցորեն:

Ընդհանուր որբ[անոցի] կոմ[իտե]ի պարէն[ատորման]
բաժնի լիազօր՝ Գր. Մկրտումեան
Քարտուղար՝ Աղսախալեան

ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 171, թ. 1: Բնագիր: Ձեռագիր:

N 156
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՀՐԱՎԵՐԸ ՈՐԲԵՐԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ
ԽՈՐՀՐԴԱԿՅԵԼՈՒ ՍԱՄԻՆ

26 մարտի 1921 թ.

Ալեքսանդրապոլ

Այսօր, ամսիս 26-ին, Շաբաթ օրը ճիշտ ժամը 4-ին, Քաղաքային Վարչութիւնս հրաւիրում է ներքոյ գրեալ յարգելի

անձանց ժողովի Քաղաքային Ինքնավարության շենքում՝
խորհրդակցելու ամսիս 27-ին նշանակած «Որբերի օրուայ»
համար և ընդհանրապես նմանօրինակ կարօտեալների, հաշ-
մանդամների, այրիների և այլն անհրաժեշտ և անյետաձգելի
կարիքները հոգալու մասին՝ այս ծանր և ճգնաժամային
օրերում:

Քաղաքային վարչության անդամ ՝ Գ. Տաթևեան¹²²
Գործավար ՝ Ա. Բրուտեան

1. Գարեգին եպիսկոպոս
2. Քաղաքապետ Ս. Մատինեան¹²³
3. Տիգրանեան Սիրան
4. Բժշկուհի Ե. Կարաօղլանեան
5. Բժշկուհի Եաղճեան
6. Բժշկուհի Դրամիեան
7. Բժշկուհի Չախմախսազեան
8. Բժիշկ Գրիգորեան
9. Բժիշկ Աւետիսեան
10. Բժիշկ Բաբախանեան
11. Կիրակոսեան Նիկողայոս
12. Արովեան Կոստանտին
13. Գրիգորեան Արտաշէս
14. Կարանեան Աշոտ
15. Վարդանեան Յաքէթ
16. Էհրամճեան Յակոբ
17. Եղբարք Սուլեաններ
18. Ջարիֆեան Սողոմոն, Ա. Ջարիֆեան
19. Սկրտումեան Գրիգոր
20. Տիկ. Չոլախեան Աշխեն
21. Օր. Տէր- Աւետիքեան
22. Օր. Մեծ-Բայեան
23. Չախմախեան Էդգար
24. Կարանեան Արամ
25. Օր. Շումեան Հրանուշ

26. Գէօրգեան Յարութիւն
27. Մաղոյեան Ալէքսանդր
28. Հանէսօղեան Լևոն
29. Ժամակոչեան Հմայակ
30. Աւետեան Յովհաննէս
31. Փահլևանեան Յարութ
32. Ոսկանեան Կարապետ
33. Յովհաննիսեան Հմայակ
34. Պօղոսեան Երեմիա
35. Բեհրութեան Պետրոս
36. Իզբաշեան Յարութ

ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 172, ք. 1: Բնագիր: Չեռագիր:

N 157

**ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԱՍՏԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԻ ԺՈՂՈՎԻ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

26 մարտի 1921 թ.
Ալէքսանդրապոլ

1921 թ. 26-ը մարտի: Շաբաթ ճիշտ ժամը 4-ին Քաղաքային ինքնավարութեան շէնքում (քանկի) տեղի ունեցաւ ժողով՝ նախագահութեամբ նոյն Քաղաքային վարչութեան անդամ Գէօրգ Տաթևեանի, համաձայն վերջինի հրաւերի: Ներկայ էին 35 հոգի՝ զանազան խաւերից եկած անձնատրութիւններ, նոյնպէս ամերիկական որբանոցի ուսուցչական կազմի ներկայացուցիչը:

Օրակարգի հարցն էր՝ մարտի 27-ին նշանակուած «Որբերի օրուայ» մասին:

Նախագահը ժողովը բաց անելով յայտնեց, որ վաղը նշանակուած է «Որբերի օր», պէտք է հանգանակութիւն կատարել, ներկայացում տալ և որբեր հաւաքել: Ապա մանրամասը նկարագրելով որբերի խիստ աննախանձելի վիճակը,

որոնք 5-6 հարիւր հոգի հավաքել են քաղաքումս և դեռես հնարատրութիւն չկայ նրանց տեղափոխել ամերիկական որբանոցներում, հրաւիրեց ժողովականներին աջակցութիւն ցոյց տալ վաղայ օրայ հանգանակութեանը: Բացի դրանից առաջարկեց ընտրել մի մնայուն մարմին, որը հսկեր ընդ-հանրապէս նմանօրինակ կարօտեալներին-գաղթականներին: Ժողովը ջերմ ցանկութիւն յայտնելով ընդառաջ գնալ նախագահի կոչին՝ Որոշեց.-

1) Պատրաստել տալ տասը կնքուած թերթեր և քաղաքը բաժանել ութ մասի, իւրաքանչիւրը յանձնել մի խմբի, որը առնուազն բաղկացած պիտի լինի 3 հոգուց և պիտի շրջի տները և խանութները:

2) Պատրաստել տալ 13 կնքուած տուփեր, որոնք պէտք է շրջեցնեն փողոցներում որբերը, առաջնորդութեամբ օրիորդների և տիկիներին

3) Ժողովականներից Գարեգին եպիսկոպոս Յովսէփեանը ցանկութիւն յայտնեց նոյն օրը Աստուածածնի եկեղեցում քարոզ խօսել և հանգանակութիւն անել:

Ժամանակի սղութեան պատճառով մնայուն մարմնի ընտրութիւնները յետաձգուեց յաջորդ անգամին:

Նախագահ ժողովի՝ Գ Տաթևեան
Գործավար՝ Ա. Բրուտեան

ՀԱԱ, ֆ. 144, ց.3, գ. 172, թ. 2: Բնագիր: Ձեռագիր:

N 158

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄԲՆԱԿՎՈՂ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ
ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

26 մարտի 1921 թ.
Ալեքսանդրապոլ

Համաձայն Կարսի գաղթականական խմբի հրաւիրանօք ամսի 26-ին ժամը 12-ին Ալէք[սանդրա]պոլի հոգևոր կառա-

ւարութեան բակում կայացաւ Ալէքսանդրապոլում ապրող բոլոր գաղթականութեան ընդհանուր ժողովը: Ժողովը բացեց քաղաքային վարչութեան անդամ պ. Գէորգ Տաթևեանը, մի քանի խօսքով բացատրեց ժողովականներին ժողովի նպատակը և առաջարկեց ժողովը կառավարելու համար ընտրել նախագահ և քարտուղար: Ժողովը միաձայն նախագահ ընտրեց Գ[էորգ] Տաթևեանին, իսկ քարտուղար՝ Համազասպ քահ[անայ] Ղարազէօզեանին: Ժողովականները ի նկատի ունենալով ժամանակի լրջութիւնը, առանց երկար ճառաբանութիւնների մէջ մտնելով ցանկացան ընտրել մի մարմին կոմիտէ անունով, որը մտնելու է Ալէքսանդրապոլի քաղաքային վարչութեան մէջ և հոգալու է քաղաքում ապրող բոլոր գաղթականների կարիքները և առաջարկեց միաձայն ընդունել նախագահ կոմիտէի համար Գէորգ Տաթևեանին Կարսի և շրջանի կողմից: Միաձայն ընտրուեցին անդամները՝ Առաքել Բալոյեան, Բենիամին Պետրոսեան, Համբարձում Ղարազէօզեան, Գաբրիէլ Չատիկեան և Աւետիս Վարդանեան, իսկ անձնափոխանորդներ՝ Եղիշէ քահ[անայ] Տէր Գիրգորեան և Թորգոմ Տէր-Սահակեան: Ալէքսանդրապոլի շրջանից նոյնպէս միաձայն ընտրուեցին անդամներ կոմիտէի համար՝ Նիկողայոս Կիրակոսեան, Յաբէթ Վարդանեան, Արտաշէս Գրիգորեան, Արամ Տէր-Միքայէլեան և Սեդրակ Սահակեան, իսկ անձնափոխանորդներ՝ Աւետիք Աղբալեան և Սարիբէկ Մխիթարեան:

Կոմիտէի կազմը ընտրուեց ժամը 11-ին, ժողովը փակուեց ժամը 1-ին:

Նախագահ ժողովի՝ Գ. Տաթևեան
Քարտուղար՝ Համազասպ Ղարազէօզեան

ՀԱԱ, ֆ. 144, ց.3, գ. 173, ք.2: Բնագիր: Չեռագիր:

N 159

**ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ Գ. ՏԱԹԵՎՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ՈՐԲԱՆՈՅԻ ԿԱՌԱՎԱՐՉԻՆ՝
ՄԱՔՐՈՒԹՅԱՆԸ ՀԵՏԵՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

28 մարտի 1921 թ.
Ալեքսանդրապոլ

Վարչությունս սրանով խնդրում է Ձեզ երեք օրուայ ընթացքում Ձեր խնամքին յանձնուած որբանոցների անմաքրութիւնները հաւաքել տալ, որտեղից քաղաքի սայլերը կտեղափոխեն, ուր որ հարկն է: Իսկ այնուհետև անպայման իւրաքանչիւր օրուայ անմաքրութիւնները լցնել տալ թաղային աղբանոցը:

Քաղաքային վարչութեան անդամ,
խնամատարութեն բաժնի վարիչ՝ Գ. Տաթևեան
Գործավար՝ Ա. Բրուտեան

ՀԱԱ, ֆ.144, ց. 3, գ. 174, ք.2: Բնագիր: Ձեռագիր:

N 160

**ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ՝ ԳԱՂԹԱԿԱՆ-
ՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐԸ ԲԱԺՆԻՆ
ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

29 մարտի 1921 թ.
Ալեքսանդրապոլ

Որովհետև վարչութեանս կից հիմնուած է խնամատարական բաժին, որի հսկողութեանն են յանձնուած ի տես այլոց և գաղթականութեան հոգաւորիւնը, այլև նոյն բաժնին

կից կազմուած է մի կոմիտէ նրանց հոգածութեան համար, ուստի սրանով խնդրում ենք Ձեզ՝ այսուհետև գաղթականների վերաբերեալ բոլոր գործերը ուղարկել յիշեալ խնամատարութեան բաժնի վարիչին իրազէկ կացուցանելու նոր կոմիտէին:

Քաղաքային վարչութեան անդամ՝
Գործավար՝ Ա. Բրուտեան

ՀԱԱ, ֆ. 144, ց.3, գ.173, ք.3: Բնագիր: Ձեռագիր:

N 161

**ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ Գ. ՏԱԹԵՎՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՔԱՂԱՔԻ ԵՐԿՐՈՐԴ ՈՐԲԱՆՈՅԻ ԿԱՌԱՎԱՐՉԻՆ
ՄԱՔՐՈՒԹՅԱՆԸ ՀԵՏԵՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

29 մարտի 1921 թ.
Ալեքսանդրապոլ

Վարչութիւնս սրանով խնդրում է Ձեզ երեք օրուայ ընթացքում Ձեր խնամքին յանձնուած որբանոցների անմաքրութիւնները հաւաքել տալ նոյն թաղում նշանակուած աղբանոցում, որտեղից քաղաքի սայլերը կտեղափոխեն ուր որ հարկն է: Իսկ այնուհետև անպայման իւրաքանչիւր օրուայ անմաքրութիւնները լցնել տալ թաղային աղբանոցը:

Քաղաքային վարչութեան անդամ,
խնամատարութեան բաժնի վարիչ՝ Գ. Տաթևեան
Գործավար՝ Ա. Բրուտեան

ՀԱԱ, ֆ. 144, ց.3, գ. 174, ք.2: Բնագիր: Ձեռագիր:

N 162

**ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ Գ. ՏԱԹԵՎՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԼԻԱԶՈՐԻՆ ԳՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐԵԼՈՒ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

29 մարտի 1921 թ.

Ալեքսանդրապոլ

Վարչութիւնս սրանով խնդրում է Ձեզ՝ 1) Այսուհետև Ձեր
խնամքին յանձնուած հիմնարկութիւնների բոլոր գրագրութիւն-
ները ուղարկել վարչութեան խնամատարութեան բաժնի
վարիչին 2) Հաշվապահութիւնը պէտք է դնել կանոնաւոր
հոդի վրայ, որպէսզի հարկաւոր դէպքում առանց դժարու-
թիւնների կարելի լինի ներկայացնել թէ վարչութեան և թէ
ինքնավարութեան կողմից նշանակուած իւրաքանչիւր քննիչ
յանձնաժողովի 3) Հաղորդել իւրաքանչիւր հիմնարկութեան
մէջ ընդունուած և արձակուած անձնաւորութիւնների մասին
պատշաճաւոր բացատրութեամբ:

Քաղաքային վարչութեան անդամ,
խնամատարութեան բաժնի վարիչ՝ Գ. Տաթևեան
Գործավար՝ Ա. Բրուտեան

ՀԱԱ, ֆ.144, ց.3, գ. 171, թ. 6: Բնագիր: Ձեռագիր:

N 163

**ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ Գ. ՏԱԹԵՎՅԱՆԻ ԿԱՐԳԱԴՐՈՒ-
ԹՅՈՒՆԸ ՈՐԲԱՆՈՅՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱԿԱՅԱՐԱՆՆԵՐԻ
ՎԵՐԱՀՄԿԻՉԻՆ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՐՅԵՐԸ
ԿԱՐԳԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

31 մարտի 1921 թ.

Ալեքսանդրապոլ

Վարչութիւնս հրաւիրում է Ձեր ուշադրութիւնը հետևեալ-ների վրայ.

1. Աչքի առաջ ունենալով գաղթականութեան ներկայ ամենաժանր ճգնաժամային վիճակը, աւելի քան պէտք է լարել Ձեր ոյժերը, հետևել նրանց տեղաւորելու մասին, որոնք հետզհետէ հոծ բազմութեամբ Կարսից լցուում են քաղաքս:

2. Իւրաքանչիւր օր անպայման այցելել բոլոր հանրա-կացարանները և տալ Ձեր ստացած տպաւորութիւնները մեզ գրաւոր:

3. Ընդհանրապէս Ձեր բոլոր գործունէութեան շրջանում ճշտիւ առաջնորդուել Վարչութեանս հրահանգներով, և

4. Խստիւ հետևել սանիտարական գործին՝ բոլոր հան-րակացարաններում, որոնց մասին Վարչութիւնս արդէն արել է հարկաւոր տնօրինութիւնը:

Քաղաքային վարչութեան

Խնամատարութեան բաժնի վարիչ՝ Գ. Տաթևեան

Գործավար՝ Ա. Մարտիրոսեան

ՀԱԱ, ֆ. 144, ց.3, գ.173, թ.4: Բնագիր: Ձեռագիր:

N 164

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՒՅՅ ԿՈՄԻՏԵԻ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉ ԲՐԱՈՒՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ ԳԵՎՈՐԳ ՏԵՐ-
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՔԱՂԱՔԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՂՈՐԴԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1 ապրիլի 1921 թ.

Ալեքսանդրապոլ

Կազաչի-պոստ

Սորանով պարտք են համարում յիշեցնելու Ձեզ մեր նախընթաց օրուայ խօսակցութիւնը և խնդրելու, որ ըստ կարելոյն շուտ և ստոյգ տեղեկութիւններ հաղորդել մեզ Ալեքսանդրապոլ քաղաքի դրութեան մասին, որը պիտի նոյնութեամբ հաղորդել Տփղիս կապիտան Եարոյին:

ՀԱԱ, ֆ. 144, ց.1, գ. 91, ք.1: Բնագիր: Ձեռագիր:

N 165

**ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ Գ. ՏԱԹԵՎՅԱՆԻ ՀՐԱՎԵՐԸ
ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ԳԱԹԱ-
ԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԺՈՂՈՎԻՆ
ՄԱՄՆԱԿՑԵԼՈՒ**

1 ապրիլի 1921 թ.
Ալեքսանդրապոլ

Ամսիս 2-ին, Շաբաթ օրը ճաշից առաջ, ժամը 10-ին գաղ-թականական կոմիտէի յարգելի անդամները հրախրուում են ժողովի:

Օրակարգի հարցերն են՝ գաղթականութեան մասին:

Քաղաքային Վարչութեան անդամ՝ Գ. Տաթևեան

Մատինեան Սարգիս

1. Առաքել Բալոյեան

2. Բենիամին Պետրոսեան

3. Համբարձում Ղարազէօգեան

4. Գաբրիէլ Չատիկեան

5. Աւետիս Վարդանեան

6. Նիկողայոս Կիրակոսեան

7. Յաբէթ Վարդանեան

8. Արտաշէս Գրիգորեան

9. Արամ Տէր- Միքայէլեան

10. Սեդրակ Սահակեան

ՀԱԱ, ֆ. 144, ց.3, գ.173, ք. 5: Բնագիր: Չեռագիր:

N 166

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ԿՈՍԽՏԵՒ
ԱՊՐԻԼԻ 2-Ի ՆԻՍՏԻ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

2 ապրիլի 1921 թ.

Ալեքսանդրապոլ

Շաբաթ ցերեկուայ ժամը 11-ին Ալեք[սանդրա]պոլի Քաղաքային Վարչութեան շէնքում տեղի ունեցավ գաղթականական կոմիտէի առաջին նիստը նախագահութեամբ Խնամատարական բաժնի վարիչ Գէորգ Տաթևանի: Ներկայ էին 6 անդամներ: Բացակայ էր Քաղաքապետ Ս. Մատինեանը:

Օրակարգի հարցերն էին՝

- 1) Գաղթականութեան մասին զեկուցումներ
- 2) Գաղթականներին գիւղերը վերադարձնելու մասին և
- 3) Նրանց օգնութիւն հասցնելու մասին

Առաջին հարցի համար նախապէս գրաւոր դիմում էր եղել Քաղաքապետ Ս. Մատինեանին՝ զալ ժողովի և բերել իր հետ բոլոր գրաւոր տւեալները գաղթականութեան մասին և տալ իր զեկուցումը ընդհանարապէս, բայց նրա բացակայութեան պատճառով գաղթականների ներկայ կացութեան մասին զեկուցեց նախագահը, որից պարզուեց, որ նրանց դրութիւնը խիստ ծանր էր և կրիտիկական, մանաւանդ այդ հանգամանքը բարդանում է հետզհետէ քաղաքս թափուող Կարսի գաղթականների հոծ բազմութեան պատճառով, որոնց օգնութեան հասնել առայժմ խիստ ծանր է:

Երկրորդ հարցի մասին ժողովականներից Համազասպ քահանայ Ղարազէօգեանը զեկուցեց, որ գաղթականների առաջին խումբը, որ ճանապարհ էր գցում դէպի Մօլլագետօկ-

չայ, պատահել է դժբախտութեան, նրանցից մի քանիսը խեղդուել է վարարած գետակում, իսկ մնացեալները անց կենալով Չեզոք գոտու սահմանը՝ ենթարկում են ուրիշ ասկէարների կողմից թալանի:

Ժողովը այս զեկուցման հիման վրայ՝ յանձնարարեց յիշեալ քահանային և իր ընկեր անդամներին՝ ստուգել անցքի մասին, ումից հարկն է և զեկուցանել, հետևալի մասին, իսկ մինչ այդ՝ առայժմ դադարեցնել գաղթականութեան վերադարձը դէպի գիւղերը և սպասել պ. Մատինեանից ստանալիք ընդհանուր տեղեկութիւններին գաղթականութեան մասին:

Օգնութեան հարցի մասին նախագահը յայտնեց, որ դարձեալ պէտք է սովորական հանգանակութեան ընդունում ձևերը գործ դնել, օրինակ, հանգանակութիւն, ներկայացում և այլն, սակայն գաղթականական կոմիտէի անդամների վրայ պարտք է դրում մտնել բոլոր հանրակացարանները, ստուգել ամենաթշուառ որբերին, այրիներին և կարիքաւորներին ընդհանրապէս, որոնց մասին Վարչութիւնը կհոգայ տեղավորել նրանց իրենց պատշաճաւոր հիմնարկութիւնները՝ խնամելու համար:

Նախագահ ժողովի՝ Գ. Տաթևեան
Գործավար՝ Ա. Բրուտեան
Անդամներ Համբարձում Ղարազէօզեան
Առաքել Բալոյեան
Աւետիս Վարդանեան
Արտաշէս Գրիգորեան
Գաբրիէլ Չատիկեան
Բենիամին Պետրոսեան
Յաքէթ Վարդանեան

ՀԱԱ, ֆ.144, ց.3, գ.173, ք. 6-7: Բնագիր: Չեռագիր:

N 167

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԲԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ Գ. ՏԱԹԵՎՅԱՆԻ
ՀԱՎԱՍՏԱԳԻՐԸ ՍՐԱՊԻՈՆ ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ
ՈՐԲԱՆՈՅՆԵՐԻ ՎԵՐԱՀՄԿԻՉ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

3 ապրիլի 1921 թ.
Ալեքսանդրապոլ

Տրում է սոյն հաւաստագիրը Սրապիոն Տեր-Միքայելեանին, այսուհետև նա զաղթականական հանրակացարանների և որբանոցների վերահսկիչն է, որ և խնդրում է պատշաճաւոր իշխանութիւններից աջակցութիւն ցոյց տալ նրան իր գործունէութեան գործում:

Խնամատարութեան բաժնի վարիչ՝ Գ. Տաթևեան
Գործավար՝ Ա. Բրուտեան

ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 173, ք. 7: Բնագիր: Չեռագիր:

N 168

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԲԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ Գ. ՏԱԹԵՎՅԱՆԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐԲԱՆՈՅՆԵՐԻ ԼԻԱԶՈՐԻՆ՝ ՈՐԲԵՐԻ
ՓԱԽՈՒՄՏԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

4 ապրիլի 1921 թ.
Ալեքսանդրապոլ

Չնայելով Խնամատարութեան բաժնի վարչութեանս ձեռք առած բազմատեսակ միջոցների, որով կարելի լինի փողոցներում երևացող որբերի քանակը կրճատել, և այդ նպատակի համար անմիջապէս պատահածները ուղարկում են որբանոցները, սակայն դրան հակառակ դժբախտաբար ճշտում է,

որ ուղարկուած որբերը կրկին վերադառնում են փողոց: Մեզ թու՛մ է և մասամբ ստացուած տեղեկութիւններից պարզու՛մ է, որ այս բանը կատարու՛մ է գլխաւորապէս որբանոցների կառավարիչների գիտութեամբ և թոյլտութեամբ, ինչպէս վկայու՛մ են իրենք՝ որբերը, որպէսզի հանգամանքը առաջ է բերու՛մ շատ անցանկալի անախորժութիւններ, օրինակ՝ դուրս մնացած որբերը գիշերները պատահու՛մ են պահակների և նրանց տեղաւորելու համար բախու՛մ են իւրաքանչիւր պատահած դուռ, որից առաջ են գալիս աներևակայելի հետևանքներ, որոնց մեկի ներկայ եմ եղել ես ինքս:

Վերոյիշեալների հիման վրայ սրանով առաջարկու՛մ է Ձեզ՝ այսուհետև ձեռք առնէք ամենախիստ միջոցներ, որպէսզի Ձեր խնամքին յանձնուած որբանոցների կառավարիչները զսպեն որբերին և առիթ չտան նմանօրինակ դէպքերի կրկնութեան:

Խնամատարութեան բաժնի վարիչ՝ Գ. Տաթևեան
Գործավար՝ Ա. Բրուտեան

ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 171, ք. 8-9: Բնագիր: Ձեռագիր:

N 169

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԲԱՂԱԲԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ Գ. ՏԱԹԵՎՅԱՆԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԼ ՊԵՏԻՆ ՀԱՆՐԱԿԱՅԱՐԱՆՆԵՐԸ
ՔԱՆԴԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

4 ապրիլի 1921 թ.
Ալեքսանդրապոլ

Սրանով պատիւ ունեմ յայտնել Ձեզ, որ առաջին քաղաքամասում գտնուած Ս. Նշան հանրակացարանը և 2-րդ քաղաքամասում գտնուած մախկին երկաթուղային հանրակացարանը (Էիրամճեանի տունը) քանդու՛մ են, որի համար

խնդրում եմ գործ դնել հնարաւոր միջոցները յիշեալ ապօրինութեանց առաջն առնելու:

Խնամատարութեան բաժնի վարիչ՝ Գ. Տաթևեան
Գործավար՝ Ա. Բրուտեան

ՀԱԱ, ֆ.144, ց.3, գ. 173, ք.8: Բնագիր: Ձեռագիր:

N 170

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԲՆԱԿԻՉ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
ԽՆԴԻՐԸ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԱՍՏԱՍ-
ՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՎԱՐՉԻՆ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ
ԿՈՂՄԻՅ ՏՆԵՐԸ ՔԱՆԴԵԼԸ ԱՐԳԵԼԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

7 ապրիլի 1921 թ.
Ալեքսանդրապոլ

Իմ տունս, որ գտնուում է Պուշկինեան և Վակգալեան փողոցների անկիւնում գտնուում և բնակւում են գաղթականներ, որոնք քանդում են դռները, լուսամուտները, պօլերը և միւս փայտեղէնը: Մի մասը վառում են, միւսը տանում ծախում: Եվ այժմ էլ շարունակում են իրենց անտանելի արարքները, մնացած մասերն էլ են քանդելու և ծախելու:

Սրա հետ նաև աւելացնում եմ, որ իմ այդ տան հայաթում գտնուում են շատ մէծ քանակութեամբ ապականութիւն այդտեղ կեցող գաղթականների կողմից պատճառած, որ ներս մտնել հայաթը անկարելի է մարդկանց համար, որ կարելի է վարակուել և հիւանդանալ:

Յայտնում եմ, որ իմ այդ վերոյիշեալ տանս հայաթում կան շատ մեռածների դիակներ, որոնք փոքր ինչ ծածկուած են իբր թէ քաղուած են և որոնք քցած են նախքին արտաքնոցի փոսի մէջ:

Յայտնելով այս բոլորի մասին խոնարհաբար խնդրում են պատշաճատոր կարգադրություն, որ խստիւ արգելուեն այլևս շարունակել ջարդել, կոտորել և ատերակ դարձնել տունս, որտեղ կենում են իրենք գաղթականները: Նաև կարգադրել, որ մաքրեն հայաթի անմաքրությունը կամ կեղտոտությունները և թէ մեռելների դիակները տեղափոխեն այդ տեղից:

Յովհաննիսեան

ՀԱԱ, ֆ. 144, ց.3, գ. 174, ք. 7: Ինքնագիր:

N 171

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ ԳԵՎՈՐԳ ՏԵՐ-
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՐԻԿՅԱՆ
ՆՊԱՍՏԱՍՏՈՒՅՑ ԿՈՄԻՏԵԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉ
ԲՐԱՌՆԻՆ ՔԱՂԱՔԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

8 ապրիլի 1921 թ.

Ալեքսանդրապոլ

Ի հետումն Ձեր ամսոյս 4-ին ուղարկած գրութեան Քաղաքային Վարչութիւնս պատիւ ունի յայտնել Ձեզ իր խնամքին յանձնուած քաղաքի ներկայ դրութեան մասին հետևեալը.

1. Քաղաքի երկու հիւանդանոցներում կան 200 մահճակալներ և 76 ծառայողներ.

Հիւանդանոցները միանգամայն զուրկ են դեղորայքից, իսկ հիւանդները բացի օրական 1/2 ֆ. չոր հացից ուրիշ ոչ մի մթերք չեն ստանում:

2. Երեք որբանոցներում կան 820 որբեր

3. Անկէլանոցում՝ 90 անկէալներ

4. «Մի կաթիլ կաթ» հանրակացարանում՝ ծծմայրեր և ծծկեր երեխաներ-117

5. Այրիների հանրակացարանում՝ 161 այրիներ:

Վերջին չորս հանրակացարաններում կան 51 ծառայողներ և 18 մայրապետներ:

6. Երեխաների հանրակացարանում կան գաղթականներ, որոնք մեծ մասամբ Կարսից և նրա շրջանից են գաղթել, իսկ մնացածը՝ Ալեքսանդրապոլի շրջանից, սրանց թիւն է 13000 հոգի, իսկ մասնատոր տներում դրանց կրկնապատկեր:

7. Քաղաքիս ազգաբնակչութեան թիւն է մօտորապէս 40000, որոնք ըստ մեծի մասի գրկուած են աշխատատոր ձեռքերից:

Իսկ ինչ վերաբերում է ընդհանրապէս բնիկ և եկտոր ազգաբնակչութեան մասին, արդէն տոկայի է:

ա) Շրջանիս հիւսիսային բոլոր գիւղերը թալանուած են և բնակիչների մի մասը սպանուած և մի մասն էլ գերուած է:

բ) Չկայ ոչ մի անասուն լծկան կամ կաթնատու,

գ) Յանքս անելու հնարատորութիւն չկայ, որովհետև գրաւուած են բոլոր անասունները, սերմացուն խլուած է և երիտասարդութիւնը գերի տարուած:

դ) Բոլոր երկրագործական գործիքները բռնագրաւուած են. ապագայ ցանքսի 1/100-ն էլ չի կարող կատարուել:

ե) Կաթնատու անասունների խլուելով և Կարսի շրջանի, որը Ալեքսանդրապոլի շտեմարանն էր, վերջինի հաղորդակցութիւնից խզուելով, ստեղծուել է կաթնատնտեսական մթերքների կատարեալ սով:

զ) Խիստ զգալի է ի թիւս այլոց նոյնպէս աղի, մագութի նաւթի պակասութիւն:

է) Վառելաւայտի կատարեալ բացակայութեան պատճառով քանդուեցին և հետզհետէ քանդում են գրեթէ բոլոր աջի ընկնող շինութիւնները:

ը) Թէ՛ պետական և թէ՛ հասարակական բոլոր պահեստները տարուած են.

թ) Տեղական արկա բնակչութեան 90 %-ից աւելին թափուած է գաղթականութեան հետ միասին, եթէ մօտ ժամանակամիջոցում դրութիւնը չփոխուի, կանգնած կլինի մեծ աղէտի առաջ և եթէ այժմ սովամահութեան դէպքերը մեծ

տոկոս չեն կազմում, սակայն նրանց աճումը նկատելի է արդեն և այսպիսի աննպաստ պայմաններում, անշուշտ, վերջին հնարատրությունը կլինի և [նաև] ամբողջ ազգաբնակչության ոչնչացումը:

ժ) Գաղթականները զրկուած են ամենաանհրաժեշտ պիտոյքներից՝ չունեն անկողին, հագուստ, իսկ տնային ամենաանհրաժեշտ իրերի մասին խօսելն անգամ աւելորդ է: Հանրակացարաններում որբերի և միւս կարօտեալների մերկութիւնը աչքի է ընկնում բառիս լայն մտքով:

Ժա) Որբերի, անկեալների, այրիների մէջ մահացութեան դէպքերը արդէն մեծ չափերի են հասնում, սննդի կատարեալ բացակայութեան պատճառով քանակը հասցուած է մինիմումի – 1/4 ֆունտ գարի, այդպիսի նորման շատ կարճ միջոցում հաւասար կլինի 0-ի:

Մի խոսքով ներկան խիստ կրիտիկական է և տխուր, իսկ ապագան մռայլ և յուսահատ:

Ալեք[սանդրա]յովի Քաղաքագլուխ

ՀԱԱ, ֆ. 144, ց.1, գ. 91, ք. 3-4: Բնագիր: Ձեռագիր:

N 172

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ Գ. ՏԱԹԵՎՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌԱՊԵՏ Ս. ՄԱՏԻՆՅԱՆԻՆ

13 ապրիլի 1921 թ.

Ալեքսանդրապոլ

Խնդրում եմ՝ մարտի 27-ին տեղի ունեցած «Որբերի օրուայ» հանգանակութեան վերաբերեալ բոլոր փաստաթղթերը, դեռ դրամարկդ չմտցրած գումարների ստացագրերը ներկայացման տոմսերի հետ միասին ուղարկել Վարչութեանս, որպէսզի կարելի լինի բոլոր հաշիւները փակել և ներկայացնել ում որ հարկն է:

*Քաղաքային վարչության անդամ՝ Գ. Տաթևեան
Գործավար՝ Ա. Բրուտեան*

ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 172, ք. 4: Բնագիր: Ձեռագիր:

N 173

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ Գ. ՏԱԹԵՎՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՎԱՌԱ-
ՊԵՏ Ս. ՄԱՏԻՆՅԱՆԻՆ ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԻՍՏԻՆ ՆԵՐԿԱ ՉԳՏՆՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

13 ապրիլի 1921 թ.

Ալեքսանդրապոլ

Ամսիս 2-ին նշանակուած գաղթականական կոմիտէի նիստին Դուք հրաւիրուած էիք, բայց ներկայ չեղաք, իսկ այսօր ճաշից յետոյ ժամը 4-ին նշանակուած ժողովին խնդրում ենք Ձեզ անպայման ներկայ լինել, որովհետև Ձեր ներկայութիւնը անհրաժեշտ է, իսկ մինչ այդ բարեհաճեցէք ուղարկել կամ անձամբ Ձեզ հետ բերել գաղթականութեան տեղափոխութեան և ընդհանրապէս սրանց վերաբերեալ գրագրութիւնների, տաճկաց հրամանատարութեան կարգադրութիւնների, եթէ ոչ իսկականները, զոնէ դրանց պատճէնները: Ինչպէս նաև կարևոր է տալ տեղեկութիւններ, թէ գաղթականները որ գիտէրն են ուղարկուելու և ինչ կերպ:

*Քաղաքային վարչության անդամ
Խնամատարութեան բաժնի վարիչ՝ Գ. Տաթևեան
Գործավար՝ Ա. Բրուտյան*

ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 173, ք. 10: Բնագիր: Ձեռագիր:

N 174

**ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ Գ. ՏԱԹԵՎՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

**ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԿԱՅԱՐԱՆԻ ՊԱՐԵՏ ՀՅՈՒՄԵՒՆ
ԲԵԿԻՆ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԹԱԼԱՆՆ ԱՐԳԵԼԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

13 ապրիլի 1921 թ.

Ալեքսանդրապոլ

Մենք խնդրել էինք կայարանի կոմենդանտից, որ երբ գաղթականական գնացք գալու լինի, նախապէս իմաց տրուի, որ հոգացուի սրանց տեղափոխութեան մասին, սակայն այդ բանը չկատարուեց երեկոյեան գաղթականութեան գալու ժամանակ, որի պատճառով առաջ եկան խիստ անախորժ դէպքեր, այն է՝ գաղթականները ենթարկուեցին կատարեալ թալանի:

Որպէսզի նոյնը չկրկնուի ապագայում, սրանով խնդրում ենք Ձեզանից, յարգելի կոմենդանտ այսուհետև բարեհաճէք նախապէս իմաց տալ Վարչութեանս գալիք գաղթականութեան գնացքի մասին, որպէսզի կարելի լինի նմանօրինակ անախորժութիւնների առաջն առնել:

Ուշացած և անժամանակ եկած գաղթականութեանը խնդրում ենք պահեք վագոններում պահապանների պահպանութեան տակ մինչև առաւօտ:

Քաղաքային վարչութեան անդամ

Խնամատարութեան բաժնի վարիչ՝ Գ. Տաթևեան

Գործավար՝ Ա. Բրուտեան

Այս գրութիւնը թարգմանուեց և ուղարկուեց կոմենդանտին:

Գործավար

ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 173, թ. 9: Բնագիր: Ձեռագիր:

N 175

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ

**ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ Գ. ՏԱԹԵՎՅԱՆԻ ՀՐԱՎԵՐԸ ԳԱՂԹԱ-
ԿԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՄԱՄՆԱԿՑԵԼՈՒ
ԳԱԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԺՈՂՈՎԻ**

14 ապրիլի 1921 թ.
Ալեքսանդրապոլ

Ամսի 14-ին, Հինգշաբթի ճաշից յետոյ, ժամը 3 անց կէսին
գաղթականական կոմիտէի յարգելի անդամները հրաւիրու-
են ժողովի Ինքնավարութեան շէնքը՝ Վարչութեան խնամա-
տարութեան բաժնի վարիչի գրասենեակում:

Օրակարգ՝ գաղթականութեան մասին:

Քաղաքային վարչութեան անդամ՝ Գ. Տաթևեան
Մատինեան Սարգիս

Վարչութեան անդամներ

1. Առաքել Բալոյեան
2. Բենիամին Պետրոսեան
3. Համբարձում Ղարազէօգեան
4. Գաբրիէլ Չատիկեան
5. Աւետիս Վարդանեան
6. Նիկողայոս Կիրակոսեան
7. Յարէթ Վարդանեան
8. Արտաշէս Գրիգորեան
9. Արամ Տէր-Միքայէլեան
10. Սեդրակ Սահակեան

ՀԱԱ, ֆ. 144, ց.3, գ.173, թ. 12: Բնագիր: Չնուագիր:

N 176

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԲԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի ՆԻՍՏԻ
ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

14 ապրիլի 1921 թ.
Ալեքսանդրապոլ

1921 թ. 14-ին ապրիլի ճ[աշից] յ[ետոյ] ժամը 3-ին Քաղաքային Ինքնավարության շէնքում (նախկին Աստորիա հիւրանոց) տեղի ունեցավ գաղթականական կոմիտէի երկրորդ նիստը նախագահութեամբ Քաղաքային Վարչութեան անդամ Գէորգ Տաթևեանի և քարտուղարութեամբ Ա. Բրուտեանի: Ներկայ էին 8 անդամներ: Բացակայ էր ի թիւս այլոց և գաւառապետ Ս. Մատինեանը:

Օրակարգ՝ գաղթականութեան մասին

Նախագահը զեկուցեց գաղթականութեան ներկայ վիճակի մասին: Որ այժմ համեմատաբար սպասածից լաւ է, շնորհիւ Վարչութեան և նրա տրամադրութեան տակ եղած պաշտօնէաների ձեռք առնուած ամենախիստ միջոցների: Օրինակ՝ այժմ բոլոր գաղթականները տեղաւորուած են իրենց յատկացրած բնակարաններում, մինչդեռ առաջ թափուած էին փողոցներում բացօթեայ: Նորեկ գաղթականներին կայարանից տեղափոխելու համար ինքը՝ նախագահն է գնացել քանիցս անժամանակ և վերջապէս տաճկաց հրամանատարութեանը դիմում անելու և օգնութիւն ստանալու շնորհիւ հնարաւոր է եղել նրանց բերել և տեղաւորել:

Որբերը միշտ հաւաքուել և տարուել են որբանոցները, որ տեղից իրեն հերթին հետզհետէ տեղաւորում են ամերիկական որբանոցներում: Միայն գիւղերը տեղաւորելու հարցն է առկախ մնացել և այն՝ մասամբ Գաւառապետ Ս. Մատինեանի կողմից նախնական լրիվ տեղեկութիւններ չստանալու պատճառով, չնայելով, որ քանիցս անգամ դիմում է եղել թէ բանաւոր և թէ գրաւոր:

Այս հարցի մասին՝ Համագասպ քահ[անա] Դարագեղոսեանը իր ընկերների հետ յայտնեց, իրենք ստուգել են դէպի Սօլլագեոկչայ գնացած առաջին խմբի հետ պատահած դժբախտութիւնները, որ արդարև, ճիշտ են եղել:

Ժողովը որոշեց ընտրել ներկայացուցիչներ կոմիտեի կողմից՝ Վարդանեանին և Առաքել Բալոյեանին, անձամբ գնալ Մատինեանի մօտ և խօսել տեղափոխութեան ապահովութեան հարցի մասին:

Եղան առաջարկներ ա) ընտրել կոմիտեից անդամ ներկայացուցիչներ, որոնք առաջնորդեն տեղափոխուող գաղթականներին մինչև իրենց գիւղերը բ) խնդրել ումից հարկն է, որ առաջնորդող պահակները-ասկետար և միլիցիօներ անցնեն չեզոք սահմանը և հասցնեն մինչև նշանակուած գիւղերը: Առաջին հարցը մնաց անկախ, մինչև որ կպարզուի ծանապարհների անվտանգութեան հարցը, իսկ երկրորդը ընդունուեց ժողովի կողմից միաձայն:

Օգնութեան հարցի մասին նախագահը ասաց, որ Վարչութիւնը ըստ ամենայնի աշխատում է այդ նպատակի համար իր ամբողջ ուժերի լարումով, որին ապացոյց կարող են լինել 1) «Որբերի օրը» (մարտին), որը տուեց 22 միլիոնի չափ, որի հաշիւները դեռ չեն փակուած՝ Մատինեանից վերջնական հաշիւ չստանալու պատճառով և 2) Կազաչի պօստում ամսիս 2-ին տրուած երեկոն, որը տուեց մօտ երեսուն միլիոն: Իսկ հիմայ էլ մօտ օրերումս պէտք է կազմակերպել «Սովեալների օր»:

Կոմիտեն գոհ մնալով նախագահի բացատրութիւններից իր կողմից առաջարկեց պատրաստականութիւն՝ աջակցել ինչում որ կարևորութիւն կը զգացուի: Ժողովը որոշեց՝ կոմիտեի անդամների վրայ պարտականութիւն դնել՝ ա) օգնել գաղթականութեանը՝ իւրաքանչիւր գնացք գալու ժամանակ՝ կայարանից քաղաք տեղափոխելու անվտանգ բ) օժանդակել վերահսկիչներին հանրակացարաններում մաքրութեան և ընդհանրապէս նրանց վերաբերեալ անմիջական կարիքներին օգնութիւն հասցնելուն և գ) հսկել հանրակացարանների շէնքի և գոյքի ամբողջութիւնը:

Որպէսզի կոմիտեի անդամները իրենց գործունէութեան ասպարէզում արգելքների և խոչընդոտների չհանդիպեն, որոշեց՝ Քաղաքային Վարչութիւնից ստանալ վկայագիր նրանց

պաշտօնի մասին:

Ժողովի նախագահ՝

Քաղաքային վարչության անդամ՝ Գ. Տաթևեան

Գործավար՝

Ա. Բրուտեան

ՀԱԱ, ֆ. 144, ց.3, գ.173, ք. 13-14: Բնագիր: Ձեռագիր:

N 177

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՀԱՆՐԱԿԱՅԱՐԱՆՆԵՐԻ
ՈՐԲԱՆՈՑՆԵՐԻ. ԱՆԿԵԼԱՆՈՑՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՎԵՐԱՀՄԿՉԻ ՁԵԿՈՒՑԱԳԻՐԸ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ
ՎԱՐԻՉԻՆ՝ ԼԻԱԶՈՐ ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՉՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

16 ապրիլի 1921 թ.

Ալեքսանդրապոլ

Սրանով յայտնում եմ ի գիտութիւն, որ իմ վերահսկողութեան ամբողջ ժամանակամիջոցում, որբանոցներում, անկեւանոցներում, այրիների տներում և հանրակացարաններում, ամէն տեղ ճանաչեցին ինձ տուած իրաւունքները, բացի այն մասերից, ուր լիազօրում է Սիրան Տիգրանեանը իր ծառայակիցներով:

Սի շաբաթուայ անընդհատ գնալով եկայ այն եզրակացութեան, որ ծառայողները բացի իրենց սեփական լիազօրից (անկեւանոց, առաջին որբանոց, երկրորդ որբանոց և այրիների տուն) ոչ ոքի ճանաչել չեն ուզում, առաջին օրերում մինչև անգամ կոպիտ ձևերով, իսկ վերջին օրերիս խիստ զրադուած լինելով Ձեր կարգադրութիւններով, յանձնարարեցի առաջին քաղաքամասի վերահսկչին, որ անպատճառ ստուգումն կատարի, որի զեկուցումից դարձեալ երևաց, որ զանազան պատճառաբանութիւններով և կատակի առարկա դարձնելով ոչինչ հաշիվ չեն տալիս: Որպէսզի խոյս տուած

լինեմ մանրամասնություններից և թիրիմացություններից, այս բոլորից յետոյ, ես եկայ այն եզրակացութեան, որ յարգելի լիազօրը իր ծառայակիցներով չի ուզում ճանաչած լինել վարչութեան կողմից նշանակուած վերահսկիչներին և լիազօրներին: Իմ կողմից անհրաժեշտ եմ գտնում վերացնել որբանոցին կից այդպիսի պաշտօնը (լիազօրներ):

Ընդհանուր վերահսկիչ` Սկրտիչ Մանուկեանց

ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 171, ք.11: Ինքնագիր:

N 178

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԲԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԽՆԱՍՏԱՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ Գ. ՏԱԹԵՎՅԱՆԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՈՐԲԱՆՈՅԻ ԼԻԱԶՈՐԻՆ
ՈՐԲԵՐԻ ՓԱՆՈՒՍՏԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

16 ապրիլի 1921 թ.

Ալեքսանդրապոլ

Ձեր խնամքին յանձնուած որբանոցի որբերից դարձեալ մէկը գտնուած է դրսում, որին կրկին վերադարձնելով Ձեզ մօտ, առաջարկում ենք ընդունել և ունենալ այսուհետև խիստ հսկողութիւն դուրս չթողնել նրանց որբանոցից:

Քաղաքային վարչութեան անդամ,
խնամատարութեան բաժնի վարիչ` Գ. Տաթևեան
Գործավար` Ա. Բրուտեան

ՀԱԱ, ֆ. 144, ց.3, գ. 171, ք.9: Բնագիր: Ձեռագիր:

N 179

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԲԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՊՐԻԼԻ 16-Ի ՆԻՍՏԻ**

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

16 ապրիլի 1921 թ.

Ալեքսանդրապոլ

1921 թ. ապրիլի 16-ին Շաբաթ ճիշտ ժամը 3-ին Քաղաքային Ինքնավարության շենքում (նախկին Աստորիա հիւրանոց) տեղի ունեցավ գաղթականական կոմիտէի նիստ նախագահութեամբ Քաղաքային Վարչութեան անդամ Գ[էորգ] Տաթևեանի և քարտուղարութեամբ Արշակ Բրուտեանի:

Բացակայ էին Նիկողայոս Կիրակոսեան, Արտաշէս Գրիգորեան և գաւառապետ Մարգիս Մատինեանը:

Օրակարգ՝ 1. Գաղթականներին գիղերը տեղափոխելու մասին

2. Գաղթականներին օգնութիւն հասցնելու մասին:

Նախկին ժողովի համաձայն գաւառապետ Ս. Մատինեանի դիմող հանձնախումբը զեկուցեց, որ նա պատասխանել է. «Նորէկ գաղթականներին կայարանից քաղաք տեղափոխելու ապահովութեան հոգացողութիւնը վերապահուած է իրեն և իր հսկողութեան տակ գտնուած միլիցիական կազմին, իսկ նրանց համար բնակարան գտնելու և տեղաւորելու մասին հոգալու են խնամատարութեան բաժինը և նրան ենթակայ եղող մարմինները: Թալեաթ բէյի կարգադրութեամբ գիղերը տեղափոխուող գաղթականներին ասկեարները և միլիցիաներները պէտք է տանեն հասցեն մինչև իրենց նշանակուած տեղը և ապա վերադառնան, բերելով իրենց հետ նրանց ապահով տեղ հասնելու և թուի մասին թուղթ: Գաղթականների երկրորդ խումբը ուղևորուելու է ամսիս 18-ին, Երկուշաբթի առաւօտ, և ջրերի վարարման պատճառով պէտք է գնա երկաթուղու գծով մինչև Չոռլի գիղը, և ապա կտաւրածուեն միւս գիղերը»:

Ժողովը ընտրեց հետևեալ երեք անդամներին՝ Առաքել Բալոյեանին, Արամ Տէր-Միքայէլեանին, Բենէամին Պետրոսեանին, լիազօրեց նրանց այդ օրը ներկայ լինել գաղթա-

կանների երթին և կազմել գնացողների ցուցակը: Որոշուեց՝ մինչև այս երկրորդ գնացող խմբի հաջող տեղ հասնելու մասին տեղեկութիւն չստացուի, երրորդ խումբը չուղարկել: Յանձնախումբը շարունակեց իր զեկուցումը ասելով՝ Թալեաթ բէյը ցանքսերի համար պատուիրել է, որ վար անողները խումբ - խումբ դուրս գան դաշտ, որտեղ առաւօտից մինչև երեկո պիտի հսկեն ասկեարները և միլիցիօներները:

2. Գաղթականութեան ընդհանուր վերահսկողութեան գործը կայարաններում ավելի լաւ տանելու համար որոշուեց՝ չորս քաղաքամասի համար նշանակել կոմիտէի անդամներից հետևեալներին՝

I քաղաքամաս Համազասպ քահ[անա] Ղարազեոզեան
Առաքել Բալոյեան

Թորգոմ Տէր- Սահակեան

II քաղաքամաս Չատիկեան Գաբրիէլ
Պետրոսեան Բենիամին

III քաղաքամաս Սարիբեկ Միսիթարեան
Եղիշէ Տէր- Գրիգորեան

IV քաղաքամաս Աւետիս Վարդանեան
Արամ Տէր- Միքայէլեան
Սեդրակ Սահակեան

3. Նախագահը ասաց՝ որովհետև Զաղաքային Ինքնավարութիւնը հնարատրութիւն չունի նիւթապէս բաւարարել գաղթականների կարիքները, ուստի կարևոր է շարունակել հանգանակութիւնը կատարել աւելի մեծ մասշտաբով, որով կարելի լինի մասամբ ամօրել սոված գաղթականութեանը: Այդ նպատակով առաջարկուեց մօտ ապագայում նշանակել «Սովեալների օր», նոյնիսկ երկու օրով, որի ծրագիրը թողնոււմ էր ժողովին կազմել:

Ժողովը որոշեց ընդունել նախագահի առաջարկը և «Սովեալների օր» նշանակել ամսիս 23-ին և 24-ին, այն է՝ ծաղկազարդի Շաբաթ և Կիրակի օրերը: Ծրագրի մշակումը յետաձգուեց յաջորդ նիստին, իսկ մինչ այդ՝ անդամներից իւրաքանչիւրը կարող էր կազմել իր ցանկացած ծրագիրը և

ներկայացնել հետևեալ ժողովին քննութեան:

*Նախագահ ժողովի,
Քաղաքային վարչութեան անդամ՝ Գ. Տաթևեան
Գործավար՝ Ա. Բրուտեան
Անդամներ՝*

ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 173, ք. 15-16: Բնագիր: Չեռագիր:

N 180

**ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՐԲԱՆՈՅԻ ԼԻԱԶՈՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ «ԱՅՐԻ
ԿԱՆԱՆՑ ՏՈՒՆԸ» ՓԱԿՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*17 ապրիլի 1921 թ.
Ալեքսանդրապոլ*

*Սրանով յայտնում եմ Ձեզ ի գիտութիւն, որ փախստական
«Այրի կանանց տունը» ամսիս 17-ից փակուեց, ինչպէս այդ
մասին յայտնի է նաև Քաղաքագլխին: Խնդրում եմ նոյն հիմ-
նարկութեան ծառայողներին բաւարարել, որոնք յունուարի
26-ից ծառայել են և ոչ մի պարէն չեն ստացել:*

*Քաղաքային որբանոցի լիազօր՝ Ս. Տիգրանեան
Քարտուղար՝ Աղսախալեան*

ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 171, ք. 13: Բնագիր: Չեռագիր:

N 181

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄԲՆԱԿՎՈՂ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ
ԺՈՂՈՎԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

*17 ապրիլ 1921 թ.
Ալեքսանդրապոլ*

1921 թ. 17 ապրիլի՝ ճաշից յետոյ ժամը 3 անց կէսին Քաղաքային Ինքնավարութեան շէնքում (նախկին Աստորիա հիւրանոց) տեղի ունեցավ Գաղթականական կոմիտէի նիստ նախագահութեամբ քաղաքային վարչութեան անդամ Գ. Տաթևեանի և քարտուղարութեամբ Արշակ Բրուտեանի:

Օրակարգ՝ Գաղթականական հանրակացարանների հիւանդների մասին.

Նախագահը զեկուցեց ժողովին, որ քաղաքիս գաղթականական հանրակացարաններում կան մեծ քանակութեամբ հիւանդներ, որոնց օգնելու ոչ մի հնարատրութիւն չկայ, մանաւանդ այդ բացը շատ զգալի է ծանր հիւանդների վերաբերմամբ: Միայն մի միջոց կայ այդ կարիքին ընդառաջ գնալու, այդ այն է, որ սուր վարակիչ հիվանդանոցներում կան յիսուն ազատ մահճակալներ իրենց պատկանելիութիւններով, միայն հնարատր կլինի հոգալ և հիւանդների և նրանց ծառայողների համար մթերքներ ձեռք բերելու մասին:

Ժողովը միանգամայն համաձայնութիւն յայտնելով նախագահի զեկուցմանը, որոշեց՝ լիազօրել նրան դիմել ում հարկն է՝ միջոցներ ձեռք առնել ի կատար ածելու:

Այլ և ի նկատի առնելով հանրակացարաններում հիւանդների թիւը խիստ շատ է և սրանց բժշկական օգնութիւն հասցնելը ամենաանհրաժեշտ, այս պատճառով կարևոր է բժիշկներին հաճախ այցելել հանրակացարանները և ցոյց տալ հիւանդներին հարկատր օգնութիւնը:

Նախագահ ժողովի՝ Գ. Տաթևեան

Գործավար՝ Ա. Բրուտեան

ՀԱԱ, ֆ. 144, ց.3, գ. 173, ք. 17: Բնագիր: Չեռագիր:

N 182

**ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ Գ.ՏԱԹԵՎՅԱՆԻ ՀՐԱՎԵՐԸ
ԳԱՂԹԱԿԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ**

**ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԳԱԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԺՈՂՈՎԻՆ**

18 ապրիլի 1921 թ.

Ալեքսանդրապոլ

Այսօր, ամսիս 18-ին ճաշից յետոյ, ժամը 4-ին Գաղթականական Կոմիտէի անդամները հրաւիրում են ժողովի Քաղաքային Ինքնավարութեան շէնքում: Խիստ անհրաժեշտ է բոլորի ներկայությունը:

Օրակարգի հարցեր

1. գաղթականութեան վերադարձի մասին
2. ընթացիկ հարցեր:

Քաղաքային վարչութեան անդամ՝ Գ. Տաթևեան
Վարչութեան անդամներ

1. Առաքել Բալոյեան
2. Բենիամին Պետրոսեան
3. Համբարձում Ղարազէօզեան
4. Գաբրիէլ Զատիկեան
5. Աւետիս Վարդանեան
6. Նիկողայոս Կիրակոսեան
7. Յաբէթ Վարդանեան
8. Արտաշէս Գրիգորեան
9. Արամ Տէր-Սիքայէլեան
10. Մեղրակ Սահակեան

ՀԱԱ, ֆ. 144, ց.3, գ.173, թ. 18: Բնագիր: Ձեռագիր:

N 183

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԲԱՂԱԲԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՊՐԻԼԻ 18-Ի ՆԻՍՏԻ
ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

18 ապրիլի 1921 թ.

1921 թուի 18-ին ապրիլի: Շաբաթ ճիշտ ժամը 3-ին Քաղաքային Ինքնավարության շենքում (նախկին Աստորիա հիւրանոց) տեղի ունեցավ Գաղթականական կոմիտեի նիստ նախագահութեամբ Քաղաքային Վարչութեան անդամ Գ. Տաթևեանի և քարտուղարութեամբ Արշակ Բրուտեանի:

Օրակարգ՝ գաղթականներին գիւղերը տեղափոխելու մասին: Նախագահը զեկուցեց, որ ինչպէս յայտնի է, արդէն թուրքական հրամանատարութիւնը յայտարարել է՝ որոշ գիւղերի գաղթականութիւնը ճանապարհ դնել դէպի իրենց վայրերը ասկէարների և միլիցիայի ուղեկցութեամբ, այժմ մնում է Կոմիտեի կողմից միջոցներ ձեռք առնել հոգալու նրանց յաջող տեղափոխութեան համար:

Ժողովը ընդունելով այս զեկուցումը, որոշեց՝ գիւղերը տեղափոխուող գաղթականներին ցուցակագրել, և ընդհանրապէս հոգալ նրանց ապահովութեան մասին, և տեղափոխութիւնը սկսել ամսիս 25-ից:

Նախագահ ժողովի՝ Գ. Տաթևեան
Գործավար՝ Ա. Բրուտեան

ՀԱԱ, ֆ. 144, ց.3, գ. 173, ք. 19: Բնագիր: Ձեռագիր:

N 184

**ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ Գ.ՏԱԹԵՎՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԳԱՎԱՌԱՊԵՏ Ս. ՄԱՏԻՆՅԱՆԻՆ ԳԱԹԱԿԱՆՆԵՐԻՆ
ԳՅՈՒՂԵՐԸ ՏԵՂԱՓՈԽԵԼԸ ՀԵՏԱԶԳԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

19 ապրիլի 1921 թ.
Ալեքսանդրապոլ

Համաձայն Գաղթականական կոմիտեի ցանկության՝
խնդրում եմ գաղթականներին ուղարկելը գիտերը յետաձգել
մինչև ամսիս 25-ը:

Քաղաքային վարչության անդամ՝ Գ. Տաթևան

ՀԱԱ, ֆ. 144, ց.3, գ.173, ք. 20: Բնագիր: Ձեռագիր:

N 185

**ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉԻ ՁԵԿՈՒՅՈՒՄՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ ՀԻՎԱՆԴ
ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

19 ապրիլի 1921 թ.
Ալեքսանդրապոլ

Քաղաքիս գաղթականական հանրակացարաններում
կան շատ ծանր հիւանդներ, որոնց հնարաւորութիւն չկայ
տեղափոխել միւս հիւանդանոցները տեղ չլինելու պատճա-
ռով, բայց այդ հնարաւոր է միայն սուր-վարակիչ հիւան-
դանոցում, ըստ որում, այնտեղ կան յիսուն ազատ մահ-
ճակալներ իրենց պատկանելիութիւններով, միայն հարկաւոր
է հոգալ, հիւանդների և նրանց տասը ծառայողների համար
օրական պարէնը: Այդ իսկ նպատակով սրա հետ ներկա-
յացնելով իւրաքանչիւր անձի համար թոյլատրելի մթերքների
օրական միւնիւմում քանակի նախահաշիվը, խնդրում եմ
Վարչութիւնիցդ՝ այդպիսին մտցնել Դումայ ի քննութեան և ի
հաստատման:

Բացի այդ՝ ի նկատի ունենալով, որ հանրակացարան-
ներում հիւանդութիւնը շատ շատ է և սրանց բժշկական
օգնութիւնը ամենաանհրաժեշտը, այս պատճառով կարևոր է
որ բժիշկներն այցելեն հանրակացարանները և ցոյց տան
անհրաժեշտ օգնութիւնը:

*Ալեքսանդրապոլի Քաղաքային Վարչության անդամ,
Խնամատարություն քաժնի վարիչ՝ Գ. Տաթևեան
Գործավար՝ Ա. Բրուտեան*

Նախահաշիվ

<i>Մթերքներ</i>	<i>քանակ</i>	<i>արժեքը (ներկայ գներով)</i>
<i>1. միս</i>	<i>40 մսխալ</i>	<i>5.500</i>
<i>2. խոլ</i>	<i>1,5 մսխալ</i>	<i>1000</i>
<i>3. հաց</i>	<i>3/4 ֆունտ</i>	<i>7500</i>
<i>4. կրուպա</i>	<i>28 մսխալ</i>	<i>2500</i>
<i>5. շաքար</i>	<i>1,5 մսխալ</i>	<i>1000</i>
<i>6. կակաո</i>	<i>1,5 մսխալ</i>	<i>1000</i>
	<i>գումարը`</i>	<i>17500</i>

50 հիւանդի և / 60 հոգու օրական- 105000

10 ծառայողների

Նոյն անձանց ամսական ծախսը 31.500.000

*Ալեքսանդրապոլի Քաղաքային Վարչության անդամ,
Խնամատարություն քաժնի վարիչ՝ Գ. Տաթևեան
Գործավար՝ Ա. Բրուտեան*

ՀԱԱ, ֆ. 144, ց.3, գ. 173, ք. 22-23: Բնագիր: Ձեռագիր:

N 186

ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱՎԱՅԱՐԱՆՆԵՐԻ ՅՈՒՅԱԿԸ

1-ին քաղմաս

1. Սահականուշեան դպրոց (Թոփչեան) փողոց)

գաղթականներ 310

հիւանդներ 32

- ազատ տեղեր չկան 5 (սենեակ)
2. Խալաթեանների տուն (Քր. Միքաէլյանի փող.)
- գաղթականներ 96
- հիւանդներ 2
- ազատ տեղեր չկան 8 (սենեակ)
3. Շիկոյեանի ներքնատուն (27 փետ. փող.)
- գաղթականներ 45
- հիւանդներ չկա 2 (սենեակ)
4. Խրիմեան դպր. (Խրիմեան փող)
- գաղթականներ 180
- հիւանդներ 12
- ազատ տեղեր չկան 5 (սենեակ)
5. Վաչագանեան դպր.
- գաղթականներ 213
- հիւանդներ 20
- ազատ տեղեր չկան 7 (սենեակ)
6. Տէր-Յարութիւնեանների տուն (27 փող.)
- գաղթականներ 131
- հիւանդներ 5 (3 սենեակ)
7. Ծաղիկեանների տուն (27 փետ. փող).
- գաղթականներ 54
- հիվանդներ 2
- ազատ տեղեր չկան (6 սենեակ)
8. Սէյլանեան դպր. (Քր. Միք. փող.)
- գաղթականներ 300
- հիւանդներ 12
- ազատ տեղեր չկան (10 սենեակ)
9. Արդութեան դպրոց
- գաղթականներ 300
- հիւանդներ 45
- ազատ տեղեր չկան (7 սենեակ)
10. Թեովչեան Գէորգիի տուն (Թեովչեան փողոց)
- գաղթականներ 50
- հիւանդներ -

ազատ տեղեր չկան (7 սենեակ)

11. Իսսահակի փող.կամ Խաժակի

Տեր- Յարութիւնեանի տուն

գաղթականներ- 150

հիւանդներ -10

սպրում են մասնաւոր տներում 10 (սենեակ)

12. Շվեդիա հիւրանոց

գաղթականներ- 80

հիւանդներ -16

ազատ տեղեր չկան (3 սենեակ)

13. Առաջին որբանոց

որբեր 400

ծառայողներ -40

մայրապետեր- 12

Բոլոր հանրակացարաններում առաջին քաղաքամասի և որբանոցում սպրում են 2281 հոգի, որնցից միայն որբանոցում ստանում են պարէն 458 հոգի

2-րդ քաղմաս

1. Ղօլտաղչեանների տուն

գաղթականների քանակը- 150

հիւանդներ- 20

ազատ տեղեր չկան

2. Երկաթուղային դպրոց

գաղթականների քանակը- 110

հիւանդներ-

ազատ տեղեր ունի, տեղաւորած են 7 սենեակներում

Ընդամենը երկրորդ քաղաքամասի բոլոր հանրակացարաններում- 360 գաղթական

3-րդ քաղմաս

1. Թովչեան դպրոց (Չաւարեան փող)

գաղթականների քանակը-150

հիւանդներ-17

ազատ տեղեր չկան (4 սենեակ)

2. Գ. տղ. դպրոց

գաղթականների քանակը-150

հիւանդներ-10

ազատ տեղեր չկան (8 սենեակ)

3. Արմէիդ հանրակացարան (Բշխսանեան փող)

գաղթականների քանակը-220

հիւանդներ-21

ազատ տեղեր չկան (6 սենեակ)

4. Շիլաջոց տներ (Այրիների տուն և մի կաթիլ կաթ)

Այրիներ և ծծմայրեր 195

Ծառայողներ և մայրապետներ 15

հիւանդներ`- 9

Ընդամենը` 220

Երկրորդ որբանոց — Ձիթողցոց տուն

Որբեր- 404

ծառայողներ-11

Որբ աշխատողներ և մայրապետեր-12

Երրորդ քաղաքամասում բոլոր հանրակացարաններում
և որբանոցում ապրում են 1064 հոգի:

4-րդ քաղմաս

1. Տէր Ղազարեանների հանրակացարան: Մեծն Վարդանի փող. թիւ 27, (7 սենեակից) քաղկացած

գաղթականների քանակը-150

հիւանդներ-50

ազատ տեղեր կան 7 (սենեակ)

կառավարիչ Գրիգոր Աթոեան

2. Ջատիկեանների տուն

գաղթականների քանակը-150

հիւանդներ-10

ազատ տեղեր շատ կան (6 սենեակ)

3. Կաթոլիկաց դպրոց 16 սենեակից Աթաբեկեան փող.
գաղթականների քանակը-450

հիւանդներ-104

ազատ տեղեր կան (15 սենեակ)

կառավարիչ՝ Մեսրոպ Մարգարեան, ապրում է եկեղեցու
բակում

4. Նախկին գնդապետ Տիգրանեանի տուն, Թոփչեան և
Վռամեան փողոցների անկյուն

գաղթականների-119

հիւանդներ-27

5. Չալդճի Գէորգի տուն, Վռամեան փող. (Լորիս-
Մելիքեան փող., 3 սենեակից

գաղթականների քանակը-32

հիւանդներ-7

6. Նալեանների տուն, նախկին Միքաէլեան փող., 13
սենեակ

գաղթականներ -120

հիւանդներ-5

կառավարիչը ապրում է նոյն տեղում

7. ֆանտազիա հիւրանոց

գաղթականներ 327

հիւանդներ-21

ազատ տեղեր չկա (15 սենեակ)

8. Էլքակեանների տուն

Աղաբալունց (քաղաքային) հիւանդանոցի դիմաց

գաղթականներ-60

հիւանդներ-10

ազատ տեղեր չունի (5 սենեակ)

9. Մերգելի տուն (Աղաբալունց), քաղաքային հիւանդա-
նոցի դիմաց

գաղթականներ 100

հիւանդներ-15

ազատ տեղեր չունի (և սենեակ)

10. Կարախանեանի տուն
անկելանոց
գաղթականներ- 91
ծառայողներ- 7
գումարը 97

Չորրորդ քաղաքամասում գաղթականների թիւը հանրակացարանների 1730 է, որից անկելանոցներում ապրում են 98 անկելաներ:

Ծանոթութիւն - Բոլոր գաղթականութիւնը չորրորդ քաղաքամասի, կենտրոնացած չէ ցուցակում ցոյց տուած հանրակացարաններում: Շատ մասնաւոր տներում գտնուում են գաղթականներ տասնեակ ընտանիքներով, վերին աստիճանի թշուառ դրութեան մէջ: Մարդկանց կեանքի անապահովութիւնը և հատկապէս քայքայուած դրութիւնը քաղցածութեան պատճառով, թոյլ չեն տալիս գաղթականներին հետևել իրենց բնակած հանրակացարանների մաքրութեանը, որի պատճառով գալիք տաք օրերին բոլոր հանրակացարանները և մասնաւոր տները, որոնք բնակուած են գաղթականներով, կարող են համաճարակ հիւանդութիւնների բոյն դառնալ: Գաղթականութեան մեծամասնութիւնը Կարսայ նահանգի և Ալէքսանդրապոլի շրջակայ գիւղերի գիւղացիութիւնն է: Կարսից արտաքսուած քաղաքացի գաղթականների թիւը չնչին է: Թէ՛ հանրակացարանները և թէ՛ մասնաւոր շինութիւնները օր ատր քայքայւում են, ոչնչացուած են հատակները, դռները և լուսամտուների շրջանակները, և այս բոլորը կատարուել է ձմեռուայ ընթացքում ցրտերի պատճառով: Այս երևոյթը ներկայումս շարունակւում է, որի պատճառն է քաղցածութիւնը (ծախում են): Սոյն ծանոթութեան առաջ էջերը թոյլ չեն տալիս նկարագրել գաղթականների ծայր աստիճան թշուառ դրութիւնը: Հարկաւոր դէպքում կարող եմ ներկայացնել առանձին զեկուցում:

Վերահսկիչ՝ Սկրտիչ Մանուկեանց

ՀԱԱ, ֆ.144, ց.3, գ. 173, ք. 24-27: Բնագիր: Ձեռագիր:

N 187

**ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ Գ. ՏԱԹԵՎՅԱՆԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ԶԱՂԱՔԱՄԱՍԻ ԿՈՄԻՍԱՐԻՆ
ՀԱՆՐԱԿԱՅԱՐԱՆՆԵՐԻ ՄԱԲՐՈՒԹՅԱՆԸ ԱԶԱԿՑԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

20 ապրիլ 1921 թ.

Ալեքսանդրապոլ

Վարչութիւնս սրանով կրկին խնդրում է Ձեզ, որ Դուք
գաղթականական հանրակացարանների մաքրութեան գոր-
ծին աջակցութիւն ցոյց տաք ամենալայն ձևերով, թէ՛ գործիք-
ներ և թէ՛ աշխատատուր ձեռքեր տալով, որպէսզի կարելի լինի
նպաստել և հեշտացնել բժշկա-սանիտարական բաժնի ձեռ-
նարկած մաքրութեան անհրաժեշտ և անյետաձգելի գործը:

*Քաղաքային վարչութեան անդամ՝ Գ. Տաթևեան
Գործավար՝ Ա. Բրուտեան*

ՀԱԱ, ֆ. 144, ց.3, գ. 174, թ. 9: Բնագիր: Չեռագիր:

ԳԼՈՒԽ IV

ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1921-1922 թթ.)

N 188

ՀԽՍՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂԿՈՍԻ
ՇՐՋԱՐԵՐԱԿԱՆՆԵ՝ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌԻ
ԵՐՐՈՐԴ ԳԱՎԱՌԱՍՄԱՍԻ ՀԵՂԿՈՍԻՆ ԱՍԵՐԻԿԵՅԱՆ
ԿՈՍԻՏԵԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՈՒՆԵՅԱԾ ՎԵՐԱԲԵՐՍՈՒՆՔԻ
ՄԱՍԻՆ

ապրիլ 1921 թ.
Երևան

Վերջին ժամանակներս Ներքին Գործոց Ժողովրդական Կոմիսարիատիս հասած տեղեկությունների համաձայն Ս[ո-վետական] Հայաստանի մի քանի շրջանների տեղական իշխանությունները թշնամական վերաբերմունք են ցոյց տալիս դեպի Սերժաուր Արևելքի Նպաստամատոյց Կոմիտէի հիմնարկությունները և պաշտօնեաները, խանգարելով նրանց գործունեությունը:

Այդպիսի վերաբերմունքը անյանդուրժելի է Ս[ովետական] Հայաստանի կառավարութեան կողմից, որը միայն կարող է ողջունել Ամերիկեան Կոմիտէի օգտաւետ գործունեությունը ներկայ ծանր վայրկեանում որքերին և հիւանդներին խնամելու գործում:

Վճռականօրէն պահանջում են, որ վերջ տրուի թշնամական անտակտ վերաբերմունքին և միջոցներ ձեռք առնել, որպէսզի Ամերիկեան Կոմիտէն կարողանայ նորմալ և նպաստատու պայմաններում շարունակել իր գործունեությունը:

Չանցառուները կը ենթարկուեն խիստ պատասխանատւութեան:

Իսկականը ստորագրել է Ներքին Գործոց Ժողկոմ Փիրումյանը

Իսկականի հետ ճիշտ է: Ալեքսանդրայովի գալեղկոմի գործավար:

Իսկականի հետ ճիշտ է:

Դիանապետ

ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 96, ք. 1: Վավերացված պատճեն: Ձեռագիր: ֆ. 3, ց. 1, գ. 26, ք. 4: Վավերացված պատճեն: Մեքենագիր

N 189

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԲԱԺՆԻ
ԿԱՌԱՎԱՐՉԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԵՂԿՈՍԻ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՎԱՐԻՉԻՆ**

12 մայիսի 1921 թ.

Ալեքսանդրայով

Լրացնելով բաժնիս ամսոյս 10-ի N 314 գրութիւնը, հարկատր եմ համարում զեկուցանել, որ բնակարանային բաժնի համար ներկայիս ստեղծուել է վերին աստիճանի դժուար կացութիւն: Օրից օր աւելանում է դրսից եկող գօրքի քանակը: Զօրահաւաքը նոյնպէս կաւելացնէ պահանջը: Քաղաքում բացուած զինուորական և պետական հաստատութիւնները դեռ չեն տեղաւորուած: Բնակարանից գուրկ են սովետական բազմաթիւ պաշտօնեաներ իրենց ընտանիքներով: Ամեն օր վերադառնում է քաղաք բազմաթիւ ժողովուրդ, որը զանազան պատճառներից դրդուած փախուստի է դիմել: Բնակարանային կարիքը ծով է, իսկ քաղաքը աւերուած է:

Այս խնդրի բարեյաջող լուծման համար անհրաժեշտ է դիմել հետևեալ կտրուկ միջոցների:

1. Տեղափոխել գաղթականութեանը գաւառ, ազատել մեծ շէնքեր-հանրակացարանները, քանի որ գաղթականների մեծագոյն մասը եկած են գաւառիս մօտակա գիւղերից, փախչե-

լով տաճիկների հալածանքներից:

Նոցա վերադարձը իրենց բնակավայրը խիստ կարելու է թէ քայքայուած գիւղերի վերաշինման ու թէ ցանքսերի և պարենատրման հարցերի կարգաւորման տեսակէտից: Արդէն ամառը սկսուում է սանիտարական աննպաստ պայմաններ, որը ևս պահանջում է քաղաքն ազատել գաղթականութիւնից:

2. Անմիջապէս վերանորոգել հանրակացարանները և բոլոր պետական հասարակական նախկին նոյնիսկ մասնատր անձանց պատկանող մեծ շէնքերը, որոնք առաջներում զօրքերի կարիքների համար էին ծառայում:

3. Վերանորոգել բերդում եղած զինուորական հիւանդանոցները, պահեստները, զօրանոցներն ու արհեստանոցները:

4. Ապակիների մեծ կարիքը պահանջում է անյետաձգելի կերպով ասպակիների պատրաստութիւն տեսնել, բերել տալով դրսից, օրինակ Բագուից:

Տեղիս առանձնահատուկ պայմանները կատարելապէս նպաստում են վերանորոգման գործի իրագործմանը կարճ ժամանակամիջոցում, նկատի ունենալով, որ տեղումս կան բազմաթիւ և բազմատեսակ անգործ արհեստատրներ, կան նաև նիւթեր՝ քար, աւազ, կիր, իսկ փայտ ու թիթեղ բաւական չափով կարելի է ստանալ շէնքերի մնացորդներից:

Բաժնի կառավարիչ՝

Գործավար՝ Մելիք-Ստեփանեան

ՀԱԱ, ֆ.144, ց.1, գ. 63, ք.4: Բնագիր: Ձեռագիր:

N 190

**ՍՈՑԱԳԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱԺՆԻ
ՎԱՐԻՉԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ**

18 մայիսի 1921 թ.

Ձինուորական մասերից մէկը, բնակարանային բաժնի օր-
դերի համաձայն առաջարկել է մի ժամուայ ընթացքում դա-
տարկել Շիրաճեանների տունը, որի մէջ տեղաւորուած է «Մի
կաթիլ կաթը»:

Բնակարանային բաժինը իրեն իրաւունք չպիտի հա-
մարէր դատարակել տալու այդ շէնքը, որովհետև դա պետա-
կան հիմնարկութիւն է, որի մէջ տեղաւորուած են 100-ի չափ
ծծկեր մանուկներ և ծծմայրեր, իսկ եթէ այդ շէնքը չափա-
զանց անհրաժեշտ է գօրամասերի համար, ապա նախքան
այդպիսի կարգադրութիւն անելը բնակարանային բաժինը
պարտաւոր է մի ուրիշ բնակարան յատկացնել «Մի կաթիլ
կաթին», ապա թէ դատարկել տալ այդ շէնքը :

Յայտնելով Ձեզ այս մասին, խնդրում եմ կարգադրէք
դադարեցնելու յիշեալ շէնքի դատարկումը և արգելէք բնակա-
րանային բաժնի նման ապօրինի գործողութիւնները :

Սոցալպահովութեան և աշխատանքի բաժնի վարիչ՝
Գործերի վարիչ՝
Ի. տ. քարտուղար՝

ՀԱԱ, ֆ. 144, ց. 1, գ. 63, ք. 14: Բնագիր: Ձեռագիր :

N 191

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԶԱՂԱՔԻ՝
ՊՈԼԻԳՈՆԻ ԿՈՍՏԻՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԲԶՋԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՎԱՌԱՅԻՆ ԿՈՍԻՏԵՆ**

3 հունիսի 1921 թ.
Ալեքսանդրապոլ

Ի նկատի ունենալով Ամերիկեան Կոմիտէի տեղիս վերա-
տեսուչ Ջոնսոնի հեռացումը և նրան նոր փոխարինող ամերի-

կացիի ներկայությունը, որը ոչ մի լեզու չի իմանում, բացի անգլերենից, մեր իսկ գործի յաջողությունների համար, անհրաժեշտ է տեսնում ունենալ մեկ թարգման մեր իսկ ընկերներից, որի համար նպատակահարմար է տեսնում ընկ[եր] Բենիամին Գրիգորեանը:

Տեղիս քիջը լուրջ ուշադրության է հրաւիրում ընդհանրապես Ամերիկեան կոմիտեի գործունեության առթիւ և առաջարկում է հետևեալ խնդիրները:

1. Ամէն կերպ աշխատել լցնել ամերիկեան հիմնարկությունները ընկերներով, ագենտներով և շրջապատել ամերիկացիներին (հիմնարկութեան այդ քննարկում) կոմունիստ ընկերներով և աշխատել ամէն կերպ հսկել ամերիկեան գործունեությունը մեր երկրում:

2. Ի նկատի առնել ամերիկեան բացասական պատկերները հանդէպ Խորհրդային իշխանութեան և ըստ այնմ քայլեր անել:

Բջջի քարտուղար՝

ՀԱԱ, ֆ. 3, ց.1, գ.26, ք. 6: Բնագիր: Ձեռագիր:

N 192

**ԱԼԵԶԱՆԴՐԱՊՈԼԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՀՈՂԿՈՄԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՎԿՈՄԻ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉԻՆ
ԱՍԵՐԻԿԱՅԻՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ
ՉՍՏՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

*4 հունիսի 1921 թ.
Ալեքսանդրապոլ*

Համաձայն նախյեղկոմի կարգադրութեան առաջարկում եմ Ձեզ այսուհետև ոչ մի յարաբերութեան մէջ չմտնել Ամերիկեան Կոմիտեի հետ, առանց Յեղկոմի գիտութեամբ:

Գործերի վարիչ
Գործավար

ՀԱԱ, ֆ. 3, ց. 1, գ. 26, ք. 7: Բնագիր: Մեքենագիր:

N 193

**ՀԽՍՀ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌԱՅԻՆ ՀԵՂԱՓՈ-
ԽԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԲԱԺՆԻ
ՎԱՐԻՉԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՅ
ՎԱՐԻՉԻՆ՝ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ԳՅՈՒՂԵՐԸ
ՎԵՐԱԴԱՐՉՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

21 հունիսի 1921 թ.
Ալեքսանդրապոլ

Քաղաքում նոր գալիք զորքի համար շատ դժարություններ
կարելի է գտնել բնակարաններ, որոնց մեջ ապրում են գաղ-
թականություն, ուստի բաժինս յայտնում է անմիջապես անել
կարգադրություն տեղափոխելու Շիրակի գաղթականների
իրենց գիտերը, որպեսզի հնարատրություն լինի բաւարարել
զորքի պահանջները:

Բաժնի կառավարիչ՝ Ս. Արաքեան
Գործավար՝ Ա. Մելիք-Ստեփանեան

ՀԱԱ, ֆ. 144, ց. 1, գ. 63, ք. 54: Բնագիր: Ձեռագիր:

N 194

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌԻ ՀԵՂԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀ
Ս. ՄԱՆՈՒՅՅԱՆԻ ՀՐԱՀԱՆԳԸ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ
ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԳԵԼԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

21 հունիսի 1921 թ.
Ալեքսանդրապոլ

Յայտարարում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ ի հետևումն Ներքգործօրդկումի հեռագրի յուլիսի 9-ից N 129, ի նկատի ունենալով համաճարակային հիւանդութիւնների երևան գալը, բոլոր գաղթականների զանազան տեսակի տեղափոխութիւնները ինչպէս զաւառում, այնպէս էլ զաւառի սահմաններից դուրս սոյն թուից արգելում են:

Բոլոր գաղթականները և քաղաքի ու զաւառի բնակիչները, որոնք տեղափոխութիւններ կը կատարեն առանց կենտրոնական էւակի¹²⁴ գիտութեան և թոյլտութեան կը նկատուեն իբրև կառավարութեան կարգադրութիւնները չկատարողներ և կենթարկուեն դատի:

Գաւառային, քաղաքային և երկաթուղային միլիցապետերին հարկաւոր է ունենալ հսկողութիւն սոյն հրամանը կատարելու գործում:

Նախյեղկում՝ Ս. Մանուցեան¹²⁵
Քարտուղար՝ Վ. Աբրահամեան

ՀԱԱ, ֆ.144, ց.3, գ. 96, թ. 83: Տպագիր օրինակ:
ՀԱԱ, ֆ.144, ց.3, գ. 36, թ. 15: Տպագիր օրինակ:

N 195
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԵՂԿՈՍԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ԴԻՍՏՐԻԲՈՐ ԳԱՎԱՌԻ ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԻՆ

հունիս 1921 թ.
Ալեքսանդրապոլ

Բանուորա-գիւղացիական յեղափոխութեան հախտուն ալիքները Չեզ եւս հասաւ: Մարդկային իրաւունքների և ազգերի ինքնորոշման աննկուն գաղափարների մարմնացումն դարբնում է Ռուսական մեծ յեղափոխութեան յուժկու հար-

ուածների տակ: Մարդկային պատմութեան մէջ չստւած այս տարրեային ոյժը իր ալ կարմիր դրօշի տակ է համախմբել աշխարհի բոլոր տառապողներին եւ դեռ տակաւին բռնակալութեան ճիրաններում գալարուող ընչագոյրկ մասսաներին:

Յեղափոխութեան ահագանգը սարսուռի մէջ է դրել տիեզերական բռնակալներին եւ նրա յուժկու ծայնից կծկուել են իրենց խարխլուած պալատի ներքնայարկերում:

Դուք, սիրելի արեւմտահայեր, որ այս 7 տարուայ տառապանքի ճանփին ոչ մի անկեղծ սրտից բխած խօսք չեք լսել, որ շարունակ եղել էք ենթակայ փոքր ու մեծ, ազգային եւ միջազգային բորենիների ձեռքին խաղալիք, այսօր Ձեր հանտէպ կանգնած է յեղափոխական բանուորա-գիւղացիական կազմակերպուած մասսան, որն իր անկեղծ եղբայրական ձեռքն է կարկառել Ձեզ, իր պողպատեայ կրծքով պաշտպանելու այն մնացողներին, որոնք հարազատ միջավայրից զրկուած կծկուել են «գաղթական» ստորացուցիչ անունով: Թող կորչի այդ անունը: Այսօր այլեւս դուք գաղթականներ չեք, այլ մեր միջավայրի աւելի քան հարազատ զավակները, մեր սրտին ու հոգուն մօտիկ, խնամքի ու սփոփանքի կարօտ այն բզկտուած մասսան, որը այնքան իրեն մենակ է զգում եւ իր ազատատենչ զգացմունքներով աւելի քան տոկուն է Յեղափոխական նորանոր նուաճումների համար:

Դաշնակցական ավանտիւրաներին զոհ դարձած Դուք այսօր մէկուսացած եք, Ձեր անցեալ ազատարար ընդվզումները մոռացած անվանում են հակայեղափոխականներ: Այդ անունը եւս պէտք է Ձեր վրայից դեն նետել, քանի Ձեր ողբերգական պատմութիւնը մեզ համոզելու է հակառակը:

Ներկայ Յեղափոխութիւնը մեր հոգու եւ մտքի արտահայտութիւնն է եւ Դուք պէտք է փարուեք նրան:

Հայրենիքից մազապուրծ եղած խեղճերի, այս լայն ու ընդարձակ կեանքում անօթեւան, քաղցած ու կեանքից փտարուածների իշխանութիւնն է, որ եկել է եւ Դուք պէտք է Ձեր էութեամբը ձուլուեք նրա հետ:

Այո, Յեղափոխութիւնը Ձեր կամքն է, Ձեր մտքերի եւ զգացմունքների թարգմանը, Ձեր իղձերը իրագործողը: Դուք պէտք է նեցուկ հանդիսանաք նրան:

Մենք պէտք է մօտենանք միմեանց, խորհենք մեր ցաւերի մասին, գծենք փայլուն ապագայի ուղիները, վերաշինենք մեր Յեղափոխական հայրենիքը եւ միացած ոյժերով ջանանք հարազատ միջավայրում, հաւասար իրաւունքներով կեանք ստեղծել Ձեզ համար:

Այդ մեզ կհաջողուի քանի, որ Ռուսաստանի մեծ յեղափոխութեան բովից անցած բանուորները եւ գիւղացիները մեզ հետ են, պանծալի բանակը մեզ զօրաւիզ:

Ահա սիրելի արեւմտահայեր այս պատմական մօմենտում մեր խօսելիքների մասին է, որ Ալէքսանդրապոլի Յեղկոմը կազմել է զաւաթիս արեւմտահայերից ամսոյս 25-ին մի համազումար, ուր պէտք է քննենք մեր ցաւերը եւ միասնական խորհրդակցութեամբ ընդգծելու մեր անելիքները:

Հետեւեք Թալինի արեւմտահայերի օրինակին եւ ճիշտ 25-ին ուղարկեցէք ձեր պատգամատրները Ալէքսանդրապոլ, ուր առաւօտեան ժամը 12-ին պէտք է բացւի համազումարի առաջին նիստը: Պատգամատրների ընտրութեան ձևը հետևեալն է՝ մինչև 50 հոգի ունեցողները տալիս են մէկ պատգամատր , 50-ից վեր ամեն մի 50 հոգուն՝ մի պատգամատր:

Օրակարգի հարցերը.

1. Ձեկուցում մոմենտի մասին
2. Տաճկահայութիւնը և խորհրդային իշխանութիւնը
3. Հայկական հարցը և կոմունիստները(բոլշևիկները)
4. Հեղկոմի նախագահի զեկուցումը անելիքների մասին
5. Ձեկուցումներ եկած պատգամատրներից իրենց տեղերից

Ալէքսանդրապոլի Շրջանային Յեղկոմի նախագահ

ՀԱԱ, ֆ.144, ց. 3ա, գ.150, ք. 63: Տպագիր օրինակ:

ՀԱԱ, ֆ. 1021, ց. 2, գ. 1268, ք. 1-2: Վավերացված պատճեն:
Մեքենագիր:

**ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ**

25 հունիսի 1921 թ.
Ալեքսանդրապոլ

Հունիսի 25-ին տեղի ունեցավ Ալեքսանդրապոլի շրջանի արևմտահայերի առաջին համագումարը , որին մասնակցում էին 95 պատգամատրոներ: Օրակարգն էր. 1. Ձեկուցում մոմենտի մասին, 2. Տաճկահայությունը և Խորհրդային իշխանությունը, 3. Հայկական հարցը և կոմունիստական կուսակցությունը, 4. Հեղկոմի նախագահի զեկուցումը անելիքների մասին, 5. Ձեկուցումներ տեղերից: Համագումարը ողջունուեց կոմունիստական կուսակցութեան կողմից: Ողջոյնի մէջ ասոււմ էր. «Կենտրոնական կոմիտեն համոզուած է, որ կոմունիստական կուսակցությունը կդառնա ղեկավարը թուրքահայութեան, ազատելով նրանց երեսնամյա աւանտիւրիստների լծից, ի մի կհամախմբի նրանց սոցիալիստական հայրենիքի անկախ սոցիալիստական Հայաստանի անհրաժեշտ կարիքների և շահերի իրականացման շուրջ»: Համագումարը քուէարկեց մի ընդհանուր բանաձև, որի մէջ Ալեքսանդրապոլի շրջանի արևմտահայ աշխատատրութիւնը համոզւած է, որ 1. Տաճկահայ աշխատատուր ժողովրդի մեծ պաշտպանն ու նրա հարցի արդարացի լուծողը Խորհրդային Ռուսաստանի հեղափոխական բանվորութիւնն է: 2. Փոքր ազգերի ազատագրումը և նրանց հարցի վերջնական լուծումը կիրականանայ միայն միջազգային սոցիալական հեղափոխութեան հաղթանակով: 3. Արևելյան ազգերի ըմբոստացումը և ազատագրական շարժումը օտարերկրեա կապիտալիստների դէմ, զորեղ հարուած է հասցնում գիշատիչ իմպերիալիստներին և այսպիսով նպաստում է միջազգային բանուորութեան վերջ-

նական հաղթանակին: 4. Տաճկահայ աշխատատրությունը ձեռք ձեռքի տուած իր ռուսահայ եղբայրներին, ամեն կերպ աջակցելու է Խորհրդային Հայաստանի գործեղանալուն և ամրանալուն, փարելու է Խորհրդային Հայաստանի կառավարութեանը, քանի որ այդ կառավարությունը ազատարար հեղափոխութեան մարմնացումն է ու իրագործողը Հայաստանում: 5. Խորհրդային Հայաստանի դէմ գործող կուսակցությունները միանգամայն վնասակար և կործանիչ են Հայաստանի աշխատատրութեան, առաջին հերթին տաճկահայ արյունաքամ եղած ժողովրդի համար: 6. Դրա ամենացայտուն ապացոյցն է դաշնակցական վերջին հեղափոխական շարժումը և այդ կուսակցութեան վերջին մնացորդների Ձանգեզուրում հաւաքուած բանդայի ոճրագործությունները, որ դաշնակցած պարսիկ խաների, տաճիկ փաշաների ու իմպերիալիստական տգրուկների հետ, կռիւ են յայտարարում ընդդէմ հայ աշխատատր ժողովրդին: 7. Տաճկահայությունը հանձնիս յուր աշխատատր հատուածի, վերջնականապէս երես է թեքել այդ կուսակցությունից՝ անողոք կռիւ յայտարարելով նրա դէմ, դուրս շարտելով նրա միջից բոլոր պրովոկատորներին և մատուցերիստներին: Նա կռուան հանդիսանալով Խորհրդային Հայաստանին ընդդէմ արտաքին և ներքին հակահեղափոխութեան և քայքայուած տնտեսութեան վերաշինման մեծ գործին:

Կեցցէ այն ուղին, որ տանելու է Հայաստանը և մասնատրապէս Տաճկահայաստանը դէպի կուլտուրական զարգացման երջանկությունը, դէպի սոցիալիզմը:

Համագումարը անցած է մեծ ոգևորութեամբ և գաւառում առաջ է բերել ժողովրդական ամենամեծ խանդավառություն:

ՀԱԱ, ֆ. 1021, ց. 2, գ. 1268, ք. 3-4: Վավերացված պատճեն: Սերենագիր:

N 197

**ՂԵՂԱԶ ԳՅՈՒՂԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԶԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ
ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ԻՐԵՆՑ**

ԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

25 հունիսի 1921 թ.

Ալեքսանդրապոլ

Ղեդաչ գիտում վերաբնակուող արևմտահայ հասարակութեան կողմից պատիւ ունեմ շնորհատրելու Ալեքսանդրապոլի շրջանի Արևմտահայերի սոյն համագումարը, մադթելով յաջողութիւն և կարողութիւն պաշտպանելու մեր ծաւտուած ու բզկտուած բանտր չքատրների շահերը և իրատունքները:

Ղեդաչ գիտը հայաբնակ մի աղքատիկ գիտ է: Ունի 70 տուն բնակիչ, որմէ 43 տուն մշեցի վերաբնակիչներս 140 անձով ապրում ենք օրհասական դրութեան մէջ, տնտեսական բոլոր յարմարութիւններից գուրկ: Այս տարի սերմացու ոչինչ չստացանք և գրեթէ չկարողացանք գոհացուցիչ ցանքս անել, հազիւ ցանած ունէնք 50 կօտ¹²⁶ գարի, այն էլ կիտովի կամ արտի երեսը գնած: Ոչ մի ձեռնկալու¹²⁷ օգնութիւն չկայ մեր գերդաստանները փրկելու սովի վաղահաս մահից: Ճարահատ և յուսակտուր լծկան եզները փոխանակեցինք հացահատիկով, մալ¹²⁸ չունեցողներս ալ բանջարեղէնով հազիւ օրս հասանք: Յետ այսու ոչ մի հնարատրութիւն չունէնք օրապահիկ ձեռք բերելու կամ մերկութիւններս ծածկելու: Եթէ իսկապէս Հ[այաստանի] Ս[ոցիալիստական] Խորհրդային իշխանութիւնը օգնութեան չը հասնի մեր թշուառ սովեալներիս, թուրքի կոտորածներից հազիւ ազատուածներս կը փչանանք սովից:

Որպէս տարագիր ու պանդուխտ ապաւէն գտած Կովկասում այս եօթը տարուայ արիւնալի կռիւներին և խոշոր գոհեր տուած կոտորածներից ազատուած մեր սիրելիներէն. անտուն անտէր և հողագուրկ գաղթական անունով շրջում ենք գաւառէ գաւառ և գիտէ գիտ, չունէնք որոշ սեփականութիւն, ուր կարողանանք հանգիստ գտնել և մեր բանուորական աշխատութիւններով շինարար կերպով ստեղծել կամ

ապրել: Մեր հայրենիքի դռները փակուած են մեր վրայ, չը գիտենք ինչ կլինի մեր ապագայ վիճակը: Չը նայած, որ գուրկ ենք տուն տեղից, հանդ ու չօլից և անշարժ կայք ու կարողութիւնից ենթակայ ենք գիւղական բոլոր պահանջներին, թէ բեկար¹²⁹ և թէ ուրիշ պէտքեր մենք պետք է բաւարարենք: Մէկ խօսքով Քաւութեան նոխազը «միշտ մեզնից է»: Ուտնահարում են միշտ մեր արդար իրաւունքները և պահանջմունքները: Եթէ սխալուինք մեր իրաւունքներից խօսինք, կրսին թէ դուք ալ անոնցմէ էք (հակայեղափոխականներ): Եւ ստիպուած պիտի լռենք:

Շնորհիւ դարսեցի Գուրգենի, հռոմցի Գարեգինի, մոլլագէօքչեցի Սամսոնի, մայմուղջուղցի Արտաշի եւ ինքնակոչ պաշտօնէակաների և միլիցիակաների, բռնագրաւուած են մեզէն 14 ձի, զանազան արծաթեղէն և շորեղէններ, սոյն ձիերէն ոմանց գտանք կողմնակի մարդկանց մօտ և դիմեցինք տեղական իշխանութիւններին, դժբախտաբար ետ չը տուին: Անցեալ աշնան նահանջին մեր մթերքները և ապրանքը թաղուած մնացին մեր բնակած գիւղերում, զարնանը տեղացիներից ոմանք հանել են և իւրացրել: Կենդանի ապացոյցներով և փաստերով հաստատուածներն էլ չը կարողացանք ստանալ և մեր թշուառութիւնները մեղմացնել: Ահա մեր մխիթարութիւններու վիճակը. անտանելի կեանք և ցաւալի կացութիւն, որոյ մասին բողոքում ենք: Սակայն մեր տանջանքներն ու չարչարանքները շարունակում են՝ երկար ու ձիգ տարիներ մաքառելով թուրք բռնակալութիւններու, փաշաների, բէկերի և հայրենի կեղեքող դասակարգի դէմ մինչև օրս տալով միլիոնաւոր զոհեր կարօտ էինք մի այսպիսի երանաւէտ օրուան, և ահա շնորհիւ փառապանծ Կարմիր բանակի եկած էս ազատութեան երջանիկ րոպէն յուսով ենք վերջ կը տայ մեր տեսած ու կրած տառապանքներին և կիրականացնէ մեր փառաւոր նպատակները:

Կեցցէ Կարմիր բանակը

Կեցցէ բանորազիւղացիական հզօր Ռուսաստանը

Կեցցէ երիտասարդ բանորագիտացիական Հայաստանը:

Ղեկաչ գիտի արևմտահայերի ներկայացուցիչ՝

ՀԱԱ, ֆ. 144, ց. 3ա, գ. 84, ք. 39: Ինքնագիր:

N 198

**ԵՐՐՈՐԴ ԳԱՎԱՌԱՄԱՍԻ ԱՐԵՎՍՏԱՀԱՅ ՆԵՐԿԱ-
ՅԱՅՈՒՑԻՉՆԵՐԻ ՁԵԿՈՒՑՈՒՄԸ ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԻ
ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ԻՐԵՆՑ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ
ՎԵՐԱԴԱՐՉՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

25 հունիսի 1921 թ.

Պատիւ ունենք զեկուցանելու, որ տաճկահայ ժողովուրդս, որոնք ապրում են 3-րդ գաւառամասի գիւղերում, տաճիկների ներս խուժելուց յառաջ, ստոյգ գիտենալով տաճիկների թշնամական յիսերիմ վերաբերմունքը, թողինք բոլորովին անտեր ու անպաշտպան իրեանց բոլոր նիւթական միջոցները և հեռացանք Հայաստանի այդ մասից: Տաճիկների յետ նահանջելուց ու Հայաստանը խորհրդային դառնալուց յետոյ մեր ժողովուրդը վերադարձաւ ամեն մարդ իր նախքին բնակավայրը և տեսաւ, որ իր թողած կայքից ոչ մի բան չի մնացել:

Տանջուած և հալածուած Տաճկահայ ժողովուրդը մնացել է բոլորովին սոված և մերկ դրութեան մէջ: Մինչդեռ տեղական բնակչութիւնը գոնեայ մի հարկ ունի, որի տակ պաշտպանուիմ է բացօթեա ապրելուց, մենք այդ էլ չունենք: Աւելորդ չենք յամարում աւելացնել, որ տաճիկները աւելի շատ մեծ թալան և կոտորած են արել մեր 3-րդ գաւառամասում, քան թէ միւսներում: Մի քանի գիւղերում 3-րդ գաւառամասում մեր տաճկահայերը թողել էին տեղացիների մոտ հացահատիկներ և ուրիշ իրեղէններ:

Ներկայիս այդ մարդիկ չեն ուզում վերադարձնել այդ ամանաթները¹³⁰, չնայելով, որ տաճիկները այդ գիւղերում

ընդհանուր թալաններ չեն արել և մնացածները ապօրինի կերպով տիրապետում են տեղացիները:

Ուստի խնդրում ենք ընկեր ներկայացուցիչներ աչքի առաջ ունենաք մեր այս զեկուցումը և ըստ էության նորա համար էլ տաք քննութեան և մեր սոված ժողովրդին ցոյց տաք օգնութիւն, եթէ չեք ուզում, որ կենդանի մնացածներն էլ սովի զոհ գնան:

Ստորագրություններ¹³¹

ՀԱԱ, ֆ. 144, ց. 3ա, գ. 84, ք. 13-14: Բնագիր: Չեռագիր:

N 199

**ՃԼՈՒԱՆ ԳՅՈՒՂԻ ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԻ
ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉՆԵՐԻ ՁԵԿՈՒՅՈՒՄԸ
ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ**

25 հունիսի 1921 թ.

Ալեքսանդրապոլ

Մենք Ճլոխան գիւղի մեջ ապրող տաճկահայերս սոյն զեկուցումով կու գանք յայտնել Ալեքսանդրապոլի Արևմտահայերի 1-ին համագումարին, որ մենք մեր գերդաստանները տեղափոխելու համար պահում էինք ձիեր: Տեղափոխուելու ատեն, երբ հասանք Ղոշավանք գիւղ, կարսեցի Գուրգեն մի քանի ձի ձիատրներով եկաւ մեր քօչերի մէջ, առանց ուշադրութիւն դարձնելու մեր խեղճ դրութեան, ձիերը գրաւեց, որոնց մի մասը անպէտք լինելու պատճառով յանձնել է տեղացիներին, վերցրել ուրիշ ձի, իսկ այսօր ձիերի տէրերը անօթութիւնից դռնէ դուռ են թափառում:

Գրաւած ձիերը (7) եօթ հաստ են, որոնցից մեկը ներկայումս գտնուում է 4-րդ գաւառամասի Մուսլուխլու գիւղում:

Ի նկատի առնելով մեր գերդաստանների կրած նեղութիւնները խնդրում ենք կարգադրութիւն:

*Ճլրիսան գիւղի տաճկահայ ներկայացուցիչ
Արրահամ Սուրբասեանց*

ՀԱԱ, ֆ.144, ց. 3ա, գ. 84, ք.12: Ինքնագիր:

N 200

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌԻ ԹՈՒՐԲԻ ԳՅՈՉԱԼ ԴԱ-
ՐԱ ԳՅՈՒՂԻ ՎԵՐԱԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ ԳԱՎ-
ՀԵՂԿՈՍԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԻՐԵՆՑ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԸ
ԽԼԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

*հունիս 1921 թ
Թուրքի Գյոզալդարա*

Սորանով յայտնում ենք՝ մենք Գեօզալդարա գիւղի մէջ ապրող տաճկահայ վերաբնակիչներս, որ մինչև հիմայ ապրում ենք այդ գիւղը, այսինքն 1918 թուից սկսած մեր մէջ չի եղել ոչ մի տեղացի, ու հողերն ու մարգագետինները կը պատկանէր այդ գիւղին, ոչ ոք իրաւունք չունէր բռնագրաւուել մեր հողերը, բայց այս տարի Պարնի գիւղի բնակչութիւնը, չնայելով, որ ունեն իրենց գիւղի համար սեփական արտեր ու բաղչայ, չբաւականանալով իրենց ունեցածից, սկսել են բռնի ուժով խլել մերը, իրենց անասունները կերցնել մեր խոտերով ու մի քանի փութ ցանած սերմերը, որ մեր ապագայ յոյսը միայն այդ էր: Բանի անգամ խօսել ենք ու խնդրել, բայց այդ մարդիկ ուշադրութիւն չեն դարձրել մեր բողոքներին:

Ուստի յայտնելով, որ ձեզ այդ դէպքերը աչքի առաջ ունենաք, այդ բռնութիւնները զսպէք ,որ մեր դէմ չհակառակուեն: Արդէն գիւղիս հասարակութիւնը յառած են իրենց աչքերը Խորհրդային կառավարութեանը, որ այսօր կամ վաղը կը հասնի օգնութեան պաշտպանելու նպատակով: Հակառակ դէպքում մէկ կողմից Պարնի գիւղի բռնութիւնները մեր վրայ, իսկ միւս կողմից սովամահութիւնը կարճ ժամանակամիջոցում պիտի ոչնչանանք բոլորս: Ուստի վերջացնելով, կը յու-

սանք, որ չպիտի մերժէք մեր այս դիմումը և անէք մի կարգադրութիւն:

Գեոգալդարա գիւղի վերաբնակիչներ՝

ՀԱԱ, ֆ. 144, ց. 3ա, գ. 84, ք. 91: Բնագիր: Ձեռագիր:

N 201

**ԱՐԵՎՍՏԱՀԱՅ ԱՐՇԱԿ ՀԱԿՈԲՅԱՆԻ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԻ ԱՌԱՋԻՆ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆԸ ԻՐԵՆ
ԹԱԼԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

26 հունիսի 1921 թ.

Ալեքսանդրապոլ

Անցեալ տարի թուրքերի գալուց առաջ իմ ունեցած սեփական վեց **սոմար**¹³² գարին, որ գոյացել էր Սարիբաշ գիւղում իմ ունեցած ցանքսից, յանձնել էի Սարիբաշի գիւղացի Աշոտ Մանուկեանին, որի տանը հորած էր մնացել անձեռնմխելի և անվնաս մինչև թուրքերի Ալեքսանդրապոլի շրջանից հեռանալը: Այդ իրողութիւնը յայտնի էր Սարիբաշ գիւղացիներից շատերին և վկայում են գիւղի յեղկոմները: Թուրքերի հեռանալուց յետո տանտէրը՝ յիշեալ Աշոտ Մանուկեանը յայտարարում է, որ գիշերով անյայտ մարդիկ մտել են տունը և իմ գարին իր թաղուած տեղից՝ իբր թէ տարել են, որի մասին գիւղի յեղկոմները քննութիւն են կատարում և այն համոզումն են գոյացնում, որ այդ անկարելի է, քանի որ ոչ դուռն է կոտրուած, ոչ տունը քանդուած, և որ իրանք տան տէրերը տան մէջ ապրելիս են եղել, անհնար է, որ նրանք կատարուած գողութեան մասին ոչինչ չիմանային: Այդ մտքով և գիւղի Յեղկոմի կողմից կազմուած է արձանագրութիւն:

Նկատելով, որ տարածուած այդ գողութեան լուրը անյիմն է, որ այդ պատրուակով Աշոտ Մանուկեանը ցանկանում է իմ 6 սոմար գարին իւրացնել և իմ ընտանիքս սովամահութեան

մատնել, խնդրում եմ հարկ եղած կարգադրությունը լինի Համագումարի կողմից, որպեսզի յիշեալ Ա. Մանուկեանը վերադարձնի ինձ իմ հալալ աշխատանքիս արդիւնքը եղող 6 սոմար գարին և ազատէք իմ գերդաստանը սովի ճիրաններից:

Վատահելով համագումարի բարեխղճութեանը և արդարացիութեանը, յոյս ունեմ, որ խնդիրս չի մնայ անհետևանք և համագումարի կողմից կլինի անմիջական և դրական կարգադրութիւն:

Արևմտահայ, Մանագկերտի Նորաշեն գիւղացի Արշակ Յակոբեան

Ծանօթ. Այս խնդրի առթիւ դիմուած է չորրորդ գաւառամասի շրջանային Յեղկոմին, որին և ուղարկուած է գիւղի Յեղկոմի կազմած արձանագրութիւնը: Սակայն մինչև այժմ չորրորդ գաւառամասի Յեղկոմի կարգադրութիւնը ինձ յայտնուած չէ:

Արշակ Յակոբեան

ՀԱԱ, ֆ. 144, ց. 3ա, գ. 84, ք. 11: Բնագիր: Ձեռագիր:

N 202

**ԴՅՈՒՉՔԵԱՆԴ ԳՅՈՒՂԻ ԱՐԵՎՏՏԱՀԱՅԵՐԻ
ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉՆԵՐԻ ՁԵԿՈՒՅՈՒՄԸ
ԱՐԵՎՏՏԱՀԱՅԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
ՆԱԽԱԳԱՀ Ս. ՄԱՆՈՒՅՅԱՆԻՆ**

27 հունիսի 1921 թ.
Ալեքսանդրապոլ

Սոյն աշնանը թուրքերի Ալեքսանդրապոլ մտած ժամանակ մենք Դիւզքէնդ գիւղում ապրող գաղթականներս մեր

ունեցածը յանձնելով յիշեալ գիտացիներին և իւրաքանչիւր մարդ իր տան անդամներից մեկը ձգելով հոն գաղթեցինք: Յիշեալները թուրքերի ժամանակ պատրաստի ալիւր չունենալու պատճառով եկած են մեր ալիւրները գրաւելով բաժանած են իրար մէջ՝ վերադարձնելու պայմանով թուրքերի երթալուց յետոյ: Բայց հակառակ դուրս եկան և այժմ չեն վերադարձներ, չնայելով, որ մեր գերդաստանները ծայր աստիճան թշուառութեան մէջ լինելով սովէ կը կոտորուին: Յատուկ դիմելով Ձեզ, խնդրում ենք, որ կարգադրէք այդ ապրանքները վերադարձնել տէրերին:

Դիզբէնդ գիւղի ներկայացուցիչ
Կարապետ Վարդանեան

ՀԱԱ, ֆ. 144, ց. 3ա, գ. 84, ք.36:Ինքնագիր:

N 203

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԳԱՎԱՌԱՍՄԱՍԱՅԻՆ ՀԵՂԿՈՄՆԵՐԻՆ ՏԱՃԿԱՀԱՅԵՐԻ
ՆԿԱՏՍԱՍԲ ՈՒՆԵՑԱԾ ՎԵՐԱԲԵՐՍՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ**

14 հուլիսի 1921 թ.
Ալեքսանդապոլ

1. Ամեն օր գանգատներ են հասնում Գալեդկում, որ Տաճկահայերին գաւմասային վարչութիւնները շատ են նեղացնում:

Սրանով հրահանգում են, որ նման խտրութիւններ չդնել և Հայաստանի Խորհրդային Հանրապետութեան ներման դեկրետը ամենալայն կերպով կիրառել Տաճկահայերի վերաբերմամբ:

Այնտեղ, որ նրանք զգալի թիւ են կազմում, պէտք է օրգանների մէջ մասնակցութիւն ունենան յանձինս իրենց ներկայացուցիչների:

Պէտք է աշխատել տաճկահայերից պաշտօնեաներ հրա-
ւիրել և առհասարակ լծել խորհրդային օրգաններում:

Մեր ամենախորին ուշադրութեանը պէտք է արժանանան
եւ եթէ այսուհետև որևէ զանգատ լինի տեղական պատաս-
խանատու ընկերներից պէտք է ենթարկուեն ամենախիստ
պատժի:

2. Գաւառամասային յեղկոմներին կից կազմուած դատա-
կան մասերը պէտք է ենթարկուեն գաւառական դատական
մասին եւ պէտք է ղեկավարուեն նրա ցուցմունքներով:

Կենտրօնի դատական մասը իրաւագօր է այս կամ այն
գաւառասային դատական բաժինը փոփոխելու իր հայեցո-
րութեան համաձայն:

Գաւառայեղկոմ՝ Ս. Մանուգեան
Գործերի վարիչ՝
Դիւանապետ՝

ՀԱԱ, ֆ.144, ց. 3, գ. 56, ք. 41: Բնագիր: Մեքենագիր:

N 204

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԳՈՐԾԺՈՂԿՈՄ Ա. ՍՌԱՎՅԱՆԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԼԵԲՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՀԵՂԿՈՄԻ
ՆԱԽԱԳԱՀ Ս. ՄԱՆՈՒՅՅԱՆԻՆ ՄԵՎԵՐՍԿԻ
ՁՈՐԱՆՈՅՆԵՐԸ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ
ՀԱՆՁՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

29 հուլիսի 1921 թ.
Երևան

Շտապ յայտնեցեք առաջին ինչ պայմաններով կարելի է
Ամերկոմին տալ Մեներսկի կազարմաները եւ ինչ բանակցո-
թիւններ էք ունեցել այդ հարցի շուրջ: Երկրորդ. Ղարսից
գաղթած ռուս գիւղացիները ինչ յաջողութեամբ են դրկում
Ալեք[սանդրա]պոլից: Քանի մարդ կայ կուտակուած Ձեր

մօտ: Երրորդ՝ կայարանում կանգնած է թրքական վագոնը
զինուորներով մնում է, թե հեռացաւ: Տեյֆիկը¹³³ առանձին
հեռախոս ունի, թե մերով է օգտւում:

Արտգործժողկոմ Մռաւեան

ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 22, թ. 244: Թողոն: Ձեռագիր, թ. 243:
Վավերացված պատճեն: Մեքենագիր:

N 205

**ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՂ
ՀԱՆՁՆԱԽՍԲԻ ԿՈՉՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՐԵՎՍՏԱՀԱՅ
ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ**

*15 օգոստոսի 1921 թ.
Երևան*

Սեպտեմբերի 10-ին կը բացուի ՀՍԽՀ Արևմտահայերու
ընդհանուր համագումարը Էջմիածնի մէջ: Խորհրդային Հա-
յաստանի արևմտահայ աշխատատեղերէն ներկայացու-
ցիչները այդ օրը, առաջին անգամ ըլլալով, իրենց խորհր-
դային հայրենիքի մէջ կը հաւաքուին իրենց խոսքը ըսելու,
իրենց ծայրը լսեցնելու, վերջին տասը տարիներու և վերջին
ընթացող տարուայ մէջ կատարուած դէպքերու մասին, որոնք
հեռաւորորէն կամ մօտաւորորէն կապ են ունեցել իր և իր
դատին հետ :

Սեպտեմբերի 10-ի օրը, ան պիտի վերագնահատէ անց-
եալի բոլոր հին արժէքները, պիտի վերաքննէ իր գործունէութեան
վարքագիծը և վերջապէս պիտի բանաձևէ ինչպէս իր
անցեալի խօսքը, նոյնպէս և իր այսօրուայ և վաղուայ պար-
տականութիւնները ու իրաւունքները, որ այլևս անհրաժեշ-
տութիւն մը և պահանջ մը դարձած է:

Այն յանձնախումբը, որ պաշտօն ունի համագումարի նա-
խապատրաստական աշխատանքները տանելու, համոզուած
է, որ իրեն վիճակուած այս գործը արձագանքն է արևմտա-

հայ ժողովրդի ամենալայն խավերու: Համագումարի գումարման պահանջը ընդհանուրին կպատկանէ: Այս կապացուցանէ այն խանդավառութիւնն ու աջակցելու պատրաստակամութիւնը, որ գտաւ Յանձնախումբը, իր աշխատանքներու ընթացքին, ինչպէս նաև տեղական և արտասահմանեան մամուլին մէջ:

Համագումարի գումարման պահանջին ու ցանկութեանը Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը ամենամեծ պատրաստակամութեամբ ընդառաջեց ցոյց տալով լայն համակրանք և աջակցութիւն Յանձնախումբին և անոր աշխատանքներուն:

Յանձնախումբը այսօր աւելի քան երբեք լարելով իր ուժերը, հարցը հրապարակ կը դնէ Արևմտահայ ժողովրդին առաջ քաղաքներէն մինչև ամենախուլ գիւղին պատկանող քաղաքացիներուն:

Յանձնախումբը, որ մաքսիմումը ըրաւ և կընէ մինչև հեռաւոր գիւղը և գիւղացին մասնակից ընելու այս համահայկական ձեռնարկին, որպէսզի ամեն ոք համագումարէն առաջ և համագումարի միջոցին և թէ անոր աշխատանքները վերջանալէն յետոյ նաև գիտնայ թէ ինչ կը կատարուի:

Յանձնախումբը ընելով իր մաքսիմումը, երբեք իրենը չնկատեց համագումարի դժուարին և պատասխանատու աշխատանքը, այլ ամենունը: Օգոստոսի 15-ին սկսաւ քուէարկութեան աշխատանքները:

Հայաստանի բոլոր վայրերը, իրենց ամենահեռաւոր ծայրամասերով կը բերեն իրենց մասնակցութիւնը պատգամաւորական ընտրութիւններուն:

Քուէարկութիւնները կըլլան բաց և ուղղակի սիստեմով, որուն պարտաւոր են մասնակցել 18 տարեկանէ վեր եղող բոլոր (այր թէ կին) արևմտահայերը:

Յանձնախումբը իր ներկայ կոչով, նորէն կը դիմէ ՀՄԽՀ քովանդակ արևմտահայութեանը, որ անոնք աջակցեն քաղաքներու թէ գիւղերու կազմակերպիչ ընկերներուն, ուժ տան և համախմբուեն անոնց շուրջ:

Արևմտահայերու համար օրուան կարգախոսը թող լինի «Ամենքը դէպի քուէ, ամենքը դէպի ձայնատուութիւն»:

Բոլորը, բոլորը առանց բացառութեան, առանց տատանման դէպի քուէարկութեան, դէպի ընտրութիւնները:

Յանձնախումբը կը դիմէ բոլորին՝ արևմտահայ անօճախ գիտացիութեանը, քաղաքներու աշխատատեղութեանը, որ գիտնան արժէքը իրենց ձայներուն ընտրելով իրենց պատգամատորները աշխատատեղութեան շահերու իսկական պաշտպաններին:

Հեռու աշխատատեղութեան դատաճաններէն, հեռու բոլոր անոնցմէ, որոնք գիտեն միայն իրենց շահերուն ծառայել:

Յանձնախումբը հաւատացած է, որ բոլորը պիտի ընդառաջեն ներկայ կոչին: Համբերք համագումարի օրը և խանդավառորէն ողջունենք սեպտեմբերի 10-ը:

Յանձնախումբ

ՀԱԱ, ֆ. 144, ց.3, գ. 115, ք.48: Տպագրական օրինակ:

N 206

**ՍՈՑԱԼԻԱԼԻՍՏԻ ՎԱՐԻՉԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ
ԱԼԵԲՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՈՐԲԱՆՈՑՆԵՐԻ
ՎԱՅՐԵՐԻ ՄԱՍԻՆ**

սեպտեմբեր 1921 թ.

Ալեքսանդրապոլ

1. Առաջին որբանոցը գտնուում է Կարսի փողոցի վրայ, նախկին զինկօմի շէնքը, Տայանցի տանը:

2. Երկրորդ որբանոցը գտնուում է Կամենդանսկայա N 17, Աւետիսեանի տանը:

3. Երրորդ որբանոցը գտնուում է Բալշ[այա]-Սլաքօդկա և Գրուզինսկայա փողոցների անկիւնում, Խզրալեանի տանը:

4. Առաջին սննդատու կայանը գտնում է Մալ[այա]-Սլաբոդկա, հին գերեզմանների դիմաց, Տէր-Աւետիսեանի տանը:

5. Անկելանոցը գտնում է Երևանեան փողոց, Շիլաճեանների տանը:

6. Բաժնիս կենտրոնական պահեստը գտնում է Լորիս-Մելիքեան փողոցի եղբայրք Գեղամեանների կրպակում:

Սորեզի¹³⁴ գործերի վարիչ՝

ՀԱԱ, ֆ. 144, ց. 1, գ. 59, ք. 242: Բնագիր: Ձեռագիր:

N 207

**ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀՐԱՀԱՆԳ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱ-
ԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԱՎԱՌԱՅԻՆ ԳԱՂԹԱԺԻՆՆԵՐԻՆ**

12 սեպտեմբերի 1921 թ.

Ալեքսանդրապոլ

1. Գալյեդկոմներին կից հիմնում են գաղթբաժիններ: Բաժինները գաւառի շրջաններում բաժանում են ընդունման կայանների գաղթականութեան համար ըստ անհրաժեշտութեան:

Գաղթբաժինների և շրջանային կայանների շտատները սրա հետ կցում են:

Նկատողութիւն: Գաղթբաժինների կազմի մէջ մտնում են մէկական ներկայացուցիչ Ներքգործողկոմից, Առժողկոմից և Ռուսաստանի կենտրէկակից:

2. Գաղթբաժինները վարում են ամբողջ գաղթականութեան գործը գալյեդկոմի անմիջական հսկողութեան տակ, որպէս գաղթականութեան տեղաւորման, սննդամատակարարման միակ օրգան, աշխատելով գաղթականական գլխատր վարչութեան ցուցմունքերով:

3. Գաւառային գաղթբաժինները դրամական օժանդակութիւն ստանում են Գլխաւոր Գաղթականութեան Վարչութեան միջոցով, նրա սմետայի¹³⁵ համաձայն:

4. Գաւառային գաղթբաժնի վարիչը նշանակւում է գաւլեղկով կողմից, որը ներկայացնում է ի հաստատութիւն Գաղթականական Գլխաւոր Վարչութեան: Այն դէպքում, երբ չի ճարում թեկնածու, բաժնի վարիչը նշանակւում է Գաղթականական Գլխաւոր Վարչութեան կողմից:

5. Գաղթբաժնի շտապի մնացած մասը հրաւիրւում է բաժնի վարիչի կողմից:

6. Ամէն մի գաւառում գաղթբաժինները ըստ պահանջի կազմակերպւում են շրջանային ընդունման կայաններ գաղթականութեան համար:

7. Գաւառային գաղթբաժինների վրայ ընկնում են հետևեալ պարտականութիւնները.

ա) Բոլոր ազատ գիւղերի և հողերի հաշուառութիւնը, ցոյց տալով սրանց պետական լինելը գաղթականութեանը տեղաւորելու տեսակէտից:

բ) Իւր շրջանի չտեղաւորուած բոլոր գաղթականների ցուցակագրում, ցոյց տալով նոցա սեռը, հասակը, աշխատանքի ընդունակ լինելը:

գ) Պարզել, թէ որքան գաղթականութիւն կարելի է տեղաւորել գաւառում:

դ) Գաղթականութեան տեղաւորումը, շրջանային կայանների միջոցով թափուր և կիսաբնակ գիւղերում:

ե) Պարենային և բժշկական օգնութիւն հասցնել գաղթականութեանը:

զ) Օգնել գաղթականութեանը, նրանց քայքայուած տնտեսութեանը վերականգնելու գործում ընդհանրապէս:

է) Գաղթականութեան աշխատանքի ընդունակ ոյժերի բաժանում պետական վերաշինութեան գործում

ը) Յոյց տալ ամէն տեսակի աջակցութիւն Ռուսաստանի Խորհրդային Հանրապետութեան կենտրէվակին, իր բոլոր գործունէութեան ընթացքում:

թ) Իւր գործունէութեան հաշուետւոթիւնը Գլխաւոր Գաղթականական Վարչութեանը ոչ ուշ, քան ամիսը մէկ անգամ:

8. Շրջանային ընդունման կայանների պարտականութիւնների մէջ մտնում են.

1. Գաղթականների ընդունելութիւն և բաժանում (տեղաւորում) ըստ գաղթականների ցոյց տուած տեղերի:

2. Գաղթականութեան սննդամատակարարման գործը տեղերում

3. Շրջանի աշխատանքի ընդունակ գաղթականների ցուցակագրում:

4. Գաւառային Գաղթականական բաժնի բոլոր ցուցմունքների ճշտիւ կատարումը:

5. Գործունէութեան մասին զեկուցում գաւառային գաղթականական բաժնին:

Յաւելում 1-ին

1. Գաղթ[ականական] բաժնի ժամանակաւոր շտատ

1. Գաղթ[ականական] բաժնի վարիչ.....1

2. Գաղթ[ականական] բաժնի վարիչի օգնական.....1

3. Գործավար1

4. Տեխնիկ կառուցող.....1

5. Հաշուապահ.....1

6. Յանձնարարութեան ազենտներ.....3

7. Գրասենեակային մատենավար.....1

8. Գաղթականութեան ցուցակագրողներ.....1

9. Բժիշկ.....1

10. Սանիտար.....1

11. Ծառայ.....1

12. Բանուորներ.....4

13. Ծախսարար.....1

Յաւելում 2-րդ

2. շրջանային ընդունման կայաններ (ժամանակաւոր շտատ)

1. Շրջանային ընդունման կայանի վարիչ.....1
2. Յանձնարարութեան ազենտներ.....3
3. Տնտեսական բաժնի վարիչ.....1
4. Բանուորներ գաղթականներից.....1

Իսկականը ստորագրել է
Գաղթբաժնի նախագահի տեղակալ՝
Իսկականի հետ ճիշտ է՝ գործավար՝
Իսկականի հետ ճիշտ է:
Ալեքսանդրայտլի Գաւ[առային] Գաղթ[ականական]
բաժնի քարտուղար՝

ՀԱԱ, ֆ. 144, ց. 1, գ. 59, ք. 57: Վավերացված պատճեն: Ձեռագիր:

N 208

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌԻ ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ
ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉԻ ՁԵԿՈՒՑՈՒՄԸ ԳԱՎՀԵՂԿՈՍԻՆ ԻՐ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

14 սեպտեմբեր 1921 թ.

Ալեքսանդրայտլ

Համաձայն Յեղկոմի 19 օգոստոսի գրութեան նշանակուած լինելով Ալեքսանդրայտլի շրջանային գաղթականական գործերի վարիչ, յանձնարարուեց կազմակերպել բաժինը: Նոյն ժամանակամիջոցում ես աշխատում էի կենտրոնական] էվակում որպէս մատակարարման բաժնի վարիչ և միևնոյն ժամանակ կէսօրից յետոյ տանում էի Արտակարգ Յանձնախմբում արտակարգ յանձնարարութիւններ, շատ պարզ է, որ անմիջապէս չէի կարող այդ գործը մի քանի օրուայ մէջ կազմակերպել, մինչև իմ նախկին պաշտօնական

գործի յանձնումը: Սակայն ի միջի այլոց ունեցայ խորհրդակցութիւն նախորդ Յեղկոմի Նախագահի հետ՝ այդ նոր կազմակերպուելիք գործի խնդիրների մասին, մասնաւորապէս հրահանգների և դրամական խնդրի մասին, որ և պակասում էր յեղկոմում: Արդ նպատակալարմար նկատուեցաւ իմ Երևան անցնելը, այսպէս նոյն ամսուս 25-ին մեկնեցայ Երևան կենտրոնական] բաժին: Թէև այն նոյնպէս նոր էր կազմակերպոււմ, բայց ամենայնդէպս մի քանի հիմնական կէտերի վերաբերեալ որոշ հրահանգներ ստացայ, որի հետ միասին նաև 18.000.000. րուբլի խորհրդային դրամանիշներով վարկաթուղթ: Գործերս աւարտելուց յետոյ նոյն տեղից վերադարձայ իմ պաշտօնին, ի միջի այլոց պէտք է յիշեմ, որ նախքան իմ Երևան գնալը դիմած էի յեղկոմի միջոցաւ բնակարանային բաժնին տալու բաժնիս համար յարմար գրասենեակ: Երևանից վերադառնալուց յետոյ հազիւ կարողացանք մինչև սեպտեմբերի 2-ը ունենալ գրասենեակ: Ձեզ համար պարզ է, որ այսպիսի պայմաններում ինչպիսի դժուարութիւններով կարողացանք ճարել աշխատակիցներ, որի կազմը հետևեալն է.

վարիչ	Ժախսարար
քարտուղար	ցուցակագիր
հաշուապահ	յանձնակատար (քաղաքում)
գործավար	յանձնակատար (շրջան)
մատենավար	ծառայ (մէկ) գրասենեակի համար

Եւ ահագին դժուարութիւններով ստացայ մէկ միլիոն րուբլի Յեղկոմից փոխարինարար մինչև մեր սմբթայի վաւերացումը:

Սեպտեմբերի 6-ին արդէն սկսուած էր հանրակացարաններում ապրող գաղթականութեան ցուցակագրումը, որի թիւը կը լինի 800-1000, որոնք ապրում էին 17 հանրակացարաններում առանց դռան և պատուհանների:

Գաղթականութեան մեծ մասը բաղկացած է կին և երեխաներից, նոյնպէս կան քաղաքում և այլ տներում ապրող

3000 գաղթականություն, որոնք սօսյեզից հաց ստանում են... *
տակաւին չեմ կարողացել ստանալ ստոյգ տեղեկութիւն
շրջանի գաղթականութեան մասին, որովհետև կօնֆերանսին
մասնակցելով հնարատրութիւն չունեցայ ստանալ ստոյգ տե-
ղեկութիւն, նոյնպէս Յեղկոմում բացակայում էր գաղթակա-
նութեան և գիւղի վերաբերեալ վիճակագրական տուաւներ:

Գաղթականութիւնը տեղաւորելու և մի շարք այլ խնդիր-
ների մասին խորհրդակցելու համար հրաւիրուեցին մէկական
ներկայացուցիչ Յեղկոմից, առ[ողջապահության] բաժնից,
կենտր[ոնական] էվակից, սօսյեզից: Որոշուած էր 6/9/21 ժա-
մին: Սակայն ոչ մի ներկայացուցչի ներկայութիւնը վայելելու
բարեհաճութիւնը չունեցանք: Գուցէ այլոց համար աւելորդ
ժամապաճառութիւն լինէր մէկ երկու ժամ գաղթականութեան
մասին մտածել, սակայն խղճիս առջև արդար լինելու համար
փորձում եմ երկրորդ անգամ հրաւիրել:

Պարսկաստանից տեղ հասած էին 20 մուսուլման գաղ-
թականներ Ադրաբայի շրջանը անցնելու համար: Նրանց ևս
ցուցակագրելու ուղարկել ենք 5-րդ գաւառամասի Դիւզքէնդ
գիւղը, տալու այդ երեք օրում օրական իւրաքանչիւրին մէկ
ֆունտ հաց- նոյնպէս ստացած ենք թիւրք ներկայացուցչից
նամակ գրուած Յեղկոմի կողմից ամսոյս 8-ին երկաթուղիով
Սուրմալու ուղով Ադրբեջանից վերադարձող 97 թուրք գաղ-
թականներին, որը արդէն...*: Շամախից 1919 թ. գաղթած հայ
գաղթականները դիմել էին ինձ իրենց նախկին տեղը վերա-
դառնալու խնդրանքով, սակայն նախյեղկոմի կարգադրու-
թեամբ մերժուեցին:

Վերջացնելուց առաջ իմ զեկուցումը կարիք եմ զգում
յիշեցնել մի քանի կարևոր կէտեր, որոնց բաւարարումը մեր
ապագայ գործունէութեան յաջող լուծման գրաւականն են:
Այն գաղթականութիւնը, որ այսօր գտնուում է աւերուած հան-
րակացարաններում, բացարձակապէս գուրկ է ֆիզիկական
գոյութիւնը ապաստանվելու նախապայմաններից, պիտոյք-

* Անընթեռնելի բառ;- Կ. Ա.:

* Անընթեռնելի բառ;- Կ. Ա.:

ներից, նրանք չունեն ոչ հաց, ոչ մթերք և ոչ էլ տրուել է մեզ, որևէ աշխատանք. Չէ նշանակուած եղել որևէ բժիշկ, որ գոնէ ազնուութիւն ունենար մի անգամ այցելէր հանրակացարաններ և տեղեկանար նրանց վիճակին, հասցնել բժշկական նուազագոյն օգնութիւն, որի համար նշանակումից յետոյ երկու անգամ դիմած եմ առողջապահութեան բաժնին նշանակելու համար մի բժիշկ հէնց այդ նպատակաւ, բայց մինչև ցարդ ոչ մի կարգադրութիւն: Եթէ այսօր մենք ցանկանում եմք, որ գաղթականութիւնը տեղաւորել գիտէրու՞մ և կազմակերպել նրանց համար կոմունալ տնտեսութիւն, հարկաւոր է գիտէրու՞մ ունենալ սննդատու կայաններ, թէյարաններ մինչև որոշ ժամանակ և որի համար հարկաւոր է մտածել պատրաստելու պարենաւորման եւ նման միջոցներ մինչև ձմեռը:

Նոյնպէս հարկաւոր է՝ թէ քաղաքում և շրջանի մի քանի կէտերում պատրաստի ունենալ ընդունարաններ և կամ թոյլատրել նորոգելու մի քանի շէնքեր: 12 սեպտեմբերի 1921-ին կայարանում ունեցայ տեսակցութիւն Գաղթականական բաժնի վարիչի և Երևանի ամերիկական ներկայուցուցչի հետ, որոնք գնում էին Թիֆլիս, խնդրեցի գալ և մի շաբթ այլ կարևոր խնդիրների համար կենտրոնում բանակցութիւններ վարելու, որ ժամանակ ինձ յանձնարարուեց ամենակարճ ժամանակամիջոցում յայտնել Թիֆլիս գաւառիս գաղթականութեան թիւը, որի համար նոյն օրը դիմեցի գրութեամբ Ներքին գործոց բաժնի վարիչին շտապ կարգադրելու գիտական յեղկոմներին մէկ երկու օրուայ մէջ տալու գաղթականութեան թիւը, մինչև իմ յանձնակատարարների ճշգրիտ վիճակագրական տեղեկագրութեան ստանալը:

Գուցէ մոռացութեան տրուած հարցեր լինեն, պատրաստ եմ բանառուոր բացատրելու:

Բաժնի վարիչ՝

Քարտուղար՝

ՀԱԱ, ֆ.144, ց. 3, գ. 67, ք. 22-23: Բնագիր: Չեռագիր:

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌԱՅԻՆ ԳԱՂԹԱԿԱՆԱ-
ԿԱՆ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ ՀԵՂԿՈՄԻՆ
ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

5 հոկտեմբերի 1921 թ.

Ալեքսանդրապոլ

Ինչպէս նախապէս գրած էի բաժնիս գրասենեակի կազմակերպման մասին ի լրումն նրա բացի քաղաքի աշխատակիցներից ունեմ և ամեն մի գաւառաւմասի համար երկուսկան յանձնակատարներ, որոնք բոլորն էլ զբաղուած են վիճակագրական տեղեկութիւններ պատրաստելով իրենց շրջաններից, քանզի ինչպէս Ձեզ յայտնի է այդ պետական ոչ մի հիմնարկութիւններում չկայ: Արդէն ստացած եմ լրիւ տեղեկութիւններ քաղաքի գաղթականութեան վերաբերեալ, որի թիւն է 11825: 1-ին և 2-րդ գաւառաւմասերից տակաւին վերադարձած չեն, 3-րդ՝ 1155, 4-րդ՝ 7500, 5-րդ՝ 2755, 6-րդ՝ 3586:

Գուցէ մի քիչ ուշացան գաւառաւմասերի տեղեկութիւնները, այդ գործում չենք կարող մեղադրել յանձնակատարներիս, քանզի ինչպէս գրած եմ նրանց չէ տուած ոչ թէ ամեն լայն աջակցութիւն, այլ նոյնիսկ ամենամեղը՝ դժուարանալով տալ նրանց փոխադրութեան միջոց, հաց և մի քանի տեղեր նոյնիսկ գիշերելու տեղեր, օրինակ 1-ին գաւառաւմասը: Սրանց գաղթականների թուական տեղեկութեան հետ և պատրաստում ենք ընդարձակ վիճակագրական տեղեկութիւններ գիւղերի, տների, հողերի և այլոց մասին: Այնպէս որ մնացած երկու գաւառաւմասերից վերադառնալուց յետոյ Ձեզ կներկայացուի ընդարձակ տախտակը վերոյիշեալների մասին: Արդէն քաղաքում ունենք մի սննդակայան, որտեղ ապրում և կերակրում են Թիֆլիսից եկած կիսամեռ գաղթականութիւնը: Նոյնպէս Կարսից եկած գերիները. տրուում է գաղթականներին կես ֆունտ և գերիներին մէկ ֆունտ հաց և օրա-

կան երկու անգամ բրինձով սուպ. պարենը ստացում է Ամերիկեան Կոմիտեից: Նոյնպես ամէն օր քաղաքի այլ և այլ մասերից անմիջական օգնութեան կարօտները հաւաքում և ուղարկում են նոյն այդ շէնքը: Մեծ մասն ապրում են այդ շէնքում և մի փոքր տոկոսը ճաշ ստանում և գնում է իր տեղը. Բոլոր 400 հոգի: Ամերիկացիները թեև խոստացուած են կերակրել մինչև 2500 քաղաքում (որոնց մասին առանձին կգրեմ): Սակայն ձգձգում է:

Յեղկոմի կարգադրութեամբ ընդունած ենք գերիներին կա-յարանում (նազախմբով) խօսել են նոյն տեղը ընկ.ընկ. Եսայեան, Սուրէնեան և Գրիգորեան. տրուած է մէկ-մէկ տուփ կաթ և մէկ-մէկ ֆունտ հաց բոլորին, նոյնպէս Յեղկոմի կարգադրութեամբ Եարօյի հետ շրջել են բոլոր քաղաքային որբանոցները, մեզ հետ էր նաև սօբեզի բաժնի վարիչ տիկին Շուշանիկ, անշուշտ որբանոցների վերաբերեալ ես ոչինչ չգիտէի և ըստ օրենքի նա պէտք է պատասխաներ բոլոր այլևայլ հարցերուն. և նա պետութեան հակահոսսանքին պատկանող մի անհատ, որպէս կատարում էր իր պարտա-կանութիւնը իր տեսակէտից բարեխղճորեն: Նա ցանկանում էր ամերիկացիներին հասցնել այն հասկացութեան, որ պետութիւնը բոլորովին աչքաթող է արած որբանոցները և առհասարակ օգնութեան գործը, որ պետութիւնը շատ բան կարող է անել որբերին, խեղճերին և առհասարակ բոլոր մերոնց նման հիմնարկութիւններին, սակայն նա այդ չի անում: Օրինակ, երբ ամերիկացիները հարց են տալիս, ինչու արդեօք այս դուռը կամ պատուհանը այսպէս է, նա սկսում է կիներին յատուկ անբնական և ոճերով. «երեք շաբաթ է ամեն օր գրում եմ, գրում, ոչ մի ուշադրութիւն դարձնող չկայ, նրանք արդէն չեն նայեր այս գործին վրայ»: Մի քիչ իմ ներ-կայութիւնից քաշուելով, երբեմն բառեր էր կուլ տալիս և կարծում եմ, որ այս կուլ տուած բառերը լրացնում էր իմ բացակայութեան ժամանակ առհասարակ:

Գալով մեր բանակցութիւնների արդիւնքին, չգիտեմ ինչով բացատրեմ կամ ինչպէս պարզել, սրանից առաջ երբ բժիշկ

Մեղքումեանի հետ նրանց հետ խօսակցութիւն ունեցանք, խօստանում էին մինչև 7000 կերակրել անկախ կենտրոնից, այն օրից երբ մեր կենտրոնը տեղեկացուած էր, որ ամերիկացիները սկզբունքով խոստացած են կերակրել մինչև 50000, որի կէտը՝ Ալեքսանդրայպոլի շրջանը: Դրանից յետոյ տեղիս ներկայացուցիչը օրական մի նոր քան է հնարում, մի օր Եաթօյին սպասել, մի օր նոր գալիք վարիչին, և մի օր իրենց յատուկ վարպետութեամբ գամիսի¹³⁶ սպասել: Բայց փաստորեն գամիսայէն ոչինչ չհարցնել, այնպէս որ ինչպէս ասի ինձ համար պարզ չէ, թէ Ալեքսանդրայպոլի ներկայացուցիչ ենք ևս, թէ ինչ անենք, թէ քաբիթալիստի¹³⁷ յատուկ խորամանկութեամբ ու մի ինչ որ դիւային ու մութ դիտաւորութեամբ հետաձգում է, ինչպէս նաև Յեղկոմին յայտնի է, գամիսի նշանակութեւոց յետոյ, երբ մենք ունեցանք ժողով, նոյնպէս կրկնուեց այն, ինչ որ կրկնուեց Ձեր ներկայութեամբ: Նա իր հետ բերած էր թեև մի քիչ սուր, բայց ամենաճիշտը երկու աշակերտներու, որոնք պէտք է կրկնէին թութակի նման իրենց վարպետի խօսքերը, այնպէս որ մենք փաստորեն ոչ մի եզրակացութեան չհասանք: Մենք յոյս ունեինք, որ այս շաբթու կարող կլինէինք թէ՛ մթերք և թէ՛ գաղթականութեան մէծ մասը փոխադրելու գաւառամասեր: Մինչև այսօր ոչինչ չէ եղած և վախենում են, որ եթէ մենք առանց նրանց մի փոքր գործ պէտք է անէինք, այն ևս ուշացուի ու մի օր ձիւնի ու ցրտի պատճառաւ ոչինչ չկարողանանք անելու: Չերկարելու համար իմ զեկուցումը յայտնում են, որ բաժինս պատրաստ է տեղափոխման գործը իսկոյն ևեթ սկսելու, եթէ կը վերացուի այն անորոշութիւնը և կը պարզուի մեր դիրքը: Ապագայում ժողովրդի գալիք դժբախտութեան պատասխանատւութիւնն իմ խղճի վրայ չծանրանալու համար ես պարտք եմ համարում խնդրել Ձեզ ժամ առաջ կամ Երևանից պարզել այդ, որի համար ես ևս հեռագրած եմ և կամ հէնց ուրիշ ամերիկեան ներկայացուցիչ կանչել և ստանալ վերջնական պատասխանը: Սպասում եմ Ձեր կարգադրութեանը և հրամանին:

Բաժնի վարիչ՝¹³⁸

ՀԱԱ, ֆ. 144, ց. 1, գ. 59, ք. 134-135: Ինքնագիր:

N 210

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌԻ ՉՈՐՐՈՐԴ ԳԱՎԱՌԱՍՄԱՆ ԵՆԳԻՔՈՅ ԳՅՈՒՂԻ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՎԵՐԱԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐԻՉԻՆ ԻՐԵՆՑ ՕԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10 հոկտեմբերի 1921 թ.

Ալեքսանդրապոլ

Մենք, հիթսուն վեց տուն արևմտահայեր, թուով երկու հարիւր քառասուն անձ, վանեցիներ, գաղթից յառաջ ապրում էինք Կարսի Նախիջևանի շրջանում: Անցեալ 1920 թուի գաղթին մենք ևս գաղթեցինք թուրքի արշաւանքից, զրկուելով մեր ունեցածից: Չանագան տեղեր թափառելով այժմ ապրում ենք Ենգիքոյ գիւղը, ոչ մի ապրուստի միջոց չունենք, որովհետև գարու սերմացու չունէինք, որ ցանէինք: Այժմ շատերս սովից մեռնում ենք, ուստի խնդրում ենք Ձեզանից, որ բարի լինէք տնօրինել սլաթէնի օժանդակութիւն:

Ի դիմաց վերոյիշեալ վերաբնակիչներս ստորագրում ենք:¹³⁹

Հաստատում եմ ստորագրութիւնները

Ենգիքոյ գիւղի Յեղկոմի Նախագահ՝ Նիկոլայ Սկրտչեան

ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 115, ք. 137: Բնագիր: Ձեռագիր:

N 211

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉԻ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ ՀԵՂԿՈՍԻՆ ԻՐ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

12 հոկտեմբերի 1921 թ.

Ալեքսանդրապոլ

Ինչպէս ինձ, նոյնպէս և Ձեզ և ամենին էլ հետաքրքրող հարցը Ամերիկեան օգնութեան հարցն է, արդէն սկսուած է, այն խնդիրը, որ ամերիկեան ներկայացուցիչին պարզ չէր, նա ևս պարզուեց, և բոլոր կազմակերպչական գործերը թողնում են մեզ: Միևնոյն ժամանակ խնդրելով, որ իրենց շրջաններ ուղարկուածները մնան պաշտօնի, իհարկէ, նրանց անգործ չէի կրնա թողնել և նրանց ցանկութեամբ և իմ համաձայնութեամբ մնում են որպէս պահեստապետներ: Ամերիկացիք իրենց են վերապահում քոնթրօլը, թէ ինչ ձևով քոնթրօլ են անելու, այս բանակցութիւնը վերջացած է սոյն ամսի 7-ին, և հաջորդ օրն իսկ նշանակած եմ շրջանային սննդակայանների վարիչներ, միևնոյն ժամանակ խնդրելով ամերիկացիներից տալ համապատասխան գրութիւն, շրջանում գտնուած պոստները յանձնելու մեր ներկայացուցիչներին, տակաւին մինչ այսօր չեմ ստացած, իսկ ես որորվիետն չէի կարող սպասել այդ թուղթին երկար, արդէն ուղարկեցի պոստների վարիչներին տեղին վրա կազմակերպելու գործը. յեղկոմին կից և նրա գիտութեամբ յաջորդ օրը՝ ամսի 8-ին յանձնակատարներին միջոցով պատրաստել տուած եմ ցուցակ այն գաղթականների, որոնք պէտք է ուղարկուեն առաջին հերթին. նոյնպէս կատարուած է բժշկական քննութիւն ուղարկուելիք գաղթականութեան նրանց գնալու կարող անկարող լինելը ստուգելու, որը նոյնպէս վերջացած է. իսկ մեր ամենադժուար և տկար կողմը (թրանսփորթը) մնում էր նոյն վիճակի մէջ: Ամսոյս 8-ին գրած եմ Ներքին Գործոց բաժնին, խնդրելով համապատասխան կարգադրութիւն միլիցիապետներին Երկուշաբթի և Երեքշաբթի օրերի համար տալ քսանական (20) սալ մթերք գաղթականութեանը տեղափոխելու համար: Երկուշաբթի ոչինչ չեղաւ, Երեքշաբթի

ուղարկեցի մարդ, ոչ մի կարգադրութիւն, որի համար ստիպուած եղայ գրել իրենց կրկին յիշեցնելով վերոյիշեալը, որի պատճէնը ուղարկում եմ Ձեզ՝ Յեղկոմիդ, սպասելով կարգադրութեան:

Գալով քաղաքի մասին ինչպէս գիտէք ունենք մի հանրակացարան և որտեղ բացուած է նոյպէս խոհանոց, պատրաստում է ճաշ և բաժանում, նոյնպէս նոյնտեղը բաժանում է հացը: Առաջ տրում էր հացը 3,4 ֆունտից, սակայն երկու օր է արդէն բաց է թողնում 1,2 ֆունտից, որի համար ունենք գրութիւն, որտեղ նրանք յիշեցնում են թէ, անորոշ ժամանակով թէ մեր որբանոցներին և թէ գաղթականների հացի նորման պակասում է: Ամերիկեան կոմիտէի գլխաւոր հաշուապահ Նշան Տէր-Սիմոնեան, տրուած հացի նորմայից դուրս բաց է թողած 3 պարկ հացի փշրանքներ սուպը թանձրացնելու համար, որը իհարկէ մեծ արժէք է ներկայացնում մեզի համար: Գալով քաղաքի պահեստի համար մեր գրասենեակին կից կար մի սենեակ, որի դուռը բացում էր մեր գրասենեակից: Այդ սենեակը գտնում էր չեկայի ձեռքին, քանիցս խնդրեցի դատարկել ձգձգեցին այսօրուան, վերջիվերջոյ տրիբունալին յանձնեցին, հիմայ քանի օր է նրանց խնդրում ենք դատարկելու: Մեզի համար պահեստը մնում էր կնքուած և մենք չենք կարողանում ստանալ ալիւր մէկ շաբթուան համար. հակառակ ամերիկացիների քանիցս յայտնած ցանկութեանը, որ նրանք բաց են թողնում մի շաբաթուայ մթերք մի անգամից, իսկ մենք ինչպէս ասի չգտնելով ոչ մի աջակցութիւն միւս հիմնարկութիւններից չենք կարողանում օգտուել հանգամանքից:

Գալով հանրակացարանի նորոգման: Մի քանի դիրգարներ ցանկացան փութրաջով վերցնելու, սակայն առանց պետական նորմայի ես չէի կարող տալ ուստի դիմեցի կոմունալ տնտեսութեան. երկու ինժեներներ՝ Զիթողեան, կազմեցին ակտը. սպասել եմ ամետայի վաւերացման, իսկ քաղաքում ամեն օր գները կրկնապատկւում են, մատերիալը պակասում է, ես խնդրում էի տալ իրաւունք գնելու պետական նորմայով

տախտակ, փայտ և այլն և սկսել առանձին միջոցներով շինել:

Երրորդ գաւառամասում պատրաստի փուռ չլինելով, շինել տուած էի մի նոր փուռ հէնց փութրաթջիկ Վարդան Վարտիկեանի միջոցով, նրանցով բաց եմ անելու այն բոլոր շրջանները, որտեղ պէտք է լինեն պունկտեր և չունեն փուռեր:

Ինչպէս երեկ ասեցի կենտրոնական էվակը վերացում է, ուստի խնդրում էի առաջին հերթին նրանց գրասենեակում եղած բոլոր գրասենեակային իրերը (աթոռ, սեղան, թանաքաման, գրիչ, թուղթ և այլն) տալ մեզ, քանզի բոլոր բացուելիք բաժինների համար սոսկալի կարիք ունեն այդ իրերի, իսկ քաղաքում բացարձակ դատարկութիւն է:

Վերջացնելով իմ զեկուցումը ես կրկին խնդրում եմ վերացնել առաջին և ամենակարևոր խոչընդոտը (տալ թրանսփորթ, տալ ազատ իրաւունք շէնքի գործը սկսելու, անմիջապէս դատարկել տալ պահեստը և կենտրոնական էվակի գրասենեակի իրերը յանձնելու մեզ): Սրա հետ միասին ուղարկում եմ Ալէք[սանդրա]յովի և գաւառամասերի ընդհանուր վիճակագրական տախտակը:

Յաւելուած: Վիճակագրական տախտակ: N 263:

Բաժնի վարիչ՝
Գործավար՝

ՀԱԱ, ֆ.144, ց. 1, գ. 59, ք.119: Բնագիր: Ձեռագիր:

N 212

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌԱՅԻՆ ՀԵՂԿՈՍԻ
ՀՐԱՄԱՆԸ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՕԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ՔԱՂԱՔԻ ՈՒՆԵՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՎՐԱ ՏՈՒՐՔ
ԴՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՎԱՔԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

21 հոկտեմբերի 1921 թ.
Ալեքսանդրապոլ

Հայաստանի սահմաններում ապրող բազմահազար գաղթականութեան նիւթական ծանր վիճակը ստիպում է մտածել նրանց շուտափոյթ օգնութեան հասնելու միջոցների մասին: Ս[ոցիալիստական] Խ[որհրդային] Հայաստանի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդի դեկրետով քաղաքի ունեւոր դասակարգը ենթարկում է տուրքի գումարաւ 15.000.000.000 ռուբլի խորհրդային վալիւտայով, որից Ալէքսանդրապոլի վրայ ընկել է այդ գումարի մի աննշան մասը 2.400.000.000 ռուբլի, որի բաշխումը և գանձումը պէտք է կազմակերպել մի ամսուայ ընթացքում:

Ալէքսանդրապոլի վրայ նշանակուած 2.400.000.000 ռուբլին որոշուած է բաշխել հարկատուների խմբերին հետևեալ ձեւով: 1. Առևտրականներ 2.000.000.000 ռ[ուբլի], 2. այգետէրեր և բոստանչիներ՝ 150.000.000 ռ[ուբլի], 3. արդիւնաբերողներ և արհեստանոցներ ունեցողներ՝ 250.000. 000 ռ[ուբլի],

2. Իւրաքանչիւր մի խմբին նշանակած գումարը պէտք է հաւաքել ամբողջութեամբ անկախ հարկատուների քանակից:

Ամեն մի հարկատուի վճարելիք տուրքի չափը սահմանելու համար տեալ խմբի հարկատուների ընդհանուր ժողովը ընտրում է ենթայանձնաժողով բաղկացած 5-7 մարդուց, որոնք ԵՐԵՔ ՕՐՈՒԱՅ ընթացքում իրենց մշակած բաշխումը պէտք է ներկայացնեն ֆինրաժնին կից գտնուող տուրքերի իրազործման յանձնաժողովին:

4. Հարկատուները պարտաւոր են հաւաքուել ընդհանուր ժողովի Առևտրական դպրոցի շէնքում Կիրակի օրը ամսոյս 30-ին ցերեկուայ ժամը 12-ին հետևյալ կարգով՝ առևտրականները դահլիճում, այգետէրերը և բոստանչիները՝ դահլիճին կից դասարանում, արդիւնաբերողները և արհեստանոց ունեցողները՝ հարկան դասարանում:

5. Հարկատուների և ենթայանձնաժողովների ընդհանուր ժողովում նախագահում է ֆինրաժնին կից գտնուող տուրքի իրազործման յանձնաժողովի անդամը:

6. Հարկատուներն ենթայանձնաժողովին կամ յանձնաժո-

ղովին կարող են գրաւոր կամ բանաւոր յայտարարութիւն տալ այն անձնատրութիւնների մասին, որոնց վրայ անչափ փոքր տուրք է նշանակուել, կամ բոլորովին չի նշանակուել: Յայտնաբերողների ազգանունները գաղտնի է պահուելու:

7. Հարկատուներից իւրաքանչիւր մէկին ծանուցում է ուղարկուելու նրա վրա նշանակուած տուրքի գումարի մասին: Չանագան պատճառներով ծանուցում չստացող հարկատուները պէտք է այն ստանան ենթայանձնաժողովից, որովհետև ծանուցում չստանալը չի դադարեցնում տուրք հաւաքելը:

8. Տուրքը թոյլատրուում է վճարել երկու նուագ. ընդհանուր գումարի երկու երրորդական մասը վճարել ծանուցում ուղարկուած օրուանից հինգ օրուայ ժամանակամիջոցում, մնացածը՝ առաջին մասի վճարման ժամանակամիջոցը լրանալուց երեք օր յետոյ:

9. Տուրքը վճարել կարելի է բացի Խորհրդային Հայաստանի դրամանիշներով, նոյնպէս և ՌՍՖՍՀ, Վրաստանի և Ադրբեյջանի թրթադրամով ըստ ֆինժողկոմի սահմանած կուրսի, որ համապատասխան կլինի շուկայում գոյութիւն ունեցող կուրսին:

ՀԱՎԱՔԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

10. Եթէ հարկատուն հինգ օրուայ ընթացքում (յոդ. 7) չի մտցնում իրեն հասանելիք տուրքի ընդհանուր գումարի երկու երրորդական մասը, ապա Յանձնաժողովը կարգադրում է նրան ձեռքակալել, իսկ նրա բացակայութեան դէպքում՝ նրա ընտանիքի անդամներին, և տուրքի գումարն ավելացնում է 25 տոկոսով:

Եթէ ձեռքակալութիւնից երեք օր անց տուրքի նոր գումարի (սկզբնական գումարը և ավելացրած 25 տոկոսը) երկու երրորդական մասը չմուծուի, ապա հարկատուի ամբողջ գոյքը ենթարկուում է արգելքի:

Այն դէպքում, եթէ ավելացրած տուրքը լիովին չի վճարուում մինչև յոդ. 7- ում ցոյց տուած տուրքի մէկ երրորդական մասը վճարելու ժամանակամիջոցի լրանալը հարկատուի գոյքը

գրաւում է, թեկուզ և նրա արժէքն անցնի տուրքի գումարից:

Գրաւումս գոյքը պահանջուելիք ցուցակով և զմահատու-
թեամբ (շուկայի զնեքով) յանձնում է համապատասխան
վարչութիւններին, իսկ նրա արժէքը մտցում է տուրքի
ստացումս մուտքի մէջ:

11. Տուրքի ընդհանուր գումարի մէկ երրորդական մասը
(յոդ. 7) երկրորդ նուագի ժամանակ չվճարելու դէպքում հար-
կատուն կամ նրա ընտանիքի մի անդամը ձերբակալում են և
եթէ երկու օրից յետոյ չի վճարում այն, ապա յոդ. 9-ում ցոյց
տուած հիմունքներով գրաւում է նրա ամբողջ գոյքը:

12. Բոլոր ձերբակալութիւններն և ձերբակալուածներին
հսկողութեան տակ պահելը կատարուում է յանձնաժողովի
ցուցմունքներին հակայեղափոխութեան, սպեկուլիացիայի ու
սաքոտածի դէմ պայքարող Արտակարգ Յանձնաժողովի
ձեռքով, որին յանձնարարում է նոյնպէս գոյքերի կնքելու
գրաւումը: Յանձնաժողովի անդամի անմիջական դիտողու-
թեան տակ և նրա ներկայացուցիչների մասնակցութեամբ:

Նախյեղկում՝ Շահգեղեան¹⁴⁰

Ի. տ. քարտուղար՝ Ստեփանեան

ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 27 ք. 46: Տպագրական օրինակ:

N 213

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌԻ ԳԱՎԱՌԱՅԻՆ
ԳԱՂԹԱԺՆԻ ՎԱՐԻՉԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐՐՈՐԴ
ԳԱՎԱՌԱՍՍՍԻ ԳԱՂԹԱԺՆԻ ՎԱՐԻՉԻՆ**

նոյեմբեր 1921 թ.

Ալեքսանդրապոլ

Նկատում է, որ ուղարկուած մթերքը չի բաժանում
համապատասխան նորմայով: Բաժանում է կրուպա բրնձի
տեղ կամ լոբի:

Ուստի առաջարկում եմ բաց թողնել ըստ Ձեզ տրուած նորմայի և հրահանգի, այսինքն բրինձ 2/5, կրուպա 2/5, լոբի 1/5 մէկ օրւան:

Չկատարողները ճանաչում են ոչ օրինապահ և կենթարկուեն պատասխանատւութեան:

Բաժնի վարիչ՝

Գործավար՝

ՀԱԱ, ֆ.131, ց.1, գ. 364, ք. 10: Բնագիր : Ձեռագիր:

N 214

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌԻ ՀԵՂԿՈՍԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ ԳԱՎԱՌԱՍՄԱՍԻ ՀԵՂԿՈՍՆԵՐԻՆ
ԳԱՂԹԲԱԺԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

10 նոյեմբերի 1921 թ.

Ալեքսանդրապոլ

Համաձայն Կենտրոնի կարգադրութեան ս/թ. հոկտեմբերի սկզբներին բացուած է շրջաններում գաղթականական բաժիններ, որը թէև իր նախնական շրջանին զբաղում էր գաղթականներին բաւարարելով, սակայն վերջին տրուած հրահանգների հիման վրայ պէտք էր եւ բաւարարել բոլոր չքաւորներին հնարաւոր չափով, թէ տեղացի եւ թէ գաղթական: Ինչպէս երեւում է մինչեւ սոյն թիւր գաւառակային յեղկոմներում ոչ մի ուշադրութիւն չեն դարձած այդ բաժնի վրայ, նրան մի խորթ եւ կամ մի օտար հիմնարկութիւն հաշուելով: Այդ գործը ոչ մի օտարութիւն չունի, այն մեր գործն է, մեր կազմակերպած եւ մեր ժողովրդի համար: Այդ բաժնում ամեն մի հատիկի կորուստը բոլորինս է եւ կորստի պատճառ դարձողը, ինչպէս բոլոր հիմնարկութիւններում, նոյնպէս եւ այս հիմնարկութեան մէջ հաշւում է անպարտաճանաչ եւ պիտի կրէ իր օրինաւոր պատիժը:

Ուստի առաջարկում է բոլոր գաւառակային յեղկոմներին

յուրջ ուշադրութեամբ հետեւելով գաղթբաժնի մթերքների ստացման, բաշխման եւ առհասարակ պահեստի գործունէութեան ու ցուցակագրութեան վերաբերեալ գործերում: Զեղծումներ կատարելու դէպքում անմիջապէս յայտնել Կենտրոն:

Ալգաւնախյեղկոմ՝
Ալգաւգաղթ.բաժնի վարիչ՝

ՀԱԱ, ֆ.131, ց.1, գ. 364, ք. 22: Բնագիր : Մեքենագիր:

N 215

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԴԻՄՈՒՄԸ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻԼԻՑԻԱՅԻՆ՝ ԳԱՂԹԱԿԱՆ
ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

21 նոյեմբերի 1921 թ.

Ալեքսանդրապոլ

Ընկերներ,

Երեխաները փողոցներում և գաղթականական կայաններում անթիւ մեռնում են, մեռնում են տասնեակներով, հարիւրներով: Դեռ կենդանի նրանք մեռնում են մեռելների նիհար, գումատ և խորն ընկած աչքերով: Երեխաները մեռնում են ձեռքերը մեկնած հաց խնդրելով: Յուսահատուած մայրերը որոնք ոյժ չունեն լաց լինելու իրենց կորստի վրայ և բոլորովին անտարբեր նայում են սովից մեռնող երեխաներին: Մայրերը, որոնք չեն կարող կերակրել իրենց երեխաներին ձգում են փողոցները ցրտին և սառնամանիքին: Տկլոր երեխաները դողդողալով շրջում են փողոցները և վերջը մեռնում են ցրտից և սովից:

Ընկերներ, ծանր է մանուկների վիճակը, հարկատր է նրանց խլել անգութ մահի ճիրանները: Պրօֆ[միութեան] բիւրօն առաջարկում է բոլոր խորհրդային ծառայողներին հրա-

ժարուել 1/4 հացից իրենց փայերից, այս երեք օրս սոված երեխասների օգտին: Պրօֆ-բիրօն առաջարկում է բոլոր տեղկոմներին այս գրութիւնը ստանալուն պէս տեղկոմների կամ քնդիանուր ժողովի որոշումը այս հարցի մասին յայտնել Պրօֆ[միութեան] բիրօյին: Պրօֆ[միութեան] բիրօն համոզուած է, որ բոլոր ծառայողները և տեղկոմները կօգնեն սոված երեխասներին:

Նախագահ
Գործերի վարիչ

ՀԱԱ, ֆ.144, ց.3^ա, գ. 95, ք.11:Բնագիր: Չեռագիր:

N 216

ԳԱՎՀԵՂԿՈՍԻ ՍՈՑԻԱԼԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՎԱՌԻ ԵՐԲՈՐԴ ԳԱՎԱՌԱՍՄԱՆ ՍՈՑԱՊ ԵՆԹԱԲԱԺՆԻ ՎԱՐԻՉԻՆ ՈՐԲԵՐԻՆ ԵՎ ՉԶԱՎՈՐՆԵՐԻՆ ՑՈՒՑԱԿԱԳՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

27 նոյեմբերի 1921 թ.
Ալեքսանդրապոլ

Առաջարկում է Ձեզ անմիջապէս կազմել ցուցակ շրջանիդ տեղական մինչեւ 16 տարեկան հասակ ունեցող միանգամայն որբերի, իսկական չքատրների, որոնք ոչ մի հնարատրութիւն չունեն ապրելու իրենց միջոցներով: Կազմած ցուցակները շուտափոյթ ներկայացնել բաժնիս, որպէսզի բաց թողնուի պետական նպաստ: Ի նկատի ունենալ բոլոր հարմարութիւնները, որպէսզի շրջանում բաց արուի սննդատու կայաններ յիշեալ չքատրներին պարեն հայթայթելու համար: Հարկ եղած դէպքում դիմել Գաւմասի Յեղկոմին, որը պարտաւոր է ցոյց տալ լայն աջակցութիւն Ձեր աշխատանքները իր ժամանակին կատարելու համար:

*Բաժնի վարիչ՝ Մելքումեան
Գործավար*

ՀԱԱ, ֆ.131, ց.1, գ. 364, ք. 23: Բնագիր : Ձեռագիր:

N 217
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌԻ ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ
ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉԻ ՁԵԿՈՒՑՈՒՄԸ ՀԵՂԿՈՍԻՆ ԻՐ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԱՄԻՆ

*հունվար 1922 թ.
Ալեքսանդրապոլ*

Յայտնում եմ, որ հաստատութիւնս սկսել է իր գործունէութիւնը 1921 թ. սեպտեմբերի 28-ից: Մինչև նոյն թուի նոյեմբերի 10-ը իւրաքանչիւր գաւառամասին բաց է թողնուել մթերք 2000 հոգու, նոյեմբերի 10-ից յետոյ առաջին գաւառամասին բաց է թողնուել 4000 անձի, երկրորդին՝ 4000 անձի, երրորդին՝ 4500 անձի, չորրորդին՝ 5000 անձի, հինգերորդին՝ 2000 անձի, վեցերորդին՝ 4500 անձի, չեզոք գոտուն՝ 500 անձի և քաղաքին՝ 1000 անձի:

*Բաժնի վարիչ՝
Վիճակագիր՝*

ՀԱԱ, ֆ. 144, ց.1, գ. 36, ք. 69: Բնագիր : Ձեռագիր:

Ծանոթագրություններ

¹ Խոսքը Ատրպատականի հայոց թեմական առաջնորդ Ներսես եպիսկոպոս Մելիք Թանգյանի մասին է:

² Տե՛ս Ֆ.57, ց.3, գ.73, թթ.114շրջ.-116:

³ Կամսարական Կարապետ (Գեռասիմ) Պետրոսի (1858-1919), Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ 1910թ. մինչև 1917 թ. սեպտեմբերի 6-ը:

⁴ Բուդաղյան Հովակիմ Հարությունի (1870-1928), իրավաբան, խմբագիր:

⁵ Տեր-Մարտիրոսյան Գևորգ Հովհաննեսի (Իվանի) - Ալեքսանդրապոլի առևտրական ուսումնարանի հզաբարձուների խորհրդի անդամ, խորհրդի նախագահի պաշտոնակատար:

⁶ Արշակունի Վարդու Մանուկի - քաղաքային վարչության անդամ:

⁷ Տեր-Մինասյան Երվանդ Գալուստի (1879-1974), բանասեր-պատմաբան, Ալեքսանդրապոլի առևտրական ուսումնարանի դասատու:

⁸ Խաչվանքյան Հակոբ քահ. Գևորգի - Կովկասի հայոց բարեգործական ընկերության Ալեքսանդրապոլի բաժանմունքի նախագահ:

⁹ Տեր-Ղազարյան Համբարձում Ղազարի - Ալեքսանդրապոլի առևտրական ուսումնարանի հզաբարձուների խորհրդի անդամ:

¹⁰ Իսահակյան Խաչատուր Հովհաննեսի (Իվանի) - քաղաքային վարչության անդամ, Ալեքսանդրապոլի բանտի հոգաբարձուների կոմիտեի անդամ:

¹¹ Իսահակյան Ասատուր Իսահակի - քաղաքային վարչության անդամ, Ալեքսանդրապոլի առևտրական ուսումնարանի հզաբարձուների խորհրդի անդամ:

¹² Կարանյան Աշոտ Գրիգորի - քաղաքային վարչության անդամ:

¹³ Գեոնջյան Պարույր Մեսրոպի - Ալեքսանդրապոլի հաշտարար դատարանի քարտուղար:

¹⁴ Համբարձումյան Ալեքսանդր Գևորգի - երվոյալ հավատարմանտ:

¹⁵ Հակովբեան Մարտին Գրիգորի - քաղաքային վարչության անդամ:

¹⁶ Բերբուրյան Պետրոս Եսայի - քաղաքային վարչության անդամ:

¹⁷ Միրզոյան Հովսեփ Գրիգորի (?-1925) - գյուղատնտես, մահացել է Թեհրանում:

¹⁸ Կիրակոսյան Նիկողայոս (Նիկոլայ) Հակոբի - Ալեքսանդրապոլի առևտրական ուսումնարանի սովորողներին օժանդակող ընկերության նախագահ:

¹⁹ Մոճոռյան Պետրոս Հայրապետի (1869-1939) - մշակութային-հասարակական գործիչ, մահացել է աքտրավայրում:

²⁰ Ազգային հանձնաժողովի անդամների ցանկից բաց է թողնված Սադաթել Թաբադյանի անունը, որը հետագայում լրացվել է:

²¹ Վեհափառը հունվարի 7-ի Թ.42 կոնդակով հաստատել է հիշյալ անձանց հանձնաժողովի կազմում (Ֆ.57, ց.3, գ.86, քթ.2-3):

²² Խոսքը վերաբերում է Առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան ռազմաճակատին, որը բացվել է 1914 թվականի հոկտեմբերի 21-ին, երբ Նիկողայ 2-րդը պաշտոնապես պատերազմ է հայտարարել Օսմանյան կայսրությանը: 1914 թվականի աշնան վերջին Կովկասյան ռազմաճակատային գիծը Բաթումի մոտից հասնում էր մինչև Ուրմիա լճից արևելք ընկած վայրերը՝ կազմելով 720 կմ:

²³ Ալեքսանդրապոլի գավառը կազմվել է 1840 թ. ապրիլի 10-ին Վրացա-խմերթական նահանգի կազմում: 1846 թ. Ալեքսանդրապոլի գավառը իր հայաշատ Լոռի, Փամբակ, Շորագյալ և Ախալքալաք գավառակներով մտնում էր Թիֆլիսի նահանգի մեջ: 1849 թ. Ալեքսանդրապոլի գավառը դառնում է նոր կազմված Երևանի նահանգի գավառներից մեկը: Այն զբաղեցնում էր Երևանի նահանգի հյուսիս-արևմտյան մասը, 3680 քառ. կմ տարածքով (աղբյուրներում այդ տվյալը տարբեր է) և կազմում էր նահանգի տարածքի 13%: Չնայած, որ 1862 թ. Ալեքսանդրապոլի գավառից հանվում և Թիֆլիսի նահանգին են կցվում Լոռին և Ախալքալաքը, Ալեքսանդրապոլի գավառը Երևանի նահանգի ամենահոծ հայկական բնակչություն ունեցող գավառն էր: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Ալեքսանդրապոլի գավառի բնակչության թիվը գնալով աճում է: Մասնավորապես շատանում է քաղաքային բնակչությունը: Ալեքսանդրապոլում 1897 թվականին կար 30, 6 հազար բնակչություն, 1908 թ.՝ 33,7 հազար, 1914 թ.՝ 51,3 հազար, իսկ 1916 թ.՝ 51,8:

²⁴ Ալեքսանդրապոլի Ազգային հանձնաժողովը ստեղծվել է 1914 թվականի հոկտեմբերի 30-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ի սեպտեմբերի 28-ի կոնդակի համաձայն: Ազգային հանձնաժողովը իր գործունեությունը սկսել է նոյեմբերի 2-ից: Հանձնաժողովն ունեցել է հինգ բաժիններ:

²⁵ Ֆունտ - ծանրության չափ, հավասար է 400 գրամի:

²⁶ Կոկլյուշ – կապույտ հագ:

²⁷ Խոսքը 5-րդ կամավորական գնդի հրամանատար Վարդանի (Մարգիս Մեհրաբյան, Խանասորի Վարդան) մասին է: Վարդանի հրամանատարությամբ կազմավորված 5-րդ խումբը տեղակայված էր Ալեքսանդրապոլում: 1914 թվականի դեկտեմբերին խումբը պատրաստ էր ռազմաճակատ մեկնելուն, սակայն չի մեկնում զենք չլինելու պատճառով:

²⁸ Ալեքսանդրապոլի վիճակ -1836 թ. մարտի 11-ի կանոնադրությամբ («Պոլոժենիե») Շիրակը որպես փոխանորդություն, մտցվում է Երևանի հայրապետական թեմի մեջ: Սկզբում հոգևոր փոխանորդը նստում էր Հառիճավանքում, հետագայում տեղափոխվում է Ալեքսանդրապոլ: 20-րդ դարի սկզբին Ալեքսանդրապոլի գավառի սահմաններում ձևավորվում է եպիսկոպոսական վիճակ (ըստ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի):

Խորհրդային կարգերի հաստատումից հետո Ալեքսանդրապոլի վիճակի փոխարեն ստեղծվում է Շիրակի թեմը՝ սկզբում Հառիճավանք, հետագայում՝ Ալեքսանդրապոլ-Լենինական աթոռանիստով:

²⁹ Նկատի ունի ժապավենով թերթերը միմյանց կցված՝ կապած ու կնքված մատյան:

³⁰ Թաղիանոսյան Երվանդ (1864-1948) -1895-1899 թթ. մատենադարանի պետ և դաստիարակ Մոսկվայի Լազարյան ճեմարանում:

³¹ Միքայել Պապաջանյան (1868-1929) - հասարակական-քաղաքական գործիչ, 4-րդ Պետական Դումայի անդամ, հայ ազգային պատվիրակության անդամ, եղել է ՀՕԿ-ի Փարիզի մասնաճյուղի նախագահ:

³² Արտակ Վարդապետ Սմբատյան (Տառնեցի) (1876-1937) - Ալեքսանդրապոլի գավառի թեմի առաջնորդական փոխանորդ, Ալեքսանդրապոլի «Եղբայրական օգնության» կոմիտեի նախագահ:

